ԼԻՈՆ ԳԻՎՈՐԳՅԱՆ

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳԻՐԸ


ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЛИДА ГЕВОРКЯН


ЖУРНАЛ „МУРЧ“

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳԻՐԸ





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1982

ԳՄԴ 76.1
Գ 479

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու
Վ. Ս. ԵՐԿԱՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմ. գիտ. թեկնածու Դ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ և բանասիրական գիտ. թեկնածու Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆԸ

Գևորգյան, Լ. Մ.
Գ 479 *«Մուրճ» ամսագիրը /Պատ. խմբ՝ Վ. Ս Երկանյան. — Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982. 313 էջ.*

Աշխատությունը նվիրված է անցյալի նշանավոր պարբերականներից մեկի՝ «Մուրճ» հասարակական, քաղաքական և գրական ամսագրի պատմությանը։

Տրված է ամսագրի բնութագիրը, բացահայտված է նրա տեղն ու դերը հայ հասարակական մտքի, դեմոկրատական գրականության զարգացման և պարբերական մամուլի պատմության մեջ։

Նախատեսվում է հայ հասարակական մտքի և մամուլի պատմությամբ հետաքրքրվողների համար։

4502000000
Գ————————17—82
703 (02)—82

ԳՄԴ 76.1
002

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անգնահատելի է պարբերական մամուլի նշանակությունը ամեն մի ժողովրդի պատմության ուսումնասիրման գործում։ «Ազդարարով» իր ծնունդն ազդարարած հայ մամուլը մեր ժողովրդի երկդարյա պատմության հարազատ տարեգրությունն է։ Ականավոր հայ մարքսիստ Արշավիր Մելիքյանը մտապահելու արժանի խոսքեր ունի հայ մամուլի մասին. «այդ գանձի հասարակական արժեքն ավելի է բարձրանում իր նշանակությամբ, եթե նա լույս է տեսնում պարբերաբար, օրեցօր... Նա ստանում է հասարակական արժեք և պատմական նշանակություն։ Ահա ինչու մեր հին պարբերական հրատարակությունների մեջ ամփոփված նյութը պետք է հիմնավորապես ուսումնասիրվի, և մինչև որ չկատարվի այդ սիզիֆյան աշխատանքը, մինչև որ մենք մարքսիստորեն չյուրացնենք այդ մեծ հարստությունը, և մինչև որ մենք դուրս չբերենք այդ ժամանակագրության մեջ տասնյակ տարիների փոշու հաստ շերտով ծածկված մարգարիտները, մենք չենք կարող կառուցել այն հոյակապ շենքը, որ կոչվում է տվյալ ժողովրդի պատմություն»[1]։

XIX դարի վերջում հայ մամուլի անդաստանը մտավ մի նոր պարբերական, որն իրեն անուն էր ընտրել աշխատավորի գործիքը, «Մուրճը», այդ անվան մեջ խորհրդանշելով հայ ժողովրդի առաջադիմության սալին մրճահարելու իր ձգտումը։ Եվրոպական քաղաքակրթությունը հայկական կյանքին պատվաստելու, ռուսական առաջավոր մտքի պտուղները հայությանը մատուցելու, «Հյուսիսափայլի» սկսած գործը շարունակելու, նոր ժամանակների ձայնափողը և նոր սերնդի ամբիոնը դառնալու հայտով ասպարեզ մտավ նոր ամսագիրը։ «Մուրճին» աշխատակցած հայ գրողների անունների թվարկումն իսկ բավական է հասկանալու համար, թե ինչու էր ամսագիրը սիրված ոչ միայն ժամանակակիցների կողմից, այլև հետաքրքրության առարկա է դառնում այսօր՝ իր

---

1 Արշավիր Մելիքյան, Նյութեր հայ հասարակական մտքի պատմության, ձեռագիր, էջ 2, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ։

հիմնադրման հարյուրամյակը բոլորելու շեմին. Պ. Պռոշյան, Լ. Մանվելյան, Ալ. Ծատուրյան, Ա. Ադելյան, Ղ. Աղայան, Վրթ. Փափազյան, Դ. Դեմիրճյան, Հովհ. Թումանյան, Հ. Հակոբյան, Ավ. Իսահակյան և ուրիշներ, որոնց շնորհիվ ամսագիրը դարձավ հայ դեմոկրատական գրական մտքի կենտրոնատեղի, դարավերջին հաղթանակող ռեալիստական, ժողովրդային գրականության առաջատար օրգանը:

Հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական առաջընթացին նախանձախնդիր, «Մուրճի» խմբագիրը՝ Ավետիք Արասխանյանը, ուղիներ որոնեց և եռանդուն ջանքեր թափեց դրա իրականացման համար: Դարավերջին օրավուր զորացող հայ գիտական միտքը իր նվաճումների մի զգալի մասը տնտեսագիտության, բնագիտության, բժշկագիտության, մանկավարժության, գրաքննադատության և այլ ճյուղերում արձանագրեց «Մուրճի» էջերում, ամսագրի հասարակական, քաղաքական և գրական կոչումներին ավելացնելով գիտականը ևս:

Արասխանյանի «Մուրճը» տարեգրային բարեխղճությամբ արձանագրեց դարավերջի հայ հասարակական-քաղաքական կյանքի մեծ ու փոքր իրադարձությունները, դառնալով մեր ժողովրդի պատմության մի հետաքրքիր շրջանի կարևոր սկզբնաղբյուր:

Բազմաբովանդակ, հարուստ ու ծանրակշիռ ամսագիրը չէր կարող, բնականաբար, արժանացած չլինել տարբեր մասնագետների (տնտեսագետ, պատմաբան, բնագետ, բանասեր) ուշադրությանը: «Մուրճի» մասին ստեղծվել է, կարելի է ասել, պատկառելի գրականություն, որի համառոտ տեսությունը կգա հաստատելու ամսագրի հարուստ բովանդակության, լայն ընդգրկումների և հանրագիտական հարցասիրությունների իրողությունը:

Իրավացի էր Արսեն Տերտերյանը, երբ ձեռնամուխ լինելով Ա. Արասխանյանի կյանքի և գործունեության ուսումնասիրմանը, նկատի էր առնում, որ հրապարակախոսի մահվանից հետո տևական ժամանակ է հարկավոր նրան համակրողների հախուռն մեծարանքը և հակառակորդների անզուսպ պարսավանքը համեմատության մեջ դնելու համար նրա իրական մեծության հետ: Բայց Արասխանյանի մահվան տարելիցը նոր էր լրացել, երբ նա սկսեց հրատարակել իր «Ավետիք Արասխանյան» ուսումնասիրությունը[2]: Աշխատության հեղինակին իսկապես պակասել էր տևական ժամանակը՝ տպավորությունների բյուրեղացման

2 Արսեն Տերտերյան, *Ավետիք Արասխանյան*, «Նոր հոսանք», 1914, № 1—3, «Դարձ», 1917, №7—8:

համար, սակայն նրա ներկայացրած «Ավետիք Արասխանյանը» արժեքավոր և հետաքրքիր է հենց որպես ժամանակակցի խոսք և առաջին լուրջ գնահատություն «Մուրճի» խմբագրի մասին։ Նա վեր է հանել Արասխանյանի գործունեության բազմաթիվ արժեքավոր կողմերը, հոդվածի ենթավերնագրեր դարձնելով իր դիտողության հանրագումարները՝ «Արասխանյանը Նազարյանի տիպի հրապարակախոս էր», «օրինակելի խմբագիր», «գիտակից քաղաքացի» և այլն։

Տերտերյանի աշխատությունը երկար տարիներ մնում է որպես «Մուրճի» և նրա խմբագրի մասին միակ ուսումնասիրությունը։ Այդ ընթացքում շատ բան է փոխվում։ Հայ մամուլը նոր տարեգրություն է սկսում՝ հայ ժողովրդի սոցիալիստական վերածննդի տարեգրությունը։ Ոչ միայն ստեղծվում են նոր արժեքներ, այլև վերագնահատվում է անցյալի ժառանգությունը։ Ի՞նչ գնահատության են արժանացել Ա. Արասխանյանը և նրա «Մուրճը» սովետական հետազոտողների կողմից։

Ավետիք Արասխանյանին առաջինն անդրադարձել են տնտեսագետները։ Խ. Գուլանյանը, Ս. Զուրաբյանը և Ա. Օհանյանը հայ տնտեսագիտական մտքի պատմությանը նվիրած իրենց աշխատություններում[3] ցույց են տվել Ա. Արասխանյանի տեղն ու դերը XIX դարի տնտեսագիտական մտքի զարգացման գործում։ Որոշակի հայացքով քննության ենթարկելով նրա աշխատությունները, ինչպես նաև «Մուրճ» ամսագրում հրապարակած հոդվածները, տնտեսագիտական մտքի պատմաբաններն ընդհանուր գծերով բնութագրել են Արասխանյանի աշխարհայացքի լիբերալ-ռեֆորմիզմը, որն իր կնիքն էր դնում նաև ամսագրի գաղափարական ուղղության վրա։

Երկու տասնամյակ անց Ռ. Սարինյանը Ա. Արասխանյանի տնտեսագիտական հայացքները ներկայացնում է մենագրական ուսումնասիրությամբ[4]։ Նյութի համակողմանի ընդգրկմամբ, ռուս և եվրոպական տնտեսագիտական մտքի նվաճումների հետ կոնկրետ համադրությամբ Արասխանյանի գիտական ժառանգության քննությունն ավելի ցայտուն է դարձրել բուրժուական առաջադիմական գործչի դիմապատկերը։

Լույս տեսնելով անցյալ դարի 90-ական թվականներին, «Մուրճը» օբյեկտիվորեն արտացոլեց պատմական անցման այն շրջանը, որը

---

3 Խ. Գուլանյան, Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1959, Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, Ա. Օհանյան, Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից, Երևան, 1960։

4 Ռ. Սարինյան, Ավետիք Արասխանյան, Երևան, 1980։

հատկանշվում է բանվորական շարժման ծավալումով, մարքսիզմի տարածմամբ և ազատագրական շարժման պրոլետարական դարաշրջանի սկզբնավորմամբ: Այս է պատճառը, որ «Մուրճը» հետաքրքրություն է արթնացրել նրանց համար, ում զբաղեցրել է հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման պատմությունը: Խ. Գուլանյանը՝ «Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ» (Երևան, 1961) և Խ. Բարսեղյանը՝ «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» (Երևան, 1967) աշխատություններում անդրադառնում են «Մուրճի» էջերում արծարծված «լեգալ մարքսիզմին»: Խ. Բարսեղյանը «Մուրճը» համարում է ժամանակի առաջավոր պարբերականներից, հայ բուրժուական մտավորականության ձախ թևի օրգանը, որը հարստացրեց հայ պարբերական մամուլի պատմությունը, նպաստեց հասարակական մտքի զարգացմանը:

Բնագիտության մասսայականացման գործում «Մուրճի» աչքի ընկնող ծառայություններն է վեր հանում Ռ. Գաբրիելյանն իր «Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ» (Երևան, 1963) աշխատությունում, հատկապես շեշտելով ամսագրի դերը Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի պրոպագանդման գործում:

Վերոհիշյալ հեղինակները, սակայն, ուսումնասիրվող հարցերը որոշակի տեսանկյունով ըստ ամենայնի քննության ենթարկելով հանդերձ, չեն ներկայացնում Արասխանյանի աշխարհայացքի ամբողջական համակարգը, որը հատկանշվում է լիբերալիզմի և դեմոկրատիզմի բարդ ներթափանցումներով: Տնտեսագետներն, օրինակ, բացահայտել են նրա աշխարհայացքի լիբերալ-ռեֆորմիզմը, որն առավելագույնս դրսևորվել է Արասխանյանի տնտեսագիտական հայացքներում, բայց նրանց ուշադրությունից դուրս են մնացել «Մուրճի» խմբագրի դեմոկրատական դիրքորոշումները, որոնք ցայտուն արտահայտություն են գտել ամսագրի էջերում:

Անգնահատելի է «Մուրճի» դերը հայ նոր գրականության զարգացման գործում: Չնայած խմբագրի լիբերալ աշխարհայեցողությանը, «Մուրճը» դառնում է դեմոկրատական գրականության դարբնոց: «Մուրճը» հետաքրքրել է ո՛չ մեկ գրականագետի: 1971 թ. Գ. Անանյանը հրապարակեց «Հայ գրականությունը «Մուրճ» ամսագրում» գրքույկը, որը նրա այդ թեմայով դիսերտացիոն աշխատության կարճառոտ շարադրանքն է: Այստեղ առաջին անգամ գրականագիտական քննության են ենթարկված «Մուրճի» հրապարակած հայ արձակն ու պոեզիան, գնա-

հատված է ամսագրի խաղացած հսկայական դերը հայ նոր գրականության զարգացման գործում։ «Հայ նոր գրականության պատմության» IV հատորի՝ Ա. Ասատրյանի գրած «Ավետիք Արսխանյան» բաժինը համառոտ, բայց ճշմարտացի պատկերացում է տալիս հայ հրապարակախոսական մտքի նշանավոր դեմքերից մեկի և նրա հիմնադրած ամսագրի մասին։

1973 թ. լույս տեսավ Կ. Դանիելյանի «Հայ գյուղագրությունը XIX դարում» ուշագրավ աշխատությունը, որտեղ ընդարձակ բաժին է նվիրված «Մուրճ» ամսագրին։ Հեղինակին զբաղեցնում է մասնավոր հարց՝ գյուղագրական գրականությունը։ «Մուրճը» ընթերցողի առջև է կանգնում գյուղի առաջընթացին շահախնդիր իր ողջ հասարակական ծրագրերով, հայ նարոդնիկական-ժողովրդասիրական շարժման հետ իր առնչություններով։ Հայ գյուղագրական գրականությունը՝ որպես նարոդնիկական գաղափարախոսության հայկական մշակման արտահայտություն, ծաղկեց «Մուրճի» էջերում, անհերքելի ապացույցներ բերելով ամսագրի դեմոկրատական կողմնորոշումներին։ Կ. Դանիելյանը առաջին պլան է մղում «Մուրճի» դեմոկրատիզմի դրսևորումները։

Այսպիսով, տարբեր մասնագիտության հետազոտողներ «Մուրճին» մոտեցել են տարբեր տեսանկյուններով, բացահայտել ու գնահատել նրա գործունեության այս կամ այն կողմը։ Սակայն, տարբերակված ուսումնասիրության առարկա դառնալով, «Մուրճը» արժանի է այն բանին, որպեսզի մենագրական քննության առնվի ամբողջությամբ, որը միայն հնարավորություն կտա որոշելու նրա իսկական տեղն ու դերը հայ հասարակական մտքի զարգացման և մամուլի պատմության մեջ, ինչպես նաև գնահատելու նրա էջերում ամբարված հսկայական նյութը XIX դարի վերջի հայ հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ։ «Մուրճն» իր մեջ խտացնում է անցյալի հայ պարբերականներից շատերի ճակատագիրը՝ դառը, բայց պատվաբեր։ Այսօր նրա հատորիկները պատմության դարձած հանդչում են գրադարակների վրա, բայց բավական է թերթել ժամանակի շնչից դեղնած էջերը, որպեսզի նրանք խոսեն, պատմեն, թե գոյության ինչպիսի դաժան կռիվ էր վիճակված այն մամուլին, որն ուզում էր ազնիվ ու շիտակ մնալ բուրժուական ապականված բարքերի հեղձուկ մթնոլորտում։ Շահումյանի խոսքերով՝ «Մուրճը» գրականության անկեղծ և անաչառ բարեկամների համար... միշտ հետաքրքիր է եղել իր բովանդակությամբ և մանավանդ՝ հայ ընթերցող

հասարակության կողմից ճանաչված իր շիտակությամբ ու ազնվությամբ»[5]:

Իրեն նախորդ ունենալով «Հյուսիսափայլ», «Կռունկ» և «Փորձ» ամսագրերը, Արասխանյանի «Մուրճը» ոչ միայն պահպանեց ու զարգացրեց նրանց լավագույն ավանդույթները, այլև մի քայլ առաջ մղեց հայկական ամսագրային կուլտուրան, ուշագրավ էջ բացելով հայ մամուլի պատմության մեջ:

Նախորդ ուսումնասիրողներն զբաղվել են Ա. Արասխանյանի «Մուրճով»: Սակայն ամսագիրն ունեցել է նաև նոր շրջան, որն ընդգրկում է 1901—1907 թթ., երբ «Մուրճը» նոր բովանդակություն է ստանում ինչպես խմբագրի փոփոխման, այնպես էլ նոր դարաշրջանի սկզբում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական խոշոր տեղաշարժերի հետևանքով: «Մուրճի» հին և նոր շրջանները համընկնում են անցյալ դարի վերջին և նոր դարի սկզբին: Սակայն դա դարաշրջանների սոսկական հաջորդափոխություն չէր. դա ավարտն էր բուրժուական առաջադիմության և սկիզբը՝ պրոլետարական ազատագրական շարժման: Հանձին սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության, պրոլետարիատը ստեղծեց իր քաղաքական կազմակերպությունը, որը ղեկավարելու էր նրա պայքարն ընդդեմ բուրժուական դասակարգի, հանուն սոցիալիզմի հաղթանակի: Նոր դարաշրջանը նոր բովանդակություն հաղորդեց «Մուրճին». ահա ինչու մենք նպատակահարմար ենք գտել ամսագրի նոր շրջանն ուսումնասիրել առանձին, մեր աշխատության երկրորդ մասում:

Հարկ է նշել, որ նոր «Մուրճը» բոլորովին ուսումնասիրված չէ հնատազոտողների կողմից: Մենք առաջին փորձն ենք անում գնահատելու նրա դերն ու նշանակությունը հայ հասարակական մտքի պատմության և, մասնավորապես, հայ մամուլի պատմության մեջ: Սակայն, առանձնացնելով, մենք նոր «Մուրճը» չենք կտրում նրա նախորդից՝ հին «Մուրճից», այլ անց ենք կացնում ղեկավարներ, համեմատություններ, որոնք ավելի ցայտուն են դարձնում թե՛ մեկի և թե՛ մյուսի արժեքը:

XX դարի սկզբում «Մուրճը» կորցնում է իր առաջատար դերը հայ պարբերական հրատարակությունների շարքում: Հանդես է գալիս նոր՝ պրոլետարական մամուլը, զինված ամենաառաջադիմական դաղափարախոսությամբ՝ մարքսիզմով: Սակայն «Մուրճը» շարունակում է մնալ

---

5 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1975, էջ 418 (այսուհետև՝ ԵԼԺ):

առաջատար գրական հանդես, քայլելով գրական շարժման ավանդարդում: Անկախ երկրորդ շրջանի խմբագրի՝ Լևոն Սարգսյանի, ամսագրին հաղորդած քաղաքական ուղղությունից, «Մուրճի» էջերում տպագրվող հայ նշանավոր գրողների՝ Թումանյանի, Իսահակյանի, Շիրվանզադեի, Փափազյանի, Հովհաննիսյանի, Տերյանի և մյուս առաջադեմ գրողների ստեղծագործությունները զգալի դեր կատարեցին հայ գրականության զարգացման գործում: Մեծ են ամսագրի ծառայությունները նաև համաշխարհային գրականության նվաճումները հայ իրականության մեջ մասսայականացնելու ուղղությամբ: «Մուրճի» նոր շրջանը, նախորդի նման, հետաքրքրություն է ներկայացնում նաև պատմագիտական առումով, որովհետև այն անգնահատելի հարուստ նյութ է պարունակում հայ ժողովրդի XX դարի սկզբի հասարակական-քաղաքական կյանքի ուսումնասիրման համար: Բազմաթիվ հարցերով առնչվելով և՛ ռուսական, և՛ միջազգային քաղաքական հոսանքների գաղափարական պայքարին, ամսագիրը հնարավորություն է ընձեռում լուսաբանելու այդ պայքարի հայկական արծարծումները: Նոր «Մուրճի» ուսումնասիրությունը, մեր կարծիքով, բազմաթիվ կողմերով հասունացած էր և անհրաժեշտ:

Մենագրությունը շարադրելու համար ուսումնասիրել ենք «Մուրճի» և նրան ժամանակակից հայ մամուլի հավաքածուները, Հայկական ՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի (ԳԱՔ), մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվի, Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվի (ՎՍՍՀ ԿՊՊԱ) և ՍՍՀՄ կենտրոնական պետական պատմական արխիվի (ՍՍՀՄ ԿՊՊԱ) նյութերը, որոնք առնչվում են «Մուրճին»:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

«ՄՈՒՐՃ». ՀԻՆ ՇՐՋԱՆ (1889—1900)

Գլուխ առաջին

XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական միտքը և «Մուրճ» ամսագրի ծնունդը

Կապիտալիզմը, որ աննախընթաց զարգացում ապրեց Ռուսաստանում ճորտատիրական ռեֆորմից հետո, բնականաբար իր կամքը պիտի թելադրեր և իր կնիքը դներ նաև ընդարձակ կայսրության ծայրամասերի, այդ թվում Անդրկովկասի ժողովուրդների կյանքի վրա։

Զարգանալով խորությամբ, կապիտալիզմը տարածվեց նաև լայնությամբ, ինչպես ցույց է տվել Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունում, իր ոլորապտույտի մեջ ներքաշելով նաև Անդրկովկասը։ Հարուստ հումքային բազա և շուկա, ահա ինչն էր Անդրկովկասը դարձնում ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային կապիտալիզմի համար գայթակղության առարկա, նաև՝ մրցակցության թատերաբեմ։ Սակայն, Անդրկովկասի կապիտալիստական ուղիով զարգանալու պահանջը, որքան էլ հրամայական ու անխուսափելի, կաշկանդվելու էր մետրոպոլիա և գաղութ փոխհարաբերությամբ։ Անդրկովկասի տնտեսական զարգացումն ընթանալու էր ուրույն ճանապարհով՝ դրական և բացասական լիցքերի զուգորդումով, հակասություններով լի, հիվանդագին, միակողմանի։ Ինչ էլ որ լիներ, կապիտալիզմի զարգացումն անխուսափելի էր և չափ ու կշռի իր վերջնական արդյունքով՝ դրական, քանի որ դա շարժում էր դեպի առաջ։ Նորը փոխարինելու էր գալիս իր դարն ապրածին։

XIX դարի երկրորդ կեսը արգասավոր շրջան եղավ արևելահայ մամուլի պատմության մեջ, արգասավոր ոչ միայն և ոչ այնքան մամուլի օրգաններների առատությամբ, որքան այնպիսի պարբերականների ստեղծ-

մամբ, որոնք գաղափարական ամբողջ հոսանքներ ներկայացրին, ակտիվ սելով հայ հասարակական միտքը, հավակնեցին կուսակցությունների դեր կատարել հայ իրականության մեջ՝ ծնունդ տալով «մշակական», «մեղվական», «նոր-դարական», «հին-մուրճական», «նոր-մուրճական» և այլ արտահայտությունների, որոնք հատկանշում են ոչ միայն այս կամ այն օրգանը, այլև գաղափարական ամբողջ ուղղություններ։ Մամուլի այս վերելքը պատահական չէր, այն պայմանավորված էր 1861 թ. ռեֆորմի շնորհիվ կաշկանդումից ձերբազատված բուրժուական հարաբերությունների բուռն զարգացմամբ։

Վ. Ի. Լենինը, համեմատելով կապիտալիզմի զարգացման տեմպերը Եվրոպայում և Ռուսաստանում, գրում էր. «61 թվականից հետո կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ընթացավ այնպիսի արագությամբ, որ մի քանի տասնամյակներում կատարվեցին այնպիսի փոփոխություններ, որպիսիները եվրոպական մի քանի հին երկրներում տևել էին ամբողջ հարյուրամյակներ»[1]։

Զարգացման այս արագ տեմպը, իհարկե, Ռուսաստանի ծայրագավառների համար չէր։ Սակայն, XIX դարի երկրորդ կեսը հսկայական փոփոխություններ մտցրեց նաև Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի կյանքում, պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում։ Բուրժուական հարաբերությունների վերընթաց, առաջադիմական շրջանն իր ցայտուն արտահայտությունը գտավ մամուլում. արևելահայ կյանքում այն առանձնապես հատկանշվեց բուրժուական դեմոկրատիայի անդրանիկ օրգանով՝ «Հյուսիսափայլով», ապա Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթով և Ավետիք Արասխանյանի «Մուրճ» ամսագրով։ Բուրժուական հարաբերությունները Անդրկովկասում ուշ սկսեցին զարգանալ, ուստի բուրժուական առաջադիմական գաղափարախոսությունն իր այդ նշանակությունը պահպանում է մինչև XIX դարի վերջը։ «Պետք է նկատի ունենալ, որ ժամանակագրական տեսակետից հայ ժողովրդի ինչպես տնտեսական և սոցիալական կյանքը, այնպես էլ հասարակական-տնտեսական միտքը որոշ չափով ետ էր մնում Ռուսաստանից։ Այդ պատճառով էլ, մինչդեռ ռուսական լիբերալիզմը 80-ական թվականներին արդեն դադարում է պրոգրեսիվ հոսանք լինելուց, հայ լիբերալիզմը դեռ շարունակում է մնալ այդպիսին»[2]։

---

1 Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 20, էջ 213։

2 Ս. Զուրաբյան, *Նշվ. աշխ.*, էջ 365։

Անդրկովկասում՝ որպես հետամնաց ծայրամասում, կապիտալիզմի զարգացման յուրահատկություններն իրենց կնիքը դրեցին հասարակական հոսանքների ձևավորման վրա, որոնք հայ իրականության մեջ երբեք էլ ցայտուն սահմանազատվածություն չունեցան։ Գաղափարական էկլեկտիզմը միշտ էլ յուրահատուկ է եղել տնտեսական զարգացմամբ ետ մնացող ժողովուրդներին, իսկ կապիտալիզմի զարգացումը Անդրկովկասում ետ էր մնում եվրոպական առաջավոր երկրներից ոչ թե տասնամյակներով, այլ հարյուրամյակներով։ Պլեխանովին գրած նամակներից մեկում էնգելսը նշում էր, որ Ռուսաստանի նման մի երկրում, «որտեղ ժամանակակից խոշոր արդյունաբերությունը պատվաստված է նախնադարյան գյուղացիական համայնքի վրա և որտեղ միաժամանակ ներկայացված են քաղաքակրթության բոլոր միջակա ստադիաները, մի երկրում, որը բացի դրանից, շրջապատված է դեսպոտիզմի քաշած ավելի կամ պակաս ամուր ինտելեկտուալ չինական պարիսպով, չպետք է զարմանալ իդեաների ամենաանհեթեթ ու ամենատարօրինակ դուգորդությունների առաջացման վրա»[3]։ Էնգելսի այս խոսքերը առավել ևս կարելի է վերագրել ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասին՝ Անդրկովկասին և ոչ թե զարմանալ XIX դարի երկրորդ կեսում այստեղ տիրող գաղափարական խայտաբղետության, հակասականության ու էկլեկտիզմի վրա, այլ դա դիտել որպես բնական ու օրինաչափ մի բան։

Հայկական լիբերալիզմն իր զարգացումն ապրեց պատմական այն շրջափուլերին համապատասխան, որոնցով ընթացավ կապիտալիզմը Անդրկովկասում։ Եթե լիբերալիզմի ծննդյան վկայականը կարելի է տեսնել Ստ. Նազարյանի «Հյուսիսափայլ» ամսագրում, ապա Գր. Արծրունու «Մշակ» թերթում՝ նրա հասունության վավերագիրը. «Մշակականությունը» հայկական լիբերալիզմի, որպես արդյունաբերական բուրժուազիայի գաղափարախոսության, դասական արտահայտությունն է։ 90-ական թվականներից սկսում է լիբերալիզմի վարքննթացը։ Տարանջատվելով, նա գնում է դեպի աջ և դեպի ձախ։ Երկու թևերն էլ ստանում են իրենց ցայտուն արտահայտությունը, առաջինը՝ հանձին ետարծրունյան «Մշակի», իսկ մյուսը՝ հանձին Ավետիք Արասխանյանի «Մուրճ» ամսագրի։

---

3 «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Երևան, 1954, էջ 439—440։

«Մուրճ» ամսագրի ծնունդը համընկնում է պատմական այն ժամանակաշրջանին, երբ Լենինի բնութագրմամբ՝ «դեմոկրատական և սոցիալիստական տենդենցները անջատվեցին լիբերալ տենդենցից և սահմանազատվեցին մեկը մյուսից»[4]։

Արասխանյանի լիբերալիզմը զարգացավ ոչ թե դեպի աջ, այլ դեպի ձախ, այսինքն շատ հարցերում ստացավ դեմոկրատական հնչեղություն. Նրա «Մուրճը» 90-ական թվականներին դարձավ հայ դեմոկրատ մտավորականության հավաքատեղին ու ամբիոնը։

* * *

«Մուրճի» ասպարեզ գալու գաղափարական նախահիմքերը որոնելիս մենք պետք է նրա ծննդից ետ դառնանք ավելի քան երեք տասնամյակ ու կանգ առնենք ակունքի՝ «Հյուսիսափայլ» ամսագրի մոտ, քանի որ նրանից է սկիզբ առնում հասարակական-գաղափարական այն հոսանքը, որի զարգացման շրջափուլերից մեկի ցայտուն արտահայտությունը հանդիսացավ Արասխանյանի «Մուրճը»։

XIX դարի կեսերը հայ ժողովրդի ազգային զարթոնքի ու վերածնության սկիզբն են։ Այն իր ամենավառ արտահայտությունը գտավ «Հյուսիսափայլ» բազմախոսուն անունով ամսագրում, որն սկսեց հրատարակել Ստեփանոս Նազարյանը Միքայել Նալբանդյանի հետ 1858 թ., Մոսկվայում։

Ինչի՞ համար կյանքի կոչվեց «Հյուսիսափայլը»։ Ռուսաստանում ցրված հայությանը մատուցելու ռուսական կրթության և գիտության պտուղները, ազգին դարավոր մտավոր լճացումից ազատելու, հոգևոր կամուրջ ձգելու հայերի և եվրոպական ազգերի միջև[5]։

Որո՞նք էին այն հիմնական խնդիրները, որ բարձրացրեց իր էջերում «Հյուսիսափայլը», ազգային վերածնության ի՞նչ ուղի բացեց նա, ի՞նչ ավանդների սկիզբը դրեց, որ հետո պիտի շարունակեին ու զարգացնեին հայ մամուլի գալիք սերնդի մշակները՝ նոր ժամանակների ոգուն ու պահանջներին համապատասխան։

Նազարյանի «Հյուսիսափայլին» վիճակված էր լինելու հին հասարակության, կղերաֆեոդալական ռեակցիայի դեմ պայքարի առաջամարտիկը։ Նազարյանը, սակայն, դարաշրջանի խնդիրներին նայում էր

---

4 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 20, էջ 216։

5 Տե՛ս Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 33—35։

իբրև լուսավորիչ։ Լուսավորությունը «Հյուսիսափայլի» խմբագրի համար այն համապարփակ դիտակետն էր, որի միջով բեկվում, որով պայմանավորվում էին նաև մնացած բոլոր հարցերը։

Հին աշխարհի ուժերի դեմ «Հյուսիսափայլի» կռիվը այնքանով ավելի մարտական ու արմատական դարձավ, որքանով ամսագրին իր մասնակցությունը բերեց հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որը ամսագրի համար ապահովեց դեմոկրատական ավելի լայն խավերի շահերը ներկայացնելու պատիվը։

Ժամանակը ճանապարհ էր հարթում հայ ժողովրդի բուրժուական ուղիով զարգացման համար, և «Հյուսիսափայլը» իր մեջ խտացրեց պատմական այդ անցումը։ Պատահական չէ, որ Աշ. Հովհաննիսյանը կապիտալիզմի զարգացման պրուսական և ամերիկյան ուղիների հարցն է դնում Նազարյանի և Նալբանդյանի տարակարծությունների հիմքում. «Հիսունական թվականների ընթացքում Նազարյանցի և Նալբանդյանի տարակարծությունները օբյեկտիվորեն դառնում էին կապիտալիզմի զարգացման այդ երկու հնարավոր ուղիների շուրջը։ Նրանց իդեական բախումն անդրադարձնում էր դրանցից մեկի կամ մյուսի համար տարվող լիբերալ և դեմոկրատական խմբավորումների պայքարը ռուսահայ կյանքում»[6]։

Հայ առաջադիմական բուրժուական մումուլը՝ և՛ լիբերալ, և՛ ազգային-պահպանողական ուղղության, որդեգրեց Նազարյանի հայացքները երկրի տնտեսական զարգացման պրուսական ուղու վերաբերյալ։

«Հյուսիսափայլի» լուսավորական ծրագիրը շատ լայն էր. այն նեբառնում էր ոչ միայն դպրոցի ու կրթության ոլորտը, այլև գրականությունն ու լեզուն, գիտությունն ու արվեստը, կրոնն ու եկեղեցին։ Հեղաշրջումը այս բոլորի մեջ հեղաշրջում պետք է առաջացներ նաև ժողովրդի տնտեսական կյանքում, ենթադրում էր խմբագիրը։

Աշխարհաբար լեզվի համար պայքարի ամենավճռական և հաղթական ճակատամարտը բաժին ընկավ «Հյուսիսափայլին»։ Լեզվաշինության հարցը, սակայն, մի սերնդի ջանքերով լուծվող հարց չէր։ «Հյուսիսափայլը» մանուկ լեզվի հետագա զարգացման ու հարստացման գործը պատգամեց գալիք սերունդներին։

Նոր լեզվի հարցը սերտորեն առնչվում էր նոր գրականության հետ,

---

6 Աշ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գիրք I, Երևան, 1955, էջ 228։

գրականություն, որը պետք է գրվեր ոչ միայն նոր գրական լեզվով, այլև խարխլված լիներ գաղափարական ու գեղագիտական նոր սկզբունքների վրա։ Շարունակելով մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի սկսած պայքարը գրականության ժողովրդականացման համար, «Հյուսիսափայլի» խմբագիրը և նրա գլխավոր աշխատակիցը ամսագիրը դարձրին մի դարբնոց, ուր ոչ միայն կյանքի ուղեգիր էին ստանում աշխարհիկ նոր գրականության առաջին նմուշները, այլև դարբնվում էին գեղագիտական ու գաղափարական այն սկզբունքներն ու չափանիշները, որոնցով պիտի դաստիարակվեին գրողների ամբողջ սերունդներ, որոնցով պիտի արժեքավորվեր նրանց գրական ստեղծագործությունը։

«Հյուսիսափայլը» արևելահայ մամուլում լայն քննարկման դրեց մի հարց, որի շուրջը երկար ժամանակ խմորվեց հայ հասարակական միտքը. եկեղեցու և հոգևորականության հարցն էր այդ։ Պետականությունից շատ վաղ զրկված հայ ժողովրդի պատմական ճակատագիրը մի ուրույն տեղ էր հատկացրել հայ եկեղեցուն, նրան վերապահելով ավելի մեծ դեր, քան դա բխում էր նրա կոչումից՝ իբրև հոգևոր հաստատության։ Ինչպիսի՞ն էր լինելու նրա դերը նոր ժամանակներում. այս հարցը չէր կարող չհուզել մի ամսագրի, որը ժամանակի ձայնափողը լինելու կոչում ուներ։

«Հյուսիսափայլի» ծրագիրը շատ կտրուկ էր. պետք է արմատական ռեֆորմի ենթարկել եկեղեցին, աղատագրել այն հնացած և ավելորդ ծիսակատարություններից, մերժել հոգևորականության ղեկավար դերը աղգային լուսավորության գործում։ Հոգևոր իշխանությունների և նրանց ձայնափող պարբերական օրգանների՝ Մսերյանների «Ճռաքաղ» ամսագրի, Ստ. Մանդինյանի «Մեղու Հայաստանի» թերթի և Գ. Այվազովսկու «Մասյաց Աղավնի» ամսագրի կողմից «Հյուսիսափայլի» գործունեությունը գնահատվեց ոչ միայն իբրև հավատընդդեմ, այլև աղգընդդեմ։

«Հյուսիսափայլի» դեմ սուր մերկացրին ոչ միայն կղերաֆեոդալական հոսանքի գաղափարախոսները։ Նրա դեմ բանավեճի ելան նաև աղգային-պահպանողական գործիչները (ինչպես օրինակ, «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի խմբագիր Մարկոս Աղաբեկյանը), որոնց համար հայոց եկեղեցին աղգության խորհրդանիշ էր, աղգապահպանման գործոն։

Անցյալի մտավորականները չկարողացան տեսնել մեկ օրգանի մեջ երկու՝ Նազարյանի լիբերալ-լուսավորական և Նալբանդյանի մարտնչող դեմոկրատական ուղղությունների առկայությունը։ Նրանց համար «Հյու-

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

սիսափայլը» ազգային լուսավորության ու գարթոնքի ձայնափողն էր, որին պետք էր ընդօրինակել, որի սկսած գործը պետք էր շարունակել նոր ժամանակներում: Պատահական չէ, որ «Հյուսիսափայլից» հետո XIX դարի երկրորդ կեսին լույս տեսած հայկական համարյա բոլոր առաջադիմական օրգանները, լիբերալ թե ազգային-պահպանողական ուղղության, «Հյուսիսափայլի» օրինակին հետևելու հայտով են սկսել իրենց գործունեությունը: Սա սոսկ ակնածանքի, սիրո ու հարգանքի տուրք չէր իրենց արժանավոր նախորդին: Ժամանակը ճանապարհ էր հարթում այն գաղափարների հաղթանակի համար, որ արծարծեց «Հյուսիսափայլը» բուրժուական գարթոնքի արևագալին և որի համար պայքարի իրենց բաժինը պետք է հանեին նոր հասարակարգի գալիք սերունդները:

* * *

Հայ հասարակական մտքի զարգացման հաջորդ շրջափուլը, որի վրա մենք հարկ ենք համարում կանգ առնել, քանի որ այն անմիջապես նախորդում է «Մուրճի» երևան գալուն և փաստորեն նախապատրաստում, անխուսափելի ու հրամայական դարձնում նրա ծնունդը, 70—80-ական թվականներն են, որ հայ մամուլի պատմության մեջ նշանավորվում են «Մշակ» թերթի հրապարակ գալով և Գրիգոր Արծրունու գործունեությամբ:

Գրիգոր Արծրունու «Մշակը» հայ մտավորականության շատ ներկայացուցիչների, այդ թվում ապագա «Մուրճ» ամսագրի խմբագրի համար դարձավ մի իսկական դպրոց՝ երկու տասնամյակ տևողությամբ, գաղափարական ու հոգևոր սնունդ տալով նրանց, իր խոր կնիքը դնելով հայկական կյանքի բոլոր բնագավառների վրա:

Ի՞նչ էր փոխվել «Հյուսիսափայլից» մեկ տասնամյակ հետո:

«Հյուսիսափայլի» ծավալած պայքարը, որ փաստորեն բուրժուական հարաբերությունների գաղափարական նախապատրաստությանն էր հանգում, ավարտվեց լուսավորական շարժման հաղթանակով: Վրա հասան գործնական խնդիրներ լուծող ժամանակներ:

70—80-ական թվականներին Անդրկովկասը թևակոխեց նոր շրջափուլ, որը հատկանշվում է կապիտալիզմի զարգացմամբ: Սոցիալ-տնտեսական խոր տեղաշարժերը չէին կարող հեղաբեկում չմտցնել գաղափարական կյանքում, որի զգայուն բարոմետրն էր մամուլը: Այս նոր ժամանակների ձայնափողը հանդիսացավ Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթը, որն սկսեց լույս տեսնել 1872 թ.:

«Մշակի» Երևան գալը սոսկ հերթական պարբերական օրգանի ծնունդ չէր, այլ շրջադարձային երևույթ հայ մամուլի պատմության մեջ, մանավանդ «Հյուսիսափայլին» հաջորդած ամլության այն տարիներից հետո, երբ արևելահայ հասարակական կյանքի զարկերակը հազիվ նկատելի բաբախում էր «Հայկական աշխարհի» և «Արարատի» էջերում։ Ժամանակը ծնում է իր գործչին։ Գրիգոր Արծրունին ճիշտ հասկացավ ժամանակաշրջանի պահանջը՝ եվրոպական տիպի օրաթերթի ստեղծման անհրաժեշտությունը, որը ոչ միայն ժամանակի արձագանքը պիտի լիներ, այլև կոչնակը։ Պետք էր մամուլը մոտեցնել կյանքին, ձաղկել այն ամենը, ինչ խանգարում էր առաջընթացին, արմատական վերակառուցումների պահանջներ հարուցել, մի խոսքով՝ ճանապարհ հարթել բուրժուական նոր հասարակարգի զարգացման համար։

«Մշակի» առաջին համարի «Երեկ, Այսօր և Էգուց» բազմախոսուն վերնագիրը կրող առաջնորդողը, որը նվիրված էր աշխատանքի փառաբանությանը, Գրիգոր Արծրունու՝ որպես նոր զարգացող բուրժուական դասակարգի գաղափարախոսի, հավատո հանգանակն է.

«Երեկ մենք կտակարանական ազգ էինք,
Այսօր մենք ազգասերներ ենք,
Էգուց մենք պետք է աշխատողներ դառնանք»։

Սա, փաստորեն, կապիտալիզմի զարգացման, բուրժուական ազատ գործարարության պահանջ է։ Արծրունին «Մշակի» համար ընտրած ուղղությունը մեկ բառով բնութագրեց որպես «մտրակողական», որը հետագայում հպարտությամբ կրկնում էին նաև նրա հետևորդները։

Դառնալով հյուսիսափայլյան ավանդների ժառանգորդը, որդեզրելով և զարգացնելով նրա քննադատական ոգին, «մտրակողական» «Մշակը» նոր ժամանակներում ավելի գործնական հողի վրա դրեց արմատական ռեֆորմների իրականացման պահանջը։ Արծրունին ջատագովում էր ազգային կապիտալիզմի զարգացումը, դրա մեջ տեսնելով ամբողջ ազգի փրկության երաշխիքը։

Նա զգաստության կոչեր էր անում հայ կապիտալիստներին օտարամուտ կապիտալի վտանգի և հետևանքների մասին, հորդորում կապիտալը առևտրի ոլորտից նետել արտադրության ոլորտը, ավելի եկամտաբեր դարձնելու համար խոշորացնել կապիտալը՝ բաժնետիրական ընկերություններ կազմելով։ Նա հորդորում էր հետևել քաղաքակիրթ եվրոպական երկրներին, տիրապետել գիտությանն ու տեխնիկային։

Արծրունու տնտեսական լիբերալիզմը, իբրև արդյունաբերական բուրժուազիայի դաղափարախոսություն, պատմական առումով առաջադիմական էր, որովհետև այն հանում էր հայկական կյանքի առաջընթացի մեքենան հին, մաշված, արդեն ոչ պիտանի նեղ շավիղներից և դնում նոր, լայն ու բանուկ ճանապարհների վրա։

Արծրունու մտրակողական պաթոսը առավել ուժգնությամբ էր դրսևորվում հնի և ավատականի դեմ, որի ամենաերկարակյաց և հիմնավոր սյուներից մեկը հայ եկեղեցին էր։ Գրիգոր Արծրունուն ևս վիճակված էր «հերձվածողի», եկեղեցու թշնամու անուն վաստակել, ինչպես «Հյուսիսափայլի» խմբագրին։ Նա ոչ միայն շարունակեց, այլև ավելի բորբոքեց ու թեժացրեց պայքարը հայ կղերականության դեմ, եկեղեցին ռեֆորմի ենթարկելու հյուսիսափայլյան պահանջը դարձնելով կոնկրետ ծրագիր։

Ազատամտականության հայ առաջնորդը բուրժուադեմոկրատական պահանջները տարածում էր նաև հոգևոր հաստատության վրա, վերացնելու համար հայ կյանքի մեջ հոգևորականության հեգեմոնիան և նրա գործունեությունը ևս նպատակամղելու բարենորոգչական վերափոխումների իրագործմանը։

Դժվար է գտնել հասարակական կյանքի մի բնագավառ, ուր մուրք գործած չլինի «Մշակը» և առաջադրած չլինի բարենորոգչական իր հեղափոխիչ ծրագրերը, դրանց իրականացման համար որպես զենք դիտելով ոչ միայն մամուլն ու հրապարակախոսությունը, այլև գրականությունը, թատրոնը, արվեստը։ Բայց ծրագրերը ծրագրեր են մնում, իսկ կյանքը՝ կյանք. այն ամեն օր ապացուցնելու էր բերում, որ բուրժուական լիբերալիզմի ռեֆորմիստական ծրագրերը չեն կարող լուծել սոցիալական հակասությունները, չեն կարող բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը։ Ընդհակառակը, կապիտալիզմը առաջ էր գնում ավերածություններ գործելով, բևեռացնելով հասարակությունը, քայքայելով և ունեզրկելով աշխատավոր ժողովրդին։

Ճորտատերերի ձեռքով կատարված 1861 թ. առանց այն էլ կիսատպռատ ռեֆորմները ծայրամաս հասան ոչ միայն մի ամբողջ տասնամյակ ուշացումով, այլև ավելի անկատար, իսկապես ծաղր դարձնելով գյուղացու «ազատագրումը» մանավանդ այստեղ։ Դեռ ավատական կապանքներից չազատագրված, գյուղացիությունն ընկավ զարգացող կապիտալիզմի առաջին իսկ հարվածների տակ։ Նահապետական գյուղն սկսեց քայքայվել, շերտավորվել, պանդխտության մղելով հոծ զանգ-

վածների։ Օրաթերթը կամա-ակամա արձանագրում էր փաստերը, որ հաղորդում էին նրա գավառային թղթակիցները։ «Մշակի» խմբագիրը տագնապով էր նայում օր օրի ստվարացող մշակ դասակարգին։ Սակայն կարելի է դեպքերի ժամանակակիցը լինել, հետևանքի ականատեսը, բայց չտեսնել պատճառը։ Որքան էլ Լեոն Նազարյանին ու Արծրունուն համեմատելիս նրանց համարեր հայր և որդի հարաբերությամբ իրար հաջորդող սերունդներ, մեկը՝ իդեալիստ, մյուսը՝ ռեալիստ, այնուամենայնիվ, Արծրունու ռեալիզմը նրան հնարավորություն չտվեց թափանցելու երևույթների սոցիալ-պատմական խորքերը, տեսնելու օբյեկտիվ օրինաչափությունները, ուստի նա ևս մնաց իդեալիստ՝ հասարակական զարգացման խնդիրներին մերձենալիս։ Գյուղացուն հողին կապելու, նրան տնտեսական կործանումից փրկելու համար նա ձեռքը մեկնում էր փրկարար խարիսխների. հարկավոր է փոխատու խնայողական դրամարկղներ կազմակերպել, զարկ տալ հասարակական ինքնօգնությանը, ապահովել գյուղացուն էժան վարկով, ընդլայնել գյուղական ինքնավարությունը, ստեղծել համայնական շտեմարաններ, զարգացնել տնայնագործական արդյունաբերությունը, գյուղատնտեսական մեքենաներ ներմուծել հողագործության մեջ։

Անդրկովկասում կապիտալիզմի զարգացումը հետամտող թերթի էջերում շուտով պիտի երևար նաև մի հարց, որը պայմանավորված էր այդ զարգացման անխուսափելի արգասիքով՝ բանվոր դասակարգի առաջացումով, որն իր շարքերն արագորեն խտացնում էր քայքայվող մանր արհեստավորների և քաղաք գաղթող գյուղացիների հաշվին։ «Մշակը» ջանում էր «բանվորական խնդիրը» լուծել սպառողական և արտադրական ընկերությունների միջոցով, հիմնված բանվորների իսկ ինքնօգնության վրա։ Գերմանական գռեհիկ տնտեսագիտական դպրոցի դինանոցից էին վերցված այս զենքերը, որոնք Անդրկովկասում մանր արտադրողներին խոշոր արդյունաբերության հարվածներից փրկելու գործում նույնքան անզոր պիտի լինեին, որքան Գերմանիայում եղան։ Արծրունին միամիտ տեսություն էր զարգացնում, որ իբր սոցիալիզմը հակառակ է հայ ազգային բնավորությանը, որ իբր Անդրկովկասում նրա համար հող չկա, որովհետև նա իր ներքին հարցերն ունի։ Իրականում՝ հեղափոխական որևէ դաղափար չէր կարող տեղավորվել խաղաղ զարգացման նրա լիբերալ-ռեֆորմիստական ծրագրերի կանոնագրքում, որտեղ հարգի էին միայն «վերևից» կատարվող բարեփոխումները։

Տարօրինակ չպիտի թվա, որ «Մշակը» հանդես եկավ նաև կապիտալիզմի «քննադատի», ժողովրդի շահերի «պաշտպանի» դերում: Սա պայմանավորված էր երկու հանգամանքով. հայ իրականության մեջ հասարակական հոսանքների ոչ ցայտուն սահմանազատման պայմաններում, երբ դեմոկրատ գործիչները, չունենալով իրենց առանձին ամբիոնը, օգտվում էին բուրժուական պարբերական օրգանների հյուրընկալությունից և, այդպիսով, դեմոկրատական երանգ հաղորդում դրանց: Եվ մյուսը. լիբերալ գործիչները դեմ չէին կապիտալիզմի առանձին «արատները» քննադատելուն, անխախտ թողնելով նրա հիմքերը, հավատալով և փայփայելով «լուսավոր» կապիտալիզմի իրենց իդեալը, որը սնվում ու զարգանում էր եվրոպական բուրժուական գաղափարախոսների առասպելից՝ կապիտալիստական կարգերի հավերժության և առաջադիմության վերաբերյալ:

80-ական թվականների կեսերից «Մշակի» էջերում սկսեց նշմարվել գաղափարական տեղաշարժություն, որը արդյունք էր նրա խմբագրի աշխարհայացքային էվոլյուցիայի՝ պայմանավորված այն դասակարգի սոցիալ-քաղաքական դիմափոխությամբ, որի շահերի պաշտպանությանն էր ի վերջո հանգում նրա ամբողջ գործունեությունը: Բուրժուազիան արդեն հասել էր տնտեսական հեգեմոնիայի: «Արծրունու տնտեսական նախագծումները 80-ական թվականների երկրորդ կեսին արդեն ղուրկ էին արմատական ռադիկալիզմի նախկին ոգևորող փայլից: Հրապարակախոսը հիմա հանդես չէր գալիս մշակ դասի անունից: Նա շեշտում էր միայն միջին դասի սոցիալ-պատմական կոչումը հասարակության առաջադիմության գործում: ...Նախկին մտրակողական համարձակախոսության տեղ այժմ երևում են գործակցության հաշտարար քարոզներ»[7]:

Գրիգոր Արծրունու կենսագիր Լեոն ևս, որ քիչ հարցերում չի դրագնահատում իր պաշտելի ուսուցչի դերը, նշում է նրա գործունեության թուլացումը սկսած 80-ական թվականներից, դա պայմանավորելով, սակայն, միայն քաղաքական այն իրադրությամբ, որ ստեղծվեց Ալեքսանդր III-ի գահակալության հետևանքով: Լեոն՝ Արծրունու գործունեության բարձրակետը համարում է 1878 թ., որից հետո այն աստիճանաբար իջնելով թուլանում է, և այնուհետև հրապարակախոսը մինչև իր կյանքի վերջը այլևս չի կարողանում վերադառնալ իր եռանդոտ ու հռչակավոր գործունեությանը[8]:

---

7 «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Երևան, 1964, էջ 131—132:

8 Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, մաս 3, էջ 212, 334—336:

Արժանին հատուցելով արծրունյան «Մշակի» դերին, պիտի ասել, որ այն իր մեջ խտացրեց երկու հասարակարգերի՝ ավատական և բուրժուական, կենաց ու մահու կռիվը, դառնալով ոչ միայն մարտավիկա ու տարեգիր, այլև կոչնակ։

Հինը մտրակվեց, խարխլվեց, մերժվեց։ Նոր հարաբերությունների համար ճանապարհ հարթվեց։ Այժմ կյանքը պահանջ էր առաջադրում տնտեսականորեն հիմնավորելու հասարակական զարգացման հեռանկարները։ Օրաթերթը իր կոչումով ավելի շատ կապված լինելով առօրյա խնդիրների հետ, այդ հնարավորությունը քիչ ուներ և այն կարելիին չափ օգտագործում էր։ Արծրունին հասկանում էր մի սովարածավալ ամսագրի անհրաժեշտությունը, և Լեոն վկայում է, որ նա իր կյանքի վերջին տարիներին փայփայում էր մի այդպիսի ամսագիր ստեղծելու միտքը։ Սակայն այդ առաքելությունը վիճակված էր իրագործելու ոչ թե նրան, այլ մեկ ուրիշ հրապարակախոսի՝ Ավետիք Արասխանյանին։ Եվ գուցե լավն այդ էր։ «Մշակն» այլևս չուներ հարցերի բազմազանության ու խորության այն մակարդակը, որ ուներ առաջին տասնամյակում։ Արծրունու մտրակող գրիչն այժմ ավելի շատ էր հաշտարար մոտիվներ հնչեցնում և սկսել էր նմանվել «Հյուսիսափայլի» խմբագրի «խաղաղության շյուղին», որով նա ուզում էր հյուսել ամսագրի փրկության խարիսխ-պարանը։ Արծրունու ազատամտականությունը գնալով ազատվել էր դեմոկրատական շղարշից և ավելի զտարյուն բուրժուական դարձել։ «Իր գոյության առաջին տասնամյակում «Մշակն» ավելի համադեմոկրատական հայեցողություն ուներ և այս իմաստով էլ սկզբնապես նրա շուրջը համախմբված էր դեմոկրատ գրողների ավելի մեծ խումբ (Պռոշյան, Աղայան, Սունդուկյան, Րաֆֆի և ուրիշներ), բայց հետագայում, երբ խմբագիրը ավելի սրեց իր լիբերալ-բուրժուական ուղղությունը, դեմոկրատ գործիչները հեռացան թերթից, և վերջինս կորցրեց երբեմնի հեգեմոնիան ազգի մտավոր շարժման մեջ»[9]

Սերունդների հաջորդափոխության անխախտ օրենքով ժամանակը բեմահարթակից իջեցնում է իր գործն ավարտած գործչին, նրան նոր, ավելի թարմ ուժով փոխարինելու համար։ Հայ մամուլի անդաստանում 80-ական թվականներին այդպիսի ուժ էր Եվրոպայից նոր վերադարձած, տնտեսագիտության դոկտոր Ավետիք Արասխանյանը։

Ո՞վ էր նոր գործիչը։

---

9 «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, էջ 30։

* * *

Ավետիք Մկրտումի Արասխանյանը ծնվել է 1857 թ. փետրվարի 26-ին, Վերին Ագուլիսում[10]:

Հայրը՝ Մկրտումը, որդուն նախ կրթության տվեց տեղական դպրոցներում, սկզբում ս. Շմավոն եկեղեցու քահանա Տեր-Սիմոնի մոտ, ապա Հայրապետ Քալանթարյանի, վանքի և 1867 թ. հիմնված ծխական դպրոցներում: Ուսումնասեր ագուլիսցիք իրենց դպրոցներն ապահովել էին լավ ուսուցիչներով. այստեղ էին գործում Պերճ Պռոշյանը, Ռուբեն Ջալալյանը, Սամուել Գյուլզադյանը և ուրիշներ, որոնք եղան պատանի Ավետիքին դեպի գիտություն առաջնորդող առաջին մեկենասները, անջնջելի տպավորություն թողնելով նրա հիշողության մեջ:

Լինելով ունևոր ընտանիքի զավակ, Արասխանյանը հնարավորություն ուներ իր կրթությունը շարունակելու: 1870 թ. հայրը նրան ուղարկում է Թիֆլիս, ուր կես տարի նախապատրաստավելուց հետո Ավետիքը ընդունվում է ռեալական դպրոցը, որն ավարտում է 1876 թ.: Ինքնակենսագրության մեջ Արասխանյանը հատկապես հիշում է այն շրջանը, երբ նա ապրում էր դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ Ստ. Պալասանյանի մոտ, որը նրա վրա բարերար ազդեցություն է ունեցել: Պալասանյանի միջոցով, որը «Մշակի» առաջին աշխատակիցներից էր, դեռ աշակերտական տեղանից Ավետիքը կապվում է թերթին, ապա անձնական ծանոթություն հաստատում Արծրունու հետ, մասնակցում խմբագրական ժողովներին, որոնցից մեկի ժամանակ ծանոթանում է Րաֆֆու հետ:

Այն հետաքրքրություններ ուներ ռեալական դպրոցի սան Ավետիք Արասխանյանը, ինչի մասին վկայում են նրա կողմից բժիշկ Բոկի «Գործնական խրատներ երեխաների մտավոր և ֆիզիկական կրթության համար տանը և ուսումնարանում» գրքույկի հայերեն թարգմանությունն ու տպագրությունը և նրա անդրանիկ հոդվածը «Մշակ» թերթում 1875 թ., արհեստագիտական ուսման անհրաժեշտության մասին ծխական դպրոցներում:

1876 թ. Արասխանյանն ուղևորվում է արտասահման՝ բարձրագույն կրթություն ստանալու: Ուսումն արտասահմանում տևում է վեց տարի (1876—1882 թթ.): Երեք կիսամյակ ուսանում է Լայպցիգի համալսարանում, ապա համաշխարհային ցուցահանդեսի բացման տարում՝ 1878-ին, անցնում Փարիզ: Այստեղ նա երկու կիսամյակ ուսանում է «Կոլեժ դը

---

10 *Տե՛ս* Ա. Արասխանյան, *Ինքնակենսագրություն*, Թիֆլիս, 1912:

Ֆրանս» և քաղաքական գիտությունների բարձրագույն դպրոցների իրավագիտական ֆակուլտետում։ Ուշագրավ է այն փաստը, որ ակադեմիական ընկերությունում նա կարդում է երկու ռեֆերատ՝ բանվորական ընկերությունների և առևտրական դաշինքների մասին, որոնք հիշատակվում են 1879 թ. ուսանողական տարեգրքում։

Հիշատակության արժանի է մի փաստ ևս. Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի քննության օրերին Փարիզի «Թան» («Ժամանակ») լրագրում այդ հարցի վերաբերյալ լույս է տեսնում երկրորդ անստորագիր առաջնորդող հոդվածը, որի հեղինակը Արասխանյանն էր։ Շուտով Արասխանյանը թողնում է Փարիզը, որովհետև նրան չի բավարարում իր նախընտրած առարկաների դասավանդման դրվածքը Ֆրանսիայում և նորից անցնում է Գերմանիա (1880), այս անգամ Ստրասբուրգի համալսարանում ուսումը շարունակելու նպատակով։ Այստեղ նա պետական գիտությունների ֆակուլտետում ունկնդրում է հայտնի պրոֆեսորներ Շմոլլերի, Կնապի, Լաբանդի և Զոմի դասախոսությունները՝ քաղաքատնտեսության, վիճակագրության ու սոցիալական ուսմունքների, պետական և գերմանական իրավունքների վերաբերյալ։

Ուսման մեջ Արասխանյանը մեծ առաջադիմություն է ցուցաբերում, դառնում Շմոլլերի քաղաքատնտեսական վարժոցի հիմնական անդամներից մեկը։ Այստեղ գրած աշխատությունների համար նա ստանում է ֆակուլտետի առաջին մրցանակը, իսկ նրա գիտական հետազոտությունը, որը դարձավ նրա դոկտորական դիսերտացիան՝ «Ֆրանսիայի առևտրի քաղաքականությունը մինչև 1789 թվականը», տպագրվում է Շմոլլերի խմբագրությամբ հրատարակվող «Պետական և սոցիալական հետազոտություններ» տարեկան հանդեսում, իր իսկ՝ խմբագրի առաջաբանով։ Ավելորդ չէ նշել, որ աշխատությունը հետաքրքրություն է առաջացնում գիտական շրջաններում և արժանանում դրական գրախոսությունների ոչ միայն գերմանական, այլև ֆրանսիական մամուլում։ Իսկ ավելի ուշ ռուսական «Դելո» ամսագրի 1883 թ. №9-ում նոր լույս տեսած գրքերի քննադատական բաժնում մի ընդարձակ հոդված է տպագրվում Արասխանյանի այս աշխատության վերաբերյալ, ինչի մասին իր ընթերցողներին տեղեկացնում է «Մշակը». «Ռուսաց ամսագիրը մեծ գովասանքով է վերաբերվում դեպի պ. Արասխանյանցի հեղինակությունը։ Առհասարակ, ասում է ռուս ամսագիրը, դոկտորական դիսերտացիաները չեն կարդացվում, բայց պ. Արասխանյանցի գրքույկը եթե

մինի ձեռքը ընկնի, նա անպատճառ մինչև վերջը կկարդա այդ հետաքրքիր և ուսանելի հեղինակությունը»[11]:

1882 թ. Արասխանյանը ավարտում է Ստրասբուրգի համալսարանը, ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Նա անմիջապես հրավեր է ստանում պրոֆեսոր Շմոլլերից՝ համատեղ աշխատելու իր հրատարակած հանդեսում՝ օգնականի պաշտոնով: Բայց ոչ այս, ոչ էլ մյուս՝ Գերմանիայի կենտրոնական վիճակագրական վարչությունում ծառայելու առաջարկը, ինչպես նաև ակադեմիական կարիերայի հեռանկարը չեն գայթակղում երիտասարդ հայ հայրենասերին: Նրան կանչում էին հարազատ հեռուները:

Եվրոպայում Արասխանյանը առանձին ջանասիրությամբ ուսումնասիրեց հատկապես քաղաքատնտեսությունը: Այս առարկայի նրա ուսուցիչները՝ Վ. Ռոշերը և Գ. Շմոլլերը, հանդիսանում են տնտեսագիտության այսպես կոչված պատմական դպրոցի հիմնադիրները: Սա բուրժուական գռեհիկ տնտեսագիտական ուղղություն է, որը ծագել է Գերմանիայում XIX դարի 40-ական թվականներին: Սրա ներկայացուցիչները մեծ տեղ էին տալիս տարբեր երկրների տնտեսական պատմությանը, վիճակագրական տվյալներին, ժխտելով, սակայն, ընդհանուր տնտեսական օրենքների գոյությունը, հանդես էին գալիս անգլիական կլասիկ քաղաքատնտեսության քննադատությամբ: Նրանք առանձին եռանդով պայքարի էլան սոցիալիզմի և, մանավանդ, մարքսիզմի դեմ:

Պետք է ասել, որ թեև Արասխանյանը զգալի չափով կրեց գերմանական պատմական դպրոցի ազդեցությունը, սակայն նրա տնտեսագիտական հայացքները չի կարելի նույնացնել այս դպրոցի դավանած սկզբունքներին:

Ուշի-ուշով հետևելով Եվրոպայի քաղաքական կյանքին, հասարակական շարժումներին Արասխանյանն աշխատում էր սեփական ազգի հարցերը քննել այդ դիտակետից: Այս մասին են վկայում արտասահմանից «Մշակին» գրած նրա հոդվածները: Դրանցից մեկը վերնագրված է «Տնտեսական հարցը և ազգային կրթությունը» և, փաստորեն, նախանշում է այն ուղին, որով ընթանալու էր Արասխանյանի հետագա հրապարակախոսությունը:

Հոդվածի հիմնադրույթը հանգում է կապիտալիստական հարաբերությունների զարգացման օբյեկտիվ անհրաժեշտության, բուրժուադեմո-

11 «Մշակ», 1883, №144:

հրատարակչական և քաղաքական ազատության պահանջներին և ազգային կրթությունը դրան համապատասխան վերափոխելուն: Արասխանյանը գրում է. «Տնտեսական հարցը դուրս եկած իր առաջին շրջանից, որ իր ծննդական շրջանը կարելի է անվանել, նվազ առ նվազ սպառնում է դառնալ մի ազգային խնդիր»[12]: Եվ նրանք, ովքեր փորձում են փակել նրա ելքը, «չեն զգում, թե այդպես վարվելով, նրանք պատճառ կարող են լինել նեղ հոսանքին ծով դառնալու, մի ծով, որի ճայթման բուռը ճայնից նրանք առաջինը պիտի լինեն, որ սարսափով պիտի փախչեն»[13]:

Ուրեմն ազգային կրթությունն էլ պետք է ընդլայնի իր շրջանակները, նաև «քաղաքականապես» կրթի սերնդին, այնպես, որ նա մի անդրդվելի ցանկություն ունենա քաղաքացի լինել, այսինքն քաղաքացու ազատություններ ձեռք բերել: «Խելքը կրթելով՝ կրթեք նաև ազգի ձեռքերը— նրա աշխատանքի ուրագը, հոգին կրթելով՝ կրթեք նաև ազգի սիրտը, ուժը, բնավորությունը և համոզված եղեք, որ ապագան մերն է»[14],— հորդորում է Արասխանյանը:

Անմիջապես ակնբախ է նրա արծարծած գաղափարների համահնչուն լինելը առաջադիմական այն մտավոր շարժմանը, որ կապվում է Գրիգոր Արծրունու անվան հետ «Մշակի» հրատարակման առաջին տասնամյակում:

Ստրասբուրգից գրված մեկ ուրիշ հոդված ևս շատ ուշագրավ է՝ բնութագրելու համար երիտասարդ հրապարակախոսի աշխարհայեցությունը: Այն վերաբերում է հակահրեական շարժմանը Գերմանիայում: Փորձելով խորանալ այս շարժման բուն պատճառների մեջ, Արասխանյանը հետաքրքիր մտքեր է հայտնում պատմության ուսումնասիրման մեթոդի վերաբերյալ. «Ինչ նշանակություն կունենար պատմությունը — այդ բառի ամենաընդարձակ մտքով, եթե նա սահմանափակվեր մեզ միայն փաստեր պատմելով, փաստեր, փաստեր և կրկին փաստեր, առանց ձգտելու նրանց ներքին հոգին ճանաչել... Պատմության արժեքը — նրա տված փաստերից բխած փիլիսոփայության մեջ է»: Նա քամահրանքով է խոսում «կոսմոպոլիտ-տղայական» մտածողների մասին և նշում, որ նրանց «այնքան երազած «ընդհանուր, ամեն ժամանակ և

12 «Մշակ», 1881, №172:
13 Նույն տեղում:
14 Նույն տեղում:

ամեն տեղում հավասարապես գործադրելի, մի խոսքով համաշխարհային» գաղափարներ չկան և չեն եղած»[15]։

Այս տեսանկյունով մոտենալով Գերմանիայում բորբոքվող հակահրեական շարժմանը, Արասխանյանը փորձում է հրեությունների մակերեսից խորանալ ներքին ծալքերը և գալիս է այն եզրակացության, որ այդ շարժումը ոչ թե կրոնական է, ինչպես ենթադրում էր Անդրեաս Արծրունին «Մշակում» տպագրած իր հոդվածներում, այլ ազգային, այսինքն գերմանացիների գործողությունների շարժառիթները ազգային շահախնդրություններն են։

Եվրոպայում սպունգի նման ներծծելով այն ամեն օգտակարը, ինչը կարող էր պիտանի լինել իր հայրենիքում, 1882 թ. Արասխանյանը բրոնում է վերադարձի ճանապարհը և վեց ամիս մնալով Բեռլինում ու Մոսկվայում, հոկտեմբերին հասնում է Թիֆլիս։

Ի՞նչ բնագավառում պիտի օգտագործեր նա իր հարուստ գիտելիքները, տնտեսագիտի մասնագիտությունը։ Նրա գալուց մեկ ամիս անց Բաֆֆու գրած մի նամակում կարդում ենք. «Պարոն Արասխանյանցի հետ հաճախ տեսնվում եմ, երբեմն պ. Արծրունու մոտ ճաշի է գալիս, ես էլ եմ այնտեղ լինում։ Շատ պատվական երիտասարդ է, նա Թիֆլիսում հաջողություն կգտնե. խոստացել են այստեղի բանկերից մեկի մեջ պաշտոն տալ։ Բացի դրանից, դիտավորություն ունի մի շարք դասախոսություններ կարդալ իր մասնագիտությունից, այդ ավելի կնպաստե նրա առաջադիմությանը»[16]։ «Պատվական երիտասարդը» ստիպված է լինում բավարարվել ընդհանուր պատմության ուսուցչի պաշտոնով Ներսիսյան և Գայանյան դպրոցներում 1883—1885 թթ. ուսումնական տարիներին, իսկ հրապարակախոսական գործունեության իր ծարավը հագեցնել տեղական մամուլում և հատկապես «Մշակում» հոդվածներ գրելով։

1883 թ. №6-ում «Մշակը» ծանուցում է իր ընթերցողներին. «Այսօր երեկոյան, 8 ժամին, լինելու է Արծրունու թատրոնում պ. Ավետիք Արասխանյանցի առաջին դասախոսությունը քաղաքական տնտեսությունից։ Նրա պրոգրամը, որ մենք մի քանի օր առաջ տարածեցինք մեր բաժանորդներին, հույս է տալիս մեզ, որ դասախոսությունները լինելու են շատ հետաքրքիր»։

Արասխանյանը կարդում է յոթ դասախոսություն, որոնցից առաջին

---

15 «Մշակ», 1881, №8—9։

16 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959, էջ 586։

երկուսը՝ «Ազգաբնակությունը և ազգաբնակչական շարժումները» և «Հողի արդյունաբերությունը և հասարակությունը» հաջորդ տարում ավելի ընդարձակված լույս են տեսնում առանձին գրքույկներով։ Սրանք էլ մեզ հնարավորություն են տալիս գաղափար կազմելու երիտասարդ գիտնականի աշխարհայեցության, մտավոր պատրաստականության, կրած ազդեցությունների և տնտեսագիտական հայացքների մասին։

Իր դասախոսությունների նպատակը ինքը՝ հեղինակը այսպես է բացատրում. «Այս դասախոսությունների նախագիծը կազմելիս իմ ջանքերը գլխավորապես դարձած էին դեպի մի բան՝ ճաշակ պատվաստել մեր հասարակության մեջ քաղաքատնտեսական գիտությունը ուսումնասիրելու, հասարակաց երևույթները դիտելու, հասարակաց և տնտեսական հարցերը գիտական հետազոտություններից տված հիմունքների տեսակետից ճանաչելու, պարզելու համար։ ... Գիտությունը այդ պատճառով անհրաժեշտ է, թե առաջադիմության համապատասխան իդեալ կազմելու և թե այդ իդեալը իրականացնելու համար պատշաճավոր միջոցներ որոնելու և կյանքին ուղղություն տալու համար։ Զգտենք, ուրեմն, ճանաչել կյանքը յուր բազմակողմանի արտահայտություններով և չմոռանանք, որ բոլոր գիտություններից քաղաքատնտեսությունը ամենակարևոր և ամենահիմնականն է այդ նպատակին հասնելու համար»[17]։

Այսպես, ուրեմն, Արասխանյանը ձեռնամուխ է լինում մի գործի, որի պիոները լինելու պատիվն էր ապահովում իր համար, այն է՝ քաղաքատնտեսության մասսայականացմանը յուրատեսակ ժողովրդական համալսարանի միջոցով։ Դասախոսությունները ցույց տվեցին, որ Արասխանյանը շատ բան էր որդեգրել բուրժուական տնտեսագիտության ուղղություններից։

Իր առաջին դասախոսության մեջ՝ «Ազգաբնակությունը և ազգաբնակչական շարժումները», որոնելով ժողովրդական մասսաների նյութական ծանր դրության պատճառները, Արասխանյանը Մալթուսի «ուսմունքի» վեհերոտ քննադատության փորձեր է անում, չկարողանալով, սակայն, հասկանալ դրա մարդատյաց ու ռեակցիոն ողջ էությունը։

Երկրորդ դասախոսությունը՝ «Հողի արդյունաբերությունը և հասարակությունը», նվիրված է տնտեսագիտական գանազան դպրոցների և ուղղություններէի գնահատմանը։ Այս դասախոսությունը հետաքրքիր է

---

17 Ա. Արասխանյան, Ազգաբնակությունը և ազգաբնակչական շարժումները, Թիֆլիս, 1884, էջ 47—49։

նաև այն առումով, որ այստեղ նա տալիս է գերմանական պատմական դպրոցի գնահատականը, դպրոց, որը զգալի ազդեցություն է ունեցել նրա տնտեսագիտական հայացքների ձևավորման վրա։

Արասխանյանը քննադատում է մերկանտիլիստներին, առևտրական կապիտալի նշանակության վերաբերյալ նրանց սխալ հայացքները և ժամանակակից քաղաքատնտեսության հայրեր համարում ֆրանսիական ֆիզիոկրատներին, որոնք հարստության իսկական աղբյուրը գրտնում էին երկրագործության մեջ։ Ճիշտ համարելով ֆիզիոկրատների կողմից մերկանտիլիստների քննադատությունը, Արասխանյանը միաժամանակ քննադատում է նրանց իսկ սահմանափակությունն ու միակողմանիությունը՝ արդյունաբերության բնագավառը ևս որպես հարստության աղբյուր չնկատելու համար։ Բնական է, ուրեմն, որ ֆիզիոկրատիզմը իր տեղը պիտի զիջեր քաղաքատնտեսության նոր ուղղությանը, որի հիմնադիրն էր շոտլանդացի Ադամ Սմիթը։ Անգլիական կլասիկ քաղաքատնտեսությունը իր արժեքի աշխատանքային թեորիայով, որը հարստության աղբյուրը տեսնում էր աշխատանքի մեջ, Արասխանյանը համարում է ավելի համապարփակ ուղղություն, քանի որ այն ազատում է քաղաքատնտեսությունը նախկին նեղ սահմաններից։ Անդրադառնալով նաև անգլիական մյուս կլասիկ քաղաքատնտես Դավիթ Ռիկարդոյի հայացքներին, նա դրվատում է Հողային ռենտայի նրա սխալ թեորիան։

Քննադատորեն վերաբերվելով անգլիական կլասիկ քաղաքատնտեսության մեթոդին, համարելով այն վերացական ու լոկ տրամաբանության ուժի վրա հիմնված, Արասխանյանը, սակայն, չի ուրանում նրա ծառայությունները։ Սրանով հենց նա տարբերվում է գերմանական պատմական դպրոցի տնտեսագետներից։

Արասխանյանը ճիշտ է նկատել, որ մանչեստրյան դպրոցի ուսմունքը ձևոնտու էր Անգլիայի պես ուժեղ զարգացած արդյունաբերական մի երկրի, քանի որ այն հրահրում էր ազատ առևտուր և մրցակցություն։ Գերմանիայի համար, որը դեռ չուներ սեփական զարգացած արդյունաբերություն, այն ձեռնտու չէր։ Եվ ահա, ի հակադրություն անգլիականի, գերմանական տնտեսագետները ստեղծում են իրենց սեփական դպրոցը, որը կոչված էր զաղափարապես հիմնավորելու գերմանական արդյունաբերական բուրժուազիայի շահերը։ Պատմական դպրոցը առաջ քաշեց ազգային արդյունաբերության զարգացումը հովանավորելու սկզբունքը։ Արասխանյանը ընդունեց գերմանացի տնտեսագետների պրոտեկցիոնիստական

ուղղությունը: Եվ սա պայմանավորված չէր միայն այն հանգամանքով, որ նա քաղաքատնտեսություն սովորեց այդ դպրոցի պարագլուխներից երկուսի՝ Շմոլլերի և Ռոշերի մոտ: Հայկական բուրժուազիան հենց այդպիսի՝ ազգային արդյունաբերության զարգացումը խթանող գաղափարախոսության կարիք ուներ: Ահա ինչու Արասխանյանը որդեգրեց այդ դրպրոցի գաղափարախոսությունը: Խոսելով հայ գործիչների Եվրոպայում այս կամ այն ուսմունքը որդեգրելու, այս կամ այն դպրոցին հարելու մասին, պետք է նկատի ունենալ, որ դա կատարվում էր ոչ միայն և ոչ այնքան անձնական նախասիրությունների մղումով, որքան հայ իրականության հուզող, հասունացած հարցերի թելադրանքով:

Արասխանյանի մյուս դասախոսությունների մասին կարելի է դատել միայն մամուլում հրապարակված դրանց ամփոփ ծրագրերով, որոնք վկայում են համալսարանավարտ տնտեսագետի լայն հետաքրքրությունների և գիտական հարուստ պաշարի մասին: Ի դեպ, այդ դասախոսություններից չորերորդում՝ «Աշխատանքի վարձը», նա անդրադառնում է նաև Կ. Մարքսի տեսությանը, որին ծանոթացել էր դեռ ուսանողական տարիներին[18]:

Հենց այս ժամանակ Արասխանյանի համար բարեպատեհ առիթ է ստեղծվում շրջագայելու հայկական գավառները և մոտիկից ծանոթանալու ժողովրդի տնտեսական վիճակին, պարզելու, թե ինչ չափով է Եվրոպայում ուսածը կիրառելի իր հայրենիքում: 1885 թ. Արասխանյանը հրավեր է ստանում կովկասյան իշխանություններից՝ մասնակցելու Անդրկովկասի պետական հողերի վրա հաստատված գյուղացիների տնտեսական դրությունն ուսումնասիրող խմբի աշխատանքներին: Արասխանյանը ընտրում է Նուխիի և Շուշիի գավառները, վեց ամիս շրջագայում մոտ 200 գյուղ, հավաքելով ոչ միայն ըստ ծրագրի պահանջվող նյութեր, այլև մոտիկից ուսումնասիրելով Ետեֆորմյան գյուղի կյանքն ամբողջությամբ: Ուսումնասիրության արդյունքները նա ամփոփում է երկու աշխատություններում, որոնք տպագրվում են «Материалы по изучению экономического быта государственных крестьян в Закавказском крае» ժողովածուների 5-րդ և 7-րդ հատորներում: Տնտեսական հարցի ուսումնասիրությանն են նվիրված այս շրջանի ևս երկու աշխատություններ, մեկը՝ Անդրկովկասի հացի առևտրի և մյուսը՝ մետաքսագործության

18 Տե՛ս «Արձագանք», 1883, №9:

մասին, որոնք 1887 թ. լույս տեսան Կովկասյան գյուղատնտեսական ընկերության «Աշխատություններին» մեջ և առանձին գրքույկներով[19]։

Ի տարբերություն դասախոսությունների, որոնք սոսկ տեսական բնույթ էին կրում, Արասխանյանի այս աշխատությունները փաստական հարուստ նյութ են պարունակում Անդրկովկասի տնտեսական պատմության վերաբերյալ[20]։

Ավելի առաջ գնալով տնտեսագիտությունը մասսայականացնելու իր ծրագրերի մեջ և ձգտելով գործնականում օգտակար լինել տնտեսության զարգացմանը Անդրկովկասում և նոր, առաջավոր հիմունքներով նրա կազմակերպմանը, Արասխանյանը ձեռնամուխ է լինում Թիֆլիսում առևտրաարդյունաբերական դասընթացներ բանալու նույնպես իր նախաձիռը չունեցող գործին։ Բացատրելով իր նոր ձեռնարկության նպատակը, Արասխանյանը «Մշակ» թերթում հայտնում է ընթերցողներին, որ դասընթացները նախատեսված են բոլոր այն երիտասարդների համար, որոնք կամենում են իրենց նվիրել տնտեսական և մասնավորապես առևտրական ասպարեզին։

Դասընթացները, որտեղ բացի Արասխանյանից, դասախոսում էին նաև հրավիրված մասնագետներ, առաջին տարում (1888) բազմաթիվ ունկնդիրներ ունեցան և թեև ավելի մեծ հաջողություն էին խոստանում հաջորդ տարում, սակայն Արասխանյանը վճռում է ընդհատել այդ ոչ միայն օգտակար, այլև շահավետ գործը, որպեսզի ամբողջովին նվիրվի տարիների իր երազանքին՝ «Մուրճ» ամսագրի ստեղծման գործին։

Այժմ անդրադառնանք Գրիգոր Արծրունի-Արասխանյան հարաբերությանը։

Արծրունին սկզբում սիրով ընդունեց Եվրոպայից իր թերթին թղթակցող համալսարանավարտ տնտեսագետին։ Արասխանյանը դարձավ «Մշակի» ակտիվ աշխատակիցներից մեկը, թերթի գլխավոր տեսաբանը 1884 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ։

«Մշակում» ամբիոն ունենալը և տեղական մյուս օրգաններին («Արձագանք», «Աղբյուր», «Կավկազ», «Նովոյե օբոզրենիե») երբեմն-երբեմն

---

19 *А. Арасханянц*, Закавказская хлебная торговля в связи с развитием сельского хозяйства, Шелкомотальные заводы в Нухи и Карабахе, Тифлис, 1887.

20 *Ա. Արասխանյանի տնտեսագիտական ուսումնասիրությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Խ. Դուլանյանի, Ս. Զուրաբյանի, Ա. Օհանյանի և Ռ. Սարինյանի նշված աշխատություններում։*

բղթակցելը կարո՞ղ էին հագեցնել Արասխանյանի հրատարակախոսական գործունեության ծարավը։ Անշուշտ, ո՛չ։

«Տարազում» կարդում ենք այսպիսի վկայություն. «Դեռևս 84 թվականին Արասխանյանը կամենում էր նոր թերթ հրատարակել, բայց երբ իմացվեց, որ Արծրունին կամենում էր վաճառել իր թերթը՝ նյութական ձախորդություններից և այլ պատճառներով, կազմվեցին երկու խումբ թերթը գնելու համար, որոնցից մեկի պարագլուխն էր Րաֆֆին, իսկ մյուսինը Արասխանյանց»[21]։ Այս մասին ինքնակենսագրության մեջ Արասխանյանը գրում է. «1884-ին, երբ Գ. Արծրունին դադարեցնում է «Մշակը», Արասխանյանը աշխատակցական մի խումբ կազմելով, առաջարկում է նրան ղիջել իրեն «Մշակի» հրատարակությունը, որպիսի նպատակով իրարից անտեղյակ գործում էր և Րաֆֆին Գ. Միրզոյանի և Ն. Աբելյանի հետ միասին, բայց ոչ մեկ և ոչ մյուս խմբին չհաջողվեց Արծրունուց այդ արտոնություններ ստանալ»[22]։ Այնուհետև շարունակում է. «1885-ի վերջերը, երբ Արծրունին վերադարձավ արտասահմանից «Մշակի» հրատարակությունը վերսկսելու համար, նա հավաքեց իր նախկին աշխատակիցներին, բայց հենց սկզբից երևան եկավ նրա և աշխատակիցների մեծամասնության մեջ անհամերաշխություն թերթը առաջ տանելու պայմանների մասին. այդ ժամանակին է վերաբերում Րաֆֆու և մի քանի այլոց հեռանալը «Մշակից». նույն այդ ժամանակ Արասխանյանը եղավ մերձավորագույն աշխատակիցը «Մշակում», բայց արդեն միայն մի քանի ամիս։ Արծրունին առաջարկում է Արասխանյանին կոչվել «Մշակի» հրատարակիչ և լինել իր խմբագրական օգնականը, թերթը երկուսի ուժերով առաջ տանելու համար. այդ առիթով ծագած տարաձայնության հետևանքով, Արասխանյանը նվազ առ նվազ ևս քաշվեց «Մշակից» և հարաբերությանց լարվածությունը իր լուծումն ստացավ անձնական ծանոթության խղումով»[23]։

«Տարազը» ևս Արծրունի-Արասխանյան հակամարտության պատճառ է համարում այն տարբերությունները, որ «երևան էին եկել նրանց մեջ ժամանակակից հրատարակախոսության և լրագիրը վարելու վերաբերմամբ»[24]։

Ինքնակենսագրական և լրագրային այս սուղ տողերը իրավունք են տալիս մեզ Արծրունի-Արասխանյան փոխհարաբերությունները դնահա-

21 «Տարազ», 1900, № 45։

22 Ա. Արասխանյան, Ինքնակենսագրություն, էջ 5։

23 Նույն տեղում, էջ 6։

24 «Տարազ», 1900, №45։

տելիս երկրորդական պլան մղել անձնական հանդամանքները և ընդհակառակը՝ առաջին պլան՝ հրապարակախոսության և մամուլի դերին ու խնդիրներին, դրական բարքերին նրանց մոտեցման տարբերությունները, որոնք իրենց արտահայտությունը գտան «Մուրճ»— «Մշակ» բանավեճում։

Անվիճելի է, որ 80-ական թվականների կեսերից Արծրունին «Մշակին» այնպիսի ուղղություն հաղորդեց, որ դեմոկրատական մտավորականությունը երես դարձրեց նրանից։ «Մշակն» այլևս չէր կարողանում բավարար սնունդ տալ դեմոկրատներին մտածող երիտասարդ սերնդի որոնող մտքին։ Անդրադառնալով Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության հարցին, Աշ. Հովհաննիսյանը դրա ակունքը տեսնում է պատմական այն շրջադարձի մեջ, որ հատկանշվում էր լիբերալ և դեմոկրատական հոսանքների տարաբաժանումով։ Առարկելով Լեոյի այն պնդմանը, թե իբր «Մշակի» խմբագրի և Բերբի դիմավոր աշխատակցի տարաձայնությունները առաջ էին եկել ոչ թե գաղափարական, սկզբունքային, այլ անձնական հողի վրա, Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Ճշմարտությունը բոլոր պարագաներում այն է, որ 80-ական թվականների ընթացքում Բաֆֆու գաղափարների վոտակը գտրս էր եկել լիբերալ «Մշակից» հունից և վերսին մուտք գործել նախամշակյան շրջանում իրեն համապատասխան ազգային-դեմոկրատական ակտիվ գաղափարաբանության հունը»[25]։

Բաֆֆին շարունակեց մնալ մշակ դասի շահերի պաշտպան, մինչդեռ Արծրունին արդեն հանդես էր գալիս որպես լոկ բուրժուազիայի գաղափարախոս։ Օրինաչափ էր, ուրեմն, «Մշակից» Բաֆֆու և մյուս դեմոկրատ գրողների ու գործիչների հեռանալը։ Դրան հաջորդում է տարաձայնությունների սրումը Արծրունու և Արասխանյանի միջև, որի հետևանքով Արասխանյանը ոչ միայն չի համաձայնվում գառնալ «Մշակի» հրատարակիչ և խմբագրի օգնական, ինչպես առաջարկում էր Գրիգոր Արծրունին, այլև հեռանում է Բերբից, ձեռնամուխ լինելով սեփական պարբերականի ստեղծման գործին։

Հենց այս ժամանակ տեղի է ունենում մի միջադեպ, որին մենք հարկ ենք համարում անդրադառնալ, քանի որ այն բնութագրում է ժամանակի բարքերը և վերաբերում է Արծրունի-Արասխանյան հակամարտությանը։ 1887—1888 թթ. ուսումնական տարում Արասխանյանը նորից ընդհանուր

25 Աշ. Հովհաննիսյան, *Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության ակունքը*, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, №1, էջ 26։

պատմություն էր դասավանդում Ներսիսյան դպրոցում։ Լինելով գիտության մարդ, Արասխանյանը չէր կարող բավարարվել այդ առարկայի դասավանդման մինչ այդ եղած ցածր մակարդակով։ Նա որոշեց ընդլայնել առարկայի սահմանները, դրանք հարստացնել պեղումների շնորհիվ ի հայտ բերված գիտական նորագույն տվյալներով։ Իր այս մտադրությունը նա իրագործեց ոչ միայն դասաժամերին, այլև ձեռնամուխ եղավ կազմելու ընդհանուր պատմության նոր դասագիրք, որի առաջին մասը՝ «Արևելյան ազգերի հին պատմությունը», լույս տեսավ 1891 թ. և մի քանի տարի ծառայեց որպես ուսումնական ձեռնարկ։ Այդ գրքի առաջաբանում նշելով, որ ինքը հանդես է գալիս ո՛չ հետազոտողի և ո՛չ էլ կոմպիլյատորի, այլ միայն գիտությունը ժողովրդականացնողի դերում, հայտնում է, որ «այս աշխատությունը նշանակված է թե՛ դպրոցների և թե՛ ընդհանուր ընթերցանության համար։ Մեզ թվում է, թե հայոց դպրոցներում արևելյան ազգերի պատմությունը ավելի ընդարձակ պետք է անցնվի, քան այդ կատարվում է այդ ազգերի հետ անմիջական շփումն չունեցած ազգերի դպրոցներում»[26]։

Ինչպե՞ս գնահատվեց պատմության ուսուցչի դասավանդման այս առաջավոր եղանակը։ Որքան էլ տարօրինակ հնչի... նա աղատվեց աշխատանքից։ Ավելի քան տարօրինակ էր «Մշակի» բռնած դիրքը։ Նա փաստորեն պաշտպանության տակ առավ դպրոցի հոգաբարձության կամայական վճիռը, մի կողմից գտնելով, որ Արասխանյանի դասատվության մեթոդը եղել է «ավելի զարգացուցիչ, ավելի թարմ բնավորության» և որ նրա «ուսուցչական պաշտոնից ազատվելը ոչ ցանկալի և ոչ էլ պետք էր» և մյուս կողմից պնդելով, որ «չի կարելի ձայների մեծամասնությամբ կայացած վճիռները քանդել, եթե նույնիսկ դա սխալ է»[27]։ Հարգանքի տարօրինա՜կ տուրք ձայնատվության սկզբունքին։

Հատկանշալի է այն խորին վիրավորանքը, որ պիտի առաջացներ նման վերաբերմունքը իր գործին բոլորանվեր սիրով ծառայող մարդու մեջ, և դա իր արտահայտությունը գտավ Արասխանյանի «Իրավունք և սկզբունք» հոդվածում, որը տպագրվեց «Արձագանքում»։ Արասխանյանը ղգուշացնում է, թե միամիտներին կարող է թվալ, որ ինքը փոխել է իր դրոշակը և «մշակականից» դարձել «արձագանքական», բայց «իսկությունը սա է, որ ես բոլորովին անկախ եմ և անկախ եմ եղել միշտ որևէ

---

26 Ա. Արասխանյան, Արևելյան ազգերի հին պատմությունը, Թիֆլիս, 1891, էջ III։
27 «Մշակ», 1888, №.104։

խմբագրի աղեցությունից»։ Այս հոդվածը և կաթողիկոսին բողոք գրելու միակ դրդապատճառը «ուսուցչական պատվին հասցրած վիրավորանքն է»[28]։ Իր իրավունքը պաշտպանելու Արասխանյանի այս արդար բողոքի դեմ «Մշակը» միջամտ հանեց երկու ֆելիետոն,[29] որոնք սկիզբը հանդիսացան ֆելիետոնների այն երկար շարանի, որ գրեց Գր. Արծրունին նորաստեղծ ամսագրի խմբագրի դեմ։

Արասխանյանը, որ ձեռնամուխ էր եղել «Մուրճի» հրատարակությունը նախապատրաստելու գործին, մի մտահոգություն ուներ՝ հեռու պահել իր հոգեզավակին բանակռվային որոգայթների խճճալարերից։ Նա հանդես եկավ «Արձագանքում» «երկու տող» և «երեք տող» հայտարարություններով այն մասին, որ իր համար պարծանք և մխիթարություն է հալածվողի խաչը կրելը և ինքը պետք է աշխատի իրեն հեռու պահել բանակռվային ցեխոտ, հայհոյանքներով և անձնական վիրավորանքներով լեցուն դաշտից, խնայելով «ապագա «Մուրճի» կուսությունը», «նրա շուրջը խմբված գործողների զգացմունքները, ... նրբաճաշակ ընթերցողներին»[30]։

Տխուր իրողություն է սա, որ խոսում է անցյալի գրական բարքերի մասին, երբ դեռ չծնված պարբերականն իր մասին առաջին լուրը տալիս է ոչ թե ողջույնների և սիրալիր ընդունելության ակնկալիքով, այլ հալածվելու, ցեխոտվելու վախով։

Մամուլի գործերի գլխավոր վարչությունը 1888 թ. հոկտեմբերի 7-ի հրամանագրով թույլատրում էր պատվավոր քաղաքացի Ավետիք Արասխանյանին հրատարակել «Մուրճ» անունով ամսագիր[31]։ Արասխանյանը մեծ եռանդով ձեռնամուխ է լինում ամսագրի հրատարակության նախապատրաստմանը։

Նախ հարկավոր էր ամսագրի շուրջը համախմբել կարող աշխատակիցներ։ Արասխանյանը կողմնորոշվեց դեպի երիտասարդ թարմ ուժերը։ Թեև աշխատակիցների նրա կազմած ցուցակում[32] հանդիպում ենք այն ժամանակ արդեն հայտնի անունների, բայց նախատեսված աշխատակիցների մեջին տարիքը շատ երիտասարդ էր. Պերճ Պռոշյան, Շիրվան-

---

28 «Արձագանք», 1888, № 39, էջ 535։

29 «Մշակ», 1888, №№ 116, 129։

30 «Արձագանք», 1888, №№ 40, 45, էջ 546—547, 637։

31 Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 480 ց. 1, № 884։

32 ԳԱՔ, «Մուրճի» ֆոնդ, գ. 11/III։

զադե, Ալեքսանդր Քալանթար, Գևորգ Բաշինջաղյան, Կարա-Մուրզա, Լևոն Մանվելյան, Հովհաննես Բարխուդարյան, Առաքել Բաբախանյան (Լեո), Գրիգոր Վարդանյան, Հովհաննես Տեր-Միրաքյան, Ստեփան Լիսիցյան, Գևորգ Զմշկյան, Լևոն Սարգսյան և ուրիշներ։

«Մուրճը» դիտելով երիտասարդ սերնդի ձայնափող, Արասխանյանը գտնում էր, սակայն, որ չպետք է կտրել կապերը հին սերնդի հետ, որի տարիների կուտակած փորձը, իմաստնությունը միշտ էլ օգտակար կարող է լինել նոր սերնդին։ Այս տեսակետից չափազանց հետաքրքիր է Արասխանյանի նամակը Ռափայել Պատկանյանին, որ նա գրել է «Մուրճի» հրատարակության նախապատրաստման շրջանում՝ 1888 թ. հոկտեմբերի 24-ին։ «Անցյալ 1887 թվականի հիշողությունների տպավորության տակ, դիմում եմ Ձեզ, հայոց բանաստեղծ, այս երկտողով, հայտնելով Ձեզ հայկական մի նոր ամսագրի հրատարակության թույլտվության մասին։ Այդ ամսագիրն է «Մուրճը», որը պիտի հիշեցնի մուրճը դարբնի, որը նորանով երկաթը կռում կոփում է, գործիքը, որ անհրաժեշտ է համարված ամեն տնտեսության մեջ, գործիքը, որով մարդ յուր տեղն է գցում մեխը և, վերջապես, որով երբեմն, մարդ հրեշների գլուխ է ջարդում,

Ես միակը չեմ, որ ակնածությամբ սպասում էի «Մուրճի» հրատարակության թույլտվությանը, բախտավոր եմ, որ հաստատել կարող եմ, որ հայ երիտասարդության ստվար մասի համակրությունը «Մուրճի» համար ապահովված եմ գտնում և որ ես, որպես խմբագիր «Մուրճի», դաշտի վերա միակ զինվորը չեմ ղգում ինձ։

Բայց այդ բոլորը ինձ համար բավական չէ։ Ինձ համար թանկ է ոչ միայն նոր ուժերի համակրությունը, այլև կյանքը տեսած ու փորձած հին զինվորների վստահությունը նոր սերնդի վերա...

Այն, ինչ այժմ երիտասարդությունը մտածում է և գործում է, այդ կաշխատե տալ «Մուրճը»։ Բայց այն, ինչ մեզնից 20—30 տարի առաջ հայ երիտասարդությունը ապրել ու մտածել է՝ այդ դեռևս հանրածանոթ չէ։ Այդ իսկ պատճառով ես թույլ եմ տալիս ինձ դիմել Ձեզ, մեծարգո պարոն Պատկանյան, այս խնդիրքով, որ Դուք ծանոթացնեք «Մուրճի» ընթերցողներին Ձեր երիտասարդական ժամանակի հետ, ցույց տալով Ձեր ժամանակվա հայ երիտասարդության կազմը ու նորա ձգտումները, գործող անձերի բնավորությունները, տաղանդը, ունեցած վաստակները, նորա հետագա վիճակը և վերջապես, նոցա ձգտումներից ինչ բաներ իրագործված ենք տեսնում և որոնք ոչնչացան։ Տվեք Ձեր կյանքի հիշա-

տակարանը,— ահա թե ամենից առաջ ինչ է սպասում Ձեզնից «Մուրճը»[33]:

Այս նամակը շատ արժեքավոր է այն առումով, որ հստակորեն ցույց է տալիս Աբասխանյանի նպատակադրումներն ու մղումները նոր ամսագրի հրատարակությունը ձեռնարկելիս: Եթե մուրճը դարբնի ձեռքում երկաթը կռելու-կոփելու, շինարարի ձեռքում՝ կառուցելու, իսկ երբեմն նաև՝ հրշեների գլուխը ջարդելու գործիք է, ապա դառնալով ամսագրի անուն, խմբագրի ձեռքում այն պիտի դառնար գործիք՝ հասարակական միտքը կռելու-կոփելու, կյանքը նոր հունի մեջ մղելու և նաև՝ ջարդելու այն ամեն հինն ու վնասակարը, որ խանգարելու էին առաջընթացին:

1888 թ. հոկտեմբերի 30-ին «Արձագանքի» №42-ում ավետվում էր նոր ամսագրի ծնունդը.

«Առաջիկա 1889 թվականի հունվար ամսից կսկսի հրատարակվել «Մուրճ» քաղաքական-հասարակական-գրական ամսագիրը հետևյալ ծրագրով.

1. Հոդվածներ գրական, տնտեսական, իրավաբանական, պատմական և հոգևոր բովանդակությամբ:

2. Բանաստեղծական՝ վեպեր, պատմություններ, ռոմաններ, դրամաներ, ոտանավորներ, երգիծություններ:

3. Հոդվածներ կովկասյան կյանքի հասարակական խնդիրներից:

4. Թղթակցություններ Ռուսաց տերության և Արտասահմանյան զանազան տեղերից:

5. Հոդվածներ դիտության զանազան ճյուղերից:

6. Գրախոսություն և Քննադատություն:

7. Հաշիվներ այլևայլ ընկերությունների նիստերի:

8. Թատրոն, Երաժշտություն, Գեղարվեստ:

9. Տեսություն ներքին և արտաքին քաղաքական անցքերի:

10. Ներքին և արտաքին Քրոնիկոն և զանազան լուրեր:

11. Հայտարարություններ»:

Նշված է նաև ծավալը՝ մինչև 160 էջ, բաժանորդագինը՝ տարեկան տասը ռուբլի և հասցեն՝ Թիֆլիս, Գրանովսկայա փողոց:

«Մուրճի» արխիվը նայելիս, մեր ուշադրությունը գրավեց այս հայտարարության ձեռագիր օրինակը, որը տպագրության ժամանակ, դրժելով բախտաբար, կրճատվել է և դուրս է մնացել մի հատված, որը կարևոր

---

33 ԳԱԹ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, գ. 633:

ենք համարում մեջբերել, քանի որ այն հստակ բնութագրում է նոր ամսագրի խմբագրի սկզբունքները. «Մուրճի» աշխատակիցներին. հրապարակավ հայտարարում ենք, որ «Մուրճը» բաց է ամենքի համար, որոնք այս ամսագրի ոգին ընդունելով, կուզեն ձեռք մեկնել մեզ՝ ամսագրի բնավորության հարմար գրվածներ տալով: Մենք, մանավանդ, հորդորում ենք մեր աշխատակիցներին, նյութերի ընտրության մեջ ղեկավարվել այս ամսագրի իսկական պահանջներով. որ նորա լինեն ժամանակակից. ժողովրդի կյանքին մոտիկ, այդ կյանքից բխած ու նորա հասկացողությանը մատչելի. մենք ուզում ենք, որ գրվածները լինեն թարմ, գրված սահուն լեզվով, որ նոցանից բուրե ժողովրդի բարեկամի ոգին, բարեխիղճ հետազոտողի ճշտությունը, մտածողի վեհությունը, գեղարվեստագետի հաշակը, մտադրությունների շիտակությունը: Մեզ համար գին չպիտի ունենա վատ մարդու լավ գրվածքը: Խարդախ հանճարը մուտք չպիտի ունենա մեր խմբագրատունը: Մենք ուզում ենք, որ մարդիկ ոչ միայն քարոզեն, այլև օրինակ տան»[34]: Թեև «Մուրճի» ապագա ընթերցողները չկարդացին ժողովրդասիրությամբ շնչող Արասխանյանի այս տողերը, բայց համար առ համար ականատես պիտի լինեին դրանց իրականացմանը:

1889 թ. հունվարին լույս տեսավ «Մուրճի» առաջին համարը: Այն բացվում է Արասխանյանի «Մուրճ» ամսագիրը որպես հասարակական օրգան» առաջնորդող հոդվածով: Արասխանյանը տրորված ճանապարհով չէր գնացել, ընթերցողին ներկայացնելով նոր ամսագրի սոսկական ծրագիրը, այլ գրել էր մի շատ ընդարձակ հոդված, քննության առնելով հայ մամուլի անցյալն ու ներկան, հասարակության դատին ներկայացրել իր հայացքները մամուլի կոչման վերաբերյալ և այդ ձևով մատուցել նոր ամսագրի ծրագիրը: Ծնունդ տալով մի նոր պարբերականի, Արասխանյանն ուներ հասարակական կյանքում մամուլի հսկայական դերի և նշանակության խոր գիտակցում: Ահա ինչու նա «Մուրճի» առաջին առաջնորդող հոդվածը նվիրում էր հայ մամուլի տեսությանը:

Ամենից առաջ Արասխանյանը «Մուրճի» ծնունդը դիտում է որպես օբյեկտիվ անհրաժեշտություն, որը «յուր ժամանակի օրինավոր զավակն է՝ նորան սպասում էին, նորան պահանջում էին, նորան առաջուց ողջունում էին: Ջլիներ «Մուրճը», ամեն մի ուրիշ հայկական ամսագիր շրջա-

34 ԳԱԹ, «Մուրճի» ֆոնդ, գ. 11/II:

պատված տոկոսն ուժերով և կյանքին հետևելու ընդունակության դրա-վականով,— ըղձացած հյուրը կլիներ հայ գրականության սեղանին»[35]:

Արասխանյանը պարբերականի համար շատ կարևոր է համարում սկզբից ևեթ ճիշտ ընտրած և որոշակի ուղղությունը. «Թե ինչ պետք է լինի «Մուրճը» հայկական աշխարհի համար,— այդ լոկ ապագայի խնդիր չէ և ոչ բնության ու հանգամանքների կույր խաղի գործ,— ո՛չ, «Մուրճը» ինչ բանին էլ որ հասնի վերջերքում, նա այդ վախճանի համար պիտի պարտական լինի այն դեկին, որով մենք դիտավորություն ունինք վարելու նորան՝ ճանապարհի նույնիսկ սկզբում»[36]:

Խոսելով ժողովրդի պատմական զարգացման ընթացքում մամուլի նշանակության մասին, Արասխանյանը փորձում է մամուլի նշանակալից օրգաններով պարբերացնել նոր պատմության շրջանը. «Մեր վերածնելիության նորեկ պատմության մի-մի մեծ բոպեներ են դոքա, որքանով որ այդ վերածնելիությունը մենք պարբերական մամուլին ենք պարտական: Այդ արդեն պատմական դարձած մեծ բոպեներն են 1858—1864 և 1872—1878 և կամ առ առավել մինչ 1880 թվականը, երբ առաջին շրջանում քարոզում էր Նազարյանց Ստեփանոս՝ յուր «Հյուսիսափայլով», իսկ երկրորդում՝ «Մշակը», ունենալով որպես դեկավար Գրիգոր Արծրունուն»[37]: Ճշմարտությունն այս է սակայն, որ ոչ թե մամուլն է ծնունդ տվել «վերածնելիության», այլ մամուլը ինքը «վերածնելիության» (այսինքն բուրժուական նոր հարաբերությունների) արգասիք է, կյանքի կոչված դաղափարապես հիմնավորելու այն, նպաստելու նրա զարգացմանը:

Արասխանյանը կռահում է հայկական լիբերալիզմի երկու շրջափուլերի օրգանական կապը և տարբերությունը: Նա գրում է. «Զարմանալի բան. երկու շրջանն էլ իրարից մոտ տասնյակ տարի հեռու, իրար շարունակություն են կազմում, բայց և այնպես իրարից տարբերվում են գրեթե ամեն բանով՝ Նազարյանցը մի կատարյալ հակապատկեր Գրիգոր Արծրունուն, «Հյուսիսափայլը» հիմնովին տարբեր «Մշակից»[38]: Այստեղ մեղ մնում է ավելացնել, որ «զարմանալի» ոչինչ չկա. դա միանգամայն օրինաչափ է, և Նազարյանի ու Արծրունու տարբերությունն էլ էական լինե-

35 «Մուրճ», 1889, № 1, էջ 1:
36 Նույն տեղում, էջ 3:
37 Նույն տեղում, էջ 4:
38 Նույն տեղում:

լով, չի հասնում հակադրության, քանի որ նրանք ներկայացնում են նույն գաղափարական հոսանքի տարբեր աստիճանները։

Արասխանյանը փորձում է հանրագումարի բերել «Հյուսիսափայլի» նշանակությունը հայ կյանքի համար։ Պետք է ասել, որ նա բավականաչափ մոտենում է ճշմարտությանը, թեև քիչ չեն և մեղանչումները. նա շեշտում է «Հյուսիսափայլի» լուսավորական ուղղվածությունը, որի խմբագիրը «խոսում է մի ոճով, որը ենթադրել է տալիս մի վարդապետ՝ ամբիոնի վերա բարձրացած, որ դասեր է տալիս մի դահլիճում, որը, գաղափարաբար, հեռավոր Հայաստանի տեղն է բռնում»[39]։ Մոսկվայում հրատարակվող ամսագիրը, բնականաբար, կտրված էր հայ իրականությունից. սա է շեշտում Արասխանյանը գրելով. «Հյուսիսափայլի» ուժը կայանում է համարձակ մտքերի անխարդախ, բայց և ուժեղ արտահայտության մեջ։ Նորա թուլությունն էր ժողովրդական կյանքի անգիտությունը, ժողովրդական ուժերի գնահատման և ուրեմն նոցա ղեկավարելու ընդունակության պակասությունը և դուցե այդ ուժերի նույնիսկ արհամարհումը։ «Հյուսիսափայլը» չհմացավ մտնել ամբոխի խորշերը. նա կարծում էր, թե ժողովրդին պետք է միայն քարոզել, դասեր տալ, առանց անգամ նրան ճանաչելու. բայց երբեք չէր կարծում, որ ժողովրդից էլ պետք էր բան սովորել»[40]։ Դարձյալ ճշմարտության կռահում, հասցված սակայն ծայրահեղության։ Բանն այն է, որ Արասխանյանը, ինչպես և նրանից առաջ Արծրունին, չկարողացավ «Հյուսիսափայլի» մեջ տեսնել երկու ուղղություն՝ մեկը խմբագրինը և մյուսը՝ գլխավոր աշխատակցինը։ Ավելին. Արասխանյանը Միքայել Նալբանդյանին համարում է սոսկ Նաղարյանի օգնական և մտքի թարգման։

Այնուհետև Արասխանյանն անցնում է «Մշակի» գնահատությանը։ Այստեղ ճիշտ դիտողությունների հետ, Արասխանյանը թույլ է տալիս որոշ չափազանցություններ, որոնք և պատճառ են դառնում, որ Արծրունին նոր ամսագրի դեմ ուղղի Ասիացու երգիծանքի մաղձոտ շիթերը։

Արասխանյանը գրում է. «Մշակով» սկսվեց մի նոր շրջան ոչ միայն մեր պարբերական մամուլի պատմության մեջ,... «Մշակով» սկսվեց մի նոր շրջան մեր ժողովրդի զարգացման պատմության մեջ առհասարակ»[41]։ Ո՞րն էր նա համարում «Մշակի» բերած նպաստը հայ հասարա-

---

39 Նույն տեղում։

40 Նույն տեղում, էջ 7։

41 Նույն տեղում, էջ 8։

կական կյանքին. այն, որ «Մշակի» շնորհիվ «մամուլը դարձավ առաջնակարգ գործող ժողովրդական կյանքում», այն, որ «Մշակը» «փայլեց յուր հերքողական կողմով», անխնա պայքար մղելով կյանքի առաջընթացը կաշկանդող հնավանդ կապանքների դեմ, բանեցնելով «հարձակողական մի ոճ, որն այնքան սազում էր նորա «մտրակող» ուղղությանը»[42]:

«Մշակի» գործունեությունն այսքանով Արասխանյանը համարում է պատմականորեն կարևոր, սակայն գտնում է, որ հրատարակումից 4—5 տարի անց «Մշակի» էջերում անկման նշաններ են երևում, որոնք անխուսափելի են մնում ռուս-թուրքական պատերազմի շնորհիվ: Ըստ Արասխանյանի, Գր. Արծրունին, կորցնելով ժամանակի ղգացողությունը, անճոռնաբար է լինում «տարօրինակ մոլության՝ խնդիրներ հարուցանելով, որտեղ այդ չէր էլ հարկավոր»: Հասնելով մտավոր սնանկության, «Մշակը» «դառավ լրագիր— խոսքի սովորական նշանակությամբ, և դադարեց լինել օրգան հայկական մտքի»[43]: Որ Արծրունու առանդուն գործունեության մակընթացությանը հաջորդեց գաղափարական տեղատվությունը, և «Մշակը» զրկվեց իր հեգեմոն դերից, այդ ակնհայտ է, բայց Արասխանյանն, անշուշտ, շատ է նեղացնում առաջինի ժամկետները:

Դառնալով «Մուրճի» անհրաժեշտությանը, Արասխանյանը գրում է. «Սպասում էինք մի թերթի, որը կարողանար հավատ ներշնչել պապանձման մատնված հայ մտածող երիտասարդության և նորան կրկին ասպարեզ հրավիրեր՝ բաժանել ազգի հետ իրանց մտածմունքները, իրանց աշխատությունները և, փոխադարձաբար, որ այդ թերթը նոցա մեջ առանդ ծնեցներ և նյութ տար նպատակահարմար գործունեության:

Երիտասարդության այդ լուռ եռման ժամանակ հղացավ մեր մեջ «Մուրճի» գաղափարը, որը և լռությամբ փայփայեցինք քանի մի տարի շարունակ»[44]:

Այսպես ուրեմն, արժանին հատուցելով մշակական դպրոցին, Արասխանյանը գտնում էր սակայն, որ «Մուրճը» պայքարի նոր միջոցներ, նոր ղենքեր պիտի ասպարեզ հանի, որ մտրակողական ուղղությունը արդեն անցած փուլ է: Նոր օրերում իր խոսքը պիտի ասի քննական, գիտականորեն ուսումնասիրող միտքը. «Մենք հրավեր ենք կարդում,— գրում է Արասխանյանը,— մտածելու ընդունակ բոլոր գրող մարդկանց՝ մեզ հետ միասին ուսումնասիրել այն բոլոր խնդիրները, որոնք մի ազգի

---

42 Նույն տեղում, էջ 8—9:
43 Նույն տեղում, էջ 11:
44 Նույն տեղում, էջ 14:

համար ունեն կենսական, հասարակական նշանակություն։ Այդ ուսումնասիրություններից, որ մենք կանենք առանձը սրտներումս և հայրենիքին ծառայելու մխիթարությամբ որպես վերին պարգև, կբխեն մեծամեծ հետևանքներ հայ ազգի մտավոր, հոգեկան զարգացման և բարգավաճման համար։ ...Լինենք թարգման հայ ազգի կարիքների, աշխատենք, մեր ազգը ուսումնասիրելով նորա շահերը պաշտպանել։ ... «Մուրճը» վրիպած կլինի յուր նպատակների մեջ, եթե չհաջողի նորան ընդարձակել հայ հասարակության մտավոր հորիզոնը, ներկայացնելով նորան դարուս ոգին»[45]։

«Մուրճը» որպես հասարակական օրգան» հոդվածը չի ավարտվում առաջին համարով. նրա շարունակությունը տպագրված է № 4-ում։ Այստեղ Արտախանյանը բացատրում է, թե ինչու է ինքը պատմական էքրսկուրս կատարում դեպի մամուլի անցյալը. «Նոցա լավագույն ևս-ը— ահա մեր այս հոդվածների նյութը, իսկ նպատակն է՝ «Մուրճի» բնավորության որոշելը»[46]։ Ուրեմն, «Մուրճը» պիտի լիներ այն ամեն լավագույնի ժառանգորդը, որ հրապարակ էր հանել մինչ այդ հայ մամուլը։

«Մենք ասպարեզ ենք գալիս քննադատությամբ»,— հայտարարում է նորընծա ամսագրի խմբագիրը և ձևակերպում իր գործելակերպը այսպես. «Որոնել և գտնել այն, ինչ կար և կա գնահատելի թե մեր անցյալ և թե ներկա գործողների գործունեության մեջ և ուղղակի ցույց տալ այն, ինչ մեզ համար որևէ կերպ ընդունել անկարելի է, այն, ինչ հակառակ է մեր կազմած գաղափարներին ժողովրդական առաջադիմության համար — դա միայն այն օրգանը կարող է և միայն այն օրգանը պետք է անի, որը ներկա նեղ, սնոտի կուսակցությունները չի ընդունում, այլ որը կարծում է, թե հարկավորություն կա ստեղծել մի նոր սերունդ՝ ավելի լայն և ավելի բարձր աշխարհայեցությամբ»[47]։

Այսպես. «Մուրճը» անկախ էր հայտարարվում, խմբագիրը չէր ցանկանում հարել որևէ կուսակցության, նա ուզում էր մաքրել գրական բարքերը, հայհոյական բանակռվին հակադրելով առողջ քննադատությունը. «Երբ մի քննադատություն վերջանում է ոչ ի նպաստ քննադատված անձի, գրվածքի, ուղղության— նորան արդեն առանց այլևայլության անվա-

---

45 Նույն տեղում, էջ 15—16։

46 «Մուրճ», 1889, № 4, էջ 553։

47 Նույն տեղում, էջ 554։

նում են հայհոյական»[48]։ Հայհոյական բանակովի դառնության համը հենց առաջին համարից ճաշակից «Մուրճը», ողջույնի փոխարեն ֆելիետոնի արժանանալով «Մշակի» էջերում։

Արասխանյանի այս առաջնորդող հոդվածը հետաքրքիր է նաև նրանով, որ նա փորձում է գնահատել հասարակական հոսանքները, համեմատության մեջ դնել, ձգտելով պարզել դրանց առնչություններն ու տարբերությունները։ Ով պետք է ասել՝ նրա գնահատականների մեջ ճշմարտության պատկառելի բաժին կա։ Նա գրում է. «Հայ հասարակության հառաջադիմությունը միմիայն մի ուղիով չէ ընթացել, այլ նա ունեցել է և շարունակում է ունենալ զանազան շառավիղներ։ Նազարյանցն ըստ ամենայնի ուզում էր եվրոպականը պատվաստել հայկական կյանքին։ ... Թևպետ և շատ հմուտ հայկական պատմության, Նազարյանցը յուր մտածողության եղանակը հայկական խնդիրների մասին որոշում էր համեմատ դիտության և եվրոպական քաղաքակրթության թելադրություններին— բոլորովին անկախ հայկական պատմական զարգացման ընթացքից։ ... Նազարյանցի հրապարակախոսությունը սթափեցուցիչ, ազատիչ ներգործություն ունեցավ, բացելով հայի առջև եվրոպական աշխարհայեցողության լայն ասպարեզ և ազատելով հայի միտքը ավանդական հայացքների կաշկանդումից»[49]։

Բոլորովին այլ բնավորություն ունի մյուս հոսանքը, որի գաղափարական ստեղծողն Արասխանյանը համարում է Մարկոս Ազաբեկյանի «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը. «Կռունկի» պատրաստած շկոլան շատ մեծ է և այսօր էլ հայկական մտածողների և գործողների մի մեծ մասը գտնվում է «Կռունկի» թե՛ միջական և թե՛ անմիջական ազդեցության ներքո»։ Արասխանյանը «Կռունկը» ևս համարում է առաջադիմական օրգան միանգամայն արժանի Նազարյանի «Հյուսիսափայլի» ժամանակակցության, բայց և քննադատում է նրա նեղահայացությունը. «Այդ դպրոցի մեծ սխալը սա է, իբր թե հայկական կյանքը ինքն յուր մեջ բոլոր տարրերը բավականաչափ ունի՝ անկախ զարգանալու համար։ Դա սխալ է և մեծ սխալ»[50]։

Քննադատելով «Կռունկի» շկոլայի սահմանափակությունը, Արասխանյանը, սակայն, նրան չի հակադրում «Հյուսիսափայլին» և չի համա-

48 Նույն տեղում, էջ 555։
49 Նույն տեղում, էջ 555—556։
50 Նույն տեղում, էջ 562։

րում հետագիմական, ինչպես հետագայում ազգային-պահպանողական մտածողներին հանիրավի հորջորջեցին հայ լիբերալները: Նա ձեռնպահ էր մնում անգամ «պահպանողական» տերմինն օգտագործելուց, նրանց անվանելով լոկ «ազգային շկոլա»: Արասխանյանը շատ որոշակի տեսնում էր հայ ազատամտականների և ազգային-պահպանողականների գաղափարախոսության արյունակցական կապը և նրանց բաժանող անջրպետը: Դժբախտաբար, նրա այս մտքերը մնացել են իբրև նշումներ «Մուրճի» առաջին տարվա մի հավաքածուի էջերին, որը պահպանվում է Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հատուկ ֆոնդում (№ 2576)[51]:

Ահա ինչ է գրել Արասխանյանը «Մուրճի» 1889 թ. № 4-ի 559-րդ էջի լուսանցքում մանրիկ, բայց լավ ընթեռնելի ձեռագրով. «Հակառակ տարածված կարծիքների, մենք տեսնում ենք, որ այդ երկու օրգանները իրար բարեկամներ են, և նոցա՝ իրար հետ հաշտեցնողը արդեն վերը հիշված հառաջադիմական ձգտումներն են, որ անկասկածելի է թե մեկի և թե մյուսի մոտ: ...Բայց հառաջադիմությունը չէ ձուլում այդ երկու օրգանները մեկը մյուսի մեջ. մեկը՝ հայկական հառաջադիմությունն է անկախ հայկական որևէ հաստատությունից, և ինչպես? յուրացնելով բոլոր ընդհանուր մարդկային մտածողության եղանակները և կյանքի պայմանները. դա «Հյուսիսափայլն» է: Մյուսը որոնում է հայերի առաջադիմության նոցա պատմական կուլտուրական հատկությունների զարգացման մեջ և ինչով? իրանց ազգի պատմական հաստատությունների միջոցով և պատմական, բայց զուտ հայկական ավանդությունները պահպանելով, առանց հրաժարվելու այն բոլորից, ինչ ուրիշ ազգեր կարող են նորան տալ և ինչ չի հակառակվում այդ՝ իրան հատուկ հաստատությունների ու հայրենական ավանդությունների ոգուն: Դա «Կռունկն» է»:

Այս ձեռագիր նշումների մեջ շատ հետաքրքիր է նաև Արասխանյանի մեկ այլ դիտողություն, որից հասկանալի է դառնում «Կռունկի» ուղղության նկատմամբ նրա համակրության և տարակարծության չափն ու արմատը. «Այդ ուղղությունը, ուրեմն, որպես իմանում ենք, նեղ, բայց

---

51 Արասխանյանի այս ձեռագիր նշումները հրապարակված են Ա. Շարուրյանի կողմից, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1974 թ. № 2-ում, էջ 206—212:

ոչ վատ մտքով ասած, զուտ հայկական մտածողության արդյունք է և կրում է պատմական կոչված մեթոդի նշանները։ Այդ մեթոդի գլխավոր պահանջն այն է, որ ամեն մի հետևյալ քայլ, որ արվում է կյանքում, հարմարվի նախկին կյանքից ստեղծված հանգամանքների հետ, որքանով որ այդ հանգամանքները պատմական-կուլտուրական բնավորություն են կրում։

Հայկական գրականության և մանավանդ պարբերական մամուլի մեջ այդ ուղղությունն ավելի հայտնի է «ազգային ուղղություն» անունով. և մենք գտնում ենք, որ այդ ուղղության ամենակատարյալ ներկայացուցիչ եղած է «Կռունկ» ամսագիրը»։

Այսպես ուրեմն, «Կռունկի» ազգային ուղղության մեջ նա տեսնում է պատմական դպրոցի նշանները, այն դպրոցի, որին ուսանել և որից շատ բան որդեգրել էր և ինքը։ Համակրելի է համարում ազգային առաջընթացին հետամուտ նրա հայրենասիրական և անկասելի ձգտումը, բայց մերժելի՝ այդ առաջընթացին հասնելու միջոցների սահմանափակումը ազգային շրջանակներով։

Քանի որ Արասխանյանն իր առջև խնդիր էր դրել վերլուծական քննությամբ պարզել, թե անցյալի մամուլից ի՛նչն է ընդօրինակելի, ո՛ր ավանդների, հասարակական մտքի ո՛ր ուղղության ժառանգորդը պետք է լինի «Մուրճը», ապա հայ առաջադիմությունը ներկայացնող այս երկու հոսանքների ձայնափող օրգանների համեմատությունն ամփոփում է այսպես. «Կռունկը» հայկական օրգանների մեջ ամենից ընդարձակն է։ Այդ ասելով մենք ուզում ենք հայտնել այն միտքը, թե «Կռունկի» հրապարակախոսությունը ներշնչվում է այն բոլորից, ինչ զուտ հայկական է, մինչդեռ «Հյուսիսափայլը» գտնում է յուր ներշնչանքը ընդհանրապես մարդկայնության մեջ։

«Հյուսիսափայլի» հրապարակախոսությունը կարող էր տարածել հայերի վերա ընդհանրության հետ կապվող զգացումները, որքանով որ դրքա գիտությունից վավերացրած են։

«Կռունկը» կարող էր տարածել հայերի վերա՝ հայերին իրար հետ կապող զգացումները, որքանով որ դրքա պատմությունից վավերացրած են։

Մեկը կարող էր նպաստել գիտությունների աղատ ծավալմանը։
Մյուսը կարող էր նպաստել ազգային դաստիարակությանը։

Մեզանում ոչ մեկը կար ու ոչ մյուսը։ Իսկ այժմ, որքան որ մենք մեկից էլ, մյուսից էլ ունենք, պարտական ենք այդ երկու նշանավոր ուղղություններին»։

Այս ձեռագիր նշումները վկայում են, որ Արասխանյանը ձեռնամուխ լինելով նոր ամսագրի հրատարակմանը, որդեգրել էր ոչ միայն Նազարյանի «Հյուսիսափայլի» ավանդները։ Նա ընդօրինակման արժանի շատ բան էր տեսնում նաև Մարկոս Աղաբեկյանի «Կռունկի» մեջ։ «Մուրճի» խմբագրի համար իդեալականը մեկի լայնախոհության ձուլումն էր մյուսի ազգապահպանման ձգտման հետ։ Առաջադիմությունը նրան պատկերանում էր որպես համամարդկային քաղաքակրթության լայն ճանապարհի և ազգային շավղի ներդաշնակ միահյուսում։ Պատահական չպետք է համարել այն, որ Արասխանյանը «Մուրճի» էջերում համարյա բանավեճի մեջ չմտավ ազգային-պահպանողական իրեն ժամանակակից օրգանի՝ «Ներձագանքի» հետ։ Նրա հետ վիճելու շատ բան չուներ։ Նա բանավեճ ունեցավ հիմնականում «Մշակի» հետ, որը, նրա կարծիքով, ձեռքից բաց էր թողել ազատամտականության դեկը, դավաճանել իր վաղեմի սկզբունքներին։ Ազգային-պահպանողականությունը և լիբերալիզմը XIX դարի վերջին տասնամյակում արդեն շոշափելի ու տեսանելի դարձքերին իրենց սոցիալ-դասակարգային ընդհանրությունը, ցույց տալով, որ մի ծնողի երկու զավակներ են։

Թեև պարբերական օրգանի մասին չի կարելի դատել սոսկ նրա հրապարակած ծրագրով, բայց «Մուրճի» առաջին համարը բացող առաջնորդող հոդվածը տարբերվում է նմանօրինակ հոդվածներից նրանով, որ այստեղ, ինչպես հեղինակն է նշում, մրցության չեն հանված առաջադիմություն, ազատամտություն, հասարակաց և ազգային շահերի պաշտպանություն ստերեոտիպ դարձած ֆրազներ, այլ քննության են առնվում հայ հասարակական մտքի անցյալն ու ներկան և դրանից բխեցվում ամսագրի ծրագիրը։ Ուստի «Մուրճի» հենց առաջին համարի ընթերցողների համար պիտի որ մութ կետեր չմնային նոր ամսագրի ուղղության վերաբերյալ։ Առաջ անցնելով, հավատանք, որ Արասխանյանը զարմանալի հավատարմություն դրսևորեց դեպի մեկ անգամ ընտրած իր սկզբունքները «Մուրճի» հրատարակության ամբողջ ընթացքում։

Սոցիալ-տնտեսական հարցերը «Մուրճում»

Որևէ պարբերականի առաջ գալու պատճառները պարզելիս, չի կարելի չանդրադառնալ ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերություններին, որոնց ծնունդն է հանդիսանում այն: Բարեբախտաբար, «Մուրճը» այն օրգաններից է, որը շատ հարուստ նյութեր պարունակելով դարաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ, հնարավորություն է ընձեռում այդ բանն անել իր իսկ միջոցով:

Արտախանյանի տնտեսագետ լինելու հանգամանքը ամսագրի էջերում ակնառու դարձրին նրա նախասիրությունները: «Մուրճի» խմբագիրը շատ մեծ տեղ էր հատկացնում տնտեսական հարցերին: Նա ամսագիրը դիտում էր որպես մի գիտական հանդես, որը պարտավոր էր անաչառ քննությամբ ուսումնասիրել տնտեսական խնդիրները և ընթերցողների առջև պարզել երկրի զարգացման հեռանկարներն ու ուղիները:

Նախքան սոցիալ-տնտեսական հարցերին նվիրված հոդվածների քննությանն անցնելը, հարկ ենք համարում անդրադառնալ Արտախանյանի աշխարհայացքի մի կարևոր կողմին, որը մեզ համար բանալի պիտի դառնա բացելու նրա հրապարակախոսության «գաղտնի դռները»: Խոսքը Արտախանյանի մտահայեցության, նրա աշխարհայացքային մեթոդի մասին է, որը մեկ բառով կարելի է բնութագրել որպես «օբյեկտիվիստական»: Լինելով լայն հետաքրքրությունների գիտնական, ոչ միայն տնտեսագետ, այլև պատմաբան ու սոցիոլոգ, նա գտնում էր, որ հասարակական կյանքի երևույթներին պետք է նայել օբյեկտիվ հայացքով, ոչինչ չավելացնելով և ոչինչ չպակասեցնելով: Արտախանյանի «օբյեկտիվիստական» մտահայեցության վրա ակնառու է գերմանական պատմական դպրոցի ազդեցությունը, որը մեծ տեղ էր տալիս պատմական փաստերին և վիճակագրությանը:

Բուրժուական «օբյեկտիվիստական» մեթոդաբանության գնահատականը սպառիչ կերպով տվել է Վ. Ի. Լենինը, որը և մեզ կօգնի արժեքավորելու Արտախանյանի աշխարհայացքային համակարգը: Համեմատելով բուրժուական «օբյեկտիվիզմը» պատմական-մատերիալիստական աշխարհայացքի հետ, Լենինը գրում է. «Օբյեկտիվիստը խոսում է տվյալ

պատմական պրոցեսի անհրաժեշտության մասին. մատերիալիստը ճշտությամբ հավաստում է տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիան և վերջինիս առաջացրած անտագոնիստական հարաբերությունները։ Օբյեկտիվիստն ապացուցելով փաստերի տվյալ շարքի անհրաժեշտությունը՝ միշտ ռիսկ է անում շեղվելու և կանգնելու այդ փաստերը ջատագովողի տեսակետին. մատերիալիստը բացահայտում է դասակարգային հակասությունները և դրանով իսկ որոշում իր տեսակետը։ ...Այսպիսով, մատերիալիստը, մի կողմից, ավելի հետևողական է օբյեկտիվիստից և ավելի խոր, ավելի լրիվ է կիրառում իր օբյեկտիվիզմը։ Նա չի սահմանափակվում պրոցեսի անհրաժեշտությունը մատնանշելով, այլ պարզում է, թե հասարակական-տնտեսական հատկապես ո՛ր ֆորմացիան է բովանդակություն տալիս այդ պրոցեսին, թե հենց ո՛ր դասակարգն է որոշում այդ անհրաժեշտությունը։... Մյուս կողմից՝ մատերիալիզմն իր մեջ պարունակում է, այսպես ասած, կուսակցականություն՝ պարտավորեցնելով դեպքի ամեն մի գնահատականի ժամանակ ուղղակի ու բացորոշ կանգնելու հասարակական որոշ խմբի տեսակետի վրա»[1]։

Օբյեկտիվ և անկախ լինելու իր ձգտման մեջ Արասխանյանը, անշուշտ, անկեղծ էր, սակայն հասարակական կյանքում սուբյեկտիվ ցանկության օբյեկտիվ հետևանքը բոլորովին հակառակ կարող է լինել իր ելակետին։ Պատմության փորձով հաստատված է, որ «օբյեկտիվիզմը» վերջին հաշվով ծառայում է տիրապետող դասակարգին, վարագուրում բուրժուազիայի գաղափարախոսությունը։

Արժանին հատուցելով Արասխանյանին, պետք է ասել սակայն, որ թեև «օբյեկտիվիզմը» հնարավորություն չէր ընձեռում նրան ընթերցողների առջև պարզելու հասարակական երևույթների իսկական պատճառներն ու արմատները, բայց դրանց անկողմնակալ նկարագրությունները ուշիմ ընթերցողին կարող էին բերել այնպիսի եզրահանգումների, որոնք դուրս էին խմբագրի նախնական մտադրություններից։ Էլ չենք ասում այն մասին, որ ամսագրի էջերում պարունակվող փաստական հարուստ նյութը անգնահատելի արժեք է ներկայացնում այսօր XIX դարի վերջի

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 507—508։

հասարակական մտքի և սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրման համար:

Ինչո՞վ է տարբերվում XIX դարի վերջին տասնամյակը, որի մեջ գործեց «Մուրճը», նախորդ երկու տասնամյակներից, երբ լույս էր տեսնում Արծրունու «Մշակը»: 70—80-ական թվականները Անդրկովկասում արդյունաբերական կապիտալիզմի սկզբնավորման և զարգացման տարիներ էին, և «Մշակը» այդ կապիտալիզմի գաղափարախոսն էր: 90-ական թվականները խոշոր բուրժուազիայի տիրապետության սկիզբն է, երբ հասարակության մեջ ավելի է խորանում բևեռացումը, արդյունաբերությունը ձգտում է համակենտրոնացման, երբ գյուղի և քաղաքի ունեզրկվող ու բայքայվող մանր արտադրողները սավառացնելով պրոլետարիատի շարքերը, կապիտալիստների դասակարգի առջև կանգնում են արդեն որպես բանվոր դասակարգ, երբ սկիզբ է առնում ու հասունանում բանվորական շարժումը, ճիշտ է, տարերային ու տնտեսական պայքարի ձևով, բայց արդեն որպես մի ուժ, որի հետ չէր կարելի հաշվի չնստել: Կապիտալիզմի զարգացման նոր աստիճանում սոցիալ-դասակարգային տեղաշարժերն իրենց կնիքն են դնում հայկական լիբերալիզմի վրա: «Մշակը» որպես նրա հիմնական գաղափարախոս, նոր դերի մեջ է սկսում մտնել՝ սպասարկելով արդեն բանվորական շարժումից վախեցած և ռեակցիայի հետ դաշինք որոնող բուրժուազիային: «Նոր Մշակ» արտահայտությունը չի նշանակում միայն խմբագրի փոփոխություն՝ Գրիգոր Արծրունու մահվան պատճառով: Դա հայկական լիբերալիզմի նոր էվոլյուցիան է մատնանշում՝ կապված սոցիալ-տնտեսական զարգացման նոր շրջափուլի հետ:

Լիբերալ հոսանքի մեջ առանձնանում և իր ուրույն դիծն է վարում «Մուրճը», որը, պետք է ասել, ավելի ևս ավատատարիմ է մնում հին «Մշակի» բուրժուական դեմոկրատիզմին ու չավագույն ավանդներին, քան նոր «Մշակը», որի ղեկավարները թեև շարունակ հավաստում էին իրենց հավատարմությունը Արծրունու «շկոլային», բայց օր օրի հեռանում էին նրա սկզբունքներից: «Մուրճի» վրա ղգալի էր նաև դարավերջին հզորացող դեմոկրատական շարժման ազդեցությունը:

Աբասխանյանի լիբերալ-բուրժուական մտահայեցությունը առավել ցայտուն արտահայտություն է գտել «Մուրճում» տպագրված տնտեսագիտական հոդվածներում, որոնցում քննության են առնվում Անդրկովկասի տնտեսական զարգացման ուղիներն ու հեռանկարները: Արաս-

խանյանը հանդես է գալիս որպես բարձր զարգացած կապիտալիզմի կողմնակից, և նրա բոլոր դժգոհությունները բխում են կապիտալիզմի անբավարար զարգացումից Անդրկովկասում: «Լուսավոր կապիտալիզմի» մեջ նա լուծված է տեսնում ժամանակի բոլոր հակասությունները և ձգտում է «օբյեկտիվ» քննադատությամբ շտկել, բարեփոխել, իր իդեալին մոտեցնել հայկական կյանքը: Նկարագրելով այս կամ այն տնտեսական երևույթը, ճշտորեն մատնացույց անելով նրա առանձին կողմերը, նա չի կարողանում տեսնել պատճառակցական ընդհանուր կապը զարգացման մեջ, թեև շարունակ հավաստում է իր այդ ձգտման մասին: Լավագույն դեպքում նա կարողանում է մատնացույց անել երևույթի անհրաժեշտությունը, չկարողանալով այն կոչել իր իսկական անունով: Ինքն էլ այդ չկռահելով, նա փաստորեն նյութ է տրամադրում երևույթների դասակարգային շարժառիթները տեսնելու և ավելի արմատական եզրակացությունների գալու համար: Մենք սա չենք ասում իբրև մեղադրանք, այլ սոսկ բնութագրելու համար նրա աշխարհայացքը: Նա իր ժամանակի զավակն էր, որի աշխարհայացքի վրա ժամանակի սահմանափակության կնիքն էր դրված:

Մեծ կարևորություն տալով տնտեսական խնդրին, Արասխանյանը, սակայն, չուներ կյանքի նյութական պայմանների և հասարակական իդեալների փոխադարձ կապի մատերիալիստական ըմբռնում: Պատմական զարգացման խնդիրներին Արասխանյանը մոտենում է որպես իդեալիստ, առաջնակարգ տեղ հատկացնելով գաղափարներին, հավատում բանականության ամենազորությանը: Չնայած ընդհանուր առմամբ ռեալիստական մտածողությանը, իդեալիզմը շատ հարցերում նրան հասցնում էր թյուրատեսության:

Նպատակ դնելով ամեն կերպ նպաստել Անդրկովկասի տնտեսական զարգացմանը, ամսագրի խմբագիրն ինքը մեծ թվով տնտեսագիտական հոդվածներ էր գրում և ասպարեզ տրամադրում մասնագետ հեղինակների, քննության առնելով ոչ միայն տեսական-հետաքրքրային, այլև ամենագործնական հարցերը՝ կապված տնտեսության առանձին ճյուղերի զարգացման, արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի ներդրման և այլ հարցերի հետ[2]:

Գրիգոր Վարդանյանը, որը «Մուրճի» ամենաակտիվ աշխատակիցներից էր և Արասխանյանի մտերիմ բարեկամն ու գաղափարակիցը,

---

2 Այդ հոդվածների տնտեսագիտական վերլուծությունը տե՛ս Խ. Դուլանյանի, Ա. Զուրաբյանի, Ա. Օհանյանի և Ռ. Սարինյանի նշված աշխատություններում:

ամսագրում հանդես էր գալիս տնտեսագիտական հոդվածներով, որոնցում պաշտպանում ու զարգացնում էր նույն տեսակետները, ինչ որ Արասխանյանը։ Բարձրագույն կրթություն ստանալով Գերմանիայում, նա ևս կրել էր նույն դպրոցների ազդեցությունը, ինչ Արասխանյանը։

«Արդյունագործությունը Անդրկովկասում» վերնագրով նրա առաջնորդող հոդվածները հատկանշում են ամսագրի ելակետը կապիտալիզմի զարգացման հարցերում։ Հեղինակը նշում է, որ այն բանից հետո, երբ Անդրկովկասում կապիտալիստ-վաճառականին փոխարինելու եկավ կապիտալիստ-արդյունաբերողը, գործունեության բազմազան ասպարեզներ բացվեցին, առաջադիմեցին տնտեսության որոշ ճյուղեր, հիմնվեց 143 մեքենագործական ֆաբրիկա։ Սակայն հեղինակը դժգոհ է տնտեսության զարգացման տեմպերից և վերակառուցումից։ Գիտություն և փորձ, ահա ինչն է նրա կարծիքով պակասում հայ կապիտալիստներին։ Այդ պակասը լրացրին Եվրոպայից և Ռուսաստանից եկած օտարները, որոնք օժտված էին ձեռնարկող ոգով, գործնական ընդունակություններով և խոշոր կապիտալներով։ «Արդյունաբերության բարձր աստիճաններին հասնելու համար հին և նահապետական աշխատանքի ձևերը բոլորովին աննպատակ են։ Հարկավոր է մշակված աշխատանք, մեքենայական արվեստի գործադրություն և վերջապես, կապիտալների կենտրոնացում», հորդորում է հեղինակը և ղգաստության կոչ անում. «Մենք անընդունակ կլինենք հողի ուժերից օգտվելու և մեր ունեցած կապիտալները գործադրելու՝ ժամանակակից պահանջների համեմատ, և մենք կմնանք միշտ կախված օտար կապիտալիստներից, որոնք մեզ վրա իշխում են, որովհետև նոքա մեզ ամեն բանում գերազանցում են»[3]։

XIX դարի վերջին տասնամյակում, երբ Անդրկովկասում սկսում է զարգանալ մոնոպոլիստական կապիտալիզմը, «Մուրճը» հանդես է գալիս որպես խոշոր մեքենայական արտադրության և համակենտրոնացված արդյունաբերության ջատագով։

«Մուրճում» տպագրված որոշ հոդվածներ ամսագիրն ասես տնտեսագիտական ձեռնարկի են վերածում, որը ոչ միայն հորդորում, այլև սովորեցնում է։ Այս տեսակետից բնորոշ է Հ. Անագչյանի «Առևտրական և գործարանական գործերը մեղանում» հոդվածը. հեղինակը ցավով ու զարմանքով հարցնում է, թե «Անդրկովկասի պես մի երկիր, որ բնությունից օժտված է ամեն տեսակ բնական հարստություններով և հարմարու-

3 «Մուրճ», 1892, № 5, էջ 730, 738։

բյուններով, ...ինչո՞ւ չի պիտի կարողանար մատակարարել իր ազգաբնակության կենսական պիտույքը, ծածկել նրա մերկությունը, նույնիսկ պճնազարդել նրան իր արտադրած բրդից, մետաքսից, սեփական գործարաններում պատրաստված հագուստներով, փոխանակ այդ բերքերը հում կամ կիսամշակ արտահանելու և դրեթե կիսագնի վաճառելու»[4]:

«Մուրճը» հանդես է բերում տեղական ազգային արդյունաբերության զարգացման շահախնդրություն և ոչ միայն բարոյախոսի, այլև ուսուցչի դեր է ստանձնում, ցանկանալով հայ առևտրականների, կապիտալիստների վրայից հանել «ասիական» տարազը և եվրոպական քաղաքակիրթ տեսք տալ նրանց: Ամսագիրը կոչ է անում հայ կապիտալիստներին միավորվել՝ օտար կապիտալի մրցակցությանը դիմագրավելու համար:

«Մուրճը» քննության առարկա է դարձնում տնտեսության առանձին ճյուղերի զարգացման հարցերը: Այսպես, օրինակ, Երևանի նահանգում բամբակի մշակության խնդրին է նվիրված Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի ընդարձակ հոդվածը: Այստեղ ներկայացված է ժողովրդի տնտեսական ծանր վիճակը. «Երևանյան նահանգի ժողովուրդը, մանավանդ սահարհարթերում, ուր դաշտային բերքերը չեն բուսնում, աննշան բացառությամբ չքավորության մեջ է գտնվում. նա տնտեսապես քայքայման հասած՝ նրա նաև մտավոր և հասարակական կյանքը ոչ մի մխիթարական կողմ չի ներկայացնում»[5]: Հեղինակը դա համարում է բնատնտեսությունից ապրանքային տնտեսության անցնելու հետևանք, երբ մեկը քայքայվել էր, իսկ մյուսը՝ դեռ չէր զարգացել: Տեղական վաճառականները քամում են գյուղացու վերջին հյութը և չեն կարողանում լավ կազմակերպել առևտուրը: Դրությունը բոլորովին փոխվում է, երբ երևում են օտար ֆիրմանների ներկայացուցիչները: Նրանք գործի մեջ ներդնում են մեքենաներ, Ամերիկայից բերած սերմը ձրիաբար բաժանում գյուղացիներին, մտցնում բամբակի տեսակների բաժանման սխեմա և այլն: Արդյունքը՝ «խելացի և օրինավոր գործողությունը մեկ կողմից, դրամագլխի մեծությունը մյուս կողմից՝ տեղացի խղճուկ փոքր դրամատեր վաճառականին դուրս քշեցին հրապարակից»[6]:

Ծանոթագրության մեջ նշելով հեղինակի՝ տեղական շահերը պաշտ-

---

4 «Մուրճ», 1893, № 1, էջ 105:

5 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 441:

6 Նույն տեղում, էջ 449:

պանելու գովելի դիտավորությունը, խմբագիրը ավելացնում է. «Այդ գործում մի քայլ ևս դեպի առաջ արված կլիներ, միայն եթե տեղական բամբակը գործածվեր տեղն ու տեղը— տեղական գործարանների մեջ, որ դեռևս չկան»[7]:

Կապիտալիզմի զարգացմամբ շահագրգռված ամսագրի համար Բաքուն, հասկանալի է, առանձին հետաքրքրություն պետք է ներկայացներ: Լինելով կապիտալիզմի զարգացման ամրոցը Անդրկովկասում, այն իր մեջ խտացնում էր նրա բոլոր գծերը, ցուցադրում նրա բոլոր հակասությունները, առատորեն փաստեր տրամադրելով հրապարակախոսներին:

Հսկայի քայլերով էր զարգանում Բաքուն, իսկ քաղաքի մեջ նրա սիրտը՝ Սև քաղաքը, որ «ապրեցնում էր Բաքուն յուր 200 գործարաններով, որ այնտեղ հիմնել են երեսուն տարուց պակաս միջոցում»[8]: Ինչի՞ն էր պարտական նավթարդյունաբերությունն իր այս արագ զարգացման համար. հիմնականում օտարամուտ կապիտալին, այս է ամսագրի եզրակացությունը: Դույներ չեն խնայվում գովաբանելու Նոբելների գործիմացությունը և ձեռներեցությունը՝ նրանց տեղացի կապիտալիստներին օրինակ ծառայեցնելու համար: Տեղացիները չեն դիմանում մրցակցության, բացատրում է ամսագիրը, որովհետև չգիտեն անտեսական օրենքները, մրցման մասին ամենատարրական տեղեկություններ չունեն: Նրանք արտասահմանյան վաճառանոցներում կատաղի կերպով մրցում են միմյանց դեմ, իրար ամենամեծ վնասները պատճառում, չհասկանալով, որ հարկավոր է համագործակցել: Եվ ամսագիրը ցավով պատմում է «Սինդիկատ» ընկերություն ստեղծելու փորձի ձախողման մասին: Իբրև տրնտեսագետ, Արասխանյանը տեսնում էր, որ ապագան համակենտրոնացված արդյունաբերությանն է և ամսագրի էջերում ամեն կերպ հորդորում էր հայ կապիտալիստներին միավորվել:

Ուշադրության արժանի է Արասխանյանի «Օտար կապիտալների մուտքը Անդրկովկասում» տեսությունը: Նշելով Անդրկովկասում գործող օտար ֆիրմաների գործունեությունը, Արասխանյանը փորձում է պատասխանել մի շատ կարևոր հարցի՝ այդ բանը օգտակա՞ր է, թե՞ վնասակար: Հարցադրումը շատ կոնկրետ է, սակայն Արասխանյանի պատասխանը բավական հեղհեղուկ է: Նա գրվատում է շվեդացի Նոբել եղբայրների գործունեությունը, որոնց շնորհիվ կերպարանափոխվեց նավ-

---

7 Նույն տեղում, էջ 451:

8 «Մուրճ», 1891, № 10, էջ 1202:

թային արդյունաբերությունը։ «Նոբել եղբայրների օրինակից օգտվեցին տեղացիք,— գրում է Արասխանյանը,— նոքա հետևեցին այն ամենին, ինչին կենդանի օրինակը կարող էր դրդել ասիացի հայի և թուրքի կաշկանդված ուղեղը... օտարը եկավ և գործ սաեղծեց ու սովորեցրեց։ Նոբելը Բաքվի բարերարն եղավ ու բնիկներից ավելի հարազատը»[9]։

Այլ բնութագիր է տանում Արասխանյանի գրչի տակ ֆրանսիացի կապիտալիստ Ռոտշիլդը, որի նպատակն էր «միմիայն կապիտալը արդյունաշահ տեղ դնել և փորձել նավթի առուտուրը յուր ձեռքը գցել, մոնոպոլիստական դիրք ստեղծել նավթի առուտուրի մեջ»[10]։ Այստեղից եզրակացություն՝ «մեկը օգտակար է, մյուսը վնասակար մեր երկրի համար»[11]։

Կարելի է զարմանալ Արասխանյանի այս սուբյեկտիվիստական բացատրության վրա։ Անդրկովկասի տնտեսական կյանքի համար այդպիսի կարևոր հարցին նա պետք է մոտենար գոնե իր նախասիրած սկզբունքով՝ պատմականորեն և տնտեսագիտորեն և ոչ թե այս կամ այն կապիտալիստի անձը նկատի առնելով։ Եվրոպական գործիմացություն օրինակ ծառայեցնելու իր ձգտման մեջ Արասխանյանը չափից ավելի էր ոգևորվում, հասնում ծայրահեղության։ Օտար կապիտալիստի մուտքը Անդրկովկաս ցանկալի համարելով, որքանով նա կարող էր օրինակ ծառայել տեղացիներին, նա մոռանում էր, որ այդ «օրինակի» հետևանքները շատ ծանր էին նստելու տեղական ազգերի վրա։ Օտար կապիտալիստները ձգտում էին դառնալ Անդրկովկասի անգին հարստության՝ նավթի լիիրավ տերն ու տնօրենը։ Ազգային արդյունաբերության այս բացարձակ կորուստի դիմաց շատ հարաբերական չէ՞ օտար կապիտալի «օրինակ ծառայելու» օգուտը։ Արասխանյանի այս հոդվածը չի համերաշխում ազգային կապիտալիզմի զարգացման այն ընդհանուր շահախնդրությանը, որը միավորում էր և՛ լիբերալ, և՛ ազգային պահպանողական գաղափարախոսներին։

Ի՞նչ ընդհանուր գիծ ենք տեսնում տնտեսական խնդրին նվիրված «Մուրճի» հոդվածներում։ Նա, ինչպես և «Մշակը», կապիտալիզմի զարգացման պրուսական ուղու, այսինքն աստիճանական բարեփոխումների կողմնակից էր։ «Մուրճը» ևս իր պարտականությունն էր համարում հայ

9 «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1552։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում, էջ 1554։

բուրժուազիային հասկացնել իր դերը պատմական զարգացման նոր շրջափուլում։ Անդրկովկասի տնտեսական զարգացման հեռանկարների որոշման իր հառաջդուն ջանքերի մեջ նա հայացքը հառում էր կապիտալիստական Եվրոպային, այն դիտելով իբրև հասարակության զարգացման չափանիշ։ Անդրկովկասի տնտեսական հետամնացության պատճառը տեսնելով կապիտալիզմի անբավարար զարգացման մեջ, ժամանակակից կապիտալիստական հասարակարգի արատավոր կողմերը «օբյեկտիվորեն» արձանագրող ամսագիրը բոլոր հակասությունները և խնդիրները լուծված էր տեսնում բարձր զարգացած կապիտալիզմի մեջ։ Նա հավատում էր տեխնիկայի և գիտության ամենակարող ուժին, որոնք հեղաբեկելով արտադրությունը, պիտի բարելավեին նաև ժողովրդի տնտեսական վիճակը։ Իսկ սա նշանակում է չտեսնել կապիտալիզմի շահագործողական բուն էությունը։

* * *

XIX դարի վերջում Անդրկովկասում խոշոր արդյունաբերության զարգացման հետևանքով սկսեց ձևավորվել արդյունաբերական հայ պրոլետարիատը, որը ոչ միայն պայքարի ասպարեզ մտավ՝ զինված իր դասափարախոսությամբ, այլև իր վրա հրավիրեց մյուս դասակարգերի դասափարախոսների ուշադրությունը, քանի որ նա արդեն մի ուժ էր, որին չնկատել, որի հետ հաշվի չնստել չէր կարելի։

Պատմական նոր շրջափուլում, հասկանալի է, «Մուրճը» ավելի մեծ տեղ պիտք է հատկացներ «բանվորական խնդրին», քան դա անում էր հին «Մշակը», որը ջանում էր բանվորական հարցը «լուծել» մանր արտադրողներին պրոլետարիատի շարքերն ընկնելու վտանգից փրկելու միջոցով։ «Մուրճի» շրջանում արդեն պարզ էր նման ջանքերի ապարդյուն լինելը։ Բանվոր դասակարգի գոյության իրավունքի վրա Արասխանյանը նայում էր օբյեկտիվ հայացքով, արձանագրում նրա ծանր վիճակը, աչք չփակելով դասակարգային պայքարի իրողության առջև, բայց և ջանում էր խաղաղ միջոցներով «լուծել» կապիտալիզմի հակասությունները։

«Բանվորական խնդիրը» չի իջնում «Մուրճի» էջերից նրա գոյության ամբողջ ընթացքում։ Սակայն որքան էլ անկեղծ էին «Մուրճի» խմբագրի սրտացավությունը և մտահոգությունը նոր հասարակարգի արգանդից ծնված ընչազուրկ դասակարգի ծանր վիճակի նկատմամբ, ամսագրի էջերում «բանվորական խնդրի» արծարծումը դուրս չի գալիս կապիտա-

լիզմի արատների քննադատության խմբագրի մեկ անգամ գծած շրջանակներից և իր առջև դնում է սոսկ բանվորների տնտեսական դրությունը բարելավելու խնդիր, հենց «քննադատվող» հասարակարգի շրջանակներում:

«Մուրճի» էջերը լի են բանվոր դասակարգի ծանր վիճակի նկարագրություններով: Ահա դրանցից առաջինը՝ Երվանդ Ղազարյանի ֆրեզակցությունը «Բանվորների դրությունը Կարսում» վերնագրով. «Ներկայումս Կարսի զանազան մասերում՝ թե՛ քաղաքի մեջ և թե՛ քաղաքից դուրս՝ ամառը, արեգակի այրող ճառագայթների տակ, գարնանը և աշնանը՝ ցրտի, անձրևների և կտրող քամիների ենթարկված, աշխատում են բազմաթիվ անտուն և աղքատ մարդիկ, որոնք տեղական լեզվով կոչվում են «իրղատներ» (բանվորներ): Նրանք բոլորն էլ օտարական են, Տաճկա-Հայաստանի գյուղերից և քաղաքներից ճնշված, հալածված և օտարության մեջ իրենց ապրուստը որոնող մարդիկ, Տաճկա-Հայաստանի տնտեսական և բարոյական կրիզիսը ծանր հարվածներ է տալիս ժողովրդի ստորին դասակարգի, ամբոխի ընդհանրությանը և բաժանում, ցրում, հեռացնում է ժողովուրդը իր հայրենիքից»[12]:

Անլուր անօրինականություն, անսանձ կամայականություն, անզուսպ շահագործում, անծայր աղքատություն, ահա ինչն է բնորոշ գավառական քաղաքի համար, ուր մուտք էին գործել կապիտալիզմի օրենքները:

«Հեշտ միջոցով, կարճ ժամանակում շատ փող աշխատելու» մտածմունքը անդադար տանջում է գործի տիրոջը,— շարունակում է հոդվածագիրը,— և նա դիշեր-ցերեկ մտածում է, գլուխ է կոտրում՝ հարբուտահարության նորանոր և սրամիտ միջոցներ հնարելու վերա: ...Իհարկե, նրանց գլխավոր և ամենամեծ ցանկությունն այն է, որ ստիպեն նրանց (բանվորներին— Լ. Գ.), ամենաշատ աշխատության համար, ստանալ ամենաքիչ վարձատրություն»[13]:

Ո՞րն է հեղինակի եզրակացությունը. «Գիտակցական միություն, ընկերական ընդհանուր ներդաշնակություն, ընդհանուր շահերի և ինտերեսների լայն հասկացողություն,— այդ բոլորը չկա բանվորների մեջ: Հենց այդ միության և ուժերի ընդհանուր կապակցության (ассоциация) բացակայությունից՝ առաջանում է բանվորների թշվառ և ընկած դրու-

12 «Մուրճ», 1890, № 1, էջ 122:

13 Նույն տեղում, էջ 129:

թյունը»[14]։ Այլ խոսքով, տնտեսական կազմակերպված պայքարի բացակայությամբ է բացատրվում բանվորների ծանր դրությունը։ Բայց դա վիճակը փոքր-ինչ բարվոքելու միջոց էր լոկ։

«Բանվորական խնդրի» վերաբերյալ ամսագրում հետաքրքիր հոդվածներով հանդես է եկել Գ. Ղարաջյանը (Արկոմեդ), որը «Մուրճի» ակտիվ և բեղմնավոր աշխատակիցներից էր։ Հոդվածների վերնագրում առանձնացնելով մեկ հարց՝ «Բանվորների ապահովացման խնդիրը», Ղարաջյանն այն առիթ է դարձնում խոսելու ընդհանրապես «բանվորական խնդրի» վերաբերյալ, որպես «սոցիալական գիտությունը զբաղեցնող ամենանշանավոր խնդիրներից մեկը»[15]։

Բանվոր դասակարգի նկատմամբ ծագած ուշադրությունը Ղարաջյանը բացատրում է «հասարակության լավագույն կազմվածքի համար իբրև առաջադեմ տարր» հանդես գալու նրա դերով։ Նա ծաղրում է այն մարդկանց ապարդյուն ջանքերը, ովքեր չարիք համարելով նոր դասակարգի ծնունդը, ձգտում են ոչնչացնել այդ չարիքը զանազան դեկրետներով ու ծրագրերով. «Չպետք է զարմանան, եթե ասեմ, որ այդ չարիքը անխուսափելի հետևանք է որոշ տնտեսական զարգացման, հետևանք մեծ կամ խոշոր արդյունագործության և, որ գլխավորն է, ոչ մի հնարքով չի կարելի պրոլետարիատ ասված չարիքը ներկայումս վերացնել այն երկրներում, ուր մեծ արդյունագործությունը սկսել է մուտք գործել և հաղթահարել հին նահապետական մշակության մանր-մունր ձևերին։ Մի երկրում ներկայումս պրոլետարիատի զարգացման առաջն առնելու փորձ անել, կնշանակե դուր ջանք անել, ժխտելով մեքենայի, շոգու օգտակարությունը, ժխտել կապիտալի պատմական մեծ նշանակությունը, մի խոսքով գիտության և քաղաքակրթության փառավոր գյուտերն ու ստեղծագործությունները»[16]։

Գ. Ղարաջյանի այս հոդվածի անմիջական շարունակությունն է կազմում Հակոբ Հակոբյանի «Բանվորների հավաքական ապահովացումն Ռուսաստանում դժբախտ դեպքերից» հոդվածը։ Հայ պրոլետարական մեծ բանաստեղծը, որ իր գրական առաջին փորձերն էր անում «Մուրճում», իր մասնակցությունն է բերում նաև ամսագրի էջերում «բանվորական խնդրի» քննարկմանը։ Նա իր ձայնն է միացնում բանվորների շահերը

---

14 «Մուրճ», 1890, № 1, էջ 130։

15 «Մուրճ», 1894, № 1, էջ 101։

16 Նույն տեղում, էջ 103։

պաշտպանող Ղարաջյանի հոդվածին, հաստատում ու պնդում բանվորների ապահովագրման «այդ վերին աստիճանի համակրելի երևույթի»[17] իրականացման անհրաժեշտությունը նաև հայ իրականության մեջ:

Հետաքրքիր է այն փաստը, որ «Մուրճի» լուրերի բաժնում Արասխանյանը զետեղում է Բալախանիի մի խումբ բանվոր-արհեստավորների նամակը, որով նրանք հայտնում են իրենց «ջերմ շնորհակալիքը այն ուշադրության համար, որ նվիրում է «Մուրճը» իրանց դասակարգի մոռացված շահերին»[18]:

Ուշադրության արժանի է նաև Գ. Վարդանյանի «Խոշոր ձեռնարկությունների բնավորությունը և բանվորները» հոդվածը, որտեղ քննության են առնվում այն հետևանքները, որոնք բերում է իր հետ խոշոր արդյունաբերությունը՝ դուրս մղելով մանրերին: Հեղինակի կարծիքով, լոկ տնտեսական տեսակետից խոշորացող արդյունաբերությունը, անժխտելի առաջադիմություն է, բայց հասարակական տեսակետից չի կարելի միևնույնը սնդել: Նա նկատի ունի մաքր ձեռնարկությունների փակման և խոշոր գործարաններում մեքենայական կատարելագործված արտադրության անցնելու հետևանքով փողոց նետված գործազուրկ բանվորների հոծ զանգվածներին: Հեղինակի գրչի տակ արձանագրվում են կապիտալիզմի հակասությունները. բանվորը «միայն բանում է, միայն արդյունաբերում է, միայն ստեղծում է և իր տոկուն աշխատանքով և ուժով արդյունաբերած արդյունքները հանձնում իր փորքրաթիվ տերերին, ստանալով սոցանից փոխարենը միայն օրավարձ, որ հազիվ բավականանում է իր օրվա կենսական ամենաանհրաժեշտ պիտույքը լրացնելու»[19]: Նա տեսնում է նաև կապիտալիստական դասակարգի գործելակերպի շարժառիթները, երբ սա առաջ է մղում արտադրությունը, կատարելագործում ու խոշորացնում այն. «Այս բոլորը արվում է գլխավորապես հարստանալու նպատակով, լոկ եսական շահերը աչքի առաջ ունենալով: Այդ նպատակին հասնելու համար արդյունաբերող կապիտալիստները դիմում են ամեն տեսակի միջոցների»[20]: Հեղինակը ցավ է հայտնում այն «լարված հարաբերությունների» ու «անդունդի» համար, որ գոյանում է երկու դասակարգերի միջև: Բանվորները ստիպված են լինում դիմել գործադուլի, իսկ

---

17 «Մուրճ», 1894, № 7—8 էջ 1101:

18 «Մուրճ», № 6, էջ 974:

19 «Մուրճ», 1894, № 4, էջ 578:

20 Նույն տեղում, էջ 580:

վարդանյանը գտնում է, որ «նմանօրինակ երևույթները ցանկալի չեն և վնասակար են»[21]։

Փրկության ի՞նչ ուղի է առաջարկում Գ. Վարդանյանը. նա դիմում է իր և Արասխանյանի ուսուցիչ, զեմստվական տնտեսագետ Շմոլլերի օգնությանը, որը, հեղինակի հավաստմամբ, «իր նորագույն գրվածքում լրջորեն ուսումնասիրում է հիշյալ խնդիրը և կարծում է, որ կարելի է բանվորների ու գործարանատերերի միջ հաշտություն կայացնել, ստեղծելով բանվորների համար օրավարձի այժմյանից ավելի արդար և բավարար պայմաններ։ Նա առաջարկում է մտցնել այնպիսի վարձատրության սիստեմ, որ բանվորների օրավարձը բարձրացներ աստիճանաբար, համեմատ սոցիալ տեխնիկական վարժությունների և երկարատև ծառայությունների»[22]։ Շմոլլերն առաջարկում է ստեղծել նաև բանվորական մասնաժողովներ՝ բանվորների շահերը պաշտպանելու համար։ Վարդանյանը վկայակոչում է այդպիսի մասնաժողովների «արդյունավետ» գործունեությունը և ցանկություն հայտնում, որպեսզի դրանք բազմանան ու տարածվեն։

«Բանվորական խնդիրը» այս ձևով «լուծելով», Գ. Վարդանյանը դառնում է կապիտալիստներին՝ մարդասիրական այսպիսի կոչով. «Գործարանատերերը պետք է ղգան և լրջորեն մտածեն, որ իրանց գործունեությունը ոչ միայն հարստություն դիզելու և վայելուչ կյանք վարելու համար է, այլ որ նա մի շատ պատասխանատու պաշտոն է, որ մեծամեծ պարտավորություններ ունի կատարելու հասարակության առջև։ Էլ չի կարելի բանվորների հետ վարվել իբրև լոկ աշխատանքի գործիքների հետ, իբրև մի մեռած մասսայի հետ, որ ամեն հրամանին և կոպտության հնազանդում է»[23]։

Այս դեռ բոլորը չէ. հեղինակը հարկ է համարում իր տիրադն ավարտել այն երանելի վիճակի կանխագուշակումով, երբ հասարակությունն ընդունած կլինի իր առաջարկած դեղահաբերը. «Այն ժամանակ կվերանան սպառնալիքը, վրիժը, ատելությունը և թշնամությունը երկու դասակարգերի միջ, որոնք ծագում են վերջիններիս շահերի խիստ հակասությունից։ ...Գործարանատերերը և բանվորները— երկուսն էլ կոչված են աջակցելու հասարակական խնդրի լուծմանը։ Երկուսն էլ պարտավոր են

---

21 Նույն տեղում, էջ 581։

22 Նույն տեղում, էջ 583։

23 Նույն տեղում, էջ 586։

եվրոպական քաղաքակրթությունը փրկել սպառնացող հեղափոխական արհավիրքից, որ սպառնում է տապալել այն ամենը, ինչ մարդկության համար սուրբ է»[24]:

Լիբերալ գաղափարախոսությունն ակնհայտ է: Մնում է զարմանալ, թե ինչպես մեր օրերում տնտեսագետը այս հոդվածի մասին կարող էր գրել նման տողեր. «Հոդվածի վերջում ասվում է, որ ռևոլյուցիոն ուժերը իրենց պայքարի միջոցով ժողովրդին կազատագրեն ճորտային կախվածությունից: Հեղինակը կապիտալիստական հասարակությունը համարում է այնպիսի անցողիկ հասարակություն, ինչպես անցողիկ էին ստրկատիրական ու ֆեոդալական հասարակությունները: Բանվոր դասակարգը որոշ ժամանակ անց կսահմանի նոր հասարակական հարաբերություններ, կստեղծվի մի այնպիսի հասարակություն (նկատի ունի սոցիալիստական հասարակության ստեղծումը), որը ազատ կլինի ժամանակակից հասարակարգի արատներից»[25]: Ի՞նչն է հիմք ծառայել նման տարօրինակ եզրակացությունների համար. արդյո՞ք «Մուրճում» մարքսիստական գաղափարախոսության պրոպագանդ տեսնելու ցանկությունը: Եթե Վարդանյանի հոդվածում խոսվում է ինչ-որ «նոր» հասարակարգի մասին, ապա դա բուրժուական «բարենորոգչությամբ» կարկատված նույն կապիտալիստական հասարակությունն է: Իսկ հեղափոխությունը Վարդանյանի համար լոկ մի արհավիրք է, որի դեմն առնելու համար նա ոգեկոչում է գործարանատիրոջ ու բանվորի դաշինքը...

Կապիտալիստական հասարակությունը «բարենորոգելու» նույն միտումով են համակված Գ. Վարդանյանի՝ «Մուրճի» համար գրած համարյա բոլոր հոդվածները: Նա սկսում է նրանից, որ «բարեխղճորեն» թվարկում է այդ հասարակության թերությունները և վերջացնում՝ «բարենորոգիչ» միջոցների առաջարկությամբ: «Ազգաբնակչության խնդիրը» հոդվածում նա փորձում է պարզել ժողովրդական մասսաների աղքատության արմատը: Ի պատիվ հեղինակի և հոդվածն իր ամսագրում հրատարակող խմբագրի, պետք է ասել, որ նրանում խիստ քննադատության է ենթարկված Մալթուսի մարդատյաց տեսությունը: Ոչ միայն նշված է դրա հակագիտական էությունը, այլև կուսակցական մտքի արտահայտու-

---

24 Նույն տեղում:

25 Ե. Գուլանյան, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, էջ 89—90:

թյուն»[26], այսինքն որոշակի շրջանների գաղափարախոսություն լինելու հանգամանքը:

Ժողովրդական զանգվածների աղքատությունը հեղինակը բացատրում է բաշխման սխալ սխեմով: «Բոլորովին սխալ և վտանգավոր է այն կարծիքը, թե աղգաբնակչության աճումն առաջ է բերում աղքատություն: Սա մի ծնունդ է տնտեսական-հասարակական կազմակերպության: Երբ որ ժողովրդական հարստությունը ավելի արդար կբաշխվի զանազան դասակարգերի միջև, աղքատությունը մեծամ մասամբ կնվազի»[27]: Հեղինակը այստեղ կանգ է առնում, առաջ չի գնում, եզրակացություն չի անում, և նրա հոդվածն էլ մնում է անհասցե բողոք ու կոչ՝ անարդար բաշխումը վերացնելու վերաբերյալ: Բուրժուական գռեհիկ տնտեսագիտական հայացքը հնարավորություն չի ընձեռել հեղինակին հասկանալու, որ ամեն մի բաշխում պայմանավորված է տվյալ արտադրաեղանակով և այն կփոխվի միայն վերջինիս փոփոխման հետ:

«Աշխատանքի տներ» վերնագրով հոդվածում դարձյալ նշելով, որ աղքատությունը և գործազրկությունը «ծագել են Եվրոպայի տնտեսական-հասարակական պակասավոր կազմակերպությունից», որի պայմաններում ժողովրդական հարստությունը չի բաշխվում արդարության պահանջի համապատասխան, Գ. Վարդանյանն իր վրա է առնում արդարության մունետիկի դերը, գրելով. «Մենք պնդում ենք առանց երկբայելու, որ արդարության սկզբունքը մի օր պիտի հաղթող հանդիսանա և իշխի մարդկանց գործերի վրա»[28]: Քանի որ հեղինակին հայտնի չէ, թե այդ «մի օրը» պատմության օրացույցի որ թերթիկի վրա է նշված, նա կոչ է անում առայժմ բավարարվել բարեգործությամբ՝ աշխատանքի տներ հիմնելով չքավոր, անգործ ու անօգնական մարդկանց համար:

Գ. Վարդանյանի մտահայեցությունը պարզ է. կապիտալիստական հասարակարգը թերի է, սակայն այն կարելի է լիակատար դարձնել մաքրագործելով, ազատելով թերություններից ու արատներից: Գ. Վարդանյանի հոդվածների տակ, կարծում ենք, հեղինակի իրավունքով կարող էր ստորագրել նաև ամսագրի խմբագիրը:

Արասխանյանն ինքը օբյեկտիվիստական նեղ դիտակետից հայեցողաբար զննում և ախտորոշում է հասարակական հիվանդագին երևույթ-

---

26 «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1530:

27 Նույն տեղում, էջ 1536:

28 «Մուրճ», 1900, № 5—6, էջ 680—681:

ները, սակայն դեղատոմսեր չի առաջարկում, կամ առաջարկում է այնպիսիք, որոնք, ինչպես ասում են, «ցավին դարման անել չեն կարող»: «Բանվորական խնդիրը» հոդվածում նա բավական ռեալ գույներով ներկայացնում է կապիտալիստական մերկ շահի աշխարհը. «կապիտալիստները եկամուտների մի մասը խնայելով, բնավ չեն մտածում ոչ բանվորի վարձը ավելացնելու և ոչ ապրանքների գինը ցածրացնելու մասին. նորա միայն ձգտում են համապատասխան չափով եկամուտ ավելցընել»[29]: Արասխանյանը մատնացույց է անում կապիտալիստական արտադրության խոցերը՝ ճգնաժամերն ու գործազրկությունները, նշում, որ լիբերալիզմը՝ չնայած իր «հրաշալի արդյունքներին» տնտեսական առաջադիմության մեջ, «ստեղծեց մեծ անհավասարություններ ժողովրդի ահագին մեծամասնության և նրա փոքրամասնության միջև, և ոչ էլ ազատ մրցման մեջ արդյունաբերությունը կարողացավ այդ ահագին մեծամասնության տնտեսական կարիքներին բավարարություն տալ»[30]:

Արասխանյանը մատնանշում է նաև դասակարգային պայքարի անխուսափելիությունը. «Անհատ-բանվորը անհատ-կապիտալիստի դեմ անզոր էր. բանվոր դասակարգը ուրեմն պետք է կազմակերպվեր: Այդ կազմակերպությունը ամենից առաջ սկսվեց Անգլիայում, ուր գործարանական կյանքը ավելի շատ և ավելի շուտ, քան ուրեխցե, զարգացավ և ազատ մրցման և ազատ դաշնի ավերումները ամենից աղաղակողն էին»[31]: Պատահական չէ, որ դասակարգային պայքարի մասին խոսելիս, Արասխանյանը հաճախ է հայացքը հառում Անգլիային: Դա ոչ միայն այն պատճառով, որ Անգլիան կապիտալիզմի կլասիկ երկիրն էր, այլև նրա համար, որ անգլիական բանվոր դասակարգի տրեդ-յունիոնիստական պայքարի ձևը շատ հոգեհարազատ էր Արասխանյանի լիբերալ-ռեֆորմիստական մտահայեցությանը:

Տրեդ-յունիոնիզմը, ինչպես հայտնի է, օպորտունիստական հոսանք է բանվորական շարժման մեջ, որը բանվոր դասակարգի պայքարը սահմանափակում է տնտեսական խնդիրների շրջանակով և քարոզում դասակարգերի համերաշխություն:

«Ի՞նչ անել» աշխատության մեջ, խոսելով տրեդ-յունիոնիստական և սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժումների տարբերության

---

29 «Մուրճ», 1897, № 11—12, էջ 1602:

30 Նույն տեղում, էջ 1605:

31 Նույն տեղում:

մասին, Վ. Ի. Լենինը գրում է. «Տնտեսական պայքարը բանվորների կոլեկտիվ պայքարն է տերերի դեմ՝ աշխատուժի վաճառման նպաստավոր պայմանների համար, բանվորների աշխատանքի և կյանքի պայմանների բարելավման համար»[32]: Լենինը զգուշացնում է բանվոր դասակարգի քաղաքական պայքարի անհրաժեշտությունը չբմբռնողներին և միայն տնտեսական պայքարով հրապուրվողներին, որ. «ամեն մի նվաստացումը մինչև տրեդ-յունիոնիստական աստիճան՝ հենց հող է պատրաստում բանվորական շարժումը բուրժուական դեմոկրատիայի գործիքի փոխարկելու համար: ...բանվոր դասակարգի տրեդ-յունիոնիստական քաղաքականությունը բանվոր դասակարգի հենց բուրժուական քաղաքականությունն է»[33]:

Տրեդ-յունիոնիստական բանվորական շարժումը բնավ չի դիպչում կապիտալիստական հասարակարգի բուն հիմքերին, այն քաղաքական խնդիրներ չի դնում իր առջև: Սա հենց այն շրջանակներն են, որոնց սահմաններում Արաբխանյանն ընդունելի է համարում պրոլետարիատի դասակարգային պայքարը, բավարարվելով լեգալ միջոցներով, օրենսդրական ճանապարհով ձեռք բերվող տնտեսական բարեփոխումներով:

Խոշոր կապիտալիստական արդյունաբերության և մանր արտադրողների համատեղ գոյության պատրանքը, որ փայփայում էր Արծրունին, XIX դարի վերջին տասնամյակում հօդս է ցնդում: Արաբխանյանն ավելի սթափ հայացքով է նայում մանր արտադրողների ոչնչզրկման երևույթին, բմբռնում դրա անխուսափելիությունը: Չնայած դրան, գնահատելով գերմանական գռեհիկ տնտեսագիտության ազդեցության տակ, Արաբխանյանը ևս որոշ չափով տուրք տվեց դերմանացի լիբերալ Շուլցե-Դելիչի կոոպերատիվների գաղափարին, որոնց նպատակն էր ինքնօգնության սկզբունքով կազմված սպառողական և արտադրական ընկերությունների միջոցով լուծել «բանվորական խնդիրը», դեմքննդաց գնալով զարգացող կապիտալիզմի հետևանքով մանր արտադրողների քայքայման և պրոլետարիատի առաջացման պատմական պրոցեսին: Այսպիսի կոոպերատիվիզմը նշարժություն էր, և հասկանալի է մարքսիստական մտքի խիստ բացասական վերաբերմունքը դեպի այն:

Արաբխանյանը ոչ միայն իր համակրությունն է հայտնում այդ ընկերությունների վերաբերյալ, այլև խրախուսում ու նպաստում է նման

---

32 Վ. Ի. Լենին, նշվ. հ. 6, էջ 76:

33 Նույն տեղում, էջ 121:

մի ընկերության ստեղծմանը հայ իրականության մեջ։ «Մուրճի» 1893 թ. №7—8-ի լուրերի բաժնում հայտնելով բանվոր-արհեստավորների կոոպերատիվ ընկերություն ստեղծելու մտադրության մասին, հաջորդ տարում նա տպագրում է այդ ընկերության կանոնադրությունը։ Հետաքրքիր է, որ ընկերությունը ևս կրում է «Մուրճ» անունը։ Ամսագիրը տեղեկացնում է, որ «Թիֆլիսի մի խումբ կրթված արհեստավորներ մտածելով իրանց դասակարգի նյութական և բարոյական շահերի վրա, հղացել են մի օգտակար և գեղեցիկ միտք՝ իրանց սեփական խնայողություններով դրամագլուխ կազմել և դորանով արհեստանոցներ բաց անել։ ...Մեր նպատակն է հրատարակելով ներկա պայմանաթուղթը, հրավիրել արհեստավորների ընդհանրության ուշադրությունը»[34]։

Կանոնադրության առաջին կետում նշված է փայավճարը՝ 200 ռուբլուց ոչ պակաս։ Հետաքրքիր են 21 և 23-րդ կետերը։ Առաջինում նշված է, որ ընկերությունը պարտավորվում է իր արհեստանոցներում աշխատողներին ապահովացնել դժբախտ դեպքերի դեմ, իսկ մյուսում՝ ընկերությունը հիմնում է էժանագին ճաշարաններ և ընթերցարան-դրադարան իր անդամների համար։ Ամսագրի հաջորդ համարում խմբագիրը լուր է տալիս, որ ընկերությունն ունի 22 անդամ։ Այնուհետև ամսագրի էջերում մենք այլևս ոչ մի տեղեկության չենք հանդիպում «Արհեստավորաց «Մուրճ» ընկերության» մասին։ Արասխանյանը լի էր եվրոպայում իր տեսած-ուսածը հայրենի հողում պատվաստելու ցանկությամբ։ Սակայն, «պատվաստը» միշտ չէ, որ կարող էր «բռնել»։ Հավանաբար, այդպես է պատահել նաև այս ընկերության հետ. նպաստավոր հող չունենալով, այն շուտով քայքայվել է։ Սակայն, ինչ էլ որ լիներ ձեռնարկման վախճանը, կոոպերատիվ ընկերություն ստեղծելու փորձը ըստինքյան հետաքրքիր երևույթ է այն ժամանակվա հայ իրականության համար։

Ամփոփենք. ժամանակի պահանջներին ունկնդիր, «Մուրճն» ընդարձակեց «բանվորական խնդրի» շրջանակները, որը դեռ քննության առարկա էր դարձրել «Մշակը»։ Մշակների դասը «Մուրճի» էջերում կանգնեց որպես կազմակերպված բանվոր դասակարգ։ Ընդլայնելով «բանվորական խնդրի» արծարծման շրջանակները, Արասխանյանը, սակայն, դրա լուծումը դուրս չբերեց լիբերալ-բուրժուական շրջագծից։ Բանվոր դասակարգի քաղաքական պայքարը «Մուրճի» խմբագրի համար անընդունելի էր։

---

34 «Մուրճ», 1894, № 11—12, էջ 1730։

* * *

Նոր զարգացող կապիտալիզմը հայ իրականության մեջ, եթե մի կողմից ծնունդ էր տալիս բուրժուական գաղափարախոսությանը, որը կոչված էր հիմնավորելու և ամրապնդելու բուրժուազիայի տիրապետությունը, մյուս կողմից կյանքի էր կոչում նաև մանրբուրժուական սոցիալիստական գաղափարախոսությունը, որը գալիս էր պաշտպանելու կապիտալիզմի զարգացումից տուժած դասակարգերի՝ քաղաքի և գյուղի մանր արտադրողների շահերը։ Հայ ժողովրդի պատմական զարգացման այս շրջանը, սակայն, ունի այն առանձնահատկությունը, որ կապիտալիզմի զարգացմանն ուղեկցող այս գաղափարախոսությունները ոչ միայն և ոչ այնքան «թխվում էին» սեփական «թոնրատանը», որքան ներմուծվում էին զարգացման այդ շրջափուլը վաղուց անցած Եվրոպայից և հարմարեցվում տեղական պայմաններին։ Մյուս կողմից, Եվրոպայում ալրոլետարիատը հանձին մարքսիզմի արդեն ուներ դասակարգային պայքարի իր հեղափոխական թևորիան՝ գիտական սոցիալիզմը։ Դարավերջին Անդրկովկաս էին ներթափանցում նաև գիտական սոցիալիզմի գաղափարները։

«Մուրճ» ամսագրի խմբագիր Ավետիք Սրասխանյանը, ի տարբերություն Գրիգոր Արծրունու, ոչ միայն հանդուրժողական վերաբերմունք դրսևորեց դեպի սոցիալիզմի գաղափարները, այլև՝ որոշակի հետաքրքրություն։ Սոցիալիզմը, սակայն, նրա համար մի ընդհանուր, չտարբերակված գաղափար էր, և այս հյուրընկալության հետևանքով նրա ամսագրի էջերում «խաղաղ» հարևանություն էին անում բուրժուական-պահպանողական, քրիստոնեական, մանրբուրժուական և ուտոպիական սոցիալիզմի գաղափարները գիտական սոցիալիզմի՝ մարքսիզմի գաղափարների հետ։ Սոցիալիստական ուսմունքների այս խճանկարային խառնարձակությունը ամսագրում պայմանավորված էր ոչ միայն ժամանակաշրջանին հատուկ գաղափարական էկլեկտիզմով, այլև հեղինակների աշխարհայացքային տարամետությամբ, որոնց խմբագիրը հյուրընկալորեն տեղ էր տալիս իր ամսագրում։

Ինչ նախադրյալներով էր պայմանավորված «Մուրճի» էջերում մարքսիզմի գաղափարների արտացոլումը։ Դա գաղափարական այն սուր պայքարի արձագանքն էր հայ իրականության մեջ, որով այդ տարիներին շնչում էր ռուսական լեգալ մամուլը, դառնալով այսպես կոչված «լեգալ մարքսիզմի» և նարոդնիկության հակամարտության թատերաբեմ։

Վիճաբանության առանցքային հարցը հանգում էր կապիտալիզմի զարգացման հնարավորությանը Ռուսաստանում:

XIX դ. 90-ական թվականներին ազատագրական շարժումը Ռուսաստանում մտավ պրոլետարական շրջափուլը: Քաղաքական պայքարի ասպարեզ էր դուրս գալիս բանվոր դասակարգը: Ռուսաստանում արագորեն տարածվում էր պրոլետարիատի հեղափոխական ուսմունքը՝ մարքսիզմը: Գիտական սոցիալիզմի՝ մասսաներին տիրապետելու հզոր ուժը ստիպում է այլ դասակարգերի գաղափարախոսներին ուշադրության առնել նոր ուսմունքը: Հետաքրքրությունը մարքսիզմի նկատմամբ դառնում է համընդհանուր, որոշ ժամանակ մարքսիզմը մոդա է դառնում: «Լեգալ մարքսիստները», ինչպես հայտնի է, բուրժուական գաղափարախոսներ էին, որոնք երկրի կապիտալիստական զարգացման շահերից ելնելով, իրենց լեգալ օրգաններում պայքար էին մղում նարոդնիկների դեմ, որպես մանր արտադրության պաշտպանների, և այդ պայքարի մեջ դիմում էին մարքսիզմի գաղափարական զինանոցի «օգնությանը»: Սակայն նրանք դեռ էին նետում այդ զինանոցի ամենահատու զենքերը՝ ուսմունքը դասակարգային պայքարի, պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին, այսինքն ամլացնում էին մարքսիզմը.

Մարքսիզմը նրանց հետաքրքրում էր միայն այն չափով, ինչ չափով այն հիմնավորում էր կապիտալիզմի զարգացման անհրաժեշտությունը Ռուսաստանում:

«Լեգալ-մարքսիստները» հեռու էին մարքսիզմի ուսմունքը ճիշտ ըմբռնելուց, նրանք արծարծում էին նրա առանձին դրույթները միայն՝ ռևիզիոնիստական և օպորտունիստական խեղաթյուրումների ենթարկելով դրանք: Այս կապակցությամբ Լենինը գրել է. «Մարքսիզմը ենթարկվում է ամենաայլանդակ սահմանափակման ու աղավաղման, երբ մեր լիբերալներն ու ռադիկալները ձեռնարկում են նրա շարադրանքին լեգալ մամուլի էջերում: Այդ ի՞նչ շարադրանք է: Կարո՞ղ ենք պատկերացնել, թե ինչքա՞ն պետք է այլանդակել այդ հեղափոխական դոկտրինան, որպեսզի տեղավորվի ռուսական գրաքննության պրոկրուստյան մահճում»[35]:

Ռուս հեղափոխական մարքսիստները «լեգալ մարքսիստների» հետ ժամանակավոր դաշինքի մեջ մտան, օգտագործելով նրանց լեգալ մամուլը նարոդնիկության դեմ մղած իրենց պայքարի համար: Դա ռուսա-

35 Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 1, էջ 410:

կան սոցիալ-դեմոկրատիայի առաջին քաղաքական դաշինքն էր, որի շնորհիվ «զարմանալի կերպով արագ հաղթանակ տարվեց նարոդնիկության նկատմամբ, և չափազանց լայն տարածում ստացան մարքսիզմի գաղափարները (թեպետև դոհկացրած ձևով)»[36]:

«Լեգալ մարքսիստական» պարբերականները, ինչ խոսք, նպաստեցին մարքսիզմի տարածմանը, սակայն գլխավոր դերը մարքսիզմի պրոպագանդման գործում պատկանում է անլեգալ սոցիալիստական գրականությանն ու մամուլին, որտեղ առանց եզովպոսյան լեզվի կարելի էր խոսել հեղափոխական մարքսիզմի և բանվոր դասակարգի պայքարի խնդիրների մասին:

XIX դ. վերջին տասնամյակում Անդրկովկասում նույնպես սկսում է հաստատանալ բանվորական շարժումը, հող ստեղծելով մարքսիզմի տարածման համար: Նոր ուսմունքը ճանապարհ է հարթում իր համար ոչ միայն գաղտնի գրականության, այլև լեգալ մամուլի միջոցով: Հանձին «Մուրճի» «լեգալ մարքսիզմը» իր թևև ոչ միակ, բայց աչքի ընկնող ամբիոնն է գտնում հայ իրականության մեջ: Կապիտալիզմի զարգացմամբ շահագրգռված և լիբերալ-ռեֆորմիստական հայացքներ ունեցող խմբագրի համար սա տուրք չէր քաղաքական մոդայամոլությանը, այլ «լեգալ մարքսիզմի» գաղափարախոսության համակրության դրսևորում էր: Սա հիմք է հանդիսացել, որպեսզի Ավետիք Արասխանյանին համեմատեն Ստրուվեի հետ[37]: Հնուց եկող ճշմարտություն է, թե ամեն մի համեմատություն կաղում է: Ստրուվեն ռուսական «լեգալ մարքսիստների» պարագլուխն էր, որն իրեն հայտարարում էր «նոր» ուսմունքի կողմնակից և իր հոդվածներում ու աշխատություններում մարքսիզմի դրոշի տակ փորձում էր անցկացնել բուրժուական գաղափարախոսություն, ինչի համար նա ոչնչացնող քննադատության ենթարկվեց Լենինի կողմից[38]: Լենինը ցույց է տալիս, թե ինչպես պետք է, ոչ թե «հիմնականում» (ինչպես Ստրուվեն), այլ ամբողջովին հենվելով մարքսիզմի վրա, քննադատել նարոդնիկների ժամանակավրեպ գաղափարախոսությունը: Ինչ վերաբերում է Արասխանյանին, ապա նա ոչ միայն չի քննադատում նարոդնիկներին, այլև անսքող համակրանք է դրսևորում նրանց նկատմամբ,

---

36 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 6, էջ 20:

37 Տե՛ս Խ. Բաբսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, էջ 233:

38 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ-ն Ստրուվեի դրքում, էջ 419—649:

ամսագրի էջերում «լեգալ մարքսիզմի» հետ միասին մեծ տեղ տալով նարոդնիկական գաղափարախոսությամբ սնված հայ գյուղագրական-ժողովրդասիրական գրականությանը:

Արասխանյանը Ստրուվեի նման հանդես չէր գալիս մարքսիզմի անունից, այլ տպագրում էր ամսագրում այլ հեղինակների՝ «լեգալ մարքսիզմի» ոգով գրած հոդվածները: Չմոռանանք, որ Ստրուվեն իր քաղաքական մետամորֆոզն ավարտեց իբրև լիբերալ-միապետական բուրժուազիայի առաջատար կուսակցության՝ կադետների աջ թևի պարագլուխ, մինչդեռ Արասխանյանը ռուսական առաջին հեղափոխության տարիներին քննադատում էր «բուրժուա և կալվածատեր ինտելիգենցիայից» կազմված այդ կուսակցությանը՝ ռեակցիայի հետ գործարքի մեջ մտնելու համար:

«Տնտեսագիտական նոր ուսմունքի» նկատմամբ Արասխանյանի հետաքրքրությունը չսկսվեց ու չվերջացավ «լեգալ մարքսիզմի» մոդայական հրապուրանքով դեպի մարքսիզմը: Երբ «լեգալ մարքսիզմի» պղպջակներն արդեն պայթել էին, երևան հանելով բուրժուական կեղտաջուրը, Արասխանյանի հետաքրքրությունը մարքսիզմի նկատմամբ ոչ միայն չէր նվազել, այլև մեծացել էր:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին նա ձեռնարկեց Մարքսի «Կապիտալի» թարգմանությանը: Մարքսի ուսմունքի մեջ այժմ նա հաճախ էր որոնում հասարակական հանգույցների լուծման բանալին:

«Մուրճի» էջերում «լեգալ մարքսիզմի» ոգով գրված հոդվածները ռուսական նույնօրինակ հոդվածների նման, չափված ու ձևված էին ցարական գրաքննության սրոկրուստյան մահճին խիստ համապատասխան: Կոմպիլյատիվ բնույթը, տվյալ պարագայում, այդ հոդվածների ամենաարժեքավոր կողմն է: Ընդարձակ քաղվածքները մարքսիզմի դասական աշխատություններից («Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», «Անտի-Դյուրինգ», «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում», «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը», «Կապիտալ» և այլն) հնարավորություն էին ընձեռում ընթերցողին ծանոթանալու մարքսիզմի մի շարք կարևոր դրույթներին: Ամսագիրն, այսպիսով, օբյեկտիվորեն նպաստում էր մարքսիզմի գաղափարների տարածմանը. չմոռանանք Լենինի նկատողությունը՝ «թեպետև գռեհկացրած ձևով»:

1895 թ. Էնգելսի մահվան կապակցությամբ ամսագիրը տպագրում է մահախոսական, որը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ.

որպես մի նմուշ այն «լեզվի», որով խոսում էր «Մուրճը» գիտական սոցիալիզմի հիմնադիրների մասին։

«Էնգելս (Ֆրիդրիխ), հայտնի սոցիալիստ, վախճանվեց։ Ծնվից 1819 թվականին Գերմանիայի Բարմեն քաղաքում։ 1847-ին Լոնդոնում, ապա Բրյուսելում քարտուղար էր կոմունիստների միության կենտրոնական մասնաժողովի. 1848-ին Կարլ Մարքսի հետ միասին կազմեց բոլոր երկրների պրոլետարներին ուղղված «Կոմ. մանիֆեստը»։ Անգլիայից նա նեցուկ եղավ Մարքսին՝ բանվորական միջազգային շարժումը կազմակերպելուն (հիմնադրությունը «Ինտերնացիոնալ» կոչված միջազգային բանվորական ընկերության 1864-ին) և սոցիալ-դեմոկրատիկական պրոպագանդայի գործում։ Նորա գլխավոր աշխատությունն էր «Աշխատավոր դասակարգերի դրությունը Անգլիայում» ... 1845-ին, որ երկրորդ տպագրությամբ նա լույս ընծայեց 1892 թվականին։ 1876-ին նա հրատարակեց «Ընտանիքի, պետության և անհատական սեփականության ծագումը» և ապա «Գիտական սոցիալիզմը»։

Էնգելսը, առհասարակ, նկատված էր որպես գլխավոր գործակից Կարլ Մարքսի, որի հետ նա կապված էր նաև ընկերական մտերմության կապերով։ Այդ պատճառով Մարքսը յուր ձեռագիր աշխատությունները կտակել էր Էնգելսին, որը, նշանավոր տնտեսագետի մահից հետո՝ 1889-ին՝ զբաղված էր նորա «Կապիտալ» խորագրով հայտնի հեղինակության լույս չտեսած մասերը հրատարակելու գործով, և հրատարակեց «Կապիտալի» երկրորդ և երրորդ մասերը։ Վերջինս 1894 թվականին»[39]։

«Քաղաքատնտեսության զարգացման ընթացքը» վերնագրով Գ. Ղարաջյանի հոդվածը փաստորեն Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության վերաշարադրանքն է. «Մուրճին» պատիվ է բերում մարքսիզմի աչքի ընկնող դասական աշխատություններից մեկի ընդարձակ քաղվածքներով լուսաբանումը՝ սեփականության, ընտանիքի և պետության վերաբերյալ։ Առհասարակ Գ. Ղարաջյանի աշխատակցությունը «Մուրճին» մի լուսավոր շերտ է մտցնում ամսագրի գործունեության մեջ։ Նարոդնիկական-հնչակյան հովերով տարված երիտասարդ ուսուցիչը 80-ական թվականների վերջում երևան է գալիս մարքսիզմը և «դառնում հայ իրականության մեջ մարքսիզմի գաղափարների անդրանիկ սերմնացաններից մեկը»[40]։

---

39 «Մուրճ», 1895, № 8, էջ 1181։ Ամսագրում սխալ է նշված Էնգելսի ծննդյան թվականը, պետք է լինի՝ 1820։

40 Խ. Բաբսեղյան, նշվ. աշխ., էջ 195։

Այլ է տպավորությունը Մ. Հովհաննիսյանի հոդվածներից։ Կարդալով նրա հեղինակած «Կապիտալիզմի զարգացումը», «Էվոլյուցիայի գաղափարը», «Սոցիալական էվոլյուցիան» հոդվածները, ակամայից հիշում ես Ստեփան Շահումյանի դիպուկ գնահատականը Մ. Վարանդյանի (նույն Հովհաննիսյանի) մասին, «Տիեզերական թութակը» վերնագրով հոդվածում, որը տպվեց «Նոր խոսքի» 1911 թ. № 1—2-ում։ Եվրոպայից ուսանող Մ. Հովհաննիսյանի՝ «Մուրճին» գրած հոդվածներում արդեն առկա են սոցիալիզմով պճնվելու, սպեկուլյացիա անելու դաշնակցական հիվանդության նախանշանները, որը տարիների ընթացքում զարգանալով այնքան վտանգավոր դարձավ, որ ստիպեց Շահումյանին դրիչ վերցնել՝ պարզելու համար երիտասարդության այն մասի մոլորությունը, որը սոցիալիզմը, դժբախտաբար, սովորում էր Մ. Վարանդյանի դրքույկներից։

Սոցիալիստական ֆրազաբանությունը և ընդարձակ մեջբերումները գիտական սոցիալիզմի դասական աշխատություններից առանց չակերտների, դեռևս ապացույց չէին սոցիալիզմի ուսմունքի յուրացման։ Շահումյանը ցույց է տալիս, որ երկար տարիներ Եվրոպայում մնալով, Վարանդյանը չկարողացավ «մոտենալ սոցիալիզմին և կանոնավոր կերպով ծանոթանալ նրա հետ»[41]։ Ուրեմն դժվար չէ պատկերացնել Մ. Հովհաննիսյանի «մարքսիզմի» պաշարը ուսանողական տարիներին, երբ նա թղթակցում էր «Մուրճին»։ Նրա հոդվածները «Մուրճում» թեև կոմպիլյատիվ են, ավելի շատ քաղվածքներից, քան սեփական մտքերից կազմված, սակայն դրանցում արդեն առկա են աղավաղումներ ու գռեհկաբանություններ։ Այնպես որ այդ հոդվածների ամբողջ դրական արժեքը հանգում է մարքսիստական գրականությունից արված մեջբերումներին։

Այսօր մեզ համար այնքան հետաքրքիր չեն դաշնակցական պարագլխի գրական առաջին նախափորձերը, որքան Արասխանյանի քննադատական դիտողությունները այդ հոդվածների որոշ դրույթներին՝ տողատակերում։ Ընդգծենք սակայն, որ դա քննադատություն է ոչ թե ձախից, այլ աջից։

Առարկելով մարդկային հասարակության մեջ գոյության կռվի վերաբերյալ հեղինակի տեսակետին, Արասխանյանը գրում է. «Մենք չենք կարող վերացնել գոյության համար կռվի օրենքը, ինչպես կարծել է թվում մեզ հոդվածիս հեղինակը. բայց մենք կարող ենք այդ կռիվը հա-

41 Ստ. Շահումյան, *երկ*, հ. 2, էջ 223։

աարակական կյանքում միշտ ավելի ու ավելի բարձր պատվանդանների վրա դնել և այդ պատվանդանների բարձրությունները պատմական այլևվայլ շրջաններում ցույց կտան, թե որ շրջանը ավելի քաղաքակիրթն է եղել։ Գոյության համար կռիվը վայրենիների մեջ արտահայտվում էր այլ կերպ և այլ պահանջների համար, քան ներկայիս լուսավորյալ աշխարհում և ապագայում էլ այդ կողմից առաջադիմությունը պիտի կայանա ոչ թե գոյության համար կռվի իսպառ վերացման մեջ (դա անհնարին է), այլ այդ կռվի ավելի մեծ ազնվացման մեջ»[42]։

Փոխանակ առարկելու, որ գոյության կռվի օրենքները չի կարելի տեղափոխել մարդկային հասարակության, Արասխանյանը սրբագործում ու հավերժացնում է այն, քաղաքակրթության չափանիշը տեսնելով այդ կռվի «ազնվացման» մեջ։ Սակայն խմբագիրը դրանով չի բավարարվում. նույն հարցի վերաբերյալ մեկ այլ տեղ նա նորից ծանոթագրում է. «Ըստ մեզ հակասություններ է (ուրեմն և ուտոպիական և հակագիտական) այն տեսությունը, որի համեմատ գոյության կռվի օրենքը, յուր ընդարձակ իմբռնումով, իբր թե հնարավոր է իսպառ վերացնել մարդկային կյանքում»[43]։ Այսպիսով, Արասխանյանը հավերժացնում է դասակարգային հասարակությունը և չի հավատում անդասակարգ կոմունիստական հասարակարգի գոյությանը, համարելով այն ուտոպիա։ Իսկ իրականում ինքն էր ընկնում ուտոպիայի գիրկը, երբ երազում էր ներդաշնակություն ու համերաշխություն՝ «բարենորոգված» կապիտալիստական հասարակարգի մեջ։

Հիշատակենք մի ծանոթագրություն ևս, որը խիստ կարևոր է պարզելու համար առհասարակ «Մուրճի» խմբագրի դիրքորոշումը դեպի սոցիալիզմը։ Նշելով իր ուրախությունը մի հոդվածի առթիվ, որը գալիս է ավելանալու սոցիալական-բանվորական խնդրի մասին «Մուրճում» տպագրված արդեն պատկառելի թվով հոդվածներին. խմբագիրը, սակայն, հարկ է համարում շեշտել. «...և որքան ուրախ ենք, որ մի անգամ ևս խոսք է խոսվում հօգուտ մի դասակարգի, որի շահերը շատ թանկ են «Մուրճին», բայց և այնպես «Մուրճի» տեսակետը լիովին այն չէ, ինչ հոդվածիս հեղինակինն է։ Մենք վերաբերվում ենք դեպի սոցիալիզմը կրիտիկաբար և ընդունում ենք աստիճանական զարգացումը իբր առողջ

---

42 «Մուրճ», 1895, № 6, էջ 805։

43 «Մուրճ», 1899, № 4—5, էջ 407։

զարգացման լավագույն ճանապարհը, ընդունելով նաև սոցիալիզմի մեջ զարգացման առողջ սաղմեր»[44]:

Ինչպես տեսնում ենք, Արասխանյանը երկմտության տեղիք չի տալիս: Նա հասարակության աստիճանական, էվոլյուցիոն զարգացման կողմնակից է, հեղափոխության հակառակորդ: Նա գտնում է, որ սոցիալիզմի նկատմամբ պետք է «կրիտիկական» վերաբերմունք դրսևորել, ընդունելով նրա միայն «առողջ սաղմերը», չնշելով, սակայն, թե ինչ է հասկանում դրա տակ: Արասխանյանը կապիտալիզմի զարգացման պրուսական ուղու կողմնակից է և առիթը բաց չի թողնում դրվատելու «այն բոլոր նոր պայմանները, որ թե՛ ստեղծվել են և թե՛ ստեղծվում են բանվոր դասակարգի համար՝ թե՛ ինքնօգնության և թե՛ մանավանդ օրենսդրական միջոցներով»[45]:

Ժողովրդի կյանքի բարելավման նրա բոլոր ակնկալությունները կապվում են «վերևից» կատարվող բարեփոխումների հետ, իսկ «ներքևից» ծավալվող շարժումը ընդունում է միայն «օրենքով թույլատրվածծ սահմաններում:

Գ. Խաժակյանի «Նավթաշրջանի բանվորները» հոդվածի ծանոթագրության մեջ առարկելով հեղինակի առանց այն էլ անորոշ և մշուշապատ մտքերին՝ սոցիալիզմի վերջնական նպատակների վերաբերյալ, Արասխանյանը շտապում է հավաստիացնել, որ ինքը համամիտ չէ հեղինակին. «Մենք պարտք ենք համարում այդ հայացքին դիմադրել մեր հայացքը: Ամեն ինչ, որ կատարվում է բանվորների օգտին, ոչ թե հետաձգում է խնդրի լուծումը, այլ օգնում է խնդրի լուծմանը: ...Այդ բոլոր գործունեությունների ղեկավար ոգին՝ առաջադիմության ոգին է, մի ոգի, որ կենդանի է այժմյան լուսավորված երկրներում: Նա է ներշնչողը այն բոլորի, որոնք փոփոխությունների են ենթարկում այն ամեն կարգ ու կանոնները, որոնք մի ազգի կամ պետության մեջ գործող ֆակտորների հավասարակշռությանը խանգարում են»[46]: Ավելի քան թափանցիկ են Արասխանյանի մտքերը, դրանք արտացոլում են նրա աշխարհայացքի լիբերալ-ռեֆորմիստական էությունը, որը առաջադիմության ձգտումը համարում է մարդկային հասարակության շարժիչ ուժը և երազում այնպիսի հաշտ ու խաղաղ հասարակարգ, որտեղ ամեն ինչ հավասարակշռու-

---

44 «Մուրճ», 1895, № 11, էջ 1451:

45 Նույն տեղում, էջ 1452:

46 «Մուրճ», 1893, № 12, էջ 1899:

ված է։ Առաջադիմության վերացական դաղափարի նման պաթետիկ դրվատումները շատ բնորոշ են կապիտալիզմի վերելման շրջանի բուրժուական գաղափարախոսությանը. դա պայմանավորված էր բարձրացող բուրժուազիայի լավատեսությամբ, որը քաղաքակրթության յուրաքանչյուր նվաճման մեջ տեսնում էր առաջադիմության անհաղթահարելի ուժը։

Հասարակության զարգացման ըղձալի եզերքին հասնելու ճանապարհները փնտրելիս, Արասխանյանը հայացքը հառում է դեպի այն երկիրը, որտեղ հաղորդակից եղավ գիտությունների մեջ իր համար ամենասիրելիին՝ քաղաքատնտեսությանը։ Նախկին ուսանողը առիթը բաց չի թողնում դրվատելու գերմանական համալսարանների քաղաքատնտեսության ամբիոնների գիտնականների գործունեությունը, որոնք, նրա ասելով, իրենց սրտին շատ մոտ են ընդունում բանվոր դասակարգի շահերը և որոնց խորհրդով Գերմանիայում Բիսմարկի ղեկավարությամբ մի շարք բարենորոգումներ մտցվեցին «բանվոր դասակարգի օգտին»։

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Արասխանյանի «Իշխան Օտտո Բիսմարկ» հոդվածը, գրված քաղաքական նշանավոր գործչի մահվան առիթով։ Գրել քաղաքական մեծ գործիչների մասին, նշանակում է բացահայտել սեփական քաղաքական դավանանքը։ «Սոցիալական խընդրում Բիսմարկը պարտություն կրեց,— գրում է Արասխանյանը,— Եթե միայն նա կարծում էր, որ բացառիկ օրենքներով սոցիալիստների դեմ, կարող էր խափան ջնջել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը։ Բայց Բիսմարկը, այդ հալածանքի հետ միասին ստեղծեց օրենքներ, որոնք համեմատ դեպք բանվորների նյութական ու բարոյական վիճակի բարվոքմանը ծառայեցին...։ Հանճին Բիսմարկի սոցիալ-դեմոկրատիան ունեցավ յուր ամենաահարկու թշնամին. բայց այդ թշնամությունն ուղղված էր գլխավորապես այդ կուսակցության հակապետական տենդենցների և արտահայտությունների դեմ։ Սոցիալ-դեմոկրատիան, երկաթի կանցլերի ստեղծած բացառիկ օրենքներով չջնջվեց, այլ այժմ ավելի նշանավոր ուժ է, քան առաջ էր։ Բայց մի բան, որ չպետք է ուրանալ, այդ այն է, որ ամբողջ Եվրոպայի ցամաքում սոցիալ-դեմոկրատիան այնքան օրինականության չի հարած, որքան Գերմանիայում»[47]։

Նկատելի է Արասխանյանի՝ օբյեկտիվ երևալու միտումը։ Բայց նրա համակրությունները մատնում են իրենց։ Նա տեսնում է Բիսմարկի «բացառիկ օրենքների» նպատակաուղղվածությունը՝ ջախջախել գերմանական

---

47 «Մուրճ», 1898, № 7—8, էջ 1135։

սոցիալ-դեմոկրատիային, բայց և շտապում է «բացատրել» նման քաղաքականության դրդապատճառը՝ սոցիալ-դեմոկրատիայի «հակապետական» գործունեությամբ։ Նա առանձնացնում է բիսմարկյան ռեֆորմներից իր կարծիքով դրականն ու օրինակելին՝ բանվորական օրենսդրությունը, չընդունելով, որ այն ևս ի վերջո հետամտում էր բանվորական շարժումը չլատելու նպատակ, որ Բիսմարկի ներքին քաղաքականությունը շատ ամբողջական էր և իր վերջնական նպատակի մեջ՝ միագիծ։ Բանվորների բիսմարկյան ապահովագրությունը պետական իշխանության սոցիալական դեմագոգիայի դրսևորումներից էր. սոցիալիստների դեմ ուղղված դաժան օրենքներով չկարողանալով խեղդել բանվորական շարժումը, Բիսմարկը փորձում էր բանվորներին տրվող չնչին ողորմություններով կասեցնել այն։ Խոսելով ռուսական առաջին հեղափոխության ժամանակ ցարի զիջումների իրական շարժառիթների մասին, Վ. Ի. Լենինը հիշեցնում է Բիսմարկի խոսքերը՝ «Եթե չլիներ սոցիալ-դեմոկրատները, չէր լինի սոցիալական ռեֆորմը»։ Եթե չլիներ հեղափոխական պրոլետարիատը, չէր լինի Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, եղրակացնում է Լենինը[48]։

«Մուրճում» արծարծված սոցիալիզմի տարատեսակությունները լրացնելու է գալիս հայ դեմոկրատ գրող Ղազարոս Աղայանի «Ժամանակակից ատենախոսություն» հոդվածը։ Հատկանշական է, որ այս հոդվածը Աղայանը գրել է Նոր Նախիջևանում, աքսորում եղած ժամանակ, երբ նա ձեռնամուխ էր եղել ամերիկացի գրող է. Բելլամիի «100 տարուց հետո» ուտոպիստական վեպի թարգմանությանը։ Դոնվելով ուտոպիական սոցիալիզմի ազդեցության տակ և դրան ավելացնելով աքսորականի իր դառը մտածումները աշխարհի անարդարության, չարի ու բարու մասին, Աղայանը ստեղծում է ուտոպիզմի մի հայկական տարբերակ՝ թող որ ուշացած համաշխարհային պատմության ժամացույցի սլաքներից, բայց հայկական իրականության համար միանգամայն ժամանակին։ Հայկական կյանքը նոր էր մտել հասարակական զարգացման այն շրջափուլը, որը Եվրոպայում արգասավորվեց ուտոպիական սոցիալիստական գրականության առաստությամբ, որպես բողոքի նշան տիրող կապիտալիստական կարգերի անարդարության դեմ։

Բոլոր ուտոպիստների նման Աղայանը ուրվագծում է մի երջանիկ ապագա և այդ բարձունքից քննադատում ժամանակակից կյանքը։ Նա

---

48 Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 13, էջ 322—323։

այդ անում է մի արդարամիտ քահանայի բերանով, որը «ճշմարիտ քրիստոնյա» է, ապագա ներդաշնակ հասարակության մուննետիկը: Նման ընտրությունը պատահական չէ: Դեռևս «Մանիֆեստում» Մարքսն ու Էնգելսը նշել են, որ «չկա ոչինչ ավելի դյուրին, քան քրիստոնեական ասկետիզմին սոցիալիստական երանգավորում տալը»[49]: Քրիստոնեական ասմունքի օգնությանը հաճախ են դիմել ուտոպիստ սոցիալիստները: Սակայն ի պատիվ Աղայանի պիտի ասել, որ նա ոչ միայն տուրք չի տալիս չարին չհակառակվելու քրիստոնեական քարոզին, այլև պնդում է ճիշտ հակառակը՝ չարը ոչնչացնելու անհրաժեշտությունը: Ավելին. նոր ժամանակներում նա ավարտված է համարում կրոնի դերը. «Ինչպես մարդիկ առաջ իրանց փրկությունը կրոնի մեջ էին որոնում, այսօր դիտության մեջ են որոնում»[50]: Նա անվերապահորեն հավատում է դիտության, բանականության հաղթանակին: Աղայանը սոցիալական անարդարության պատճառ է համարում մասնավոր սեփականությունը և դրան հակադրում համայնական սեփականությունը՝ որպես մարդկային երջանկության աղբյուրի. «Մի հասարակության մեջ, որքան շատ ու բազմատեսակ լինին ընդհանուրին պատկանող սեփականություններն ու հաստատությունները, նույն չափով բարձր կլինի նրա բարօրության աստիճանը և նույն չափով սակավ չարիք կգործվի նրա մեջ: Կարճ ասել՝ համայնքի բարեկեցության և երջանկության աղբյուրը նրա ընդհանուր սեփականությունից կարող է բխել: ... Մասնավոր սեփականություն որ բնավ չլինի, այլ միայն ընդհանուր, այն ժամանակ չարությունն իսպառ կվերանա աշխարհիցս և միայն բարին կիշխավորի»[51]:

Համեմատության համար Աղայանը ներկայացնում է երկու գյուղ, երկու հակապատկեր: Մեկը ժամանակակից կապիտալիստական գյուղն է, մյուսը՝ ապագա: Մեկում մասնավոր սեփականությունն է տիրում, մյուսում՝ համայնական: Առաջինն այսպիսի նկարագիր ունի. «...քահանան տգետ, դատավորներն ու տանուտերը՝ հարբեցող ու կաշառակեր, ...վաշխառուությունը՝ ծայրահեղ անխղճության հասած, որբն ու այրին, խեղճն ու տնանկը, աղքատն ու թուլը հողի հետ հավասարեցրած. ամե-

---

49 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս. *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը*, Երևան, 1968, էջ 113:

50 «*Մուրճ*», 1898, № 10—11, էջ 1349:

51 Նույն տեղում, էջ 1358—1359:

նայն տեղ ծայրահեղ սարկույթյուն և բռնույթյուն։ Գողությունը սովորական դարձած, ավազակությունը հերոսություն համարված»[52]։

Բոլորովին այլ է երկրորդ գյուղի նկարագիրը. համայնական սեփականության և աշխատանքի շնորհիվ գյուղը դարձել է մի ծաղկավետ բուրաստան, մաքուր, ուղիղ, լայն, սալարկված ու կանաչազարդ փողոցներով, հիանալի տներով, գյուղական ուսումնարանով, դեղատնով, շուկայարանով և դատարանով, որը անգործ է մնացել, որովհետև արդարությունը ոչ մի տեղ չի խախտվում։ Մարդիկ ապրում են համերաշխ, բոլորն աշխատում են, բոլորը կրթված են, կինը՝ տղամարդուն հավասար։

Բայց այդ ե՞րբ կլինի և ինչպե՞ս,— հարցնում է ինքը՝ Աղայանը, և քահանայի բերանով եղրակացնում, որ «իր գյուղը դառնում է մի ուտոպիա»[53]։ Այդ հարցի պատասխանը Աղայանը թողնում է «զորեղ հանճարներին»։

Աղայանի քարոզած սոցիալիզմը ուտոպիական է. նա ոչնչացնող քննադատության ենթարկելով հին աշխարհը, պայծառ գույներով ներկայացնելով անդասակարգ ու ներդաշնակ ապագա հասարակությունը, մատնացույց չի անում այն կամուրջը, որով մարդկությունը պետք է քայլեր դեպի այդ նոր աշխարհը։ Գուցե հայ հեքիաթագրի ամենագեղեցիկ հեքիաթն է սա... Աղնիվ հավատով նա աղաղակում է, հավաստիացնում նրա գալստյան անխուսափելիությունը, քանի որ «ժամանակի բերմունքի առաջը ոչ մի ուժ չի կարող առնել, նա կարողանում է հեղաշրջել ամեն ինչ»[54]։

Աղայանի «սոցիալիզմի» թերությունները ներելի են, որովհետև դրանք արդյունք են ոչ այնքան սուբյեկտիվ, որքան օբյեկտիվ պատճառների, արգասիք՝ հայկական կյանքի հետամնացության։ Սակայն նրա առենախոսությունը հետաքրքիր երևույթ է հայ իրականության մեջ՝ որպես ուտոպիական սոցիալիզմի հայկական արտահայտություն։

«Մուրճի» քաղաքական գավանանքը լրիվ պարզելու համար չի կարելի թեկուզ համառոտակի չանդրադառնալ ամսագրի մշտական բաժիններից մեկին՝ «Քաղաքական տեսություններին», որոնց հեղինակը բացառապես խմբագիրն էր՝ Z տորագրությամբ։ Եթե «Արտասահմանյան թղթակցությունները» ամսվա իրադարձություններն էին լուսա-

---

52 Նույն տեղում, էջ 1358։

53 Նույն տեղում, էջ 1366։

54 Նույն տեղում, էջ 1365։

բանում, ապա քաղաքական տեսությունները նպատակ ունեին ընթերցողներին տեսանելի դարձնել այն ներքին զսպանակները, որոնք կարգավորում էին աշխարհի քաղաքական կյանքը: «Մուրճի» ընթերցողները,— վստահեցնում էր Արասխանյանը,— կարող են ապահով լինել, որ մեր տեսադաշտից չի վրիպել բարձր քաղաքականության վերաբերյալ որևէ կարևոր դեպք»[55]: Արսեն Տերտերյանը իրավացի էր նշելով, թե Արասխանյանը որպես մի իսկական աշխարհաքաղաքացի, բառիս բուն նշանակությամբ ապրում էր համաշխարհային կյանքով[56]: Իր տեսություններում Արասխանյանը զգալի տեղ է հատկացնում մեծ տերությունների քաղաքականության մերկացմանը, փորձում խորամուխ լինել նրանց հակասությունների պատճառների մեջ և իբրև բանալի ընտրում աշխարհի քարտեզը վերաձևելու նրանց գաղութատիրական նկրտումը: Աֆրիկան դարձել է այն ասպարեզը, ասում է նա, «ուր եվրոպական պետությունների կոլոնիական քաղաքականությունը այն դերն է կատարում, ինչ կատարեց նա դարեր առաջ Ամերիկայում: Աֆրիկան այժմ բաժանվում է եվրոպական մի քանի մեծ ու փոքր պետությունների միջև»[57]:

Հասարակական կարգերի հեղափոխման մեջ մի հեղինակություն է անվերապահորեն ընդունում Արասխանյանը. «Ֆրանսիական մեծ հեղափոխությունը 1789 թվականի, որի ուժգին զարկերից սթափվեց Եվրոպան և որի ոգին մտավ ու կերպարանափոխեց և՛ կարգ, և՛ սովորություններ, և՛ դաղափարներ: ...Բայց այն, ինչ ֆրանսիական մեծ հեղափոխությունը կատարեց մի դիշերում, նույնը կատարվեց բոլոր եվրոպական երկրներում XIX դարի ընթացքում... կամաց-կամաց, առանց մեծ ցնցումների»[58]:

Դանդաղ, աստիճանական զարգացում, առանց արյան ու ցնցումների, ահա Արասխանյանի հավատո հանդանակը: Իբրև էվոլյուցիոնիստ և ռեֆորմիստ, հասկանալի է, որ նա «ծուռ աչքով» պետք է նայեր պրոլետարիատի քաղաքական պայքարին: Նա թեև Փարիզի կոմունայի ժամանակակիցը եղավ, բայց գերադասում էր լռել նրա մասին: Կոմունայի անվանը միայն մեկ անգամ ենք հանդիպում «Մուրճում», բայց այդ էլ բավական է Արասխանյանի կարծիքը պարզելու համար: Կոմունան նրա աչքում օրինաչափության խախտում է, «աննորմալ բան»:

---

55 «Մուրճ», 1892, № 12, էջ 1740:

56 Տե՛ս Արսեն Տերտերյան, Ավետիք Արասխանյան, «Նոր հոսանք», 1914, № 1,

57 «Մուրճ», 1890, № 7, էջ 1043:

58 «Մուրճ», 1889, № 9, էջ 1286:

«Խնդիրը այստեղ այն չէ, թե ինչ մտքեր կային կոմմունայի հիմքում,— գրում է Արասխանյանը,— խնդիրը ազգի համար բոլորովին աճակնկալ ապստամբության մեջ է...»: Չդիպչելով կոմունայի սկզբունքներին, Արասխանյանը, այնուամենայնիվ, անցանկալի է գտնում պրոլետարիատի հեղափոխությունը, որը Վերսալի կառավարությունը ճնշեց հազարների արյունը հեղելով:

Քաղաքական տեսությունների մեջ ևս նկատելի է Արասխանյանի օբյեկտիվ մնալու ձգտումը: Խոսելով հերթական ընտրություններում գերմանական պրոգրեսիստների (լիբերալների) պարտության և սոցիալ-դեմոկրատների հաղթանակի մասին, Արասխանյանը նշում է, որ «լոկ ընդդիմադրության պատճառով չէր, որ սոցիալ-դեմոկրատները հաղթեցին, այլ նորանով, որ նոցա ծրագրի մեջ կա ավելի դրական էլեմենտ, քան պրոգրեսիստների ծրագրի մեջ... Այդ կուսակցությունը, որ շատ նշանավոր դեր է կատարում Գերմանիայում, յուր սկիզբը առնում է նույնպես 60-ական թվականներից և առաջ բաժանված էր երկու ուղղություններ. դոցանից մեկը սերվում էր Լասալից, իսկ մյուսը գտնվում էր Լիբկնեխտի և Բեբելի ղեկավարության ներքո: Այդ երկու ուղղությունները, սակայն, միացան 1875 թ. սոցիալիստների կոնգրեսում, որ կայացավ Գոթա քաղաքում. և այդ ժամանակվանից կուսակցությունը միացած և համերաշխ գործում է նույն Լիբկնեխտի և Բեբելի գլխավոր ղեկավարությամբ»[59]: Այսպիսի տեսք ունի «օբյեկտիվ» ինֆորմացիան. Արասխանյանը խորամուխ չի լինում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի երկու թևերի անհաշտելի հակամարտության մեջ: Նա չէր կարող տեսնել Լասալի աղանդավորական սոցիալիզմի (որն այնպես խիստ դատապարտեց Մարքսը «Գոթայի ծրագրի քննադատությունը» աշխատության մեջ) և գիտական սոցիալիզմի տարբերությունը: Ընդհակառակը, լասալականությունը իր օպորտունիզմով ավելի հասկանալի ու ըմբռնելի էր Արասխանյանին, քանի որ այն բուրժուական սոցիալիզմ էր ներմուծում բանվորական շարժման մեջ, Արասխանյանի նախասիրած սոցիալիզմը:

Մարքսը և Էնգելսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մեջ խոսելով պահպանողական, կամ բուրժուական, սոցիալիզմի մասին, զանազանում են նրա երկու տարատեսակ. այդ սոցիալիզմի հերկրպագուների մի մասն ուզում է պահպանել բուրժուական հասարակությունը, սակայն առանց այն տարրերի, որոնք հեղափոխականացնում ու քայ-

---

59 «Մուրճ», 1893, № 6, էջ 1024—1025:

քայում են այն։ Նրանք կկամենային ունենալ բուրժուազիա՝ առանց պրոլետարիատի։

«Այս սոցիալիզմի մյուս, ավելի պակաս սիստեմատիկ, բայց ավելի գործնական ձևը,— նշում են նրանք,— ձգտում է այն բանին, որպեսզի բանվոր դասակարգին բացասական վերաբերմունք ներշնչեր դեպի ամեն տեսակի հեղափոխական շարժում, ապացուցելով, թե նրան կարող է օգտակար լինել ոչ թե այս կամ այն քաղաքական վերափոխումը, այլ միայն կյանքի նյութական պայմանների, տնտեսական հարաբերությունների փոփոխությունը։ Սակայն կյանքի նյութական պայմանների փոփոխություն ասելով այս սոցիալիզմը հասկանում է բնավ ոչ բուրժուական արտադրական հարաբերությունների ոչնչացում, որ միայն հեղափոխական ճանապարհով կարելի է իրագործել, այլ վարչական բարելավումներ, որոնք կենսագործվում են այդ արտադրական հարաբերությունների հողի վրա, հետևաբար ոչ մի փոփոխություն չեն մտցնում կապիտալի և վարձու աշխատանքի հարաբերությունների մեջ»[60]։

Դժվար չէ նկատել, որ բուրժուական-պահպանողական սոցիալիզմի առաջին ձևի տիպիկ ներկայացուցիչը հայ իրականության մեջ Գրիգոր Արծրունին է, իսկ երկրորդ ձևինը՝ Ավետիք Արասխանյանը։

Ինչպես տեսնում ենք, սոցիալիստական ուսմունքների «պակաս» չի զգացվում «Մուրճի» էջերում։ Խմբագիրը նախանձախնդիր էր ամեն մի նորության՝ լինի դա տնտեսության, գիտության ու տեխնիկայի, թե սոցիոլոգիայի ու փիլիսոփայության բնագավառում։ Նա նպատակադրված ձևով ընթերցողներին ծանոթացնում է «տնտեսագիտական նոր ուսմունքին» (այսինքն մարքսիզմին), որն անցնելով, սակայն, լիբերալ-բուրժուական բուրայով և տեղավորվելով ցարական գրաքննության պրոկրուստյան մահճում, զրկվում է իր հեղափոխական բովանդակությունից և ստանում «լեգալ մարքսիզմի» կերպարանք։ Մյուս դեպքում խմբագիրը թույլ է տալիս ուտոպիստ-սոցիալիստին իր ամսագրի էջերում երազելու ապագա ներդաշնակ հասարակության մասին, մեկ այլ դեպքում՝ սոցիալիստ-նարոդնիկին ամբիոն է տրամադրում քննադատելու կապիտալիստական հասարակարգի արատավոր կողմերը։ Սոցիալիստական ուսմունքների այս «հերթափոխի» մեջ, սակայն, մի սոցիալիզմի նկատմամբ նրա հավատը անսասան է, վարած գիծն՝ անշեղ. բուրժուական-պահպանողական սոցիալիզմն է այդ, որ կարմիր թելի

60 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը*, էջ 122—124։

նման ձգվում է «Մուրճի» տասներկու տարվա համարների միջով։ «Օբյեկտիվիզմը» չի օգնում Արասխանյանին բացահայտելու կապիտալիստական հասարակարգի հակասությունների սոցիալ-դասակարգային պատճառները և գալու արմատական եզրակացություններին։ Գիտակցում էր նա այդ, թե ոչ, նրա «օբյեկտիվիզմը» ծառայում էր բուրժուական դասակարգի շահերին։

* * *

Եթե «Մուրճի» արծարծած պրոբլեմները դասավորենք ըստ այն կարևորության, ընդգրկման չափերի և ուշադրության, որ հատկացրել է դրանց ամսագիրը, ապա № 1 պրոբլեմը կլինի հայ գյուղը։ Ինչո՞ւ ուրեմն նա այդ տեղում չէ նաև մեր ուսումնասիրության մեջ։ Բացատրենք։

Անդրկովկասի տնտեսական զարգացման հեռանկարների, խոշոր արդյունաբերական կապիտալի տիրապետության, բանվոր դասակարգի առաջացման ու նրա դասակարգային պայքարի, կապիտալիզմի զարգացման հետևանքով կյանքի կոչված բուրժուական և սոցիալիստական գաղափարախոսությունների հետ կապված հարցերն ավելի լավ հնարավորություն էին ընձեռում մեզ՝ պարզելու Ավետիք Արասխանյանի հայացքների համակարգը, ամսագրում անցկացրած նրա լիբերալ-ռեֆորմիստական հիմնական ուղղությունը, դուրս բերելու այն կարմիր թելը, որի վրա հագցվելու էր «Մուրճ» ամսագրի հարցասիրությունների խայտաբղետ հուլունքաշարը։ Բռնելով այդ կարմիր թելի ծայրը, մեզ համար այժմ հեշտ կլինի հաշվել ու գնահատել նրա վրայի պես-պես շարվածքը, ոչ թե հակասություններ հայտնաբերել ու զարմանալ, այլ հասկանալ ու բացատրել դրանք։

Ահա այդպիսի մի «հակասություն». իր ամսագիրը «լեգալ մարքսիզմի» ամբիոն դարձնող խմբագիրն ավելի լայն ու մեծ տեղ է հատկացնում նարոդնիկական գաղափարախոսությանը՝ հայ գյուղի հարցերին անդրադառնալիս։ Եվ դա այն դեպքում, երբ ռուսական լեգալ մամուլը այդ տարիներին շնչում էր Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը հետամտող «լեգալ մարքսիզմի» բուրժուական գաղափարախոսության և կապիտալիզմի զարգացմանը դիմադիր մանրբուրժուական նարոդնիկական գաղափարախոսության հակամարտությամբ։ Եվ հանկարծ «Մուրճի» էջերում դրանց խաղաղ հարևանությունը։

Սակայն «հակասությունը» խնդույն լուծվում է, երբ նկատի ենք առնում այն լիբերալ վերաբերումը, որին ենթարկվեց նարոդնիկությունը

90-ական թվականներին։ Հիշենք «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ Լենինի հստակ պատասխանը գրքի վերնագրում առաջադրված հարցին։ Քայլ առ քայլ մերկացնելով նարոդնիկության գաղափարական վերաբերումը, Լենինը գալիս է այն եզրակացության, որ լիբերալ նարոդնիկության ծրագիրը «արտահայտում է միմիայն ռադիկալ բուրժուական դեմոկրատիայի շահերը»[61], որ լիբերալ նարոդնիկներն իրենք էլ չգիտակցելով այդ, կանգնում են կապիտալիստական կարգերի հողի վրա և «կամենում են իրենց օձիքն ազատել այդ հասարակության կարկատումով ու նորոգումով, չհասկանալով, որ նրանց բոլոր պրոգրեսները՝ էժան վարկը, տեխնիկայի բարելավումները, բանկերը և այլն, ի վիճակի են միայն ուժեղացնելու և զարգացնելու բուրժուազիային»[62]։

Այդ նույն բուրժուական շահերն էին արտահայտում նաև մարքսիստական ֆրազաբանությամբ պճնված «լեգալ մարքսիստները»։ Ահա այս ընդհանուր հայտարարի վրա էլ հանգչում է «Մուրճ» ամսագրի էջերում «լեգալ մարքսիզմի» և նարոդնիկական գաղափարախոսության խաղաղ հարևանությունը։ Լիբերալ նարոդնիկության ծրագրի սոցիալ-ռեֆորմիզմը համերաշխ էր Արասխանյանի բուրժուադեմոկրատական ուղեգծումներին։

Վ. Ի. Լենինը դիպուկ կերպով նկատել է, որ նարոդնիկներն ի վիճակի չեղան ըմբռնելու, թե ինչպես կարելի է պայքարել կապիտալիզմի դեմ՝ «ո՛չ թե նրա զարգացումը «կասեցնելով», այլ դրա արագացումով, ո՛չ թե հետևից, այլ առջևից, ո՛չ թե ռեակցիոն կերպով, այլ պրոգրեսիվ»[63]։

Արասխանյանի նարոդնիկական համակրությունները չեն հասնում կապիտալիզմի զարգացումը «կասեցնելու» նրանց մտադրությունները կիսելուն։ Ընդհակառակը, Արասխանյանի ամբողջ գործունեությունն ուղղված էր կապիտալիզմի զարգացումն արագացնելուն։ Բանն այն է, որ ցարական Ռուսաստանի ծայրագավառային ժողովուրդը ևս տուժում էր ոչ միայն և ոչ այնքան կապիտալիզմի զարգացումից, որքան նրա անբավարար զարգացումից։ Այնպես որ այս հարցում Արասխանյանը քայլում էր ավելի ռեալիստական ու պրոգրեսիվ ուղիներով, քան նա-

---

61 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 345։

62 Նույն տեղում, էջ 291։

63 Նույն տեղում, էջ 443։

բոդնիկները։ Ճշտությանը, որ Լենինը պահանջում էր նաև խստորեն տարբերել նարոդնիկական ծրագրի ռեակցիոն և պրոգրեսիվ կողմերը, մերժել առաջինը, ընդունել երկրորդը և ոչ թե կեղտաջրի հետ դեն նետել նաև մանուկին։ Լենինը ռեակցիոն է համարում գյուղացուն արտադրության հին հաղանակներին կապելու և դրամական տնտեսության զարգացումը կասեցնելու ձգտումը, պրոգրեսիվ՝ ինքնավարության, գիտությունը ժողովրդին մատչելի դարձնելու, էժան վարկերի, տեխնիկայի բարելավման և այլ միջոցներով մանր տնտեսությունը բարձրացնելու պահանջները. «...նարոդնիկները անհամեմատ ավելի ճիշտ են ըմբռնում և ներկայացնում մանր արտադրողների շահերը,— նշում է Լենինը, — և մարքսիստները մերժելով նրանց ծրագրի բոլոր ռեակցիոն գծերը՝ պետք է ոչ միայն ընդունեն համադեմոկրատական կետերը, այլ նաև դրանք կիրառեն ավելի ճշգրիտ, ավելի խորապես և ավելի առաջ տանեն»[64]։

Արասխանյանի աշխարհայացքի դեմոկրատական դրսևորումները ցայտուն արտահայտություն գտան հատկապես հայ գյուղի պրոբլեմը ամսագրի էջերում արծարծելիս։ Սիրով ամբիոն տրամադրելով ժողովրդասեր հայ մտավորականությանը, «Մուրճի» էջերում մեկը մյուսի հետևից ծնունդ առան նարոդնիկական գաղափարախոսությամբ շնչող գյուղագրական ստեղծագործությունները։

Ռուսական նարոդնիկության նկատմամբ Արասխանյանի տածած համակրանքի ապացույցները կարելի է տեսնել ոչ միայն նարոդնիկական հովերով տարված հեղինակների հոդվածներին և ժողովրդասիրական գյուղագրական գրականությանը «Մուրճում» մեծ տեղ տալու փաստի մեջ, այլև հենց Արասխանյանի գրչի տակից դուրս եկած աներկմիտ տողերում։ Այս տեսակետից խիստ շահեկան է նրա գրած առաջնորդողներից մեկը, որ կրում է «Ժողովուրդը որպես քաղաքակրթական ուժ» խոսուն վերնագիրը։

Ամեն մի ժողովրդի ամենակրթված դասի, այսինքն մտավորականության արժեքի չափանիշ ընդունելով «ժողովրդական մասսայի մտավոր ու բարոյական հասունության աստիճանը» և ժողովուրդը դիտելով «ոչ միայն իբրև կրթելու առարկա, այլև որպես կրթող, միտք դրդող, միտք բեղմնավորող, նրա կրթված մասի դրական արժեքը որոշող»[65] ուժ, Արասխանյանը ստիպված է տխուր եզրակացություններ գալ հայ

64 Նույն տեղում, էջ 646։

65 «Մուրճ», 1890, № 11, էջ 1493—1494։

իրականության մասին. «Հայերը, ունենալով հանդերձ բազմաթիվ կրթվածներ, չունին մի բարձր կանգնած ամբոխ, ժողովուրդ»[66]: Պետք է վերացնել կրթված մտավորականության և անկիրթ մասսայի միջև եղած այս խզումը, առանց որի Արասխանյանին անհնար է թվում հասարակության ընդհանուր առաջընթացը: Եվ նա իր հայացքը հառում է դեպի այն «նորագույն» ուղղությունը, որի անվան հոմանիշը նույնիսկ Արևմտյան Եվրոպայի քաղաքակիրթ ազգերի լեզուներում չկա. «Բայց թե որքան մեծապես ղգացել է ռուս ազգի առաջավոր մասը այդ դժբախտ հանդամանքի կարևորությունը ռուսական կուլտուրայի համար, այդ ցույց է տալիս այն՝ գրեթե աղանդի կերպարանք ստացած հավատը, որով իրանց նվիրել են ժողովրդական գործին այսպես կոչված նարոդնիկները՝ ժողովրդադետ գրողները և նոցա հետ միասին առհասարակ ժողովրդական ամեն կարգի ինտելիգենտ գործիչները»[67]:

Արասխանյանի նպատակն է «ռուսական ազգի զարգացման ուրույն հանգամանքների» շնորհիվ երևան եկած այդ «համակրելի» ուղղությունը օրինակ ծառայեցնել հայ մտավորականությանը: «Դեպի ժողովուրդը գնալու», ժողովրդական լուսավորության գործին անձնազոհ նվիրումով լծվելու նարոդնիկական շարժումը հիացմունք ու բարի նախանձ էր առաջացնում հայ խմբագրի մեջ: Սակայն Արասխանյանի համակրանքը դեպի ռուս նարոդնիկները չպետք է հասկանալ այնպես, թե նա ամբողջությամբ ընդունում էր նրանց ծրագիրը և բաժանում նրանց տեսակետները երկրի զարգացման ուղիների վերաբերյալ: Արասխանյանն ամուր կերպով կանգնած էր կապիտալիստական արտադրության զարգացման տեսակետի վրա և նրա մեջ էր տեսնում ժողովրդի բարօրության փրկարար միջոցը: Նրա ժողովրդասիրությունն արտահայտվում էր այն սրտացավ հոգացողության մեջ, որ նա հանդես էր բերում դեպի գյուղի աշխատավորը, ամսագրի հարյուրավոր էջեր նվիրելով նրա անլուր տառապանքների, անհաշիվ զրկանքների և կարիքների նկարագրությանը: Կարելի է վստահորեն ասել, որ դարավերջի հայ գյուղը ժամանակի ոչ մի պարբերականում այնպիսի ճշմարտացի և բազմակողմանի լուսաբանման չի արժանացել, ինչպես «Մուրճում»՝ շնորհիվ նրա տեսաբան-հեղինակների, գավառական թղթակիցների և հայ գյուղագիրների, որոնք «ժողովրդադետ գրողների խումբ» անվանումն ստացան: Այդ է հաստա-

---

66 Նույն տեղում, էջ 1495:

67 Նույն տեղում, էջ 1498:

տում նաև հայ գյուղագրության պատմությունն ուսումնասիրող բանասերը. «Գյուղական իրականությունը երբեք այնպիսի արտացոլում չի գտել որևէ հայ պարբերականում, ինչպես «Մուրճում»[68]:

Արասխանյանի լիբերալիզմին մանրբուրժուական դեմոկրատիզմի միակցումը դրական հետևանքներով արդասավորեց «Մուրճի» գործունեությունը, ինչում կհամոզվենք՝ քննության առնելով դարաշրջանի ամենակենսական պրոբլեմներից մեկին՝ գյուղացիության հարցին նվիրած ամսագրի նյութերը:

Ամենից առաջ պարզաբանենք մի հարց՝ ո՞րն էր ամսագրի վերաբերմունքը դեպի 1861 թվականի գյուղացիական ռեֆորմը:

Ռեֆորմի անվերապահ ճանաչումը հատուկ է հայկական բուրժուական մամուլի բոլոր օրգաններին, և «Մուրճը» դրանց մեջ բացառություն չի կազմում: Նա ևս իր գործունեությունն սկսեց մեծարանքի խոսքեր և հարգանքի հավաստիքներ հղելով Ալեքսանդր II «աղատարար» թագավորի հասցեին:

«Գյուղական վարկը Ռուսիայում և Անդրկովկասում» ընդարձակ հոդվածով հանդես է գալիս ամսագրի գլխավոր տեսաբան-տնտեսագետ Գ. Վարդանյանը, որի ելույթները Արասխանյանի հոդվածների հետ միասին մեր առջև պարզում են «Մուրճի» հիմնական ուղեգիծը նաև ագրարային հարցում:

Բուրժուական ռեֆորմիստ Գ. Վարդանյանի գրչի տակ ցարական ռեֆորմները իդեալական գունավորում են ստանում. «Այս գյուղական վերանորոգությունը ապացույց էր, որ տերությունը լրջորեն ցանկանում էր գյուղացիներին դարավոր ծանր լծից իրոք ազատել և հետո գյուղական հողային սեփականության գործի զարգացման խնդիրը առաջ մղել»[69]:

Սակայն որպես տնտեսագետ Գ. Վարդանյանը աչք չի փակում այն հակասությունների առջև, որ բերեց իր հետ օրենքի գործադրումը՝ «հակառակ իր առաջադրած նպատակին»: Նա տեսնում է, որ ռեֆորմներից ամենից շատ շահում են հարուստ գյուղացիները, որ տակա է հողի սպեկուլյացիայի վտանգը, որ հողային ռեֆորմներն Անդրկովկասում նույն տնտեսական հետևանքները չունեցան, ինչ Ռուսաստանում, քանի որ եղծման համար ոչ պարտադիր ժամկետ սահմանվեց, ոչ էլ փոխատը-

---

68 Կ. Դանիելյան, Հայ գյուղագրությունը XIX դարում, Երևան, 1973, էջ 385:

69 «Մուրճ», 1889, № 2, էջ 304:

վություն տրվեց գյուղացիությանը, որ սակավահողությունը ոչ թե պակասեց, այլ ավելացավ. «Հենց շնորհիվ 19 փետրվարի լույս տեսած նոր հողային կազմակերպության, ամենաընդունակ և ընտրյալ գյուղացիները սկսեցին աստիճանաբար հարստանալ, գնելով իրենց խեղճ և անընդունակ համագյուղացիներից հողեր, որոնք վերջիններին այլևս օգուտ չէին կարողանում տալ՝ զրկված լինելով հողագործության համար անհրաժեշտ միջոցներից:... Հողերը ձեռքից-ձեռք անցնելով, ի վերջո անցան հարուստների ձեռքը և այսուհետև գյուղացիների համար հողի պակասություն առաջ բերին»[70]:

Տնտեսագետն արձանագրում է «վերևից» անցկացրած ռեֆորմների անզորությունը՝ լուծելու հողային կենսական հարցը և նորից փարվում... ռեֆորմներին, պետական միջոցառումներին: Գյուղական վարկը նա դիտում է որպես դիշատիչ վաշխառության ճանապարհը փակելու, գյուղացու չքավորության արմատը չորացնելու միջոց, քանի որ «գյուղական վարկի հաստատությունների բացակայությունը այնպիսի վաշխառուական մասնավոր վարկի ձևեր է ստեղծել, որ մենք հակված ենք ամենայն իրավամբ դոցա համարել գյուղացիների չքավորության միակ պատճառը»[71]: Այսպիսով, ետ չմնալով դարավերջի հայ մամուլի ընդհանուր խմբերգությունից, «Մուրճն» իր ձայնն է միացնում գյուղական վարկի վերաբերյալ հյուսված առասպելի գովերգությանը: Սահելով երևույթների մակերեսով, Գ. Վարդանյանը հաճախ է շփոթում պատճառն ու հետևանքը, ծառերը նշմարելով, անտառը չի տեսնում: Նրան տեսանելի չէր կապիտալիստական հասարակարգի բարդ մեխանիզմը, որի խորքում էր աշխատավոր զանգվածների աղքատության արմատը: Նրան թվում էր, թե մանր բարեփոխումներով հնարավոր է ստիպել այդ հսկա մեխանիզմին՝ գործելու հօգուտ աշխատավոր ժողովրդի:

Մնում է ավելացնել, որ խմբագիրը լիովին համամիտ էր Գ. Վարդանյանի հոդվածի դրույթներին: Այս առթիվ գրված ծանոթագրության մեջ նա նշում է, որ «դա՝ «Մուրճ» ամսագրի համար ամենաթանկ և մեր սրտին ամենամոտիկ խնդիրներից մեկն է, որպես մեկը այն խնդիրներից, որոնց լուծումից մեր ժողովրդական բարօրությունն է կախված»[72]: Խմբագիրը հանձնարարում է ամսագրի գավառային աշխատա-

---

70 «Մուրճ», 1889, № 8, էջ 1137—1138:

71 Նույն տեղում, էջ 1147:

72 «Մուրճ», 1889, № 2, էջ 356:

կիցներին հիմնավորապես ուսումնասիրել այս, ինչպես նաև № 1-ում տպագրված «Դատաստանական վերանորոգություն» հոդվածները, որոնք գրված են հատկապես խմբագրության հանձնարարությամբ, հասկանալ խնդիրների էությունը և այնպես գրիչ վերցնել ձեռքը։ Երևում է, որ խմբագիրը նախապես մշակված լայն ծրագրով էր առաջնորդվում ազգային խնդիրները լուսաբանելիս։

Այդ ծրագրի իրականացման հաջորդ քայլն էր իր իսկ՝ խմբագրի «Հողային խնդիրը Անդրկովկասում» մեծ հոդվածաշարը։ Հողային խընդիրը Արասխանյանը դնում էր ամենաառաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրների շարքում, գտնելով, որ այն «բոլոր լուսավորված և առաջադիմության շավղի վերա կանգնած ազգերի և պետությունների կյանքում կազմել է քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացման դժվար լուծելի հանգույցներից ամենակարևորը»[73]։

Գալով Անդրկովկասին, Արասխանյանն ստիպված է արձանագրել տխուր փաստեր և իր անսքող դժգոհությունը հայտնել հողային խնդրի լուծումից ցարական կայսրության ծայրագավառում. բացառյալ Վրաստանի, մնացած նահանգներում «Հողային խնդիրը և դրա հետ կից հողային ռեֆորմները հետևեցին այլ սկզբունքների, մեկը մյուսին հակասող, անհաստատ, գրեթե առանց որոշ ծրագրի, առանց կատարյալ գիտակցության, որպես մի մութ աշխարհում, ուր միայն շոշափելով կարելի է մի որևիցե ճանապարհ գտնել»[74]։ Արասխանյանը սա բացատրում է այն հանգամանքով, որ Անդրկովկասում ագրարային ռեֆորմներին չնախորդեց հասարակական լայն կարծիքի նախապատրաստությունը, ինչպես դա տեղի ունեցավ Ռուսաստանում։ Անդրկովկասի հողային ռեֆորմները չեն արտահայտում մասսայի պահանջը, այլ միայն՝ տերության և, խորաթափանցորեն նկատում է Արասխանյանը, կրում են «քաղաքական օրենքների բնավորություն»։ Եվ ահա, եթե հասարակական կարծիքը չնախորդեց, ապա այն գոնե պիտի հետևի ռեֆորմներին, որի մշակմանը և ձեռնամուխ է լինում ամսագիրը. «Մեր ջանքը սա կլինի՝ բացել հողային ուսումնասիրության էրա, դարձնել այդ խնդիրը հայկական գրականության սեփականություն, միջոց տալով, որ ընթերցող հասարակությունը մտերմանա այն խնդիրների հետ, որոնք մեր ազգաբնակության մեծագույն և ամենահետաքրքրական մասի վիճակին

---

73 «Մուրճ», 1889, № 9, էջ 1285։

74 Նույն տեղում, էջ 1288։

են վերաբերում»[75]: Արասխանյանը, անշուշտ, անգիտանում է նախորդ մամուլի (մանավանդ «Մշակի») և գրականության ծառայությունները հողային խնդրի ուսումնասիրման հարցում, բայց ընթերցող հասարակությանը հայ գյուղի հուզող հարցերին «մտերմացնելու» ծրագիրը, որ առաջ է քաշում խմբագիրը, լիովին իրագործվում է «Մուրճում»:

Հասարակական կարծիքի միջոցով հողային խնդրի լուծումը տեղից շարժելու Արասխանյանի հույսերը սնվում էին նրա լիբերալ պատրանքներից: Նա չէր ըմբռնում, որ Անդրկովկասի գյուղացիության շուտափույթ «ազատագրումը» չէր մտնում ցարական կառավարության ծրագրերի մեջ, թեև, ճշմարտությունը պահանջում է ասել, որ հենց այս հոդվածում Արասխանյանը բավական զգաստ դիտողություններ ունի Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության վերաբերյալ: Ցարական կառավարության քաղաքական հեռահար դիտավորությունները նա այսպես է բնութագրում. «...կառավարությունը խրախուսելով աղնվական կալվածատեր դասակարգը, ուղեցել է մեր երկրի մեջ ունենալ մի քաղաքականապես հուսալի դասակարգ, որը երախտագիտական զգացմունքներով կապված լիներ կառավարության հետ և յուր աղդեցությունը գյուղական դասակարգի վերա գործ դներ կառավարության դիտումների համաձայն»[76]:

Դժգոհությունները ցարիզմի ագրարային քաղաքականությունից «Մուրճում» գնալով ավելանում են, վեհերոտ տրտունջները համար առ համար ավելի հստակ ու աներկմիտ ձևակերպումներ են ստանում: Այս տեսակետից շատ ուշագրավ են Գ. Վարդանյանի երկու հոդվածները՝ գրված գյուղացիական ռեֆորմի 30-րդ և 35-րդ տարեդարձների առիթով՝ «Տնտեսական դրությունը Ռուսիայում 1891 թվականին» և «Ռուս գյուղացիների պարտքերը և վարկը»: Առաջին հոդվածում կարդում ենք. «...գյուղացին ձեռք բերելով անկախություն՝ ո՞ր աստիճան ընտելացավ անկախ և ինքնուրույն գործունեության 30 տարվա ժամանակամիջոցում, որ անցել է ճորտության վերանալուց հետո: Գյուղացիների ներկա դրությունը այնպես է, որ կարծես թե ազատության բարիքները նոքա չեն վայելել և օրենքի բարերարությունը առերևույթ է անցել»[77]:

---

75 Նույն տեղում, էջ 1295:

76 «Մուրճ», 1893, № 4, էջ 502:

77 «Մուրճ», 1892, № 7—8, էջ 1140:

Անցնում է ևս հինգ տարի։ Կյանքը նորանոր ապացույցներ է բերում ի վնաս ռեֆորմի։ «Մուրճը» միանում է ռուսական առաջադիմական մամուլի այն կարծիքին, որ «1861-ին շնորհված ազատությունը ապասածին հակառակ, բացասական հետևանքներ է ունեցել»[78]։

«Մուրճը» գտնում է, որ «կապիտալիստական իշխանության հալածանքներից» գյուղացին ղերծ կլինի, եթե գյուղական դասակարգի համար լինի մի այնպիսի սոցիալական օրենսդրություն, ինչպիսին արդեն սկզբնավորված է Եվրոպայում բանվոր դասակարգի համար։ Այլ կերպ ասած, «Մուրճի» «գյուղափրկիչ» ծրագիրը հանդում է դարձյալ գերմանական պատմական դպրոցի փառաբանած «պետական սոցիալիզմին»։

Փաստերի լեզուն սիրող «Մուրճը» ինչո՞ւ էր խուսափում փաստերի անողոք տրամաբանությունից բխող արմատական եզրակացություններից և շարունակ բռնում ռեֆորմների կողմը։ «Մուրճի» խմբագրին և աշխատակիցներին պակասում էր պատմության, հասարակական երևույթների մատերիալիստական ըմբռնման, արտաքին փաստերից դեպի ներքին շարժումները թափանցելու կարողությունը։ Հասարակության զարգացումը նրանք դիտում էին իբրև ընդհանուր առաջադիմության անկասելի մի շղթա։ Ահա ցարական ռեֆորմներն էլ նրանք դիտում են իբրև առաջադիմական, մարդասիրական մղումների արգասիք, մինչդեռ վկայակոչելով պատմության փորձը Վ. Ի. Լենինը հաստատում է, որ «ռեֆորմները՝ հեղափոխական պայքարի ածանցյալ արդյունքներն են»[79]։

Հայ մամուլի էջերում մի քանի տասնամյակ շարունակ չարչրկված հարցերից մեկը այսպես կոչված «պանդխտության խնդիրն» է։ Որպես կապիտալիզմի ծնունդ տված սոցիալական երևույթներից մեկի, այն իր վրա է հրավիրել և՛ ազգային-պահպանողական, և՛ լիբերալ, և՛ դեմոկրատական հրապարակախոսության ուշադրությունը։ «Մուրճում» պանդրխտության հետ կապված հարցերը քննվել են անհամեմատ ռեալ և սթափ հայացքով։ Ամսագրի ելակետը այլևայլ հոդվածներից մակաբերելու անհրաժեշտություն չկա։ Հենց «Մուրճի» առաջին տարում «Պանդրխտության խնդիրը» վերնագրով Արասխանյանի առաջնորդող հոդվածում շատ հստակ ձևակերպված են այս հարցի վերաբերյալ ամսագրի հիմնադրույթները։ Նախ, Արասխանյանը պահանջում է տարբերություն

78 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 454։

79 Վ. Ի. Լենին, հ. 20, էջ 219։

դնել գաղթականության և պանդխտության երևույթների միջև, առաջինը հայերի մեջ առավելապես քաղաքական դաժան հանգամանքների (ինչպես Արևմտյան Հայաստանում), իսկ երկրորդը՝ սոցիալական և տնտեսական հանգամանքների ծնունդ համարելով։ Արդյոք այս երևույթները պետք է դիտել իբրև չարի՞ք և մտածել դրանց դեմն առնելու միջոցների մասին, թե՞ ընդհակառակը՝ պետք է խրախուսել,— հարցը սրում, պարզնցնում և որոշակի պատասխանի է հրահրում խմբագիրը։

Ոչ թե պետք է մամուլի էջերը լցնել ապարդյուն վայոյներով և ցուցադրիներին ետ դարձնելու անզոր հորդորներով, այլ պետք է հանդամանորեն ուսումնասիրել երևույթը, պարզել դրա պատճառները։ Պանդխտությունը ո՛չ պատահական և ո՛չ էլ ժամանակավոր երևույթ է, բացատրում է բնթերցողներին տնտեսագետ-խմբագիրը, այն մեծ չափով առկա է նաև Եվրոպայի տնտեսապես ամենազարգացած երկրներում։ «Գյուղական պանդխտությունը Անդրկովկասում առաջանում է գլխավորապես նորանից, որ հայրենի գյուղում ուժեր ավելին են, քան գործը պահանջում է»[80], «ուժերի ավելորդությունը պետք է նկատվի որպես պանդխտության օրգանական պատճառ»[81],— ընդգծում է Արասխանյանը, դիտելով այն նոր տնտեսակարգի անխուսափելի ուղեկիցը։

Արասխանյանի դրույթները հաստատելու և լրացնելու է գալիս Անուշավան Քալանթարի «Պանդխտությունը մեղանում» հոդվածը։ Հոդվածագիրը պանդխտության երևույթի հիմնական պատճառ է դիտում սակավահողությունը, իսկ եթե փակագծերը բացվեն՝ «հողի սեփականության անհավասար դասավորությունը հասարակության մեջ, դաշտային մշակության միջոցների և գործիքների անկատարելիությունը, գյուղական հարստահարությունները, չարչի ցեցերը, հարկերի, ակցիզի և այլ տուրքերի ծանրությունը, ճանապարհների և մոտիկ վաճառանոցների բացակայությունը և այլն»[82]։

Ա. Քալանթարի եզրակացությունները միանգամայն համերաշխում են Արասխանյանի տեսակետներին. պանդխտության առաջն առնելն ապարդյուն գործ է, այն կարելի է և պետք է կանոնավորել ու մեղմել. «Ուրեմն եթե գործադրելու լինենք դանապան միջոցներ, ինչպես են՝ համայնական հողերի կանոնավոր բաժանելը, գյուղական վարկ հիմնե-

---

80 «Մուրճ», 1890, № 6, էջ 784։

81 Նույն տեղում, էջ 788։

82 «Մուրճ», 1890, № 11, էջ 1544։

լը, ուսումնարանների և այլ միջոցներով գյուղատնտեսական գիտելիքներ տարածելը գյուղերում, հարմար երկրագործիքներ տարածելը, հարկերի, տուրքերի և հասարակական պարտականությունների կանոնավորելը, թեթևացնելը, եղած դեմի հողերում ջրանցքներ անցկացնելը և այլ այս տեսակ միջոցները, որոնցով եղած հողը արդյունաբերվում է, իսկ ծախքերը պակասում են, կարող կլինենք մի առ ժամանակ սակավահողության առաջն առնել, հետևաբար և պանդխտության հոսանքը թուլացնել»[83]:

Հոդվածագիրը, այնուամենայնիվ, ստիպված է կյանքի թելադրանքով ավելացնել. «Դուցե հողային խնդիրները կանոնավորելուց, վարկեր և շուկաներ հիմնելուց հետո՝ թուլանա այս շարժումը, սակայն դա երկար չի տևել և մի քանի ժամանակից հետո նորից, գուցե և ավելի մեծ ծավալով կսկսվի»[84]:

Այսպես է, լիբերալիզմը կյանքի գորդյան հանգույցները լուծելու վճռական միջոց չի տալիս գործչի ձեռքը և նրան հաճախ է կանգնեցնում փակուղու առջև, երբ բանականության ուժով ստեղծած նրա մտածումները բախվում են կյանքի փաստերի անողոք տրամաբանությանը:

Իսկ փաստերը, հենց «Մուրճի» էջերում արձանագրված, բերում են այլ եղրակացության: «Գավառական քրոնիկ», «Գավառական նամակներ», «Գավառական թղթակցություններ», «Գավառական ցավեր» խորագրերի տակ տպագրվում են «Մուրճի» աշխատակիցների, թղթակիցների հոդվածները, որոնք գծում են դարավերջի հայ գյուղի ահավոր պատկերը, այնպիսի անագորույն թշվառություն և աղաղակող անարդարություններ, որոնց առաջն առնել անզոր պիտի լիներ ամեն մի բարեհոգություն:

Ահա ինչ է գրում գավառական թղթակից Մ. Տեր-Հարությունյանը երկրագործ փամբակեցու դրության մասին. «...գյուղացու դրությունը պարբերական դառնության մեջ է անցնում. էլ չկա անցյալ անհոգ ու խաղաղ նահապետական կյանքը, այսօր նա մի կերպ կյանքը քաշ է տվել՝ մտածում է վաղվա մասին: Չկա «ռանչպար», որ մինչ կոկորդը թաղված չլինի պարտքի մեջ, ուստի եթե ցանում է՝ վաշխառուինն է, եթե կթում է իր մի կամ երկու կովը՝ նույնպես... եթե չարքաշությամբ ձեռք է բերում մի քանի ռուբլի, նրանով էլ տերության հարկն է վճա-

83 «Մուրճ», 1890, № 12, էջ 1712:

84 Նույն տեղում:

րում, եթե միայն բավականացնում է։ Հակառակ դեպքում կծախվի նրա «վերմակ» կապերտը, կամ միակ կաթսան. միով բանիվ շատ ուրախ և անտրտունջ կլինի, եթե գերդաստանին «ցամաք» հաց միայն հայթայթե։ ...Ասուված մի արասցե, եթե այս տարի ևս հունձը անհաջող լինի, այնուհետև սովը անդթաբար կսկսի իր հունձը»[85]։

«Մեղրի գյուղի դրությունը» նամակում Մ. Մելքումյանը գրում է. «Մեղրիի հասարակությունը նյութականապես աննախանձելի, մինչև անգամ ամենաողորմելի դրության մեջ է։ ...Ընդհանուր աղքատություն է տիրում գյուղի մեջ։ Բնակիչների մեծ մասը պարտքերով է ծանրաբեռնված, որոնցից ազատվելու ոչ մի միջոց չի մնացել։ Աղքատ դասակարգը տարեցտարի զրկվում է իր հողերից, որոնք հարուստների ձեռքն են անցնում պարտքերի և ծանր տոկոսների տեղ։ ...Ապրուստի ամեն միջոցից զրկված լինելով, մեղրեցիները սկսել են պանդխտել օտար քաղաքներ, ծառայության մեջ մտնել և ծանր աշխատանքներով փող աշխատել իրանց պարտքերը տալու և ապրուստը հոգալու համար. բայց ի՞նչ կլինի մի ժողովրդի դրությունը, որը յուր բախտը պանդխտության մեջ է որոնում»[86]։

Գավառական կյանքի վերաբերյալ չափազանց հետաքրքիր նյութեր է տրամադրում «Մուրճին» Մադաթ Պետրոսյանը, որը խմբագրությանը շատ մոտ կանգնած մարդկանցից էր, մեքենագետ, «Մուրճ» արհեստավորական ընկերության նախաձեռնողներից մեկը։ Նա Հակոբ Հակոբյանի մտերիմ բարեկամներից էր և աճելով «Մուրճի» էջերում, դարձավ հայ պրոլետարական գրականության անդրանիկ ներկայացուցիչներից մեկը։

Իր ուսումնասիրության համար Մադաթ Պետրոսյանն ընտրում է Ղազախի գավառի Կոթի գյուղը։ Ամսագրի երեք համարներում տպագրված նրա նամակները գյուղական կյանքի սահմռկեցնող պատկերներ են բացում մեր առջև[87]. գյուղն ունի 200 ծուխ, որից հազիվ միայն 20-ը պարարից դերծ են։ Հականե-անվանի ըղձակիցը տալիս է պարտապանների անունները՝ այրի Զանանը, վեց երեխաների մայր Թմազանց Մամոն, Ճոկնանց Կարապետը... ավելի քան 70 անուն, պարտքատերերի անունները՝ Ալեքսի Սարատիկով, Ուհանես Չիլչանց, Բաբանց

85 «Մուրճ», 1893, № 5, էջ 811—812։
86 «Մուրճ», 1894, № 6, էջ 940—943։
87 Տե՛ս «Մուրճ», 1896, № 9, 1897, № 5, 1898, № 7—8։

Սաքո... և նաև Ձնագնդի նման աճող պարտքի գումարները, որոնց դիմաց զոհ են գնում գյուղացու ունեցած միակ կապիտալը, կաթնատու, եղը, կովը... Միայն չքավորությունը չէ, որ բռնել է գյուղացու կոկորդից: Տգիտությունն էլ է իր սև գործն անում. ոգեւ, հետամնաց բարքերի ամենամեծ զոհը հայ կինն է: Անմռունչ ու հնազանդ նա տանում է իր բախտի ծանր բեռը, նրան ծեծում են, ստորացնում, ամուսնացնում իրենից 20, 30, նույնիսկ 40 տարով մեծ տղամարդու հետ: Թղթակիցը անունները տալով պատմում է դեպքեր. ամեն մեկը մի Մարոյի սրտաճմլիկ պատմություն:

Այս գավառական նամակներն ասես նույն գրչով են գրված: Ո՛չ, կյանքն է նույնօրինակ ծանր ամեն տեղ: Փոխիր Փամբակ, Մեղրի, Կոթի գյուղերի անուններն ուզածդ գավառի ուզածդ հայկական գյուղով և ճշմարտության առջև բնավ չես մեղանչի:

«Մուրճը» շարունակում է պարտապանների այս տխուր ցուցակների տպագրումը նաև այլ գյուղերից, գտնելով, որ «պետք է նյութի մասին գրելու ձևը փոխել, հին ընդհանուր բացականչությունների տեղ դնել կյանքի ֆաքտերը, ...կյանքի դոկումենտներ ժողովել»[88]:

Մադաթ Պետրոսյանի հոդվածին, որ նա գրել էր խմբագրության հանձնարարությամբ, հետևողներ եղան ոչ միայն «Մուրճում», այլև «Մշակում», որից «Մուրճը» արտատպում է «Վաշխառությունը Ախալքալաքի գավառում» թղթակցությունը, հարստացնելով «կյանքի ֆաքտերի» իր հավաքածուն նաև այսպիսի փաստով. վաշխառուն «վեր է գրել խեղճ Ադամի տան գերանները, նրա միակ սեփականությունը, և մտադիր է քանդել գյուղացու գետնափոր շինությունը, որ գերանները ծախե և դրանով բավարարություն տա իր արյունարբու ինստինկտներին»[89]:

Մադաթ Պետրոսյանի նամակների առթիվ խմբագրությունն այսպիսի ծանոթագրություն է անում. «Թե սիստեմատիկական ծեծը, այսինքն ծեծը իբր սովորություն, թե մանուկ աղջիկներին ամուսնացնելը՝ սրա բոլոր հակաբնակերական, հակասոցիալական հետևանքներով՝ վերացնելու համար մեծ դեր ունի կատարելու արթնացած խիղճը՝ հանձին ազգի ինտելիգենտ անդամների, որոնք, որպես ներկա հոդվածի հեղինակը, կատարված դեպքերը իբր մի-մի հասարակական ոճիրներ՝ մա-

88 «Մուրճ», 1899, № 2—3, էջ 360:

89 Նույն տեղում, էջ 324:

մուլի միջոցով կհասցնեն ի գիտություն հանրության և այսպիսով նկատված ու ազդ ու անուններով հիշված անձերին՝ կդնեն հասարակաց դատաստանի ներքո: Մենք այս դեպքերի հետաքրքրությամբ... մեծ կարևորություն ենք տալիս: ...Հասարակաց խիղճը արթնացնել— ահա մեծ գործը, ահա մեծ բժիշկը հասարակական չարիքների դեմ»[90]:

Որքան որ դովելի է «Մուրճի» խմբագրի ձգտումը՝ մամուլը դարձնել հասարակական կարծիքը դարբնող, չարիքի դեմ հասարակական դատ հրահրող, հասարակական գիտակցությունը ձևավորող գործիք, նույնքան և միամիտ ու տիպիկ լիբերալ մոլորություն է կարծել, թե հասարակական չարիքի դեմ «մեծ բժիշկը» արթնացած խիղճն է: Եթե բժիշկ՝ ապա միայն վիրաբույժ, եթե միջոց՝ ապա միայն վիրահատող դանակ: Այսպես էր մտածում, օրինակ, հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը Արտախանյանից չորս տասնամյակ առաջ: Սակայն Արտախանյանը հայ հասարակական մտքի այլ հոսանքի, այլ մտայնության ներկայացուցիչ էր:

«Մուրճում» տպագրված «Գյուղական ցավեր» վերնագրով Հովհաննես Խոջա-Էյնաթյանցի հոդվածաշարը կարելի է համարել ամսագրի «գյուղափրկիչ» ծրագրի կվինտ-էսենցիան: «Գյուղական ցավերը» բուժելու ի՞նչ միջոցներ է առաջարկում հեղինակը. հարկավոր է ջրարբի դարձնել ամայի տարածությունները, անցկացնել ոռոգման սիստեմ, ձորերում արհեստական լճեր կառուցել, լեռնային բարձրությունները անտառապատել և նվաճված հողերը դնել հողազուրկ գյուղացիների տրամադրության տակ:

Սովի և աղքատության առաջն առնելու համար հարկավոր է կառուցել հասարակական շտեմարաններ, որտեղ բերքառատ տարիներին կարելի է ամբարել ցորեն՝ անբերրի տարիներին օգտագործելու համար: «Կառավարությունը մեծ ուրախությամբ կընդունի այդպիսի օգտակար առաջարկություններ,— հավաստիացնում է ընթերցողներին հոդվածագիրը,— որովհետև ժողովրդի բշվառությունը մեծ հոգս է պատճառում կառավարությանը, որը այդ հոգսերից ազատ մնալու համար ամեն կերպ աշխատում է բարեկարգ դրության մեջ տեսնել իր հպատակ հողագործներին»[91]: Այստեղ տեղին է հիշել հին խոսքը՝ «վա՜յ հավատացողաց»: Այո, ամսագրի խոսքին հավատացող ընթերցողի մեջ նման տողե-

---

90 «Մուրճ», 1898, № 7—8, էջ 1154:

91 «Մուրճ», 1897, № 10, էջ 1393:

րը սին հույսեր կարող էին առաջացնել ցարական կառավարության օժանդակությամբ հողային հարցը լուծելու մասին։

Իր վերջին թղթակցությունը Հ. Խոջա-Էյնաթյանցը նվիրում է «Գյուղատնտեսական ինտելիգենցիայի» հարցին։ Սա առհասարակ «Մուրճի» էջերում լայնորեն քննարկված հարցերից մեկն է, որը ամսագրի «գյուղափրկիչ» ծրագրի առանցքն է կազմում։ Մինչ այդ «Մուրճում» տպագրվել էին Արասխանյանի «Գյուղատնտեսական ինտելիգենցիա» («Մուրճ, 1892, № 11) և «Կրթված գյուղացին» («Մուրճ», 1893, № 10), Ա. Աթանասյանի «Գյուղատնտեսության ուսումն և հայ գյուղատնտեսը» («Մուրճ», 1893, № 9), Հակոբ Հակոբյանի «Հայրիկը և գյուղատնտեսական ինտելիգենցիան» («Մուրճ», 1893, № 10) և այլ հոդվածներ, որոնցում շոշափվում են գյուղատնտեսական գիտելիքների տարածման, նորագույն տեխնիկայի և հողագործական աշխատանքների նորօրյա ձևերի արմատավորման միջոցով երկրագործության արդյունավետությունը բարձրացնելու խնդիրները։

Հողագործ դասակարգին գիտության հետ կապող հենց այդպիսի օղակ է դիտվում գյուղատնտեսական մտավորականությունը։ Իսկ ինչպես պետք է իրականացվի այդ կապը։ «Մուրճն» այլևս անբավարար է դիտում գյուղական ուսուցչի, բժշկի, քահանայի կամ պետական ծառայողի վրա հույս դնելը։ Առաջարկվում է ժողովրդին գյուղատնտեսական գիտելիքներ հաղորդելու համար կազմակերպել գյուղական դրադարաններ և հիմնել գյուղատնտեսական փորձակայաններ՝ դպրոցներին կից կամ առանձին։ Իսկ ավելի օգտավետ կլինի, եթե յուրաքանչյուր նահանգում բացվի գյուղատնտեսական ուսումնարան, գավառներում՝ ստորին կարգի և փորձնականին մոտեցրած ուսումնարաններ, հաշվի առնելով տեղի կլիմայական պայմանները։ Հետաքրքիր է հոդվածի վերջում տրված այս տեղեկությունը. «Որպեսզի մեր վերոհիշյալ նկատողությունները լոկ տեսական և անիրագործելի խոսքեր չնկատվեն, հայտնում ենք ի գիտություն, որ ձեռնարկել ենք մեր առաջարկած խնդիրներից մի քանիսի իրական օրինակը տալու, որի հետևանքի մասին իր ժամանակին տեղեկություն կտանք ընթերցող հասարակությանը»[92]։

Սպասո՞ւմ էին արդյոք այն ժամանակ «Մուրճի» ընթերցողները ֆերմեր-գյուղատնտեսի տեղեկություններին նրա նոր ձեռնարկումների արդյունքների մասին, չգիտենք, բայց պատմաբանն այսօր նման տեղե-

92 «Մուրճ», 1898, № 2—3, էջ 262։

կություններ չի փնտրի ամսագրի հաջորդ համարներում, համոզված, որ լիբերալ-ռեֆորմիստական, ուտոպիական նրա ծրագրերը և ձեռնարկումները բախվելով ժամանակի իրականությանը, փշուր-փշուր էին լինելու։

Միայն Արասխանյանը, հավատարիմ իր հավատո հանգանակին, դեռ երկար շարունակում էր փայփայել իր «գյուղափրկիչ» ծրագրերը, դրանց իրականացման բոլոր հույսերը կապելով գյուղատնտեսական մտավորականության հետ. «Այդ դասակարգը կոչված է հեղաշրջում կատարելու հայկական կյանքի մեջ. նա է, որ պիտի կազմի ոչ միայն գյուղատնտեսական, այլ առհասարակ արևելահայոց ինտելիգենցիայի բուն կորիզը, հիմնական մարմինը։ Նա կոչված է գլխավոր ղեկավարը լինելու գյուղական ժողովրդին, որ այժմ կատարելապես անղեկավար է, խորապես տգետ։ Նա պիտի լինի մտքերի միջնորդը գիտության ու գրականության և գյուղական ժողովրդի միջև։ Նա է, որ կոչված է կռվելու գյուղական աղքատության և դորանից օգտվող վաշխառուների դեմ, և այդ կռիվը նա կմղի ոչ թե խոսքի քարոզով, այլ ստեղծելով ու ղեկավարելով վարկատու հաստատությունները, բաց անելով գյուղական արդյունաբերության նոր ճյուղեր, գործադրելով տնտեսական լավագույն եղանակներ ու զարկ տալով գյուղական արդյունաբերությանը։ Նա է, որ ձեռնահասություն կունենա գյուղական կարիքները մոտիկից ճանաչելու և ուր հարկն է՝ այդ մասին լսեցնել տալու, այլև միջնորդ լինելու կառավարության ծրագիրների համար գյուղական արդյունաբերության վերաբերմամբ»[93]։

Ակնհայտ է այստեղ կապիտալիզմի զարգացումը հետամտող առաջադրությունների ձուլումը ժողովրդասիրական մղումների հետ։ Ճիշտ է նկատված, որ «Արասխանյանը լիբերալ հրապարակախոսի իր մտածումները խմբագրում էր գյուղի և գյուղացու վերաբերյալ ժողովրդասիրական հայացքների հանգով»[94]։ Բայց նարոդնիկների նման նա ևս անդիտանում էր գյուղացիության ներսում գոյություն ունեցող դասակարգային անտագոնիզմը, շերտավորումը, որին իր գործունեության ընթացքում ակամա դեմ էր առնելու գյուղատնտեսական մտավորականությունը և, բնականաբար, կանգնելու էր գյուղական բուրժուազիայի՝ կուլակային վերնախավի կողմը։ Տնտեսական «ընդհանուր» բարեկեցության և սոցիալական առաջադիմության ծրագրերը, այսպիսով,

---

93 «Մուրճ», 1899, № 9, էջ 1086։

94 Կ. Դանիելյան, Հայ գյուղագրությունը XIX դարում, էջ 381։

դառնալու էին լոկ արտոնյալ խավերի բարեկեցության և հարստացման միջոցներ։

Տնտեսական առաջընթացի ծրագրերին զուգընթաց Արասխանյանը ընթերցողների ուշադրությանն էր ներկայացնում այդ ծրագրերի գործնական կիրառման ամեն մի փորձ։

Ահա 1900 թ. «Մուրճում» մենք հանդիպում ենք «Հասարակաց խանութներ» վերնագրով հոդվածին, որի հեղինակն է «Մուրճի» բազմաբեղուն աշխատողներից մեկը՝ հայ գյուղագիր, նարոդնիկ Ազարիա Ադելյանը։ Մերժելով «ձանձրալի, ականջ ծակող և զահլա տարած» այն բարոյախոսությունը, որը գյուղացու մեջ է փնտրում նրա թշվառության պատճառը և այս «կիսաբուրժուական մրմունջներին» հակադրելով իր ժողովրդասիրական հայացքը, Ադելյանը գրում է. «Գյուղացին իր ցավերում մեղավոր չէ. դոցա հիմքը որոնեցեք պատմական-տնտեսական այն հանգամանքների մեջ, որոնց բարդ կապի շնորհիվ նոքա այդ թշվառ դրության են մատնվել»[95]։ Նարոդնիկ գրողը խնդիր է դնում գյուղացու տնտեսական ծանր վիճակը թեթևացնող միջոցներ որոնել։ Ահա այդպիսի միջոց է դիտում նա հասարակական խանութները։ Պատմելով անգլիական բանվորական սպառողական ընկերությունների մասին, նա բացատրում է հասարակական խանութների նպատակն ու բնույթը. դրանք սպառողական կոոպերացիաներ են, որոնց նպատակն է ազատել գյուղացուն մանրավաճառի և վաշխառուի ճիրաններից։ Բանն այն է, որ Ադելյանի նախաձեռնությամբ այդպիսի մի կոոպերացիա էր ստեղծվել Մեղրի գյուղում, 1899 թ.։ Ամսագրի նպատակն էր հրահրել նման կոոպերացիաների ստեղծումը նաև այլ վայրերում։ Սակայն, գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունը պետք է ունենար նույն վախճանը, ինչ որ բանվորական կոոպերացիաները, այսինքն կազմալուծվեր։ Մեղրիի կոոպերատիվ խանութի փաստը հանձնվում է պատմության հիշողությանը, որպես հետաքրքիր փորձ, ծնունդ առած նարոդնիկ գործչի ջանքերով։

Հայ ժողովրդասիրական գաղափարախոսության՝ ռուս նարոդնիկության հորդահոս աղբյուրից ստացած մղումների մասին է վկայում Ն. Ղազարյանի «Հողի իշխանությունը» հոդվածը, որը գրելու առիթ էր ծառայել ռուսական նարոդնիկական բելետրիստիկայի հայր Գլեբ Ուսպենսկու նույնանուն գիրքը։ Սա մի ձոն էր ռուս մտածիկին, մղում ստացած մեծ ժողովրդասերի անհատնում սիրուց դեպի իր հայրենի հողն ու

95 «Մուրճ», 1900, № 3, էջ 336։

հողի մարդը։ Երվանդ Ղազարյանը պատմում է նարոդնիկների մասին, որոնք մեծ ուժ, հոգեկան մի առանձին կորով էին տեսնում ռուս գյուղացու մեջ, երկրպագում, աստվածացնում այդ ուժը, որը նրանց կարծիքով «հիմքն է ռուսաց կյանքի առաջադիմության, որ տանելու է ռուսներին դեպի լուսավորության և առաջադիմության «աւետեաց երկիրը»[96]։

Ռուս գրողի նկատմամբ մեծ սիրով ու ակնածանքով գրված այս հոդվածը ասես մի կոչ էր, թե՝ «մենք էլ ճանաչենք մեր երկրագործին, օգնենք նրան գտնելու իր ճշմարտությունը»։ Պատահական չէ, որ մի քանի համար հետո նորից հանդես գալով «Մուրճում», Երվանդ Ղազարյանը ներբողում է այս անգամ հողի հայ աշխատավորին, հանձին շիրակցի գյուղացու, գրելով, թե նա «ներկայանում է մեր առաջ, որպես մի կայուն և անհողդողդ զորություն, որպես մի կենդանի գրավական՝ ապագա կյանքի, ապագա առաջադիմության»[97]։ Նարոդնիկական մտածելակերպի դրսևորումներն աչքի են զարնվում։ Գյուղացու հետ էին կապված նարոդնիկության բոլոր հույսերը երջանիկ ապագայի վերաբերյալ։

Նարոդնիկական գաղափարախոսությանը որպես տուրք պետք է դիտել նաև «Մուրճ» ամսագրում տպագրված հոդվածները համայնական հողատիրության և համայնքի վերաբերյալ։ Արասխանյանն, իհարկե, համայնական հողատիրության կողմնակիցներից չէր, բայց համայնքի մեջ նա հարմար հող էր տեսնում գյուղական ինքնավարության զարգացման, գյուղացու հասարակական գիտակցության բարձրացման, ինքնօգնության սկզբունքների արմատավորման համար։

Գրիգոր Վանցյանի «Հում նյութեր հայ համայնքի ուսումնասիրության» վերնագրով հոդվածը նվիրված է կապիտալիզմի հարվածների տակ կործանվող համայնքին, համայնավարական կենցաղի քայքայմանը։ Պատմական իրողության անխուսափելիության գաղափարով հոդվածագիրը փորձում է «մատնանիշ լինել» համայնական սովորությունները հավաքելու և կործանումից փրկելու գործին. «...կես կոմմունական բնավորություն կրող սովորությունները արդեն նոր տնտեսական պայմանների շնորհիվ բավական թուլացել և նսեմացել են, թեև նոցա պահպանել է ժողովուրդը հազարավոր տարիներ իբրև յուր նախկին համայնական կյանքի փայլուն փշրանքներ, որոնք, դժբախտաբար,

96 «Մուրճ», 1891, № 3, էջ 376։

97 «Մուրճ», 1891, № 7—8, էջ 876։

իբրև նախապատմական ժամանակի և ստոր կուլտուրայի արդյունք, տեղի են տալու նորագույն քաղաքակրթության առաջ։ Անշուշտ, եթե հնարավոր լիներ, եթե ոչ այդ սովորությունները ամբողջովին, գեթ նոցա ոգին, համայնականության գաղափարը կենդանի պահպանել մեր ժողովրդի մեջ, որ նորան դյուրին լիներ ըմբռնել ընկերավարական ուսման նորագույն վարդապետությունը, որը յուր հիմունքներով կրթնում է հենց մարդկության նախկին համայնական կենցաղի վերա, չափազանց ուրախալի կլիներ»[93]։ Ակնհայտ են նարոդնիկական մտայնության նստվածքները՝ նորօրյա սոցիալիստական ուսմունքների խառնուրդով.

Այսպիսով, տեսնում ենք, որ «Մուրճի» էջերում բուրժուական լիբերալ-ռեֆորմիզմը և լիբերալ-նարոդնիկությունը սերտաճում, կազմում են միասնություն։ XIX դարի 90-ական թվականների նարոդնիկները շարունակելով սուր ճոճել կապիտալիզմի դեմ, իրենց լիբերալ ծրագրերով, սակայն, փաստորեն, ջուր էին լցնում հենց նրա ջրաղացին։ Գիտակցում էին նրանք այդ թե ոչ, դա երկրորդական հարց է. կարևորը նրանց գործունեության օբյեկտիվ հետևանքն է։

Գնահատելու համար «Մուրճի» «գյուղափրկիչ» ծրագիրը, հիշենք, թե ինչպես է վերաբերվում մարքս-լենինյան միտքը առհասարակ ռեֆորմների խնդրին։ Վ. Ի. Լենինը գրում է. «Բուրժուական պրոգրեսի «մանր ջանքերով» չբավարարվելը ամենևին չի նշանակում մասնավոր ռեֆորմների բացարձակ ժխտում։ Մարքսիստներն ամենևին չեն ժխտում այդ միջոցառումների որոշ (թեպետև չնչին) օգուտը. դրանք կարող են աշխատավորին նրա դրության որոշ (թեպետև չնչին) բարելավում բերել. դրանք կարագացնեն կապիտալի առանձնապես հետամնաց ձևերի՝ վաշխառության, ստրկացման և սրանց նման այլ ձևերի ոչնչացումը, կարագացնեն դրանց փոխակերպումը եվրոպական կապիտալիզմի ավելի ժամանակակից ու մարդկային ձևերի։ Ուստի, եթե հարց տային մարքսիստներին, թե արդյոք հարկ կա՞ նման միջոցառումների, նրանք, իհարկե, կպատասխանեին՝ հարկ կա, բայց... միաժամանակ նրանք իրենց համաձայնությունը կպատճառաբանեին այդ հասարակարգի զարգացումը և, հետևաբար, նրա վախճանն արագացնելու ցանկությամբ»[99]։

Ղեկավարվելով լենինյան այս դրույթով, գյուղի (և ոչ միայն գյուղի) սոցիալական վերափոխումների Արասխանյանի ծրագրերի մասին

98 «Մուրճ», 1896, № 1, էջ 97։

99 Վ. Ի. Լենին, Նվճ, հ. 1, էջ 466։

կարելի է ասել, որ լիբերալ սահմանափակության կնիքը կրելով իրենց վրա, դրանք հեռու էին որևէ հարցի արմատական լուծում առաջադրելուց և չէին կարող առաջացնել նույնիսկ այն հետևանքները, որ ենթադրում էր դրանց հեղինակը։ Ամսագրի «գյուղափրկիչ» միջոցներն ուղղված էին «ամբողջ» գյուղացիությանը։ Բայց այդպիսի միատարր գյուղացիություն չկար դարավերջի հայ գյուղում։ Այստեղ տեղին է հիշել Լենինյան հարցադրումը, թե այդ միջոցները պետք են, բայց ո՞ր գյուղին։ «Հարկավ հողատերերի գյուղին, ունևոր մուժիկների գյուղին»,— պատասխանում է Լենինը և ավելացնում.— «Բայց կա ուրիշ գյուղ էլ, շատ ավելի բազմամարդ,... քայքայված և մերկացված, մինչև վերջին թելը թալանված գյուղացիության գյուղը։ ...Եվ այդ գյուղին դուք կամենում եք օգնել ապրանքային պահեստների՞վ։ Այդ ապրանքային պահեստների մեջ ի՞նչ ունեն դնելու մեր այն գյուղացիները, որոնք մի ձի ունեն կամ ղուրկ են ձիուց։ Իրենց հագո՞ւստը»[100]։ Այսպիսի հստակ, որոշակի հարցադրումը անմիջապես ցցուն է դարձնում բաղաքական-սոցիալական ծրագրերի դասակարգային պատկանելությունը։ Արասխանյանի «գյուղափրկիչ» ծրագիրը դուրս չի գալիս տնտեսական լիբերալիզմի սահմաններից, ուստի կարող էր ծառայել գյուղի զարգացող բուրժուական շերտերին միայն, գյուղացիական հոծ զանգվածների համար օրակարգից չհանելով հողային հարցի լուծումը։

Դասակարգերի համերաշխություն, ահա ինչի վրա է ձևված ռեֆորմիզմի հասարակական իդեալը։ Եվ դա նաև Արասխանյանի իդեալն է։ Բայց դա, ինչպես նշում է Լենինը, նշանակում է երազել մի հասարակարգ, որտեղ «թե՛ գայլերը կուշտ լինեն և թե՛ ոչխարները՝ ողջ»[101]։

Արասխանյանը չընդունեց անարդարացի հասարակարգը հեղափոխության միջոցով վերափոխելու ճանապարհը։ Գիտնականի պրոֆեսորական «օբյեկտիվիզմով» նա չէր հանդուրժում ծայրահեղությունները, ձգտում էր «ոսկե միջինին», իսկ այդպիսին, պատմությունից հայտնի է, չի լինում քաղաքականության, գաղափարախոսության բնագավառում։ Որքան էլ Արասխանյանը իրեն օբյեկտիվ ու անկախ հայտարարեր, խոսեր ամբողջ ժողովրդի անունից, դասակարգային հասարակության մեջ նա չէր կարող վեր կանգնել դասակարգերից, չարտահայտել հասարակական որոշակի խավերի շահերը։ Իր դեմոկրատական որոշակի մտահայեցությամբ հանդերձ նա մնում է վեր բարձրացող բուրժուազիայի գաղափարախոս։

---

100 Նույն տեղում, էջ 311։

101 Նույն տեղում, էջ 295։

Հայկական հարցը «Մուրճի» էջերում

Արևմտահայության ճակատագրի նկատմամբ «Մուրճը» սկզբից ևեթ հանդես բերեց սրտացավ մտահոգություն։ Պատմության դաժան քմահաճույքով մի ժողովրդի արհեստական ու անհեթեթ բաժանման անարդարությանը Արասխանյանը հակադրեց «նրանց ճակատագիրը նաև մերն է» սկզբունքը, պաշտպան կանգնելով իր եղբայրակիցների ազատագրական ձգտումներին ընդդեմ թուրքական բարբարոս բռնակալության, ձգտումներ, որոնք ավելի էին զորեղացել XIX դարի կեսերից՝ ր պատասխան սուլթանիզմի կողմից հայերի ազգային և տնտեսական ճնշման ուժեղացման։

Ամսագրի լույսընծայման հենց առաջին տարին ամփոփող առաջնորդող հոդվածում Արասխանյանը գրում է. «Մեր ներքին կյանքի ուսումնասիրության ծրագրի մեջ մեծ պակասորդ կլիներ, եթե Տաճկա-Հայաստանի կյանքը իր բաժինը չունենար «Մուրճում»։ Արդ, մենք սկզբից իսկ մտածել ենք, որ այդ խնդրի մեջ մեր առարկան պետք է լինի բուն երկիրը յուր ժողովրդով...»։ Խմբագիրը խոստանում է ընթերցողներին «ամեն ամիս հաշիվ տալ Տաճկա-Հայաստանի ընթացիկ կյանքի դեպքերից»[1]։

Թե արևմտահայ կյանքի լուսաբանման ինչպիսի լայն ծրագիր ուներ ամսագիրը, վկայեց այս թեմայով հենց առաջին ելույթը։ Խոսքը Լևոն Սարգսյանի «Այց Թուրքաց Հայաստանին» հոդվածի մասին է։ Ծանր ու դառն են հեղինակի տպավորությունները Արևմտյան Հայաստանից։ Սոցիալական, ազգային, քաղաքական ու տնտեսական ճնշման ահավոր պատկերներ են ուղեկցել նրան ամբողջ երկրով մեկ, հասկանալի դարձրել հայ աշխատավորության հոծ պանդխտության բուն պատճառը. «Հողի պակասությունը, կամ երկրի տնտեսական առաջադիմության պահանջը չէ, որ մղում է այդ թշվառների խմբերը իրանց մայր հողից դուրս, օտար աշխարհներ։ Երկրիս անկարգ դրությունը մեռցրել է նրա տնտեսական կյանքը և այդ անկանոն քայքայված վիճակի արգասիքն է

---

[1] «Մուրճ», 1889, № 12, էջ 1888—1889։

այդ պանդխտությունը: Նույն երկրում գործ չկա, ճանապարհներ չկան, արտահանություն չկա, իսկ տուրքեր ու հարկեր՝ օրավուր բազմանում են, պարտքերը խեղդում: Ո՞ւմ համար ցանի, հնձի գյուղացին, երբ նրա բերքերը գնող չկա, նրանց արտահանելու միջոց չկա. փշացնողին պատիժ չկա, լիրբ հափշտակողին արգելք չկա»[2]:

Եվ օրինականացված անօրինության այդ երկրում, որ կոչվում էր Թուրքական կայսրություն, հայ գյուղացին դեռ միամտություն ուներ գանգատով սուլթանի դուռը գնալու: Այդպիսի մի գյուղացի Լևոն Սարգսյանին ուղեկցում է Տրապիզոն գնալիս: Նա աղերսագիր էր տանում սուլթանին, որի մեջ «աղաչանք-պաղատանք, լաց ու գանգատ» էր իրենց անտանելի վիճակի մասին: Ահա ինչ է պատմում այդ վանեցի գյուղացին. «Թող ձեր ռուսահայերը տեսնեն իրենց աչքերով զմեր երկիր և ապա դատեն: ...Հողերը, գյուղերը քուրդ և տաճիկ բեկերի կալվածներն են. հայ գյուղացիներն իրենց մալով, տնով-տեղով այդ բեգերի ու աղաների մարիբաններն են, ճորտերն են: Կառավարության տուրքը, ըստ կարգին, գյուղացին կտա, բեգին և աղային հարկ՝ էլի նույն գյուղացին, զափթիի, մյուլթեզիմի և մյուդիրի հաճույքներին գոհացում տվողը՝ կրկին նույնը: Քուրդը սպանի հային՝ մեղավորը հայն է. հայը զինքը պաշտպանելով՝ զարնի քուրդին՝ մեղը իրանն է»[3]:

Հատկանշական է նաև գյուղացու հայտնած հետևյալ միտքը. «է՜հ, էլ ինչ մեղադրեմ այլ ազգը, քանի որ մեր մեծաշուք էֆենդիներն ու աղաներն ալ, արժանապատիվ եկեղեցականներու մեծամասնության հետ միասին, հեռու հայրենիքեն փափուկ ու կուշտ ապրելով՝ չեն ուզեր հասկնալ և թեթևցնել մեր վիճակ, այլ լոկ կըսեն՝ աղեկ է ձեր դրություն, համբերեք»[4]:

«Մուրճը» առիթը բաց չի թողնում «ռուսահայերի աչքերով տեսածն» ու լսածը պատմելու իր ընթերցողներին:

Արևմտյան Հայաստանի որ հատվածն էլ վերցնես, նույն պատկերն է. Հ. Մուրադյանը նույնպես պատմում է, որ թուրքական կառավարությունը բազմաթիվ «հարկերով քամում է գյուղացու վերջին ունեցածը

---

2 «Մուրճ», 1889, № 12, էջ 1938:

3 «Մուրճ», 1890, № 2, էջ 242—243:

4 Նույն տեղում:

և նրան դատարկ ձեռքով թողնում։ Էլ չեմ հիշում զանազան անթիվ կեղեքիչների և մյուլթեզիմ (կապալառու-հարկահան) գազաններին, որոնք տերության անունով ամեն տեսակ անխիղճ խաղեր են խաղում խեղճ գյուղացու գլխին։ Հապա աներես զափթիաները. ով չի զգացել նրանց մտրակների հարվածները։ Անիրավ և կաշառակեր դատիները ու դատավորները, որոնք իբր թե իրավունք և արդարություն պիտի պաշտպանեին իրենց քարացած և մեռած խղճով և անշարժ ու թմրած խելքով։ Այնինչ գյուղացու հարստահարող ցեցերից մեկն էլ նրանք են։ Ինչեր չի քաշում գյուղացին դրանց ձեռքից. արդարություն և անմեղություն չէ ճանաչվում այդ բարբարոս երկրի մեջ։ ...Էհ, որ մեկն ասեմ, միթե կարելի է այդքան անգթություններ մեջ գլուխ պահել և մնալ հայրենի երկրում այդքան դավերի ու կրակի մեջ։ Կենդանի մարդու ուժերից վեր է դա. նահատակի համբերությունը քիչ է դրա համար։ Այդ ցավերին վերջ տալու, դրանց հաղթելու համար հարկավոր է մի ուրիշ գիտակցություն. անգիտակցական և անտեղի նահատակության տեղ, գիտակցական նահատակություն և անձնվիրություն, որպիսի գաղափարը հայ գյուղացու սրտի և հոգու մեջ դեռ չէ արմատացել»[5]։

Ամսագրի նպատակն էր նման հոդվածներով դրդել արևելահայերին՝ ոչ միայն կարեկից լինել իրենց եղբայրակիցների դառը ճակատագրին, այլև մտածել օգնության ճանապարհների ու եղանակների մասին։ Սակայն «Մուրճը», ինչպես նաև հայկական մյուս պարբերականները, 80-ական թվականներին սաստկացած ցարական ռեակցիայի պայմաններում, չէին կարողանում լիաբերան արտահայտել իրենց ասելիքը։ Նրանք ստիպված էին ազգային-ազատագրական պայքարի բորբոքման յուրօրինակ լեզու բանեցնել։ Իսկ ամենից հաճախ մամուլն այդ անում էր, պատմելով այն ժողովուրդների մասին, որոնք ազատագրվել էին թուրքական լծից և անկախություն նվաճել։ Դրա համար պերճախոս և հարուստ նյութ էր տալիս բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պատմությունը։

Ահա «Մուրճը» տպագրում է Հ. Ղարագյոզյանի «Սև լեռնցիք» գեղեցիկ պատկերը, որտեղ պատմվում է Չերնոգորիայի լեռնցիների հերո-

---

5 «Մուրճ», 1893, № 9, էջ 1428—1429։

սական պայքարի մասին թուրքական բարբարոսների դեմ. «Այդ սարերում այս մի բուռն ժողովուրդը, ինչպես արծիվներ, հյուսեցին իրենց բույնը, և ահա, չորս հարյուր տարուց ավելի է, որ արծիվների նման պահպանում են անվեհեր իրենց հայրենի լեռները, միշտ քաջությամբ կռվելով թե՛ հարևան բարբարոս թուրքերի և թե՛ ուրիշ թշնամիների դեմ, իրենց անկախության և ազատության համար»[6]: Հոդվածագիրը պատմում է, թե սեբաստացիները ինչպես են մանուկ հասակից իրենց զավակներին դաստիարակում որպես հայրենիքի անվեհեր զինվորներ. նորածնի օրորոցում նրանք հրացան են դնում և մկրտության հանդեսին առաջին օրհնությունը լինում է, որ մանուկը մեծանա և քաջ ու անվեհեր զինվոր դառնա, որ նա շուտով լվանա իր հրացանը թշնամու արյունով, կռվի ինչպես իր հայրը և մեռնի ոչ թե իր բնական մահով, այլ պատերազմի դաշտում: Այս հոդվածի ամեն տողից ճչում է միևնույն կոչը՝ «ահա օրինակ հայրենիքի ազատությանը հասնելու»:

Հայ ժողովրդի առջև կանգնած «կենսական խնդիրները» վեր հանելու մտահոգությունն է, որ ստիպում է «Մուրճի» գրախոսողներին խորհուրդ տալ հայ ընթերցողներին կարդալ բուլղար ժողովրդի ազգային հերոսներ Վ. Լևսկու, Լ. Կարավելովի, հայդուկներ Հաջի-Դիմիտրի և Ստեփան Կարաջայի, հույն ժողովրդի մեծ զավակ Բոցարիսի մասին գրքերը:

Բեռլինի կոնգրեսի 15-ամյակը լրանալու կապակցությամբ Արասխանյանն ամսագրում հրապարակում է «Տաճկա-հայկական խնդիրը» վերնագրով հոդվածը, որտեղ շարադրված են խմբագրի տեսակետները բազմաչարչար Հայկական հարցի մասին: Այս հոդվածի արժեքն այսօր ավելի է բարձրանում, երբ նկատի ենք առնում, որ այն գրվել է հայկական կոտորածների նախօրյակին, քաղաքական հնոտատես նախազգացմամբ այն հրեշավոր գործողությունների վերաբերյալ, որոնց տրամաբանորեն հանգելու էր թուրքական կառավարության սկսած հայահալած քաղաքականությունը: Ընթերցողների հիշողության մեջ թարմացնելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի բովանդակությունը, Արասխանյանն ավելացնում է. «Բարեփոխություններ և վերանորոգումներ, երաշխավորություն ապահովության մասին— սոքա խոսքեր են, որ այլ գաղափար չեն հայտնում, քան եթե լավ կառավարություն, լավ վարչական մարմին, արդար դատաստան: Դորանով 1878 թվականին Բարձրագույն

---

[6] «Մուրճ», 1890, № 12, էջ 1682:

Դուռը ստիպվեց իր ստորագրությամբ խոստովանել, որ ոչ միայն բուն Տաճկա-Հայաստանում, այլև առհասարակ Թուրքիայի հայերով բնակեցրած տեղերում չկար լավ կառավարություն, լավ վարչական մարմին, արդար դատաստան— ամենատարրական պայմանները առողջ կազմակերպված մի պետության համար, հետևապես և առաջադիմական կյանքի համար, առհասարակ: Բայց Բարձրագույն Դուռը ոչ մի քայլ չարավ այդ հոդվածի պահանջները լրացնելու համար: Բոլորովին ընդհակառակը, այդ հոդվածը դրդեց տաճկական կառավարությանը դեպի վրեժխնդրություն հայկական տարրից...»[7]:

Մարդկության հիշողությունն իր երկար ընթացքի միջոցին քիչ արտառոց բան չէր ամբարել իր ծալքերում, բայց այն, ինչ հղանալու էր արյունարբու Աբդուլ-Համիդի ուղեղը, անծանոթ էր պատմությանը: Հարցերը լուծելու համիդյան եղանակը կարճ էր. հայկական հա՞րց է մեջտեղ եկել. այն չի լինի, եթե չլինի հայկական տարրը Թուրքիայում: «Վրեժխնդրության այդ գործը մարմնացավ մի քաղաքականության մեջ,— գրում է Արասխանյանը,— որի արտահայտությունները հարատև եղան և սիստեմատիկական: Հայ պատվիրակները իրանց դատի պաշտպանության համար մատնանիշ էին լինում Տաճկա-Հայաստանի հայ ազգաբնակության խտության և ստվարության վրա: Դորա համապատասխան Բարձրագույն Դուռը աշխատեց պաշտպանության այդ զենքը խլել հայերից՝ թե՛ պաշտոնական թվերը ազգաբնակության մասին կազմելով ի վնաս հայերի, և թե՛, որ ավելի մեծ դժբախտություն էր՝ բնակեցնելով Տաճկա-Հայաստանը նոր մահմեդական գաղթականներով՝ նույն այն չերքեզներով, որոնց դեմ արդեն իսկ բողոք կար Բեռլինի վեհաժողովում»[8]:

Իմաստավորելով այս բոլոր փաստերը, Արասխանյանը գալիս է այն ճիշտ եզրակացության, որ մեծ տերությունների թողտվության քաղաքականությունը հանդիսացավ այն պարարտ հողը, որտեղ ծլարձակեցին սուլթանի ոճրագործ մտադրությունները. «Եթե Տաճկական կառավարությունը կարողացավ Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը վրեժխնդրության հիմունք դարձնել, այդ նորանից էր, որ նա շատ լավ գիտեր, թե ինչպես է հասկանում ինքը՝ Եվրոպան Թուրքիայի պար-

---

7 «Մուրճ», 1893, № 11, էջ 1617—1618:

8 Նույն տեղում:

տավորությունը՝ «տեղեկացնել մեծ պետություններին» ձեռնարկած միջոցառումների մասին հիշյալ բարենորոգումների վերաբերմամբ։ Այս տասնհինգ երկար տարիներում ոչ մի անգամ Թուրքիան իրան պարտավոր չհամարեց յուր ձեռնարկած միջոցների մասին տեղեկացնել մեծ պետություններին։ Եվ ինչ կար տեղեկացնելու, քանի որ եղածը ծածկելու միայն խելացի էր գտնում»[9]։

Դեպքերն իրենց սպասեցնել չտվեցին։ Սուլթանի դիվային մտադրությունները կերպարանք առան Սասունի կոտորածներով։ «Մուրճը» արևելահայ պարբերականների մեջ առաջիններից մեկն էր, որ արձագանքեց դրանց, տպագրերով ականատեսի ըղձակցությունը՝ Սասնո դեպքերի մասին։ Այսուհետև չորս տարի շարունակ «Մուրճի» ժամանակակից տեսության բաժինը նվիրվում է Հայկական հարցին, դառնալով ամսագրի առանցքային խնդիրը, երկրորդ պլան մղելով մնացած բոլոր հարցերը։

Թեև հայկական կոտորածների վերաբերյալ խմբագրության նյութերի մի մասը լույս աշխարհ գալու փոխարեն ընկնում էին գրաքննության արխիվները, իսկ հրապարակվածներն էլ «սրբագրվում» էին ցարական գրաքննիչների կարմիր մատիտով, այնուամենայնիվ, «Մուրճի» դիրքը հայ ժողովրդի համար այդ ճակատագրական օրերին անխախտ ու որոշակի էր. Թուրքական կառավարության ոճրագործ քաղաքականության մերկացում, մեծ տերությունների քաղաքականության դատապարտում, հայկական ազատագրական պայքարի խրախուսում։ Ամեն համարում տպագրելով ընդարձակ տեսություններ և մեջ բերելով այլևայլ մամուլում հրապարակված արձագանքները հայկական կոտորածների մասին, «Մուրճը» ստիպված էր այդ ձևով արտահայտել իր «սեփական» կարծիքը։ Երբ հայկական կոտորածների վերաբերյալ եվրոպական մամուլի արտահայտած կարծիքից վախեցած Թուրքական կառավարությունը «հերքումներ» ուղարկեց ամեն կողմ, որ իբր «հայ ավազակները զինված արտասահմանից ստացած զենքերով, միացած են քուրդ ապստամբների հետ, հափշտակություններ գործելու համար, հրդեհած և ավերած են այդ տեղերում մահմեդականների գյուղերը» և այլ անհեթեթություններ, դրանք տեղ գտան նաև ռուսական մամուլում, միայն թե այսպիսի մեկնաբանությամբ. «Թուրքաց կառավարության բոլոր հավաստիացումները ոչ մի ուշադրության արժանի չեն և եվրոպական դիպլոմատիան պետք է որ միջամտի ի պաշտպանություն խա-

9 Նույն տեղում, էջ 1620։

ղաղ բնակիչների, որոնք զոհ են դարձած թուրքաց բաշիբոզուկների գազանություններին և բարբարոսություններին»[10]: Այսպես էր գրում «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթը:

Հայկական հարցի եվրոպական արծարծումները լայնորեն լուսաբանվում են «Մուրճի» էջերում: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվում անգլիական մամուլին: Այս նախապատվության դրդապատճառը հասկանալի կդառնա, եթե անդրադառնանք ամսագրի խմբագրի հետևյալ մտքին. «Ասելով «եվրոպական մամուլ», պետք է ամենից առաջ այս դեպքում հասկանալ անգլիական մամուլը, իսկ անգլիական մամուլի մեջ՝ ամենից առաջ լիբերալների գլխավոր օրգան «Դեյլի նյուս» օրաթերթը, այն թերթը, որը անմոռանալի պատմական դեր կատարեց նաև մեզնից տասն և ութ տարի առաջ, երբ առաջինը և ղորեղագույն կերպով բացեց բուլգարացիների կոտորածի գաղտնիքը Եվրոպայի աչքին»[11]: Այսպիսի «պատմական դեր» է ակնկալում այժմ Արասխանյանը եվրոպական մամուլից:

Մի որոշ ժամանակ «Մուրճի» խմբագիրը մոլորության մեջ ընկավ Հայկական հարցում Անգլիայի բռնած դիրքի վերաբերյալ: Դա գալիս էր Արասխանյանի աշխարհայացքի լիբերալ սահմանափակությունից, որտեղ միշտ չէ, որ պաշտոնական կարծիքը զանազանվում էր հասարակական կարծիքից, պետական գործիչների խոսքը՝ գործից: Այսօր որքա՜ն միամիտ են հնչում Արասխանյանի այս խոսքերը. «...Հայկական խնդիրը ներկայումս, և ամիսներից ի վեր, դառել է անգլիական խնդիր: Անգլիան այդ գործի բավարար լուծման համար դրել է արդեն յուր, իբր հզոր պետության, պատիվը»[12]: Արասխանյանը խճճվում է անգլիական երկու կուսակցությունների՝ պահպանողական և լիբերալ, հերթափոխի մեխանիզմի, անգլիական դիվանագիտության երկդիմի քաղաքականության լաբիրինթոսի մեջ: Նրան կաշառում են Գլադստոնի «հայասիրական» ճառերը: Դա մասամբ պետք է բացատրել նաև այդ շրջանում ցարական Ռուսաստանի՝ Հայկական հարցի նկատմամբ գրաված դիրքով, որը ստիպում էր հայ գործիչներին իրենց հայացքը դարձնել դեպի Անգլիա:

Սակայն պատմության անողոք ընթացքը ոչ թե հույսի շող, այլ հիասթափության սառը ջուր էր բերելու հայ ժողովրդին:

---

10 «Մուրճ», 1894, № 11—12, էջ 1693—1695:

11 Նույն տեղում, էջ 1692:

12 «Մուրճ», 1895, № 3—4, էջ 476:

«Դեյլի տելեգրաֆ» թերթի թղթակիցը իսկապես խիզախում էր իր թերթին հեռագրելով՝ «Հայ ժողովուրդը ամբողջ երկրի մեջ անսովոր մեծ համբերությամբ տանում է այն վարչությունը, որի տակ նա հեծում է և որը ամեն մի ուրիշ ազգի կտաներ դեպի ապստամբություն։ ...Այն անարդարությունները և հարստահարությունները, որոնց զոհ է դարձել հայ ժողովուրդը, ամենախոնարհ եվրոպացիներին անգամ ապստամբներ կշինեին։ Կանանց շարունակ անպատվում են, սեփականությունը հափշտակության։ Մարդ, կին, երեխա տանջվում են, վիրավորվում, սպանվում»[13]։

«Դեյլի նյուս» թերթի թղթակիցը, պատմելով ճշմարտությունը Սասունի կոտորածների մասին, մերկացնում էր «դժոխային չարության այնպիսի ահեղ պարագաներ, որոնց նմանը նույնիսկ օսմանյան ցեղի պատմության մեջ դժվար է գտնել»[14]։ Թղթակիցները բացահայտում էին ճշմարտությունը Մուշի քննիչ հանձնաժողովի գործունեության մասին, թե ինչպես թուրքական կառավարությունը ամեն միջոց գործ էր դնում ծածկելու համար կատարված վայրագությունների հետքերը, խոչընդոտներ հարուցելով վկաներին և ականատեսներին՝ լսելի դարձնելու իրենց բողոքի ձայնը մեծ տերությունների ներկայացուցիչներին։

Այս բոլորը հասարակական կարծիքի դրսևորումներ էին, որոնք, անշուշտ, խաղում էին իրենց դերը։ Սակայն պատմությունը հյուսվում է ոչ թե արտասանված խոսքերից, այլ կատարված գործերից։ Ուրեմն՝ ո՞րն էր խոսքը և ո՞րն էր գործը, ի՞նչ էր անում պաշտոնական Անգլիան. նա իր ստորագրությունն է դնում մեծ տերությունների դեսպանների մայիսյան նախագծի տակ, որը մեկ անգամ ևս «պարտավորեցնում» է Թուրքիային բարենորոգումներ անցկացնել հայկական նահանգներում։ Երբ հրապարակ եկավ այդ նախագծի տեքստը, ապա պարզ դարձավ, որ ծնվել է պարզապես Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի մի նոր տարբերակը, փոքր-ինչ ավելի երկար, բայց նույնքան ոչինչ չասող և ոչինչ չպարտավորեցնող։

Արտասխանյանը ստիպված էր «Մուրճում» արձանագրել իր հիասթափությունը. «Ուրեմն ծրագրի մեջ չկա ինքնավարության գաղափարը։ Առաջարկածը շատ ավելի պակաս է, քան ինչ սպասվում էր արդարացի կերպով։ Ուրեմն տաճկահայկական նահանգները, ըստ այդ ծրագրի,

---

13 Նույն տեղում, էջ 516։
14 Նույն տեղում, էջ 517։

դարձյալ մնում են սուլթանի կառավարության անմիջական հեղինակության ներքո: ...Բայց թե ինչ ապահովություն է տրվում, որ նույնիսկ այդ ռեֆորմները կիրականանան— այդ մասին ծրագրում ոչինչ չկա: Իսկ մինչև որ վերահսկողության գործը ամենաամուր հիմքերի վրա դրված չի լինիլ— ոչ մի ծրագիր իրականանալ չի կարող Տաճկաստանում»[15]:

Ռեֆորմների մայիսյան նախագիծը Արտախանյանն անհամատեղելի է գտնում այն ամենի հետ, ինչ խոսվել էր Անգլիայում Հայկական խնդրի վերաբերյալ: Այժմ անգլիական մամուլից նա ստիպված է այլ բնույթի քաղվածքներ անել. «Եթե մեծ պետությունները (կամ Մեծ Բրիտանիան) չուզենան վերահսկել այս կամ սոցա նման ռեֆորմների իրագործման վրա, այն ժամանակ Հայաստանի վերջին վիճակն առաջինից վատ կլինի, և Անգլիան, որ առանձնապես պատասխանատու է հայերի՝ Բեռլինի դաշնագրից ի վեր քաշած աղետների համար, ամբողջ աշխարհի առելության և հայոց ազգի նզովքին արժանի կլինի...»[16]:

Ո՞րն էր անգլիական դիվանագիտության ներքին մղիչ ուժը, որը անդրդվելի էր դարձրել Անգլիայի վերաբերմունքը Արևելյան հարցում: Որոնելով այս հարցի պատասխանը իր և ընթերցողների համար, Արտախանյանը այն գտնում է Սենտ Ջեյմս հոլում կայացած միտինգում նախկին պետական գործիչ Արգայլի դքսի արտասանած ճառում, որը, չնայած իր ընդարձակությանը, խմբագիրը հարկ է համարում մեջբերել ամբողջությամբ: Խոսելով Ղրիմի պատերազմի (ինչպես նաև ռուս-թուրքական պատերազմի) ժամանակ Անգլիայի գրաված դիրքի մասին, անգլիական կաբինետի նախկին անդամը ցինիկ անկեղծությամբ ասում է. «Մեր նպատակը բնավ Թուրքիան իբրև պետություն պաշտպանելը չէ: Մեր նպատակն էր պարտադիր անել Եվրոպայի համար, որ ինչ էլ լինի Թուրքիայի ճակատագիրը և կամ ապագան,— այդ ճակատագիրը և այդ ապագան Եվրոպայի ձեռքում գտնվի, այլ ոչ թե Ռուսիայի ձեռքում»[17]:

Ահա Անգլիայի գործելակերպի հիմնական մոտիվը, որը հաճախ թաքնվում էր մարդասիրական ճամարտակություններ և դիվանագիտական սեթևեթանքների հետևում, և ջրի երես էր դուրս գալիս այս կամ այն պետական գործչի ցինիկ անկեղծության պոռթկման պահերին: Անգլիա-

---

15 «Մուրճ», 1895, № 5, էջ 684:

16 Նույն տեղում, էջ 695:

17 Նույն տեղում, էջ 701:

կան իմպերիալիզմի շահերը բախվում էին ցարական Ռուսաստանի շահերին Արևելյան հարցում, և այդ հակասության վրա իր հաշիվներն էր կառուցում Թուրքիան՝ Հայաստանը հայերից մաքրելու քաղաքականությունն իրագործելիս։ Եվ այսպես, հայ ժողովուրդը մենակ ու անօգնական էր մնում թուրքական դիշատչի արյան ծարավից կափկափող բաց երախի առաջ։ Հայ մամուլի անզոր ճիչերը չէին կարող արթնացնել բուրժուական Եվրոպայի թմրած խիղճը։ Մնում էր նախատեսել ավելի սոսկալին. «Սասունի կոտորածի քննությունը,— գրում է Արասխանյանը,— լուսավոր աշխարհի առաջ պարզեց մի դիվական նախագիծ, որ կազմած է եղել տաճիկ կառավարությունը։ Այդ նախագծի հանգամանքները այն աստիճանի հրեշավոր են, որ մի առ ժամանակ երկրորդ գծի վրա են թողնում նույնիսկ Սասունի կոտորածը, որովհետև այդ կոտորածը կազմում է եղել դեռ միմիայն տեսարաններից մեկը մի ահռելի պատմական դրամայի, որի առաջին գործողությունը կատարված է եղել դեռ դրանից առաջ, իսկ վերջին գործողությունները պիտի կատարեին ամենամոտ ապագայում։ Ահա սարսափելի ճշմարտությունը»[18]։ Պատմելով այն անլուր տառապանքների, խոշտանգումների ու լլկանքների մասին, որոնց ենթարկվում էին արևմտահայերը և՛ բաց երկնքի տակ, և՛ բանտերի պատերի ետևում, Արասխանյանը նշում է, որ այդ ամենի մեջ «պիտի ցոլանա տաճկահայերի և՛ ըշվառության և՛ թե միանգամայն հերոսության պատկերը. հերոսություն ենք ասում, որովհետև այդ սոսկալի վիճակը հետևանք է հայության հավատարմության դեպի այն սուրբ դաղափարները, որոնցից այնքան ճնշված և հարստահարված հայը չի կամենում հրաժարվել՝ լոկ անասնական հանգստություն գտնելու համար մի անհնարին կառավարության մեջ»[19]։

Հատկանշական է, որ հենց այս ժամանակ «Մուրճ» ամսագրում լույս է տեսնում Երվանդ Ղազարյանի «Ազատված Բուլղարիան» հոդվածը, որտեղ հեղինակը պատմում է «ստրկությունից ազատվել ցանկացող ազգի հերոսական մարտիրոսության» մասին, պատմում է, թե «որպիսի բուռն ազգասիրական ոգով էին ներշնչված այն ժամանակվա բուլղարները, թե ինչպես անողոք վճռել էին նրանք՝ կամ ազատվել տաճիկների իշխանությունից, կամ մեռնել միասին... Եվ նրանք ազատվեցա՛ն։ Շատ ժամանակ չէ այդ ազատվիլը— 17 տարի է միայն անցել, և այդ կարճ ժամանակամիջոցում ազատությունը անթիվ բարիքներ հասցրեց Բուլղա-

18 «Մուրճ», 1895, № 6, էջ 827։

19 «Մուրճ», № 7, էջ 1027։

բրային»[20]: Ոգևորության մեջ հոդվածագիրը հավաստիացնում է նույնիսկ, որ երկրում այլևս չկան ո՛չ հարուստներ, ո՛չ աղքատներ, որ գոյություն չունեն արտոնյալ դասակարգեր, չկա ոչ մի տեսակ սոցիալական տարբերություն, խտրություն: Խմբագիրն իրավացիորեն հարցական նշան է դնում այստեղ: Սակայն տպագրելով այս հոդվածը, խմբագիրը, նկատելով հանդերձ, անդիտացել է այս չափազանցությունները և կարեվորություն է տվել նրա ազնիվ պաթոսին՝ հայերին բուլղարների օրինակով վարակելու ձգտումին: Այդ ճակատագրական օրերին հայ մամուլը մեկ անգամ չէ, որ դիմելով պատմական անալոգիաների դաստիարակիչ ուժին, մատնացույց էր անում բուլղարների օրինակը, թեև միշտ չէ, որ ծանրութեթև էր անում պատմական-քաղաքական այն իրադրությունը, որը բուլղարների ազգային-ազատագրական պայքարը պսակեց հաղթանակով: Այստեղ վճռական դեր խաղաց ռուսական զենքը, մի հզոր ուժ, որի ապավենից զրկված էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 90-ական թվականներին:

Պետք է ասել, որ Արասխանյանը, ինչպես առհասարակ հայ լիբերալները, ուներ ռուսական կողմնորոշում և ղգաստորեն էր գնահատում Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցում: Սակայն, այսուհանդերձ, 90-ական թվականներին նա ակնհայտորեն դժգոհ էր ցարական կառավարության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությունից՝ ինչպես արևելահայերին ձուլելու ձգտումների, այնպես էլ հայկական կոտորածների ժամանակ արևմտահայերի դատին պաշտպան չհանդնելու համար: Դուցե այս էր պատճառը, որ փրկության խարիսխ որոնելու իր ապարդյուն ճիգերի մեջ, նա հայացքը հառեց Անգլիային: Բայց ոգևորությանը արագ հաջորդեց հիասթափությունը:

Սոլսբերիի պահպանողական կառավարության օրգան «Ստանդարտը» հանդիմանում էր հայերին անհամբերության և սեպտեմբերի 18-ի մեծ ցույցը կազմակերպելու համար. «Հայերի այդ վարմունքը մանավանդ աննկարելի է, որ Անգլիայի ջանքերը հօգուտ հայերի արդեն սկսել էին իրենց պտուղները բերել, ...Բայց եթե հայերը կարողանային դեռ մի փոքր էլ սպասել, անշուշտ սուլթանը ստիպված կլիներ ընդունել այն ռեֆորմները, որոնց վրա պնդում էր լորդ Սոլսբերին»[21]:

Սակայն Արասխանյանն արդեն տեսնում էր այդ ռեֆորմների մեռելածին բնույթը, որ դրանք նույնիսկ չեն ապահովում հայ ազգաբնակչու-

---

20 «Մուրճ», 1895, № 9—10, էջ 1243—1244:

21 Նույն տեղում, էջ 1301:

թյանը մասսայական կոտորածներից։ Աբասխանյանի մտավախությունը, ցավոք, արդարացավ։ Սեպտեմբերի 18-ի ցույցը ազատեց սուլթանի ձեռքերը կաշկանդումից. սկսվեց զանգվածային կոտորածների նոր ալիք։ «Մուրճի» Կոստանդնուպոլսի թղթակից Խաչ-Պապյանը սահմռկեցնող պատկերներ է բացում ամսագրի ընթերցողների առջև, խոստանալով հետզհետե լուրեր հաղորդել, եթե միայն ողջ մնա, եթե չձերբակալվի։ «Մուրճի» թղթակիցը գրում է. «Պոլսեն մինչև Տրապիզոն, Կարինեն մինչև Մարաշ և Սեբաստիա, կոտորածը, մեծ հրդեհու պես, ծավալեցավ, ճարակեցավ բոլոր Տաճկա-Հայաստանի և Կիլիկիայի նահանգները։ Թուրքի սուրը խտիր չի դներ սեռի և տարիքի մեջ. երեխան իր մոր գիրկը կխողխողվի. մայրը իր զավակին առջև կմորթվի, զավակը իր հոր ներկայությանը կհոշոտվի։ Թուրքերու համար միակ նպատակ մը կա. հայերը ջնջել։ Միջոցները խիստ շատ են, և առիթներն ու ժամանակը՝ չափազանց նպաստավոր»[22]։

Այսպես, մի ամբողջ ժողովուրդ մորթվում էր Եվրոպայի աչքի առջև։ Դա էր սուլթանի պատասխանը ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ մեծ տերությունների պահանջին։ Արասխանյանի բարի մոլորությունները, պատրանքները հօդս են ցնդում։ Ճշմարտությունը մերկանդամ կանգնում է նրա առջև։ Իրողության դառը գիտակցությամբ նա գրում է. «Հայկական խնդիրը ներկայումս դառել է կատարյալ գորդյան հանգույց, որին պակասում է միայն մի Ալեքսանդր Մակեդոնացի։ Դրության կնճռոտ լինելը պայմանավորվում է երևույթների բարդությամբ՝ առաջացած այն բանից, որ ոչ ոք չի կատարում այն դերը, որ նա հայտարարում է և որ դլխավորն է՝ դերակատարներից ոչ ոք հավատ չունի դեպի հակառակորդի խոսքը։ ...որքան Եվրոպան հավատ չունի դեպի Թուրքիան, որից ռեֆորմներ է պահանջում, նույնչափ էլ Թուրքիան հավատ չունի դեպի Եվրոպան, մասնավորապես դեպի Անգլիան, թե նա պիտի կարողանա վարվել յուր սպառնալիքների համաձայն։ Թուրքիան գիտե, որ միմիա՛յն Անգլիան չի վստահանալ յուր պահանջները պատերազմով պաշտպանել։ Պատերազմի համար լոկ հայերի դաւի օգտին՝ հարկավոր կլինի բոլոր վեց պետությունների միաձայն վճիռը, որովհետև առանց այդ հիմնական պայմանի՝ ամեն մի պատերազմ Թուրքիայի դեմ՝ մեջտեղ կդնի ընդհանուր արևելյան խնդիրը, որը այսօր և արդեն ի վաղուց անտի, Թուրքիան բաժանելու խնդրի հետ նոմանիշ է»[23]։

---

22 «Մուրճ», 1895, № 11, էջ 1516։

23 Նույն տեղում, էջ 1476—1477։

Այո, Հայկական հարցը խճճվում է Արևելյան հարցի բարդ հանգույցներում, որից և օգտվում է Աբդուլ Համիդը այն իր ուզած ձևով լուծելու համար։

Հայկական կոտորածների տարիներին «Մուրճում» առանձին ուշադրության է արժանանում ռուսական մամուլը։ Այն տարբեր «լեզվով» էր խոսում։ Եթե ռուսական առաջադիմական մամուլը կարեկցանք էր հայտնում դեպի հայ ժողովրդի մեծ դժբախտությունը և համակրություն՝ նրա ազատագրական ձգտումներին, եթե ռուս առաջադեմ մտավորականության ջանքերով լույս ընծայվեց Թուրքիայի բարբարոս քաղաքականությունը մերկացնող ժողովածու՝ «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև պետությունների միջամտությունը 1895 թ.-ին», որը «Մուրճը» շտապեց ջերմ խոսքերով ողջունել[24], ապա ցարական բյուրոկրատիայի խոսաբեր հետադիմական մամուլը՝ «Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդոմոստի», «Կավկազ» թերթերը հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին հակահայկական տրամադրություններ էին բորբոքում։

Բնորոշ ու խոսուն է այն հանգամանքը, որ Արասխանյանը ռուսական ռեակցիոն մամուլի գործունեությունը մերկացնում է հենց ռուսական առաջադիմական մամուլի օգնությամբ։ Նա ծանոթացնում է ընթերցողներին «Ռոսսիա» ամենօրյա լրագրի ծրագրային հոդվածներից մեկին, որտեղ ասված էր. «Մենք բնավ չենք ընդունում այն կեղծ-ազգասիրական հայացքները, որոնց համաձայն մեր ծայրի երկրների տեղական բարբառները գրեթե կատարելապես չքանան և փոխարինվեն պետական լեզվով նույնիսկ մասնավոր և առօրյա հարաբերությունների մեջ։ Ծառայելով ռուսաց քաղաքակրթության՝ մենք հարգում ենք այն ազգերի քաղաքակրթությունը, որոնք մտնում են համառուսական գերդաստանի կազմի մեջ։ Հարգում ենք նաև կուլտուրական գործիքներից բարձրագույնը՝ լուսավորված ազգի կենդանի բարբառը՝ թե՛ խոսակցականը և թե՛ գրականը։ Ռուսիան հպարտությամբ կարող է ցույց տալ յուր պատմության էջերում, որ նա չի հանգցրել իրեն հպատակ ազգերից ոչ մեկի լեզուն, և որ նրա թևերի տակ փետուր են բռնել ոչ միայն հայրենի բանաստեղծներ և մտածողներ՝ պուշկիններ, տոլստոյներ, այլև որդեգրված զավակներ, որպես լեհ Միցկևիչ, վրացի Ակակի Ծերեթելի, հայ Րաֆֆի և այլն»[25]։

Մերկացնելով ռուսական շովինիստական մամուլի ստահոդ հերյու-

---

24 Տես՝ «Մուրճ», 1896, № 1, էջ 169։

25 «Մուրճ», 1899, № 4—5, էջ 548։

ըանքները հայերի սեպարատիստական ձգտումների մասին և հակահարված տալով հայերի ու վրացիների միջև սեպ խրելու, ազգային թշնամանք հրահրելու նրա նկրտումներին, Արասխանյանը ձգտում էր ընթերցողների մեջ դաստիարակել առողջ հայացքներ, իրերին սթափ և զգաստ նայելու կարողություն, ազգային սնապարծությամբ չվարակվելու ունակություն:

Արասխանյանն ուներ հստակ ռուսական կողմնորոշում և թուրքական լծի տակ տառապող փոքր ժողովուրդների համար ռուսական պետականության սրևելյան քաղաքականության առաջադիմական դերի խոր գիտակցում, ինչը և աշխատում էր սերմանել «Մուրճի» ընթերցողների մեջ:

1896 թ. սկզբին Արասխանյանը «Մուրճում» արձանագրում է քաղաքական մթնոլորտի փոփոխություն. «Անգլիայի դերիշխող ազդեցությունը Կ. Պոլսում փոխարինվել է Ռուսիայի ազդեցությունով»[26], «Անգլիան բացարձակ կերպով այժմ ստիպված է խոստովանել յուր պարտությունը հայկական խնդրում»[27], իսկ Համաշխարհային դիվանագիտական խաղատախտակի վրա երևացել է նոր հարց՝ Կրետեի ապստամբությունը, որը «եկավ ընդհանուրի ուշադրությունը խլելու հայկական առկախ մնացած խնդրից»[28]: Այն դուրս մղեց Հայկական հարցը միջազգային օրակարգից՝ նրա տեղը զբաղեցնելու համար:

Եվրոպական պետությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա դարձնելու թեթևամիտ և անզոր մի ճիգ էր օգոստոսի 14-ի Օսմանյան բանկի հայտնի դեպքը: Եվրոպական պետությունների մտահոգությունները բոլորովին այլ էին, քան մի փոքր ժողովրդի գայլի երախից փրկելը: Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանոտոն այդ օրերին ցինիկ անկեղծությամբ հայտարարում էր. «Պետությունների ճնշումը Կ. Պոլսում, որպեսզի սուլթանից ձեռք բերվի նրա հպատակների հասարակական և մասնավոր կյանքի պայմանների կատարելագործություն՝ երբեք չպիտի շոշափի և խախտի օսմանյան պետության ամբողջությունը և դաշինքները: Ֆրանսիան միշտ հետևել է այդ տեսակետին, այդ նրա քաղաքականության և նրա պատմության պատվավոր բովանդակություններից մինն է եղած: Եվ նա երջանիկ է նկատելով, որ դրան համակար-

---

26 «Մուրճ», 1896, № 1, էջ 126:

27 Նույն տեղում, էջ 127:

28 «Մուրճ», 1896, № 7—8, էջ 1019:

ծիք են և մյուս պետությունները։ Մի հանգամանք, որ լուրջ գրավական է եվրոպական հավասարակշռության համար»[29]։

Սա, իհարկե, պաշտոնական Ֆրանսիայի կարծիքն էր։ Այլ կարծիքի է ֆրանսիական ժողովուրդը, որի արտահայտիչներն էին առաջադեմ մտավորականները։ «Մուրճը» հայտնում է իր ընթերցողներին, որ «նշանավոր ֆրանսիացիների մի խումբ... մի հանրագիր է ստորագրել ֆրանսիական կառավարության անունով, որի մեջ խնդիր կա միջամտել հայերի ազատության համար։ Ստորագրել են Ալֆոնս Դոդե, Հանրի Բաուեր, Պոլ Ադան, Էմիլ Զոլա, Օրելիեն Շոլ, Ֆրանսուա Կոպպե, Անատոլ Ֆրանս, Նաթանսոն, Ալֆրեդ Վալլետ և Կատուլ Մանդես։ Ստորագրողները հայտնում են, թե Ֆրանսիայի ավանդությունները պարտավորեցնում են նրան, օգնել բոլոր տկար և հարստահարված ազգություններին, մանավանդ ի նկատի ունենալով սուլթանի հրամանով կամ նրա թելադրությամբ կատարվող խմբական կոտորածները»[30]։

Հայկական հարցը «Մուրճի» էջերում փոքր-ինչ աշխուժանում է Զեյթունի հերոսական ապստամբության օրերին, բայց առհասարակ խմբագիրը իրավացիորեն նշում է, որ «ներկա ամիսներում հայկական խնդիրը կարծես այլակերպվել է, դառնալով ծայրահեղ չքավորությունից և սովից մի ազգ փրկելու խնդիր։ Երեկվա բարենորոգումների խնդիրն այժմ փոխվել է՝ հայերին օրվա ապրուստ հայթայթելու խնդիր դառնալով։ Նվ նա դարձել է միջազգային, ինչպես որ հայկական խնդիրը միջազգային էր...»[31]։

Աշխարհը հայ ժողովրդի սպանդը թույլ տալուց հետո, հիմա մաքրում էր իր խիղճը հայ գաղթականներին նպաստներ հատկացնելով և հայ որբ մանուկների համար որբանոցներ բացելով։

Հայկական հարցը դանդաղորեն մարում է «Մուրճի» էջերում, տեղափոխվելով «Ջանազան լուրերի» բաժին, որտեղ խոսում են միայն թվերը, թվերը՝ կոտորածների, գաղթականների, որբերի ու որբանոցների, թվերը՝ տուժածներին հատկացված նպաստների մասին։ Հայկական հարցը հանձնվում է պատմության հիշողությանը՝ չլուծված, որպեսզի մոտ երկու տասնամյակ հետո նորից մեջտեղ գա, այս անգամ հայերի յոթնապատիկ ավելի հեղված արյան գնով և դառը փորձությամբ մղի հայ ժողովրդին՝ ազգային ճնշումից ազատվելու իրական ճանապարհ որոնելու։

---

29 «Մուրճ», 1896, № 10—11, էջ 1373—1374։

30 «Մուրճ», 1896, № 12, էջ 1628։

31 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 472—473։

Ամսագրի գրական քաղաքականությունը

XIX դարի երկրորդ կեսը արգասավոր եղավ ինչպես արևելահայ մամուլի, այնպես էլ հայ նոր գրականության համար։ Իր հիմքում հայ ժողովրդի բուրժուական զարթոնքն ունենալով իբրև աննախընթաց զարգացման պատճառ, հայ մամուլը և գրականությունը զորանում էին այն փոխադարձ սերտ կապի շնորհիվ, որը երկուստեք նպաստավոր եղավ։ Մամուլը գրականության մանկաբարձուհին էր. հիմնականում պարբերականների էջերում էին կյանքի կոչվում գրական ստեղծագործությունները, ծնվում գրողների նոր անուններ, մյուս կողմից, գրական երկն ու գրողը հնդինակություն էին բերում պարբերականին, գեղարվեստական ներգործուն խոսքի միջոցով ընթերցողներին հասցնում հասարակական այն խնդիրները, որոնք հասունացրել էր ժամանակը, և որոնց լուծմանն էին կոչված և՛ մամուլը, և՛ գրականությունը։

XIX դարի վերջի մամուլի ու գրականության կապի մասին կարելի է խոսել ելնելով այն իրողությունից, որ յուրաքանչյուր օրգան վարել է ի՛ր գրական քաղաքականությունը, առաջնորդվել գեղագիտական ի՛ր սկզբունքներով, ստեղծել գրողների իր խումբը։ Ուրեմն, ամեն մի պարբերականի գրական արտադրանքը անպայման գալիս է բնութագրելու տվյալ օրգանը, որոշելու նրա ուղղությունը։

Արդ, նախորդ գլուխներում «Մուրճի» գաղափարական ուղղությունը հիմնականում պարզելուց հետո, տեսնենք, թե այն ինչ ձևով է անդրադարձել «Մուրճի» գրական քաղաքականության վրա։ Գեղարվեստական գրականության համակողմանի քննությունը թողնելով բանասերներին, ուշադրության առնենք այն հասարակական բովանդակությունը, որ բերում էին ամսագրի հրապարակած գրական երկերը։

«Մուրճի» գրական քաղաքականությունը սկզբից ևեթ շատ որոշակի էր։ Այդ քաղաքականությունն ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանը ոչ միայն լուսլայն վարում էր, այլև ժամանակ առ ժամանակ ընթերցողներին հաղորդակից դարձնում իր սկզբունքներին ու ծրագրերին։ Նրան այդ բանին մղում էին նաև մամուլի այլ օրգանների, հատկապես «Մշակի», հարձակումները «Մուրճի» գրական արտադրանքի դեմ, որ ստիպում էր

խմբագրին ինքնապաշտպանության զրահի դիմել։ Արասխանյանը գրում էր, որ ամսագիրը չի կարող և պարտավոր էլ չէ տալ միայն գրական գլուխգործոցներ, որ ոչ մի ամսագիր առհասարակ չի կարող լինել բարձրը ստեղծագործությունների հավաքածու, որ ամսագիրը «պարտավոր է հաշիվ տալ նորագույն սերնդի գրական արտադրություններից»[1]։

Ահա, գրականության հարցում ևս Արասխանյանը կողմնորոշվում է դեպի երիտասարդ, նորագույն սերունդը, դեպի գրական նոր շարժումը, որը ռոմանտիզմի փլատակների վրա պարզելու էր ռեալիզմի հաղթանակի դրոշը։

«Խնդիրը նորանումն է,— գրում էր խմբագիրը,— թե «Մուրճում» տպված վեպերը, «Մուրճում» տպված ոտանավորները որքանով են կապվում մեր կյանքի և գրականության պահանջների հետ և իրանց գեղարվեստական ճամեմատական գերազանցությունով, ոդղությունով և բովանդակությունով որքան ընդունակ են բեղմնավորել և լավ ոգով ներշնչել գրողներին։ Խնդիրն, ուրեմն, այստեղ ժամանակակից սերունդների վերա արած բարոյական ազդեցության մասին է»[2]։ Խմբագիրն ամսագիրը դիտում էր որպես գրական դպրոց աշխատակցող գրողների համար, որը պետք է բեղմնավորեր նրանց գրիչը և ներշնչեր նրանց։ Նա անունների ետևից չէր ընկնում և չէր աշխատում հռչակ վայելող գրողների անուններով զարդարել ամսագիրը, այլ կյանքի անցաթուղթ էր տալիս նոր, անհայտ անուններին։ Ամսագիրը հեշտ ճանապարհ չընտրեց. նա գերադասեց տոկալ հասարակական կարծիքի և քննադատության առջև, քան ընտրել հեշտ ուղի։ Արասխանյանը հպարտությամբ ասում էր, թե իր ամսագիրը նոր սերնդի օրգանն է։ Իսկապես, շատ երիտասարդ էր «Մուրճի», այսօրվա տերմինով, հեղինակային ակտիվի միջին տարիքը։ Ա. Ծատուրյանը, Լ. Մանվելյանը, Վրթ. Փափազյանը, Շանթը, Հ. Հակոբյանը, Դ. Դեմիրճյանը, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը 17—25 տարեկան երիտասարդներ էին, երբ սկսեցին աշխատակցել «Մուրճին»։ Այսօր մենք երախտագիտությամբ կարող ենք ասել, որ «Մուրճը» կանդնեց բազմաթիվ հայ գրողների գրական օրորոցի մոտ,

---

1 «Մուրճ», 1890, № 4, էջ 629։

2 Նույն տեղում։

նրանց ստեղծագործական առաջին ճիչերի մեջ նշմարելով այն հզորացող ձայները, որ հետագայում հայ գրականության հպարտությունը պիտի կազմեին։ «Մուրճի» էջերում թողնելով իրենց ստեղծագործական մանկությունը, նրանցից շատերը դուրս եկան արվեստի մեծ ճանապարհ։

«Մուրճի» հենց առաջին համարի արձակի բաժինը բացվում էր Պերճ Պռոշյանի «Յեցներ» վեպով։ Նույն համարում զետեղված էր նաև Ն. Քարամյանի ուսումնասիրությունը Պռոշյանի մասին։ «Մուրճ» ամսագրի հրատարակությունը կրկին դուրս է բերում վիպասանին այն մեծ ասպարեզը, որ նա կորցրել էր «Փորձ» ամսագրի դադարելով»[3]. ճիշտ էր կռահված փաստի նշանակությունը։ Ավելացնենք, որ այն միաժամանակ խոսում է «Մուրճի» գրական ճիշտ կողմնորոշման մասին։ Պռոշյանը գնահատվում է որպես Խաչատուր Աբովյանի սկսած գործի շարունակող։ «Մուրճի» մտահղությունն էր, այդպիսով, ասպարեզ բացել հայ նոր գրականության զարգացման համար։ Վիպասանի մտադրությունը՝ ժամանակի անհետացնող ժանիքից փրկել Հայաստանի գլխավոր նահանգի տեղական կյանքի պատկերը իր առածների, ավանդությունների և ծեսերի հետ, հոդվածագիրը գերազանցված է տեսնում գրողի տաղանդի շնորհիվ, որի գրչի տակից դուրս է գալիս «հիրավի բանաստեղծական արտադրություն»[4]։ Պռոշյանի արվեստի թույլ կողմ է նկատված հարուստ երևակայության բացակայությունը, իսկ ուժեղ՝ այն, որ նա «բառի բուն նշանակությամբ ժողովրդական բանաստեղծ է, որը գիտե ժողովրդի զգացումները և կյանքը իր լեզվով և ձևով արտահայտել»։ Այս հատկության շնորհիվ նրա վեպերը դառնում են «շտեմարան մեր ազգային կյանքի ուսումնասիրման»[5]։ Անգամ նշված տողերի մեջ դժվար չէ նկատել հոդվածի աղերսները Նալբանդյանի «Կրիտիկայի» հետ։

Պռոշյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանի անցկացմամբ մտահղված «Մուրճը» գրում էր. «Այն, ինչ հասարակությունը պիտի գնահատի Պռոշյանի մեջ, այդ նրա ղուտ ժողովրդական զավակ լինելն է։ Նրանով կարող է պարծենալ հայությունը այն պատճառով, որ բոլորը, ինչ տված է Պռոշյանը,— արդյունք է մեր հողի, օդի, բուն հայկական զգացումների և կրթության ներշնչման»[6]։

---

3 «Մուրճ», 1889, № 1, էջ 132։

4 «Մուրճ», 1889, № 2, էջ 297։

5 «Մուրճ», 1889, № 3, էջ 475։

6 Նույն տեղում, էջ 516։

«Մուրճը» իբրև գրականության արժեքավորման կշռաչափ է դիտում՝ ժողովրդայինն ու ազգայինը: Գրական քաղաքականության մեջ «Մուրճը» դերազանցապես առաջնորդվում էր դեմոկրատիզմի սկզբունքներով՝ ինչպես ամսագրի շուրջը դեմոկրատ գրողներին հավաքագրելով, այնպես էլ գրաքննադատական խոսքով ամենաեռանդուն պայքարը մղելով գրականության դեմոկրատացման համար, քայլելով դարավերջի գրական շարժման ավանգարդում: Գրական կյանքի ոչ մի նորույթ չէր վրիպում նրա ուշադրությունից: Գրականության պատմաբանը «Մուրճի» էջերում իսկույն կարող է շոշափել գտնել ժամանակի համաչափ ռիթմով բաբախող զարկերակը:

Գրական նոր շարժման կեռմաններում «Մուրճը» երկար չորոնեց հայ նոր բանաստեղծության մայրուղին: «Մուրճի» ծննդից երկու տարի առաջ լույս էր տեսել Հովհաննես Հովհաննիսյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն, որի նշանակությունը հայ պոեզիայի համար հեղաբեկիչ եղավ: Հեղաբեկվում էր հայ բանաստեղծության ուղին ռոմանտիզմից դեպի ռեալիզմը և ժողովրդայինը: Կյանքը մտել էր իր զարգացման նոր՝ բարդ փուլի մեջ և պահանջում էր գեղարվեստական արտացոլման նոր, ավելի համապարփակ մեթոդ: Նորի նկատմամբ բռնած դիրքով պետք է որոշել հասարակական այս կամ այն ուժերի առաջադիմական նշանակությունը: «Մուրճը» ողջունեց նոր բանաստեղծի ծնունդը. «Շնորհավորում ենք՝ մեր հասարակության մեջ այդ նոր բանաստեղծի դալուստը, բանաստեղծի, որի դասակարգին է վերապահված, ըստ ավանդության, խոսքով թնդացնելու սրտի լարերի ամենանուրբ շարժումները և արձագանք լինելու մեր հոդեկան կյանքի փոփոխություններին»[7]:

Գրականության պատմաբանի կարծիքով «Մուրճի» խմբագրի մեծագույն արժանիքներից մեկն էլ հենց այն էր, որ նա ամսագրի շուրջը համախմբեց գերազանցապես այն բանաստեղծներին, ովքեր գալիս էին շարունակելու Հովհաննիսյանի ավանդները, «ովքեր աչքի առաջ ունենալով իրենց մեծ նախորդի նորարարական փորձը, պետք է ընդարձակեին պոեզիայի ընդգրկման սահմանները, կատարելագործեին ու հարստացնեին պոետական զինանոցը, իրենց անվան հետ կապեին նոր ուղիների հայտնաբերման ու նոր նվաճումների փառքը»[8]:

---

7 «Մուրճ», 1889, № 7, էջ 1078—1079:

8 Գ. Ալանյան, Հայ գրականությունը «Մուրճ» ամսագրում, Երևան, 1972, էջ 7:

«Մուրճը» կարելի է պնվանել գրական նոր սերնդի ամբիոն։ Սակայն ամբիոն տրամադրելով նոր սերնդին, Արասխանյանն իր անելիքը ավարտված չէր համարում։ Հարկավոր էր պաշտպանության տակ առնել, տեսականորեն հիմնավորել, ապրելու իրավունք տալ այն սկզբունքներին, որ բերում էր քննադատական ռեալիզմը դրոշակ պարզած գրական նոր սերունդը։ Գրականությանը զուգահեռ ու հավասար «Մուրճի» էջերում զարգանում էր գրաքննադատական միտքը։

«Մուրճի» ամեն համարում, արձակ, չափածո և թարգմանական նոր երկերի հետ իր կայուն և մշտական տեղն ուներ նաև գրախոսությունը։ Գրախոսության երկու ձև ուներ «Մուրճը»՝ կարճ և երկար։ Կարճ գրախոսությամբ, ինչպես բացատրում է խմբագիրը, ամսագիրը ներկայանում է որպես «հեղինակավոր բարեկամ»՝ կողմնորոշելու համար ընթերցողներին նոր լույս տեսած գրականության ընտրության հարցում[9]։ Կարճ գրախոսության այս ձևը խմբագիրն ընդօրինակել էր եվրոպական մամուլից. այն անպայման հանձնարարվում էր հեղինակավոր, ձեռնահաս, բարեմիտ և անաչառ հեղինակների, իսկ փոքրիկ կասկածանքի դեպքում հոդվածագրի ճշտության կամ անաչառության վերաբերյալ, ստուգվում էր խմբագրության կողմից։ Գրականության ավելի կարևոր հարցերը քննվում էին առանձին ծավալուն հոդվածներով։ Ընթերցելու գրականություն հանձնարարող «կարճ» գրախոսությունները հաճախ երկարում էին, եթե այս կամ այն գիրքը սնունդ էր տալիս գեղագիտական միտքը զբաղեցնող և իրենց լուծմանն սպասող հարցերը քննելու համար։

Ընդգծենք մի հատկանիշ ևս, որ դրականորեն է խոսում «Մուրճի» մասին։ Ամսագիրը նույնպիսի անաչառությամբ գրախոսողների դատին էր հանձնում նաև իր էջերում տպագրված գրական երկերը, որոնց մեծ մասը նա ընթերցողներին էր տրամադրում նաև առանձին գրքով։ «Մուրճի» գրախոսությունները՝ մեծ թե փոքր, այսօր ավելի են արժեքավորվում, երբ հաշվի ենք առնում, որ դրանք շատ անգամ այս կամ այն հեղինակին, գործին տրված առաջին գնահատականներն են։

«Մուրճի» հայտարար սկզբունքը գրական հարցերում ժողովրդասիրությունն է։ Ջենքեր վերցնելով քննադատական ռեալիզմի հարուստ դինանոցից, մուրճական գրողները դրանք բանեցնում էին ժողովրդի շահերը պաշտպանելու համար։ Նրանք գրականությունը դիտում էին իբրև ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հզոր միջոց,

9 Տես՝ «Մուրճ», 1889, № 4, էջ 686։

աշխատում էին ժողովրդի պես զգալ և ժողովրդի պես խոսել, կենարար ջուր էին առնում ժողովրդական բանահյուսության ակունքից: Անցնում է իններորդ տասնամյակը, որը մեզ բաժանում է «Մուրճից»: Դրականության պատմությունն իրենց արժանի պատվանդանների վրա է կանգնեցրել հայ գրողներին, որոնցից շատերը «Մուրճի» էջերում հանդես եկան որպես սկսնակներ, իսկ իրենց կենսագրություններն ավարտեցին՝ որպես հայ գրականության դասականներ:

Ալեքսանդր Սատուրյանի անունն անխզելիորեն կապված է «Մուրճ» ամսագրի հետ, որի էջերից հրատարակության ամբողջ ընթացքում հնչեցին նրա բանաստեղծությունները: Դրանց մեջ տրոփում էր իսկական ժողովրդի զավակի սիրտը: «Արյուն-արցունքով ներկված» նրա քնարից լսվում էին ժողովրդի տառապանքի և վշտի, ընդվզումի և հույսի կանչերը: Արծիվյանը (այս գրական կեղծանունը նրա համար ընտրել էր Արաքսյանյանը) մինչև վերջ հավատարիմ մնաց «Մուրճի» հենց առաջին համարում հրապարակած «Երգչի ուխտին»:

Սատուրյանի պոետական հավատամքն է ազդարարում «Պոետին» բանաստեղծությունը՝ մեր քաղաքացիական պոեզիայի ամենալավ դրսևորումներից մեկը: Ամբոխի երգիչը, պոետն իրավունք չունի վարդ երգել, «երբ նորա կյանքին պատած են փշեր»: Պոետի կոչումը ա՛յս պետք է լինի.

Դու ուժ ներշնչիր նորան քո երգով—
Խավարի կապանքն անվախ փշրելու...

Ճիշտ ըմբռնելով գրողի հասարակական կոչումը, բանաստեղծը տեսնում է նաև այն «անձեռակերտ հուշարձանը», որով ժողովուրդը երախտահատուցք է լինում ի՛ր բանաստեղծին.

Եվ տես, ով պոետ, քեզ այն ժամանակ
Որպիսի սիրով կը սիրե ամբոխ.
Սերն այդ կը հյուսե քեզ դափնե պսակ,
Սերն այդ կը կանգնե քեզ հավերժ կոթող...[10]

Հենց միայն բերված բանաստեղծության մեջ դժվար չէ նկատել ռուսական առաջավոր մտքի բարերար ազդեցությունը. Սատուրյանը

10 «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1331:

հայ պոեզիայի մեջ էր ներմուծում ռուս գրականության դեմոկրատական ավանդույթները, քաղաքացիական պոեզիայի այն բարձր մոտիվները, որ ձգվում էին Պուշկինից մինչև Նեկրասով։

Մուրճական մյուս պոետը, որի անունը նույնպես անխզելիորեն կապվում է ամսագրի հետ, Լևոն Մանվելյանն է, որի գրական ստեղծագործությունը հիմնականում հրապարակվել է «Մուրճի» էջերում։ Նա հանդես է եկել և՛ չափածո, և՛ արձակ երկերով, և՛ թարգմանություններով, և՛ հոդվածներով։ Դառնալով խմբագրի մերձավորագույն բարեկամներից մեկը, նա իրեն ամբողջովին նվիրեց «Մուրճին»։

«Մուրճի» առաջին համարում «Նավակ» բանաստեղծությամբ ընթերցողներին ներկայացավ նաև Մանվելյանը՝ երգչի իր «ուխտով». նա, ինչպես և իր գրչակից ընկեր Ծատուրյանը, պայքարի ուղին էր ընտրում, քանի որ համոզված էր՝

Եվ խավարը չէ հավիտենական,
Հավիտենական չէ ալեկոծում.
Ես հավատում եմ արևի ծագման...[11]

Պոետի հետագա բանաստեղծությունները նաև նրա գրական հավատամքի հաստատումն էր։

Մանվելյանը, ինչպես և ամսագրի խմբագիրը, հասարակական կյանքի իր իդեալը որոնելիս հայացքը դարձնում է դեպի Եվրոպա, որտեղից ճառագող լույսը, նրա կարծիքով, պիտի հալածեր հայրենի տան խավարը։ Այս միտքն ալեգորիկ ձևով տրված է նրա «Միածան» բանաստեղծության մեջ. բնության օրենքին հակառակ, արևելքում երկինքը սև մութով է պատած, իսկ արևմուտքում՝ «ոսկեգույն արևն է փայլում դողդրիկ»։ Երկնակամարն այսպես է երևում բանաստեղծին, որովհետև՝

Արևելք, քո սև հորիզոնի տակ,
Գիտեմ, պատրաստում ես որոտ, կայծակ
Իմ թշվառ եղբոր, իմ խեղճ մոր համար.
Օ՜հ, բանտի՜ կամար...[12]

Բանաստեղծի համար իր ժողովրդին լույս բերող արևը ծագում է արևմուտքում։ Հույսի շող որոնող նրա հայացքն ամպերի ճեղքից որ-

11 «Մուրճ», 1889, № 1, էջ 18։
12 «Մուրճ», 1890, № 7, էջ 945։

սում է ծիածանի կանաչ-կարմիրը, որն իր կիսաշրջանն է գծում նաև արևելքի սև հորիզոնի վրա: Թեև Մանվելյանի բանաստեղծություններում անորոշ ու մշուշապատ է լուսավոր ապագայի պատկերը, բայց հաստատ է նրա գալստյան հավատը:

Ազատության բարձր գաղափարներով են ներծծված Լ. Մանվելյանի նաև չափածո մեծ կտավի ստեղծագործությունները՝ դրամատիկական պոեմները, որոնք նաև ժանրային նորույթուն էին բերում հայ գրականությանը: «Դիագորոս Միլոսացին», «Գալիլե և Միլտոն» դրամատիկական պոեմները և «Տիգրանուհի» ողբերգությունը թեև տարբեր դարաշրջանների և տարբեր ճակատագրերի են նվիրված, բայց շաղախված են նույն ազնիվ ձգտումով՝ ազատասիրությամբ: Պոեզիայի մեջ Մանվելյանը ոչ միայն ինքն էր քայլում Հովհաննիսյանի բացած ուղիով, այլև բանաստեղծների նոր սերնդին կոչ էր անում հետևել հայ պոեզիայի նոր ուղեցույց աստղին: Նա հորդորում էր «Մեր նոր բանաստեղծներին».

Անվհատ հոգով և միաբերան
Բարձր հնչեցրեք ձեր ազնիվ տողեր,
Ինչպես անտառում նորադարձ գարնան
Երգում են աշխույժ նորեկ թռչուններ:[13]

«Մուրճի» պոեզիայում առանձնանում է Շանթը: Սակայն առանձնանալով, նա չի անջատվում, այլ ներդաշնակորեն ձուլվում է բանաստեղծական ընդհանուր խմբերգությանը, ավելացնելով բազմաձայնությունը: Շանթի ստեղծագործական մտածողությանն ավելի հարմար էր ռոմանտիզմը: Նրա բանաստեղծական խառնվածքն ամենից ավելի լավ երևում է «Կյանք, տուր ինծի» բանաստեղծության մեջ, որը կարծես պատասխան է այն հարցին, թե ինչու է գրողն իրեն անուն ընտրել Շանթը.

Կյա՛նք, տո՛ւր ինծի աղմո՛ւկ, որո՛տ,
Հոգիս կռիվ կը մուրա.
Կուզե անսասո ու փրփրրոտ
Ալիքի պես պայքար տա:

---

13 «Մուրճ», 1891, № 1, էջ 16:

Պոետն ուզում է «էլեքտրիկ ուժ» դառնալ, որպեսզի ամպերի հետ շփվելով լույս արձակի «ու կույր աչքերը տեսնեն»: Նա՝

Երբ ան մարի, ես դառնամ շանթ,
Սև բարձունքեն պայրագին
Իյնամ, պարնեմ շե՛շտ հրաժայթ
Տգիտութեյան լերկ գանգին:

Ու սպրդիմ տենչերուս հետ,
Խրվիմ իսկույն հողին տակ,
Ալ թո՛ղ ընդմիշտ կորչիմ անհետ.
Բավ է հեղ մը տեսնեմ կյանք:[14]

Բուրժուական աշխարհի անարդարությունների դեմ ցասումնալից մի խոսք է Շանթի «Ես պատրանքը սիրեցի» բանաստեղծությունը: Փողի, հասարակության, անիրավության այդ աշխարհը հերթով փշրում ու խորտակում է բանաստեղծի կենսածին իդեալները, նրան զրկելով անգամ իր հայրենիքը սիրելու բնական ու մարդկային իրավունքից:

Հայրենիքի հուր կարոտը բընածին
Երբ բըռընկցուց հուզված լանջըս տենդորեն,
«Դուն հայրենիք, դուն հող չունիս» հընծեցին,
Ես դառնացա. բայց ա՛լ ուժգին այդ օրեն
Իմըս չեղող հայրենիքըս պաշտեցի.
Ես պատրանքը սիրեցի:[15]

1891 թ. № 2-ում «Երգչին» վերնագրով փոքրիկ բանաստեղծությամբ «Մուրճի» ընթերցողներին է ներկայանում Հովհաննես Թումանյանը, այնուհետև երեք տարի անընդմեջ տպագրվում ամսագրում: Այսօր մեզ համար նա հայ աղգային պոեզիայի նահապետն է, իսկ այն ժամանակ՝ բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածուի հեղինակ: Երիտասարդ բանաստեղծը «Մուրճ» էր բերում հայկական գյուղաշխարհը՝ իր ցավ ու վշտերով, գյուղացու հառաչանքով.

---

14 «Մուրճ», 1897, № 2—3, էջ 253:
15 «Մուրճ», 1894, № 4, էջ 525:

Արի գութան, վարի գութան,
Օրն եկել է ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
«Օրհնյալ է Աստուած», հորովե՛լ[16]։

Պոեզիայի մի նոր աշխարհ էր գտնում ընթերցողը Թումանյանի «Գութանի երգը», «Ախթամար», «Կալի երգը», «Հառաչանք» և «Մուրճում» տպագրված մյուս բանաստեղծություններում, որոնց թիվն անցնում է երեք տասնյակից։

Հատկանշական է, որ «Մուրճում» Թումանյանի առաջին բանաստեղծությանը նախորդեց նրա անդրանիկ ժողովածուի մասին գրախոսությունը, որի հեղինակն էր Լևոն Մանվելյանը։ «Մուրճին» է պատկանում Թումանյանի տաղանդի զարկերակը գտնելու, նրա պոեզիայի ժողովրդային ուղղությունն առաջինը վերհանելու և բարձր գնահատելու պատիվը (հիշենք, որ իր գրական ճաշակով հպարտացող «Մշակը» քամահրանքով էր խոսում «Մուրճի» բանաստեղծների, այդ թվում նաև Թումանյանի մասին)։ Ահա ինչ էր հաստատում ամսագիրը. Թումանյանը «նման չէ ոչ մեր հին, ոչ նոր բանաստեղծներին, նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրույն է, նա մի տեսակ նորություն է մեզ համար։ Այդ առանձնահատկությունը ժողովրդական ստրոն է, որ և կազմում է նրա վիպական ոտանավորների իսկական զարկերակը։ Եվ իրավ, ցույց տվեք մեկին, որ այնպես սիստեմատիկաբար և այնքան հաջող կերպով ոտանավորների նյութ շինած լինի հայ գյուղացու կյանքը[17]։

Թումանյանի բանաստեղծությունների երկրորդ հատորի առթիվ «Մուրճում» հանդես եկավ Ղազարոս Աղայանը, որը գրողի սուր հոտառությամբ զգացել էր նոր ծաղկի բուրմունքը, նրան սնուցող հողն ու աբմատը. «Վերջին ժամանակներս մեր գրականության նորատունկ բուրաստանի մեջ մինը մյուսի ետևից դուրս եկան նոր-նոր ծաղիկներ. նորերումս փթթեց մի նոր ծաղիկ ևս, անուշահոտ և համեստ, ինչպես վճիտ աղբյուրների ափերին բուսած մանուշակը Գուգարաց աշխարհում։ ...Մեր բանաստեղծը— Հովհաննես Թումանյանը— մեզ «Անուշ» բանաստեղծություն տալու համար՝ ծնվել ու սնվել է այդ անուշ երկրումը[18]։

---

16 «Մուրճ», 1891, № 4, էջ 55։
17 «Մուրճ», 1891, № 1, էջ 96։
18 «Մուրճ», 1892, № 3, էջ 457։

Այս բոլորից հետո ցավով պիտի արձանագրել այն տխուր փաստը, որ Արաքսիանյանի և «Մուրճի» հրատարակիչ Փիլիպոս Վարդազարյանի միջև ծագած կոնֆլիկտի պատճառով 1893 թ. վերջերին ամսագրից հեռացավ նաև Հովհաննես Թումանյանը: Դա հավասարազոր կորուստ էր և՛ խմբագրի, և՛ բանաստեղծի համար: Ամսագիրը զրկվեց իր փնտրած և գտած պոետից, իսկ Թումանյանը՝ այն ամբիոնից, որտեղից դարավերջին ամենից ավելի ուժգին էր հնչում դեմոկրատ գրողների ձայնը:

«Մուրճի» ընթերցողները երկար ժամանակ կզգային Թումանյանի ժողովրդային երգերի պակասը, եթե ամսագրի էջերում չերևար Ավետիք Իսահակյանի անունը, որը եկավ ժողովրդային պոեզիայի գոհարներով զարդարելու ամսագրի էջերը: Իսահակյանի և Թումանյանի մուտքը գրական ասպարեզ, որ համարյա միաժամանակ էր, նաև միանման եղավ: Նրանք գրական անդաստանում միանգամից բարձրացան իբրև երկու գագաթներ, որոնց վերապահված էր ցոլացնելու մեր ժողովրդային և ազգային պոեզիայի բարձունքները: Ինչպես «Բանաստեղծություններ» գրքույկը՝ Թումանյանին, այնպես էլ «Երգեր ու վերքեր» փոքրիկ ժողովածուն, որ լույս տեսավ 1898 թվականին, միանգամից ժողովրդական բանաստեղծի համբավ բերեց երիտասարդ Իսահակյանին: Այդ համբավը բերնեբերան անցնող հիացմունքի խոսք չէր միայն՝ ծնված նրա բանաստեղծությունների ընթերցումից, այլ ժամանակի գրական քննադատության հաստատուն կարծիքն էր: «Մուրճը» ոչ միայն խմբագրության դռները լայն բացեց երիտասարդ բանաստեղծի առջև՝ բոլոր համարներում տեղ տալով նրան, այլև շտապեց իր ուրախությունը կիսել ընթերցողների հետ, գրախոսություն տպագրելով նրա բանաստեղծական առաջին ժողովածուի մասին (հեղինակ՝ Ն. Աղբալյան): Սա սովորական հերթական գրախոսություն չէ հերթական գրական նորույթի մասին: Կռահված է գրական իրադարձության ամբողջ նշանակությունը, որն իր հետ բերում էր խոսուն վերնագրով փոքրիկ գրքույկը: Իսահակյանը միանգամից կանգնեցվում է մեծ բանաստեղծների համար նախորոշված պատվանդանին:

Ահա կարդանք գրախոսականը, թեկուզ տող ընդ մեջ. «...փոքրիկ գրքույկում ցողի նման փռված են հրաշալի պատկերներ, խորը, դուրս ցցված, փայլուն ու կոկ, ...մի հիանալի ցուցասրահ է, ուր աչք են ծակում բազմաթիվ բույր ու երանգ ունեցող շլացուցիչ պատկերներ:... այսպիսի պայծառ երևակայություն ամեն բանաստեղծի չի վիճակվում:...

Այսպիսի լեզու մեր բանաստեղծներից ոչ ոք չունի և չի ունեցել,... մարդու աչքը շլանում է մայրենի լեզվի այդ հարստությունից:... Նա կարծեք հալվում է ժողովրդի մեծ սրտի ու հոգու մեջ և այլևս նրան անկարելի է ջոկել ժողովրդի մարդուց, ...բանաստեղծն իր կախարդի գավազանով փշրում է բոլոր պատնեշները, ջարդում է բոլոր պատերը և մեզ ձուլում է մեր մեծ մոր, մեր հարազատ ժողովրդի հետ: ...Այստեղ երևան է գալիս բանաստեղծի մի նոր հատկությունը՝ ժողովրդականությունը, որը նրա ընդհանուր բնագիծը չէ, բայց բնագծի ամենաթանկագին ու կարևոր մասն է, ...ինչո՞ւմն է այդ ժողովրդականությունը. նրա այն հատկության մեջ, որ կարողանում է ժողովրդի պես զգալ, նրա սրտով ապրել: Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի պես զգալ. այդ նշանակում է համանման հոգեկան դրություններում զգալ այն, ինչ կզգա ժողովրդի մարդը. սիրում եք դուք թե ատում, վիշտ կա ձեր սրտում թե ուրախություն, կորցրած սերն եք ողբում թե խանդաղատանքով եք լցված, երբ դուք զգում եք այն, ինչ կզգա ժողովրդի մարդը, ապա դուք ժողովրդի պես եք զգում և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են՝ ձերը մնալով»[19]:

Թվում է, թե սա հայ մեծ բանաստեղծի անցած երկար ու բազմաբեղուն ճանապարհի հանրագումարն է, մինչդեռ նրա բանաստեղծական բեմելի ողջույնն է, գրված նրա գրական երախայրիքի պայծառ բնկալմամբ և, մանավանդ, նրա ստեղծագործական գալիքի հստակ կանխատեսմամբ: Սա ժողովրդական բանաստեղծի ծննդյան ավետիսն է:

Իսահակյանի բանաստեղծական տաղանդի ձևավորումը դուգադիպեց հայ ժողովրդի տառապալից պատմության ամենամղձավանջային տարիներին: «Ժողովրդի պես զգացող» բանաստեղծի սրտում դառնադետ ժամանակը լեռնացնում է ցասում և ատելություն ժողովրդի իրավունքները բռնադատող ուժերի նկատմամբ: Ընդվզման ոգին է դառնում նրա բանաստեղծությունների տիրական շունչը: Մարդկային սովորական չափ ու կշռի մեջ չեն տեղավորվում նրա ո՛չ սերը, ո՛չ ատելությունը: Բանաստեղծի հոգին սավառնում է կոսմիկական տարածություններում, նրա ղրույցը աստղերի ու Արևի հետ է: Տիեզերքը նրան պատկերանում է ահռելի մի զանգ, իսկ իր հոգին՝ նրա լեզվակը: «Մուրճ» ամսագրում տպագրվում է Իսահակյանի «Տիեզերական զանգ» բանաստեղծությունը,

---

19 «Մուրճ», 1898, № 6, էջ 840—855:

որտեղ խտանում և կերպավորվում է պոետի ինքնաճանաչումը: Ահա բանաստեղծության առաջին տունը.

...Եվ ես ապատում և անապատում
Լուռ թափառում եմ՝ հոգիս ծանրացած
Անլույծ խոհերով, վշտով անպատում
Եվ տենչանքներով տիեզերատարած:
Եվ հանկարծորեն՝ պարզ ու աննսեմ,
Ես իսկ զգում եմ, տեսնում եմ ահա—
Տիեզերքը ողջ— մի մեծ անհուն զանգ,
Եվ հոգիս— նրա լեզվակը վսեմ:[20]

Բանաստեղծը գալիս է «նոր կտակներով, նոր պատգամներով» արթնացնելու քնած ամբոխին: Բայց ինչո՞ւ է բանաստեղծությունն սկսվում կախման կետերով, արդյոք ինչ-որ ասելիք դուրս չի՞ մնացել... Այս հարցի պատասխանը հետաձգենք մինչև ցարական գրաքննության կողմից մերժված «Մուրճի» նյութերին ծանոթանալը (տե՛ս էջ 194):

«Մուրճը» արվեստի ճանապարհ հանեց ևս երկու անուն՝ Դերենիկ Դեմիրճյան և Հակոբ Հակոբյան: 90-ական թվականները նրանց գրական մանկության տարիներն են, և հատկանշական է, որ «Մուրճը» նրանց զորավիգ կանգնեց գրողների համար բախտորոշ այդ շրջանում, չնայած նրանց ստեղծագործական հասունացման պտուղները բաժին էին ընկնելու այլ սերունդների. Հակոբյանը դարձավ հայ պրոլետարական գրականության հիմնադիրը, իսկ Դեմիրճյանը՝ սովետահայ ականավոր գրող:

Դեմիրճյանի տաղանդի հասունացումը տեղի չունեցավ Թումանյանի և Իսահակյանի նման՝ միանգամից: Տասնյոթամյա բանաստեղծին նեցուկ եղավ «Մուրճ» ամսագիրը, տպագրելով նրա մոտ չորս տասնյակ բանաստեղծությունները: Դեմիրճյանի բանաստեղծական առվակը չէր ձուլվում Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի նոր՝ ժողովրդային պոեզիայի հզոր մայր-գետին: Այդ առվակը դեռ ճանապարհ էր որոնում: Դեմիրճյանի բանաստեղծությունների լիրիկական հերոսը «մտածող անհատի» բունեն է արտահայտում բուրժուական հեղձուկ իրականության դեմ, նրա անհեռանկար, հուսահատ ճիգը, որը վաղ թե

20 «Մուրճ», 1900, № 2, էջ 168:

ուշ պիտի հասկանար իր թուլության աղբյուրը և թեքվեր դեպի ուժի միակ կենսատու աղբյուրը՝ ժողովուրդը։

Հակոբ Հակոբյանն իր հուշերում բազմաթիվ ջերմ տողեր է նվիրել «Մուրճին» և նրա խմբագրին։ Նա պատմում է «Մուրճում» ստացած իր գրական առաջին մկրտության մասին, որտեղ նրա բանաստեղծությունների տպագրվելը իսկապես բախտորոշ նշանակություն ունեցավ։

«Թիֆլիս մտնելով,— հիշում է Հակոբյանը,— առաջին հոգսս եղավ մտնել Ավետիք Արասխանյանի մոտ և տալ նրան տպագրության համար Հայրիկի քարոզը։...

Ճառ-քարոզը ձեռքիցս առնելով, պենսնեի տակից աչքով անցրեց Արասխանյանը ու հարցրեց.

— Ուրիշ բան չունի՞ք գրած կամ չե՞ք գրում։

— Ունիմ ոտանավորներ,— պատասխանեցի ես ու ծոցիս գրպանից հանեցի ծոցատետրս, որը միշտ հետս էի ման ածում։

— Տվեք, խնդրեմ,— սևեռեց նա աչքերը ծոցատետրիս,— թերևս մի բան գտնվի «Մուրճի» համար։

Ես պոկեցի երկու ոտանավոր։

— Կնայեմ,— ասաց նա, ու ձեռքը սեղմելով հեռացա խմբագրությունից, որ գտնվում էր Վելյամինովսկայա փողոցում՝ № 5։

Մի օր մտնում եմ Մարդասիրական ընկերության գրադարանը և՝ կարո՞ղ եք երևակայել իմ երջանկությունը, երբ՝ թերթելով «Մուրճի» հոկտեմբերի ամսաթերթը՝ № 10, և առաջին անգամ կյանքումս տեսնում տպագրված «Հայրիկը և գյուղատնտեսական ինտելիգենցիան» վերնագրով նյութս, այլև «Ոխտ բարեկամության» բանաստեղծությունս. կարդում եմ ու աչքերիս չեմ հավատում, նորից ու էլի նորից կարդում, մինչ փակում եմ գրադարանի դուռը։

Նոյեմբերի «Մուրճ» ամսագրում, № 11, ես գտնում եմ իմ երկրորդ բանաստեղծությունս՝ «Նվեր N N-ին» վերնագրով և այս անգամ որոշում եմ, որ իմ կոչումս գրելն է, բանաստեղծ լինելը»[21]։

Այսպես «դեմոկրատ-խմբագիրը» օգնում է Հակոբ Հակոբյանին գտնելու իրեն իբրև բանաստեղծի։ Ինչ վերաբերում է «Մուրճում» Հակոբյանի տպագրած բանաստեղծություններին, ապա դրանց մասին համեստորեն է խոսում հենց ինքը՝ բանաստեղծը։ Նա առանձնացնում է միայն մեկը՝ հանրահայտ «Նամուս և ղեյրաթը», դիտելով այն իբրև

---

21 Հակոբ Հակոբյան. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1958, էջ 50—52։

կամուրջ՝ «անցնելու կյանքի մյուս ափը», անկյունաքար՝ իր հետագա գրական գործունեության, արդեն որպես պրոլետարական գրողի. «Առաջին անգամն էր, կարծեմ, որ լսվում էին հայ բանաստեղծության մեջ մուրճ ու սալի անուններն ու զարկը, բանվոր, արհեստավոր խոսքերը, աշխատաճիի նոր ձևր»[22]։

Հակոբյանը մեծ համակրանքով է խոսում «դեմոկրատիկ» «Մուրճի» և նրա «ամենաչքավոր» խմբագրի, ամսագրի շուրջը խմբված մտավորականների մասին. «Իդեական մի գրուպա էր «Մուրճի» շուրջը ժողովված աշխատակիցների այդ խումբը, որոնք ամսագրում աշխատում էին բոլորովին ձրի, առանց հոնորար ստանալու»,— նշում է Հակոբյանը, թվարկում մեզ արդեն ծանոթ անուններ, չմոռանալով շեշտել, որ «Մուրճի» «դարբնոցում» են կուփվել նրանցից շատերը, այդ թվում նաև ինքը։ Հակոբ Հակոբյանը ևս հաստատում է այն իրողությունը, որ «Մուրճի» հրապարակ գալու պահին «Մշակը» կորցրել էր հայ կյանքի վրա ունեցած իր հեգեմոնիան և դեմոկրատ գրողներն ապաստանում էին «Մուրճում»։ «Մշակը», որ Գր. Արծրունու օրով իմ միակ սիրելի հայ լրագիրն էր,— գրում է նա,— «Մուրճի» օրից անցավ հետին պլանը, շնորհիվ նրա ազգայնական, տենդենցիոզ ուղղության, այլև շնորհիվ նրա թայֆայական կրեատինիզմի։ Եվ հայ դեմոկրատիկ «Մուրճն» էր, ուր ես կարող էի արտահայտվել»[23]։

1893 թ. Հակոբյանն սկսեց աշխատակցել «Մուրճին» և արժանացավ այնպիսի վստահության ու մտերմության, որ երբ խմբագիրն ամռանը բացակայում էր Թիֆլիսից, նրան էր հանձնարարում ամսագրի հրատարակության գործը։

Մենք նշեցինք «Մուրճի» այն պոետներին, որոնք հատկանշում են գրական շարժման հաղթանակող՝ դեմոկրատական ուղղությունը, նրա զարգացման գլխավոր միտումը։ «Մուրճում» տպագրվել են նաև այլ բանաստեղծներ, որոնց անունները մնում են լոկ իբրև ամսագրի պատմության սևիկանության՝ Լեոնց (Նազարբեկ), Արշալույս Մխիթարյան, Արամ Ջարդի, Ջավադ Բալուզյան և ուրիշներ, որոնց պոետական կյանքի տևողությունը համընկնում է աշխատակցած պարբերական օրգանի հրատարակության տարեթվերին։ Ամսագրի էջերից հնչե-

---

22 Նույն տեղում, էջ 58—59։ Տե՛ս նաև ԳԱԹ, Հակոբ Հակոբյանի ֆ., գ. 129։

23 Նույն տեղում, էջ 58։ Տես՛ նաև «Հակոբ Հակոբյան (կենսագրական)», Թիֆլիս, 1923, էջ 15—17։

ին նաև անկումային, հոռետեսական տրամադրություններ, որոնք դարավերջին սաստկացած ռեակցիայի անդրադարձն էին պոեզիայի մեջ, առանձին բանաստեղծություններում քարոզվեցին քրիստոնեական հնազանդության, չարին չհակառակվելու ռեակցիոն գաղափարներ։

«Մուրճի» արձակի բաժինը նույնպես մեր առջև գծում է քննադատական ռեալիզմի անցած ճանապարհը, որը հարթ և ուղղագիծ չի եղել։ Քննադատական ռեալիզմը հենց գրական այն ուղղությունն էր, որն ամենից ավելի էր հարմարում «Մուրճի» նպատակամղումներին՝ վեր հանել և քննադատել ժամանակակից հասարակարգի թերությունները ու խոցերը, ուղիներ գտնել դրանք վերացնելու համար։ «Մուրճի» էջերում մի կողմից տեսնում ենք այդ հասարակարգի մանրադիտակային ընկնում, որտեղ գրողը առանց ընտրություն անելու մտահոգության քրքրում է կյանքի նույնիսկ ամենաստորին ծալքերը. ապացույց՝ Ատրպետի «Հև Կարապետ» վեպը և Լեոյի «Կորածներ» վիպակը։ Տեսնում ենք նաև մանրակրկիտ ճշգրտությամբ և համբերությամբ կապիտալիզմի ավերածությունները մերկացնող փաստերի ժողովում, երբ դրանք ընթերցողին են ներկայացվում մեղադրողի կրքոտ ճառով ու մերկապարանոց բարոյախոսությամբ. ապացույց՝ գյուղագրական գրականությունը, որը դարավերջին իր բարձրակետին հասավ «Մուրճի» էջերում։ Եվ մյուս կողմից՝ ախտերը պարզելուց հետո դեղամիջոցների որոնում, որը վերջին հաշվով հանգում է հայ լուսավորված մտավորականության ազգօգուտ գործունեությանը, մի բան, որ «Մուրճի» ամբողջ հրապարակախոսության մեխն է կազմում։ Այստեղ է, որ «Մուրճին» մեծ ծառայություն է մատուցում արձակագիր Շանթը, որը չափածոյից արձակին անցնելով, բնավ չէր փոխել իր գրիչը, հավատարիմ էր մնացել ռոմանտիզմի իր նախասիրած ուղղությանը։ Պետք է ասել, որ Շանթի ռոմանտիզմն ամբողջովին սնվում էր «Մուրճի» սոցիալ-հասարակական ծրագրից։ Գրողը, ինչպես և ամսագրի խմբագիրը, հավատում էր գիտության, լուսավորության ամենազոր ուժին, որը վերափոխելու էր անարդար հասարակությունը։ Սակայն առաջ նայելով, նա անզոր էր տեսնել սոցիալական զարգացման դիալեկտիկան, որը նորի ծնունդը պայմանավորում է հնի՝ այսինքն բուրժուական հասարակարգի կործանմամբ և ոչ թե նրա բարեփոխմամբ։

Հայ մտավորականության դերի հարցին են նվիրված «Մուրճում» տպագրված Շանթի բոլոր վեպերը. եթե «Երազ օրեր» վիպակում

հանրօգուտ գործունեության մասին երազող, Տուրգենևի «Նախօրեին» վեպում հոգևոր սնունդ և գործունեության ծրագիր որոնող նոր ծնվող «երունդն է պատկերված, ապա «Դուրսեցիներ» վեպում՝ արդեն գործունեության ասպարեզ ելած երիտասարդությունն է, անկոտրում հավատով, որ տգիտության դեմ լուսավորության հաղթանակով պիտի վերանա չարիքը։ Հասարակական հանրօգուտ գործունեության մեջ կնոջ մասնակցության, նրա ազատագրության պահանջին են հանգում Շանթի մյուս վիպակները՝ «Վերժին» և «Դերասանուհին»։ Նոր ժամանակներում հոգևորականության դերի հարցն է շոշափված «Դարձ» վեպում։

Շանթի վեպերի ծրագրային բնույթը հնարավորություն էր ընձեռում «Մուրճի» քննադատներին, դրանց գրախոսությունն առիթ դարձնելով, մեկ անգամ էլ խոսել ժամանակի հուզող հարցերի մասին, գործունեության կոչել երիտասարդությանը։

«Դուրսեցիներ» վեպը «Մուրճը» գնահատում է որպես «արձագանք մեր երիտասարդության խլրտումների, նրա ցանկությանը՝ մի լուրջ հասարակական գործի կպչելու, նրա դեռ թույլ կրիտիկական քայլերի»[24]։ Հետաքրքիր է, որ «Վերժին» վեպի մեջ գրախոսողը փնտրում է ուս մեծ արձակագիր Տուրգենևի ազդեցությունը և վեպը դիտում է իբրև «Ելենայի մի վարիացիան»[25], որտեղ հերոսուհին ծրագրում է գնալ Եվրոպա, կրթություն ստանալ և իրեն նվիրել մատաղ սերնդի դաստիարակության գործին։

Ուշադրության արժանի է քննադատության մի դիտողությունը. «Շանթին պակասում են մեր կյանքի «պատճառ-երևույթների» անմիջական արդյունք «հետևանք-երևույթների» և անձնավորությունների տիպար պատկերումը»[26]. պետք է ավելի լավ ուսումնասիրել կյանքը և անցնել իրական՝ կոնկրետ կյանքին։ Այլ կերպ ասած, հեղինակին կոչ է արվում ռոմանտիզմից անցնել ռեալիզմին, որի մեթոդը միայն հնարավորություն է ընձեռում բացահայտել երևույթների հետևում թաքնված պատճառները։

Դովելի է, անշուշտ, ռեալիզմին նախապատվություն տալու «Մուրճի» ձգտումը, որը պետք է օգներ խորանալու պատճառ-երևույթների մեջ, բացելու հասարակական կյանքի խճճված հանգույցները և այդ

---

24 «Մուրճ», 1896, № 7—8, էջ 1006։

25 «Մուրճ», 1898, № 4, էջ 526։

26 Նույն տեղում։

հիմքի վրա մշակելու մտավորականության գործունեության ծրագիրը։ Իսկ որոնման ջանքեր անում էին «Մուրճի» նաև այլ հեղինակներ. Ա. Նամալյանը (Ա. Քալանթար) «Պատրիկյանի նամակներ» պատմվածաշարում փորձում է պատկերել հայ մտավորականության տարբեր խավերի ներկայացուցիչներին։ Սակայն դա մնում է որպես լոկ ցանկություն։ Դրա փոխարեն մտավորականների աղոտ պատկերների կողքին պատմվածաշարում շատ որոշակի գծվում է հեղինակի՝ Ա. Քալանթարի դիմադարձը նարոդնիկական հայացքներից դեպի լիբերալիզմ։ Երբ պատմվածաշարը լույս է տեսնում առանձին գրքով (պատմվածքներից յոթը տպագրվել էր «Մուրճում»), խմբագրությունում մի քանի գրախոսական է ստացվում, որոնցից Արասխանյանը նախապատվությունը տալիս է Պ. Մելքումյանի հոդվածին։ «Ո՞րն է Նամալյանի աշխարհայեցության հիմնական իշխող գիծը,— հարցնում է քննադատը և պատասխանում,— Նամալյանը հայտնի մտքով ազատամիտ է, միայն չափավոր և ոչ միշտ հաստատ, այլ տատանվող ու անորոշ», «Պ. Նամալյանը խույս է տալիս վճռական կարծիքներից, նա դժվարանում է անպայման կամ համակրել կամ հակակրել որևէ դաշափարին»[27]։

Այս տողերի մեջ ընդգծված է լիբերալիզմի անհետևողականությունն ու անվճռականությունը, և հենց այս քննադատությունն է դուր եկել խմբագրին, որը հակված էր դեպի արմատական ազատամտականություն։

Նամականու փոքրածավալ ձևը, տաղանդի պակասը և լիբերալ սահմանափակությունը հնարավորություն չէին ընձեռել Նամալյանին տալու ժամանակի մտավորականության ռեալ պատկերը։ Ճիշտ է վարվում «Մուրճի» հեղինակներից Լևոն Մանվելյանը՝ մտավորականության կյանքը պատկերելու համար վերցնելով լայն կտավ։ Նրա «Խորտակված կյանք» վեպի գլխավոր հերոսը մտավորական է, արվեստագետ։ Այս ընտրությունը հնարավորություն է տվել գրողին մերձենալու հետաքրքիր պրոբլեմներից մեկին՝ արվեստագետի ճակատագրին բուրժուական իրականության մեջ և հասնելու ճշմարիտ ու ընդհանրացնող եզրակացության, որը խտացրել է վեպի վերնագրում։ Սակայն, ճշմարիտ իրողությունը, որ բուրժուական իրականությունը խորտակում, կործանում է արվեստագետին, հեղինակը չի կարողացել դեղարվեստական համոզկերությամբ պայմանավորել միջավայրով։ Նշենք սակայն, որ

---

27 «Մուրճ», 1893, № 6, էջ 961—965։

Հեղինակին հաջողվել է ժամանակի մամուլում տիրող բարքերը խտացրած ձևով տեղափոխել վեպ, ցույց տալ անսկզբունք բանակովի ամբողջ վնասակարությունը։ Եվ պատահական չէ, որ դա արել է «Մուրճի» գլխավոր աշխատակիցներից մեկը, հենց «Մուրճի» էջերում։ «Մուրճը» իր վրա էր առել ժամանակի գրական բարքերը մաքրելու համարձակությունը։ Մանվելյանը վերապատմում էր իր աչքով տեսածը։ Վեպի այդ էջերն այսօր մամուլի պատմության ուսումնասիրման համար վավերագրերի արժեք ունեն։

Հայ մտավորականության կյանքի պատկերման գործում մի քայլ ևս արված էր։ Հաջորդ և վճռական քայլն անում է Շիրվանզադեն, «Մուրճին» տրամադրելով իր «Արսեն Դիմաքսյան» վեպը, որտեղ հեղինակին հաջողվել էր ոչ միայն լայն ֆոնի վրա տալ դարավերջի հայ մտավորականության տարբեր խավերի իրական պատկերը, այլև նրանց ծնունդը պայմանավորել սոցիալական միջավայրով։ Հակված ենք կարծելու, որ Շիրվանզադեն իր նոր վեպի տպագրության համար ոչ թե պատահական, այլ մտածված կերպով է ընտրել «Մուրճ» ամսագիրը, որին նա մինչ այդ չէր աշխատակցել։ Վեպում երկսայրի սրով հարվածի տակ էր առնված դարավերջի և՛ լիբերալ, և՛ պահպանողական մտավորականությունը։ Պատահական չէ, որ մամուլի երկու ուղղության օրգաններն էլ սվիններով դիմավորեցին այս վեպը։ Նշանակում է «Արսեն Դիմաքսյանը» կարող էր հնչել հենց «Մուրճի» էջերում, որը հավատարիմ էր ազատամտականության նախաստեղծ սկզբունքներին և հեռու ազգային սահմանափակությունից։

«Մուրճի» արձակագիրների մեջ առանձնանում է Վրթանես Փափազյանը՝ հայ դեմոկրատական գրականության կարկառուն ներկայացուցիչներից մեկը։ Նրա աշխատակցությունը «Մուրճին» բերում էր ոչ միայն դեմոկրատական բնութագիր, այլև հարստացնում էր ամսագրի ժանրային տեսականին. վեպ, պատմվածք, պատկեր, զրույց, նամակ, ուղեգրություն, հոդված՝ ահա այն ժանրերը, որով հանդես է եկել Փափազյանը «Մուրճում»։ Իբրև մտածող նա իր վրա կրում է ապրած բարդ ու հակասական ժամանակների կնիքը և իբրև գեղագետ՝ ռոմանտիզմից ռեալիզմին անցնելու որոնման շրջանի յուրահատկությունը։ Սոցիալական չարիքի ու բռնության դեմ բողոքի թեման է ընկած «Մուրճում» տպագրած նրա ստեղծագործությունների հիմքում՝ «Խաթ-Սաբա», «Լուրդա-լուր», «Քար չարդողները», «Արտը», «Անհագը» և այլ պատմվածքներ։

Պետք է ասել, որ «Մուրճի» գրախոսության բաժնում Փափազյանի ստեղծագործությունը սկզբում ճիշտ գնահատականի չարժանացավ։ Նկատի ունենք Ա. Քալանթարի «Վ. Փափազյանի պատկերները» քննությունը։ Փոխանակ բացահայտելու գրողի գեղարվեստական մտածողության յուրօրինակությունը, որը կարողանում էր ռոմանտիզմի ձևերի միջոցով հասնել ռեալիստական ճշմարտացիության, քննադատը նրա ստեղծած կերպարները համարում է «խրտվիլակներ ու արձաններ», որոնք «տիպիքական» չեն։ Քննադատական ռեալիզմի՝ «տիպական կերպարներ տիպական հանգամանքների մեջ» սկզբունքի հաղթանակի համար խմբագրության ճիգերը գնահատելի են, բայց այս դեպքում ճիշտ չէր ընտրված հարվածի նշանակետը։ Փափազյանի հետագա ստեղծագործությունը եղավ դրա ապացույցը, և «Մուրճը» շտապեց ուղղել իր սխալը՝ նոր գրախոսության մեջ վեր հանելով «կոնտրաստներին» լեզուն սիրող գրողի ստեղծագործության արժանիքները, ընդգծելով բարձր գաղափարայնությունը, «տենդենցիոզ» ուղղությունը. «Դրանով է նա սիրելի ընթերցողներին և դրանով է նա դեր խաղացել ու խաղում հասարակական գիտակցությունը բարձրացնելու գործում»[28]։

«Մուրճին» աշխատակցած հայ արձակագիրներից պետք է առանձնահատուկ նշել նաև Ղազարոս Աղայանի անունը, որովհետև նա գրական աշքի ընկնող նորույթներ բերեց ամսագրին։ Դրանցից մեկին՝ «ժամանակակից ատենախոսությանը» արդեն ծանոթացանք, իսկ մյուսը Յուրի Վեսելովսկու առաջարկով գրած «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» վերնագրով ընդարձակ ինքնակենսագրությունն է, որը նաև յուրատեսակ ժամանակագրություն է՝ անցյալ դարի 50—80-ական թվականների գրական-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն դեպքերի ընդգրկումով, ինչպես նաև՝ հուշագրություն այն դեմքերի մասին, որոնց հետ շփվել էր ականավոր հայ մանկավարժը, գրողը, հասարակական գործիչը իր երկարամյա բազմաբեղուն գործունեության ընթացքում։ Պատմելու մեծ վարպետը, որն իր այդ շնորհքը կատարելության էր հասցրել իբրև հեքիաթագիր, այս անգամ հանդես է գալիս որպես իրական դեպքերի և դեմքերի շատ կենդանի և հյութեղ նկարագրող։

Այն, որ «Մուրճի» գրական քաղաքականությունը ամբողջովին բխում էր նրա հասարակական ծրագրերից, ավելի քան ցայտուն երևում

---

28 «Մուրճ», 1897, № 2—3, էջ 333։

է «ժողովրդագետ գրողներին» նախապատվություն տալու իրողության մեջ, որոնք իրենց ստեղծագործության նյութ էին դարձրել գյուղաշխարհը: Հենց այստեղ էլ «Մուրճը» տեսնում էր մտավորականության-ժողովուրդ կապի իրացման իր ծրագրերի կենսագործման հնարավորությունը: Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ ամսագրի առաջին համարի գրական բաժինը բացվեց հենց Պերճ Պռոշյանի «Յնցեր» վեպով, իսկ ապա տպագրվեցին նաև «Բղդե» և «Հունոն» վեպերը: Եթե ամսագրի «Գյուղափրկիչ» ծրագրին ծանոթանալուց հետո չենք կարող ասել, թե Արասխանյանը կիսում էր Պռոշյանի՝ ազգային-պահպանողական միջավայրում սնված հետահայաց հասարակական իդեալը, որը փրկության խարիսխ էր գցում նահապետական անցյալում և «արդար քննիչի» ու «գաղափարական ավազակի» միջոցով վրեժ լուծում գյուղական ցնցերից, ապա կարող ենք ասել, որ Պռոշյան-ստեղծագործողի ռեալիստական խոր ճշմարտացիությամբ պատկերած քայքայվող, հինը կորցրած ու նորը չգտած գյուղը պետք էր Արասխանյանին, որպեսզի մատնացույց աներ՝ ահա ա՛յս գյուղին պետք է օգնենք: Իսկ ինչպե՞ս: Այս հարցի պատասխանը մենք տեսանք «Մուրճի» հրապարակախոսական հոդվածներում և նույն ծրագրի գեղարվեստական մարմնավորումը տեսնում ենք «Մուրճի» գյուղագիրների ստեղծագործություններում[29]: Հետազոտել և ճանաչել գյուղը՝ այն հեղաշրջելու համար՝ այս խնդրին էր հետամուտ «Մուրճի» հրապարակախոսությունը և այդ խնդրի շուրջն էր պտտվում «Մուրճի» գյուղագրական գրականությունը: Չկարողանալով հասնել քննադատական ռեալիզմի չափանիշներով հանգամանքների և կերպարների լայն սոցիալական ընդհանրացման, գյուղագրական ռեալիզմը փաստագրական իր նեղ սահմաններն աշխատում էր լայնացնել բարոյախոսության զորությամբ, երբ հեղինակը մի կողմ էր դնում դեղագետի գրիչը և ձեռքն առնում հրապարակագրինը: Այնպես որ, գյուղագրական գրականությունը կարելի է դիտել ոչ միայն որպես «Մուրճի» հրապարակախոսության գեղարվեստական մարմնացում, այլև նրա ուղղակի շարունակությունը:

Հայ նարոդնիկ գյուղագիր, գյուղական ուսուցիչ Ազարիա Ադելյանի անունն անխզելիորեն կապված է «Մուրճի» հետ: Իր մեկ տասնյակի

---

29 «Մուրճի» գյուղագրական գրականությունը հիմնավորապես վերլուծված և արժեքավորված է Կ. Դանիելյանի «Հայ գյուղագրությունը XIX դարում» աշխատության մեջ, ուստի այդ հարցին մենք կանդրադառնանք թռուցիկ՝ ամսագրի պատմությունն ամբողջացնելու անհրաժեշտության սահմաններում:

հասնող պատմվածքները և «Տգիտության զոհեր» վեպը նա տպագրեց «Մուրճում»։ Այդ ստեղծագործություններից մեր առջև հառնում է ոչ միայն գյուղագիր գրողը, այլև նարոդնիկ-գործիչը, որը պատմում է իր ապրածն ու տեսածը, ժողովրդասիրության կենդանի օրինակ տալիս։ Նարոդնիկական սահմանափակ հայեցակետը, անշուշտ, խանգարում է գրողին տեսնելու երևույթների սոցիալական պատճառները, բայց ճանաչողական հսկայական նյութը, որը ներկայացնում է նա, ուշիմ ընթերցողին կարող էին բերել ավելի արմատական եզրակացությունների, քան հեղինակինն է՝ իտացված վեպի վերնագրում՝ «Տգիտության զոհեր»։

Այստեղ ընթերցողին օգնության է գալիս «Մուրճի» քննադատը, ոչ միայն արժեքավորելով գրական երկը, այլև լրացնելով, սրելով հեղինակի առաջ քաշած հարցերը, նաև՝ առարկելով։ Ադելյանի վեպի առթիվ ամսագիրը տպագրում է «Ղոշաղը իբրև տիպար հայ վիպագրության մեջ» գրախոսությունը, որտեղ ոչ միայն գնահատված է հեղինակի ներկայացրածը, այլև բացահայտված է նրա կողմից չհոահվածը։ «Տգիտությունն է, որի պատճառով մարդը իր համար կորստաբեր հանգամանքներ է ստեղծում և դառնում նոցա գերին։ Վերջը թակարդի մեջ ընկած թռչունի պես թպրտալով, նա լինում է այդ հանգամանքների զոհը»— մեջբերելով վեպի այս բնաբանը, «Մուրճի» քննադատը կտրուկ հարցով մերկացնում է նման հարցադրման սնանկությունը. «Միայն տգիտությո՞ւնը։ Իսկ ինքը տգիտությունը ինչի՞ հետևանք է»։ Հարցը առկախ չի թողնված, թեև պատասխանն ընդհանուր է. «Ինքը տգիտությունը ենթակա է տնտեսական պայմանների ազդեցության»։ Ուղղակիորեն մատնացույց է արված վեպի թույլ կողմը. «Հեղինակն ընկել է թյուրիմացության մեջ, սխալ բացատրություն տալով իր վեպում նկարագրած երևույթներին. «ղոշաղությունը», որ տիրապետող դեր է խաղում վեպում, շատ քիչ է նրա ուշադրությունը գրավել. մի պատճառ, որով բացատրվում է գյուղական կյանքի երևույթների մի մեծ շարքը, նրա առաջ տեղի է տվել մի բացատրության, որ իսկապես ոչինչ չի բացատրում լիովին»[30]։ Քննադատի կողմից կռահված է գյուղագրի ռեալիզմի մեթոդի և աշխարհայացքի հակասությունը, երբ ճշմարտացի գույներով պատկերված երևույթին չի տրվում իր իսկական անունը, մատնացույց չի արվում չարիքի արմատը։ Հենց այդ բացն է գալիս լրացնելու քննա-

30 «Մուրճ», 1897, № 9, էջ 1260—1263։

դատը, գյուղական ցեցերի՝ «ղոչաղների», այսինքն բուրժուականացող գյուղում կուլակային տարրերի երևան գալու փաստի մեջ տեսնելով գյուղացու դժբախտությունների պատճառը։

Չի կարելի ասել, թե «Մուրճի» քննադատությունը անհետևանք ։ անցնում։ «Նոր հոգսի նեսից» պատկերում արդեն նկատելի է Ադելյանի՝ չարիքի արմատը փնտրելու ձգտումը։ Նարոդնիկական հովերով գյուղ եկած ուսուցչի առջև գյուղացին պարզ ու հասկանալի ճշմարտություն է դնում, որն ի չիք է դարձնում գավառական մտավորականի՝ լուսավորությամբ գյուղը անկումից փրկելու ջանքերը. «Մենք արմատից ենք հիվանդ, վարժապետ, աղքատ ենք, ապրուստներս դժվարացել է, ճար ունես սրա համար՝ արա...»[31]։ Ժողովրդի առաջադիմության ռեալ ուղիները «տնտեսական հարցի» ոլորտում փնտրելու Ադելյանի ձգտումներն անկատար մնացին վաղաժամ մահվան պատճառով։

Հայ նարոդնիկական մտավորականության ժողովրդանվեր գործունեությունը լայն կտավի վրա և ավելի ռեալ գույներով պատկերված է Բաբկենցի (Գաբրիել Մնացականյան) «Նորեկ» վեպում։ Ինքնակենսագրական փաստերից անմնդ առած այս վեպում մտավորականության հանրօգուտ գործունեության հեռանկարները որոնելու հեղինակի ազնիվ ձգտումը հանգում է բուրժուական իրականության մեջ այդպիսի գործունեության անհնարինությունը հավաստող տխուր եզրակացության։ Այն, ինչ կառուցում է ռոմանտիկ, իդեալիստ մտածողը, քանդում է ռեալիստ դրողը։ Սխալվում է, անշուշտ, «Մուրճի» գրախոսականում ամսագրի գլխավոր աշխատակիցներից մեզ ծանոթ Գ. Վարդանյանը վեպի գլխավոր հերոսի՝ Ալեքսանի մասին գրելով. «Դեպքերը պատահական կերպով շղթայվեցին, որոնք «Նորեկից» խլեցին գավառական արժանավոր գործչի անունը»[32]։ Ինչո՞ւ պատահական, դա շատ օրինաչափ էր և արտահայտում էր նարոդնիկական գաղափարախոսության փակուղի մտնելը և փլուզումը. չլինեին այս «դեպքերը», մեջտեղ էին գալու այլ «դեպքեր»։ Գրախոսն այսպես է գրում, որովհետև լիբերալ մտածելակերպը խանգարում է նրան նայել ճշմարտության աչքերին, և նրան դեռ պետք է իրեն ու ընթերցողներին օրորել պատրանքներով։ Հոդվածը վերջանում է եղրակացությամբ, թե հեղինակը «Նորեկի» «գաղափարական սիրով հիշեցնում է ինտելիգենտի պարտքը դեպի մեր

---

31 «Մուրճ», 1898, № 7—8, էջ 966։

32 «Մուրճ», 1897, № 6, էջ 865։

բարդ կյանքից ծագած խնդիրները»[33]: «Մուրճը» չէր կարող հրաժարվել գյուղական ինտելիգենցիայի հետ կապած իր հույսերից: Ուրեմն նա չէր ուզենա, որ ընթերցողը վեպի ընթերցումից զար այդ հույսերի խորտակման դատապարտվածության գաղափարին:

Այսպիսով, «Մուրճի» գրական քաղաքականությունը օրգանական շարունակությունն է կազմում ամսագրի ընդհանուր ծրագրի, ելնում է նրանից, հանգում նրան: Այն անառարկելիորեն վկայում է ամսագրի դեմոկրատական դիրքորոշումները, որոնք պայմանավորեցին հայ նոր գրականության զարգացմանը բերած ամսագրի աշքի ընկնող նպաստը:

«Մուրճին» աշխատակցած տարբեր հեղինակների առիթներով արդեն տեսանք, թե ամսագիրը ինչպիսի հոգատարությամբ էր շրջապատում գրական աճող սերնդին: Անմիջապես ավելացնենք, որ ամսագիրը որքան սրտացավ ու հոգատար էր տաղանդների նկատմամբ, նույնքան անզիջում ու խիստ էր ապիկար, բայց գրողի անուն վաստակելու հավակնությամբ տառապող մարդկանց հանդեպ: Միրզա Տեր-Սարգսյանի և Աղ. Մամիկոնյանի «ստեղծագործությունները» ամսագիրը որակում է «գրականական դիակներ»[34]: Դրանցից մեկին «թաղելու» հոգսն իր վրա է առնում երիտասարդ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը. խոսքը Պետրոս Մոճոյանի բանաստեղծական գրքույկի մասին է. «Այս գրքի մասին,— գրում է «Մուրճում» Թումանյանը,— ստիպում է խոսել ոչ թե արժանիքը, այլ այն հանգամանքը, որ լռությունը կխաբե հեղինակին և նա, իրան շարունակ բանաստեղծ համարելով, իզուր և նույնիսկ վնասակար աշխատանք կանի գրականության համար: Մանավանդ բանաստեղծի հռչակ ունենալու ցանկությամբ հիվանդացած է մեր երիտասարդների մի նշանավոր մասը, որոնք չնչին բացառությամբ, նույնքան զուրկ են բանաստեղծական բնատուր շնորհքից, որքան և Պ. Մոճոյանը»[35]:

«Մուրճը» հանդես է գալիս որպես իսկական գրականության բարեկամ, խրախուսում լավը, պախարակում վատը: Երբ 1897 թ. եր. Շահազիզը հրապարակեց Միքայել Նալբանդյանի կենսագրությունը, «Մուրճը» շտապեց գրախոսել գիրքը, այն դիտելով որպես մի լավ գործի սկիզբ, առաջին փորձ, որը կստիպի նոր սերնդի մարդկանց գրել «չնաշ-

---

33 Նույն տեղում, էջ 866:

34 «Մուրճ», 1891, № 5, էջ 652:

35 «Մուրճ», 1892, № 10, էջ 1485:

խարհիկ գործչի արժանավոր կենսագրությունը»[36]։ Իսկ ինչո՞վ չէր գոհացրել քննադատ Ս. Թառայանին գրախոսվող երկը։ Այն բանով, որ կենսագիրը «մեղադրում է Նալբանդյանին այնպիսի հատկություններին մեջ (անհանգիստ, անհաշիվ, հափշտակվող, մանրակրկիտ), որոնք ուղղակի Նալբանդյանի, ինչպես և յուրաքանչյուր տաղանդավոր անձնավորության էական հատկանիշներն են։ «Ինչպե՞ս կարող եք դուք անհանգիստ չլինել,— հարցնում է քննադատը,— երբ Աստուծո պատկեր ունեցող արարածները անդիտակցաբար խորտակում են միմյանց անգին կյանքը, ուր ձեր եղբայրները խաչվում, տապակվում են որպես շիրամի որդները եռացող կաթսայի մեջ...։ Ով այդպիսի դրության մեջ հանգիստ, հաշվող և «խոհեմ» բնավորություն ունի, նա ինքը խավարի զավակն է»։ Իսկ կոմս-էմանուելի նման մարդը չէր կարող հանգիստ լինել. նրա ծաղրի տակ թաքնված է դառն արտասուքը։ Իր ասածը հաստատելու համար քննադատը հիշեցնում է Նալբանդյանի հետևյալ խոսքերը. «Ես, ոչ թե մի սևահոգի մարդու պես, այլ խորհուրդով եմ մերկացնում այդ պակասությունը, որ ծիծաղեմ դրա վերա, կամ պախարակելով անցանեմ հարևանցի նրա մոտով. ոչ, այդ պակասությունը ծակում են իմ սիրտը, և շատ արտասուքին պատճառ են դառնում։ Ես դիտավորություն չունիմ մի մարդու կամ մի ազգ անարգել. քավ լիցի, բայց ինչ որ խոսում եմ, խոսում եմ որպես պաշտոնյա ճշմարտության. ճշմարտությունը ավելի մեծ հարգանք ունի իմ աչքում, քան թե աշխարհի բոլոր թանկագին գոհարներն ու հարստությունքը»[37]։ Նալբանդյանի դատի նման պաշտպանությունը պատիվ է բերում «Մուրճին»։

Չափազանց պերճախոս է այն հանգամանքը, որ «Մուրճը» շատ հաճախ առաջինը ինքն էր քննադատության տակ առնում իր հեղինակների ստեղծագործությունները, անառարկելի ապացույց տալով իր անաչառության։ Երբ առանձին գրքով լույս տեսան Լևոնցի (Նազարբեկ) բանաստեղծությունները, որոնց մի մասը տպագրվել էր «Մուրճում», խմբագրությունը հարկ համարեց գրել, որ թեև Լևոնցի ստեղծագործության մեջ կա նորություն, կենսական երակ, զգացվում է մտածող և զգացող բանաստեղծը, սակայն նրա ժողովածուն ընդունելություն չի գտնի ընթերցողների շրջանում, որովհետև «հեռու է ժողովրդական բանաստեղծական ոգուց»[38]։

---

36 «Մուրճ», 1897, № 11—12, էջ 1631։

37 Նույն տեղում, էջ 1631—1633։

38 «Մուրճ», 1891, № 1, էջ 111։

Ուղղակի ոչնչացնող էր Մ. Մարիսյանի (Մարիամ Խատիսյան) «Հեղինե» վեպի քննադատությունը։ Բնականորեն հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր «Մուրճը» իր իսկ էջերում կյանքի կոչել մի վեպ, որը համարում է «խիստ անմշակ գրվածք», որտեղ «տիպերը մեծ մասամբ անգույն են, միակողմանի, նույնիսկ հակասական։ Ամբողջ վեպի մեջ չկա ոչ մի հոգեբանական կտոր», «հերոսների մեծ մասը փայտեղեն տիկնիկների են նմանում»[39]։ Խմբագիրն իր գրական ճաշակին դեմքներից քայլ էր արել, հույս ունենալով կին հեղինակի գրչով գրված վեպի միջոցով հրահրել հասարակական կարծիքը, քննարկման դնել կնոջ ազատագրության հարցը։ Բայց թանկ գնահատելով ամսագրի հեղինակությունը և իր գրական ճաշակին նախանձախնդիր՝ վեպը լույս տեսնելուց հետո այն գնահատել է ըստ արժանվույն։

Գրականությունը օր օրի հարստանում էր և առատ նյութ մատակարարում քննադատական մտքին։ Վերջինս էլ մարզվելով հղորանում էր, ինքնորոշվում և իր հերթին խթանում գրականության զարգացմանը։ Այս փոխադարձ կապի ու պայմանավորվածության հստակ ըմբռնումն ուներ Արասխանյանը։ Նա գրաքննադատությունը դիտում էր որպես մի «զորեղ գործոն գրական հառաջադիմության»։ Բայց այս երկկողմանի կապը նրա համար իմաստավորվում էր երրորդ բաղադրիչի՝ «ընդհանրության» հետ ունեցած հարաբերությամբ։ Ահա նա ինչպես էր պատկերացնում այս եռանկյունին. «Գրական քննադատը շատ կետերում ոչ այլ ինչ է, բայց եթե հաջող կերպով բանաձևողը ընդհանրության կողմից գիտակցության բերած մտքերի», «իսկությունը սա է, որ գրական քննադատությունը արագացնում է գրական հառաջադիմությունը..., յուր մի էական մասովը արտահայտիչը լինելով ընդհանրության լավագույն մասերի մեջ կազմված կարծիքների և զգացմունքների՝ գրական քննադատությունը այդ՝ կրիտիկոսի կողմից յուրացրած՝ կարծիքների ամփոփումն է դնում նույն հասարակությունների առջև, որով քիչ թե շատ անորոշ մտքերը քննադատի գրչի տակ ավելի որոշ գույներ են ստանում՝ բայց դարձյալ նույն հասարակությանը վերադառնալու և նորա կողմից դարձյալ որոճվելու համար, մինչև որ այդ նոր պրոցեսը կհանգի նոր բանաձևերի՝ մի նոր գրական քննադատության մեջ»[40]։

---

39 «Մուրճ», 1893, № 7—8, էջ 1228—1231։

40 «Մուրճ», 1899, № 7—8, էջ 895—896։

Գրաքննադատության հասարակական դերի և նշանակության խոր ըմբռնմամբ խմբագիրը վարում էր այդ բաժինը, ամսագրի շուրջը համախմբելով ժամանակի լավագույն քննադատներին: Հարկ ենք համարում կանգ առնել նրանցից երկուսի՝ Եղիշե Մադաթյանի և Կարապետ Կուսիկյանի հոդվածների վրա, որոնք ոչ միայն ամենից ծավալունն են. այլև ամենից նշանակալիցը և հատկանշականը՝ ժամանակի քննադատական մտքի բարձրակետը պատկերացնելու և, իհարկե, «Մուրճի» գրական քաղաքականությունը բնութագրելու համար:

Հանձին Եղիշե Մադաթյանի, թվում է, թե ամսագիրը գտել էր իր հրապարակախոս-քննադատին: Թեև Մադաթյանը ամսագրում հանդես է եկել երկու գրաքննադատական հոդվածով, բայց դրանցից բարձրաքանդակի նման դուրս է պրծնում քննադատի դիմապատկերը: Այդ հոդվածներն էլ մնացին իբրև հուշարձան վաղամեռիկ տաղանդավոր քննադատի համար:

«Բանաստեղծ-հրապարակախոս» հոդվածում, երիտասարդ հայ քննադատը օրինակ է պարզում Պիսարևի, Դոբրոլյուբովի մարտնչող հրապարակախոսությունը, որոնք գրականության հարցերը քննում էին ժամանակի սոցիալ-քաղաքական խնդիրների հետ զուգորդված և գրաքննադատությունը դարձնում էին հասարակական միտքը խմորող, էլեկտրականացնող ուժ: Մադաթյանը սեփականում է «քննադատական նոր ուղղության» գեղագիտական չափանիշները, նշելով, որ «այդ տաղանդավոր քննադատներն ունեին այն բացարձակ առավելությունը, որ ձգտում էին գրականությունը ծառայեցնել կյանքին»[41]: Այս ելակետով էլ հայ քննադատը մոտենում է Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմին: Ամենից առաջ գրողի ստեղծագործությունը դիտվում է իբրև հասարակական որոշակի մտայնության արդյունք. Լևոնը հայ ազատամտականության կրողն է, և նրա վիշտը 60-ական թվականների երիտասարդության վիշտն է՝ սկիզբ առած ազգային թշվառության գիտակցությունից: «Հյուսիսափայլին» և Նազարյանին տված Մադաթյանի գնահատականները խիստ համերաշխում են Արասխանյանի կարծիքներին. «Նազարյանը արթնացրեց դարավոր քնից մի խավար՝ ասիացի ժողովուրդ, բաց արավ նրա աչքերը անցյալի և ներկայի վրա, սկսեց սովորեցնել նրան դիտել ու քննել շրջակա երևույթները, որոշեց նրան յուր կոչումն ու նշանակությունը մարդկության ընդհանուր առաջադիմության ասպարեզում և

41 «Մուրճ», 1891, № 7—8, էջ 908:

այսպիսով պատրաստեց հող հայի կատարյալ ինքնաճանաչողության և նրա բնածին հարուստ ընդունակությունների ինքնուրույն զարգացման համար»[42]: Մադաթյանը մատնացույց է անում նաև նպաստյանի թույլ կողմերը. նա լավատեղյակ չէր ժողովրդի հոգեբանությանը և երազում էր ժողովրդի մեջ արմատացած, կարծրացած սովորություններն ու գաղափարները արմատախիլ անել միանգամից. «Այստեղից բխեց նրա գործունեության հիմնական սխալը, այն է՝ հասարակական ախտի այս կամ այն նշանը բուն ախտի տեղ ընդունելը»[43]: Մադաթյանը կոահում էր լուսավորիչներին հատուկ սխալը, նրանց թուլությունը և իրավացի էր՝ այն պայմանավորելով պատմական ժամանակաշրջանով: Միջնադարյան խավարի մեջ տառապող ժողովրդին միանգամից հեղաբեկելը, նրա կարծիքով, մի սերնդի գործ չէր, հարկավոր էր գոնե երկու հաջորդական սերունդների տաժանակիր աշխատանք. մեկը պետք է հանձն առներ ժողովրդականացնել նոր գաղափարները, մյուսը՝ իրագործեր դրանք կյանքում: Այս առումով Մադաթյանը 50—60-ական թվականների հայ մտավորականներին համարում է խոսքի մարդիկ, իսկ 70-ական թվականներինը՝ թե՛ խոսքի և թե՛ գործի: Երրորդ, այսինքն ի՛ր սերունդը, նրա կարծիքով, կոչված է «հավասարակշռություն ստեղծել» խոսքի ու գործի մեջ, գործով ապացուցել խոսքի ճշմարտությունը:

Ահա Լևոնը, առաջին սերնդի տիպիկ ներկայացուցիչը, որի խոսքով հրապուրվելու և անգործունյա լինելու պատճառները ոչ թե նրա անձի, այլ ժամանակաշրջանի յուրահատկության մեջ պետք է փնտրել: Այսպես, Մադաթյանը գրական երկի վերլուծությունը հմտորեն կապում է հասարակական շարժումների հետ, գրաքննադատության դերի և նշանակության խոր ըմբռնման օրինակ տալով: Լինելով ռեալիզմի հաղթանակող ուղղության պաշտպան, նա Շահազիզի երկով ցույց է տալիս ռոմանտիզմի «գրական արատները», երբ ընթերցողը ոչ թե տեսնում է հերոսին, այլ լսում նրան, ավելի ճիշտ՝ նրա հետևը կամ առջևը կանգնած հեղինակին: Ռեալիստ բանաստեղծը, նրա կարծիքով, իր բարոյական կամ քաղաքական համոզմունքները «դիտմամբ ընթերցողի վզին չպիտի փաթաթի», «բանաստեղծի ստեղծագործության միակ նպատակը պիտի լինի վերարտադրել, պատկերացնել»[44], մի խոսքով, տիպականացման,

---

42 «Մուրճ», 1891, № 12, էջ 1560:

43 Նույն տեղում, էջ 1561:

44 «Մուրճ», 1892, № 1, էջ 127—128:

կերպավորման պահանջ է դնում, երկի գաղափարական բովանդակության վերհանումը թողնելով քննադատի իրավասությանը։ Կարդալով այս հոդվածը դժվար չէ տեսնել, որ այն սնունդ է առել ռուս առաջավոր դեմոկրատական էսթետիկայի կենսատատ աղբյուրից և իր վրա կրում է հայ քննադատական մտքի կորիֆեյի՝ Նալբանդյանի գեղագիտական հայացքների ազդեցությունը։

Հանձին Մադաթյանի Արտախանյանը տեսնում էր քննադատի այն ըղձալի տիպարը, որը հասարակական շահերով էր առաջնորդվում գրողի ստեղծագործությունը գնահատելիս. «շնորհավորում ենք պ. Մադաթյանին, որ նա նոցանիցն է, որոնք փորձում են գրական քննադատությունը բոլորովին անկախ որևէ անմիջական, մանավանդ թե անձնական նպատակից»[45]։

«Ազգի երգիչը», այսպես է վերնագրված Մադաթյանի մյուս հոդվածը։ Պատկանյանի՞ մասին է խոսքը։ Այո և ոչ։ Այո, որովհետև Պատկանյանը ազգի երգիչն էր և ոչ, որովհետև նա, քննադատի կարծիքով, չուներ այն ամենը, ինչ պահանջվում է մի ճշմարիտ ազգային բանաստեղծ լինելու համար։ Հանդուգն համարձակություն չէ՞ր մի երիտասարդ քննադատի կողմից ազգային երգչի դափնին վերցնելը մի բանաստեղծից, որի բանաստեղծությունները ազգային հիմն ու երգ էին դառնում։ Ոչ, քննադատը նպատակ չուներ նսեմացնելու Պատկանյանի քանքարը, նա պարզապես զարմանալի պայծառատեսությամբ զգում էր գրական այն նոր երկունքը, որից ազգային մեծ պոեզիայի Դավիթն էր ծնվելու։ «Շատ նշաններ ցույց են տալիս, որ մեզանում արդեն սկիզբ է առել թե՛ այդ ազգային ուղղությունը և թե՛ նորանոր ճանապարհներ բանալու ձգտումը»,— ասում է քննադատը և կոչ է անում ձեռքները ծալած չնստել ու սպասել գարնան գալուստին, այլ «կյանքի մեջ մուտք գործած թարմ և առողջ հոսանքներին տալ ազգային ուղղություն, մյուս կողմից՝ շարունակել նորանոր ճանապարհներ բանալ եվրոպական լուսավորության կենսատու և հորդառատ աղբյուրներից դեպի չորացած և անապատ հայրենի անդաստաններն»[46]։

Քննադատը «նորածին գրականության հիմնադիրների» առջև խնդիր է դնում «խոսել ժողովրդի հետ իրան հասկանալի լեզվով, զարթեցնել

---

45 Նույն տեղում, էջ 133։

46 «Մուրճ», 1892, № 10, էջ 1473։

նրա թմրած միտքը, արտահայտել նրա հասարակական պետքերը, ցավերը, ուրախությունները, ձգտումները և իդեալները...»[47]:

Ինչո՞ւ է Մադաթյանը «ազգային երգչի» տիտղոսը մերժում Պատկանյանին, թեև նրան համարում է եղած բանաստեղծների մեջ ամենից ազգայինը: Այլ կերպ՝ որո՞նք էին բանաստեղծին «ազգային երգիչ» համարելու քննադատի պահանջները. այն, որ «բանաստեղծը չկղզիանա նեղ, անձնական կամ կուսակցական և դասակարգային ինտերեսների շրջանում, այլ դուրս գա այդ հեղձուկ մթնոլորտից ընդհանուր ազգային շահերի լայն և ազատ աշխարհը, տոգորվի հասարակական շահերով, ուշադիր լինի դեպի ազգային կյանքի յուրաքանչյուր զարկերակը, ապրի ազգի համար, մի խոսքով լինի իր ժամանակի և իր հայրենիքի հարազատ և ընտիր որդին»: Շեշտենք նաև, որ ազգ ասելով քննադատը մատնացույց է անում «այն ժողովուրդը, որ յուրաքանչյուր ազգի էական տարրն է կազմում,... երկրագործ դասը, ազգային ոգու այս հավատարիմ ավանդապահը...»[48]:

Քննադատը «ազգային երգչի» գահը թափուր է թողնում համոզմունքով, որ այն շուտով կգտնի իր արժանի գահակալին: Թվում է, թե նա տեղ էր աղատում հայ ազգային մեծ բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի համար: Քննադատն, անշուշտ, չգիտեր, թե ով է լինելու «ազգային երգչի» մեծ անվան հավակնորդը, բայց հաստատ հավատով տալիս էր նրա գալստյան ավետիսը:

Հոդվածը, որ մեծ հետաքրքրություն առաջացրեց գրական շրջաններում, ցավոք հեղինակի հոգեկան ծանր հիվանդության պատճառով անավարտ մնաց, և «Մուրճի» ընթերցողները հնարավորություն չունեցան հետևելու ազգային նոր գրականության վերաբերյալ քննադատի հետաքրքիր կանխագուշակություններին, որոնք արվում էին այդ գրականության հիմնաքարերը դնվելու պահին:

Կարող է տարօրինակ թվալ, որ Կարապետ Կուսիկյանի՝ «Մուրճում» տպագրած հոդվածներից երկուսը դարձյալ նվիրված են Ռափայել Պատկանյանին և Սմբատ Շահազիզին ու «Հյուսիսափայլին»: Վիճարկվո՞ւմ են նախորդ հոդվածների դրույթները: Ոչ: Հապա ինչի՞ համար էր կրկրկընությունը: Նախ ասվածը հաստատելու և ապա լրացնելու համար: Պատկանյանը այն պոետն էր, որի պոեզիան հնարավորություն էր ըն-

---

47 Նույն տեղում, էջ 1475:

48 «Մուրճ», 1892, № 11, էջ 1661:

ձեռում խոսելու քաղաքացիության, բարձր գաղափարայնության մասին, ինչպիսի դերը պոեզիայի համար «Մուրճը» դնում էր առաջին տեղում: Կուսիկյանի հոդվածները, որոնք ժամանակի հայ գրականագիտական մտքի լավագույն արտահայտություններից են, մեկ անգամ ևս վկայում են, որ ամսագիրը իր գեղագիտական սկզբունքները ձևում էր, հենվելով ռուսական էսթետիկական մտքի առաջավոր սկզբունքների վրա: Անշուշտ, նա չէր կիսում այդ մտքի կորիֆեյներ՝ Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և մյուս հեղափոխական-դեմոկրատների սոցիալ-քաղաքական հայացքները, սակայն գեղարվեստական արժեքները գնահատելիս ելնում էր արվեստը կյանքին ծառայեցնելու և արվեստի բարձր գաղափարայնության նրանց հռչակած պահանջներից:

«Բանաստեղծ-քաղաքացի» վերնագրով Կուսիկյանի հոդվածում կարդում ենք. «Հռչակավոր Բելինսկին ասում է. «Ոչ ոք չի կարող ստիպել բանաստեղծին երգել անպատճառ առաքինության տաղեր, կամ երգիծաբանել մոլորությունները, սակայն ամեն մի խելացի մարդ իրավունք ունի պահանջելու, որ բանաստեղծը պատասխանի ժամանակակից հարցերին կամ գոնե ներշնչված լինի յուր ժամանակի ծանր, անլուծանելի հարցերի վշտով»:— Մեջբերելով այս տողերը, հեղինակը եզրակացնում է,— պարզ է, ուրեմն, որ քննադատը չպետք է առաջնորդվի միայն էսթետիկական և գրականական սկզբունքներով, այլև հասարակական. եթե բանաստեղծը պիտի պատասխան տա ժամանակի հարցերին և ցոլացնի յուր մեջ նրա ոգին, չէ՞ որ նա հրավեր է կարդում դեպի հասարակությունը և սրա ինքնագիտակցությունը, չէ՞ որ նա պիտի զարգացնի բացի գեղեցկության զգացմունքից, գեղարվեստական ճաշակից, նաև հասարակականության ոգին, առանց որի չկա առաջադիմություն, ճշմարիտ մտավոր կյանք»[49]:

Քննադատը վճռաբար մերժում է «արվեստը արվեստի համար» սկզբունքը և ընդունում միայն կենսահաստատ արվեստը. «Երբ արվեստը հեռու է կյանքից և մարդկային կարիքներից, նա չի կատարում յուր իրական կոչումը, նա դառնում է եսական և չոր ու ցամաք: Արվեստը, գրականությունը, գիտությունը վեհ են այն ժամանակ, երբ նոքա ծաղկում են բաց օդում, կյանքի և հասարակության մեջ և նոցա ճյուղերի միջով փչում է քաղաքացիական կյանքի զովարար շունչը»[50]:

---

49 «Մուրճ», 1897, № 5, էջ 667:

50 Նույն տեղում, № 6, էջ 822:

Ասված է ուղղակի, որոշակի և անկրկմիտ։ Այս չափանիշներով մոտենալով Պատկանյանին, Կուսիկյանը «բանաստեղծ-քաղաքացի» ընդհանրացումով ընդգծում է այն իրողությունը, որ բանաստեղծի պոեզիայում ուժգնորեն բարախում է ժամանակի զարկերակը, որ նրա երգերից փչում է քաղաքացիական կյանքի զովարար շունչը։

Մյուս հոդվածը, որ վերնագրված է «Հյուսիսափայլ» և Ս. Շահազիզյանի բանաստեղծությունը», գալիս է ցուցադրելու այն հսկայական ուշադրությունը, որ տալիս էր ամսագիրը 50—60-ական թվականների վերածնության ժամանակաշրջանի գաղափարական ժառանգության հարցերին։ Մեկ անգամ չէ, որ վկա եղանք այն մեծ սիրուն ու ակնածանքին, որով «Հյուսիսափայլ» ամսագրի մասին խոսում է «Մուրճը», իրեն համարելով նրա հոգևոր ժառանգորդը։ Բանն այն է, որ 50—60-ական թվականները հայ ժողովրդի կյանքում այնպիսի մեծ հեղաշրջում էին առաջացրել, որ հաջորդ սերունդները վերածնության շրջանի իդեալներին հավատարմության չափով էին արժեքավորում իրենց գործունեությունը։ Ահա ինչ է գրում Կարապետ Կուսիկյանը. «Աստվածային կայծը, որ վառ էին պահում իրանց սրտերում Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը և Ռ. Պատկանյանը, վառում է մեր օրերում շատ մտքեր ու սրտեր և առաջացնում է մեր մեջ առաջադիմելու սուրբ պահանջը և կյանքի նոր հիմքեր որոնելու ձգտումը։ Ըմբոստ գաղափարը հանձինս այդ գործիչների դուրս էր եկել դաշտը և հարվածում էր հասարակության անշարժությանը և ավանդամոլությանը, նրա տգիտությանը, և պապական տարտյուֆությանը։ Նոքա սկսել են իրանց ծանր գործը համարձակ, հավատով և հուսով, որ իրանց հոգեբուխ խոսքը չի լինի «ձայն բարբառո հանապատի»[51]։

Քննադատը դժգոհ է ժամանակակից սերնդից. դրա համար է նա հիշեցնում, խնկարկում այն մարդկանց, ովքեր գործել են ոչ հեռու անցյալում. նա օրինակ է պարզում Գարիբալդիին՝ «այդ մարմնացած ազգային բողոքը, իր ճնշված հայրենիքի այդ առաքինի որդին»[52]։ Վկայակոչում է Ղրիմի պատերազմից հետո ռուսական ազատագրական հուժկու շարժումը՝ ուղղված ճորտատիրության դեմ։ Ապա դառնում է դեպի հայ իրականությունը։ Հատկանշական է, որ արժանին հատուցելով «Հյուսիսափայլի» խմբագրին, նշելով նրա մեծ ծառայությունները,

---

51 «Մուրճ», 1898, № 5, էջ 684—685։

52 Նույն տեղում։

Կուսիկյանը, իբրև գործչի տիպար, մատնացույց է անում Նալբանդյանին։ «Նալբանդյանը ներկայանում է մեզ իբրև մաքառող քաղաքացիգրական, որի համար գաղափարական կռիվը սրտի ու մտքի պահանջ է. կարծես նա կրում լիներ իր կրծքում հայի դարավոր բարոյական նեղությունները և վրեժ էր պահանջում նեղիչներից. լինելով մարմնացած գաղափար՝ նա այնպիսի խոր զգացմունքով պաշտպանում է անհատի և հասարակության իրավունքները, որ պատրաստ է ոչնչացնել, հողի հետ հավասարել նրանց դրժողներին։ ...«Հյուսիսափայլի» տաղանդավոր աշխատակիցը, որի ապդու գրիչը, սուր և մտրակող լեզուն, մտացածին ուղղությունը և աշխարհայացքը գույն ու կերպարանք էին տալիս ամսագրին, լավ էր հասկանում իր ժամանակի ոգին. նա գիտեր, որ անկարելի է կործանել դարերից սրբագործված սկզբունքները առանց բացարձակ կռվի, առանց մտրակի և նա կատարեց իր կոչումը, իր քաղաքացիական պարտականությունը մեծ տաղանդով, անվեհեր և անարատ սրտով»[53]։

Գրաքննության կողմից մեկ անգամ մերժված այս հոդվածի հրապարակումը վկայում է «Մուրճի» քաղաքացիական արիության մասին։ Նալբանդյանին իբրև գործչի տիպար տրված բնութագիրը դրականորեն է բնութագրում նաև նրա հեղինակին և այն հրապարակող օրգանին։ Քննադատը այս չափանիշը ընթերցողի առջև է դնում, որպեսզի նրան ասի, թե Շահազիզյանի հերոսը՝ Լևոնը չի կարող լինել ընդօրինակման արժանի դրական իդեալ, քանի որ չի կարողանում խոսքից գործի անցնել և դառնալ կենդանի օրինակ իր քարոզած գաղափարների։ Ճշմարտությունը պահանջում է ասել, որ մտավորականությանը գործի մղելու իր ազնիվ ոգևորության մեջ Կուսիկյանը թույլ է տալիս որոշ ծայրահեղություններ, օրինակ, հայտարարելով, թե «Լևոնները ոչ միայն օգտավետ չեն, այլև վնասակար»։ Ամսագրի խմբագիրը հարկ է համարում ծանոթագրության մեջ առարկել նման պնդմանը, նշելով, սակայն, որ բարձր է դնահատում Կուսիկյանի հոդվածը, քանի որ «հեղինակի դատողությունները հենվում են մի առողջ հիմքի վրա, որի համար և նա արժեք է ստանում մեզ համար. այդ այն է, որ գործը կարևորագույնն է, քան խոսքը»[54]։

---

53 Նույն տեղում, էջ 696։

54 «Մուրճ», 1898, № 9, էջ 1292—1293։

Նոր սերնդին գործի կոչող նույնպիսի կրքով ու աղնիվ պաթոսով է համակված Կուսիկյանի նաև երրորդ հոդվածը՝ «Մեր իրականության տիպերը «Արսեն Դիմաքսյան» վեպի մեջ»։ Շիրվանզադեի վեպը հնարավորություն էր ընձեռում քննադատին ընդհուպ մոտենալու մտավորականության խնդրին, հայ մեծ ռեալիստի ստեղծած կերպարների միջոցով ցույց տալ «մեր իրականության տիպերը», վեպի հերոսների անունները հասարակացնելով իբրև դիմաքսյաններ, բարաթյաններ, վեքիլյաններ և այլն։ Քննադատը գալիս է ավելի սրելու հայ մտավորականության հասցեին վիպասանի քննադատությունը, ընդգծելու վեպի նպատակաուղղվածությունը։ Ահա նրա եզրակացությունը. «Շիրվանզադեն ռեալիստ է. նա նկարում է կյանքը ինչպես նա կա, դուրս է բերում անձերը և բնավորությունները նրանց կենսական պայմաններից բխած հատկություններով. նա ոչ միայն կենդանագրում է իրողությունները, այլև հրավիրում է ձեզ դեպի անվհատ մրցում չարիքի հետ»[55]։

Պայքար չարիքի դեմ. ճիշտ է նկատված քննադատական ռեալիզմի մարտնչող ոգին, բայց այդ չարիքի դեմ պայքարելու ինչպես վիպասանի, այնպես էլ քննադատի առաջարկած միջոցները դուրս չեն գալիս իդեալիզմի շրջանակներից։ Վեպի գաղափարական-հասարակական նշանակությունը Կուսիկյանը տեսնում է հեղինակի այն «պատմական հայացքը» դավանելու մեջ, ըստ որի «քննորեն մտածող անձն է միջամտում ամեն բանի մեջ և արարող ոգով մոտեցնում է մեզ ճշմարտության և արդարության իդեալին. խռովահույզ անհատներն են բարեփոխում անզարդ կյանքը»[56]։ Դժվար չէ նկատել այստեղ նարոդնիկական սուբյեկտիվ իդեալիզմի նստվածքները։ Բայց եթե իբրև դեղամիջոց այն անպետք է, ապա գնահատելի է բուրժուական հասարակարգի դեմ իր մանրբուրժուական, դեմոկրատական ընդվզումով։

Հասարակական կյանքում գրականությանը հատկացրած դերի հարցում Կուսիկյանի և «Մուրճի» տեսակետները նույնանում են՝ «Մատնացույց անել կենսական դաշտավայրի փշերի և տատասկների վրա, այդ միայն գրականության դերի կեսն է. գրականությունը նաև պիտի մաքրի այն փշոտ ճանապարհը, որ տանում է ազգերին դեպի քաղաքակրթություն, և հանդիսանա պատգամախոս ցանկալի ապագայի և հերկիչ ներկա հասարակության, անարգասավոր անդաստանի»[57]։

---

55 «Մուրճ», 1899, № 9, էջ 1067։

56 Նույն տեղում, էջ 1068—1069։

57 «Մուրճ», 1898, № 7—8, էջ 1095։

Այսպիսով, իբրև գրական ամսագիր, «Մուրճը» քայլում էր ժամանակի գրական շարժման առջևից, հանդիսանալով առողջ, զարգացող ուժերի առաջատարը, առաջադիմական տենդենցների կրողը: Ընդգծենք մեկ անգամ ևս՝ գրական քաղաքականության մեջ առավելագույնս դրսևորվեցին ամսագրի դեմոկրատական դիրքորոշումները:

* * *

Ինչպե՞ս էր վերաբերվում «Մուրճը» դեպի այլ ժողովուրդների գրականությունը: Սա մի հարց է, որի պատասխանը չի կարող սպառվել սոսկ այն հեղինակների թվարկումով, որոնց ստեղծագործությունների թարգմանությունները տպագրվել են ամսագրում: Դա նախապես ծրագրված մի քաղաքականության անշեղ իրականացում էր «Մուրճի» հրատարակության ամբողջ ընթացքում:

Թարգմանական գրականության վրա Աբասխանյանը չէր նայում լոկ իբրև բաժանորդներին տրվող ընթերցանության նյութի: Նա այն դիտում էր որպես ժողովուրդների մերձեցման ու հոգևոր փոխհարստացման հզոր միջոց, որին նպաստելը համարում էր ամսագրի առաջնահերթ խնդիրներից մեկը: Այս նպատակի իրագործման համար նա քիչ էր համարում լոկ թարգմանություններ տպագրելը և ամսագրում զետեղում էր նաև հոդվածներ այլ ժողովուրդների ականավոր գրողների, քննադատների, գործիչների մասին, մշակույթի և պատմության այլևայլ հարցերի վերաբերյալ: Այս նյութերը, ինչպես նաև թարգմանական ընտրանին, գալիս են մի նոր կողմով լրացնելու ամսագրի բնութագիրը:

Նախ, ինչ համամասնությամբ էր ամսագրում տեղաբաշխվում ինքնուրույն և թարգմանական գրականությունը: Սկզբից ևեթ խմբագիրն այն կարծիքին էր, որ «հայկական ինքնուրույն գրականությունը պետք է «Մուրճը» ավելի խրախուսեր, քան թարգմանական գրականությունը: ...ինքնուրույն վիպական գրվածքները, որոնք որոշ չափով հասարակական կամ գրական արժանավորություն ունին, ավելի են նպաստավելու «Մուրճում», քան թե գրական հավասար կամ նույնիսկ ավելի մեծ արժանավորություն ունեցող թարգմանական վեպերը»[58]:

Այսպիսի քաղաքականությունը թելադրված էր ժամանակի պահանջով: Հայ նոր՝ ռեալիստական ու ժողովրդային գրականության մանուկը դուրս էր եկել խանձարուրից և կանգնել երկու ոտքերի վրա: Նրան պետք էր օգնել քայլելու, առաջ գնալու, առնականանալու: Իբրև գրական օր-

58 «Մուրճ», 1892, № 1, էջ 175:

գանի, «Մուրճը» նախ սրա մեջ էր տեսնում իր կոչումը։ Այս հարցին շատ հստակ պարզաբանում է տվել Արասխանյանը «Մուրճը» և արևելյան հայոց արդի գրականությունը» հոդվածում, որը գրելու առիթ է ծառայել նույն վերնագրով «Անահիտ» ամսագրում տպագրված Արշակ Չոպանյանի հոդվածը։ Ահա ինչպես է պատկերացնում Արասխանյանը ամսագրի դերը գրականության զարգացման գործում. «Մի ամսագրի արժեքը գեղեցիկ գրականության վերաբերյալ չպետք է չափել նորանով, թե ինքը որքա՛ն կատարյալ գործեր տպեց, այլ նորանով, թե որքան նա յուր հայացքներով ու ճանաչողության ուժով նպաստավոր ու դրդիչ եղավ կատարյալի երևան գալուն ու հաստատվելուն, և թե որքան նա կարողացավ արգելք լինել գրական որոմի չքանալուն։ Այս է ավելի կարևորը, և ոչ այն, թե ինքը որքան կարողացավ ամենակատարյալը տալ. մի բան, որ շատ հաճախ նույնիսկ լոկ նյութականի խնդիր է»[59]։ Նույն սկզբունքը տարածելով նաև թարգմանական գրականության վրա, Արասխանյանն առարկում է Չոպանյանի կարծիքին, թե ամսագիրը թարգմանաբար ընթերցողներին պետք է տա համաշխարհային գրականության գլուխգործոցները։ Արասխանյանը գտնում է, որ այս խնդրում պետք է ելնել «ժողովրդի կարիքներից», «թարգմանությունները ժողովրդի պահանջներին ծառայեցնել», այսինքն թարգմանական գրականությունը ևս պետք է նպաստեր այն խնդիրների լուծմանը, որ հասունացրել էր ժամանակը։ Ամսագիրը պետք է դառնար ոչ թե գեղեցիկ գրականության «շտեմարան», այլ «դրդիչ և ուղեցույց օրգան», որը գալիս է «գրականությունը ուղիղ ճանապարհի վրա դնելու, այն հարբուստացնելու ուղիներ հարթելու համար»[60]։

Չմոռանանք թարգմանական գրականության մի կարևոր նշանակությունը ևս. ցարական դաժան ռեակցիայի պայմաններում թարգմանությունը համանշանակ էր անցենզուր գրականության, որովհետև այն, ինչ հնարավոր չէր ասել ինքնուրույն գրականության միջոցով, ընթերցողին կարելի էր հասցնել թարգմանական գրականության օգնությամբ։ Այնպես որ թարգմանական գրականությունը ևս բնութագրում է ամսագրի ուղղությունը։ Մենք հաճույքով կթվարկեինք բոլոր այն օտար հեղինակների անունները, որոնց ստեղծագործությունները հայերեն հնչեցին «Մուրճի» էջերից, բայց դա չափազանց երկար ցուցակ կլիներ (միայն արտասահմանյան գրականությունից 36 գրողի ավելի քան հարյուր

59 «Մուրճ», 1899, № 4—5, էջ 487։

60 Նույն տեղում, էջ 488։

ստեղծագործություն), ուրեմն առանձնացնենք՝ Բայրոն, Գյոթե, Հայնե, Շիլլեր, Սենկևիչ, Մոպասան, Հյուգո, Մարկ Տվեն, Լոնգֆելլո... անուններ, որոնց համար ավելորդ է ասել, թե ինչու են թարգմանվել:

Հայնեի անվանը ամենից շատ ենք հանդիպում ամսագրի էջերում: Դա մեծ բանաստեղծի համամարդկային արվեստին արժանի տուրքն էր. Թարգմանությունների մեծ մասը կատարել է Ալեքսանդր Ծատուրյանը, նաև՝ Լևոն Մանվելյանը, Ջավադ Բալուղյանը, Ատոմ Շահենը (Երիցյան): Գյոթեն հայ ընթերցողին է ներկայացված երեք ստեղծագործությամբ. «Հերման և Դորոթեա», «Ֆաուստ» (թարգմ. Լևոն Տիգրանյան), «Էգմոնտ» (թարգմ. Մաժինյան): Արձակագիրներից ամենից շատ թարգմանվել են Մոպասանը և Մարկ Տվենը: Թարգմանական արվեստի այսօրվա բարձունքից կարելի է վիճարկել բնագրի հետ հայերեն այդ թարգմանությունների շատերի համարժեքությունը, սակայն անվիճելի է դրանց խաղացած հսկայական դերը՝ որպես առաջնեկների, որոնց շնորհիվ ժողովուրդը հաղորդակից դարձավ համաշխարհային մշակույթի գանձերին, ծանոթացավ գրականության համամարդկային «լեզվին» ու չափանիշներին: Իբրև հետևանք՝ սրվեց սեփական մեծ գրականություն ստեղծելու պահանջը:

«Մուրճում» աճեց թարգմանիչների մի ամբողջ սերունդ՝ Ալեքսանդր Ծատուրյան, Լևոն Մանվելյան, Լևոն Տիգրանյան, Հակոբ Տեր-Գևորգյան, Ջավադ Բալուղյան, Հակոբ Հակոբյան և շատ ուրիշներ: Խմբագիրը ոչ միայն ուշադիր ու հոգատար էր թարգմանական ուժերի նկատմամբ, որոնց ամեն կերպ խրախուսում էր, այլև թարգմանական գործի հանդեպ հանդես էր բերում բծախնդիր խստապահանջություն, ինչի մասին վկայում են այն բազմաթիվ գրախոսականները, որոնք տպագրվում էին «Մուրճում» թարգմանական նորույթների առիթով: Ամսագիրը նախանձախնդիր էր Շեքսպիրին հայերեն հնչեցնելու գործին, սակայն անզիջում ու անողոք էր դեպի մեծ հանճարի ստեղծագործությունների ամեն մի անհաջող թարգմանություն: «Մուրճում» գրախոսություններ տպագրվեցին Գևորգ Բարխուդարյանի՝ «Շեյլոկի», Ստեփան Մալխասյանի՝ «Արքա Լիրի» և «Մակբեթի», Հովհաննես Լալայանի՝ «Ձուր տեղը մեծ աղմուկի» և Սիմոնթերիմ Արծրունու՝ «Համլետի» թարգմանությունների վերաբերյալ: Ահա ինչ է գրում «Մուրճը» վերջին թարգմանության մասին. «Շեքսպիրը գրել է «Համլետը» որոշ բնավորություն կրող լեզվով. գործող անձերից յուրաքանչյուրին տվել է որոշ բնավորություն և... ամեն մեկի բերանը դրել է որոշ լեզու, որոշ ոճեր: Եվ բարձր դրամա-

տիզմ, և հեգնություն, և սարկազմ, և վերամբարձ վսեմություն, և ծաղր, և ցինիզմ, և այլաբանություն, և երկչոտություն, և անապաշտություն, և երկդիմություն, և պարզախոսություն,— այդ բոլորի համար հարկավոր է համարել Շեքսպիրը ոչ միայն բեմական հանգամանքներ ստեղծել, այլև այդ բեմական հանգամանքների համեմատ՝ լեզու բանեցնել. ով թարգմանում է, նա պարտավոր է հետևել հեղինակին և ճիշտ թարգմանել լեզվի նրբություններըը»[61]: Կատարված է մի այնպիսի թարգմանություն, որ ամսագիրը ստիպված է զգուշացնել ընթերցողներին՝ չդատել Շեքսպիրի «Համլետի» մասին Արծրունու թարգմանության հիման վրա:

Ո՞րն է «Մուրճի» համար թարգմանական արվեստի չափանիշը: Այն բավական հստակ ձևակերպել է Լևոն Մանվելյանը «Մակբեթի»՝ Ստ. Մալխասյանի թարգմանության գրախոսականում: Մանվելյանը հայերեն Մակբեթը համարում է Մակբեթի ստվերը միայն: Ինչո՞ւ: Որովհետև թարգմանիչը մոռացել է տալ ամենակարևորը՝ «Շեքսպիրի ոգին, ոչ թե բառերը»: Մանվելյանը դիմում է ռուս թարգմանիչների օրինակին, որոնք այդ սկզբունքով են առաջնորդվում, վկայակոչում է Բելինսկու պահանջը՝ թարգմանելիս բնագրի ոգուն հարազատ մնալու մասին և դիմելով Մալխասյանին, փաստորեն դիմում է բոլոր թարգմանիչներին. «Մեծ գործերի թարգմանության ձեռնարկելիս՝ նա միայն մի բան աչքի առաջ ունենա. այն է՝ տալ հասարակության ձեռքը բնագրի ոգին: Բնագրի ոգին, և ուրիշ— ոչինչ»[62]: Այս բառերն այսօր մեզ համար այբբենական ճշմարտության նման են հնչում, բայց այն ժամանակ դեռ նորնոր էին մշակվում թարգմանական տեսության հարցերը, գրականության մշակները մաքրում էին դաշտը որոմից, որպեսզի գար մի Մասեհյան, իր տաղանդի աղնիվ պտուղը հասունացներ արդավանդ հողում և Շեքսպիրը հայերեն հնչեցներ բնագրի ոգով, բնագրի ուժով:

Թարգմանական գրքերի վերաբերյալ գրախոսությունները երկու նպատակ էին հետամտում. արժեքավորել թարգմանության որակը (մի բան, որ «Մուրճն» անում էր զարմանալի բծախնդրությամբ, հաճախ բազմաթիվ էջերով համեմատելով բնագրի և այլ լեզուներով թարգմանությունների հետ) և, որ գլխավորն է, գրողին ներկայացնել հայ ընթերցողին, արժեքավորել նրան որպես ստեղծագործողի: Ահա, օրինակ, ինչ է գրում ամսագիրը Թիֆլիսում Ջարլզ Դիկկենսի «Դավիթ Կոպեր-

61 «Մուրճ», 1889, № 6, էջ 922—923:
62 «Մուրճ», 1893, № 1, էջ 139:

ֆիլդի» հրատարակության առիթով։ «Դիկկենսի համակրանքներն ուղղված են դեպի ժողովրդի զավակները։ Նա սիրով և համակրանքով է նայում ժողովրդի վրա, դուրս է հանում նրա միջից առաքինի և պատվական մարդիկ, նրանց շրջանում ցույց է տալիս հազվագյուտ ջերմ սեր, կատարյալ անձնազոհություն, բուռն զգացմունքներ, ներողամտություն, անմիջական գործնական խելք և հայտնի տեսակետով չնախապաշարված դատողություն։ Նրանց դնում է հարաբերության մեջ բարձր դասի, լեդիների և «պարոնների» հետ և ապտակում վերջիններիի նեղամտությունը, անձուկ զգացմունքները, ծիծաղելի հպարտությունը, չոր ինքնասիրությունը, նախապաշարված դատողություններ»[63]։ Ակնհայտ է ամսագրի նպատակամղումը՝ անգլիական մեծ գրողի՝ սոցիալական չարիքի և անհավասարության դեմ ընդվզումով և ժողովրդասիրությամբ շնչող ռեալիստական արվեստը որպես չափանիշ ներկայացնել։

Ի դեպ «Մուրճը» մեկ անգամ չէ, որ դիմում էր համաշխարհային գրականության օգնությանը՝ հայ գրականության զարգացման ուղիները նախանշելու համար։ «Մուրճում» տպագրվեց, օրինակ, «Նատուրալիզմը և Զոլան» ընդարձակ հոդվածը, որտեղ ֆրանսիական գրականության մեջ ռոմանտիզմի նկատմամբ ռեալիզմի տարած հաղթանակի օրինակով ցույց է տրվում գրական շարժման երկու ուղղությունների հաջորդափոխության պատմական անխուսափելիությունը։ Թեև հոդվածում նատուրալիզմը նույնացվում է ռեալիզմի հետ, սակայն համաշխարհային գրականության դասականների՝ Բալզակի, Ֆլոբերի, Զոլայի և մյուս ռեալիստների օրինակով քննադատական ռեալիզմի դատը պաշտպանելու, հայ գրականության մեջ նրա համար ճանապարհ հարթելու «Մուրճի» ձգտումը դնահատելի է։

Հայ-ռուսական գրական կապերը «Մուրճում» առանձնացնում ենք, որովհետև դա ամսագրի կենսագրության ամենափայլուն էջերից մեկն է։ Այստեղ դրսևորվեց ամսագրի խմբագրի հեռատես դիրքորոշումը, որը հայ ժողովրդի ճակատագրի հարցերը քննելիս ամենից շատ հայացքը դարձնում էր դեպի հյուսիս, մատնացույց անում նարոդնիկների օրինակը, երեն պետք էր հայ մտավորականությանը գործի դրդել. հայ գրականության զարգացման հարցերը քննելիս մատնացույց է անում ռուս գրողների հիանալի դպրոցը, հանձինս Պուշկինի, Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի, Նեկրասովի, Սալտիկով-Շչեդրինի, Ուսպենսկու, Չեխովի, Գորկու

63 «Մուրճ», 1897, № 11—12, էջ 1638։

և ուրիշների։ «Մուրճը» հայ քննադատական մտքի զարգացման ուղենիշ էր ընդունում ռուս վաթսունականների էսթետիկան, Բելինսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի գեղագիտական պատգամները՝ գրականության հասարակական դերի բարձրացման, այն կյանքի հետ կապելու, ժողովրդին ծառայեցնելու վերաբերյալ։

Թե ինչպիսի մեծ նշանակություն էր տալիս Արասխանյանը ռուս հասարակական մտքի կորիֆեյներին, որոնց գրչի արտադրանքը նրա համար «վերջին խոսքի» արժեք ուներ, երևում է հետևյալ համեմատությունից. «Արևմտյան Եվրոպայում... գրական կրիտիկոսները— նույնիսկ ամենահանճարները նոցանից— բնավ այն դերը չեն կատարում աճող սերնդի և ժամանակակից կյանքի համար առհասարակ, ինչ կատարել են Ռուսիայում մի Բելինսկի, մի Դոբրոլյուբով, մի Պիսարև, որոնք ժամանակի մտավոր հոսանքի խոսքատարներն են եղած։ Եվ այն ժամանակ, երբ աճող սերունդը Արևմտյան Եվրոպայում սպասում էր նոր հրատարակությունների մի Ռենան'ից, մի պատմաբան Միշլեից, մի բնագետ Դարվինից, մի քաղաքատնտես Մարքսից, մի ֆիլոսոֆա Ջոն Ստյուարտ Միլլից, մի սոցիոլոգ Սպենսերից և այլն, և այլն,— այդ նույն ժամանակ ռուսաց աճող սերունդները անհամբեր սպասում էին մի Հոդվածի Դոբրոլյուբովից, Պիսարևից և այլն»[64]։

Այստեղ տեղին է նշել Արասխանյանի հրաշալի հոդվածներից մեկը, որ նա գրեց Չերնիշևսկու մահվան առթիվ, և որը, սակայն, դարձավ գրաքննության արխիվի սեփականություն։ Հոդվածի մերժման պատճառը մեծարանքի և հարգանքի այն տուրքն էր, որ տվել էր «Մուրճի» խմբագիրը ռուս մեծ մտածողին. «Որքա՞ն և որքա՞ն մտքեր հուզվել են մի ժամանակ միմիայն նրա անունը լսելով։ Չերնիշևսկին մեռավ, կապելով յուր անվան հետ երիտասարդական ժամանակի պատմությունը։ Չերնիշևսկու անունը ամենահայտնի ու ամենաժողովրդական անուններից է»[65]։ Հատկանշական է Արասխանյանի նուրբ դիտողությունն այն մասին, որ Չերնիշևսկու ղեկավարած «կուսակցության պատմությունը սերտ կերպով կապված էր Արևմտյան Եվրոպայի նորագույն շարժումների հետ»[66], որոնց պարագլուխների շարքում նա թվարկում է նաև Մարքսին ու Էնգելսին։ Թեկուզև ոչ ամբողջ խորությամբ, բայց նա զգացել է Չեր-

---

64 «Մուրճ», 1897, № 10, էջ 1426։

65 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 862։

66 Նույն տեղում։

նիշևսկու և Մարքսի ու Էնգելսի ոսմունքների միջև շփման եզրերը: Ինչպես միշտ, նման պարագաներում Արասխանյանը շեշտում է նաև ռուս մեծ մտածողի բերած նպաստը Ռուսական կայսրության այլ ժողովուրդների հասարակական զարգացմանը. «Չերնիշևսկու առաջադրած շարժումը Ռուսիայում կղզիացած չէր մի կենտրոնում, այլ ծավալված էր այդ մեծ երկրի հեռավոր տեղերն ևս: Կովկասյան երիտասարդությունը կրեց նույն ազդեցությունը, և բազմաթիվ պատանիներ Չերնիշևսկու գրվածքները երկրպագության պաշտամունք էին շինած»[67]:

Արասխանյանի այս հոդվածը լոկ մահախոսական չէր, գրված Ռուսաստանը ցնցող տխուր դեպքի թելադրանքով, այլ ռուս մեծ հրապարակախոսի ու գործչի վաստակին լավատեղյակ մարդու ծանրակշիռ գնահատանքի խոսք, որը իսկապես «եզակի երևույթ էր 80-ական թվականների հայ իրականության մեջ»[68]:

Ամսագրում ժամանակ առ ժամանակ երևում էր «Նամակներ Ռուսաստանից» խորագիրը: Այս բաժնում տպագրվում էին նյութեր ռուսական ընթացիկ հասարակական-քաղաքական կյանքից, որոնք հաճախ ուղեկցվում էին պատմական էքսկուրսով դեպի ոչ հեռու անցյալը, դեպի 60-ական թվականները, երբ ռուսական կյանքը մեծ հեղաշրջում ապրեց: Բայց այդ հետադարձ հայացքը թելադրված էր ներկայի ու ապագայի պահանջներով: Ռուս ազատագրական մտքի որոնումներն ավարտվելու էին փրկության ուղիների հայտնությամբ ո՛չ միայն ռուս ժողովրդի համար: Ահա ինչու էր «Մուրճը» ակնդետ հետևում այդ մտքի բարձր դրսևորումներին և՛ հրապարակախոսության, և՛ գրականության մեջ:

Ամսագիրը ոչ միայն տպագրում է Պուշկինի բազմաթիվ բանաստեղծությունների թարգմանությունները, Գոգոլի «Մեռած հոգիներից» հատված, այլև «Ռուսաց գրականության ուղղությունները» ընդարձակ հոդվածում (գրված Ստեփան Լիսիցյանի կողմից Պուշկինի ծննդյան 100-ամյակի առթիվ) մեծարում է գրական երկու հսկաներին՝ որպես ռուս ազգային գրականության հիմնադիրների[69]:

«Մուրճը» ոչ միայն հայերեն է հնչեցնում ռուս հանճարեղ բանաստեղծ Լերմոնտովի բազմաթիվ ստեղծագործությունները («Մծիրի», «Փախստական», «Կալանավորը», «Ժայռ» և այլն), այլև նրա մահ-

67 Նույն տեղում:

68 Ռ. Սարինյան, *Ավետիք Արասխանյան*, էջ 36—37:

69 Տե՛ս «Մուրճ», 1899, № 4—5, 6:

վան 50-ամյակի առթիվ տպագրում է Լևոն Մանվելյանի հոդվածը, որտեղ հեղինակը հենվելով Բելինսկու գնահատականների վրա, Լերմոնտովին մեծարում է որպես Ռուսաստանի առաջին բանաստեղծը Պուշկինից հետո, նաև որպես Կովկասի անզուգական երգիչը և հայերեն ամենից շատ թարգմանված ռուս բանաստեղծը[70]: Մեծ տաղանդների ստեղծագործությունների թարգմանությունների նկատմամբ «Մուրճը» առանձնապես բծախնդիր էր: Գրախոսականներից մեկում ոչնչացնող քննադատության է ենթարկում Լերմոնտովի «Դևի»՝ Մ. Այտընյանի թարգմանությունը: Սադաթյանից հետ «Դևը» թարգմանելու համար պետք էր նրան գերազանցելու համոզումը ունենալ, այնինչ հրապարակ էր հանված թարգմանական խոտան: «Մի անգամ ընդմիշտ պետք է համոզվել,— գրում է «Մուրճը»,— որ լավ թարգմանիչ նա միայն կարող է լինել, ով ընդունակ է հեղինակի հոգին թափանցելու, զգալու այն ամենը, ինչ որ զգացել է նա երկը ստեղծագործելիս, և ով վստահ է, թե ունի ոչ միայն հեղինակի զգացմունքների ուժն ու թափը (այս դեպքում), այլև նրա արտահայտելու կարողությունը, թեև ուրիշ լեզվով»[71]:

«Մուրճում» տպագրվում են Տուրգենևի արձակ բանաստեղծությունները Մատուրյանի թարգմանությամբ: Շուտով դրանք լույս են տեսնում նաև առանձին գրքով, որի առթիվ ամսագրում գրախոսական է տպագրվում ոչ միայն և ոչ այնքան թարգմանության, որքան գրողի, ռուս գրականության մեջ նրա խաղացած դերի մասին: Դարձյալ վկայակոչվում է Բելինսկին՝ ռուս քննադատական մտքի «ամենալավ ներկայացուցիչը». «Հուշակավոր քննադատի կրակոտ հոդվածները շարժում ձգեցին մեռած հասարակության մեջ, թեև ցարական ռեժիմը նրան ստիպում էր իր համար ավելի քանկ մտքերը արծարծել «տողամեջ»: «Գոգոլի գրվածքների և Բելինսկու հոդվածների ազդեցության տակ, ծնվեց գրողների մի նոր սերունդ, որ նշանավոր երկերով ասպարեզ դուրս եկավ և գրավեց ռուս գրականության մեջ առաջնակարգ տեղեր: Այդ գրողներից էր նաև Տուրգենևը»[72]: Թե ինչպիսի կարևոր նշանակություն էր տալիս ամսագիրը հայ-ռուսական գրական կապերին, երևում է հոդվածի հետևյալ տողերից. «...Ժամանակն է և հարկավոր, որ մենք ծանոթանանք մի ժողովրդի ստեղծագործություններին, որի հետ այնքան կապված ենք: Ոչ մի միջոց այնպես չի մոտեցնում երկու ազգ կամ ժո-

70 Տե՛ս «Մուրճ», 1891, № 6, էջ 767—768:
71 «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1548:
72 «Մուրճ», 1896, № 10—11, էջ 1349:

ղովուրդ, որքան միմյանց մտքերի արտադրություններին փոխադարձ հաղորդակից լինելը»[73]:

Ռուս գրականության հոբելյանական տարեթվերի նկատմամբ «Մուրճը» օրացույցի նման զգայուն էր: Լրանում է Բելինսկու մահվան 50-ամյակը. «Մուրճում» տպագրվում է ընդարձակ հոդված, որտեղ ըստ արժանվույն գնահատվում է ռուս հանճարեղ քննադատը, ցույց են տրվում նրա մեծ ծառայությունները ոչ միայն ռուս գրականության, այլև հասարակական մտքի զարգացման գործում: Բելինսկու հանճարի փայլատակում է դիտվում նրա նշանավոր նամակը Գոգոլին. Բելինսկին արդեն քննադատից դառնում է «քննադատ հրապարակախոս, առաջնորդ»[74]: «Թե նրա հետ անմիջական շփում ունեցող գրողները և թե հետագայում երևցածները, բոլորն էլ ծծեցին նրա քարոզները, սնունդ առան նրանից և այն օրվանից ռուս գրականությունն ընթանում է նրա գծած շավղով: Նույն իրականության հավատարիմ լինելու քարոզն ամեն տեղ, նույն հասարակական շահերի ջատագովությունը գեղարվեստի երկերում, նույն «արվեստը կյանքի համար» ուսմունքը...»[75]: Ահա այսպես է բնութագրվում ռուս գրականության զարգացման գործում Բելինսկու հսկայական դերը, որի գաղափարական ժառանգությունը յուրացրին Ռուսաստանի բոլոր մեծ ու լուսավոր մարդիկ:

Ոչ միայն ռուսները. «Մենք հայերս նույնպես շատ ենք պարտական այդ մարդուն,— կարդում ենք «Մուրճում»,— մեզանից շատ շատերն են սնվել նրա և նրա հաջորդների մտքերից. լինելով ռուս գրականության ազդեցության տակ, մեր թե գրականությունը, թե քննադատությունը և թե նորահաս միտքը կրել են նրա ազդեցությունը: Միայն ռուսները չեն, որ պարտական են նրան, մենք էլ ենք շատ պարտական»[76]:

Տոլստոյը այն ռուս հեղինակն է, որի ստեղծագործություններից թեև «Մուրճում» չեն հրապարակվել, բայց որի մասին ամենից շատ հոդվածներ են տպագրվել: Տոլստոյի գրական ստեղծագործության և նրա բարոյախոսության գործյան հանգույցը երկար տարիներ վիճաբանության նյութ է տվել մամուլին ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս: «Մուրճը» ևս իր մասնակցությունն է բերում այդ

---

73 Նույն տեղում, էջ 1351:

74 «Մուրճ», 1898, № 7—8, էջ 1092:

75 Նույն տեղում, № 9, էջ 1235:

76 Նույն տեղում, էջ 1238:

վեճին, փորձում թափանցել Տոլստոյի մեծ արվեստի խորխորատները, հասկանալ ու գնահատել նրա բարոյախոսության ուժեղ և թույլ կողմերը։ Բոլոր դեպքերում ընդգծվում է Տոլստոյի արվեստի մեծ հումանիզմը, համամարդկային արժեքը։ «Մոռացված խոսքեր» վերնագրով հոդվածում Երվանդ Ղազարյանը գրում է, որ Տոլստոյի և Շչեդրինի նման խոշոր անձնավորությունները «իրանց մեջ ամփոփում են միլիոնավոր մարդոց պիտույքները և հոգսերը...։ Նրանց բողոքը հավասար է միլիոնավոր ամբոխի բողոքին, նրանց ուրախությունը, վիշտը, ցանկությունները և հույսերը արտահայտում են նույն միլիոնավոր բազմության պահանջները, կարիքը, վիշտը...»[77]։ Դիտելով բուրժուական հասարակությունը, հեղինակը Տոլստոյի քարոզները խղճի, մարդասիրության, եղբայրության մասին մոռացված խոսքեր է համարում։ Ուղիղ երկու տարի անց, նույն հեղինակը հոդված է գրում Տոլստոյի բարոյախոսության մասին, այն խոսուն կերպով վերնագրելով՝ «Գայլի դլխին ավետարան»։ Այս անգամ արդեն հեղինակն ավելի ռեալ է տեսնում տոլստոյականության իրական արժեքը, գտնելով, որ մեծ գրողի «քարոզած սիրո, եղբայրության սկզբունքները՝ դիպչելով իրական կյանքի բարդ պահանջներին՝ չարդուփշուր են լինում գործնականապես...»[78]։

Դատապարտելով «չարին չհակառակվելու» տոլստոյական քարոզը, «Մուրճի» հեղինակները խճճվում էին մեծ գրողի արվեստի և բարոյախոսության հակասության բարդ հանգույցներում, երբ մտածող-Տոլստոյին ամենից լավ հերքում էր գրող-Տոլստոյը։ Պետք էր լենինյան հանճարը, որպեսզի Տոլստոյի արվեստի մեջ տեսներ ռուսական հեղափոխության հայելին։

Ռուս մեծ երգիծաբան, հեղափոխական-դեմոկրատ Սալտիկով-Շչեդրինի քաղաքական հնչեղ սատիրայից «Մուրճը» հրապարակեց միայն մեկ ստեղծագործություն, բայց որի նշանակությունը դժվար է գերագնահատել. դա հանրահայտ «Լիբերալ» հեքիաթն է։ Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ գրաքննությունը «տենդենցիոզության համար» շաբլոն մակագրությամբ մերժում է նաև «Լիբերալը»։ Ըստ երևույթին ցարական գրաքննության ռուսական չինովնիկների կովկասցի կուլեգաները «Հռոմի պապից կաթոլիկ» էին դտնվել։ Արաս-խանյանը հասնում է «Լիբերալի» տպագրության թույլտվությանը, հավանաբար վկայակոչելով Շչեդրինի «Հեքիաթներում» 1885 թ. նրա

---

77 «Մուրճ», 1891, № 12, էջ 1569։

78 «Մուրճ», 1893, № 12, էջ 1924։

հրապարակված լինելու հանգամանքը։ Հայերեն այն լույս է տեսնում «Մուրճի» 1896 թ. № 1-ում։

Շչեդրինի հետ միասին «Մուրճը» ծիծաղում ու ծաղրում է լիբերալ անգործին, որը զրկվելով իր բոլոր գեղեցիկ իդեալներից, ի վերջո հարմարվում է անարգությանը։ Շչեդրինի քաղաքական կծու սատիրայից հենց լիբերալների անգործությունը, երկչոտությունը, հարմարվողականությունը մերկացնող հեքիաթ-պամֆլետի ընտրությունը շատ բան է ասում խմբագրի քաղաքական դիրքորոշումների մասին։

«Մուրճի» թարգմանական գրականության մեջ պիտի առանձնացնենք մի ստեղծագործություն ևս. դա Մաքսիմ Գորկու «Բազեի երգն» է, որն առաջին անգամ «Մուրճի» էջերից հնչեց հայերեն լեզվով։ Ազատասիրության վեհ գաղափարներով պիտի համակվեր ընթերցողը կարդալով ֆորիզմի նման հնչող այս տողերը. «Սողուն ծնվածը— թռչել չի կարող», «Թեկուզ դու մեռար... բայց քո անունը հոգով քաջերի և ուժեղների երգերի միջին հավետ կհնչե, որպես ուժգին կոչ դեպ ազատություն ու դեպի լույսը»[79]։ Ամսագրի վերջում մի փոքրիկ ծանոթություն հավաստում է. «Մուրճի» ներկա №-ում տպվում է Մաքսիմ Գորկիի մի փոքրիկ պատմվածքը, որը մի արձակ բանաստեղծություն է։ Ռուսաց գրականության մեջ նոր հայտնված վիպական տաղանդներից է հեղինակը։ Պր. Լևոն Թումանյանը սորանով իր երկրորդ հաջող թարգմանական փորձն է անում»[80]։

Դժվար է մեկ առ մեկ թվարկել ռուս գրականությունից «Մուրճի» հրապարակած թարգմանությունները։ Նշենք ևս մի քանի հեղինակների անուններ՝ Չեխով, Ուսպենսկի, Պլեշչեև, Կորոլենկո, Նեմիրովիչ-Դանչենկո, Կուզմա Պրուտկով, Գարշին, Նագսոն, որոնց ստեղծագործությունները կզարդարեին ամեն մի պարբերական օրգան։

Խոսել «Մուրճում» արծարծված հայ-ռուսական դրական կապերի մասին և չառանձնացնել Յուրի Վեսելովսկու անունը, անհնարին է։ «Մուրճի» համար դա մի անուն էր, որ կենդանի օրինակ էր տալիս և կերպավորում երկու ժողովուրդների բարեկամական կապերը։ Ալեքսանդր Շատուրյանը «Մի համակրելի երևույթ» հոդվածում արժանին է հատուցել ռուս գործչին, նրա հայանպաստ գործունեությունը մատնացույց անելով որպես առաջադեմ ռուս մտավորականության վերաբերմունքի դրսևորում դեպի հայ ժողովուրդը, ի հակադրություն զուբովների, վելիչկոների նման

---

79 «Մուրճ», 1899, № 4—5, էջ 400—401։

80 Նույն տեղում, էջ 540։

«մտքով կույր ու հոգով բթացած շովինիստների», որոնք ծաղրելով ու նախատելով այս ու այն ազգին, ծաղր ու նախատինք էին բերում հենց այն մամուլին, որին ծառայում էին իրենց ծախու գրչով։

Հայ գրողի երախտագիտական զգացմունքի հորդումին առիթ էր ծառայել «Ռուսսկիե վեդոմոստի» թերթում տպագրված Վեսելովսկու հոդվածը «Հայ մամուլի 100-ամյակը» վերնագրով։ Սակայն, ինչպես նշում է հոդվածագիրը, «Վեսելովսկին առաջին անգամը չէ, որ ասպարեզ է գալիս յուր մայրենի գրականության և մամուլի մեջ հայկական կյանքի այս ու այն աշքի ընկնող երևույթներին նվիրված խելացի, բանիբուն հոդվածներով և այդպիսով յուր ազգակիցներին ճիշտ ու հիմնավոր գաղափար է տալիս մեր մասին։ Մի քանի տարի է արդեն, որ նա սիրով հետևում է մեր ժամանակակից հասարակության և մտավոր կյանքի ընթացքին և առիթ եղած ժամանակն իսկույն յուր բարի խոսքով և բարեխիղճ կարծիքով հանդես է գալիս ռուսաց մամուլում»[81]։ Օրինակ են բերվում նրա հոդվածները Րաֆֆու, Աբովյանի, Պատկանյանի, Ադամյանի, Պեշիկթաշլյանի, Սունդուկյանի, հայ թատրոնի մասին և, մանավանդ, «Հայկական բելետրիստներ» ժողովածուի հրատարակումը՝ արժանի հայերի «առանձին համակրանքի և երախտագիտական զգացման։ Վեսելովսկին առաջինը եղավ յուր հայրենակիցների մեջ, որ այդպիսի մի գեղեցիկ և համակրելի միտք հղացավ, այն է հայ մտքի և հոգու արտահայտությունները բազմատեսակ նմուշներով թարգմանաբար ներկայացնել ռուս հասարակությանը»[82]։ Այնուհետև ընդարձակ քաղվածքներով Ծատուրյանը ներկայացնում է Վեսելովսկու հոդվածը, որից երեվում է, թե ռուս հրապարակախոսը ինչպես բարձր էր գնահատում հայ մամուլի երախտավորներին, հատկապես Ստեփանոս Նազարյանին, Միքայել Նալբանդյանին, Հակոբ Պարոնյանին, Գրիգոր Արծրունուն, Մկրտիչ Խրիմյանին և ուրիշների։ Վեսելովսկին իր հոդվածը վերջացնում է, նշելով «նորագույն հայ մամուլի մի շատ համակրելի հատկությունը՝ այն է, որ նա միշտ գիտե արձագանք տալ ժողովրդական շահերին ու կարիքներին»[83]։

Երբ Մոսկվայում մի խումբ հայ մտավորականներ հանդես կազմակերպեցին՝ նշելու Յուրի Վեսելովսկու՝ հայ գրականությանը նվիրած 10-ամյա գործունեությունը, «Մուրճը» այսպիսի հետաքրքիր հղեց հոբել-

81 «Մուրճ», 1894, № 10, էջ 1506։

82 Նույն տեղում, էջ 1507։

83 Նույն տեղում, էջ 1513։

յարին. «Յուրի Վեսելովսկուն ջերմագին մաղթում ենք երկար տարիների գործունեություն՝ հավասար անցյալ տասնամյակին։ Հանճին նորա ռուսաց գրագետը դառնում է հարազատ հային, որը կարող է պարծենալ այսպիսի բարեխիղճ և տաղանդավոր ներկայացուցչով։ Պատրաստ ենք մեր ամսագրի էջերը ծառայեցնելու ստորագրության՝ հարգելի և հարազատ Վեսելովսկու գրվածները հայոց գրականության վերաբերյալ՝ ամբողջական հատորներով հրատարակելու համար»[84]։

Վեսելովսկին «Մուրճին» ուղղած շնորհակալական նամակում գրում էր. «...Դեպի նվաստս ցույց տրված այդ սիրաշահ տրամադրությունը հայ հասարակության կողմից, որի վերաբերմամբ ես միշտ տոգորված եմ եղել անկեղծ և ջերմ համակրանքի զգացումներով, նոր ուժ և եռանդ է ներշնչում ինձ նաև ապագայում շարունակելու իմ գործունեությունը, կարողացածիս չափ ծանոթացնելու ռուս հասարակությանը հայ ժողովրդի ցավերին ու կարիքներին, նրա քաղաքակրթական հակումներին, նրա բուն ազգային բնույթին։ Ես հավատում եմ, որ վաղ թե ուշ, կգա մի օր, երբ իսպառ կփարատվեն ռուս հասարակության կանխակալ և նախապաշար կարծիքները հայերի մասին և այդ հասարակությունը միանգամայն արդար ու գթասիրտ, անաչառ, համբերող և եղբայրական ոգով կվերաբերվի դեպի հայ ժողովուրդը։ Յանկանք, որ շուտ հասնի այդ օրը»[85]։

Հենց ինքը՝ Վեսելովսկին, իր խոսքերի պերճախոս ապացույցներն էր տալիս, եղբայրական ոգի սերմանում երկու ժողովուրդների մեջ, մոտեցնում մեծ բարեկամության ցանկալի օրը։

«Մուրճը» հրատարակվում էր Թիֆլիսում, որն այն ժամանակ ոչ միայն վրաց, այլև հայ մտավոր ու մշակութային կյանքի կենտրոնն էր։ Հայ-վրացական հարաբերությունների մասին այս շրջանում կարելի է խոսել ոչ միայն իբրև հարևանների հարաբերությունների։ Շատ հարցերում դա պարզապես համատեղ գոյություն էր, սերտաճած կյանք։ Հայկական մամուլում Անդրկովկասի տնտեսական-կուլտուրական զարգացման հարցերը քննվում էին այնտեղ բնակվող ժողովուրդների շահերը միասնաբար հաշվի առնելով։ Այնպես որ XIX դարի արևելահայ մամուլի պատմությունը ոչ միայն հայ ժողովրդի պատմության տարեգրությունն է, այլև ամբողջ Անդրկովկասի։

---

84 «Մուրճ», 1900, № 1, էջ 119։
85 «Մուրճ», 1900, № 3, էջ 407—408։

«Մուրճի» խմբագիրը ամսագրի էջերում ծրագրված, հետևողական կերպով պրոպագանդեց հարևան ժողովուրդների հետ բարեկամության անհրաժեշտությունը։ «Մուրճում» իրար հետևից սկսեցին երևալ վրաց գրողների ստեղծագործությունների թարգմանությունները՝ Իլյա Ճավճավաձեի «Մարդ է արդյոք», Ալեքսանդր Ղազբեգիի «Էլիսո», «Ջորի նահապետ Գոչա», «Էլբերդ», Եկատերինե Գաբաշվիլու «Օրենա և Քուչե» վիպակներն ու պատմվածքները։ Նշանակալից երևույթ պետք է դիտել հայ թարգմանական գրականության պատմության մեջ «վրաց գրականության լուսատու աստղ և բանաստեղծների նահապետ»[86] Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» պոեմի թարգմանության տպագրությունը՝ արձակ և համառոտած, որին նախորդեց թարգմանիչ-քննադատի՝ Հարություն Միրիմանյանի «Շոթա Ռուսթավելի և նրա պոեման» հոդվածը։ «Ընձենավորը» վրաց ազգի անցյալի գրական ամենափայլուն արտադրությունն է,— կարդում ենք այդ հոդվածում,— ...Այդ դրվածքի հեղինակը ընծայեց վրաց ազգին այնպիսի մի գանձ, որ անգնահատելի է։ Դա մի ընդարձակ պոեմա է, որի հետ ծանոթությունը հայ ընթերցող հասարակության համար անհրաժեշտ է, մանավանդ այն հիմնավոր սկզբնավորությունից հետո, որ արել է «Մուրճը» վրաց գրականության և ազգի հետ հայերին ծանոթացնելու համար»[87]։

Դժվար է անդրադառնալ այն բազմաթիվ հոդվածներին, որ հրապարակեց «Մուրճը» հայ ընթերցողին վրաց գրականությանը, մշակույթին և պատմությանը ծանոթացնելու նպատակով։ Մի նամակում Արասխանյանը գրում է. «Վրացի գրականությունից թարգմանություններ տալու միտքը սա է, որ հայ հասարակությունը ծանոթանա յուր դրացի և անծանոթ մնացած ազգի հետ, որից կծագի նաև զգացմունքների ու գաղափարների ավելի մեծ համերաշխություն, որ քաղաքականապես անհրաժեշտ է երկու դրացիների համար»[88]

Տիգրան Փիրումյանի «Ճավճավաձեի վեպի առիթով» գրախոսականը սկսվում է այն ցավալի փաստի դատապարտումով, երբ երկու քաղաքակիրթ ժողովուրդները "շատ քիչ տեղեկություն ունին փոխադարձաբար միմյանց ազգային կյանքի մասին. և որ հայ գրականությունը վրաց համար և վրաց գրականությունը հայոց համար՝ երկու անծանոթ աշ-

---

86 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 426։

87 Նույն տեղում, էջ 425։

24 «Մուրճ», 1895, № 8, էջ 1163։

խարհներ են»։ Մինչդեռ Վրաստանն ունի «մի շարք պատկառելի ու համակրելի քերթողներ, որոնց գողտրիկ ու դյութիչ ոտանավորները կկարդացվեն դարուց դարս։ Ալեքսանդր Ճավճավաձե, Գրիգոր Օրբելիանի, Նիկոլոս Բարաթով, Ռափայել Էրիսթավի, Ակակի Ծերեթելի և Իլյա Ճավճավաձե— ահա վիրական քնարի փայլուն ադամանդները»[89]։

Մոչխուբարիձեի (Ղազբեգի) «Էլգուջա» վեպի Տ. Փիրումյանի թարգմանության գրախոսականում, որի հեղինակն է Մկրտիչ Նավասարդյանը («Մուրճում» տպագրված վրացական գրական երկերի մեծ մասի թարգմանիչը) նույնպես ուրախությամբ հավաստվում է առողջացող մթնոլորտը. «Ուրախալի է նկատել մի երևույթ, որ հայերն ու վրացիները լավ հասկանալով անմիտ ատելության վնասակարությունը, միմյանց հաշտության և բարեկամության ձեռք մեկնել են սկսել այս վերջին ժամանակներս, հարգանքով և ակնածությամբ վերաբերվելով իրար։ Օրինակ, տեսնք, հարգելի պ. Գ. Ծերեթելու խմբագրությամբ հրատարակվող «Կվալի» շաբաթաթերթը բացել է իր սյունակները և ուրախությամբ տպագրում է հայերի վերաբերյալ ինքնուրույն հոդվածներ և մանրավեպեր»[90]։

Նավասարդյանը այս գործում պատվավոր դափնին վերապահում է «Մուրճին». «Այդ նոր և համակրելի շարժման սկիզբը դրեց պ. Ավ. Արասխանյանցը, իր «Մուրճ» ամսագրով», և հույս է հայտնում, որ դրացիական համերաշխության գաղափարը կհարատևի և նոր բարի պտուղներ կբերի։

Երբ մահացավ Գեորգի Ծերեթելին, «Մուրճում» մահախոսական տպագրվեց, որտեղ վրաց հրապարակախոսն ու հասարակական գործիչը մեծարված էր որպես գլխավոր ներկայացուցիչը «վիրա-հայկական համերաշխության, որ նա քարոզում էր գրչով և գործով»[91]։

Վրաց մեծ բանաստեղծ Բարաթաշվիլու մահվան առիթով ամսագրում հոդվածով հանդես է գալիս խմբագիրը, ըստ արժանվույն գնահատելով գրողի ծառայությունները վրաց նոր գրականության զարգացման գործում։ Հուզիչ է այն փաստը, որ վաղամեռիկ պոետի աճյունի վրա, իբրև «Մուրճի» անունից հրաժեշտի խոսք, երիտասարդ Հովհաննես Թումանյանը կարդում է Բարաթաշվիլուն նվիրած իր բանաստեղծությունը, որը հետո տպագրվեց «Մուրճի» 1893 թ. № 4-ում։

---

89 «Մուրճ», 1891, № 4, էջ 435։

90 «Մուրճ», 1893, № 9, էջ 1409։

91 «Մուրճ», 1900, № 1, էջ 129։

խրախուսել հայ-վրացական հարաբերությունները առողջացնող ամեն մի քայլ և դատապարտել երկու ժողովուրդների բարեկամությունը խաթարող ամեն մի ձգտում՝ այս սկզբունքն էր «Մուրճի» վարած քաղաքականության կարգավորիչը։ Զարմանալի չէ, որ Արասխանյանը «Նովոյե օբոզրեննիե» թերթից արտատպեց պրոֆեսոր Նիկողայոս Մառի «Հայ-վրացական հարաբերությունները անցյալում» հոդվածը («Մուրճ», 1898, № 4)։ Գիտական միջամտությունը պետք է վերջ դներ երկու ազգերի միջև արհեստականորեն հրահրվող և նացիոնալիզմի անառողջ աղբյուրից ջուր առնող անպտուղ վեճին, որին, ցավոք, տուրք տվեցին նաև ժամանակի որոշ գրողներ, գործիչներ, չհասկանալով, թե ում է ձեռնտու այդ կրակի բորբոքումը, ովքեր են նրա վրա տաքացնում իրենց ձեռքերը։

«Մուրճի» հրատարակության դեռ առաջին տարում Արասխանյանը գրում էր. «Հարկավոր է, որ հայ ընթերցողի աչքի առջև մի պատուհան բացվեր, որտեղից նա կարողանար յուր տեսողությունը տարածել նաև օտար, մեղնից շատ և շատ ավելի լուսավոր և առաջադեմ ազգերի մտքի և ոգու արդյունքների վրա»[92]։ «Մուրճի» տասներկու տարվա գործունեության հանրագումարներից մեկն էլ այն է, որ նա մի լայն պատուհան բացեց իր ընթերցողների տեսողության առջև, որտեղից ներթափանցող հյուսիսային և արևմտյան թարմաշունչ ու կենսաբեր հոսանքները եկան նպաստելու հայ ժողովրդի վերածննդին, առաջադիմության ու լուսավորության։ Ժողովուրդների գրական-մշակութային կապերի ամրապնդման մեջ նա ժողովուրդների բարեկամությունը կռելու, կոփելու հզոր միջոց տեսավ և ամեն կերպ նպաստեց նրա զարգացմանը։

Գլուխ հինգերորդ

«Մուրճը» որպես լուսավորական օրգան

«Մուրճը» կոչվում էր բաղաքական, հասարակական, գրական ամսագիր։ *Այս ենթավերնագրին ամենայն իրավամբ կարող ենք ավելացնել նաև՝* գիտական, *որովհետև արևելահայ իրականության մեջ դուռ գիտական հանդեսի բացակայության պայմաններում նա որոշակի չափով փարատում էր այդ պակասը։ Այլ կերպ չէր կարող վարվել մի սա-*

---

92 *«Մուրճ», 1889, № 10, էջ 1656։*

սագիր, որը զգայուն էր ժամանակի տատանումներին, իսկ XIX դարի երկրորդ կեսը գիտության մեջ վիթխարի թռիչքների և հեղաշրջումների ժամանակաշրջան էր։

Խոսելով մամուլում գիտական խրոնիկայի անհրաժեշտության մասին, «Մուրճի» աշխատակից Մխիթար Տեր-Անդրեասյանը գրում է. «Ո՞վ չէ լսել, որ XIX դարը կիրառական գիտությունների դար է,— շոգու, էլեկտրականության, մեքենաների, ահագին շինությունների դար է։ Չի անցնում մի ամիս, կարելի է ասել մի օր, որ կիրառական գիտության այս կամ այն ճյուղում մի՝ շատ կամ քիչ նշանավոր՝ հաղթություն չլինի տանելիս մարդկության։ Եվ դարուս այդ առանձնահատկության համեմատ եվրոպական ազգերն ունեն հատկապես այդ գործին ծառայող մասնագիտական պարբերական հրատարակություններ և բացի այդ, շատ ուրիշ, ոչ մասնագիտական, օրգաններ՝ ունեն առանձին բաժիններ այդ գիտություններին հատկացրած, ուր հաղորդում են իրանց ընթերցողներին կիրառական գիտությունների աշխարհում երևած նորությունները»։ Եթե մասնագիտական հրատարակությունների մասին հայ հասարակությունը դեռևս կարող էր երազել, ապա գոյություն ունեցող պարբերականները, գտնում էր «Մուրճի» աշխատակիցը, «կարող են և պարտական են բանալ առանձին գիտական բաժիններ և պարբերաբար հաղորդել ընթերցող հասարակության կիրառական գիտությունների մեջ մարդկության տարած նոր ու նոր հաղթանակները»[1]։ «Մուրճը» ոչ միայն խնդիր է դնում, այլև ինքն է տալիս դրա իրագործման լավագույն օրինակը։ Ամսագրում լայնորեն լուսաբանվում են գիտության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ հարցեր, հաղորդումներ են տպագրվում համաշխարհային գիտական համաժողովների մասին, ընթերցողներին տեղյակ պահում գիտական նորույթներին, հայտնագործություններին։

Արասխանյանը առհասարակ մեծ հույսեր էր կապում գիտության հեղափոխիչ ուժի հետ։ Նրա այդ հույսերը սնվում էին բուրժուական ռեֆորմիստական աշխարհայացքից, որը հասարակական չարիքը հալածելու հզոր միջոց էր դիտում գիտությունը։ Այստեղից էլ՝ ամսագրի լուսավորական-հանրագիտական ուղղվածությունը, որով խմբագիրը հույս ուներ նպաստել ազգի ոչ միայն հոգևոր, այլև տնտեսական բարգավաճմանը։ Մենք արդեն տեսանք, թե տնտեսագետ խմբագիրը ինչ-

---

1 «Մուրճ», 1892, № 11, էջ 1698։

պիսի կարևորություն էր տալիս տնտեսական հարցերի քննությանը, ձգտելով եվրոպական տնտեսագիտական ուսմունքների օգնությամբ կոահել սեփական ազգի զարգացման ուղիները։ Գիտության մյուս ճյուղը, որ ամսագրում առանձնահատուկ ուշադրության է արժանանում, բնագիտությունն է։ XIX դարի երկրորդ կեսում դարվինիզմը հեղաշրջում առաջացրեց բնագիտության բնագավառում, զարգացման իր էվոլյուցիոն թեորիայով հզոր կռվաններ բերելով մատերիալիստական աշխարհայացքի հաղթանակի համար՝ ընդդեմ իդեալիզմի։ Ում համար թանկ էր գիտության ապագան, առաջընթացը, պաշտպան կանգնեց Դարվինի հեղափոխական ուսմունքին։ Այն իր ջերմ պաշտպանները գտավ նաև հայ իրականության մեջ։ «Ամենից շատ էջեր հատկացրեց դարվինիզմին և առհասարակ էվոլյուցիոն ուսմունքին «Մուրճը», որը արևելահայ գրականության մեջ միակն էր, որ բարձր գնահատելով բիոլոգիայի նշանակությունը մարդու կյանքում և նրա մատերիալիստական աշխարհայացքի կազմակերպման գործում, մեծ տեղ էր տալիս բիոլոգիական թարգմանական և առավել շատ՝ ինքնուրույն աշխատություններին»[2]։

Ահա այդ ինքնուրույն աշխատությունների հեղինակն էր բնագետ-դարվինիստ Սամուել Բալաշյանը, դարվինիզմի վերաբերյալ առաջին գիտական աշխատության հեղինակը արևելահայ իրականության մեջ։ Բնագիտության ուսուցիչը հանձին «Մուրճի» գտել էր այն հարմար ամբիոնը, որտեղից կարող էր ժողովրդականացնել նոր ուսմունքը, ինչը նա անում էր կրքոտ նվիրվածությամբ ու եռանդով նաև Ներսիսյան դպրոցում, իր աշակերտների շրջանում։ Հանրամատչելի լեզվով գրած նրա հոդվածները՝ «Միկրոբներ», «Կենդանիների խելքը և սիրտը», «Լուի Պաստեռ», «Բույսերի բեղմնավորությունը», «Կենդանիների հասարակական կյանքը» և այլն, ծանոթացնում էին ընթերցողներին կենսաբանության նվաճումներին, դարվինիզմի կարևոր սկզբունքներին։

Մի կոչում ևս ուներ «Մուրճը». լրացնել առողջապահական հանդեսի պակասը։ Առողջապահական զրույցները ամսագրի մշտական թեմաներից են։ Բժշկական գիտելիքները ժողովրդի մեջ տարածելու գործին սիրով լծվել էր էնտուզիաստ բժիշկների մի մեծ խումբ՝ Գրիգոր Տեր-Գրիգորյան, Վահան Արծրունի, Ներսես Ամիկյան, Թադևոս Զաքարյան, Գարեգին Սարգսյան և շատ ուրիշներ։ Շոշափված հարցերի բազմազա-

---

2 Ռ. Գաբրիելյան, *Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ*, Երևան, 1963, էջ 380։

նության և կարևորության մասին պատկերացում կարելի է կազմել հենց միայն հոդվածների վերնագրերից. «Բարակացավ-թոքախտը», «Մանուկների մարսողության օրգանների մի քանի հիվանդությունները», «Սննդառություն և կերակուր», «Խրատներ խոլերայի մասին», «Մարդկային սերհատության», «Ժառանգականություն», «Ամուսնական առողջապահություն», «Օդ և կլիմա», «Ալկոհոլականության վտանգը» և այլն: Հոդվածները գրված են պարզ, գրավիչ, մատչելի լեզվով և գիտության վերջին խոսքի տվյալներով: Նույնիսկ այսօր առանց հետաքրքրության չի կարելի կարդալ ութ տասնամյակով հնացած այդ գիտական զրույցները:

Հայ լուսավորված մտավորականության գործունեության հետ ժողովրդի տնտեսական և հոգևոր բարգավաճման հույսերը կապող խմբագիրը, հասկանալի է, ինչպիսի կարևորություն պիտի տար նոր սերնդի դաստիարակության գործին: Նա փայփայում էր գիտությամբ զինված, ազգօգուտ գործունեության ծարավով այրվող, կյանքը հեղաշրջելու ընդունակ սերունդ աճեցնելու գաղափարը: Ոչ միայն փայփայում էր, այլև այն իրականություն դարձնելու համար չանք չէր խնայում. դաստիարակության և կրթության հարցեր էր բարձրացնում, մատնացույց անում առաջավոր ազգերին, կրթության գործի դրվածքը Գերմանիայում, Ֆրանսիայում, սլրոպագանդում դասավանդման առաջավոր մեթոդները, վկայակոչում մեծ մանկավարժների ասույթները: Արասխանյանը ամսագրի շուրջը համախմբեց ժամանակի առաջավոր մանկավարժներից կազմված մի պատկառելի հեղինակային ակտիվ, որի շնորհիվ ամսագիրը մանկավարժական դպրոց դարձավ և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար:

Ամսագրին իր մեծ նպաստը բերեց հայ ականավոր մանկավարժ Հովհաննես Բարխուդարյանը, որի մանկավարժական հոդվածներն այսօր իսկ կարդացվում են մեծ հետաքրքրությամբ: «Տեմպերամենտ և նորա նշանակությունը» հոդվածը, որքան որ հետաքրքիր է իբրև մարդկային տարբեր բնավորությունները բնութագրող տեսական հոդված, նույնքան օգտակար է իր գործնական խորհուրդներով, երեխաների անհատական դաստիարակության կարևորությունը և նշանակությունը վեր հանելու համոզիչ ուժով. «Ի՞նչ կլիներ դաստիարակությունը առանց անհատականության,— հարցնում է մանկավարժը և պատասխանում,— օդի մեջ

շինած, առանց հիմքի մի տուն...»[3]: Հոդվածն ընթերցող ուսուցիչը, ծնողը չէին կարող ուշադրության չառնել հեղինակի խորհուրդը. «Հարգեք յուրաքանչյուր տեմպերամենտ և մտեք յուրաքանչյուր երեխայի հոգու մեջ, քննեցեք նրա հոգու հատկությունները: Այն ժամանակ միայն ձեր դաստիարակության կոչումն կպսակվի, այն ժամանակ միայն կարող եք յուրաքանչյուր տեմպերամենտի մեջ ծածկված ոսկին գտնել, կեղտերից մաքրել և նրա վերա բնավորության հիմք կառուցանել»[4]:

Ամսագրի «մանկավարժական դպրոցի» ամենաբեղմնավոր հրապարակագիրը Հովհաննես Տեր-Միրաքյանն է, որը հանձին «Մուրճի» գտել էր մի շատ ընդարձակ լսարան՝ զրուցելու ուսուցիչների, ծնողների հետ՝ նոր սերնդի դաստիարակության խնդիրների մասին: «Հոգեբանական-մանկավարժական խորհրդածություններ», «Ուսումնարանական գիտելիքների բարոյական հեղափոխիչ զորությունը», «Դեռահասների ընթերցանությունը» և այլ հոդվածներում անվանի մանկավարժը ընթերցողներին ծանոթացնում է համաշխարհային մանկավարժական մտքի նվաճումներին, մասնավորացնում դրանք հայ դպրոցի, ընտանիքի համար, շեշտում ուսուցումը կյանքին մոտեցնելու անհրաժեշտությունը:

Սոֆյա Արղությանի «Ընտանիքը և դպրոցը» զրույցը միասնական դաստիարակության նշանակությունն է ընդգծում: Ա. Զիլինկարյանի «Ձեռքի և պարտիզպանական աշխատանքը դաստիարակության գործում» հոդվածում պոլիտեխնիկ կրթության պահանջ է դրվում. «Հոդվածովս ցանկանում եմ ցույց տալ,— գրում է հեղինակը,— թե դպրոցական ձեռքի աշխատանքը կամ արհեստները ո՛րչափ մեծ նշանակություն ունին ոչ միայն գործնական կյանքի, այլև բուն դաստիարակչական գործողության համար. մի խնդիր, որ երկար ժամանակից ի վեր դպրոցական աշխարհում օրվա այրող անհրաժեշտ հարցերից մեկն էր եղել»[5]:

«Մուրճը» հարցեր է սրում, հարցեր է դնում: Արասխանյանը դպրոցական վարչական ռեֆորմ անցկացնելու անհրաժեշտության վրա է դարձնում հասարակության ուշադրությունը: Բանն այն է, որ դպրոցներում ընտրովի հոգաբարձուներ, որոնց ստեղծումը 60-ական թվականներին առաջադիմական քայլ էր դպրոցների դեմոկրատացման

3 «Մուրճ», 1889, № 4, էջ 651:

4 Նույն տեղում, էջ 667:

5 «Մուրճ», 1899, № 1, էջ 59:

ճանապարհին, երեսուն տարի գործելով անփոփոխ կանոնադրությամբ և հնթարկվելով ժամանակի բարքերի աննպաստ ազդեցությանը, միշտ և ամենուրեք չէ, որ ժողովրդի կամքն էին արտահայտում, շարժվում նոր պահանջների թելադրանքով։ Հաճախ հոգաբարձություններում ընտրըվում էին անարժան մարդիկ, տեղիք տալիս կամայականությունների ու չարաշահումների։ Արասխանյանն առաջարկում է դպրոցական բոլոր հոգաբարձություններին վերահսկող ընդհանուր Ուսումնական Հոգաբարձություն ստեղծել, որը դպրոցների համար միասնական ծրագրեր մշակեր և միասնական ղեկավարություն իրականացներ[6]։

«Մուրճը» շատ է գրում նաև հայ ուսուցիչների անապահով վիճակի մասին, փրկության ելք փնտրում խնայողական դրամարկղների կազմակերպման մեջ, առաջարկում ուսուցիչներին ճանաչել «պաշտոնյա և ոչ վարձկան»[7]։

«Մուրճի» բոլոր ջանքերն ուղղված էին ազգային նոր դպրոցի ամրապնդման նպատակին՝ որպես ազգային ինքնաճանաչման ու համախմբման հզոր միջոցի։ Կրթության սիստեմի աշխարհականացման ու դեմոկրատացման լուսավորիչների պատգամները լավ էին յուրացրել նոր սերունդները։ Միայն թե ժամանակները շատ էին փոխվել։ 90-ական թվականները հայ դպրոցի համար ծանր, մղձավանջային տարիներ եղան։ Հայ ժողովրդի ամբողջ դաժան պատմությունը կիսած, նոր ժամանակներում վերածննդի ու ծաղկման ուղին բռնած դպրոցը, որ հայ լուսավորիչների տառապագին ջանքերի շնորհիվ իր կենսագրության ամենահարուստ էջերն էր գրում, ցարիզմի կողմից դիտվում է որպես ազգային ճնշման աջցանները դնելու ամենահարմար օղակը։ «Ցարիզմի նպատակը պարզ էր. նա ցանկանում էր հայերին զրկել ազգային ինքնադիտակցության դարբնման ամենաուեալ միջոցից՝ դպրոցից, և փոխանցման կամ փակելուց հետո կրկին վերաբացելու միջոցով այդ դպրոցը վերածել նրանց ձուլման գործիքի»[8]։

Հայկական դպրոցները փակվում են (մոտ 250), հայ ուսուցիչները նետվում են փողոց, հայ մանուկները զրկվում են մայրենի լեզվով կրթվելու բնականոն իրավունքից։ Հայ մամուլի բերանին փականք է

---

6 Տե՛ս «Մուրճ», 1892, № 9, 10, 1900 № 5—6։

7 Տե՛ս «Մուրճ», 1894, № 1, էջ 137։

8 Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970, էջ 208։

դրվում։ Ջուր կլինի «Մուրճի» էջերում փնտրել հայ դպրոցի դարավերջի պատմությունը։ Այստեղ լռությունն է պերճախոս... Բայց հայ դպրոցը մեկ անգամ չէր հարություն առել մոխիրներից։ Իր գոյության իրավունքը նա ևս էր նվաճելու ցարական ինքնակալության հիմքերը սասանող ռուսական առաջին հեղափոխության օգնությամբ։

Հայ եկեղեցու և հոգևորականության հարցը, որ երկար տարիներ տաք վիճաբանության առարկա է եղել հայ մամուլի էջերում, զբաղեցրել է նաև «Մուրճին»։ Հայ ազատամտականությունը՝ «Հյուսիսափայլից» սկսած գտել էր պահպանողականության ամենաթույլ տեղը և գաղափարական պայքարի նետերի մեծ մասն ուղղել դեպի այդ նշանակետը։ Կյանքը եկավ հաստատելու այն տեսակետի ճշմարտացիությունը, որ հայ եկեղեցին ավարտել է իր դերը և չի կարող լինել ազգային գոյության ու առաջադիմության խարիսխ։ «Մուրճը» ամբողջովին որդեգրեց հայ ազատամտականության տեսակետները եկեղեցու և հոգևորականության վերաբերյալ, և եթե պահպանողական բանակից ուշացած կրակոցներ էին լինում, «Մուրճը» պատասխանում էր նրանց «Հյուսիսափայլի» և «Մշակի» բառապաշարով։ «Նոր-դարի» հեղինակներից մեկը դժգոհում է, որ հասարակության և ազգային առաջադիմության գործոններ են դիտվում միայն դպրոցն ու մամուլը, իսկ եկեղեցին ու հոգևորականությունը մոռացվում են։ «Մուրճը» հանդես է գալիս այս ժամանակավրեպ հայացքի դեմ. «Մենք բնավ համամիտ չենք էմմանուել քահանա Նազարյանցի հետ, որը կամենում է հոգևորականությանը առաջնորդի դեր հատկացնել հասարակության մեջ... մենք պահանջում ենք միայն, որ հոգևորականությունը այնքան լուսավորվի, որ հասկանա ժամանակակից ոգին, պահանջում ենք, որ հոգևորականությունը կազմված լինի կրթված անձերից ոչ թե որպես հոգևոր դասակարգ՝ առաջնորդելու հասարակությունը, այլ հասարակությանը պիտանի լինելու, առաջադիմությանը խոչընդոտ չլինելու համար»[9]։

«Քահանայական խնդիրը» հոդվածը հիշեցնում է կղերական-պահպանողական միջավայրում տիրող բարքերի արծրունյան կրքոտ քննադատությունը, երբ մերկացնող թվարկումով վեր են հանվում խոսքի և գործի հակասությունները. «Եկեղեցու բեմից քարոզել սեր, խաղաղություն, հավասարություն, ժողովրդի ձայն և իրավունք և այլն և այլն, սա-

9 «Մուրճ», 1896, № 10—11, էջ 1429—1430։

Կայն գործնականի մեջ քմահաճույքի ենթարկել դոցանից ամեն մեկը... Գործնականի մեջ հակառակ եկեղեցու ժողովրդական ոգու՝ մտցնել նեղ կաստայական կղերական ոգին այդ եկեղեցու սպասավորների մեջ, սակայն գրել դրա հակառակը»[10]:

Ժամանակի հետ քայլելու պահանջը «Մուրճին» մղում է քննադատության մի պատկառելի մաս էլ բաժին հանելու մխիթարյան միաբաններին: Մ. Սիրունու «Ճանապարհորդական հիշատակարանից» հոդվածը և Ա. Արասխանյանի «Վիեննայի Մխիթարյան միաբանությունը» պատմական ակնարկը ապացույց են արժանին հատուցելու «Մուրճի» ձգտման՝ գնահատել ազգօգուտ ծառայությունները, բայց և պախարակել եղծարժույթը: Արասխանյանը գրում է. «Մի Զամչյան, մի Ինճիճյան, մի «Հայկազյան բառարան», մի Արսեն Բագրատունի, հայ կլասիկ գրվածների տպագրությունը, մի նախկին Մուրադյան (և ապա Մուրադ-Ռաֆայելյան) վարժարան, մի հիսնամյա «Բազմավեպ», մի Ալիշան,— դոքա անուններ և գործքեր են, որոնք հարգանք են պահանջում, որովհետև հասարակական դեր են կատարել»[11]:

«Մուրճում» միաժամանակ քննադատվում է մխիթարյանների հնապաշտությունը, դրաբարամոլությունը, անցյալի նկատմամբ «քննական հայացքի» բացակայությունը, երբ «մեր հին պատմիչների կրիտիկական ուսումնասիրությունը, նրանց տեսակետից հավասար է ազգային պատվի վիրավորության»[12]: *Մխիթարյան հայրերը ապրելով եվրոպական մեծամեծ կենտրոններում շատ են հետ մնացել ընդհանուր մտավոր շարժումից, նշում է Սիրունին: Երբ «Հանդես ամսօրյան» բողոքում է էվոլյուցիոն ուսմունքի մասին «Մուրճում» տպագրված հոդվածների դեմ, Արասխանյանը ստիպված է լինում խիստ տողեր գրել ժամանակակից գիտությունից կտրված հանդեսի մասին և հիշեցնել, որ «առանց էվոլյուցիական աշխարհայեցության՝ պետք է դեն գցել դարուս հասարակաբանության և բնագիտության գրեթե ամբողջ գրականությունը»*[13]:

Հայ հոգևորականի՝ «Մուրճի» փայփայած իդեալը վերացական չէր, հանձին Խրիմյան Հայրիկի այն ուներ իր կոնկրետ կրողին, և «Մուրճը» առիթը բաց չէր թողնում նրան խնկարկելու, գտնելով, որ «...ինչ կար

---

10 «Մուրճ», 1896, № 1, էջ 108:
11 «Մուրճ», 1895, № 12, էջ 1630:
12 «Մուրճ», 1890, № 8, էջ 1167:
13 «Մուրճ», 1898, № 9, էջ 1307:

մեզանում առաջադիմական— համակրելի է եղել Խրիմյանին և Խրիմյանը համակրելի է եղել առաջադիմականներին»[14]: Ամսագրի խմբագիրը նոր կաթողիկոսի հետ էր կապում հոգևոր դասի կազմի վերափոխման և եկեղեցական կազմակերպության բարելավման հույսերը: Եկեղեցին ռեֆորմի ենթարկելու խնդիրը օրակարգի մեջ էր մտցրել դեռևս «Հյուսիսափայլը», բայց եկեղեցին և հոգևորականությունը՝ հայ պահպանողականության այդ հենասյուները, դժվարությամբ էին ենթարկվում բուրժուադեմոկրատական պահանջների հեղափոխիչ ազդեցությանը: Ահա հիմա էլ «Մուրճն» է նոր կաթողիկոսի առջև դնում հին պահանջները:

Դրանք ձևակերպված են ամսագրի ժամանակակից տեսություններից մեկի մեջ՝ «Խրիմյան Հայրիկի գալստյան առթիվ»: Երեք պահանջ է դնում «Մուրճի» խմբագիրը. 1. պետք է հոգևոր դասը մաքրվի իր վատ անդամներից, ժողովուրդը՝ անարժան հովիվներից, եկեղեցին՝ իր անարժան սպասավորներից: Հոգևոր պաշտոնները պետք է զբաղեցնեն կիրթ, զարգացած և ժողովրդասեր հոգևորականներ: 2. Պետք է ձեռնարկել եկեղեցական ծիսակատարությունների օրենսգրքի վերաքննությունը, ազատելով այն դարերի աղավաղումներից ու ավելորդաբանություններից և 3. պետք է բարենորոգել եկեղեցական դատաստանական կարգը. «Ներկա դրությունը ոչ թե նահապետական է,— ասում է Արասխանյանը,— այդ փառք կլիներ, այլ ուղղակի աղավաղված ու փչացած: Կաշառակերությունը համատարած է, իրավաբանորեն ու բարեխղճորեն դատելու համբույնը՝ արհամարհված, դիրքից, իշխանությունից օգտվելը դառել է կանոն: Եվ մինչդեռ մարմնավոր իշխանության սահմաններում դատաստանական կարգերի մեջ մտցված են մեծամեծ բարենորոգումներ,— հիմնված արդարադատության բարձր շահերի վերա,— մեր եկեղեցական դատաստանական կարգերի մեջ իշխում է կատարյալ ասիականության ոգին»[15]:

Ինչպես տեսնում ենք, Արասխանյանը կամենում է եկեղեցին ենթարկել բուրժուական ռեֆորմի, ճիշտ 61 թվականի բարենորոգումների ոգով: Այս է հաստատում նաև գրաքննության կողմից մերժված «Միաական և Բեմական պատգամավորների ընտրությունը» հոդվածը: Այստեղ Արասխանյանը քննադատության է ենթարկում կաթողիկոսական ընտրությունների եռաստիճան սիստեմը, որի «բարդ մեխանիզմը» սքողում է

---

14 «Մուրճ», 1892, № 1, էջ 25:

15 Տե՛ս «Մուրճ», 1893, № 6, էջ 993—995:

«ընտրությունների բուն ժողովրդական ոգին», քանի որ ժողովուրդը մասնակցում է «միջնորդական կերպով, ոչ անմիջապես»։ Արասխանյանը գտնում է, որ «կաթողիկոսական ընտրությունը ուղղակի առանց միջնորդի, անմիջապես ժողովրդից իրանից պետք է կատարվեր»։

Կյանքի համընդհանուր դեմոկրատացման պահանջը Արասխանյանը տարածում է նաև հոգևոր հաստատության վրա։ Հարցի լուծման անհրաժեշտության գիտակցությունը, սակայն, չէր պսակվում և չէր կարող պսակվել նրա կողմից արմատական միջոցի հայտնությամբ, քանի որ Արասխանյանը լիբերալիզմի սահմանափակ ու նեղ դիտակետից միայն ու միայն «բարեփոխված» հասարակություն էր տեսնում։

Վերափոխության դարաշրջանի գաղափարական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում աշխարհաբար լեզվի հարցը։ Այն ինքնաբավ հարց չէր, այլ իրենով պայմանավորում էր և՛ ազգային գրականության, և՛ լուսավորության, և՛ կրթության զարգացումը, մի խոսքով ազգի ամբողջ հոգևոր վերածնունդը։ Ազգային առաջընթացի հստակ պատկերացումը ստիպեց Նազարյանին և Նալբանդյանին «Հյուսիսափայլի» էջերում առաջին պլան մղել աշխարհաբար լեզվի հարցը, նվաճել, հաստատել նրա գոյության իրավունքը։ Գաղափարական ճակատամարտից նրանք դուրս եկան փառավոր հաղթանակով, պատգամելով սերունդներին՝ պահպանել, խնամել, զարգացնել նոր գրական լեզուն՝ ազգային գոյության և համախմբման հզոր միջոցը։

Նոր լեզվի համար ծավալած պայքարում «Մուրճը» քայլում էր հենց այն ուղիներով, որ մատնանշել էր Միքայել Նալբանդյանը։ Դարի կեսերին սուր վեճեր հարուցած տարակարծությունները լեզվաշինության մարզում, գրաբարին, ժողովրդական բարբառներին կամ եվրոպական լեզուներին նախապատվություն տվող տարբեր ուղղություններն իրենց համակրողներն ունեին նաև դարավերջում։ Ահա ինչու է լեզվի հարցը տեղ գրավում «Մուրճին» հուզող խնդիրների շարքում։ «Մուրճի» տեսակետը այս հարցում լավ է ձևակերպել քննադատ Եղիշե Մադաթյանը. «Պետք էր մշակել և հարստացնել նոր գրական լեզուն բոլոր հնարավոր կենսունակ տարրերով, բայց միշտ հավատարիմ մնալով հայոց լեզվի ոգուն, այն ոգուն, որ արտահայտում է մեր ընտիր ժողովրդական բարբառներում և մեր դասական մատենագրության լավագույն արտադրություններում մեջ։ Պետք չէր ստրկանալ ոչ գրաբարին, ոչ որևէ տեղական կամ գավառական բարբառի, ոչ էլ եվրոպական լեզուներին, այլ քաղե-

լով ամեն տեղից պիտանի նյութեր, ստեղծագործել մի նոր, կենդանի, ճկուն լեզու, որ հղոր հայտարար լինի աղգային ոգու և ճշմարիտ հաղորդիչ եվրոպական լուսավորության և գիտության հայերիս մեջ»[16]: Դժվար չէ նկատել աղերսները Նալբանդյանի այն մտքերին, թե նոր լեզուն պիտի մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խպնելու, առանց գավառական բարբառների կամ օտար լեզուների ազդեցությանը ստրկանալու:

Ամսագրում լեզվի խնդիրների մասին ամենից շատ հոդվածներով հանդես է եկել խմբագիրը: «Բազմավեպի» 1890 թ. մարտյան համարում տպագրվում է Բարսեղ Սարգսյանի հոդվածը, որի վերնագիրն էր «Աշխարհաբարը գրաբարի ձեռքով զարգացնելու և կանոնավորելու և գրաբար լեզուն աշխարհաբարի մեջ կենդանացնելու խնդրին». վերնագիրն իսկ ամեն ինչ ասում է հոդվածի մասին, և զարմանալի չէ, որ այն արժանանում է գրական նոր լեզվի զարգացմանը նախանձախնդիր խմբագրի ուշադրությանը: Արասխանյանը քննադատում է «հարգելի հայրերի» հետահայաց տեսակետը, որոնց թվում է, թե աշխարհաբար լեզվում պակասող բոլոր բառերը պետք է լրացվեն գրաբար բառարաններից, մոռանալով «մեր լեզուն հարստացնելու կարևորագույն աղբյուրներից մեկը, որ գավառաբարբառներն են»[17]: Բնավ չնսեմացնելով նոր լեզվի զարգացման գործում հին լեզվի նշանակությունը, Արասխանյանը մերժելի է համարում ավելորդ գրաբարամոլությունը, բարբառամոլությունը և օտարամոլությունը:

Գտնելով, որ ընդհանուր առմամբ հայոց գրական լեզուն զարգանալու ամենալավ ճանապարհի վրա է, Արասխանյանը չէր կարող սակայն չմտահոգվել լեզվի իրօրյա վիճակով, որի ցայտուն պատկերն էր մամուլը՝ իր լեզվական «խառնակությամբ», և չէր կարող չտեսնել խրզման այն վիհը, որ առաջացել էր գրական և խոսակցական լեզուների միջև, երբ գրական լեզուն վտանգված էր դառնալու մի նոր գրոց լեզու: «Խոսենք, ինչպես գրում ենք» վերնագրով իր լեզվական զրույցներում Արասխանյանը քննության է առնում այս հարցերը: Նա գրում է. «Հիսնական թվականների միջերքը, երբ միայն նոր սկսվում էր հաստատվել աշխարհաբարը, գրականության համար հոգս տանողները հայտարարեցին— գրեմ այնպես ինչպես խոսում եմ. այսօր մոտ կես դար անց՝

16 «Մուրճ», 1892, № 10, էջ 1477:

17 «Մուրճ», 1890, № 4, էջ 622:

մենք այդ նոր գրականության կյանքը ապահովելու համար ստիպված ենք գոչել— խոսենք այնպես ինչպես գրում ենք»[18]: Գրական լեզուն մայրենի լեզու դարձնելու գրական հետևանքները անմիջապես ի հայտ կգային. այն կխթաններ գրականության զարգացմանը, որովհետև «գործածությունը ևվիրագործում է լեզուն», որովհետև «գրական լեզվով մեծացած մի հասարակություն կյանքի մղումով կլրացներ մեր գրական լեզվի մեջ եղած պակասները՝ ճաշակով փոխառություն անելով իրեն շրջապատող ժողովրդի հյութալի բարբառներից, ոտանից դուրս քամելով բոլորը, ինչ կենսական է. այսինքն հասարակությունը ինքը կաներ այն, ինչ այժմ շատ քիչ անվստահ կերպով կատարում են մեր գրողներից նոքա, որոնք աշխատում են իրենց գրվածքներում ժողովրդականին մոտենալ»[19]: Արասխանյանը մայրենի լեզու դարձած գրական լեզուն դիտում է որպես ժողովրդի լուսավորության, կրթության մի անփոխարինելի միջոց:

Պայքար ծավալելով բարբառախոսության դեմ հանուն գրական լեզվի հաղթանակի, Արասխանյանը, սակայն, զրկված էր գրական լեզվին սպառնացող վտանգի իսկական պատճառները ամսագրում քննության առնելու հնարավորությունից: «Մուրճի» արխիվում մենք հանդիպեցինք լեզվի վերաբերյալ բազմաթիվ ձեռագիր հոդվածների, որտեղ խմբագիրը ջղիին է հանձնել իր զայրույթն ու բողոքը հայկական դպրոցների նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության վերաբերյալ, բայց չի կարողացել գրաքննության պատնեշը ճեղքելով դրանք հասարակության ուշադրությանը հանձնել[20]: Հայոց լեզվին սպառնացող վտանգը գալիս էր այն իրողությունից, որ հայ մանուկների մի զգալի մասը կրթվում էր պետական դպրոցներում, որտեղ դասավանդումը ռուսերեն էր: Արասխանյանը տխուր եղրակացությունների է հանգում, իրար համեմատելով որոշ թվական տվյալներ. հայախոս շրջանավարտների տարեկան թիվը կազմում է ընդամենը 150, մինչդեռ Թիֆլիսի 15 պետական միջնակարգ դպրոցները ավարտում են այնքան հայ պատանիներ, որքան բոլոր հայոց միջնակարգ դպրոցները ամբողջ Ռուսաստանում: Հայախոսության համար հայոց 5—10 միջնակարգ դպրոցների վրա հույս դնելը ուղղակի վտանգավոր ինքնախաբեություն է: Ավելի տխուր է պատկե-

---

18 «Մուրճ», 1898, № 4, էջ 406:
19 «Մուրճ», 1898, № 5, էջ 598:
20 Տե՛ս ԳԱԹ, «Մուրճի» ֆ., գ. 56/II:

րանում նրան վաղվա օրը, քանի որ պետական դպրոցների թիվը շարունակ աճելու էր, իսկ ազգայինը՝ նվազելու։ Այ, եթե հնարավոր լիներ հայերենի մասնավոր դասերի համար մի «Հայկական լիգա» կազմակերպել։ Բայց նույնիսկ այս խնդիրը նա չէր կարող քննարկման դնել ամսագրում։ Մնում էր հորդորել, հորդորել և հորդորել՝ խոսեք երեխաների հետ հայերեն գրական լեզվով, մի թողեք մոռանան մայրենին։

Արասխանյանը հայ ժողովրդի լուսավորության, կրթության, ազգային ինքնաճանաչողության, աշխարհաբար լեզվի տարածման ու զարգացման հզոր միջոց էր դիտում թատրոնը։ Ահա ինչու «Մուրճի» էջերում այն իր մշտական տեղն ուներ։ Հայ թատրոնի համար 90-ական թվականները ոչ միայն ստեղծագործական որոնումների, այլև գոյության երաշխիքների փնտրման տարիներ էին։ Տագնապի շեշտ է տիրում «Մուրճի» էջերում. ո՞վ է փոխարինելու Գաբրիել Սունդուկյանին, շարունակելու և զարգացնելու հայ ռեալիստական դրամատուրգիայի նրա ստեղծած ավանդները, ե՞րբ է հայ հասարակությունն ունենալու մշտական թատրոն, ժամանակի պահանջները բավարարող խաղացանկ, ինչպե՞ս է դարմանվելու նյութական միջոցների, դերասանական ուժերի մշտական պակասը և այլն, և այլն։ Մշուշապատ էր հայ թատրոնի ապագան, անհուսալի՝ բարեգործության, անհատական նախաձեռնության վրա խարըսխված նրա գոյության երաշխիքները։ «Մուրճը» ջանում էր հասարակական լայն քննարկման դնել այս հարցերը, արագացնել դրանց լուծումը։ Օգտագործվում էր ամեն առիթ՝ հոբելյան, նոր ներկայացում, սիրողական խմբի ելույթ, ականավոր դերասանի հյուրախաղ, որպեսզի նորից ու նորից շեշտվեր թատրոնի կարևոր, անփոխարինելի նշանակությունը ազգային առաջադիմության գործում։

Գ. Սունդուկյանի հոբելյանը «Մուրճը» առիթ է դարձնում մեծարելու մի գրողի, որի «քառորդ դարի գործունեությանն ենք պարտական, որ այսօր հայությունը— առանց բեմ ունենալու— թատրոն ունի, առանց դերասանական խումբ ունենալու— դերասանական շկոլա և պատմություն ունի»[21]։ Հայոց թատրոնի ապագա գոյությունը «Մուրճը» տեսնում էր ռեալիստական ուղղության մեջ, մտրակող խոսքով շնչող ժամանակակից սոցիալ-հոգեբանական պիեսներով կյանքը կերպավորելու մեջ։ Մոսկվացի մի խումբ հայ ուսանողներ «Մուրճում» հրապարակված ողջույնի մեջ հայ մեծ դրամատուրգին մեծարում են «խորին ատելության

21 «Մուրճ», 1889, № 2, էջ 342։

համար դեպի հասարակական կյանքը անբարոյականացնող տարրերը» և «քնքուշ համակրության համար դեպի ճնշվածներն ու անպատվածները»[22], մաղթում, որ նրա մտրակող ձայնը չլռի։

Եթե Սունդուկյանը կյանք էր պարգևում հայոց թատրոնին, ապա հայոց թատրոնն էլ հզորանալով, պետք է խթաներ դրամատուրգիայի զարգացմանը։ Այս փոխադարձ պայմանավորվածությունն էր ընդգծում Մանվելյանը դրելով. «Եթե մենք ունենայինք մշտական բեմ՝ լուրջ հիմքերի վրա դրված, մենք կունենայինք գուցե մի քանի սունդուկյաններ»[23]։

«Թատրոնական խնդիրը» ամսագրում երկու ձևով էր լուսաբանվում՝ քննադատության և խրոնիկայի։ Թատերական քննադատության բաժինը վարում էր Լևոն Մանվելյանը։ Լինելով քննադատ, դրամատուրգ և սիրող դերասան, Մանվելյանը գործիմացությամբ էր վարում բաժինը, իր բազմաթիվ արժեքավոր հոդվածներով նպաստելով հայ թատրոնի, դերասանական արվեստի և թատերագրության զարգացմանը։ «Դրամա և բեմական դեղարվեստ» հոդվածաշարում ընթերցողների առջև կանգնում է հայ թատրոնի ոչ միայն աղնիվ ու անաչառ, այլև մարտնչող բարեկամը։ Ինչպես դրականության, այնպես էլ թատերական արվեստի հարցերը քննելիս «Մուրճի» քննադատը ելնում է ռեալիզմի և ժողովրդայնության պահանջներից։

Թատերական խրոնիկայի բաժինը, որ վարում էր Հ. Սևյանը, արձագանքում է թատրոնի առօրյա մտահոգություններին, տագնապներին, պետքերին։ Ներկայացումների խաղացանկն աղքատ է. «Մուրճն» առաջարկում է օգտվել նորագույն դրականությունից, վեպերը վերածել պիեսների։ Դերասանական ուժերը, հատկապես դերասանուհիները, պակասում են. «Մուրճն» առաջարկում է ուշադրություն դարձնել սիրողական խմբերին, դրանք դիտել իբրև պրոֆեսիոնալ դերասանների պատրաստման դպրոց։ Հայոց լեզուն աղճատվում է բեմում. «Մուրճը» նշավակում է այս երևույթը. «բեմը այն օրգաններից մեկն է, որ պետք է մշակե և ծաղկեցնե մայրենի լեզուն։ ...Բեմը մի աննման միջոց է հետզհետե անզգալի կերպով մեր լեզվի անգին գոհարները հասարակական զանազան շրջաններում տարածելու»[24]։ «Մուրճը» դատապարտում է հայ մտավորականության, հայ մամուլի անտարբերությունը դեպի հայ թատրոնի

---

22 Նույն տեղում, էջ 345։

23 «Մուրճ», 1895, № 2, էջ 288։

24 «Մուրճ», 1895, № 8, էջ 1163։

ճակատագիրը, գտնում է, որ «յուրաքանչյուր թատրոնի բարեկամ չպետք է դլանա յուր աջակցությունը այդ համակրելի հիմնարկության նվիրելու»[25]:

Արասխանյանը վաստակած իրավունքով նշում էր, որ «Մուրճի» շնորհիվ հայկական մամուլում թատերական քննադատությունը պատշաճ դիրք գրավեց, որ հայ թատրոնը երբեք չի եղել այնպիսի սիստեմատիկ, լուրջ քննության առարկա, ինչպես «Մուրճում» և, ամենակարևորը, դրան հարգանքով են վերաբերվել թատերական խմբերը, ինչի մասին բազմիցս վկայել են դերասանները[26]:

Թե հայ թատրոնի ճակատագիրը որքան էր հուզում Արասխանյանին, վկայում են ոչ միայն «Մուրճում» հրապարակված նյութերը, այլև «Մուրճի» արխիվում պահվող հոդվածները, որոնց վիճակված չէր տպագիր խոսք դառնալ: Դրանցից մեկն արժանի է ուշադրության, որովհետև շոշափում է հայ թատրոնի ապագայի հետ առնչվող կարևոր հարց: Արասխանյանը հակադրվում է ընդհանուր հավանության արժանացած առաջարկին՝ Թիֆլիսում հայկական թատրոն կառուցելու մասին, այն դիտելով որպես «հակաժողովրդական հայացք»: Նա գտնում էր, որ մեղ պետք է ոչ թե մեկ մեծ թատրոն Թիֆլիսում, այլ բազմաթիվ փոքր թատրոններ գավառներում, որովհետև «հայկական թատրոնի կենսունակությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի մասսայի հետ, իսկ այդ մասսան Թիֆլիսում չէ»[27]: Այս ուշադրավ հարցն արծարծող հոդվածը Արասխանյանը չի հասունացրել տպագրության համար, բայց տարիներ անց, «Հուշարարում» «Ա. Արասխանյանի կարծիքը Թիֆլիսում սեփական թատրոն ունենալու մասին» վերնագրով հոդված է լույս տեսնում, որտեղ խղիակիցը ընթերցողների ուշադրությանն է ներկայացնում Արասխանյանի հետ մի հանդիպման ժամանակ ունեցած իր խոսակցության գրառումը, որտեղ նույնությամբ վերարտադրված են վերը նշված սևագիր հոդվածի դրույթները: Արասխանյանը դարձյալ պնդում է, որ «հայ թատրոնը չպետք է անջատված լինի հայ ժողովրդական մասսայից. նա նրա կյանքի անբաժանելի մասը պետք է կազմե... իսկապես հայկական-ժողովրդական գործ կատարած կլինենք, երբ մի-մի թատերական շինություններ ունենանք հայկական մեծ ու փոքր

---

25 «Մուրճ», 1895, № 3—4, էջ 550:

26 Տե՛ս «Մուրճ», 1896, № 3—4, էջ 519—520:

27 Տե՛ս ԳԱԹ, «Մուրճի» ֆ., գ. 102/II, 104/II:

ֆենտրոններում»[28]: Արասխանյանի այս մտքերը վկայում են ոչ միայն թատրոնը ժողովրդին մոտեցնելու, ժողովրդին ծառայեցնելու դեմոկրատական սկզբունքը որդեգրելու, այլև հարցերը հեռանկարի մեջ տեսնելու «Մուրճի» խմբագրի կարողության մասին:

Ամփոփելով «Հայ թատրոնը «Մուրճում» բաժինը, պիտի ասենք, որ այն մեր թատրոնի դարավերջյան տասնամյակի հարազատ տարեգրությունն է՝ իր ձեռքբերումներով ու կորուստներով, իր հոգսերով ու տագնապներով: «Մուրճի» էջերից մեզ են նայում հայ թատրոնի երախտավորները. Սունդուկյանը՝ դարաշրջանն ընդգրկող իր ռեալիզմով, Չմշկյանը՝ հայ նոր թատրոնի ստեղծման համար թափած իր անդուլ ջանքերով, Սիրանույշը՝ հասարակությանը ցնցող իր հյուրախաղերով և, մանավանդ, Ադամյանը՝ իր անզուգական արվեստով, այնքան ջերմությամբ ներկայացված Ա. Վրույրի հոդվածներով, և մարդկային աներևակայելի գեղեցկությամբ, որ հառնում է մեր առջև արտիստի իսկ ձեռքով դրած հիսուն նամակներից՝ տպագրված ամսագրի 1894 թ. չորս համարում: Էլի ուրիշները, համարյա բոլորը, ովքեր նպաստ են մատուցել հայ թատրոնին:

Ժողովրդի մտավոր ու բարոյական կրթության, նրա գեղարվեստական դաստիարակության մտահոգությամբ «Մուրճը» ուշադրության է առնում նաև արվեստի մյուս ճյուղերը, հատկապես կերպարվեստը և երաժշտությունը: Ճիշտ է, սրանք առանձին բաժիններ չեն կազմում ամսագրում, բայց նրան նյութերն ունեն հստակ և որոշակի ուղղվածություն, ձևված են ազգային ռեալիստական ու ժողովրդային արվեստի չափանիշներով:

Հայ նկարիչներից ամսագրում ամենից շատ հանդիպող անունը Գևորգ Բաշինջաղյանն է, որ այն ժամանակ երիտասարդ նկարիչ էր, բայց որին վերապահված էր դառնալու հայ ազգային ռեալիստական բնանկարչության հիմնադիրը: Բաշինջաղյանի անունը «Մուրճում» հոլովվում է երեք առումով. նա հանդես է գալիս որպես պատմվածքների հեղինակ, նա գրում է հոդվածներ և նրա մասին գրում են հոդվածներ: Բոլոր դեպքերում երևում է ժողովրդի կյանքով ապրող, նրա լավագույն ապագայի մասին երազող արվեստագետը: Պատմվածքների մեջ էլ («Մուրացկաններ», «Փուշ վահան», «Առաջին սեր» և այլն) նա նույն ռեալիստ նկարիչն է, հարազատ կյանքի բնանկարին: «Նկարչի նամակները» հոդ-

---

28 «Հուշարար», 1912, նոյեմբեր, գիրք Բ, էջ 8:

վածաշարում[29] արվեստագետ-քաղաքացի Բաշինջաղյանն իր տագնապներն ու մտահոգություններն է հանձնում հրապարակայնության. ժողովուրդը շատ մութ գաղափար ունի գեղարվեստի մասին, հարկավոր է մտահոգվել նոր սերնդի գեղարվեստական դաստիարակության հարցով, հետևելով եվրոպական դպրոցների օրինակին՝ նկարչության առարկայի դասավանդություն մտցնել հայկական դպրոցներում:

Ուշագրավ են նաև «Մուրճում» հրապարակված հոդվածները կերպարվեստի ցուցահանդեսների վերաբերյալ: Հետաքրքիր է նշել, որ իբրև հեղինակներ այստեղ հանդես են եկել Արասխանյանը, Շիրվանզադեն, Ծատուրյանը: Նշելով նկարչական ցուցահանդեսների մեծ դերը կերպարվեստի զարգացման ու տարածման գործում, սատար կանգնելով գեղանկարչության առաջադիմական ուղղություններին, Արասխանյանը առանձին ուշադրության է արժանացնում Բաշինջաղյանի՝ ռեալիզմով ու ժողովրդայնությամբ շնչող կտավները, նրան համարում բնանկարի մեծ վարպետ[30]: «Կովկասյան V պատկերահանդեսը» հոդվածում Շիրվանզադեն արվեստագետի դիտողականությամբ վերլուծելով առանձին նկարիչների ստեղծագործությունները, միաժամանակ ընդհանուր ծանոթություն է տալիս ժամանակակից կերպարվեստի ուղղությունների մասին, սովորեցնում ընթերցողներին «կարդալ» ու գնահատել նկարը, բարձրացնում նրանց գեղարվեստական ճաշակը[31]:

Իսկական ձոն է Ալեքսանդր Ծատուրյանի հոդվածը Հովհաննես Այվազովսկու պատկերահանդեսի մասին. բանաստեղծը նկարչին համարում է ծովի մեծ բանաստեղծ[32]:

Նոր սերնդի երաժշտական կրթության և առհասարակ ազգային կյանքում երաժշտության, երգ-երգեցողության դերի և նշանակության հարցերը նույնպես զբաղեցրել են «Մուրճին»: Հետաքրքիր է, որ ամսագրի հենց առաջին համարում երաժշտության մասին հոդվածով հանդես է եկել Կարա-Մուրզան: Համբավավոր երաժշտագետն ու խմբավարը նորընծա ամսագրի ընթերցողներին բացատրում է երաժշտության կրթիչ նշանակությունը, հետաքրքիր մտքեր զարգացնում հայ երաժշտության մասին, կանխագուշակում, թե նրա մեջ «կա բավական խոր թաղված մի

---

29 Տե՛ս «Մուրճ», 1889, № 11, էջ 1705—1709 և 1890, № 11, էջ 1576—1585:

30 Տե՛ս «Մուրճ», 1890, № 11, էջ 259—274:

31 Տե՛ս «Մուրճ», 1897, № 10, էջ 1453—1455:

32 Տե՛ս «Մուրճ», 1898, № 4, էջ 546:

այնպիսի դյութական քաղցրություն, որ անկարելի է չպարզվի մի օր»[33] և չգրավի Եվրոպայի ուշադրությունը։

«Մուրճը» սատար է կանգնում Կարա-Մուրզայի ծավալած ազգաշահ գործունեությանը, որն ուղղված էր ազգային երաժշտության մշակման, ազգային երգեցողության զարգացման նպատակին։ «Կարա-Մուրզան և քառաձայն երգեցողությունը մեր մեջ» հոդվածում Ա. Ջլիգյանը դրվատում է ազգի «աշխատավոր մշակին, որը յուր անխոնջ ու տոկուն աշխատանքով սկսել է կանոնավորել մեր ազգային, եկեղեցական և ժողովրդական երգեցողությունը։ ...Ազգային-ժողովրդական երգերի փորձը Կովկասում իրոք պատկանում է Կարա-Մուրզային»[34]։ Մի այլ հոդվածում պաշտպանելով «պրոֆեսիոնալների» հարձակումից իսկական ժողովրդական գործչին, որի երգչախումբը սիրողներից էր կազմված, «Մուրճը» նշում է, որ երգը ստեղծվում է ոչ միայն երգչի, այլև ամբողջ ազգի բերանով երգվելու համար. հայ ազգը սովոր էր միաձայն երգին, իսկ Կարա-Մուրզան երգելու նոր ձև մտցրեց՝ քառաձայն երգեցողությունը. «Նա պրոպագանդիստ է— և այդ է նորա ուժը, ...որ դորանով ժողովուրդ է կրթում— ինչ կասկած կարող է լինել այդ մասին»[35]։ Այս մտքերը «Մուրճի» ժողովրդասիրության վառ ապացույցներ են։

Գլուխ վեցերորդ

«Մուրճը» գրաքննության արխիվներում

Մենք թերթեցինք «Մուրճի» բոլոր տարիների համարները, ծանոթացանք դրանց բովանդակությանը, պարզեցինք ամսագրի ուղղությունը։ Բայց կա նաև մի երկրորդ «Մուրճ», որը ծանոթ է քչերին, սակայն պակաս հետաքրքրական չէ։ Այն ավելի համարձակ ու խոսուն է, նրա տիրական շունչը ըմբռնումն է։ Խոսքը գրաքննության արխիվներում պահվող «Մուրճի» մերժված նյութերի մասին է, որոնց վրա, եթե «Մուրճի» շապիկ հագցվեր, կստացվեին ամսագրի լավագույն համարները։ Այնտեղ մենք կկարդայինք համարձակ հրապարակախոսական

---

33 «Մուրճ», 1889, № 1, էջ 183։

34 «Մուրճ», 1889 № 5, էջ 821։

35 «Մուրճ», 1894, № 4, էջ 659, 660։

հոդվածներ, կտեսնեինք Հայկական հարցը՝ իր մութ խորշերով, հայկական դպրոցների հոգեվարքը, կլսեինք Ծատուրյանի, Մանվելյանի, Թումանյանի, Իսահակյանի, Փափազյանի ըմբոստ խոսքը՝ ազգային ու սոցիալական ճնշման դեմ, մի խոսքով կզգայինք անցյալ դարավերջի իրական շունչը, ականջալուր կլինեինք անցած դժնդակ օրերի իսկական ճիչ ու աղաղակին։ Այո, չի կարելի մեղադրել ցարական գրաքննիչներին «անճաշակության» մեջ, նրանք «Մուրճից» դուրս են գցել լավագույնը։ «Տեղեկացիողության համար արգելել տպագրությունը» շաբլոն մակագրությամբ իրար վրա դարսված այդ նյութերն այսօր պատմություն դարձած «Հանգչում են» Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվում։ Յուրաքանչյուր տարեկան «գործի» մեջ 10—15 «միավոր» նյութ՝ հոդված, պատմվածք, բանաստեղծություն, լուր և այլն։ Դրանց մեջ հանդիպում են նաև ծանոթ վերնագրեր. դժվար չէ պատկերացնել այն մարտերը, որ մղել է ամսագրի խմբագիրը գրաքննական «արգելափակոցից» հոդվածները դուրս բերելու համար։

Ճիշտ է, ամեն մի պարբերականի իրական արժեքը չափվում է նրա հրապարակած նյութերով, բայց գրաքննության մերժած նյութերից ավելի հատակ է երևում պարբերականի ուղղությունը։ Ծանոթանալ այդ նյութերին, նշանակում է ճաշակել ա՛յն մամուլը տեսնելու հաճույքը, որը կունենայինք, երբ գրավոր խոսքը չճզմվեր ցարական գրաքննության մամլիչի տակ։

Ինչպես պետք էր սպասել, մերժված նյութերի մեծ մասը պատկանում է ամսագրի խմբագրի գրչին։ Դրանք գերազանցապես առաջնորդող հոդվածներ են, որոնք շոշափում են ազգային, տնտեսական ու քաղաքական ցավոտ հարցեր։ 1890 թ. տարեմուտի առաջնորդող հոդվածում Աբասխանյանը մտադիր էր քննել անչափ կարևորություն ունեցող՝ «Տաճկահայաստանի քաղաքական խնդիրը, մեր ուսումնարանների դրությունը, հոգևորական դասակարգի կազմը, կրոնափոխությունը, գյուղացիների տնտեսական և կրթական դրությունը, մամուլի դրությունը»[1]։ Առաջադրված բոլոր հարցերի պատասխանը՝ բացասական է, այսինքն դրական շարժման ոչ մի հույս։ Պարզ է, բացասական պետք է լիներ նաև նման հոդվածի տպագրության թույլտվությունը։ Մերժված հոդվածի փոխարեն «Մուրճում» լույս է տեսնում «Գործերի դրությունը» առաջնորդողը, որը միայն հեռավոր նմանություն ունի հոդվածի առաջին

1 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 997։

տարբերակի հետ. դուրս են նետված Արևմտյան Հայաստանի ծանր դրության, ինչպես նաև Անդրկովկասի գյուղացիության անապահով վիճակի նկարագրությունները:

«Ազգային տնտեսության քաղաքականություն»[2]. այսպես է վերնագրված Արասխանյանի առաջնորդող հոդվածներից մեկը, որին վիճակված չէր նույնիսկ աղճատումով լույս աշխարհ գալ: Ամեն մի ազգի գոյությունը, նրա զարգացումը, նրա ապագան կախված է այն հիմքից,— բացատրում է տնտեսագետ-քմբագիրը,— որի վրա նա կառուցել է իր տնտեսական կյանքի շինությունը: Ճնշող և ճնշվող ազգերի մասին նրա դատողությունները շատ թափանցիկ են: Նա իր ժողովրդի պատմական ճակատագիրն է անշուշտ ակնարկում գրելով. «...պատմական այլ և այլ հանգամանքների շնորհիվ մի որևէ ազգի տնտեսական գործունեությունը կարող է ստանալ հատկապես այդ ազգի համար աննպաստ ուղղություն, երբ այդ ազգի շահերը պաշտպանելու օրգաններ չկան, երբ ազգի տնտեսությունը որբացած դրության մեջ է, մնում է առանց ղեկավարության, այն ժամանակ վտանգը մեծ է, որ ազգը ինքը սկսի կորցնել յուր ոտի տակի հողը»: Ո՞րն է համարում Արասխանյանն ազգային տնտեսական քաղաքականության նպատակը. այն, որ ոչ մի ազգ «անիրավաբար կամ տգիտությունից չհարստահարվի մի որևէ այլ ազգից»: «Ազգային տնտեսական քաղաքականության գաղափարը, ուրեմն, — ամփոփում է Արասխանյանը,— ոչ թե հարձակումն է, այլ միայն ինքնապաշտպանությունը, ոչ թե ուրիշին հարստահարելը, այլ միայն հարստահարումից պաշտպանելը»: Նա հանդես է գալիս որպես ճնշված ազգի նացիոնալիզմի արտահայտիչ: Իսկ այսպիսի նացիոնալիզմի համամոկրատական բովանդակությունն անվիճելի է: Լենինյան ազգային ուսմունքը մեզ հնարավորություն է ընձեռում տարբերելու ճնշողների նացիոնալիզմը ճնշվածների նացիոնալիզմից: Լենինիզմը միշտ էլ կանգնած է եղել ժողովուրդների ազգային շահերի պաշտպանության դիրքերում, բայց պաշտպանելով ճնշված ազգերի նացիոնալիզմի առաջադիմական կողմերը, մերժել է ազգային բացառիկության ամեն մի քարոզ: Այդպիսի քարոզի մենք չենք հանդիպել ո՛չ «Մուրճում» և ո՛չ էլ գրաքննության կողմից արգելված նրա նյութերում: Ընդհակառակը, «Մուրճը» միշտ էլ հանդես է եկել ժողովուրդների բարեկամության և իրավահավասարության քարոզով:

Ազգային կենճռոտ հարցի քննարկմանն է նվիրված Արասխանյանի

2 Նույն տեղում, դ. 1195:

նաև մեկ այլ հոդված՝ «Խառն ազգաբնակությունը»[3]։ Խոսելով ազգային առաջադիմության համար համահավաք, ամբողջական կեցության կարևորության մասին, նա «պատմական մեծ աղետ» է համարում հայ ժողովրդի ցրվածությունը՝ ոչ միայն հայրենիքից դուրս, այլև իր հայրենիքում։ Նա մերժում է կոսմոպոլիտիզմի «հակաազգային» գաղափարաբանությունը, որը «ճանաչում է միմիայն մի հայրենիք— բովանդակ երկրագունդը, միմիայն մի ազգություն— մարդկային ցեղը առհասարակ» և վկայակոչում քաղաքակրթության պատմությունը, գրելով. «մարդկության ամենամեծ հաղթանակների համար մենք պարտական ենք այն ազգերին, որոնք իմացել են կազմակերպվել և ստեղծել կուլտուրական հառաջադիմությանը նպաստող պայմաններ»։

Հայացքն ապագային՝ Արասխանյանն իր ազգի համար երազում էր համահավաք, կազմակերպված գոյություն, ջանք թափում նրան ինքնաճանաչման հասցնելու համար։ Նա դառնությամբ գրում է, որ հայ գյուղացին մոռանում է իր լեզուն, հագուստը, նույնիսկ ժողովրդական երգը։ Բայց եթե հայ ժողովրդի դաժան ճակատագրի հետևանքով «միասնակեցության» ետ դառնալը անհնարին է, ապա չարիքը մեղմացնելու համար պետք է «ներքին գաղթականությամբ հայ տարրը գերակըշիռ» անել իր հայրենիքում։ Խմբագիրը ընթերցողներին խոստանում է այս հարցին անդրադառնալ հաջորդ հոդվածում, չենթադրելով, որ իր ա՛յս հոդվածի միակ ընթերցողը լինելու է գրաքննիչը։

Առանձնահատուկ ուշադրության է արժանի «Գիտությունը և բանվորների խնդիրը»[4] հոդվածը, որը կարելի է համարել Արասխանյանի տնտեսական լիբերալիզմի և քաղաքական հայացքների հավատո հանդանակը։ Հոդվածը գրելու համար առիթ են ծառայել գերմանական կայսր Վիլհելմ II-ի հրամանագրերը՝ բանվորների դրությունը «բարելավելու» վերաբերյալ։ «Գերմանական կայսեր վարած քայլը,— գրում է Արասխանյանը,— պետք է համարվի մի վճռողական րոպե բանվոր դասակարգի զարգացման պատմության մեջ, որովհետև դրանով ամենապաշտոնական կերպով և պետության ամենաբարձր գագաթից հայտարարվում է, թե պետական շահերը համերաշխ են բանվոր դասակարգի մտավոր, բարոյական և նյութական շահերի հետ և որ պետությունը չունի ոչինչ ընդհանուր այն զգացմունքների հետ, որոնցով տո-

---

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, գ. 997։

գործած գործատերերը անխնա հարստահարում են «ձեռքից բերան» ապրելու դատապարտված, երկրային բարիքներից զրկված ՝ շքաո բանվորներին»։ Այս տողերի մեջ ամփոփված է Ա. Արասխանյանի հիմնական մոլորությունը, որից բխում են նրա մնացած բոլոր սխալանքները։ Ա. Արասխանյանը պատկանում է այն գործիչների թվին, որոնց մասին վ. ի. Լենինն ասել է. «Նրանք ռեֆորմների գործիք են տեսնում ի դեմս այն օրգանի, որ աճել է այդ ժամանակակից հասարակության հողի վրա և պաշտպանում է նրա մեջ իշխող դասակարգերի շահերը ի դեմս պետության։ Նրանք պետությունը ուղղակի համարում են ամենազոր և ամեն տեսակ դասակարգերից վեր կանգնած, նրանից սպասելով ոչ միայն «օժանդակություն» աշխատավորին, այլև իսկական ճիշտ կարգերի ստեղծում»[5]։ Ա. Արասխանյանի համար անըմբռնելի է բիսմարկյան-վիլհելմյան ռեֆորմների դեմագոգիկ էությունը, ռեֆորմներ, որոնց բուն նպատակն էր ջլատել բանվորական շարժումը։ Նա դրանք դիտում է որպես «բարձր մարդկայնության» և «հայրական ողորմածության» արտահայտություն, ակնկալում ցարական կառավարության կողմից նման օրինակ տալու երջանիկ պահը։ Հիշենք վ. Ի. Լենինի հեգնական խոսքերը լիբերալ պատրանքներով մոլորվածների մասին. «...Նրանք պարզապես կարծում են, որ եթե մի լավ ու ավելի փաղաքշական եղանակով այն խնդրեն կառավարությունից, վերջինս կարող է ամեն ինչ լավ դրստել»[6]։

Հետաքրքիր են Ա. Արասխանյանի դատողությունները գերմանական սոցիալ-դեմոկրատական և լիբերալ կուսակցությունների վերաբերյալ, որոնցից պարզվում են ի՛ր իսկ քաղաքական համակրությունները։ Երկու կուսակցությունների պահանջներն էլ նա դիտում է իբրև «ծայրահեղություն» և աշխատում գտնել ոսկե միջինը, միամտաբար հավատալով դրա հնարավորությանը։ Ահա թե նրա գրչի տակ ինչպիսի բնութագիր է ստանում սոցիալ-դեմոկրատիան. «Բանվորների դատը պաշտպանելու համար կազմվեց մեր դարում մի առանձին կուսակցություն՝ սոցիալ-դեմոկրատների կուսակցությունը, որը ոչ միայն քարոզում էր բանվոր դասակարգի դրության բարելավումը, այլ ավելի հեռուն գնալով ուղղակի պահանջում էր բանվորների իշխանությունը, ոչնչացնելով կապիտալը՝ հանձին կապիտալիստների դասակարգի և գործարանները անցկացնելով բանվորների ձեռքը և կամ նոցա համայնական սեփակա-

5 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 320։

6 Նույն տեղում, էջ 321։

նություն դարձնելով»։ Այս «անկողմնակալ» շարադրանքին Արասխանյանն ավելացնում է. «բանվոր դասակարգի պաշտպանները, սոցիալիստ-դեմոկրատները իրանց պահանջները այնպիսի ծայրահեղության էին հասցնում և այնպիսի կատաղությամբ էին քարոզում իրանց գաղափարները ոչ միայն ընդդեմ բուրժուա-դասակարգին, այլև ներկայումս գոյություն ունեցող քաղաքական կարգ ու կանոններին, որ նոքա դառան վտանգավոր և՛ հասարակության, և՛ կառավարությունների աչքում»։

Արասխանյանի համակրությունները անգլիական բանվորական միությունների՝ տրեդ-յունիոնների կողմն են, որոնք, նրա կարծիքով, ավելի «դրական և գործնական» նպատակներ ունեն, ի տարբերություն եվրոպական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների, որոնց ղեկավարած բանվորական շարժումները «ընդհանուր քաղաքական շարժումների բնավորություն են կրում», հետևապես «ավելի երկյուղալի, ավելի սպառնալի կերպարանք ունեն, քան Անգլիայում»։ Արասխանյանը մերժում է բանվոր դասակարգի քաղաքական պայքարի անհրաժեշտությունը և ընդունում միայն պայքարի տնտեսական ձևերը։

Ինչ վերաբերում է լիբերալների կուսակցությանը, ապա դրվատելով նրա «մեծամեծ» գործերը, որոնցով կարող է պարծենալ Եվրոպան իր տնտեսական և քաղաքական զարգացման համար, Արասխանյանը նրան համարում է նաև «բուրժուազական», որն իր «պատմական ձգտումներով հակառակ էր այն բոլորին, ինչ կարող էր պահանջել բանվոր դասակարգը»։ Նա անընդունելի է համարում և՛ սոցիալ-դեմոկրատական, և՛ լիբերալ կուսակցությունների քաղաքականությունը, քանի որ «առաջինները կատանեին դեպի զարհուրելի հեղափոխություն, իսկ երկրորդները դեպի դասակարգերի արյունահեղ պատերազմներ»։ Ո՞րն է դրության ընդունելի խաղաղ ելքը ըստ Արասխանյանի։ Նա նորից հայացքը դարձնում է դեպի այսպես կոչված «պատմական զարգացումը»։ Հայ տնտեսագետը թվարկում է իր դերմանացի ուսուցիչներին՝ Ռոշերին, Շտայնին, Շմոլլերին, Վագներին և մյուսներին, որոնք սոցիալ-դեմոկրատներ չլինելով, իբր սոցիալիզմին տալիս են գիտության նշանակություն, հող ստեղծելով «պետական սոցիալիզմի» համար։ «Էվոլյուցիայի թեորիա»— այս է Արասխանյանի կարծիքով դիտական սոցիալիզմը, որի ծառայություններից մեկն էլ այն թեզի հաստատումն է, թե պետությունը կոչված է հարթելու «դասակարգերի մեջ գոյացած շահերի հակասությունները»։ Այս հետադարձ էքսկուրսը նրան պետք էր հետևյալ եզրակացության համար. «Կաթեդրայի սոցիալիզմից ծագից պետական

սոցիալիզմը, որի ամենանշանավոր ներկայացուցիչն է Բիսմարկը։ Այն մի շարք վերին աստիճանի կարևոր օրենքները, որոնց Գերմանիայում ներմուծելու համար հօգուտ բանվորների նա նախաձեռնություն հանձն առավ, կաթեդրայի սոցիալիզմի պտուղներն են»։

Արասխանյանի այս առաջնորդողը նպատակ ուներ հասարակական կարծիք մշակել բանվորական օրենսդրությունների անհրաժեշտության վերաբերյալ, դրդել դրանց իրականացումը նաև Անդրկովկասում։ Հետաքրքրությունից զուրկ չէ Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահին նրա ուղղած նամակը, որի մեջ աշխատում է բացատրել հոդվածի նպատակը. «Հոդվածում բացատրվում է, թե ինչպես արևմտաեվրոպական պետությունների կառավարությունները ևկան համոզման, որ բանվորների կենցաղի բարելավումը պետական և ոչ թե կուսակցական գործ է... Մեր կառավարությունը նույնպես այս ուղղության կողմնակից է, այսինքն նա ևս անհրաժեշտ է գտնում օրենսդրական միջոցառումներով ապահովել բանվորների դրությունը»[7]։ Բայց ո՛չ այս բացատրությունը և ո՛չ էլ վկայակոչումը, թե ռուսական ամսագրերն ու թերթերը լի են նման հոդվածներով, չփրկեցին Արասխանյանի առաջնորդողը։ Գրաքննիչներն ավելի լավ գիտեին, թե ցարական կառավարությունը ո՛ր ուղղության կողմնակից էր։

Ա. Արասխանյանի «Կուսակցությունը որպես հասարակական ուժ»[8] հոդվածը հետաքրքիր է կուսակցությունների առաջացման գործում մամուլին հատկացված դերով։ Նա գտնում է, որ մամուլը կոչված է հող պատրաստելու կուսակցությունների առաջացման համար։ Մասնավորեցնելով խոսքն իր ամսագրի մասին, խմբագիրը գտնում է, որ թեև «մի կուսակցություն կազմած լինելուց դեռևս մենք հեռու ենք, բայց մի կուսակցության համար լավագույն հող պատրաստած լինելուն «Մուրճը» աշխատել է ըստ յուր կարողության նպաստել... Հավատարիմ մնալով հայկական մամուլի անցյալից մնացած հառաջադիմական լավագույն գաղափարներին և տրադիցիաներին, «Մուրճը» սոցա վերա ավելացրել է յուր գաղափարները և տրադիցիաները։ Քննադատական-ուսումնասիրական բնավորությունը «Մուրճի» հոդվածների տարված անկեղծ հառաջադիմական ուղղությունով— ահա ամսագրի բնորոշ հատկությունը, սրա գույնը»։

---

7 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 997։

8 Նույն տեղում, գ. 1035։

Արասխանյանը ստեղծվելիք կուսակցությանը «հառաջադիմական» անունն է տալիս և նշում, որ «ոչ միայն չենք վախենում այս ամսագրին կուսակցական ոգուց հեռու չպահել, այլև ամենայն գիտակցությամբ աշխատում ենք մի հառաջադիմական կուսակցություն կազմակերպելու համար»: Թեև Արասխանյանի դատողությունները շատ վերացական են, ավելի շուտ ցանկության, քան գործնական ծրագրի կերպարանք ունեն, այսուհանդերձ վախեցրել են գրաքննիչին:

«Նահանգական և գավառական ինքնավարության խնդիրը»[9] վերնագրով ժամանակակից տեսության մեջ խմբագիրը համարձակվել է որոնջալ, թե ինչու Կովկասում չի իրագործվում նահանգական և գավառական ինքնավարությունը, ինչպես Ռուսաստանում: Տեղական թերթերը լռություն են պահպանում այս խնդրի մասին, նշում է նա, իսկ ոմանց «զուտ ոստիկանական կառավարությունը շատ է բնական թվում մի համեմատապես նոր և քաղաքացիական կյանքին դեռևս քիչ ընտելացած երկրի համար, որպիսին Կովկասն է»: Գրաքննական խոշորացույցի տակ «Մուրճի» բողոքը ըմբոստություն է դիտվել և մերժված նյութերի հավաքածուն ավելացել է ևս մեկով: Ուրեմն, թերթերը ոչ թե լռում են, այլ լռեցվում:

Յարիգմի հարկային քաղաքականությունն է քննադատում Գ. Վարդանյանը՝ «Մխայլի հարկը Անդրկովկասում»[10] հոդվածում: «Արդյո՞ք հարկադրությունը այնպես է կազմակերպված, որ նա համապատասխաներ ժողովրդի հարկատու ուժերին»,— հարցնում է հեղինակը և վիճակագրական տվյալների վրա հիմնվելով՝ բացասական պատասխան տալիս հարցին:

Հ. Մուրադյանի «Ժողովրդի մեջ»[11] և «Բաքու-Բալախանի»[12] հոդվածները աշխատավոր ժողովրդի թշվառ վիճակն են պատկերում գյուղում և քաղաքում: Նարոդնիկական ժողովրդասիրությամբ շնչող առաջին հոդվածում հեղինակը բացականչում է. «Լո՛ւյս, լույս է միայն հարկավոր նրանց. նա միայն կարող է աղաղակող ու համատարած թշվառության առաջն առնել: Իսկ այդ լույսը տալու համար պետք է որ մեզանից ամեն մեկը, որի սիրտը դեռ զգացվում է ուրիշների դժբախտությունից...

---

9 Նույն տեղում, գ. 1237:
10 Նույն տեղում, գ. 997:
11 Նույն տեղում, գ. 1237:
12 Նույն տեղում, գ. 1518:

մտնե այդ մութ աշխարհը, գնա ժողովրդի մեջ ապրե»։ «Երկու զորեղ ֆակտորների՝ կապիտալի և աշխատանքի» ծանր մրցակցությունն է պատկերված Բաբելի մասին գրված երկրորդ հոդվածում։

Դպրոցական խնդիրը ժամանակի ցավոտ հարցերով նույնպես «Հանգչում է» գրաքննության արխիվներում։ Երևում է, թե ինչպես է լարվել գրաքննիչների ուշադրությունը «հայկական դպրոց» բառերին հանդիպելիս։ Նույնպիսի հետևողականությամբ, ինչպես ցարական իշխանությունները վերացնում էին հայկական դպրոցները, ցարական գրաքննիչները մաքրազարդում էին թերթերն ու ամսագրերն այդ «վտանգավոր» բառերից։ Դեռևս 1891 թ. նախազգալով հայկական դպրոցներին սպառնացող մոտալուտ վտանգը, Լ. Սարգսյանը «Մուրճին» տպագրության է հանձնում «ժողովրդական կրթության գործը մեզանում»[13] հոդվածը, որը փականքի տակ է դրվում գրաքննության կոմիտեում։ (Մի տարի անց նույն վերնագրով գրքույկ է հրապարակում Լ. Սարգսյանը Մոսկվայում)։ Հոդվածում քննարկվում է «սեփական ուսումնարանների» ունենալու կենսական անհրաժեշտությունը հայ ժողովրդի համար։ Ոչ թե ամեն տիպի, այլ հատկապես ծխական դպրոցներ, որտեղ «ուսում են առանում մեծ մասամբ հայ երկրագործների, արհեստավորների և առհասարակ չքավոր դասի զավակները»։ Այդ դպրոցները կարիք ունեն ընդլայնման, որովհետև ժողովրդի լուսավորության հիմնական միջոցն են։ Հեղինակը խոսում է վիճակագրական տվյալների հիմնավոր լեզվով. ծխական դպրոցներում ավելի շատ հայ երեխաներ են սովորում (11.352), քան մնացած բոլոր տիպի ուսումնարաններում (10.363)։ 1889—1890թթ. ուսումնական տարում ժողովուրդը ծխական դպրոցների վրա ծախսել է 330 հազար ռուբլի և «պատրաստ կլիներ տասնապատիկ ավելի տալ, եթե զանազան հանգամանքները չխանգարեին». իսկ «զանազան հանգամանքները» ոչ միայն պիտի խանգարեին, այլև խորշակահարեին հայկական դպրոցները։ Հայոց ծխական դպրոցների բախտի տնօրինողը ժողովուրդը չէր՝ միշտ զոհողության պատրաստ, հայ ուսուցիչը չէր՝ իր անձը ժողովրդի զավակների կրթությանը նվիրաբերելու պատրաստ, այլ ցարական բյուրոկրատիան, որը հարցը լուծեց ամենակարճ ճանապարհով՝ ծխական դպրոցները փակելով։

Հետևանքները ծանր եղան։ Դրանցից մեկի մասին է ահազանգում

---

13 Նույն տեղում, գ. 1055։

Աբասխանյանի «Հայոց լեզվի ճգնաժամը»[14] հոդվածը, որին նույնպես լույս աշխարհ գալ չվիճակվեց։ Հայոց լեզուն վտանգված էր, որովհետև, ասում է Աբասխանյանը, «այսօր յուր դեմ ունի մի խոշընդոտ, որը դեռ երեկ չկար— հայոց ծխական դպրոցների չգոյությունը, ուր դասավանդությունը կատարվում էր հայերեն լեզվով»։ Աբասխանյանը շոշափելի է դարձնում այս ծանր իրողության հետևանքների ամբողջ շղթան. ուսուցիչների՝ «գրականական լեզվի այդ ճրագների», կես հաղարանոց բանակը, որ ամեն օր մայրենի լեզվով շփում էր ունենում աճող սերնդի հետ, մի հարվածով զորացրվեց. գրական հայախոսության բացակայությունը սպառնում է հայ գրականության գոյությանը, որովհետև առանց ընթերցողի չկա գրականություն, իսկ առանց գրականության չի կարող լինել հայկական մշակույթ։ Չպետք է հանձնվել, ընկճվել, հորդորում է «Մուրճի» խմբագիրը. «այսուհետև հայը դպրոցում չէ, որ պիտի ուսանե հայերենը, այլ տանը և հասարակության մեջ»։ Նա «Ջանագան լուրերի» բաժնում է թաքցնում «Հայոց լեզվի ուսուցման»[15] հարցը, հաշվում, թե որքան գումար է պետք հայերենը մասնավոր ուսուցմամբ սովորեցնելու համար, իսկ գրաքննիչը նկատում է և կարմիր մատիտով դուրս գցում այս «լուրը»...

Մենք չէինք ասի, թե Աբասխանյանի ներքոհիշյալ կոչը, որ մնաց գրաքննության արխիվներում, չհասավ նրանց, ում ուղղված էր. «Հայ գործիչներ, գրականագետներ, նախկին ուսուցիչներ, ձեզ է պատկանում այս կես դարում մեծամեծ ջանքերով և մի քանի սերունդների անձնվիրությունով ձեռք բերված թանկագին հոգևոր ժառանգության կատակատարները լինել, անցյալը ձեզ է դիմում, որ ապագան փրկենք»[16]։ Այս մտահոգությունը յուրաքանչյուր ազնիվ հայ մտավորականի սրտի, հոգու մեջ էր։ Թանկագին հոգևոր ժառանգությունը՝ հայոց լեզուն, որ դարերի ճանապարհ էր անցել, պետք էր պահպանել, անվնաս ու անխաթար սերունդներին հանձնել։ Մնում էր առնելու իսկական ժողովրդական շարժում՝ հայ դպրոցները վերաբացելու համար։ 1905 թ. հեղափոխությունը հայ ժողովրդին ետ էր վերադարձնելու կորցրածը։ Հայ մանուկը նորից հեգելով սովորելու էր մեսրոպատառ հայոց լեզուն հայոց դպրոցում։

---

14 Նույն տեղում, գ. 1407։
15 Նույն տեղում, գ. 1339։
16 Նույն տեղում, գ. 1407։

Հայկական հարցի վերաբերյալ հայ ժողովրդի բողոքի ձայնն իր ամբողջ ուժով չհնչեց «Մուրճի» էջերում, այլ խլացվեց գրաքննության կողմից։ Իզուր էր «Մուրճի» Կոստանդնուպոլսի թղթակից Խաչ-Պապյանն արյուն-արցունքով թղթին հանձնում իր հայրենակիցների անլուր տառապանքները, թվեր ու թվեր, փաստեր ու փաստեր հավաքում հայերի զանգվածային կոտորածների, թուրք բարբարոսների գործած անվերջանալի չարագործությունների մասին։ Կյանքը վտանգելու գնով գրված այդ թղթակցությունները, սակայն, գրաքննական գործերն էին ուռճացնում միայն։

Ամենից շատ մերժված են այն բանաստեղծությունները, որոնցից կարելի կլիներ մի ժողովածու կազմել խորագրելով՝ «Բողոքի ձայն»։ Հենց այդ ձայնն էլ խլացրել է ցարական գրաքննությունը։ Այլաբանության հնարանքները միշտ չէ, որ կարողանում էին ճեղքել գրաքննական երկաթե պատնեշը։ «Մուրճում» Հ. Թումանյանի տպագրվելիք բանաստեղծություններից մեկը վերնագրված է «Իսրայել»[17]։ Բայց ընթերցողից առաջ գրաքննիչը պետք է հասկանար, որ ի՛ր ժողովրդի ճակատագիրն է ողբում բանաստեղծը տարագիր հրեաների մասին գրելով.

Պանդուխտ, հալածված, հոգնած, վշտաբեկ,
Եվ ոչ մի երկրում հանգիստ չըգտա.
Դարձյալ դեպի քեզ հայրենիք իմ հեգ,
Հարազատ որդիդ ձուլում եմ ահա։

Բայց և քո գրկում, ավաղ, կորած է
Տենչալի կյանքի հույսը հավիտյան,
Քո գրկում նաև ինձ սպասում են
Ստրկի վիճակ, օրհր հեծության։

...
Ա՛խ, մենք պատրաստ չենք միասին կռվի
Եվ մեզ ընտմին խեղդում է ջոկ-ջոկ,
Մենք հալածված ենք առանց մեղքերի
Եվ չի պաշտպանում մեր դատը ոչ ոք[18]։

---

17 Նույն տեղում, դ. 1130։

18 64 տարի անհայտության մեջ մնալուց հետո այս բանաստեղծությունը առաջին անգամ հրապարակվեց «Սովետական գրականություն» ամսագրի 1956 թ. № 4-ում։

Ամենից շատ մերժվել են Ալ. Ծատուրյանի բանաստեղծությունները՝ «Հզոր երգեր»[19], «Որդեկորույս մայրերին»[20], «Դարեր եկան, դարեր անցան»[21], «Նոր սերունդ»[22], «Երգ»[23], «Մեր եղբայրները»[24] և այլն: Լավագույն քառյակները, տողերը մեջբերելու համար անսխալորեն կարելի է օգտվել գրաքննիչի ընդգծումներից: Ահա Ծատուրյանի սքանչելի բանաստեղծության տողերը՝ ուղղված որդեկորույս մայրերին.

Որդեկորույս խղճուկ մայրեր,
Մի՛ լաք այդպես դառնագին,
Որ սիրասուն ձեր զավակներ
Կյանքը զոհած խեղճ ազգին՝
Մատաղ օրեր, ծաղիկ հասակ,
Ծընող, քույրեր մոռացան,
Եվ սուրբ գործի քաջ նահատակ—
Ոսղմի դաշտում փրովեցան...

Արգելում են սգալ վիշտը, կորուստը, թույլ չեն տալիս բանաստեղծին ասելու իր տխուր երգը.

Սիրուն գարուն, կանաչ գարուն,
Քեզ ինչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արյուն,—
Էլ ես ուրախ երգ չունեմ:

Բանաստեղծն ուղում է մատնացույց անել փրկության ուղին, իր խոսքը հղելով նոր սերնդին.

Որպես ձմռան շղթաներում կաշկանդված
Մայր-երկիրը լուռ հիծում է՝ ըղձալով,
Որ կա գարուն և նա մի օր անկասկած
Փայլելու է՝ երկրին նորից կյանք տալով:

---

19 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1195:
20 Նույն տեղում, գ. 1282:
21 Նույն տեղում, գ. 1407:
22 Նույն տեղում:
23 Նույն տեղում:
24 Նույն տեղում, գ. 1604:

Այդպես և՝ դու, իմ տարաբախտ ժողովուրդ,
Դու տանջվելով չես դադարում հուսալու,
Որ կա քո մեջ մատաղ մի ուժ— նոր սերունդ,
Եվ այդ ուժն է քո կուռ շղթան փշրելու...

Ալ. Ծատուրյանը պայքարի է կոչում արևմտահայ մեր եղբայրներին.

Դեպի գո՞րծ, եղբայր... հերիք է որքան
Անճնատուր եղած դու անզոր լացին
Ողբացիր կյանքդ, սրգվորի նման,
Ջուր սպասելով վառ լուսաբացին...

Գրաքննության մերժած այս և մյուս բանաստեղծություններն այսօր կազմում են ժողովրդական վշտի հայ երգչի երկերի ժողովածուների զարդը։

Գրաքննության արխիվների գործերում մենք հանդիպեցինք Ավետիք Իսահակյանի մի բանաստեղծությանը, որ վերնագրված էր «Ես մի նոր զանգ եմ»[25] և թվագրված՝ 1899 թ. օգոստոս։ «Մուրճում» տպագրված «Տիեզերական զանգ» բանաստեղծությունը գրվել է սրանից ուղիղ մեկ ամիս հետո։ Ուրեմն «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծությունը մերժվելուց հետո Իսահակյանը գրել է երկրորդ «Զանգը», այն սկսելով կախման կետերով, ասես անուղղակիորեն ազդարարելով, որ շարունակությունն է ինչ-որ այլ մուտքի։ Չգրել չէր կարող, բանաստեղծական պատկերը հետապնդում էր նրան, պոետի ներսում զանգ էր ղողանջում, ըմբոստության, ընդվզման զանգը։ Այս բանաստեղծությունը առաջինի տարբերակը չէ, բայց այն նույն զանգի ղողանջի արձագանքն է, որ տարիներ հետո պիտի հնչեր Կովկասյան վսեմ, վես բարձունքներից իբրև «Ազատության զանգ», ստրկության անարգ լուծն ու կապանքը փշրելու և ժողովուրդներին սուրբ եղբայրության կոչելու հզոր ձայնով։

Ուշադրության արժանի է, որ «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծությունը Իսահակյանը գրել է երեք տարվա անազատությունից հետո, նրբ աքսորավայրից՝ Օդեսայից նոր էր վերադարձել հայրենիք։ Բոլոր ազգերի հին ու նոր ըմբոստ ոգիներին կյանքի ոգեկոչող, իրեն նրանց «կրտսեր ընկերը» ազդարարող այս բանաստեղծությունն էր այն եղրա-

25 Նույն տեղում, գ. 1518։

կացությունը, որին հանգել էր աքսորական բանաստեղծը։ Բայց բանաստարկվում են ոչ միայն մարդիկ, բանտարկվում է նաև ձայնը, ըմբոստ բանաստեղծի ձայնը։ «Զանգը» կալանքի տակ դրեց գրաքննությունը, բայց զանգի լեզվակը բանաստեղծի հոգին էր, որ նոր ղողանջներով նրա ձայնը հասցրեց մարդկանց։ Իրավունք ուներ քսանչորսամյա բանաստեղծը ասելու՝

Ես մի նոր զանգ եմ, և վե՜հ, և վրսե՜մ,
Եվ անհուն խորքից մեծ տիեզերքի
Կախված եմ ահա ամբոխի վրա.
Եվ ղողանջում եմ նո՜ր ու խո՜ր երգեր[26]...

Իսահակյանն իսկապես նոր զանգ էր հայ պոեզիայի հինավուրց տաճարում, որ եկավ ղողանջելու «նոր ու խոր երգեր»։

«Մուրճի» ակտիվ աշխատակիցներից արձակագիր Վրթանես Փափաղյանի ստեղծագործությունները ևս իրենց վրա են գամել գրաքննության ուշադրությունը։ Մերժվել են նրա՝ արևմտահայության դառը ճակատագիրը պատկերող «Գնանք այնտեղ»[27], և հենց վերնագրից սկսած «վտանգավոր», բայց հին ճշմարտություն հավաստող «Homo homini lupus»[28] (*Մարդը մարդուն գայլ*) պատմվածքները։

Մենք նշեցինք գրաքննության մերժած նյութերի միայն մի մասը՝ կարևորները, որոնք բնութագրում են ամսագրի ուղղությունը, բայց դրանք շատ-շատ են. «Մուրճի» տասնյակ հատորներ կկազմեին, լավագո՜ւյն հատորները։

Գլուխ յոթերորդ

Ավետիք Արասխանյանի և նրա «Մուրճի» տեղն ու դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ

Անցյալի ամեն մի խմբագիր իր հրատարակած պարբերականը ծողնում էր իրեն որպես հուշարձան։ Այդպիսի մի հուշարձան է Ավետիք Արասխանյանի համար «Մուրճ» ամսագիրը, որից մեր առջև հառնում է

---

26 Իսահակյանի «Ես մի նոր զանգ եմ» 46 տողանոց բանաստեղծությունը առաջին անգամ հրապարակվել է մեր կողմից «Գարուն» ամսագրի 1975 թ. № 6-ում։

27 ՎՍՍՀ ԿՊԿԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1237։

28 Նույն տեղում, գ. 1339։

աննկուն, շիտակ ու անձնվեր խմբագրի կերպարը։ «Ա. Արասխանյանը օրինակելի խմբագիր էր»[1],— Արսեն Տերտերյանի այս կարծիքի մեջ խտացված է ոչ մեկ ժամանակակցի տպավորությունը։ Անցյալի հայ մամուլի մեկ ուրիշ երախտավոր՝ Աշոտ Աթանասյանը հայ ժուռնալիստիկայի պատմության մեջ առանձնահատուկ տեղ հատկացնելով Ա. Արասխանյանին, նրան դասում է «գրական մշակների այն համակրելի քչերի» շարքը, որոնց կյանքն ու գործը ուսումնասիրելը շնորհակալ ու կարևոր գործ է համարում. իր շիտակ հրապարակախոսությամբ, բարոյական մաքրությամբ նա կարող էր օրինակ ծառայել մամուլի մշակների եկող սերունդների համար։ Հենց ինքը՝ Աթանասյանը ձեռնարկում է Արասխանյանի դիմանկարը գծելու շնորհակալ գործը։ Յավոք, նրա արժեքավոր աշխատությունը մնում է անտիպ և դառնում արխիվային փաստաթուղթ՝ իր հերթին սպասելով ուսումնասիրման, հրապարակման։

Ամեն մի խմբագրի գործունեության գնահատման առաջին ցուցանիշը այն է, թե նա որքանով է կարողացել իրականացնել իր առաջադրած ծրագիրը։ Մեր առջև է «Մուրճի» 12 տարվա, տարեկան 12 համարի 150—200 էջանոց հատորների հսկա հավաքածուն։ Դա «Մուրճի» առաջին համարում հրապարակված ծրագրի լիակատար իրականացումն է։ Այն, ինչ Արասխանյանը որպես ծրագիր ներկայացրեց իր առաջին առաջնորդող հոդվածում՝ «Մուրճը» որպես հասարակական օրգան», ամփոփից իրրև կատարված գործ նույն վերնագրով իր վերջին առաջնորդողում։ Խմբագրի հետ մենք ևս կարող ենք կրկնել. «Մուրճի» հետ հայկական ամսագրությունը մտավ մի նոր շրջան. ամսագիրը իր ավանդական նեղ ծրագիրը փոխեց լայն ծրագրի։ Նա աշխատեց ընդգրկել բոլոր այն խնդիրները, որոնք շոշափում են ժողովրդի հոգևոր և նյութական կյանքը... Այսքան լայն ծրագիր իրագործելու համար հարկավոր էր ժամանակիս սերնդի արժանավոր ուժերից շատերի աջակցությունը. և կարող ենք ներքին գոհունակության զգացմունքով վկայել, որ այդ աջակցությունը մենք գտել ենք, և ինչ կատարված է, մի ամբողջ սերնդի ձեռնտվությամբ է կատարված»[2]։

Արասխանյանն սկզբից ևեթ ուներ մամուլի և մասնավորապես ամսագրի հասարակական դերի խոր և հստակ ըմբռնում։ Առարկելով Թիֆ-

---

1 «Նոր հոսանք», 1914, № 1։

2 «Մուրճ», 1900, № 5—6, էջ 574—575։

լիսում հրատարակվող «Նովոյե օբոզրենիե» լրագրի տեսակետին, թե ամսագրի համար էականը գրական բաժինն է, Արասխանյանը հաստատապես պնդում է, որ «մի հասարակական ամսագրի հիմքը՝ նորա հրապարակախոսությունն է, նորա քարոզած մտքերը, պաշտպանած դատերը և այն բոլորը, ինչով նա նպաստում է կյանքի խնդիրների և կյանքի առաջադիմության։ Ջուտ գեղարվեստական գրականությունը հենց՝ այնքան է հաշվի առնվում մի հասարակական ամսագրում, որքանով որ նա ինքը, այդ գրականությունը, յուր մեջ ամփոփում է էլեմենտներ առողջ տենդենցիաների, առողջ ուղղության»[3]։

Արասխանյանը անդուլ ջանք էր թափում հայկական կյանքի դեմոկրատացման համար և ամեն կերպ աշխատում էր «ժողովրդական վերահսկողություն» հաստատել, արմատավորել ժողովրդի առջև հաշվետու լինելու սովորույթը, այս պահանջը տարածելով ոչ միայն հասարակական, այլև կրթական, հոգևոր կազմակերպությունների վրա։ Բացառություն չէր անում նաև «Մուրճի» համար։ Ամեն տարեմուտի նա սովորություն էր արել ամսագրի առաջնորդող հոդվածը նվիրել «Մուրճի» անցած գործունեությանը։ Դրանք յուրատեսակ տարեկան հաշվետվություններ են, որոնք իրար կցելով կարելի է ստանալ «Մուրճի» ամբողջ պատմությունը։

Հետաքրքիր է, թե ինչ գնահատական է տալիս Արասխանյանն իր իսկ խմբագրած ամսագրին։ Ամենից առաջ նա «Մուրճը» համարում է առաջադիմության օրգան, քանի որ նա անդուլ ու անվհատ պաշտպան կանգնեց այն ամենին, ինչ հայ կյանքը մղելու էր դեպի առաջ։ «Մուրճը» թափուր դաշտում չծնվեց։ Հարուստ չէր նախորդների ցուցակը, բայց այնտեղ կար շողարձակող անուն՝ «Հյուսիսափայլ»։ Բայց «Հյուսիսափայլը», որի հետ «Մուրճը» իր տենդենցիաներով ավելի մոտ է,— գրում է Արասխանյանը,— շատ էր վաղուց անհայտացել, որպեսզի «Մուրճը» գար ուղղակի նորան շարունակելու համար»[4]։ Այո, ժամանակները փոխվել էին, կյանքին ավելի մոտ լինելու պահանջը մամուլի համար սրվել էր իբրև գոյության կռվան։ Իրավունք ուներ նոր խմբագիրն ասելու, թե «Ավելի քան որևիցե մեկը նախկին ամսագրերից՝ «Մուրճը» սկսեց կյանքի հետ գործ ունենալ, որ և արտահայտվում է նորա բաժինների բազ-

---

3 «Մուրճ», 1893, № 1, էջ 156։

4 «Մուրճ», 1892, № 12, էջ 1730։

մակողմանիությունով և բազմաթիվ նոր մարդկանց գրական ասպարեզ դուրս գալով»[5]։

Արասխանյանը ամսագրի ծառայությունն է համարում գրական նոր սերնդին ասպարեզ տալը. «Նոր ուղղության ամսագրի համար հարկավոր էին նաև նոր մարդիկ, թեկուզ գրականության մեջ քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ աշխատակիցներ... Մեր ձեռնարկությունը հենց սկզբից կարծում էին դատապարտված կատարյալ անհաջողության... մեզ շրջապատող ժամանակակից մամուլը մեր այդ դիտավորության իրագործումը չխրախուսեց ոչ մի կերպ։ Բոլորովին ընդհակառակը։ Մենք ոչ միայն թշնամանքի և ծաղրի հանդիպեցինք այն մամուլից, որ յուր ուղղությունով հակառակ պետք է լիներ «Մուրճին», այլև այն մամուլի կողմից, որի գործը շարունակելու համար կոչված էր այս ամսագիրը»[6]։ Եվ չնայած դրան «Մուրճը» իր գոյության ամբողջ ընթացքում հավատարիմ եղավ իր սկզբունքներին և հետևողական՝ իր ծրագրի կենսագործման մեջ։

«Մուրճի» առջև ծառացած դժվարություններից մեկը Արասխանյանը տեսնում էր այն բանում, որ ամսագիրը որպես պարբերական դեռևս չէր դարձել մի անհրաժեշտ պահանջ ընթերցող հասարակայնության համար։ «Ժողովրդականացնել ամսագիր ասված բանը ընթերցող հասարակության լայն խավերում,— ահա մի խնդիր, որ պետք է լուծեր «Մուրճը»[7]։ Ճիշտ երկու տասնամյակ առաջ այդպիսի մի խնդիր ծառացած էր լրագրության առաջ, որը հաջողությամբ լուծեց Արծրունին՝ որպես «Մշակի» խմբագիր։ Այդ խնդրի հաջող իրականացման գրավականը Արասխանյանը տեսնում էր ամսագրի՝ ժամանակի ձայնափողը լինելու պայմանի մեջ։ Ուրեմն «Մուրճը» ոչ թե «Հյուսիսափայլի» ու «Մշակի» սոսկական հետևորդը, այլ հետնորդը պետք է լիներ։

Արասխանյանն իբրև խմբագիր լավ էր հասկանում ժամանակի պահանջները։ Հասկանում էր նաև, որ դրանց իրականացումը մի մարդու ուժերից վեր գործ է։ Ուստի ամսագրի հետ աշխատում էր կապել հեղինակային կարող ուժեր։ Խմբագիրը ուրախությամբ հայտնում է ընթերցողներին, որ համարից համար «Մուրճի» հեղինակային կազմից առանձնացավ մի այնպիսի խումբ, որով հնարավոր եղավ իրականացնել

---

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 1731։

7 Նույն տեղում, էջ 1732։

իր վաղեմի երազանքը՝ ստեղծել «Մուրճի» խմբագրական խորհուրդ. «Միջոց տալ, որ «Մուրճի» հետ գաղափարական սերտ մտերմություն ունեցողները կանոնավոր նիստերում ի մի հավաքվեն և իրանց կարծիքները հայտնեն կամ տպագրելու նշանակված և կամ տպված գրվածների մասին, և որ առհասարակ մտքերի փոխանակություն կատարվի,— ահա «Մուրճի» խմբագրական խորհրդի նշանակությունը»[8]: Ութ հոգուց կազմված այդ խորհուրդը, որ լոկ խորհրդատու օրգան էր և գործում էր 1890 թ. հոկտեմբերից, Արասխանյանի հավաստմամբ, համերաշխության և փոխադարձ հավատի ու հարգանքի վրա էր հիմնված: Այդպիսի մարմնի կարևորությունը Արասխանյանը շատ բարձր էր գնահատում:

«Մուրճը» հարուստ ու բազմակողմանի դարձնելու համար Արասխանյանը ջանք չէր խնայում: Ամսագիրը պատահական նյութերի հավաքածու չէր: Նրա ամեն մի համարից երևում է խմբագրության նախապես ծրագրված և ջանադիր աշխատանքը: Մեծ ջանք էր թափում խմբագիրը հատկապես գիտության, քննադատության և արտաքին խրոնիկայի բաժինները ճոխացնելու համար:

«Մուրճը» նոր տարեշրջանի շեմքում» առաջնորդող հոդվածում Արասխանյանը ուրախությամբ նշում է, որ «Մուրճը» ռուսահայկական ամսագրության մեջ առաջինն է, որ թևակոխում է վեցերորդ տարեշրջանը: Բայց որքան մեծ էր նրա ուրախությունը, ավելի քան մեծ էր մտահոգությունը՝ ամսագրի ապագա ճակատագրի նկատմամբ, քանի որ նրա նյութական անապահովությունը գնալով ոչ թե նվազում էր, այլ աճում. «Մենք պարտավոր ենք շարունակելու հինգ տարի պատվավոր կերպով շարունակած գործը,— ասում է Արասխանյանը և ամսագիրը տարածելու կոչով դիմում «Մուրճի» բարեկամներին: Ամսագրի գոյության միակ գրավականը նա տեսնում է համակրողների, աջակցողների, աշխատակցողների հավաքական ուժի մեջ, երբ պարբերականը «անհատական սեփականության իրավունքից անցնում է արդեն ավելի մեծ ընդհանրության իրավունքի սահմանները»[9]:

1898 թ. լրացավ ամսագրի տասնամյակը. № 10—11 միացյալ համարը նվիրված է այդ նշանակալից հոբելյանին: «Տասնամյակից» վերնագրով առաջնորդող հոդվածում Արասխանյանը տասը տարիների բարձունքից ետ է նայում իր խոնջության վաստակին, կիսում իր ուրախու-

---

8 Նույն տեղում, էջ 1736:

9 «Մուրճ», 1894, № 1, էջ 5—7:

թյունը ընթերցողների հետ այն բարձր գնահատականների առթիվ, որոնք լսելու կամ կարդալու առիթ ունեցավ այդ օրերին. «Այժմ տեսնում ենք, որ «Մուրճի» բարոյական մաքրությունը վկայվում է միաժամանակ բազմաթիվ մոտու հեռու անձերից, և թվում է մեզ, թե այդ հանգամանքը շեշտվում է որպես «Մուրճի» առանձնահատկություն»[10]:

Մամուլի դերի ու կոչման մասին Արասխանյանի արտահայտած հետևյալ միտքն արժանի է մտապահման, այն արտացոլում է «Մուրճի» խմբագրի բարոյական դիմապատկերը. «Մամուլը ոչ թե պետք է բարոյականության սկզբունքները բերան անի, այլ դոցանով տոգորված լինի մինչև ոսկորի ուղն ու ծուծը. մամուլը պետք է մտավոր հորիզոններ բաց անելով՝ մարդ կրթի, և ոչ միայն քարոզով, և դեռ ամենից քիչ՝ քարոզով, այլ յուր էությամբ. նորանից պետք է այդ բոլորը գա, թեկուզ ձայնը չլսվի»[11]:

Արասխանյանն իրեն նման չէր լինի, եթե «Մուրճին» հղված դրվատական խոսքերն ընդուներ միայն իր հասցեին. նա «Մուրճը» դիտում է որպես մի ամբողջ սերնդի գործ:

Ահա ինչ են գրում Մոսկվայից մի խումբ ուսանողներ Արասխանյանին հղած հոբելյանական ուղերձում. «Քի՜չ բան չէ, հայկական միանգամայն անապահով ամսագիր՝ և ամբողջ տասը երկար ու ձիգ տարի գոյություն է ունեցել, հերոսաբար զանց առնելով այն բոլոր խոչընդոտները, որոնց միշտ արտադրել է մեր կուլտուրական սնանկությունը, ու այն սուղ նյութական դրությունը, որը ընկերակցել է Ձեզ, Ձեր պատվական ամսաթերթը հրատարակելու օրից:...

«Մուրճի» վերաբերմամբ Դուք նմանվել եք այնպիսի ծնողի, որը նստած յուր բանկափին, բայց անհույս ղավակի մահճի մոտ, մայրական բուռն զգացմունքով, կարծես, մարտնչելով մահվան հետ, աշխատում է հնազանդել նրան յուր սիրելիից— ու մայրը տանում է հաղթանակը: Դուք նույնպես հաղթող հանդիսացաք: Փառք ու պատիվ Ձեզ:

Կեցցե «Մուրճը». թող նա դեռ շատ տասնամյակներ տաք-տաք երկաթ ծեծե և նրանից կոռ-կոփե հայերի համար հոգի և միտք վարելու խոփեր»[12]:

---

10 «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1324—1325:

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում, էջ 1584:

Մամուլի նշանակության ըմբռնմամբ է ներծծված «Մուրճի» մի խումբ երիտասարդ համակրողների նամակը Ախալքալաքից, որի տակ առաջինը ստորագրել է Դերենիկ Դեմիրճյանը. «Մեր մամուլի հարյուրամյա գոյությունը, աստիճանաբար սերունդներ պատրաստելով, այսօր մեզ կանգնեցրել է գրական սեղանի առաջ: Ունինք օրագրեր, շաբաթագրեր և հանդեսներ, արդարև մեծ ու գնահատելի է նոցա ծառայությունը, որովհետև մեր առօրյա կյանքի պատկերն են նոքա...

«Մուրճը» յուր ծննդից մինչև այսօր տվել է հատընտիր նյութեր: Նորա բոլոր համարներն իրար մոտ շարած՝ ունինք մի փոքրիկ և լուրջ մատենադարան թարգմանական և ինքնուրույն գրվածքների, վեպերի, բանաստեղծությունների, կշռադատված քննադատությունների և որ ավելին է, նա շտեմարան է հայոց ներկա պատմության»[13]:

Որպես ուշագրավ կարծիք կուզենայինք մեջբերել նաև Շիրվանզադեի շնորհավորական խոսքը. «Օտարության մեջ ինձ համար կատարյալ սփոփանք է, որ հայ հասարակությունը ընդունակ եղավ այնքան անկեղծ գնահատել մի մաքուր գրականական օրգանի և մի առողջամիտ գործչի գործունեությունը: Թող այդ ընդհանուր համակրական ցույցերը կրկնապատկեն Ձեր գովելի եռանդը և զորացնեն Ձեր հաստատուն կամքը, որպեսզի ավելի համարձակ մարտնչեք խավարի, կեղծիքի և հասարակության առողջ առաջադիմության խոչընդոտ տարրերի դեմ: Ես միշտ այն համոզմունքին եմ եղել, որ «Մուրճը» մատաղ հայ գրականության ամենաշիտակ բարեկամներից մեկն է, և եթե եղել են րոպեներ, երբ իմ հայեցողությամբ, նա գործել է սխալներ, երբեք այդ սխալները իմ աչքում չեն նսեմացրել նրա արմատական խոշոր ու հայ մամուլի մեջ հազվագյուտ արժանավորությունները: Այժմ «Մուրճը» անցնելով 10-ամյա անընդհատ գործունեության քուրայով, հարկավ, յուր անկեղծությանը, աղնիվ ձգտումներին և առողջամիտ ուղղությանը կավելացնի և փորձառության պաշարն ու հմտությունը, որով և ավելի աջող կկրի բուն առաջադիմության դրոշակը:

«Մուրճն» արդեն ամուր հիմք է դցել հայ հասարակական մտքի ու զգացումների մեջ, և, համոզված եմ, ոչ մի թշնամական ցույց չի կարող մազի չափ վնասել նրա բարոյական վարկին: Ձեր կողմն է բոլոր հայ գրականական գործիչների համակրանքը. դեպի «Մուրճն» է թեքված

---

13 Նույն տեղում, էջ 1587:

զուտ գրականության բուն շահերը հասկացողների հարգանքը, իսկ այս մի այնպիսի գրավական է, որով Դուք պիտի պարծենաք և որը Ձեր ամենագլխավոր ուժերից մեկն է»[14]։

Շնորհավորական խոսքերը «Մուրճի» տոնական համարում շատ-շատ են. գրում են նաև Դաղարոս Աղայանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Շանթը, Լևոն Սարգսյանը, Կարապետ Կուսիկյանը, Ստեփան Լիսիցյանը և, մանավանդ, ուսանողներ՝ Բեռլինից, Լայպցիգից, Ժնևից, Ռիգայից, Պետերբուրգից, Մոսկվայից, Օդեսայից, հաստատում ամսագրի, Աղայանի բառերով՝ ալգաշահ, անբիծ և անխոնջ գործունեությունը։

Սակայն որքան էլ անկեղծ ու ջերմ փափագով լի էին «Մուրճի» ապագա բեղմնավոր գործունեության վերաբերյալ մաղթանքները, նրա գոյությունը լուրջ վտանգի տակ էր։

Նյութական կարիքը եղել է «Մուրճի» մշտական ուղեկիցը։ Խմբագիրը երազում էր ունենալ գոնե հազար բաժանորդ՝ ամսագիրն ամիսը երկու անգամ հրատարակելու կամ ծավալը 240 էջի հասցնելու համար։ Բայց «Մուրճի» բաժանորդների թիվը չհասավ անգամ դրա կեսին։

Երեք տարվա հրատարակությունից հետո Արասխանյանի համար պարզ է դառնում, որ «Մուրճի» գոյությունը վտանգված է. դեֆիցիտն աճում էր, իսկ եկամուտը չէր ավելանում։ Արասխանյանն առաջարկ է ստանում դրամատեր Փիլիպոս Վարդազարյանից՝ իրեն դիջել խմբագիր-հրատարակչի իրավունքը, մնալով գլխավոր աշխատակից և խորհրդատու։ Արասխանյանը մերժում է այս առաջարկը, բայց պարտքերից ընկճված, համաձայնվում է Վարդազարյանին հանձնել հրատարակչի իրավունքը, պայմանով, որ նա չի խառնվելու խմբագրական գործերին, այլ հոգալու է միայն դրամական ծախսերը։ Պայմանագիրը կնքվում է 1891 թ. հուլիսին, երեք տարի ժամկետով։ Սակայն որոշ ժամանակ անց պարզվում է, որ հրատարակչի մտադրությունները հեռուն են գնում. ըստ երևույթին մտքում փայփայելով իր նախնական ծրագրերը, նա փորձում է միջամտել խմբագրի իրավունքներին, նրա «օգնականը» դառնալու պահանջ դնել, ինչը Արասխանյանը չէր կարող հանդուրժել։ Հարաբերությունները լարվում են և հասնում խզման 1893 թ. վերջերին, պայմանագրի ժամկետը լրանալուց մոտ մեկ տարի առաջ։ Եվ որովհետև Արասխանյանի հակառակորդների ապաստարանը «Մշակն» էր, Փիլիպոս Վարդազարյանն այնտեղից հարձակումներ է սկսում Արասխանյանի դեմ։ Արասխանյանը ստիպված է լինում մի երկար հոդվածով՝ «Մի ընկերու-

14 Նույն տեղում, էջ 1591։

թյան սկիզբն ու վախճանը», ջրի երես հանել ամբողջ ճշմարտությունը։ Պետք է կարդալ այդ հոդվածը ամբողջությամբ տեսնելու համար, թե Արասխանյանը ինչպես գիտեր պաշտպանել «Մուրճի» պատիվը, անկախությունը[15]։ Վարդազարյանը, իբրև «Մշակի» № 60-ի հավելված, հրատարակում է մի գրքույկ՝ «Իմ պատասխանը «Մուրճի» խմբագրին»։ Չգիտենք գրքույկի տպագրությունն ինչ է արժենում հարուստ դրամատիրոջը, բայց բարոյական առումով՝ թանկ է նստում։ Արասխանյանի հետ միասին «Մուրճում» հանդես են գալիս նաև Գ. Վարդանյանը, Ե. Ղազարյանը, Գ. Աստվածատրյանը, Մ. Նավասարդյանը, Հ. Հակոբյանը, Գ. Ղարաջյանը, որոնք իրենց «Երկու խոսքում» մերկացնում են «Մշակի» թույլ տված «մամուլի վաշխառությունը». «Պ. Վարդազարյանը շատ է ուշացել իր բուրժուազական պահանջմունքների մեջ,— գրում են նրանք,— և պ. Արասխանյանցի ցույց տված ընդդիմությունը միայն համակրության և ծափահարության է արժանի այն մարդոց կողմից, որոնք գիտեն հասկանալ մամուլի և գրականության սուրբ կոչումը»[16]։

Ամեն տարեմուտի «Մուրճի» խմբագիրը կոչ էր անում բաժանորդներին՝ օգնել տարածելու ամսագիրը։ 1896 թ. № 2-ում նա դիմում է «Մուրճի» ունևոր ընթերցողներին՝ ամսագրին առնվազն 100-ական ռուբլի փոխառություն տրամադրելու խնդիրքով։ Փոխառություն առաջարկողներ լինում են թե ոչ, հայտնի չէ, բայց ամսագրում երևում են նվիրատուների անուններ. լուրերի բաժնում ծնվում է խորագիր՝ «Նվերներ «Մուրճի» պարտքերը հանգցնելու համար»։ Մի տարվա ընթացքում պարտքի գումարը նվազում է մինչև 3.847 ռ.։ 1899 թ. № 7—8-ում խմբագիրը տեղեկացնում է, որ «Մուրճի» պարտքերը հանգցնելու համար նվիրատվությունների գումարը կազմել է 1728 ռ. 50 կ.։ Ուրեմն, նվիրատվությունները, որքան էլ վկայում էին բաժանորդների անձնվիրության մասին, ցավին դարման անել չէին կարող։ Ավելացնենք նաև այն բարոյական խեղումը, թշնամական հարձակումները, որոնց մշտապես ենթարկվում էր «Մուրճը» «Մշակի» էջերում, և կպատկերացնենք այն գերմարդկային ճիգերը, որ թափում էր Արասխանյանը իր հոգեզավակի կյանքը պահպանելու համար։

«Մշակ»—«Մուրճ» հակամարտությունը, որ սկսվեց «Մուրճի» ծննդյան օրից, տարիների ընթացքում խճճվեց աշառու և կրքոտ վիճաբա-

---

15 Տե՛ս «Մուրճ», 1894, № 2, էջ 291—307։

16 «Մուրճ», 1894, № 5, էջ 802։

նուիրյունների, անձնական վիրավորանքների մի այնպիսի կուտակումով, որի բացիլը ոչ միայն դժվար է, այլև ավելորդ։ Ավելորդ չէ, սակայն, անդրադառնալ այդ բանակռվի վերաբերյալ ժամանակակիցների կարծիքին։ Աշոտ Աթանասյանն իր հուշագրություններում հանգամանորեն անդրադառնում է «Մուրճ»—«Մշակ» փոխհարաբերությանը։ Նա բացատրում է, որ Հանձին «Մուրճ» ամսագրի, Գր. Արծրունին տեսավ «Մշակին» լուրջ հակառակորդին և իր թերթի էջերից ֆելիետոններով սկսեց հարվածել նորընծա ամսագրի խմբագրին՝ Ա. Արասխանյանին։ Սակայն, չնայած դրան, հայ հասարակությունը և հատկապես հայ երիտասարդությունը ոչ միայն չհեռացավ ամսագրից, այլ ընդհակառակը, ավելի կապվեց նրա հետ։ Ավելին, հիշում է Աթանասյանը, երբ Արծրունու մահից հետո ռուսահայ արմատական երիտասարդությունը փնտրում էր, թե ո՞վ պետք է այսուհետև նրան փոխարինի հրապարակախոսության մեջ, շատերի հայացքները կանգ էին առնում Արասխանյանի վրա։ Ինչ վերաբերում է Արասխանյանին, ապա նա դժգոհ էր ոչ միայն ետարծրունյան, այլև Արծրունու վերջին տարիների խմբագրած «Մշակից» և ուզում էր «Մուրճը» շարունակել հենց այն կետից, որտեղ «կիսատ էր մնացել» «Մշակը»։ Բանակռվային պայքարում Արասխանյանը դրսևորում էր այնպիսի անաչառություն, շիտակություն, ուղղամտություն ու ազնվություն, որ ակամա հարգանք էր ծնեցնում ոչ միայն ծանոթների ու ընթերցողների, այլև հակառակորդների մեջ։ Եթե այս հատկությունները «Մուրճի» խմբագրի բարոյական նկարագրի հիմնական գծերն էին, ապա դրանցից գաղափարական պայքարի ընթացքում հաճախ էին երես դարձընում մշակականները։ Անազնիվ զենքերով ու ծուռումուռ միջոցներով տարած պայքարը անբարոյականացնում է հասարակությունը, կեղծիք մտցնում մեր սուրբ գործի մեջ,— ասում էր Արասխանյանը,— սուրբ գործ համարելով հրապարակախոսությունը, մամուլը, գրականությունը։ Բանակռվել միայն գաղափարական հողի վրա,— այս էր «Մուրճի» խմբագրի սկզբունքը, և այդ ոգով էր նա ուզում դաստիարակել թե՛ իր աշխատակիցներին և թե՛ ընթերցողներին[17]։ Աշոտ Աթանասյանի գծած գրական դիմանկարը ճիշտ և հարազատորեն է վերարտադրում բնորդին։

Իր արդարությանը վստահ՝ Արասխանյանը շարունակում էր գործը։ Նրա քաղաքացիական բարձր նկարագիրն է հաստատում այն փաստը, որ

---

17 Տե՛ս ԳԱԹ, Ա. Աթանասյանի ֆ. գ. 61 բ, էջ 3, 7, 24, 25, 38, 39, գ. 61 գ, դ, էջ 2, 3։

երբ Արծրունին մահացավ, ամենահուղիչ մահախոսականը և բարձր գնահատանքի խոսքը հայ ականավոր գործչի շիրիմին արտասանեց Արասխանյանը։ Այս մասին են վկայում Լեոն՝ Գրիգոր Արծրունուն նվիրած իր գրքում[18], Աշոտ Աթանասյանը՝ իր հուշագրություններում[19]։

Արծրունու մահով, սակայն, չդադարեցին «Մշակի» էջերում Արասխանյանի և «Մուրճի» անվան հոլովումները, այլ միայն «ֆելիետոնի» բաժնից տեղափոխվեցին «ներքին տեսության» բաժին։ «Մուրճը» «միանգամայն անընդունակ» գտնելով իբրև գրական-քաղաքական ամսագիր, «Մշակը» մերժում էր նրա բոլոր վաստակները, ծաղրի առարկա դարձնում ամսագրի բաժանորդների թիվը, որ չէր անցնում 450-ից (տպաքանակը տատանվել է 400—800-ի միջև), խմբագրին «մեծապատիվ մուրացկան» անվանում, երբ նա փորձում էր փոխառություն վերցնել ամսագրի համար։ Նույնիսկ Արշակ Զոպանյանը Փարիզից նկատում է և «Անահիտում» դատապարտում «Մուրճի» նկատմամբ «Մշակի» «սիստեմատիկական հակակրությունը», որը ամսագրի տարածմանը արգելը լինելու չափ առաջ էր գնացել։ Մի ներքին տեսություն էլ «Մշակը» նվիրում է «Անահիտի» էլույթին («Մշակ», 1899, № 74), հաճույքով միանալով «Մուրճի» մասին նրա դիտողություններին, բայց չհանդուրժելով ոչ մի դիտողություն «Մշակի» հասցեին։

«Մշակի» կիրքը չի հանդարտվում նաև այն ժամանակ, երբ պարտքերից ընկճված 1900 թ. № 6-ից Արասխանյանը դադարեցնում է «Մուրճի» հրատարակությունը։ «Ինչով բացատրել», «Մի՞թե պետք կա բացատրելու» վերնագրերով հոդվածներում («Մշակ», 1900, № 221, 224) «Մշակը» նորից ծաղրելով «Մուրճի» բաժանորդների սակավությունը և անվանարկելով Արասխանյանին, անսքող հրճվանքով գրում է՝ «Մուրճը» դիակ է եղել», «Այդ մահը բնական էր...»։ Մամուլի բարքերի ընկածության մի այնպիսի դրսևորում էր «Մշակի» էլույթը, որ չէր կարող զայրույթ ու վրդովմունք չառաջացնել հայ առաջադեմ մտավորականության շրջանում։ Եվ առաջինը հնչում է Ստեփան Շահումյանի բողոքի ձայնը։

Երիտասարդ Ստ. Շահումյանը «Մուրճի» մշտական ընթերցողներից էր։ Այդ մասին են վկայում Ռիգայից հարազատներին գրած նրա նամակները, որտեղ նա հորդորում է կարդալ «Մուրճ» ամսագիրը, հատկապես՝

---

18 Տե՛ս «Մուրճ», 1892, № 12, էջ 1864, տե՛ս նաև Լեո, Գր. Արծրունի, մաս 3, էջ 477, 483։

19 Տե՛ս ԳԱԹ, Ա. Աթանասյանի ֆ., գ. 61 բ, էջ 7։

Լևոն Մանվելյանի «Խորտակված կյանք» վեպը, Աղայանի «Ժամանակակից առեղնախոսությունը», խնդրելով վերջինիս հայտնած մտքերը համեմատել իր մտքերի հետ, ինչպես նաև Ադարիա Ադելյանի «Դառն խոստովանանք» պատմվածքը, ավելացնելով, որ «Նրա հեղինակն այստեղի ուսանող է և իմ սիրելի ու պատվելի բարեկամը»[20]: Ահա, այդ սիրելի և պատվելի բարեկամի միջոցով, որ «Մուրճի» մշտական աշխատակիցն էր, Շահումյանն ավելի մոտիկից է ծանոթանում «Մուրճի» առջև ծառացած դժվարություններին: Թե «Մուրճի» ճակատագիրը որքան է հուզել Շահումյանին, կարելի է եզրակացնել հենց այն փաստից, որ առաջինը նա դրիչ վերցրեց իր ուսանող ընկերների հետ հրապարակավ պաշտպանության տակ առնելու Արասխանյանին և «Մուրճին» «Մշակի» հարձակումներից ու հանիրավի մեղադրանքներից: «Տարազի» 1900 թ. դեկտեմբերի 24-ի համարում լույս է տեսնում մի անստորագիր բողոքնամակ՝ Ռիգայի ուսանողության անունից: Նամակի հեղինակը Ստեփան Շահումյանն էր[21]: Այս հոդվածը ուշագրավ է ոչ միայն նրանով, որ Շահումյանի առաջին տպագիր ելույթն էր. սա հայ մամուլի պատմության հետաքրքիր փաստաթղթերից է, որ գալիս է ցույց տալու, թե ինչպես էր նայում հասարակական խնդիրներին, մամուլի կոչմանն ու դերին, գրական բարքերին «նոր աշխարհայացքով զինված, ռուսաց նորագույն հեղափոխական ավազանում մկրտված մեր ուսանող երիտասարդությունը»[22]: «Մենք հաճախ սրտի ցավով,— կարդում ենք բողոք-նամակում,— կանգ ենք առել մեր հասարակության կյանքի տխուր երևույթների վրա և աշխատել ենք պարզել մեզ համար նրանց պատճառները: Այդ տխուր երևույթների կարգին է պատկանում մեր մամուլի և տպագրական գործի անմխիթար վիճակը և մասնավորապես «Մուրճ» ամսագրի նյութական անապահովությունն իր գոյության ընթացքում»: Շահումյանը զայրույթով դատապարտում է «Մշակի» բռնած դիրքը «Մուրճի» նկատմամբ, կրքից բխած անվանարկություն դիտում թերթում տպագրված «Մի՞թե պետք կա բացատրելու» հոդվածը: «Մշակի» անկզբունք դիրքը Շահումյանը մերկացնում է թերթի հենց նույն համարում տպագրված մի այլ հոդվածի միջոցով, որտեղ «Մշակի» բաժա-

---

20 Ստ. Շահումյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 240:

21 «Տարազի» 1900 թ. № 50-ում տպագրված Շահումյանի այս անստորագիր հոդվածի հեղինակային պատկանելությունը հայտնաբերեց Գուրգեն Հովնանը. տե՛ս «Գրական թերթ», 1954, № 24:

22 Ստ. Շահումյան, նշվ. հ. 1, էջ 25:

նորդների ցածր թիվը, որ չէր անցնում 3000-ից, դիտվում է իբրև «հասարակական անտարբերության» արդասիք: «Բայց Ինչու, երբ հարցը գալիս է «Մուրճին»,— հարցնում է Շահումյանը,— հասարակությունը շատ ուշադիր է դառնում և առհասարակ բոլոր պայմանները փոխվում են և ամսագրի անհաջողության «ամբողջ մեղքը» բացատրվում է նրա «վարողի ծայրահեղ անշնորհիմությամբ և անազնվությամբ»: ...Ասել, թե «Մուրճը» «փայլում էր դատարկությամբ», դա նշանակում է ցեխ շպրտել գրական համեստ ու անխոնջ գործիչների մի խմբի երեսին և վիրավորել նրանց ամենանվիրական զգացմունքները: «Մուրճը» գրականության անկեղծ և անաչառ բարեկամների համար... միշտ հետաքրքիր է եղել իր բովանդակությամբ և մանավանդ՝ ամբողջ հայ ընթերցող հասարակության կողմից ճանաչված իր շիտակությամբ և աղնվությամբ»[23]: Շահումյանը Թիֆլիսի հայ ուսանողության անունից բողոքում և դատապարտում է մամուլի կոչմանն արատ բերող և նրա բարքերի անկմանը նպաստող «Մշակի» արարքը, պաշտպան կանգնում ճշմարիտ և աղնիվ մամուլին:

Շատ չանցած Շահումյանը նորից է հանդես գալիս մշակականների դեմ, այս անգամ իր հրապարակային ելույթում՝ Ղազարոս Աղայանի 40-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված ժողովում: Շահումյանը ծաղրում է հայկական նորօրյա լիբերալիզմը, ցույց տալիս ամենահավակնոտ, ամենից շատ իրենց կուսակցության մասին ճառող մշակականների գաղափարական ամբողջ սնանկությունը, վախկոտությունը, պսակազերծ է անում «ազատամիտներ» կոչվելու նրանց հավակնոտությունը. «Մի անպատվեք, խնդրեմ, ոուս ազատամիտների սրբազան հիշատակը. մի համարձակվեք նույնիսկ Նալբանդյանի ու Արծրունու հաջորդներ անվանել ձեզ: Եթե նրանք այժմ կենդանի լինեին, ամենավատ դեպքում կկոտրեին իրանց գրիչները և չէին համաձայնվի երբեք ձեզ նման գրողներ լինել»[24]:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ նույն ժամանակ «Մշակի» դեմ հոդված է գրում նաև Ազարիա Ադելյանը: «Գրական փաշայություն» խոսուն վերնագիրը կրող այդ հոդվածը[25], որ համակված է նույն աղնիվ զայրույթով և հայ մամուլում տիրող անառողջ բարքերի նկատ-

---

23 Նույն տեղում, էջ 417—418:

24 Նույն տեղում, էջ 32:

25 «Գրական փաշայություն» հոդվածը ձեռագիր վիճակում պահպանվում է ԳԱԹ-ում, Ա. Ադելյանի ֆ., գ. 7:

մամբ նույն մտահոգությամբ, ինչ Շահումյանի վերոհիշյալ նամակ-բողոքը, ցավոք չտպագրվեց։ Բայց քանի որ այն Շահումյանի և Ադելյանի համատեղ մտորումների արդյունք է և նույնպես անցյալի մամուլի պատմության վրա լույս սփռող հետաքրքիր փաստաթուղթ, ուստի հարկ ենք համարում ծանոթացնել նրա բովանդակությանը։ Ադելյանը մերկացնում է այն ահավոր դիմափոխությունը, որին ենթարկվեց «Մշակ» թերթը Արծրունուց հետո։ Նա հանցանք է համարում լռելը, չկռվելը այն չարաղետ վիճակի դեմ, որ առաջանում է «Մշակ» թերթի «գրական փաշայության» հետևանքով, երբ տեսորի է ենթարկվում գրական ազատ միտքը. «Յուրաքանչյուր գրող «Մշակի» ծափով պիտի պար գա, և վա՛յ այն գրողին, ով հակառակը վարվե»։ «Մշակի» կաստայական շահերը զոհ բերելով գրական շահերին, բացատրում է Ադելյանը, այն իրենից վանեց շատ ու շատ ուժեր։ Անսահման մեծամտությունն ու ինքնահավանությունը հասցրին նրան, որ հայ գրական ուժերի մեծագույն մասը հեռացավ «Մշակից», ուժեր, որոնց հետ նա խոսում է «ինչպես բուրժուան բանվորի հետ»։ Կարծենք այդ լրագիրը մի պատուհաս է, որ եկել է այրելու մեր ինքնուրույն գրականության նորածիլ մարգերը»,— հետևանքը պատկերի ղորությամբ տեսանելի է դարձնում հայ դեմոկրատ գրողը։ Ամբողջ հարցն այն էր, որ փոխանակ ժառանգելու և շարունակելու արծրունյան լավագույն ավանդները, նոր մշակականները, հոդվածագրի կարծիքով, ժառանգեցին Արծրունու թերությունները։

«Մշակի» «գրական փաշայությունը» հաստատելու համար Ադելյանը օրինակ է բերում նրա վերաբերմունքը դեպի «Մուրճ» ամսագիրը, որն իր գոյության ամբողջ ընթացքում սիստեմատիկ հալածանքի ենթարկվեց «Մշակի» կողմից։ Փոխանակ խորանալու միակ ամսագրի բաժանորդների քչության բուն պատճառների մեջ՝ «ինչպես օրինակ մեր հասարակության սառցային անտարբերությունը», «Մշակը» այդ «բացատրում էր» ամսագրի խմբագրի անձնական հատկություններով, նրան վերագրելով թերություններ, որոնցից նա միանգամայն զերծ էր։ «Հասարակական կամ գրական խոշոր երևույթի, ինչպես՝ և ամեն մի հարցի անաչառ, ճշգրիտ, օբյեկտիվ ուսումնասիրությունը մամուլի բարոյական պարտականությունն է— այսպես է հասկանում Ռիգայի հայ ուսանողությունը մամուլի կոչումը»,— գրում է Ադելյանը, վկայակոչելով «Տարազում» տպագրված բողոք-նամակը։ Ադելյանին գրած իր մի նամակում Շահումյանը պատմում է, թե ինչպես գնացել է նոր «Մուրճի» խմբագրություն և ետ վերցրել նրա մերժված հոդվածը։ Նամակի բովանդակու-

բյունից երևում է, որ խոսքը «Գրական փաշայությունն» հոդվածի մասին է[26]։ Ինչպես տեսնում ենք, Շահումյանն ու Ադելյանը միասին պաշտպան են կանգնում «Մուրճի» դատին, թեև կյանքի դաժան դատավճիռն արդեն կայացված էր, և Արասխանյանն առաջին զրկվել էր «Մուրճից»։

1900 թ. կեսերին Արասխանյանը պարտքերի տոկոսումով «Մուրճի» հրատարակության իրավունքը վաճառում է Կոնստանդին Կրասիլնիկյանին։ «Մուրճից» զրկվելը Արասխանյանի համար բարոյական մեծ հարված էր։ Կարելի է ուղղակի ասել, որ «Մուրճը» կորցնելով նա այլևս չի գտնում նաև իր տեղը հայ հասարակական կյանքում։ Նրա հասարակական գործունեության պարագիծը թեքվում է դեպի ցած։ Նա, որ իր կյանքը չէր պատկերացնում առանց «Մուրճի», այժմ ստիպված պետք է լիներ հրապարակախոսի ամբիոն փնտրել այս ու այն օրգանում։ Չի իրականանում «Մամուլ» հրատարակչական ընկերություն ստեղծելու նրա մտադրությունը[27]։ 1901 թ. սկզբին Արասխանյանը դիմում է մամուլի գործերի գլխավոր վարչությանը, խնդրելով թույլ տալ իրեն «Գիտակցություն» անունով թերթ հրատարակել[28]։ Չի իրականանում գիտական թեքումով պարբերական օրգան հրատարակելու նրա երազանքը ևս, և Արասխանյանը միառժամանակ նվիրվում է կաբինետային գիտական աշխատանքի, առաջ տանելով «Հայկական հանրագիտարանի» գործը, որին նա ձեռնարկել էր դեռ «Մուրճից» էլ առաջ։ 1898 թ. Արասխանյանը «Մուրճի» ընթերցողներին ծանոթացնում է հայկական հանրագիտարան ստեղծելու իր ծրագրերին, նպատակ ունենալով հասարակական շահագրգռություն առաջացնել մի գործի նկատմամբ, որը անհրաժեշտ է «նշանավոր գործ է նաև գրական ու գիտական առաջադիմության համար, որպես և ղորավոր գործոն է լուսավորություն տարածելու համար ամեն տեսակետից»։ Իրավացի էր Արասխանյանը, գտնելով, որ հանրագիտարան պատրաստելու համար մի մարդու ուժը բավական չէր, որ «այսպիսի գործի վրա պետք է աշխատեր կարող գրիչների մի մեծ խումբ, մի ընդհանուր ղեկավարությամբ մի քանի տարի»[29]։ Բայց Արաս-

---

26 Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 182—185։ Գրքի ծանոթագրությունների մեջ (էջ 307) սխալ է նշված Շահումյանի այս նամակը գրելու տարեթիվը՝ 1898—1899։ Ինչպես Ադելյանի «Գրական փաշայության» հոդվածը, այնպես էլ Շահումյանի նամակը գրվել են նոր «Մուրճը» լույս տեսնելուց հետո, այսինքն 1901 թվականից ոչ շուտ։

27 ԳԱՔ, «Մուրճի» ֆ., գ. 42/V։

28 Տե՛ս ԳԱՔ, «Մուրճի» ֆ., գ. 16/V։

29 «Մուրճ», 1898, № 12, էջ 1797—1798։

խանյանը միայնակ առաջ է տանում գործը, հանրագիտարանը հասցնելով հինգ խոշոր ձեռագիր հատորների, որոնց ևս, ավա՜ղ, վիճակված չէր լույս աշխարհ գալու։ Նրանք այսօր հանգչում են գրականության և արվեստի թանգարանում, իրենց մեջ անթեղած ժողովրդին լուսավորելու հեղինակի երազանքները։

1905—1907 թթ. հեղափոխությունը, որը շարժման մեջ դրեց հասարակական բոլոր ուժերը, քաղաքական իսկական մկրտության ավազան դարձավ տարբեր գործիչների համար, երևակելով նրանց իսկական դեմքը, պարզելով քաղաքական կուսակցությունների ծրագրերի իրական արժեքը։

Որտե՞ղ հանդիպեց հեղափոխությունը Արասխանյանին, ինչպե՞ս բռնեց նա պատմության այդ մեծ դասի մեջ իր քննությունը։ 1905 թ. սկզբներին Արասխանյանը Գ. Մելիք-Կարագյոզյանի «Արշալույս» օրաթերթում սկսել էր հրապարակել «Հայրենական խոհեր» վերնագրով հոդվածաշարը, որը գրելու առիթ էին ծառայել ցարիզմի հրահրած հայ-ադրբեջանական կոտորածները։ Այդ ժամանակ Արասխանյանն ընտրվում է Թիֆլիսի կենտրոնական նպաստամատույց հանձնաժողովի անդամ և ակտիվ գործունեություն ծավալում տուժածներին օգնելու ուղղությամբ։ Իր ծանր մտորումներն էլ Արասխանյանը թղթին է հանձնում իբրև «Հայրենական խոհեր»։

Հրապարակախոսը տագնապով է նայում իր ժողովրդի ապագային, որը պատմության դաժան հողմից ցիրուցան էր եղել աշխարհով մեկ։ Անգամ Անդրկովկասում «բոլոր խոշոր ազգերից,— գրում է Արասխանյանը,— հայկականը այն է, որի գոյությունը ամենաանպաստ պայմանների մեջ է, նրա շահերը ավելի դժվար պաշտպանելի և որի ապագան ամենավտանգվածն է»[30]։ Արասխանյանի մեջ խոսում էր ազգային գաղափարախոսը, որը տեղական նացիոնալիզմը հակադրում է ոչ միայն Անդրկովկասում «ծաղկող» տարազգի նացիոնալիզմին, այլև մեծապետական շովինիզմին. «Հայրենիք» հասկացությունը, բացատրում է Արասխանյանը, ենթադրում է որոշ երկիր, իսկ հայերը «երևակայել են, թե հնարավոր է հայրենիքը փոխարինել գաղութներով, ամեն մի գաղութ մի-մի հայրենիք համարել և ապահովել ազգությունը գաղութներում՝ առանց սերտ կապի հայրենիքի հետ»[31]։ Արասխանյանը գրիչ էր վերցրել

30 «Արշալույս», 1905, № 36։

31 Նույն տեղում։

այս մտայնության վտանգավորությունը ցույց տալու համար։ Սակայն քաղաքական դեպքերը եկան ավելի կարևոր հարցեր դնելու օրակարգի մեջ, և Արասխանյանն ընդհատեց իր խոհերը, արձագանքելու հեղափոխական իրադարձություններին։ «Արշալույս» թերթում, որի խմբագրական կոլեգիայի անդամ էր, նա հանդես է գալիս մի քանի առաջնորդող հոդվածներով, որոնք վկայում են, որ նա ապրում էր հասարակական ակտիվ կյանքով, ուշադիր հետևում քաղաքական պայքարին։ Այդ հոդվածները միաժամանակ հստակորեն ցուցադրում են նրա վերաբերմունքը դեպի հեղափոխությունը և ապացույցներ բերում Արասխանյանի մշտապես ձախացող, դեմոկրատական երանգ ընդունող հայացքներին։

Անշուշտ, Արասխանյանը չէր կարող հասնել բուրժուադեմոկրատական հեղափոխության մեջ բանվոր դասակարգի հեգեմոնիայի անհրաժեշտության ըմբռնմանը, բայց հետաքրքիրն այն է, որ նա այդպիսի դեր չի հատկացնում նաև բուրժուազիային, ինչպես դա անում էին իրենց սոցիալ-դեմոկրատ համարող մենշևիկները։

Հայտնի է, որ հեղափոխությունից վախեցած ցարիզմը «լիբերալ գարնան» միկրոկլիմա էր ստեղծել, հնարավորություն տալով բուրժուազիային մամուլում և զանազան համագումարներում ու ժողովներում խոսքի տեղատարափ անձրևով պարպելու ընդդիմադրության իր ողջ պաշարը։ Հանձին դեմեցների և քաղաքային ինքնավարության ներկայացուցիչների մոսկովյան համագումարի, Արասխանյանը ծաղրում է բուրժուազիայի հավակնոտությունը՝ իրեն հեղափոխության «տերն ու տիրականը» կարծելու։ «Այդպե՞ս է արդյոք իրականությունը։— Հարցնում է Արասխանյանը և պատասխանում։— Ներկայիս հեղափոխությունը ոչ մի դասակարգի գործը չէ առանձին-առանձին վերցրած։ Այժմյան հեղափոխական շարժումը մի գործակցություն է ինտելիգենցիայի, բուրժուազիայի, պրոլետարիատի և գյուղացիության»[32]։ Այս տողերից պարզորոշ երևում է, որ Արասխանյանը դասակարգային մոտեցում հանդես չի բերում դեպի հեղափոխությունը, նրա շարժիչ ուժերը, այլ այն դիտում է որպես լոկ «համաժողովրդական» շարժում։ Բայց ուշագրավն այն է, որ այդ հեղափոխության մեջ նա ամենից շատ դժգոհ է բուրժուազիայի, նրա կուսակցությունների վարքագծից։ 1789 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը իդեալ դիտող մարդու համար, անշուշտ, տարօրինակ

32 «Արշալույս», 1905, № 58։

պիտի թվար ռուսական հեղափոխության մեջ բուրժուազիայի անհետևողական, կիսատ-պռատ, վախկոտ գործելակերպը։ Արասխանյանը վախ է հայտնում բուրժուազիայի կամակատար համագումարի գործունեության մասին, որը «գիտակցաբար կամ անգիտակցաբար պիտի հասնի դաշնակցության ռեակցիայի հետ»[33]։ Թեև Արասխանյանը հեղափոխության հաղթանակը չի պայմանավորում շարժման մեջ պրոլետարիատի հեգեմոն դերով, բայց ընդգծում է հեղափոխության մեջ բանվորության մասնակցության անհրաժեշտությունը, «առանց որի գործակցության ներկայիս շարժումները անիրեւակայելի կլինեին»[34]։

Հեղափոխական մոմենտի հերթական խնդիրը Սահմանադիր ժողովի գումարման հարցն էր, որի առթիվ ցարական կառավարությունը պահմըտոցի էր խաղում բուրժուազիայի հետ՝ հրապարակ հանելով Բուլիգինյան դուման, որպես սոսկ ցարին առընթեր խորհրդակցական օրգան։ Արասխանյանը պատրանքներ չունեցավ Սահմանադիր ժողովի հարցում։ Մինչդեռ մենշևիկները ողջունում էին դուման որպես... շրջադարձային կետ ազատագրական շարժման մեջ. Արասխանյանը «խորին զարմանք» էր հայտնում դուման «սահմանադիր» կոչելու առթիվ և նշում, որ դա «խեղաթյուրումն է սահմանադրող խոսքի նշանակության, որովհետև սահմանադրող կարող է լինել միայն կատարելապես իսկական ժողով և ոչ թե այնպիսի մի դումա, որը միայն մասնակցում է սահմանադրության մշակմանը, բայց որը ինքը չի հաստատում ու հայտարարում սահմանադրությունը»[35]։

Ավելի քան հետաքրքիր ու պերճախոս է Արասխանյանի վերաբերմունքը դեպի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, այդ թղթի «սահմանադրություն», որը կեղծ խոստումներ հռչակեց խոսքի, ժողովների, ընկերություններ ու միություններ կազմակերպելու ազատության, անձի անձեռնմխելիության, օրենսդրական ֆունկցիաներ ունեցող պետական դուման՝ «Ռուսաստանյան պառլամենտ» ստեղծելու մասին։ Բուրժուազիան ուրախությամբ ընդունեց ցարի ողորմությունը։ Արասխանյանը շատ ուշագրավ դուգահեռ է անցկացնում հոկտեմբերի 17-ի մանիֆեստի և 1861 թ. ցարական ռեֆորմների միջև, որից երևում է համառուսաստանյան քաղաքական գործադուլի ճնշմամբ ցարի «վերևից» արած «զիջումի»

---

33 Նույն տեղում։
34 Նույն տեղում։
35 Նույն տեղում։

իրական արժեքը. «Հեղափոխությունը Ռուսաստանում նույնքան ուշ է հասնում,— ասում է Արասխանյանը,— որքան ուշ էր հասել ճորտերի ազատագրության տարին: Եվ ոչ միայն այդքան: Ճորտերի ազատագրությունը վատ կատարվեց Ռուսիայում, շնորհիվ ռեակցիայի ուժին: Ջեմստվային և քաղաքային ինքնավարությունները ոչ միայն չկարողացան զարգանալ, այլ տարիները իրար հաջորդեցին միմիայն այդ ինքնավարությունները ավելի ու ավելի ամուր խեղդելու համար: Եվ այդ բոլորը— շնորհիվ հավատարմագրոր ընդդիմադրության պակասության:

Այդ ինքնավարությունների ճակատագիրը կատարելապես բավական է նախատեսնել տալու, թե ինչ է սպասում հոկտեմբերի 17-ի մանիֆեստին: Ռեակցիան, որը իր գործելու կատարելագործված, փորձված եղանակներն ունի, այդ ռեակցիան, որի գործելու մեթոդները նույնքան ուսումնասիրված են որպես դիտության այս ու այն ճյուղը, այդ ռեակցիան, որը վաղուց արդեն սովոր է մի ձեռքով այն խլելու, ինչ նա մյուս ձեռքով է տվել, այդ ռեակցիան անհուն չափով ավելի զորեղապես կմարանչի չեզոքացնելու ներկայիս քաղաքական ազատագրության հրովարտակների ուժը: Այդ չպետք է մոռանալ. չպետք է օրորվել սին հույսերով, թե առանց պատշաճ ընդդիմադրության պատրաստությունների կարելի կլինի հուսալ իսկական քաղաքական ազատագրություն վայելելու: Առանց այդ պայմանի— Ռուսիայի պառլամենտարիզմին սպասում է ավելի վատ վիճակ, քան ինչ վիճակի արժանացան 60-ական թվականների ռեֆորմները»[36]:

Ահա ինչպիսի էվոլյուցիա էր ապրել Արասխանյանի աշխարհայացքը, այն Արասխանյանի, որը քիչ սին հույսերով չէր օրորել «Մուրճի» ընթերցողներին «բարի» ցարի կամքով թելադրված ռեֆորմների վերաբերյալ: Իղուր չէր ասում Վ. Ի. Լենինը, որ հեղափոխությունը սովորեցնում է այնպիսի արագությամբ ու այնպիսի հիմնավորությամբ, որոնք քաղաքական զարգացման խաղաղ դարաշրջաններում անհավատալի են թվում: Եթե ոչ հիմնավորապես, ապա շատ բան էր սովորեցրել հեղափոխությունը նաև Արասխանյանին:

Արասխանյանի առաջնորդողներից մեկը ամբողջովին նվիրված է լիբերալ-միապետական բուրժուազիայի առաջատար կուսակցությանը, որը կոչվեց Սահմանադրական-դեմոկրատական: Հավակնելով «ժողովրդական ազատության կուսակցություն» համարվելու, այն իրականում

36 «Արշալույս», 1905, № 57:

ձգտում էր գործարքի ռեակցիայի հետ՝ հեղափոխության համար արյուն թափող ժողովրդի թիկունքում: Ահա «բուրժուա և կալվածատեր ինտելիգենցիայից» կազմված այդ կուսակցությունը, ըստ Արասխանյանի, չի բավարարում «կուվի պահանջներին»: «Այնպես, ինչպես մինչև այժմ այդ կուսակցությունը շարժվել է, նա ավելի կառավարության խորհրդատուի պաշտոնի կոչումն է ստանձնել... նորան կմնա մի տխուր կոչում— ռեակցիային հարել»[37]: Բուրժուազիան և նրա կուսակցությունը չեն գործում հեղափոխական մոմենտի պահանջներին համապատասխան, իսկ նա ով հանդես չի գա իբրև հեղափոխական ուժ, կհարի ռեակցիային. Արասխանյանը այս բանաձևով կանխագուշակում է ռուսական բուրժուազիայի և նրա կուսակցության քաղաքական դիմափոխությունը, մեր առջև պարզելով իր հեռահայաց մտածելակերպը, որը նրան շատ անգամ է մոտեցնում ճշմարտության եզրին:

Հատկանշական է, որ այն ժամանակ, երբ Ալ. Քալանթարը, Հ. Առաքելյանը և մշակականների մի ստվար մասը դարձան կադետներ, Ավետիք Արասխանյանը հանդես էր գալիս այդ կուսակցության քննադատությամբ:

Չկարողանալով լիովին ազատագրվել լիբերալ-ռեֆորմիզմի նախկին բեռից և սոցիալ-քաղաքական հարցերի նկատմամբ չհատնելով դասակարգային մոտեցման, Արասխանյանը չի կարողանում իր ճիշտ կռահումները դարձնել գիտական եզրահանգումներ: Բայց որ դաբասկղբին բանվորական շարժման հզորացման և ապա ծավալվող հեղափոխության ազդեցության տակ նրա հայացքների մեջ զգալի բեկում էր կատարվել, դա անուրանալի է: Այդ մասին են վկայում նաև այլ փաստեր: Աշոտ Աթանասյանը իր հուշագրություններում վկայում է Արասխանյանի շարունակ աճող հետաքրքրության մասին դեպի մարքսիզմը: Խոսելով Եվրոպայում Արասխանյանի կրած գաղափարական ազդեցությունների մասին, Աթանասյանը չափազանց հետաքրքիր փաստ է հաղորդում. «Ինչպես պատմում էր նա, հետագայում քայլ առ քայլ անցավ Մարքսի և Էնգելսի շկոլային մինչ այն աստիճան, որ 1884—1885 թվերին, երբ նա հայրենիք էր վերադարձել, գտնվում էր Էնգելսի հետ գրագրության մեջ, որի՝ նրան գրած նամակներից 4—5 հատը ես իմ աչքով տեսել եմ Արասխանյանի թղթերի մեջ»[38]: Երբ խոսք

---

37 «Արշալույս», 1905, № 61:

38 ԳԱԲ, Ա. Աթանասյանի ֆ., գ. 61 գ, դ, էջ 1: Աթանասյանը վկայում է, որ Արասխանյանի բազմաթիվ արժեքավոր թղթեր, այդ թվում և Էնգելսի նամակները, 1921 թ. այրվել են:

է բացվում առաջատար ուսմունքների մասին, Արասխանյանը դարձյալ հիշատակում է Մարքսին ու Էնգելսին, շեշտելով, որ Մարքսը մեռել է, բայց ո՛չ մարքսիզմը, որ այն օր օրի բոյ է քշում, ամրանում[39]:

Դեպի մարքսիզմը Արասխանյանի հետաքրքրության աճման մասին է վկայում նաև այն ուշագրավ իրողությունը, որ հեղափոխության տարիներին նա ձեռնամուխ է լինում Կ. Մարքսի «Կապիտալի» թարգմանությանը, իր այս ձեռնարկումը բացատրելով հետևյալ խոսքերով. «ԵՒռանց Մարքսի այժմ և սրանից հետո անկարելի է ոչ հիմնավոր հեղափոխություն առաջ բերել և ոչ էլ այն հասկանալ»: Պատասխանելով իրեն հեգնող դաշնակցականներին, Արասխանյանը սրամիտ նետում է. «Կարդացեք Մարքս: Մարքս կարդացեք և հավատացած եմ, որ ձեր գործած հիմարությունները կկրճատեք: Կկրճատեք եմ ասում, որովհետև դուք անկարող եք նրանցից ազատվել»[40]:

Բազմաթիվ ու ծավալուն ծանոթագրություններով, Մարքսի ու Էնգելսի չորս առաջաբաններով Արասխանյանը տպագրության է պատրաստում առաջին հատորը: Մամուլում հրապարակվում է բաժանորդագրության հրավերը, բայց ինչ-ինչ պատճառներով հնարավոր չի լինում իրականացնել «Կապիտալի» հայերեն առաջին թարգմանության տպագրությունը: Պահպանվել է Արասխանյանի գրած մի անհատցե նամակի սևագիր օրինակը, որտեղ նա գանգատվում է «Կապիտալի» տպագրության հետ կապված դժվարություններից, երբ հրատարակիչը նման գրքի տպագրումը «շռայլություն» է դիտում, իսկ Մոսկվայում և Պետերբուրգում ոչ մի աջակցություն չի գտնում: Հետաքրքրություն են առաջացնում նամակի հատկապես հետևյալ տողերը. «Ինչ վերաբերում է բաժանորդագրության, ես ձեզ արդեն հայտնեցի, որ թույլ էր գնում քանի Թիֆլիս էի, հազիվ 30—40 օրինակ: Ընայած այդ ամենին, ես զգում եմ, որ երբ գիրքը սկսի պրակներով լույս տեսնել կամ ամբողջ առաջին հատորը տպագրվի՝ նա կունենա բազմաթիվ գնողներ, մանավանդ եթե չպակասի ինձ որոշ շրջանների ու կուսակցությունների աջակցությունը: Բայց և այնպես, ես ինքս ոչ միջոց ունեմ և ոչ կարող եմ վստահանալ առանց կանխորեն ապահովելու տպարանի գործը, տպագրությունը սկսել: Ուստի պարզ է, թե որքան մեծ կարևորություն ունի ինձ համար, որպես առհասարակ գործի հաջողության համար, Ձեր շրջանների վերաբեր-

39 Տե՛ս նույն տեղում, գ. 61 բ, էջ 17:

40 Նույն տեղում, էջ 55—56:

մունքը, դեպի Ձեր հարուցած խնդիրը»[41]։ Ելնելով այն փաստից, որ «Կապիտալի» հայերեն հրատարակության բաժանորդագրության հրավերը տպագրվում է նաև բոլշևիկյան «Նոր խոսք» թերթում (1906, № 12), որ լույս էր տեսնում Թիֆլիսում Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և Ս. Կասյանի խմբագրությամբ, կարելի է չկասկածել, որ հենց նրանց էլ ուղղված պետք է լինի այս նամակը, և որ նրանում նշված «որոշ շրջաններ» բառերը պետք է կարդալ ուղղակի «սոցիալ-դեմոկրատական շրջաններ», որոնց «հարուցած խնդիրն» էլ՝ «Կապիտալի» հայերեն թարգմանությունն իրականացնում էր Արասխանյանը, ցավոք, գործը չկարողանալով սպակել նաև գրքի հրատարակության իրականացմամբ[42]։

1909 թ. Արասխանյանը հրավեր է ստանում Մատթեոս կաթողիկոսից Գևորգյան ճեմարանում քաղաքատնտեսություն և ընդհանուր պատմություն դասավանդելու։ Արասխանյանն ընդունում է հրավերը, թողնում Թիֆլիսը, տեղափոխվում Էջմիածին։ Ճեմարանում նա միաժամանակ նշանակվում է կենտրոնական ուսումնական հանձնաժողովի քարտուղար։ Այստեղ Արասխանյանը փորձում է Երևանի նահանգապետից թույլտվություն ստանալ «Էջմիածնի Ազդարար» թերթ հրատարակելու համար[43], բայց ապարդյուն։ Ճեմարանում Արասխանյանը հազիվ մնում է երկու տարի, չկարողանալով հաշտվել էջմիածնական մթնոլորտի և դասավանդման հակապիտական դրվածքի հետ[44]։

Մի սևեռուն միտք, մի փափագելի իղձ հանգիստ չէր տալիս Արասխանյանին. Թիֆլիս գալով նա ձեռնամուխ է լինում դրա իրականացմանը։ Խոսքը «Մուրճ» ամսագիրը վերականգնելու մասին է։ Բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով, երբ նրա նախկին և ապագա խմբագիրն ապրուստի միջոցներ իսկ չուներ։ Չափից ավելի համարձակ չէ՞ր Արասխանյանի մտահղացումը՝ «Մուրճը» հրատարակել ամսագրի «նախանձախնդիրների ընկերության» միջոցով. դրամական միջոցները գոյանալու էին 25-ական ռուբլի փայավճարներից, և ամսագրի հրատարակությունը սկսվելու էր, երբ դրանց թիվը հասներ 100-ի[45]։ Արասխանյանը դիմում է «Մուրճի» նախկին աշխատակիցներին, թախանձում գորավիգ

41 ԳԱԹ, «Մուրճի» ֆ., դ. 59/IV։

42 Տե՛ս Ս. Ջուրաբյան, նշվ. աշխ., էջ 460, Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 233։

43 Տե՛ս ԳԱԹ, «Մուրճի» ֆ., դ. 28—29/V։

44 Տե՛ս Ավ. Արասխանյան, Ինքնակենսագրություն, էջ 8։

45 ԳԱԹ, «Մուրճի» ֆ., դ. 31/II։

լինել. նա լիահույս է, որ «շուտով «Մուրճի» շուրջը կհամախմբվի գրողների մի մեծ ու զորեղ բանակ»[46]: Բայց արդեն քանիերորդ անգամ խորտակվում են նրա ծրագրերը, նա չի գտնում սպասված աջակցությունը և ծայր աղքատության հասնելով, թողնում է Թիֆլիսը, տեղափոխվում Ախալքալաք՝ ստանձնելու տեղի Մեսրոպյան-Սանդխտյան դպրոցի տեսչի պաշտոնը: Կարճ ժամանակում նա վաստակում է աշակերտների, ուսուցչական կոլեկտիվի և քաղաքի ամբողջ հայ հասարակության սերն ու հարգանքը՝ դպրոցում մտցրած բարեփոխությունների, հաստատած կարգ ու կանոնի համար:

Բայց ճակատագիրը մինչև վերջ դաժան էր նրա նկատմամբ: 1912 թ. նոյեմբերին հիվանդանում է ներքին ականջի բորբոքումով և մահանում: Նրա աճյունը տեղափոխվում է Թիֆլիս՝ Խոջիվանքում, հայ ականավոր գործիչների ու գրողների կողքին թաղվելու համար: Բայց Արասխանյանի թաղումը սովորական հուղարկավորություն չէր, որտեղ մահախոսականներ են արտասանվում, մեծարվում հանգուցյալի արժանիքները, ծառայությունները: Արասխանյանի թաղման հանդիսությունն ավելի շուտ նման էր մի հասարակական դատավարության, որտեղ մեղադրվողի աթոռին էր նստեցված բուրժուական հասարակությունը, իսկ Արասխանյանը նկատվում էր որպես տիրող հայ իրականության զոհ: Բուրժուական հասարակությանն անարգանքի սյունին գամող ելույթ էր Ատրպետի «Ամենանվիրված գործիչը» վերնագրով հոդվածը, որ տպագրվեց «Տարազում» (1912, № 12): Հայ գրողը իրար կողքի է շարում ամոթալի փաստերը. այն մարդը, որին Բեռլինի համալսարանում ամբիոն էին առաջարկում, դուրս է նետվում հայկական թեմական դպրոցից: Այն մարդը, որը իր հիմնած «Մուրճով» հայ մամուլը եվրոպականի աստիճանին հասցրեց, ստիպված եղավ իր ձեռքով վաճառել իր պաշտած ու փայփայած զավակը: Այն մարդը, որ արյան վերջին կաթիլը, ուղեղի վերջին բջիջը չխնայեց հայության բարգավաճման համար, այնպես չեզոքացվեց, որ ի վերջո «հասարակության բարեկամը հերոսական կռվով ընկավ...»:

«Գրական նահատակ» է վերնագրում Արասխանյանի հիշատակին նվիրած իր երգը աշուղ Հազիրին: Նույն իրողությունն են հաստատում «Տարազի» գրական սալոնի՝ Արասխանյանին նվիրված երեկույթի մասնակիցներն իրենց ելույթներում՝ Ա. Քալանթարը, Ս. Թաուսյանը, Գր.

---

46 Նույն տեղում, գ. 5/IV:

Վարդանյանը, Մ. Նավասարդյանը և ուրիշներ։ Շաբաթաթերթի Արասխանյանին նվիրված համարում ընդարձակ հոդվածով հանդես է գալիս Լևոն Մանվելյանը, ըստ արժանվույն գնահատելով Արասխանյանի և «Մուրճի» դերը հայ հասարակական կյանքում։ Մանվելյանը բարձր է գնահատում հատկապես գրական մթնոլորտը մաքրելու «Մուրճի» ջանքերը, քանիցս հավաստում ամսագրի շիտակությունն ու մտքի մաքրությունը։ «Մուրճը» եկել էր շարունակելու այն առաջադիմական հոսանքը, որ սկսել էր «Հյուսիսափայլը» և շարունակում էր «Մշակը»,— ասում է Մանվելյանը և ավելացնում։— Մեր մտավոր վերածնությունից հետո հայկական միտքը անցել է երեք կուլտուրական շրջաններ։ Առաջինը ստեղծեց Ստ. Նազարյանն իր «Հյուսիսափայլով»։ Երկրորդ շրջանը՝ «Մշակը»։ Երրորդը սերտ կապված է «Մուրճի» հետ»[47]։

Հետաքրքիր է, իսկ ի՞նչ էր գրում քառասնամյա «Մշակը» «Մուրճի» նախկին խմբագրի մահվան առթիվ. «Այն հասարակական շարժումը, որը բուռն կերպով առաջ եկավ Ավետիք Արասխանյանի մահով, ցույց է տալիս, թե ինչ նշանավոր գործիչ է կորցնում հայ ժողովուրդը հանձին հանգուցյալի»։ «Մշակը» նշում է, որ «Մուրճը» մեր պարբերական մամուլի պատմության մեջ ստեղծեց մի «լուսափայլ շրջան»։ Իսկ Արասխանյանի մասին «Մշակը» գրում է. «Անկախ և ինքնուրույն մտածող՝ նա չէր հարում այս կամ այն կուսակցական հոսանքին, և թերևս դա էր պատճառներից մեկը, որ նա իր կյանքի վերջին ճգնաժամին չգտավ արժանավայել պաշտպանություն իր նույնիսկ համեստ դիմումների մեջ, որից հետո նա հոգեպես և նյութապես լքված և ետին թշվառության հասած հեռացավ այստեղից գավառ ուսուցչի համեստ պաշտոնով։ Դա է մեր կյանքի դառն իրականությունը, որը դժբախտաբար մենք չենք կարող քավել ոչ փառաշուք սգահանդեսներով և ոչ մեր ճառերով։ Արասխանյանի տարաժամ և ողբերգական մահը կմնա հայկական խղճի վրա իբրև մի անսրբելի սրատ»[48]։ Այսպիսի խոստովանություն էր ստիպված անել «Մշակը» Արասխանյանի անակնկալ մահով «հրավիրված» այն հասարակական դատարան-դահլիճում, որտեղ այլևս տարաձայնություններ չեղան «Մուրճի» և նրա խմբագրի գնահատության հարցում։

«Պատանի» ալմանախը արձանագրել է երիտասարդ սերնդի երախտագիտության խոսքը. «Նա յուր «մուրճերով» փարատեց այն թանձր խավարը, որ դարերի երկար ճանապարհով եկել պարուրել էր մեզ։ Նա

---

47 «Տարազ», 1912, № 12։

48 «Մշակ», 1912, № 275։

վերջին մահացու հարվածը հասցրեց Գր. Արծրունուց հետո, մեր կղերամիտ կուսակցության և Արծրունուց էլ առաջ գնաց յուր սկզբունքներով, տարածելով մեր մեջ ընկերավարական գաղափարներ։

«Մուրճ» ամսաթերթը, որ միակը եղավ (գոնե մինչև այժմ) յուր հարատևությամբ ու գործունեությամբ, հայ գրական հրապարակախոսական պատմության մեջ ունեցավ յուր ահագին կուլտուրական նշանակությունը։ Եթե հայոց գրականությունը գոյություն ունի, նրա ամենահիմնական այսունը «Մուրճն» է։ Եվ իրավ, ով ուզում է հայոց գրականությունը հիմնովին ու լիովին ուսումնասիրած լինի, նա անպայման ծանոթ պիտի լինի «Մուրճին»։... Մի խոսքով «Մուրճը» եղավ այն մեծ գրական—կուլտուրական գործոնը, որը մի քանի տասնյակ տարով հայ կյանքը կուլտուրապես առաջ ցատկեցրեց»[49]։

Կարելի էր շարունակել Արասխանյանի մասին մամուլի այլևայլ օրգանների, գործիչների կարծիքների մեջբերումը։ Բայց դրանք բոլորն էլ նույն ճշմարտությունն են հաստատում։ Կուզենայինք ավարտել դրանցից մեկով, որ պատկանում է Ա. Վրույրի գրչին. «Հոգով ողբալով այդ հազվագյուտ ազնվության տեր անձի ու գործչի անժամանակ կորուստը, չենք կարող չավելացնել, որ Ավետիք Արասխանյանցի գերեզմանը պիտի մնա իբրև մի անդրդվելի քարաժայռ-հուշարձան բողոքի, մեր այն հասարակական ազգային ախտի դեմ, որ իր գործիչներին տեսնելու համար միայն նրանց մահվանն է սպասում»[50]։ Դառը, բայց ճշմարիտ խոսքեր, որ կարելի է ասել անցյալի հայ շատ ու շատ գործիչների վերաբերյալ։

Երախտագետ սերունդները չեն մոռանում նրանց, ովքեր քայլել են ճշմարտության որոնման դժվարին ճանապարհով, և արժանին են հատուցում նրանց տքնության վաստակին։ Արասխանյանի կյանքն ու գործը ունեցավ ոչ թե մեկ, այլ բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնց հավաքական ջանքերով այսօր ամբողջանում է մեր մամուլի երախտավորներից մեկի դիմապատկերը։

Արասխանյանը եղավ XIX դարի երկրորդ կեսում աննախընթաց զարգացում ապրող հայ հրապարակախոսության նշանավոր դեմքերից մեկը՝ որպես վերընթաց շրջանի հայ բուրժուական լուսավորության գաղափարախոս, որի անունը կարելի է գրել Ստեփանոս Նազարյանի, Գրիգոր Արծրունու հետ մի շարքում։

---

49 «Պատանի», 1912, № 6։

50 «Հուշարար», 1912, գիրք Բ։

Արասխանյանի մնայուն կապիտալը հայ հասարակական մտքի պատմության մեջ նրա հիմնադրած «Մուրճ» ամսագիրն է։ Որդեգրելով հայ մամուլի, հատկապես «Հյուսիսափայլի» և «Մշակի» լավագույն ավանդույթները, «Մուրճը» ոչ միայն պահպանեց դրանք, այլև մեծ չափով զարգացրեց, ցույց տալով իսկապես քաղաքական, իսկապես հասարակական և իսկապես գրական ամսագրի հիանալի օրինակ։

Սկիզբ առնելով և սնվելով հայկական լիբերալիզմի ակունքներից, իր ընթացքի միջոցին «Մուրճը» ներառավ իր մեջ հայ դեմոկրատական մտայնության վտակներ, դառնալով դարավերջյան այն կենտրոնը, որի շուրջը համախմբվեցին առաջադեմ դեմոկրատ գրողներն ու հրապարակախոսները։ Հարցերի լայն ընդգրկումով, հետաքրքրությունների բազմազանությամբ, հեղինակային մեծ բանակով «Մուրճը» մի քայլ առաջ մղեց հայ մամուլը, մի նոր աստիճանի բարձրացրեց հայ ամսագրային կուլտուրան, ապահովելով իր համար ուրույն մի տեղ հայ ժուռնալիստիկայի պատմության մեջ։

«ՄՈՒՐՃ», ՆՈՐ ՇՐՋԱՆ (1901—1907)

Գլուխ առաջին

Նոր «Մուրճի» ծրագիրը և խմբագիրը: Ամսագրի քաղաքական դիմագիծը

1901 թվականի հունվարին, վեցամսյա ընդմիջումից հետո «Մուրճի» բաժանորդները ստացան ամսագրի նորատարյա համարը: Այն նոր շապիկ ուներ, նոր համարակալում, ավելի հաստափոր էր և ամսագրի տակ նոր խմբագրի ստորագրություն էր՝ Կ. Կրասիլնիկյան:

«Մուրճը» ընթերցողներին է ներկայանում նոր ծրագրով: XX դարի սկիզբն էր, և ամսագրի առաջին համարը բացող «Մեր ընթերցողներին» առաջնորդող հոդվածը ոչ միայն քննության է առնում ամսագրի ուղղությունը և ծրագիրը, այլև փորձում է կռահել մարդկության զարգացման ուղիները նոր դարաշրջանում, ինչով առհասարակ այդ օրերին զբաղված էր ամբողջ մամուլը: Այս առումով ամսագրի հենց առաջին համարը մեզ օգնում է պարզելու նոր «Մուրճի» քաղաքական հավատամքը, որը մենք հնարավորություն կունենանք խորությամբ և ըստ էության ուսումնասիրել նրա տարբեր բաժինների նյութերով:

Պատմությունը երկու ներհակ ուժերի՝ բարու և չարի, կատաղի կռիվ է. այս մեկնարկից է ելնում նոր «Մուրճը» հասարակական զարգացումը բացատրելիս և վերանալով կյանքի բազմազանությունից, այն հանգեցնում երկու հիմնական բևեռի՝ «լույսի և խավարի կամ առաջադիմության և ետադիմության» պայքարի[1]: «Մուրճը» գրում է. «բնությունը մարդուն տվել է մի այնպիսի հզոր զենք, ինչպես նրա համառձակ միտքն է և անխոտոռակելի կամքը: Դրանց շնորհիվ մարդը մինչև օրս մե-

---

1 «Մուրճ», 1901 № 1, էջ 6:

ծամեծ հաղթություններ է տարել բնության վիթխարի ուժերի վրա և այսուհետև կարող է նույն զենքերին միացնելով ամենակարող սերը, կերպարանափոխել նաև հասարակական այն պայմանները, որոնք մեծամասնության տանջանքներ են պատճառում»[2]: Արդեն ակնհայտ է պատմության շարժման, հասարակական կյանքի նկատմամբ «ապագատակարգային» մոտեցման ելակետը:

Հասարակության առաջադիմությունը «Մուրճը» պայմանավորում է «հին և նոր մարդկության հաջորդական և հավաքական ջանքերով: Միայն այդպիսի ջանքերով էլ նա կարող է հասնել արդարության իդեալին, այսինքն ընդհանուր բարօրության»[3]. մենք գործ ունենք մարդկային առաջադիմության տիպիկ բուրժուական ըմբռնման հետ, որտեղ պատմության շարժիչ ուժը բոլոր դասակարգերի «հավաքական ջանքերն» են: Սա այն է, ինչ բևեռանում է դասակարգային պայքարի թեորիայի հակառակ ծայրում իբրև հակոտնյա: Այս տեսության չափանիշներով էլ դիտարկվում են մամուլի խնդիրները, այդ թվում՝ «Մուրճի» անելիքները: Առաջ տանելով իր պաթետիկ խոսքը, ամսագիրը գտնում է, որ խավար բռնության ձեռքին գործիք դարձած մամուլին հակառակ, առաջադեմ մամուլը պետք է դրսի մարդկանց «ներգործական դեր կատարել շրջապատող հասարակական կյանքում՝ ի նպաստ արդարության ամենաբարձր իդեալին, այն է՝ անխտիր բոլոր աշխատող և խաղաղ ժողովուրդների բարօրության: Եվ այդ վսեմ նպատակին հասնելու համար գրական բոլոր առաջադեմ ուժերը պետք է հավաքվեն մի աղնիվ դրոշակի տակ, որոշ հանդեսների շուրջը, և համերաշխ ջանքերով աշխատեն անշեղ պահել ժողովուրդների ուղին լուսավորող առաջադիմության վիթխարի ջահը: Յանկանք և աշխատենք, ընթերցող, որ «Մուրճ» ամսագիրն էլ բախտ ունենա այդպիսի մի հանդես դառնալու»[4]:

Նոր դարասկզբին, երբ հեղափոխական ամպրոպի ամպերն էին հավաքվում Ռուսական կայսրության երկնակամարում, երբ հասարակական կյանքի բևեռացում էր տեղի ունենում և տարամետ հոսանքները քաղաքական կոսակցությունների էին վերաճում, հրամայական դարձնելով գործնական ծրագրերի մշակումը, «Մուրճը» սիրո և խաղաղության «մի աղնիվ դրոշակի» տակ է ուզում հավաքել բոլոր առաջադեմ ուժերին, այդ խաղաղ երթի մեջ մամուլին վերապահելով փարոսի

---

2 Նույն տեղում, էջ 7—8:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում, էջ 10—11:

դեր։ Այս անորոշ կոչերից մի բան որոշակի է. մենք գործ ունենք բուրժուական առաջադիմության խնկարկման փաստի հետ, իսկ թե այդպիսի վերացական ծրագիրը ինչպես էր հաշտվելու սրընթաց զարգացող քաղաքական կյանքի փոփոխությունների հետ, այդ մենք կտեսնենք թերթելով ամսագրի ավելի քան յոթ տասնյակ հատորները, որոնք ամսեամիս արձագանքել են Ռուսաստանի և Անդրկովկասի սոցիալ-տնտեսական և քաղաքական բուռն տեղաշարժերին պատմության մի այնպիսի նշանակալից ու բարդ շրջանում, ինչպիսին ռուսական առաջին հեղափոխությանը նախորդող ու ծավալման տարիներն էին։

Սկզբից ևեթ ասենք, որ ինչպես հին «Մուրճն» էր կրում Ա. Արասխանյանի քաղաքական հայացքների որոշակի կնիքը, որը հատկանշվում է լիբերալիզմի և դեմոկրատիզմի բարդ ներթափանցումներով, այնպես էլ նոր «Մուրճը» կրում է Լևոն Սարգսյանի քաղաքական հայացքների որոշակի կնիքը, որը նույնպես հատկանշվում է տարբեր ուղղությունների էկլեկտիկ, հակասական զուգորդումներով։ Լևոն Սարգսյանն իբրև խմբագիր, «Մուրճի» տակ սկսեց ստորագրել 1905 թ. № 7-ից, սակայն նա եղել է «Մուրճի» ամբողջ նոր շրջանի փաստական խմբագիրը։ Իբրև գլխավոր աշխատակից նա խմբագրել է ամսագիրը, գրել նյութերի մեծ մասը («ներքին տեսության», «արտաքին տեսության», «պարբերական հրատարակությունների» բաժինները, մատենախոսության զգալի մասը և բազմաթիվ մեծ ու փոքր հոդվածներ)։ Ամսագրի նախորդ խմբագիրների՝ Կ. Կրասիլնիկյանի և Հ. Սպենդիարյանի, ստորագրությանը չենք հանդիպում որևէ հոդվածի տակ (չհաշված Կրասիլնիկյանի մեկ-երկու թարգմանական բանաստեղծությունները)։ Ահա ինչու շատ հաճախ և՛ ժամանակակիցների հուշերում, և՛ գիտական աշխատություններում ու մատենագիտական ցուցակներում ոչ թե անփութությամբ, այլ իրերի ռեալ գնահատումով պայմանավորված, նոր «Մուրճի» խմբագիր հիշատակվում է միայն Լևոն Սարգսյանը։

Նախքան Լևոն Սարգսյանի խմբագրական գործունեությունն ուսումնասիրելը ծանոթանանք նրա կենսագրությանը[5]։

---

5 Կենսագրական տեղեկությունները քաղել ենք «Ազգագրական հանդեսի» 1904 թ. № 11-ից, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվի № 4051 ֆոնդում պահպանվող Գ. Ղարաջյանի «Լևոն Սարգսյան» ձեռագիր հոդվածից, նույն հոդվածի կրճատ տարբերակից՝ տպագրված «Խորհրդային Հայաստան» թերթի 1927 թ. № 118-ում և «Մարտակոչ» թերթի 1927 թ. № 99-ում տպագրված «Լևոն Սարգսյան» մահախոսականից (հեղինակ Տ. Փիրումյան)։

Լևոն Սարգսյանը ծնվել է 1862 թ. Ագուլիսի շրջանի Ցղնա գյուղում։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, իսկ 1873 թ. ուսումը շարունակել Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ 1884 թ. ընդունվել է Մոսկվայի Համալսարանի բնագիտական ֆակուլտետը, որն ավարտել է 1888 թ., գերազանց առաջադիմության համար ստանալով թեկնածուի աստիճան[6]։ Վերադառնալով Կովկաս, նույն թվականին նա ճանապարհորդություն է կատարել Արևմտյան Հայաստանում, որի արգասիքն էր «Մուրճ» ամսագրում նրա հրապարակած «Այց Թուրքաց Հայաստանին» խորագրով հոդվածը։ Ինչպես վկայում են ժամանակակիցները, նրա ճանապարհորդական նոթերը մեծ հետաքրքրություն առաջ բերեցին մտավորական շրջաններում և երիտասարդ հրապարակախոսը հրավիրվեց գրական ու մանկավարժական գործունեության։ Լ. Սարգսյանը «Մուրճի» խմբագրական կոլեգիայի անդամ էր, Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի նախագահը։ Դասավանդում էր Ներսիսյան և Գայանյան դպրոցներում։

1892 թ. Սարգսյանը տեղափոխվում է Շուշի։ Այստեղ որպես թեմական դպրոցի տեսուչ, մտահոգված դասավանդման նորագույն ձևերի արմատավորման խնդրով, նա բախման մեջ է մտնում թեմի պահպանողական ղեկավարության հետ և ստիպված լինում երեք տարին չբոլորած թողնել զավառական քաղաքը։ Թիֆլիսի Մարիամյան— Հովնանյան դպրոցում տեսուչ ընտրվելուց և կաթողիկոսի կողմից չհաստատվելուց հետո նա հեռանում է Կովկասից և դասախոսական աշխատանքի անցնում Լազարյան ճեմարանում։ Հինգ տարի անց, երբ 1900 թ. կեսերին «Մուրճ» ամսագիրը անցնում է Կ. Կրասիլնիկյանի ձեռքը, նա հրավիրվում է որպես ամսագրի գլխավոր աշխատակից։ Սկսվում է Լևոն Սարգսյանի գործունեության ամենաբեղմնավոր շրջանը։ Կրասիլնիկյանը կարող էր դառնալ ամսագրի սեփականատերը. դրա համար միջոցներ էին հարկավոր, որոնցից զուրկ չէր առաջին գիլդիայի առևտրականի որդին[7], սակայն նա զուրկ էր խմբագիր լինելու կարողությունից։ 1902 թ. Կրասիլնիկյանը դիմում է Կովկասի մամուլի գործերի գլխավոր

---

6 ՍՍՀՄ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ԿՊՊԱ), ֆ. 776, ց. 12, գ. 50, թ. 76։

7 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 50, թ. 38։ Մամուլի գործերի գլխավոր վարչությանը ուղղված համատեղ դիմումում ասված է, որ Արասխանյանը 1900 թ. ապրիլից ամսագրի հրատարակության իրավունքը հանձնում է Կոնստանդին Սերգեյի Կրասիլնիկյանին, որպես նրա լրիվ սեփականություն։

վարչությանը, խնդրելով Լևոն Սարգսյանին նշանակել ամսագրի խմբագիր, սակայն մերժում է ստանում՝ վերջինիս «կասկածելի քաղաքական բարեհուսության» պատճառով[8]։

Բանն այն է, որ 1899 թ. Մոսկվայում, կասկածվելով դաշնակցական կուսակցությանը պատկանելու մեջ, Լ. Սարգսյանը ենթարկվել էր խուզարկության, թեև ոչ մի փաստ չէր հայտնաբերվել[9]։ Սակայն ցարական խուզարկուների հոտառությունը նրանց ճիշտ հետքի վրա էր դցել. Լևոն Սարգսյանը իսկապես եղել էր ոչ միայն դաշնակցական կուսակցության անդամ, այլև նրա հիմնադիրներից մեկը։ Սակայն, ինչպես Գ. Ղարաջյանն է վկայում, «մի քանի տարի դաշնակցական կուսակցության շարքերում գտնվելով՝ իրեն հատուկ զգաստ մտածողության շնորհիվ կարողացավ հասկանալ իր ընկերների, իր կուսակցության կորստաբեր վարքագիծը, ավանտյուրիստական գործելակերպը, դուրս եկավ նրանց շարքերից և սկսեց անհաշտ պայքար «Մուրճում» և «Մշակ» թերթում դաշնակցության դեմ»[10]։

Անդրկենտգործկոմի «Մարտակոչ» թերթում կարդում ենք. «Լևոն Սարգսյանը հայտնի է առանձնապես իր մտրակող և մերկացնող հոդվածներով «Մուրճում» «Հայ հեղափոխական դաշնակցություն» կոչված կուսակցության գործելակերպի դեմ, որ առաջին անգամ մեր մեջ խուժանավար անունը դրոշմեց դաշնակ լիդերների ճակատին»[11]։

1903 թ. № 1-ից Կրասիլնիկյանը հանձնում է խմբագրի իրավունքը Հ. Սաֆենդիարյանին, իսկ № 8-ից հրատարակչինը՝ Վարվառե Քանանյանին՝ Լազարյան ճեմարանի դիրեկտոր Գևորգ Քանանյանի այրուն։ Սարգսյանին հաջողվում է լիիրավ խմբագիր դառնալ միայն հեղափոխության տարիներին՝ 1905 թ. № 7-ից։ Այսուհանդերձ, իբրև գլխավոր աշխատակից նա էր որոշում ամսագրի հիմնական ուղղությունը։

Խմբագիր Լևոն Սարգսյանին նույն ճակատագիրն էր սպասում, ինչ՝ Ա. Արասխանյանին։ Նա ևս նյութական միջոցների սղության պատճառով ստիպված է լինում հրաժարվել իր հրատարակած օրգանից։ 1907 թ. №4-ից «Մուրճը» դադարում է։

Այնուհետև Լևոն Սարգսյանին տեսնում ենք Ալեքսանդրապոլի առևտրաբրական դպրոցի վերատեսչի պաշտոնում։ 1918 թ. նա նույն քաղաքի

8 Նույն տեղում, թ. 83։

9 Նույն տեղում։

10 «Խորհրդային Հայաստան», 1927, № 118։

11 «Մարտակոչ», 1927, № 99։

քաղաքագլուխն էր։ Կ. Ղարաջյանի և Տ. Փիրումյանի վկայությամբ, երբ քաղաքը ենթարկվում է թուրքական հրոսակների արշավանքին, քաղաքագլուխ Սարգսյանն իր կյանքը բազմիցս վտանգի ենթարկելով պաշտպան է կանգնում համաքաղաքացիներին։ 1918—1919 թթ. Ալեքսանդրապոլում Լ. Սարգսյանը հրատարակել է «Մարդկայնություն» անունով «ժողովրդական սոցիալիստական ուղղությամբ անկախ հակադաշնակցական»[12] թերթ։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Լևոն Սարգսյանը նշանակվում է Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Պարսկաստանում։ Կյանքի վերջին տարիները նա անց է կացրել Թբիլիսիում, որտեղ պաշտոնավարել է Անդրկովկասյան կենտգործկոմին կից գիտական ընկերությունում որպես բնագետ։ Լ. Սարգսյանը մահացել է 1927 թ. մայիսի 1-ին։

Լևոն Սարգսյանը կյանքի բարդ և հակասական ուղի է անցել, սակայն իր գործունեության վերջին տարիները, որոնք համընկնում են սովետական իշխանության առաջին տարիներին, նա նվիրեց իր նորոգ հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, արժանանալով նրա վստահությանը և գնահատանքին։

* * *

Խոսելով ամսագրի ուղղության մասին, Լ. Սարգսյանը գրում է. «Մենք աշխատել ենք մեր հանդեսի միջոցով ընթերցողին գիտակ դարձնել հայ ժողովրդին և նրա ցիրուցան հատվածների նկատմամբ, տեղյակ պահել նրան մեր հարևան ազգերի կյանքի վերաբերմամբ, հաղորդել նրան պետական կյանքում տեղի ունեցող երևույթների մասին և նրա մտքի առաջ պատուհան բանալ՝ համամարդկային կյանքի, գիտության ու գեղարվեստի էվոլյուցիան դիտելու համար։ Մենք աշխատել ենք համախմբել «Մուրճի» շուրջը մեր գրական ուժերը, միջոց տալ արտահայտվել յուրաքանչյուրին, ով նոր միտք և անկեղծ զգացմունք ունի»[13]։ Թե ով ինչ է ասում իր մասին, դա դեռ այն հարցի պատասխանը չէ, թե ով ինչ է ներկայացնում իրենից, առավել ևս, եթե խոսքը պարբերական օրգանի մասին է։

Նոր «Մուրճը» չուներ նախորդի տնտեսագիտական շեշտված ուղղվածությունը, սակայն տնտեսական-քաղաքական հարցերի քննարկումը

---

12 «Խորհրդային Հայաստան», 1927, № 118։

13 «Մուրճ», 1904, № 10, էջ 158։

կատարում էր նրա նման ուղենիշ ունենալով ռեֆորմիզմը։ Ամսագրի հենց առաջին համարում տպագրված Ալ. Քալանթարի «Մեր երկրի քնած ուժերը» հոդվածը դրա առաջին և ոչ վերջին ապացույցն է։ Այս անգամ «Մուրճից» էր հնչում «Մշակի» խմբագրի լիբերալ «քննադատությունը» Անդրկովկասի զարգացման խոչընդոտների վերաբերյալ. «Ուրեմն կա վաուելիք, կա ուժ, արտադրելու կարողություն, կան նաև բազմաթիվ գյուղատնտեսական, հանքային և ուրիշ հում նյութեր մշակության համար։ Մնում է օգտվել այդ հաղթից և միջոցներ որոնել երկրի քնած ուժերն արթնացնելու և շարժման մեջ դնելու»[14]։ Հին «Մուրճից» մեզ ծանոթ դեղամիջոցներն են մնջտեղ բերվում՝ գյուղատնտեսական նորագույն գործիքների և մշակման ձևերի արմատավորում, գյուղատնտեսական ընկերությունների և գյուղական բանկերի ստեղծում, տեղական ինքնավարության հաստատում և մտավորականության գործունյա մասնակցություն ժողովրդի հոգևոր և տնտեսական զարգացման գործում[15]։

Ճորտատիրական ռեֆորմի 40-ամյակին ամսագիրը դրվատանքի խոսք է ասում Ռուսաստանի «Մեծ վերանորոգչի» մասին. «Երբեք չի մոռացվի անշուշտ Ալեքսանդր II-ի անհատական մեծ դերը այդ անարյուն հեղափոխության մեջ»[16]։

«Անարյուն հեղափոխություն», սա «Մուրճի» համար պատահական ֆրազ չէ. նրանում բանաձևված է հասարակական առաջադիմության ամսագրի նախընտրած իդեալը, որը խաղաղ ու անարյուն, ռեֆորմների միջոցով պիտի իրականացներ կյանքի բարեփոխումը։

«Մուրճը» ընթերցողներին կողմնորոշում է դեպի եվրոպական կյանքի կենսաձևերը, դրանք դիտելով որպես քաղաքական և տնտեսական կարգի չափանիշ։ «Եվրոպական կյանքը,— գրում է ամսագիրը,— ընդհանրապես առած տարբերվում է մեր կյանքից իր աչքի ընկնող կենսունակությամբ, կայտառությամբ, թափով։ Եվրոպացին ոչ միայն ավելի մեծ գիտական պաշար ունի, այլև ավելի շատ վստահություն։ Անսահման մեծ է մանավանդ նրա ինիցիատիվը կամ նախաձեռնությունը։ Հասարակական բոլոր ասպարեզներում այնտեղ կարելի է տեսնել անհատական ինիցիատիվի շնորհիվ կատարված հսկայական գործեր»[17]։ Այս վկայակոչումը պետք է ամսագրին, որպեսզի աղգօդուտ

---

14 «Մուրճ», 1901, № 1, էջ 229։

15 Տե՛ս «Մուրճ», 1901, № 7, էջ 176—187։

16 «Մուրճ», 1901, № 3, էջ 223։

17 «Մուրճ», 1901, № 8, էջ 226։

գործունեության կոչ անի հայ մտավորականությանը, քանի որ նրա կարծիքով տգիտության և աղքատության մեջ կորած մասսան անկարող է իրեն օգնել և «ինտելիգենցիան է, որ իր գիտությունը, իր եռանդը, իր ոգևորությունը զոհում է մասսայի դրությունը բարվոքելու համար»[18]։

Հայ մտավորականությանն ուղղված նման կոչերը, որ չէին իջնում հին «Մշակի» և հին «Մուրճի» էջերից և հասկանալի էին XIX դարի երկրորդ կեսի պայմաններում, XX դարում, երբ ազատագրական պայքարը մտնում էր նոր փուլ՝ մասսայական ելույթների, բանվորական գործադուլների ու ագրարային շարժումների փուլը, արդեն ուշացած էին ու ժամանակավրեպ։

Նոր «Մուրճի» քաղաքական դիմագիծը ամենից լավ ցուցադրում է «Ներքին տեսության» բաժինը, որի անփոփոխ տեսաբանը Լևոն Սարգսյանն էր։ Անդրադառնալով ներքին կյանքի իրադարձություններին քաղաքական իրադրության այնպիսի լարված շրջանում, ինչպիսին հեղափոխության հասունացման և իրականացման տարիներն էին, «Մուրճը» անտարբեր տարեգիր չէ, այլ որոշակի արտահայտում է իր վերաբերմունքը և՛ դեպի ցարական կարգերը, և՛ դեպի բուրժուադեմոկրատական հեղափոխությունը։

1903 թ. հունիսից «Մուրճի» «Ներքին տեսության» բաժինը տագնապալի շեշտ է ստանում. ամսագրի № 7-ում հրապարակվում է ցարական բարձրագույն հրամանը հայ եկեղեցական կալվածքների և գույքի բռնագրավման մասին, իսկ № 9-ում՝ կանոնադրությունը։ Դժբախտաբար, «Մուրճը» հնարավորություն չուներ լիաբերան հնչեցնելու իր բողոքի ձայնը։ Նա ստիպված էր Գանձակում, Կարսում, Բաքվում, Շուշիում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում տեղի ունեցած ժողովրդական հուզումների մասին տեղեկացնել իր ընթերցողներին պաշտոնական թերթերի հաղորդագրությունների արտատպություններով միայն, որոնց սուզ տողերը «հայերի հարուցած անկարգությունների» մասին, իհարկե, լրիվ պատկերացում չեն տալիս մասսայական շարժումների հսկայական ծավալի ու չափերի մասին։ Միայն հեղափոխության օրերին, երբ քանդվեցին գրաքննական կապանքները, այդ կողոպտչական օրենքն իր անունն ստացավ նաև «Մուրճի» էջերում։ Ժողովրդական հուժկու շարժման ազդեցությամբ, հեղափոխության դատավճռով այն չեղյալ հայտարարվեց։ Սա հայ ժողովրդին հեղափոխության պարգևած նվաճումներից էր։

---

18 Նույն տեղում, էջ 227։

1905 թ. առաջին համարից «Ներքին տեսության» բաժինը դառնում է ամենածավալունը ամսագրում։ Պատճառը սկսված հեղափոխությունն էր, արագորեն ծավալվող աննախադեպ իրադարձությունները։ Հեղափոխական ժամանակաշրջանի մամուլը առավել, քան խաղաղ օրերինը, հնարավորություն է տալիս անսխալ գնահատելու պարբերականների քաղաքական վարքագիծը, քանի որ հեղափոխությունները, ինչպես ղտող քուրայում, պարզում են քաղաքական ծրագրերի իրական արժեքը, ցույց տալիս հասարակության տարբեր դասակարգերի իսկական էությունը, որոնք մկրտվելով հեղափոխության ավազանում նրանից դուրս են գալիս քաղաքական որոշակի կերպարանքով[19]։

Հեղափոխության սկիզբն ազդարարող հունվարյան դեպքերը «Մուրճում» երևում են պաշտոնական հաղորդագրությունների միջոցով, որպես Պետերբուրգում և Մոսկվայում տեղի ունեցած «անկարգություններ»։ Ամսագիրը դեռ չի հասցրել հասկանալ կատարվածի իմաստը, նա իրար է գումարում մեծ կայսրության տարբեր ծայրերից ստացվող նույնատիպ լուրերի տարափը, զարմանքով արձանագրում. «Իրար հետևից թափվում են, ինչպես առատության եղջյուրից, անկարգություններ, գործադուլ, թե անհատական և թե մասսային սպանություններ։ Պետերբուրգի փողոցներում հունվարի 9—11 անցքերից հետո նման դեպքեր պատահեցին Մոսկվայում, Վարշավայում, Հելսինգֆորսում, Թիֆլիսում, Քութայիսում և այլ քաղաքներում։ Բանվորական ընդհանուր գործադուլը ահագին հարված տվավ երկրի արդյունաբերությանը և առևտրին, օրերով և շաբաթներով լրագիրներ չէին լույս տեսնում, երթևեկությունը երկաթուղիներով և քարշակներով ընդհատվել էր, բարձրագույն դպրոցները փակվել են, և այդ ընդհանուր քաոսի մեջ դեռ նոր էին մոռացվում Քիշնևի և Գոմելի հրեական ջարդերի սարսափները, որ ազգերի կուլտուրական, խաղաղ առաջադիմության ու համերաշխության թշնամիներին աջողվեց սարքել ավելի ևս զարհուրելի կոտորածներ թուրքերի և հայերի մեջ Բագվում»[20]։

Ռուսական հեղափոխության հուժկու ալիքը հասնում է հսկա կայսրության ծայրամասերը։ Հունվարի 9-ը աշխատավոր մասսաներին պայքարի է ոգեկոչում ամենուրեք։ Կովկասյան հեղափոխական իրադարձությունների լուսաբանումն ամսագրում դարձյալ կատարվում է պաշտոնական հաղորդագրությունների թույլատրելի սահմաններում,

---

19 Տե՛ս Վ. Ի. Լենին, նկ., հ. 11, էջ 4։

20 «Մուրճ», 1905, № 2—3, էջ 181—182։

որտեղ Դուրիայի գյուղացիների քաջարի պայքարը կալվածատերերի դեմ դառնում է «ապստամբություն օրինական կարգի դեմ», Թիֆլիսի պրոլետարիատի հունվարյան ընդհանուր գործադուլով անդրկովկասյան քաղաքներում սկիզբ առած մասսայական քաղաքական գործադուլները՝ «բանվորական խառնակություններ»։ 1905 թ. № 4-ից, սակայն, ամսագրի լեզուն անճանաչելիորեն փոխվում է։ Պատճառը փետրվարի 18-ի ցարական գրաքննական նոր օրենքներն էին, որոնք ամսագրի կարծիքով «հնարավորություն տվին երկրի բոլոր կենդանի ուժերին ազատորեն արտահայտելու իրանց անկեղծ հայացքներն ու իղձերը։... մատնանիշ անել երկրի հետամնացության իսկական պատճառները և ցույց տալ ցավերը բուժելու արմատական միջոցները։ Այլևս ոչ ոք չէր ցանկանում ապրել այնպես, ինչպես ապրում էր մինչև այժմ, սև օրեր քաշելով. նոր կյանք, նոր կարգեր էր պահանջում հասարակության արթնացած գիտակցությունը»[21]։

Ահա ամսագիրը ևս շտապում է օգտվել «ազատ խոսքի» իրավունքից և իր «արմատական միջոցները» առաջարկել, իսկ մեզ մնում է գնահատել նրա ջանքերը և ասել, թե դրանք իրոք որքանով էին արմատական ու առաջադիմական։

Լեգալ մամուլի քննարկման հիմնական առարկան ռուսաստանյան ապագա պառլամենտի հարցն էր։ «Մուրճը» մերժում է ներկայացուցչական ժողովի իրավասության սահմանափակումը լոկ խորհրդակցական իրավունքով։ Միանալով ընդդիմադիր մամուլի պահանջին, «Մուրճը» ևս գտնում է, որ ռուսական ապագա պառլամենտը պետք է ունենա «օրենսդրական նախաձեռնություն, բյուջեի և հարկերի հաստատության, ինչպես և ադմինիստրացիայի վրա կոնտրոլի իրավունքներ»։ Հասարակական կարծիքը ճնշելու, ուսանողության, մտավորականության վրա հարձակումներ գործելու և ջարդեր կազմակերպելու փորձերը, «Մուրճի» կարծիքով, «անզոր են կանգնեցնելու կյանքի հասունացած առաջադիմական բուն հոսանքը»[22]։

Գալով Կովկասի ընդհանուր վիճակին, «Մուրճը» գտնում է, որ «ծայրերի» նկատմամբ կիրառվող քաղաքականության հետևանքները այստեղ «ավելի ևս ծանր են դարձնում ազգարնակության համար բյուրոկրատական-պոլիցիական ռեժիմի պակասությունները»[23]։ Ամսագրի

---

21 «Մուրճ», 1905, № 4, էջ 210։

22 Նույն տեղում, էջ 213։

23 Նույն տեղում, էջ 214։

լեզվի կապանքները բացվել են և ճորտատիրական ռեֆորմը դրվատող նախկին «Մուրճը» ահա ինչ կարծիք է հայտնում. «Սակավահողությանը ավելացրեք իրավազուրկ դրությունը, ծանր հարկերը, պոլիցիայի և պաշտոնյաների անկոնտրոլ պահանջները և կամայականությունները, դպրոցների և այլ կրթական հիմնարկությունների, ինչպես և կանոնավոր հաղորդակցությունների, մանր կրեդիտային հաստատությունների բացակայությունը, և դուք կհասկանաք, որ քառասուն տարի առաջ հայտարարած ճորտերի ազատությունը մի կիսատ-պռատ ռեֆորմ էր, որ չէր ապահովում գյուղացու տնտեսական ապահովությունը ազնվականներից և չէր բանում նրա առաջ քաղաքակրթության բարիքները»[24]:

Հնարավորություն ստանալով ուղղակիորեն ասելու այն, ինչ մտածում է, ամսագիրը արդարացված և պատճառաբանված է գտնում Դուրիայի գյուղացիների ապստամբությունը. «Տասնյակ տարիների ընթացքում ամեն զրկանք և անարդարություն կրելուց՝ գյուղացիների համբերությունը սպառվեց, և նրանց շարժումը ստացավ ապստամբության ձև. Վրաստանի կալվածատերերին և տեղական պաշտոնյաներին հայտարարված էր կռիվ գյուղացիների կողմից. սպանությունները, հրկիզությունները և բոյկոտը սարսափի մեջ էին գցել հողատերերին և տեղական ստորին պաշտոնյաներին: Բանն այնտեղ է հասել, որ ամբողջ Քութայիսի նահանգը և Բաթումի շրջանը պատերազմական վիճակի մեջ են հայտարարված»[25]: Ամսագիրն առանձին համակրանքով է ներկայացնում ապըստամբների «ազատագրական պահանջները», հույս հայտնելով, որ Անդրկովկասում ծայր առած դժգոհության ալիքը, մասսայական շարժումները կստիպեն լուծել նաև հայ հասարակությանը հուզող հարցը՝ հայկական ծխական դպրոցները կվերադարձվեն եկեղեցիներին:

Հայ-ադրբեջանական սաստկացող ընդհարումներն ամբողջովին խլում են ամսագրի ուշադրությունը, դառնալով ներքին տեսության հիմնական թեման: «Կույր պետք է լինել չտեսնելու համար նախօրոք կազմակերպված ընդհանուր մի ծրագրի սիստեմատիկ գործադրությունը»[26],— գրում է ամսագիրը, իր բողոքի ձայնը միացնելով հայ ամբողջ հասարակության վրդովմունքին, ամսագիրը դարձնելով հասարակական կարծիքի մշակման և հրապարակման ամբիոն: Սկզբից ևեթ ասենք, որ «Մուրճը», ի տարբերություն ազգայնական բուրժուական մամուլի, նացիոնա-

---

24 Նույն տեղում, էջ 216:

25 Նույն տեղում, էջ 217:

26 «Մուրճ», 1905, № 6, էջ 167:

լիստական կրքեր չի բորբոքում, այլ աշխատում է ամեն կերպ նպաստել կոտորածների առաջն առնելուն։ «Ցնցող արյունալի անցքեր էին կարծես հարկավոր,— գրում է «Մուրճը»,— որ մեծ ղարկ տրվի հայ-թուրք-վրացական համերաշխության գաղափարին։ Ամեն տեղ ազգերի այդ ներկայացուցիչները ցավակցություն են հայտնում պատահած դժբախտության համար և միջոցներ են ձեռք առնում, որ չարամիտ մարդիկ չգրգռեն կրքերը և նման դեպքեր չառաջացնեն և գավառներում... այժմ քենի, վրեժխընդրության ձայները խեղդվում են մասսաների «կեցցե եղբայրություն և համերաշխություն» աղաղակների մեջ»[27]։

«Մուրճը» ճիշտ դիրք է գրավում ճակատագրական այդ օրերին, նա կովկասյան ժողովուրդների համերաշխության կոչն է հնչեցնում, ամսագրում դետեղում վրացական «Ցնորիս փուրցելի» թերթի ելույթը, որտեղ ասված է. «Այսօր, երբ ամբողջ Ռուսաստանը սթափվում է իրան կաշկանդող խոր քնից, երբ ամեն տեղ տիրում է ընդհանուր շարժում լավագույն ապագա ստեղծելու համար, այո, այսօր, ընդհանուր ոգևորության ժամանակ Բաբվի դեպքերը, այս վերին աստիճանի ցավալի անհամաձայնությունը իբրև ղարհուրելի դիսոնանս են ներկայանում... Ե՞րբ է տեղի ունենում այդ բոլորը. այն ժամանակ, երբ պետք է վերջ դրվի բռնության, երբ պիտի ոչնչացվեն այսօրվա կարգերը, երբ մեր երևակայության մեջ արդեն այնքան պարզ նկատվում է մարդկային ազատ կյանքը, երբ հարկավոր է, որ բոլոր կովկասյան ազգերը ձեռք-ձեռքի տված եղբայրաբար կռվեն կովկասյան արշալույսի համար։ Եղբայրական միության, համաձայնության, դաշինքի փոխարեն— արյունահեղություն եղբայրների և եղբայրասպան պատերազմ։... Կովկասյան ոչ մի ազգություն չի կարող ապրել առանց կովկասյան այլ ազգությունների, և նա, ով սիրում է իր ազգությունը, իր հայրենիքը, նա պիտի սիրե Կովկասը և կովկասյան բոլոր ազգությունները։ Կովկասյան որևիցե ազգության ազատությունը և բարեկեցությունը հնարավոր է միայն ազատ Կովկասում»[28]։

Լինելով փոխարքային այցելող հայ պատգամավորության անդամ, Լևոն Սարգսյանն ամսագրում հրապարակում է հայկական հանրագրի տեքստը, որտեղ մասնավորապես նշված է, թե այն ժամանակ, երբ հայ ազգաբնակչությունը, գիտակցելով ռուս ժողովրդի հետ միության կարևորությունը, ձեռնամուխ է եղել խաղաղ աշխատանքի, նա ենթարկվում է սիստեմատիկ ճնշումների, կամայականությունների, բռնի ռուսացման։

---

27 «Մուրճ», 1905, № 3, էջ 183։

28 Նույն տեղում, էջ 189—190։

«Հայոց բազմաթիվ դպրոցներ փակեցին և տասնյակ հազարավոր մանուկներ փողոցում մնացին: Փակվեցին կրթական և բարեգործական ընկերությունները: ...Հայ հրապարակական խոսքին— բանավոր թե տպագրական— ամենուրեք խոչընդոտներ դրվեցին:... Ի լրումն ամենայնի, ժողովրդական վերջին ազատականությունը— հայոց եկեղեցական գույքերը գրավելու մասին օրենքը, որ առաջացրեց մի կողմից բողոք, մյուս կողմից ճնշման միջոցներ, հասցրեց հայ ազգաբնակությանը վերին աստիճանի զրգռման, որ վերջացավ ժողովրդական խռովություններով»[29]: Հանրագիրը պահանջում է տեղական իշխանություններից անհապաղ միջոցներ ձեռք առնել վերջ տալու հայ-ադրբեջանական կոտորածներին:

«Մուրճը» հրապարակում է փոխարքայի պալատում փետրվարի 20-ին հրավիրված երկու կողմերի պատգամավորների խորհրդակցության արձանագրությունը, որին մասնակցել և ելույթ է ունեցել նաև «Մուրճի» խմբագիրը: «Արյունահեղ անցքերի գլխավոր պատճառը,— ասել է Լևոն Սարգսյանը,— իմ խոր համոզմամբ կառավարչական պաշտոնյաների բռնած դիրքն է... նրա թույլատրությունը (попустительство), նրա հանցավոր անգործությունը պատճառ եղավ, որ հակահասարակական ձրդտումները բորբոքվեցան, զարգացան և հասան մասսային ջարդերի ու կոտորածների աստիճանին»[30]: Նիստին մասնակցող հայ նշանավոր երաժիշտ Կարա-Մուրզան ավելի համարձակ է առաջ տանում ցարիզմի գաղութային քաղաքականության քննադատությունը. «Միակ և հիմնական պատճառը բոլոր անկարգությունների, որոնք վերջին երեք տարիների ընթացքում հուզեցին Կովկասը, այդ իշարկե, աղատագրական շարժումից առաջ տիրող պլեվեյան ռեժիմն է, որի բնորոշ ներկայացուցիչն էր Կովկասում իշխան Գոլիցինը: Հայ-թուրքական կոտորածը այդ կողմից բացառություն չէ կազմում և ծագել է նույն հողի վրա: Գոլիցինի ռեժիմը նպատակ էր դրել սիստեմատիկաբար ճնշել Կովկասի բոլոր բնիկ ազգությունները և մեկը մյուսի դեմ հարուցանել, իրար դեմ կռվացնել»[31]:

Մտահոգություն ունենալով օբյեկտիվորեն բացահայտել ընդհարումների իրական պատճառները, «Մուրճը» ներքին տեսություններից բացի այդ հարցին անդրադառնում է նաև առանձին հոդվածներով: Դրանցից մեկը ուղղակիորեն վերնագրված է «Հայ-թուրքական ջարդերի տնտեսա-

29 «Մուրճ», 1905, № 6, էջ 169—175:

30 «Մուրճ», 1906, № 2, էջ 139:

31 Նույն տեղում, էջ 141:

կան-քաղաքական պատճառները»։ Հոդվածի ածանցյալ նպատակն է հակահարված տալ դաշնակցական մամուլին, որն այդ օրերին կրակի վրա յուղ էր լցնում, ազգայնական տրամադրություններ բորբոքում։ «Մուրճի» խմբագիրը հարմար է գտնում ամսագրի էջերը տրամադրել Ալեքսանդր Ռուբենուն, ծանոթագրության մեջ, սակայն, նշելով, որ համաձայն չէ հոդվածի մի քանի կետերի հետ։ Հոդվածը, եթե ոչ ուղիղ կենտրոնին, ապա հարվածում է նշանախեցին, օգնում տեսնելու ողբերգական դրամայի իսկական դերակատարներին։ Հոդվածագիրը գրում է, որ ջարդերն ուղղված էին բարձրացող հեղափոխական փոթորկի դեմ, որը ծառանում էր սրբելու անախրոնիզմ դարձած միապետական սիստեմը. «Ինքնակալությունը երազում էր բաժանել և չլատել հակառակորդ ուժերը, հեշտությամբ տիրելու համար, աշխատում էր յուրաքանչյուր ազգության մեջ զարգացնել նացիոնալիզմի որդը, ներհակ տարրերի թույնը, ինտերնացիոնալի կուռ, չախչախիչ ուժի դիմաց։... Հեղափոխության հետզհետե զորեղացող տատանումները և ինքնակալության ողորմելի դրությունը ապացուցեցին, որ ջարդերը ինքնակալության հիվանդոտ ջղաձգություններն են, որ ինքնակալությունը և հեղափոխությունը տրամագծորեն իրար ոչնչացնող հակադրություններ են, հետևաբար երկուսից մեկին է պատկանում կյանքը»[32]։ Ինքնակալությունը վաղ թե ուշ պիտի հրդեհեր այն հնոցը, որի վառելանյութերը երկար տարիների ընթացքում էին հավաքվել։ Իսկ ամենահրկիզվող վառելանյութը ազգայնական տրամադրություններն էին։ Կովկասի ինտերնացիոնալ պրոլետարիատը միայն կարող է լինել պատվար ամեն տեսակի ազգայնական կռիվների դեմ։ Նրա կռվքին իբրև դաշնակից կկանգնի հարստահարվող գիտակից գյուղացիությունը։ Հոդվածի եղրակացությունը հնչում է որպես ինքնակալության տապալման կոչ. «Այնքան, որքան գոյություն ունի ներկա ռեժիմը, պիտի շարունակվի քաղաքացիական կռիվը երկու ժողովուրդների միջև, որովհետև այդ կռիվներով ու դիակներով է նա մտածում ապահովել յուր գոյությունը։ Նա, ով անկեղծորեն ցանկանում է հարբուսահարվող ժողովուրդների եղբայրությունը, խաղաղությունը ու նորմալ կյանքը, նա պիտի կռվե հանուն հայ և առանձնապես թուրք պրոլետարիատի և հարստահարվող գյուղացիության քաղաքական-դասակարգային գիտակցության, հանուն ներկա քաղաքական կարգերի իսպառ կործանման, այն կարգերի, որ դրդող սկզբնապատճառն է բոլոր այս ոճրա-

---

32 «Մուրճ», 1905, № 11—12, էջ 190։

գործությունների և սնուցանող մայրը՝ բոլոր խավար տարրերի, ձգտումների ու գործողությունների»[33]:

Ամսագիրը փորձում է գտնել այն կապը, որ իրար է միացնում Ռուսաստանը ցնցող իրադարձությունները, այսինքն պատճառների պատճառը. հայկական ջարդերը Կովկասում, հրեական ջարդերը ներքին նահանգներում, բանվորական գործադուլները, խռովությունները, ապստամբությունները, ագրարային շարժումները վկայում են այն դժգոհության մասին, որ տիրում է լայնածավալ երկրի բոլոր խավերում բյուրոկրատական ռեժիմի դեմ. «այլևս ոչ ոք չի ուզում լսել հին ռեժիմի մասին, անկասկած մասնակի, ժամանակավոր կարգադրություններով անկարելի է բուժել տագնապը և մնում է հիմնական միջոցների դիմել»[34]: Ահա ինչպիսի լեզու սկսեց բանեցնել «Մուրճը» գրաքննական կապանքներից ազատվելուց հետո: Սակայն նա ուներ իր սեփական, ինքնատեղծ կապանքները, որոնք արգելակում էին նրան ավելի առաջ գնալու, հասնելու արմատական հեղաշրջման անհրաժեշտության գիտակցությանը: Քաղաքական թյուրատեսությունը, աշխարհայացքային սահմանափակությունը, ռեֆորմիզմով հրապուրվելը նրան միշտ հանգեցնում էին հաբեի կիսատ-պռատ, խաղաղ լուծումների: Տվյալ պայմաններում այդպիսի «հիմնական միջոց» է «Մուրճը» համարում ժողովրդային ներկայացուցչության գումարումը:

«Մուրճի» 1905 թվականի վերջին համարի ներքին տեսությունը նվիրված է Հոկտեմբերի 17-ի մանիֆեստին: Այն արժանի է առանձնահատուկ ուշադրության. ցարական մանիֆեստի նկատմամբ գրաված դիրքով կարելի է հստակ պատկերացում կազմել ինչպես քաղաքական կուսակցությունների, այնպես էլ մամուլի օրգանների ուղղության վերաբերյալ: Մանիֆեստի նշանակությունը լրիվ ըմբռնելու համար խմբագիրն անհրաժեշտ է գտնում մի հետադարձ հայացք ձգել անցյալի վրա, դիմել պատմական անալոգիաների օգնությանը: Այդ հետադարձ հայացքը նրան հասցնում է XIX դարի կեսերը՝ Ղրիմի պատերազմը, 1856 թվականի սևաստոպոլյան պարտությունը, երբ ցարական ինքնակալությունը տեսնելով, որ «այլևս ոչ մի կերպ չէր կարելի հակառակել ժողովրդի կյանքի մեջ տնտեսական և մտավոր փոփոխությունների շնորհիվ առաջ

---

33 Նույն տեղում, էջ 206:

34 «Մուրճ», 1905, № 7, էջ 148—149:

եկած ուժերի դրոհի դիմաց»[35], տեղի է տալիս, հրապարակ հանելով ճորտատիրական ռեֆորմը։ «Ջմոռանանք,— շեշտում է «Մուրճը»,— որ «մեծ ռեֆորմների» հետ ռուս ինքնակալությունը նոր կյանքի մեջ կարողացավ պահպանել ժանգոտած և մեռած անցյալի ամենազզրելի կողմը. այն է՝ պոլիցիական-բյուրոկրատական սիստեմով կառավարելու ձևը։ Հասարակությունը չտացավ և սահմանադրական ոչ մի երաշխավորում։ Այդպիսով, նոր գինին ածվեց հին նեխված տակի մեջ։ Բնականաբար, հին ռեժիմի այդ մնացորդը փտում առաջացրեց նոր ռեֆորմների մեջ»[36]։ «Մուրճը» գտնում է, որ ճիշտ նույնպիսի վիճակ ստեղծվեց ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով. «Հասարակական ուժերն արդեն այնքան մեծ էներգիա էին ամբարել, որ բավական էր մի խոշոր սխալ քայլ կառավարության կողմից, որ փոնկվի բացարձակ շարժումը։ Այդ սխալը ռուս-ճապոնական պատերազմն էր, որ թուլացրեց ինքնակալության զինվորական և ֆինանսական ուժերը։... Եվ փոքր Ճապոնիան շատ շուտով ցույց տվավ ռազմական ուժով գոռոզ ռուս ինքնակալության բոլոր փքվածությունն ու ապիկարությունը նույնիսկ պատերազմական ասպարեզում։ Ճապոնական հարվածներից սկսեց սասանվել ինքնակալության պատվանդանը և աղատ գլուխ բարձրացրեց ժողովրդի ճնշված ապստամբ ոգին։... Պետք էր զիջումներ անել։ Եվ այդ զիջումները արվում էին մի ամբողջ տարի՝ «յուրաքանչյուր ժամից հետո մի սեղանի գդալ» դեղատոմսյան իմաստությամբ»[37]։ Այո, պատերազմը սրում է հասարակական կյանքի բոլոր հակասությունները և արագացնում հեղափոխական պայթյունը։ Հունվարի 9-ին բանվորական խաղաղ ցույցի դնդակոծումը, ամառգրի կարծիքով, «փարատեց ցարի հմայքը», ավելի մեծ ուժ հաղորդելով հեղափոխական ալիքներին։ «Այնուհետև բանվորական գործադուլները ահագին ծավալ ստացան Ռուսաստանի բոլոր արդյունաբերական կենտրոններում. տնտեսական պահանջների հետ բանվորներն արդեն շեշտում էին քաղաքական աղատությունների պահանջների վրա»[38]։

Ժամանակին զրկված լինելով քաղաքական անցքերը մեկնաբանելու հնարավորությունից, այժմ խմբագիրը եռին թվով գնահատում է դրանք, իր խոսքն ասում։ «Մուրճը» շարունակում է իր մերկացումները. «Վրա հասան Մուկդենի և Ցուշիմի պարտությունները, ռուսաց բանակը և նա-

35 «Մուրճ», 1905, № 11—12, էջ 248։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 250։

38 Նույն տեղում, էջ 251։

վատորմը իսպառ ջախջախված էին։ Այլևս դժվար էր հույս դնել ինքնակալության այդ քայքայված փառազուրկ սյուների վրա։ Խփել էր պատմության հատուցման ժամը, պետք է կորչեր կյանքից ոճիրներով ծանրաբեռնված հին ռեժիմը։... Ապստամբական ոգին արդեն տարածվել էր և զորքի ու նավաստիների մեջ. Սև ծովում «Պոտյոմկին» զրահակիրը մի քանի նավերով բարձրացրել էր կարմիր դրոշակ և ռմբակոծում էր ինքնակալ Ռուսաստանի քաղաքները։... Օգոստոսի 6-ին հաստատվեց Պետական դուման, առանց խոսքի, ժողովների և անձի ազատության, առանց օրենսդրական ինիցիատիվի։ Լեռը մուկ ծնեց. դա պառլամենտարիզմի բյուրոկրատական վիժմունք էր...»[39]։ Ցարական կառավարության պառլամենտարիզմի խաղերը հանձին Բուլիգինյան դումայի, պետք է ասել, բավական ղգաստ են գնահատված։ Դուման թեև ղիջում էր հեղափոխությանը, սակայն ղիջում՝ հեղափոխությունը ճնշելու և սահմանադրություն չտալու նպատակով։ Ցարական այդ ողորմությունն ընդունելու պատրաստ բուրժուազիայի դավաճանական դիրքը մերկացրին և ցասումով նշավակեցին միայն բոլշևիկները, և հեղափոխական իրադարձությունների հետագա ընթացքն էլ հաստատեց նրանց քաղաքականության ճշմարտացիությունը։ Դումայի ակտիվ բոյկոտի բոլշևիկյան տակտիկան պսակվեց հաջողությամբ. կառավարությանը չհաջողվեց գումարել Դուման, նրա ընտրությունները տեղի չունեցան։

Բուլիգինյան դումայի տապալումից առած դասերը, սակայն, չեն փարատում Լևոն Սարգսյանի սահմանադրական պատրանքները։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը նա համարում է ռուսական մեծ հեղափոխության առաջին մեծ հաղթանակը։ Ռուսաստանում կատարվող բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակը նա պայմանավորում է Սահմանադիր ժողովի գումարումով, առանց ցարական կառավարության տապալման պահանջի. «որքան շուտ հրավիրվի Սահմանադիր ժողով՝ այնքան հեշտ կլինի վերջացնել հեղափոխությունը և սկսել նոր կյանքի ստեղծագործական աշխատանքը»[40]։

Քննադատելով մենշևիկյան դիրքորոշումը Սահմանադիր ժողովի հարցում, Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք նույն սխալն են անում, ինչ լիբերալները, որոնք «Ֆրազաբանում են «սահմանադիր» ժողովի մասին,

---

39 Նույն տեղում, էջ 255։

40 Նույն տեղում, էջ 258։

ամոթխածորեն աչքերը փակելով ուժն ու իշխանությունը ցարի ձեռքին պահելու հանդեպ, մոռանալով, որ «սահմանադրման» համար հարկավոր է սահմանադրման ուժ ունենալ»[41]*։ Վ. Ի. Լենինը ընդգծում է, որ փաստորեն մենշևիկյան «տակտիկական լոզունգները ճամբընկնում են «սահմանադրական-դեմոկրատականն» կուսակցության, այսինքն միապետական բուրժուազիայի կուսակցության լոզունգներին»*[42]*։ Լենինյան այս բնութագրումն անվերապահորեն կարելի է վերագրել նաև «Մուրճ» ամսագրին, Լայն ներկայացուցչական Սահմանադիր ժողովից էլ նա ակնկալում է այնպիսի սահմանադրության մշակում, որը կարտահայտեր Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների շահերը, վերջ կդներ ազգային ճնշումներին, և կիրականանար հայ ժողովրդի վաղեմի ձգտումը՝ խաղաղ ապրել «քրիստոնյա պաշտպան հզոր Ռուսաստանի» հովանու տակ։*

Սակայն ցարական մանիֆեստի սահմանած «ազատությունները» ոչ մի կերպ կյանքի չէին կոչվում։ Հուսախաբության դառը խոսքեր է ստիպված արձանագրել «Մուրճը». «Բյուրոկրատիան չար ու զառամյալ ներքինիի նման օր ու գիշեր հսկել է ռուս ժողովրդի համար ստեղծած հարեմ-բանտի վրա, որպեսզի ոչ մի ազատություն դրսից չբեղմնավորի նրան. և երբ, չնայած այդ բոլոր խստություններին, Ռուսաստանը սոսկալի երկունքներով ծնեց մի թուլլ ազատություն՝ այդ ներքինին գազազած վրա տվավ անպաշտպան մանուկի վրա և մահացու հարվածներ հասցրեց նրա գլխին...»[43]*։*

Այն, որ ցարական բյուրոկրատիան իր վայրագ գործողությունները արդարացնում էր «ծայրահեղ» կուսակցությունների վարքագծով, «Մուրճի» խմբագիրը համարում է պրովոկացիոն, բայց, պետք է նշել, որ նրա համակրությունները «ծայրահեղների» կողմը չեն։ Պատահական չպետք է համարել, որ իր քաղաքական դավանանքը պարզելու համար «Մուրճի» խմբագիրը դիմում է Պլեխանովի օգնությանը, մեջբերելով նրա հետևյալ խոսքերը. «Ժամանակակից գիտական սոցիալիզմի տեսակետից սոցիալիստական հեղաշրջման՝ իբրև Ռուսաստանի հեղափոխական շարժման ամենամերձավոր նպատակի մասին գրույցները, ինձ թվում են միանգամայն ու անպայման անհիմն։ Հեղափոխական շարժման ամենամերձավոր նպատակն է աբսոլյուտիզմի կործանումը, որ ապահովելով ռուս բանվորականության համար քաղաքական իրավունքներ և քաղաքական

---

41 Վ. Ի. Լենին, *նշվ. հ. 11, էջ 24։*

42 *Նույն տեղում, էջ 41։*

43 *«Մուրճ», 1906, № 1, էջ 165։*

ազատություն՝ կտա նրան լայն հնարավորություն աճել ու հասունանալ, զարգանալ և կազմակերպվել սոցիալիստական հեղափոխության համար։ Սոցիալիզմի հաղթանակը չի կարող կատարվել աբսոլյուտիզմի կործանման հետ միաժամանակ։ Այդ երկու մոմենտները (աբսոլյուտիզմի կործանումը և սոցիալիզմի հաղթանակը) անհրաժեշտորեն իրարից բաժանված են լինելու երկար ժամանակամիջոցով։ Եվ հենց այդ պատճառով, որ այդ մոմենտները իրարից բաժանված են ժամանակով, սոցիալ-դեմոկրատներն իրենց անհաշտ կռվում աբսոլյուտիզմի դեմ՝ կարող են լիակատար իրավունքով և բնավ չհակասելով իրենց՝ բոլորին ցույց տալ, ում հարկ կա գիտենալու և հասկանալու այդ, թե իրենց՝ սոցիալ-դեմոկրատների շահերը ներկայումս միանում են մեր հասարակության ազատամիտ մասի շահերի հետ»[44]։

1905 թ. հուլիսին լույս է տեսնում Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» աշխատությունը, որտեղ ջախջախիչ քննադատության են ենթարկված մենշևիկների օպորտունիստական տակտիկան և դոգմատիզմը բուրժուադեմոկրատական հեղափոխության կարևորագույն հարցերում։ Ելնելով Ռուսաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների գիտական վերլուծությունից, Վ. Ի. Լենինը տվեց կուսակցության III համագումարի մշակած բոլշևիկյան ստրատեգիայի և տակտիկայի տեսական հիմնավորումը, որը բոլոր արմատական հարցերում տրամագծորեն հակադրվում էր մենշևիկների ժնևյան կոնֆերանսի ծրագրին։ Ելնելով պատմական նոր իրադրության պայմաններից, Լենինը գտնում էր, որ Ռուսաստանում բուրժուադեմոկրատական հեղափոխության հեգեմոնը պետք է լինի պրոլետարիատը, հակառակ մենշևիկյան պնդումների, որոնք վերընթաց կապիտալիզմի շրջանի արևմտաեվրոպական բուրժուական հեղափոխությունների տրաֆարետով այդ դերը վերապահում էին միայն բուրժուազիային։ Ավելին. Վ. Ի. Լենինը գտնում էր, որ մենշևիկյան ղեկավարությունը ցարիզմի հետ գործարքի ձգտող բուրժուազիային, և իրեն դաշնակից ընտրելով հեղափոխության լիակատար հաղթանակով կենսականորեն շահագրգռված մյուս դասակարգին՝ գյուղացիությանը, պրոլետարիատը չպետք է բավարարվի միայն ցարիզմը տապալելով և բուրժուադեմոկրատական հեղափոխության խնդիրները լուծելով, այլ հրացանը մի ուսից մյուսը գցելով, հեղափոխության առաջին էտապից պետք է անցնի երկրորդին՝

---

44 Նույն տեղում, էջ 166։

սոցիալիստականին: Բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու լենինյան այս տեսակետի դեմ է, որ սկսեցին սուր ճոճել մենշևիկները, Պլեխանովը, դրա համար արժանանալով բուրժուական մամուլի ծափահարություններին: Վ. Ի. Լենինը ծաղրանքով նշում է, թե ինչպես կադետների «Օսվոբոժդենիե» ամսագիրը ոչ միայն ողջունում է մենշևիկյան տենդենցները, այլ ուղղակի նրանց ջրով պրատեցնում իր ջրաղացը, որդեգրում նրանց բոլոր բառիկներն ու «գաղափարիկները»[45]:

Լևոն Սարգսյանը չի բաժանում նաև բոլշևիկների տեսակետները գյուղացիության վերաբերյալ որպես հեղափոխության շարժիչ ուժի, որպես պրոլետարիատի միակ դաշնակցի՝ ինչպես ցարիզմի դեմ, այնպես էլ սոցիալիզմի համար մղված պայքարում: Նա, ինչպես և մենշևիկները, գյուղացիությունը դիտում է որպես հետադիմական ուժ, չի հավատում նրա սոցիալիստական գիտակցականությանը և հեղափոխականությանը: «Մուրճը» աննկարմիտ հայտարարում է. «Գյուղացին հող էր ուզում և բոլորովին անմասն էր քաղաքական այն ծրագրերին, որոնցով ոգևորված էին սոցիալ-դեմոկրատները. «հողից» դուրս գյուղացին չէր էլ հետաքրքրվում «զանազան ազատություններով»: Սպասել, որ դարերով խավարի և ճնշման տակ մեծացած ռուս մուժիկը հանկարծ տարվի սոցիալիստական գաղափարներով— միամտություն էր. նրա դժգոհությունը իր սոսկալի կացությունից միմիայն կարող էր տարերային խառնակ ձևեր ստանալ, «պուգաչովշչինայի» վերածվել»[46]:

Ե. Սարգսյանի ընդարձակ հոդվածաշարով՝ «Ագրարային հարցը և նրա լուծումը Ռուսաստանում», քննադատելով ագրարային հարցը «վերևվից» լուծելու միապետության անկարողությունը, ամսագիրը հաստատում է, որ շարունակ աճող սակավահողության գլխավոր պատճառը 1861 թ. ռեֆորմների թերի և անարդար օրենսդրությունն էր, որը հնարավոր չեղավ մեղմել ոչ գյուղացիական բանկերի միջոցով, ոչ էլ, մանավանդ, գյուղացիների մասսայական վերաբնակեցմամբ դեպի երկրի արևվելյան շրջանները. չկարողանալով հարմարվել նոր պայմաններին, գյուղացիների զգալի մասը ետ էր վերադառնում՝ լրիվ քայքայման ենթարկվելու հեռանկարով: Մեկ առ մեկ քննարկելով Ռուսաստանում գործող կուսակցությունների ագրարային ծրագրերն ու մերժելով և՛ էսէռական (հողի սոցիալիզացիայի), և՛ մենշևիկյան (հողի մունիցիպալիզացիայի),

---

45 Տե՛ս Վ. Ի. Լենին, նկ, հ. 11, էջ 121:

46 «Մուրճ», 1906, № 1, էջ 167:

և՛ բոլշևիկյան (հողի նացիոնալիզացիայի) առաջարկները, հեղինակը նախընտրելի է համարում կադետական ծրագիրը, որը Ռուսաստանում սկսված հեղափոխության պայմաններում իբր «առաջարկված ծրագրերից ամենամշակվածն է ու ամենաիրագործելին»[47]: Իրականում կադետների ծրագիրը հանգում էր մեկ անգամ արդեն ամենավնասակար դեր խաղացած և գյուղացիներին քայքայած կալվածատիրական հողերի օտարմանն ու փրկագնմանը[48]: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ «Մուրճի» խմբագիրը իր ուղղությունը «հիմնորեն» տարբեր էր գտնում կադետների ծրագրից, քանի որ ընդունում էր «արդյունաբերական գործիքների սոցիալիզացիան», ընտրողական իրավունք տարածում նաև կանանց վրա և կողմնակից էր «ժողովրդական ներկայացուցչական միապալատյան սիստեմին»[49]:

Վ. Ի. Լենինը քննադատության է ենթարկում մենշևիկների օպորտունիզմը նաև զինված ապստամբության հարցում, որոնք վախենում էին խրտնեցնել բուրժուազիային և դրանով իբր թուլացնել հեղափոխության թափը: Լենինը ցույց է տալիս, որ հունվարի 9-ի իրադարձություններով քաղաքացիական պատերազմը փաստորեն արդեն սկսված էր և պետքերը վայր դնել այդ պայմաններում, նշանակում է դավաճանել հեղափոխությանը: Զինված ապստամբության հարցին Վ. Ի. Լենինը շատ հստակ պատասխան է տալիս. «Սովորաբար ռեակցիոն դասակարգերը առաջինն իրենք են դիմում բռնության, քաղաքացիական պատերազմի, «օրակարգի մեջ են դնում սվինը», ինչպես արեց ռուսական ինքնակալությունը և սիստեմատիկաբար ու անշեղորեն, ամենուրեք և ամեն տեղ շարունակում է անել, սկսած հունվարի 9-ից: Իսկ քանի որ նման դրություն է ստեղծվել, քանի որ սվինն է իրոք կանգնել քաղաքական օրակարգի գլուխ, քանի որ ապստամբությունը դարձել է անհրաժեշտ ու անհետաձգելի,— այդ դեպքում սահմանադրական պատրանքներն ու պառլամենտարիզմի դպրոցական մարզանքները դառնում են հեղափոխության բուրժուական դավաճանության լոկ քողարկում»[50]:

«Մուրճը» կանգնած է ապստամբության հակառակորդների բանակում և իր տեսակետը դարձյալ «ամրապնդում է» Պլեխանովի հեղինա-

---

47 «Մուրճ», 1906, № 2, էջ 103, 112—113:

48 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 13, էջ 177:

49 Տե՛ս «Մուրճ», 1905, № 11—12, էջ 271:

50 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 11, էջ 155:

կությամբ, վկայակոչելով նրա այն խորհուրդները, թե զինված ապստամբության կոչը տակտիկական խենթություն է, ուղղակի հանցանք հեղափոխության առջև։

Անդրադառնալով դեկտեմբերյան իրադարձություններին, «Մուրճի» խմբագիրը գրում է. «Ռուսաստանի սիրտ՝ Մոսկվայի փողոցներում պատնեշների վրա արյունահեղ մարտի էին բռնված զորքերը հեղափոխական ռազմիկների հետ։ Ինդանտների բոմբյունը, գնդացիրների ճարճատյունը և հրայանների տրաքոցները տասն օր շարունակ լսվում էին վիբխարի քաղաքի զանազան մասերում։ Այդ անհավասար կռվի մեջ առաջին անգամն էր ռուս բանվորականությունը կազմակերպված ու զինված ընդդիմադրություն ցույց տալիս իր ձեռքով շինած պատնեշների վրա»[51]։ Հիացմունք հայտնելով բարիկադների վրա կռվող մարտիկների մասին, այդուհանդերձ, Լևոն Սարգսյանը զինված ապստամբությունը համարում է ի սկզբանե պարտության դատապարտված. «Նախօրոք պարզ էր իհարկե, որ այդ բուռն ըմբոստները պետք է պարտություն կրեին թվով և ռազմական տեխնիկայով գերազանց հակառակորդից։ Երբեք ազգաբնակության այս կամ այն չնչին մասի զինված ապստամբությունը դրական աջողությամբ չի պսակվել, մինչև որ զորքը հավատարիմ է մնացել գոյություն ունեցող ռեժիմին»[52]։

Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից «Մուրճը» այսպիսի եզրակացության է հանգում. «Զինված ապստամբությունը և քաղաքական գործադուլների փորձերը ցույց տվեցին այդ միջոցների դրականության ամբողջ ուտոպիզմը։ Այս կամ այն խմբի, այս կամ այն դասակարգի եղակի ջանքերով մղած հեղափոխությունները միշտ անհաջող վախճան են ստանում»[53]։

Տարբեր դասակարգերը, կուսակցությունները, հասարակական խմբերը ոչ միայն տարբեր ծրագրեր, ստրատեգիա ու տակտիկա են առաջադրում հեղափոխությունների ժամանակ, այլև տարբեր քաղաքական դասեր են առնում հեղափոխությունից։ Արմատապես տարաձայնվելով ապստամբության հարցում, բոլշևիկները և մենշևիկները քաղաքական տարբեր դասեր առան նրանից. «Հարկավոր չէր զենք վերցնել»,— հանդիմանաբար նետեց Պլեխանովը ապստամբությունից հետո. բոլշևիկները, ընդհակառակը, եկան այն եզրակացության, որ հարկավոր էր ավելի

---

51 «Մուրճ», 1906, № 1, էջ 170։

52 Նույն տեղում, էջ 171։

53 Նույն տեղում, էջ 172։

վճռականորեն ղենք վերցնել։ Բարձր գնահատելով Դեկտեմբերյան դինված ապստամբությունը և վերլուծելով նրա դրական կողմերն ու պարտության պատճառները, Վ. Ի. Լենինը կոչ էր անում բանվորներին ուսումնասիրել ապստամբության դասերը, դրանք սպասվող նոր մարտերում օգտագործելու համար։

Ո՞րն էր «Մուրճի» համար հեղափոխությունից առած քաղաքական դասը. նա մի անգամ ևս համոզվեց պառլամենտարիզմի՝ որպես հասարակական զարգացման իր համար միակ ընդունելի ճանապարհի նպատակահարմարության մեջ։ «Ոչ մի երկրում,— կարդում ենք «Մուրճում»,— պառլամենտական կարգով հանկարծակի, կատաստրոֆային հեղափոխություններ առաջ չեն եկել, որովհետև պառլամենտականությունը հենց այն հունն է, որ կանոնավոր ընթացք է տալիս մասսայի կյանքին, որը նման է մի հսկայական գետի հոսանքին։ Հզոր Վոլգան խաղաղ վեհությամբ թավալում է իր կոհակները, դուրս չգալով իր հունից և չենացնում իրան սահմանափակող ափերը»[54]։ Ահա «Մուրճի» խմբագրի հավատո հանգանակը. իր հունից դուրս չեկող, խաղաղ, էվոլյուցիոն զարգացում։ Իրեն «անկախ» հայտարարող Լևոն Սարգսյանը 1906 թ. առաջին համարի ներքին տեսությունն ավարտում է իր քաղաքական համոզմունքները լրիվ բացահայտող խոսքերով. «Պրոգրեսիվ բոլոր ուժերի դաշնակցություն՝ սահմանադրական կարգերը Ռուսաստանում հաստատելու նպատակով— ահա միացած ուժերի ընդհանուր դրոշակը»[55]։ Այս հարցում նախաձեռնությունը վերապահելով կադետներին, գտնում է, որ այդ կուսակցությունը ավելի ճիշտ կլինի բնորոշել «սոցիալ-էվոլյուցիոնիստական» անունով։ Ավելացնենք. այս անունը լիովին բնորոշում է նաև Լ. Սարգսյանի՝ դասակարգերի համերաշխ և խաղաղ համագործակցությունը ֆետիշացնող քաղաքական հայացքները։

Ցավալին այն էր, որ էվոլյուցիոնիզմը, բուրժուական սոցիոլոգիայի շրջանակները «հաղթահարելով», ներթափանցել էր նաև սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ, հարվածելով պրոլետարիատի հեղափոխական պայքարին։ Ահա ինչու բոլշևիկներն իրենց գաղափարական պայքարի ծանր հրետանին ուղղեցին նրա դեմ։ 1905 թ. Սմ. Շահումյանը գրեց իր «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» հայտնի հոդվածը, որի նպատակն էր պաշտպանել հեղափոխական

---

54 Նույն տեղում։

55 Նույն տեղում, էջ 173։

մարքսիզմը։ Հոդվածը քաղաքական դաս էր անդրկովկասյան «էվոլյուցիոնիստներին», որոնք եվրոպական ռեֆորմիստական ուսմունքների անհաջող էպիգոններ էին։ Էվոլյուցիոնիզմը ռևոլյուցիոնիզմին հակադրելու հակագիտական մոտեցումը Շահումյանը համարում է արդյունք «բիոլոգիական էվոլյուցիոնիզմի սխալ, միակողմանի ըմբռնման և զարգացման օրենքները հասուռն, ուղղագիծ կերպով բիոլոգիայի բնագավառից սոցիոլոգիայի բնագավառը տեղափոխելու»[56]։ Սոցիալ-դարվինիզմին այսպիսի տուրք էր տալիս նաև Լևոն Սարգսյանը։

«Մուրճի» խմբագիրն իրեն հայտարարում է անկախ բեռնշտայնական, անսքող համակրանք դրսևորելով Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության աջ օպորտունիստական թևի պարագլուխ Էդ. Բեռնշտայնի նկատմամբ, որը հավակնում էր ռևիզիայի ենթարկել մարքսիզմը և այն նենդափոխել սոցիալ-ռեֆորմիզմով։ Շահումյանը գրում է. «Բեռնշտայնը և նրա ետևից Զոմբարտը և սոցիալիստական ու բուրժուական այլ գիտնականների մի ամբողջ պլեադա, որոնք իրենց հայտարարում են «պատմության մատերիալիստական ըմբռնման» կողմնակիցներ, ոչ մի կերպ չեն կարողանում համատեղել «էվոլյուցիոնիզմը»... «սոցիալիստական հեղափոխության» հետ, որն իր նպատակն է համարում և որով որոշում է իր գործունեությունը միջազգային սոցիալ-դեմոկրատիան։ Այդ հեղափոխությունը մարքսիզմի թեորիայում և պրակտիկայում նրանք համարում են «օտարոտի տարր», «կցորդներ» և սոցիալ-դեմոկրատիային խորհուրդ են տալիս դեն գցել ամեն տեսակ «հեղափոխական ուտոպիանները» և դառնալ խաղաղ, ռեֆորմիստական, «էվոլյուցիոն» կուսակցություն»[57]։ Շահումյանի այս քննադատությունը լիովին կարելի է հասցեագրել «Մուրճի» խմբագրին։

Դեկտեմբերյան զինված ապստամբությունից հետո սկսվեց հեղափոխության վայրէջքը։ «Խիզախ ճակատամարտերի մեջ ջախջախվեց ռուսաց հեղափոխության «ավանդարդը»,— գրում է «Մուրճը»,— և ռեակցիան սանձարձակ բարբարոսությամբ սկսեց տոնել իր հաղթանակը»[58]։ «Մուրճը» շտապում է իր եղրակացությունների մեջ, կարծելով, թե բանվոր դասակարգի զեկավար կուսակցությունը քաղաքական ասպարեզից դուրս է դրվել։ Նա նույնիսկ փորձում է բացատրել իր ընթերցողներին այդ

56 Ստ. Շահումյան, *երկ*, հ. 1, էջ 122։

57 Նույն տեղում, էջ 123։

58 «Մուրճ», 1906, № 3, էջ 113։

պարտության պատճառները. «Ռուս հեղափոխության «ավանդարդը»՝ սոցիալ-դեմոկրատիան, իր իդեալական ոգևորության մեջ մոռացավ այն ռեալ հողը, այն մատերիալիստական տեսակետը, որ նրա աշխարհայացքի հիմքն էր կազմում, և կարծեց թե դարերի ընթացքում դանդաղորեն զարգացած հեղափոխության առաջին ծնունդը կարող է այլ բան տալ, քան լավագույն դեպքում բուրժուական-դեմոկրատիական սահմանադրություն։ Նա մոռացավ, որ տասնյակ տարիների անդուլ աշխատանք է պահանջվում, որպեսզի ուժերի իրական հարաբերությունները փոփոխվեն և առաջանա երկրորդ ծնունդը— դեմոկրատիայի ավելի կատարյալ տիրապետությունը։ Նրանք մոռացան, որ լոկ կամքը, հաճույքը, մի խումբ դավադիրների գինված ապստամբությունը նույնքան անզոր են այդ դեպքում, որքան բռնի միջոցները՝ ստիպելու որ ծննդկան կինը երկունքից հետո իսկույն լույս աշխարհ հանի ճնշման տակ երկրորդ մանուկը»[59]։

Դժվար չէ նկատել, որ «Մուրճն» իր հարվածն ուղղում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու լենինյան տեսության դեմ և օգտվում մենշևիկյան տեսական զինանոցից։ Մենշևիկները, ինչպես և II ինտերնացիոնալի օպորտունիստական տարրերը, գտնում էին, որ դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների միջև անխուսափելիորեն ընկած է մի երկարատև ընդմիջում, որ պրոլետարիատը կարող է հաղթել միայն այն ժամանակ, երբ կկազմի ազգի մեծամասնությունը։ Լինելով պերմանենտ հեղափոխության կողմնակից, Լենինը երբեք խնդիր չի դրել մի երկունքով երկու զավակ ծնել, այլ դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունները դիտել է իբրև հաջորդական փուլեր, ընդ որում «որքան ավելի լիակատար և վճռական, որքան ավելի հետևողական լինի բուրժուական հեղափոխությունը, այնքան ավելի ապահովված կլինի պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի դեմ՝ հանուն սոցիալիզմի»[60]։ Լենինը խստագույնս դատապարտել է կուսակցության մաքսիմում ծրագիրն անհապաղ իրականացնելու կիսաանարխիստական պահանջները, բացատրելով, որ «Ռուսաստանի տնտեսական զարգացման աստիճանը (օբյեկտիվ պայման) և պրոլետարիատի լայն մասսաների գիտակցականության ու կազմակերպվածության աստիճանը (սուբյեկտիվ պայման, որ անխղելիորեն կապված է օբյեկտիվ պայմանի հետ) անհնարին են դարձնում բանվոր

59 Նույն տեղում։

60 Վ. Ի. Լենին, երկ, հ. 11, էջ 46։

դասակարգի անհապաղ լիակատար ազատագրումը։ Միայն ամենատգետ մարդիկ կարող են անտեսել կատարվող դեմոկրատական հեղաշրջման բուրժուական բնույթը. միայն ամենամիամիտ լավատեսները կարող են մոռանալ, թե բանվորների մասսան տակավին որքան քիչ բան գիտե սոցիալիզմի նպատակների և նրա իրականացման եղանակների մասին։ Իսկ մենք բոլորս համոզված ենք, որ բանվորների ազատագրումը կարող է լոկ իրենց՝ բանվորների գործը լինել. առանց մասսաների գիտակցականության ու կազմակերպվածության, առանց նրանց նախապատրաստելու և ամբողջ բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային բացահայտ պայքարի միջոցով դաստիարակելու՝ սոցիալիստական հեղափոխության մասին խոսք անգամ լինել չի կարող»[61]։ Ահա ինչպես է դնում Վ. Ի. Լենինը երկու հեղափոխությունների հաջորդափոխության հարցը։ Նա մերժում է և՛ անարխիստական բունտարարությունը, և՛ մենշևիկյան պոչականությունը։

Լևոն Սարգսյանի պառլամենտական պատրանքներն իրենց գագաթնակետին հասան առաջին Պետական դումայի բացման շրջանում։ Ահա ինչ է գրում նա իր հերթական ներքին տեսությունում. «Անցած ամսում ոչ միայն Ռուսաստանի, այլև համաշխարհային ամենամեծ անցքը Պետական Դումայի բացումն է։ Այնքան դարերի ծով տանջանքներից և հերոսական ջանքերից հետո ռուս ժողովուրդը իր ընտրած ներկայացուցիչների ձեռքն է հանձնում ինքնակալ-բյուրոկրատիայի ձեռքից խլած իշխանությունը. ժողովրդի դերիշխանության դա առաջին քայլն է։ Ապրիլի 27-ի պատմական օրից հետադարձ չկա, այլ միայն նոր քայլեր դեպի առաջ, մինչև դեմոկրատիայի և սոցիալական արդարության վերջնական հաղթանակը»[62]։ Այսպես բուրժուազիայի շահերը նույնացվում են ժողովրդի շահերի հետ, ցարական ինքնակալության հետ գործարքի պատրաստ ռուսական բուրժուազիան ներկայացվում է որպես դեմոկրատիայի պաշտպան։ Անկեղծ մոլորությունը մեկ անգամ չէ, որ Լևոն Սարգսյանին կանգնեցնում է քաղաքական սխալների առջև։

Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է կադետների քաղաքական դիմագծի պարզաբանմանը. «Սկսած 1906 թվականից, մենք հարյուրավոր և հազարավոր անգամ պարզաբանել ենք, որ կադետները դեմոկրատ-

---

61 Նույն տեղում, էջ 18—19։

62 «Մուրճ», 1906, № 6, էջ 138։

ներ չեն, այլ լիբերալ-միապետական բուրժուազիա»[63]։ Լենինը բացահայտել է այդ կուսակցության կեղծավոր դեմոկրատիզմը. «Կադետները, իրենց դեմոկրատ անվանելով, խաբում են իրենց և խաբում են ժողովրդին։ Իրականում կադետները հակահեղափոխական լիբերալներ են»[64]։ Այս դիմազերծումը անհրաժեշտ է, որովհետև, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, XX դարի առաջին տասնամյակում լայն մասսաները բավականաչափ գիտակից չլինելով, չէին տարբերում լիբերալիզմը դեմոկրատիզմից[65]։ Քաղաքական հստակ չափանիշներ չունենալով, այդպիսի մոլորության մեջ է գցում իր ընթերցողներին նաև «Մուրճը»։ Լ. Սարգսյանը ևս կադետներին համարում էր դեմոկրատական և ոչ թե բուրժուական կուսակցություն, չըմբռնելով, որ «ժողովրդի ազատության կուսակցություն» հորջորջումը «ժողովուրդ» բառի բուրժուական սովորական չարարիություն էր։

Պատահական չէ, որ «Մուրճը» ողջունում է բանվորներին ուղղված Պլեխանովի նամակը, որտեղ կոչ էր արվում ամբողջ ուժերով պաշտպանել Դուման։ Բոլշևիկները նշավակեցին Պլեխանովի օպորտունիստական ելույթը։ Ստ. Շահումյանը «Կայծ» թերթում առանձին հոդվածով անդրադարձավ Պլեխանովի նամակին, գրելով. «Պլեխանովը ցույց տվեց իր տխուր օրինակով, որ կարելի է լինել շատ լավ թեորետիկ, բայց անընդունակ գտնվել բաղաքական ղեկավար լինելու կուսակցության համար՝ նրա ակտիվ գործունեության ժամանակ, որ կարելի է օրթոդոքս հեղափոխական մարքսիստ լինել տեսական հարցերում, բայց շնորհիվ իրական թյուր ըմբռնման, ծայրահեղ օպորտունիստ դառնալ տակտիկայի մեջ։

Կարելի է զինված լինել պրոլետարիատին ծառայելու շատ բարի ցանկությունով, բայց դիմել նրան այնպիսի խորհուրդներով, որոնք ոգևորություն ու ցնծություն են առաջացնում միմիայն պրոլետարիատի թշնամիների բանակում»[66]։

«Մուրճի» խմբագրին ակներև դուր չի գալիս «ծայրահեղ ձախակողմյան ջահելների» քննադատությունը Դումայի հասցեին, սխալ է համարում նրանց կողմից այն բոյկոտելը։ Բանն այն է, որ առաջին Դումայի բոյկոտումը հեղափոխության վայրէջքի շրջանում, բոլշևիկները իրենք ևս սխալ

---

63 Վ. Ի. Լենին, *երկ*, հ. *21*, էջ *575*։

64 Նույն տեղում, էջ *336*։

65 Տե՛ս նույն տեղում։

66 Ստ. Շահումյան, *երկ*, հ. *1*, էջ *194*։

համարեցին։ Սակայն սեփական սխալի քննադատության և կողմնակի քննադատության միջև էական տարբերություն կար։ Ամբողջ հարցն այն է, թե ինչպիսի նշանակություն է տրվում Դումային։ Բոլշևիկների համար Դուման պարզապես մի ամբիոն էր, որտեղից կարելի էր մերկացնել ինչպես ցարական ինքնակալության հակաժողովրդական քաղաքականությունը, այնպես էլ ռուսական բուրժուազիայի դավաճանական և երկերեսանի գործելակերպը, և հեղափոխական պրոպագանդ մղել։ Իսկ մենշևիկների համար այն հեղափոխական ուժերի «համախմբման կենտրոն» էր։ Ցարիզմի այդ անզոր հավելուկով նրանք կեղծ հույսեր էին սերմանում ժողովրդի մեջ առանց հեղափոխության, սահմանադրական ճանապարհով ազատություն նվաճելու հնարավորության վերաբերյալ։ Այդպիսի հույսեր էր սերմանում իր ընթերցողների մեջ նաև «Մուրճ» ամսագիրը։

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի տարեդարձի առթիվ ամսագիրը գրում է. «Մի տարվա հեղափոխական կյանքը ավելի մեծ ծառայություն ցույց տվեց ժողովրդի հասունության գործին, քան տասնյակ տարիների սովորական կերպով ընթացող առաջխաղացումը»[67]։ Իրավացի միտք է, որ հեղափոխությունը թռիչք է առաջացնում մասսաների գիտակցության մեջ, սակայն ամեն մի դասակարգ, ամեն մի կուսակցություն իր ձևով է դասեր քաղում հեղափոխությունից։ Լևոն Սարգսյանի քաղած դասն այն է, որ Ռուսաստանին պետք է անարյուն, խաղաղ հեղափոխություն։ Նա կշտամբանք է ևետում ձախակողմյաններին. «Հեղափոխությունը տվավ այն, ինչ կարող էր տալ. սակայն ամենաճայրահեղ ջահելների հեղափոխական ռոմանտիզմը իր բուռն ոգևորության մեջ չափից վեր գնահատեց իր ուժերը և կարծեց թե ռուս հեղափոխությունը պետք է փոխի գիտական սոցիալիզմի պարզած էվոլյուցիոնական ճանապարհը և մի թռիչքով, մի հարվածով քաղաքական հեղափոխությունը դարձնի և սոցիալիստական»[68]։ Այսպիսով, «գիտական սոցիալիզմ» ասելով Լևոն Սարգսյանը հասկանում է էվոլյուցիոնիզմ, և ամսագրի էջերում նրա քարոզած «մարքսիզմը» լիովին ամլացված էր և ազատագրված իր բուն էությունը կազմող հեղափոխական ոգուց։

Լևոն Սարգսյանի համակրանքը ուղղված է դեպի «գիտական սոցիալիզմի ժայռանման հիմքերի վրա դրված սոցիալ-դեմոկրատիայի այն մասը, որի լիդերը (ղեկավարը) կարող է համարվել Պլեխանովը։ Այդ մեն-

67 «Մուրճ», 1906, № 9, էջ 160։
68 «Մուրճ», 1906, № 10, էջ 148։

շևիկները իրենց մշակած ծրագրով և ունալ տակտիկայով ամենից շատ են մոտենում գերմանական տիպի սոցիալ-դեմոկրատներին»[69]: Դիտելի է, որ Լևոն Սարգսյանը գերմանական սոցիալ-դեմոկրատներին շարունակ չափանիշ է դարձնում իր քաղաքական գնահատությունների ժամանակ· Վ. Ի. Լենինը մեկ անգամ չէ, որ նշել է, թե մենշևիկները և II Ինտերնացիոնալի օպորտունիստները միջազգային բանվորական շարժման ներսում նույն աղանդի կրողներն են, բուրժուական ազդեցության տարածողները պրոլետարական շարժման մեջ: Լ. Սարգսյանը ակամա խոստովանում է նրանց «ազգակցական» կապը:

Ուշադրության արժանի են այն զուգահեռները, որ անց է կացնում «Մուրճի» խմբագիրը կադետների և սոցիալ-դեմոկրատների միջև. «Երկրորդ Դումայի ընդդիմադիր կուսակցություններից իրենց ծրագրային հետևողականությամբ և մաքառող ուժերի կորովով դարձյալ աչքի են ընկնում կոնստիտուցիոն-դեմոկրատները և սոցիալ-դեմոկրատները, մեկը իբրև էվոլյուցիոն դեմոկրատիզմի, իսկ մյուսը հեղափոխական դեմոկրատիզմի ներկայացուցչություն, մեկը իբրև բուրժուական (մասնավոր սեփականության) կարգերում իրագործելի արմատականության ներկայացուցչություն, իսկ մյուսը իբրև լավագույն ապագայի՝ սոցիալիզմի իդեալների համար սոցիոլոգիական գիտության վրա հիմնված մարտնչող մի ավանգարդ. կոնստիտուցիոն-դեմոկրատները և սոցիալ-դեմոկրատները կյանքի մեջ իրար լրացնող հոսանքներ են...»[70]: Նկատենք, «իրար լրացնող» և ոչ թե հակադիր: Ցավոք, Լ. Սարգսյանը սոցիալ-դեմոկրատների մասին դատում է նրա օպորտունիստական՝ մենշևիկյան թևի ծրագրերով, և այս զուգահեռներն էլ պատահական չպետք է համարել: Շփոթության մեջ ընկնելով, Լ. Սարգսյանը ակամա խոստովանում է ճշմարտությունը: Այստեղ տեղին է հիշել «երկու տակտիկայի» վերջաբանը, որը Վ. Ի. Լենինը խոսուն կերպով վերնագրել է «Ինչի համար են զովում բուրժուական-լիբերալ ռեալիստները սոցիալ-դեմոկրատական «ռեալիստներին»: Բանն այն է, որ Ռուսաստանի բանվորական կուսակցության պառակտումը քննարկման նյութ էր դարձել բուրժուական մամուլում: Թեև այդ մամուլը, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, գոդավոր կամ ուռուցիկ հայելու նման էր արտացոլում սոցիալ-դեմոկրատիայի հայացքները, բայց հատկանշական է, որ նրանում ճշտու-

69 «Մուրճ», 1907, № 2, էջ 121:

70 «Մուրճ», 1907, № 3, էջ 142:

թյամբ էին արտացոլված իր իսկ՝ բուրժուազիայի իսկական շահերը, որն իբրև դասակարգ ճիշտ էր ըմբռնում, թե սոցիալ-դեմոկրատիայի երկու հոսանքներից որն է իրեն շահավետ, հարազատ, համակրելի, որը՝ վնասակար, խորթ ու հակակրելի։ Ի՞նչ է ասում ռուսաստանյան բուրժուազիայի դասակարգային բնազդը. նա իր գոհունակությունն է արտահայտում մենշևիկների նկատմամբ, գովելով նրանց ռեալիզմի, զգաստության, առողջ բանականության, գործնականության և այլնի համար, և դժգոհությունը՝ բոլշևիկների նկատմամբ, պարսավելով նրանց նեղմտության, հեղափոխականության, խռովարարության, գործնականորեն օգտավետ կոմպրոմիսները ժխտելու և այլնի համար։ «Բուրժուազիայի դասակարգային բնազդը,— շարունակում է Վ. Ի. Լենինը,— նրան թելադրում է հենց այն, ինչ ամենաճշգրիտ տվյալներով բազմիցս ապացուցված է եղել մեր գրականության մեջ, այսինքն՝ որ նոր իսկրայականները ներկայացնում են ժամանակակից ռուսական սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական թևը, իսկ նրանց հակառակորդները՝ հեղափոխական թևը։ Լիբերալները չեն կարող չհամակրել առաջինի տենդենցները, չեն կարող չպարսավել երկրորդի տենդենցները»[71]։ Ահա մոտավորապես նույն երևույթին, հանձին «Մուրճ» ամսագրի, մենք ականատես ենք հայ իրականության մեջ. նա ևս, առավել կամ պակաս չափով, գովաբանում է մենշևիկների ռեալականությունը, զգաստությունը, շրջահայացությունը և, ընդհակառակը, պարսավում բոլշևիկների «անհամբերողությունը», «կուսակցամոլությունը», «բունտարարությունը»։

«Դեմոկրատիզմի յուրաքանչյուր հաղթանակ ստեղծում է նոր նպաստավոր պայմաններ սոցիալիզմի առաջխաղաց ընթացքի համար, տալիս է հնարավորություն բացարձակորեն կազմակերպելու, թվով և գիտակցությամբ ամրապնդելու պրոլետարիատի բանակը, որը միակ անկեղծ մարտնչողն էր սոցիալիզմի թագավորության մեջ։ Առանց կապիտալիզմի չկա պրոլետարիատ, առանց գիտակից պրոլետարիատի չկա սոցիալիզմի գալուստ»[72],— այսպես է գրում Լ. Սարգսյանը «Մուրճի» վերջին համարում, անկեղծորեն հավատալով և իրեն ներկայացնելով որպես սոցիալիզմի կողմնակից։ Սակայն սա այն սոցիալիզմն է, որը խաղաղ ճանապարհով իր դիրքերը պիտի հաստատեր կապիտալիստական հասարակարգի ընդերքում։

---

71 Վ. Ի. Լենին, երկ, հ. 11, էջ 136։

72 «Մուրճ», 1907, № 3, էջ 142—143։

«Մուրճի» քաղաքական դիմագիծն ամբողջացնելու համար հարկ է ներքին տեսություններից բացի անդրադառնալ մի քանի հրապարակախոսական հոդվածների ևս, որոնք շոշափում են ժամանակի քաղաքական կյանքի կարևոր հարցեր։ Այդ հոդվածների մեջ պետք է առանձնացնել Ստ. Շահումյանի «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» հոդվածը։ Այն առանձնանում-անջատվում է «Մուրճի» հրապարակախոսության ընդհանուր ֆոնի վրա, աններդաշնակություն ստեղծելով ռեֆորմիզմով ներծծված ամսագրի քաղաքական ուղղության մեջ։ Ջմոռանանք, որ հոդվածը տպագրվել է հեղափոխության վերելքի շրջանում, երբ լեգալ մամուլը դեմ չէր ցուցադրել իր ընդդիմադրությունը, համարձակախոսությունը և «օբյեկտիվիզմը»։ Հետաքրքրականն այն է, որ Ստ. Շահումյանի այս հոդվածը գրվել է հենց այն դաղափարական մթայնության դեմ՝ և՛ բուրժուական, և՛ սոցիալիստական գրականության մեջ, որը հակված էր համահարթելու դասակարգային հակամարտությունները կապիտալիստական հասարակության մեջ և պատրանքներ սերմանելու խաղաղ պայքարի ճանապարհով ժողովրդի համար «երկրային դրախտ» ստեղծելու հնարավորության վերաբերյալ։ Նման գաղափարախոսությունը հատուկ էր «Մուրճին», ուրեմն, Շահումյանի հոդվածն էլ պետք է դիտել որպես հենց «Մուրճի» տեսակետների քննադատություն։

Շարադրելով մարքսիզմի ընդհանուր դրույթները դասակարգերի և դասակարգային կռվի վերաբերյալ սեփականատիրական հասարակարգերում, Շահումյանը գլխավորապես ծանրանում է կապիտալիստական հասարակարգի, նրա երկու հիմնական դասակարգերի փոխհարաբերության և առկա վիճակի հարցերի վրա։ «Ամեն տեղ մենք տեսնում ենք,— գրում է նա,— որ սեփականատեր դասակարգերը անսահման իշխում են պրոլետարիատի վրա։ Ամեն տեղ պետական մարմինները, ամբողջ օրենսդրությունը, բոլոր հասարակական-իրավական հիմնարկությունները ծառայում են բուրժուազիայի ձեռքին իբրև գենք՝ նվիրագործելու մասնավոր սեփականության «սրբազան» ու «անձեռնմխելի» իրավունքը, ամրացնելու և հավերժացնելու կապիտալիստական շահագործման հրեշավոր հիմունքները»[73]։ Յույց տալով այն հսկայական վիհը, որ գոյացել է եվրոպական հասարակության երկու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, Շահումյանն իր քննադատական խոսքն ուղղում է նրանց դեմ, ովքեր աչք են փակում դասակարգային

---

73 «Մուրճ», 1905, № 6, էջ 52—53։

կովի իրողության առջև, քարոզում դասակարգերի համերաշխություն. «Բուրժուական գիտնականներից շատերը և մինչև անգամ պրոլետարիատի իդեոլոգներից ոմանք, Բերնշտեյն և ընկ., վերջին ժամանակներս շատ լավատես են դարձել պրոլետարիատի դրության վերաբերմամբ։ Ոչ ոք նրանցից չի ուրանում իհարկե, որ այդ դրությունը սարսափելի է ներկայումս, բայց ասում են, քանի գնում նա նկատելի կերպով լավանում է»[74]։

Իր հոդվածն ուղղելով այն ժամանակ սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման համար գլխավոր վտանգ ներկայացնող օպորտունիստական ուղղության դեմ, որը փորձում էր ռևիզիայի ենթարկել պրոլետարիատի դասակարգային պայքարի և սոցիալիստական հեղափոխության վերաբերյալ Մարքսի ուսմունքը, Շահումյանը ցույց է տալիս, որ տնտեսական, պրոֆեսիոնալ պայքարով շատ չնչին չափով կարելի է բարելավել բանվոր դասակարգի դրությունը։

Հոդվածի տրամաբանական կառուցվածքն ասես թելադրում է, թե հիմա հեղինակը պետք է խոսի պայքարի այն եղանակների ու միջոցների մասին, որոնք, նրա կարծիքով, պրոլետարիատին կարող են բերել իսկական ազատագրություն, բայց նա ստիպված է ընթերցողներին խոստովանել՝ «Թե որոնք են այդ փրկարար գենքերը, այս մասին մենք չենք կարող խոսել ներկա հոդվածում»[75]։ Հասկանալի է, «Մուրճը» նման հարցերի քննարկման համար հարմար օրգան չէր։

Դրա փոխարեն ամսագրի էջերը տրամադրվում են, խմբագրի ծանոթագրությամբ, «տաղանդավոր հրապարակախոս և հայտնի քաղաքական գործիչ» Էդ. Բեռնշտայնին, նրա «Ընդհանուր քաղաքական գործադուլը և հեղափոխական ռոմանտիզմ» հոդվածը արտատպելով գերմանական ամսագրից։ Հատկանշականը ոչ միայն և ոչ այնքան հոդվածի արտատպության փաստն է, որքան բուն հարցադրումը։ Հոդվածը նվիրված է ռուսական առաջին հեղափոխության փորձին։ Չկարողանալով ուրանալ ռուսական հեղափոխության հսկայական ազդեցությունը միջազգային բանվորական շարժման վրա, ռևիզիոնիստ Բեռնշտայնը ճիգեր է թափում նսեմացնելու նրա համաշխարհային-պատմական նշանակությունը, որպեսզի հասնի իր գլխավոր նպատակին՝ ռուսական հեղափոխության փորձը այլ երկրների համար անընդունելի հայտարարելուն։

---

74 Նույն տեղում, էջ 112։

75 Նույն տեղում։

Բեռնշտայնը հատկապես փորձում է նսեմացնել «բոլոր ընդունված ավանդույթներին» հակառակ գնացող ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխության պայքարի պրոլետարական հզոր միջոցի՝ մասսայական քաղաքական գործադուլի նշանակությունը և դերը. «Քաղաքական գործադուլը,— ասում է նա,— Ռուսաստանում դառել է համարյա առօրյա երևույթ, բայց դրա հետ միասին թուլանում է և նրա աղդեցությունը։ Պոլիտիկայի մեջ ամեն բան մաշվում է, ամենասրածայր նիզակներն էլ ժամանակի հետ բթանում են»[76]։ Դեկտեմբերյան զինված ապստամբության կրակոցները դեռ հնչում էին մարդկանց ականջներում, իսկ Բեռնշտայնը շտապում է դրանք արդեն անախրոնիզմ հայտարարել, իսկ ամբողջ Ռուսաստանն ընդգրկած մասսայական քաղաքական գործադուլները, որոնք ցույց տվեցին պրոլետարիատի հզորությունը որպես ինքնակալության դեմ մղվող համաժողովրդական պայքարի ղեկավարի, Բեռնշտայնը դիտում է ոչ թե «իբրև չափանիշ բանվորական դասակարգի սեփական ուժերի, այլ ավելի շուտ միայն նշան մյուս դասակարգերի և կառավարական իշխանության ժամանակավոր թուլության և անվճռականության»[77]։ Ապա «հենվելով» Գերմանիայի «առանձնահատուկ», ռուսականից տարբեր, պատմական պայմանների վրա, նա ժխտում է ռուսական փորձի կիրառելիությունը այլ երկրների համար, իսկ քաղաքական գործադուլները համարում դատապարտելի ու կորստաբեր։ Դրա փոխարեն ի՞նչ է առաջարկում Բեռնշտայնը. «Պառլամենտարիզմը տնտեսապես առաջադիմող հասարակություններում... ամենաուղիղ միջոցն է՝ առանց արյունահեղության, խնայելով կյանքը, առաջացնել հեղաշրջում... Պառլամենտի համար և պառլամենտում կռիվը— դա օրինական ձևերի մեջ պատրիակված ու մեր կուլտուրական հասկացողություններին համապատասխանող անդադրում օրգանական հեղափոխություն է, նա ամենաբարձր ձևն է դասակարգային կռվի»[78]։

Բացահայտելով բեռնշտայնականության՝ որպես միջապգային օպորտունիզմի, սոցիալական արմատները, Վ. Ի. Լենինը մերկացնում է նրա գաղափարական ամբողջ «մարսողը», ըստ որի ժխտվում էր լիբերալիզմի և սոցիալիզմի սկզբունքային հակադրությունը, դասակարգային պայքարի տեսությունը, նպատակ ունենալով սոցիալ-դեմոկրատիան սոցիա-

---

76 «Մուրճ», 1906, № 1, էջ 137։

77 Նույն տեղում, էջ 138։

78 Նույն տեղում, էջ 143։

լական հեղափոխության կուսակցությունից վերածել սոցիալական ռեֆորմների դեմոկրատական կուսակցության։ Ռուսաստանի, նաև նրա կազմի մեջ մտնող հայ ժողովրդի, ազատագրության հարցերը սոցիալական ռեֆորմների դեմոկրատական ուղիով լուծելու հնարավորություն էր փայփայում նաև «Մուրճի» խմբագիրը։ Սա է բեռնշտայնականության նկատմամբ նրա համակրության գաղափարական արմատը։ Թվարկելով միջազգային օպորտունիզմի ազգային տարատեսակները, Վ. Ի. Լենինը նշում է, որ «այս բոլորը մի ընտանիք է, նրանք բոլորը գովում են միմյանց, սովորում միմյանցից և միասնաբար պայքարի ելնում «դոգմատիկ» մարքսիզմի դեմ»[79]։ Լ. Սարգսյանն էլ գովում է Բեռնշտայնին, սովորում նրանից և, ուզում է այդ թե ոչ, կանդնում մարքսիստներին հակառակ բանակում։

Հետաքրքիր է նաև մեկ այլ արտատպություն, որ կատարել է «Մուրճը» մոսկովյան «Սովրեմեննայա ժիզն» ամսագրից։ Հոդվածը կրում է «Ռուսական հեղափոխության և մերձավոր գործելակերպի մասին եվրոպական սոցիալիստների կարծիքները» վերնագիրը։ Ուշադրության արժանի է «Մուրճի» խմբագրի հայտարարությունը հոդվածի սկզբում. «Մոսկվայում հրատարակվող «Սովրեմեննայա ժիզն» ամսագրի խմբագրությունը անցյալ տարվա վերջերում դիմել էր Արևմտյան Եվրոպայի ականավոր սոցիալիստներին, խնդրելով կարծիք հայտնել ռուսական հեղափոխության բնույթի և սոցիալ-դեմոկրատների բռնելիք գործելակերպի մասին։ ...Այդ նույն հարցերի մասին մենք ևս փորձել ենք հեղափոխության հենց առաջին ամիսներից ձևակերպել մեր տեսակետները։ Համեմատելով մեր ասածները եվրոպական սոցիալիստների հայտնած մտքերի հետ, գտնում ենք, որ ըստ էության մեր պաշտպանած տեսակետները հեղափոխության բնույթի և գործելակերպի մասին նույնն են եղել»[80]։

«Եվրոպական սոցիալիստներ» ընդհանուր պիտակի տակ դրված գործիչների կազմը միատարր չէ. այստեղ հանդիպում ենք միջազգային բանվորական շարժման այնպիսի ականավոր գործիչների անունների, ինչպիսիք են՝ Պոլ Լաֆարգը, Ժյուլ Գեդը, Հարի Կվելչը, և նրանց կողքին նաև միջազգային օպորտունիզմի ու revիզիոնիզմի աչքի ընկնող գաղափարախոսների անուններ, ինչպիսիք են՝ Ֆիլիպ Տուրատին, Էնրիկո Ֆերրին, Էմիլ Վանդերվելդեն և ուրիշներ։ Ո՞րն է եղել հայ խմբագրի

79 Վ. Ի. Լենին, եվժ, հ. 6, էջ 8։

80 «Մուրճ», 1907, № 1, էջ 121։

համար հոդվածը արտատպելու «գայթակղության քարը». կարծիքների մեծամասնությունը բացառում է Ռուսաստանի նման հետամնաց մանր-բուրժուական երկրում սոցիալիստական հեղափոխության հնարավորությունը, տվյալ պահին նրա համար բավարար գտնելով միայն բուրժուադեմոկրատական հեղափոխությունը՝ բուրժուազիայի ղեկավարությամբ. ռուսական սոցիալ դեմոկրատիային կոչ է արվում կոմպրոմիսի մեջ մտնել բուրժուական ընդդիմադիր ուժերի հետ ինքնակալության դեմ համատեղ կռվելու համար, ոչ թե բոյկոտել, այլ պաշտպանել Պետական դուման: Սա իրոք հենց այն էր, ինչ քարոզել էր «Մուրճը» հեղափոխական իրադարձությունների ամբողջ ընթացքում: Ոգևորվելով իր «հեղինակավոր» համախոհների կարծիքներով, Լ. Սարգսյանը հոդվածն ավարտում է այսպիսի վերջաբանով. «Բերելով այս քաղվածքները, մենք կցանկանայինք, որ այս կարծիքները դաստիարակող ազդեցություն ունենային մեր այն սոցիալ-դեմոկրատների վրա, որոնք իրենց մտածողությամբ և տեմպերամենտով ավելի շուտ դավադիր-հեղափոխականներ և անարխիստներ են, քան Մարքսի աշակերտներ»[81]:

Դժվար չէ նկատել, թե ում բանջարանոցն է քար նետում Լ. Սարգսյանը: Բոլշևիկների հասցեին սրանք հերթապահ հանդիմանություններ էին, որ կրկնում էին և՛ բուրժուական գործիչները, և՛ մենշևիկները, և՛ ամեն գույնի օպորտունիստներն ու ռեֆորմիստները: Եվ հետաքրքիրն այն է, որ Լ. Սարգսյանը «Մուրճի» հենց նույն համարի շապկին նկարել էր տվել մի կողմում Դարվինի, մյուս կողմում՝ Մարքսի նկարները, որոնք այդուհետև իբր խորհրդանշելու էին այն ուսմունքները, որոնց հետևորդ էր համարում իրեն: Նոր շապկի վերաբերյալ հետաքրքիր է խմբագրության հետևյալ բացատրությունը. «Գիտական ոգին իր ջահով լուսավորում է այն նոր ճանապարհը, որ ցույց տվին Դարվինի և Մարքսի վարդապետությունները: Նա է տանում դեպի լուսավոր ապագան, կապիտալիստական ֆաղիսի միջից անցնելով: Խաղաղության ձիթենին կաճի միայն այն ժամանակ, երբ մարդկությունը կընթանա այդ նոր ճանապարհով: Հին կյանքի ստեղծած նախապաշարումների ժայռանման պատը խորտակելով իր մուրճով, մարդկության աշխատավոր մասը նոր սերնդին և կանաչց սեռին, ինչպես և քնից զարթնած և շղթաները փշրած առյուծանման ժողովրդին, ցույց է տալիս այդ նոր կյանքի ուղին: Այդ է մեր ալեգորիայի իմաստը»[82]:

---

81 Նույն տեղում, էջ 130:

82 Նույն տեղում, էջ 173:

Արդեն մեկ տարի էր, ինչ ամսագրի համարներում հատվածաբար տպագրվում էր «Կարլ Մարքսը և մարքսիզմը» ծավալուն հոդվածը, որի համար նշանաբան էին ընտրված Էնգելսի հայտնի խոսքերը. «Ինչպես որ Դարվինը գտել է օրգանական կյանքի զարգացման օրենքը, այնպես էլ Մարքսը գտել է մարդկային կյանքի զարգացման օրենքը»: Ամբողջ հարցն այն խոր թյուրիմացության մեջ է, որին շատ ու շատ սոցիոլոգների նման տուրք է տվել նաև Լ. Մարգսյանը, կարծելով, որ եթե Դարվինը հայտնաբերել է օրգանական աշխարհի էվոլյուցիոն զարգացման օրենքը, ապա Մարքսը ևս հայտնաբերել է մարդկային հասարակության էվոլյուցիոն զարգացման օրենքը: Այդպես հասկանալ, նշանակում է Մարքսին զրկել իր հանճարեղ հայտնագործությունից, նրա հեղափոխական ուսմունքը ամլացնել և հանգեցնել խղճուկ «էվոլյուցիոնիզմի»: Այդ հոդվածաշարի իրական արժեքն իսկույն պարզ կլինի, եթե տանք հեղինակի անունը, որին Ալ. Մյասնիկյանը շատ դիպուկ բնութագրել է «չակերտավոր մարքսիստ և առանց չակերտների բուրժուական սպասավոր»[83]: Բախշի Իշխանյան: Սա պատկանում էր մարքսիզմը շահագործող այն գրչակների թվին, որոնց այնպես զայրույթով նշավակել է ակադեմիկոս Ստ. Շահումյանը, գրելով. «Մեր ժամանակներում ի՛նչ ասեք որ չեն փորձում արդարացնել մարքսիզմով և ո՛վ ասեք, որ իրեն մարքսիստ չի հայտարարում: Առանձնապես տգեղ ու այլանդակ ձևեր է ընդունել մարքսիզմի շահագործումը «Մշակում» աշխատող մի խումբ անսկզբունք գրողների կողմից, որոնց գլուխ է անցած Բախշի Իշխանյան կոչվող մի բախտախնդիր: Բարոյական ամենատարրական սկզբունքներից զուրկ այդ քրեական տիպը հանդես է եկել նորից հայ ընթերցողների առաջ «մարքսիստի» անունով: Այդ պարոնը այնքան է կապված ժամանակակից բանվորության ազատագրական շարժման հետ,— բարոյապես թե իրապես,— որքան Տիբեթի Դալայ-լաման: ...Հարկավոր է անխնա հարվածել ու հալածել մարքսիզմը շահագործող ու ապականող այդ բախշիներին: Եվ հարկավոր է հարվածել ու հալածել նրանց ոչ միայն նրա համար, որ նրանք շահագործում են ու ապականում այդ մեծ ուսմունքը, այլև հանուն գրական բարքերի մաքրության առհասարակ, հանուն Բելինսկու, Չերնիշևսկու մեզ թողած սրբազան գրական ավանդների: Գրականությունը մի տաճար է, ուր կարելի է մտնել մաքուր խղճով և աղնիվ միտումներով: Իսկ երբ մարդիկ մոտենում են այդ տաճարին մանր փառասիրական տենչերով, շահադիտական նպատակներով

83 Ալ. Մյասնիկյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1958, էջ 121:

և իաբեթյական հակումներով,— դա ամենամեծ ոճրագործությունն է, որ կատարվում է ժողովրդի դեմ»[84]: Շահումյանի՝ թևավոր դարձած այս խոսքերը մեր առջև պարզում են այն բարձրադույն չափանիշները, որոնցով մենք պետք է առաջնորդվենք գործիչներին գնահատելիս:

Չանդրադառնալով 12 համար ձգվող ամբողջ աշխատությանը, որի անհրաժեշտությունը վերանում է նրա կոմպիլյատիվ բնույթի պատճառով, նշենք միայն, որ Բ. Իշխանյանի քարոզած «մարքսիզմը» ձևված է սպեցիֆիկյան չափանիշներով: Նրա կարծիքով Փարիզյան Կոմունան «փակեց դասակարգային կռվի, հեղափոխական բռնկումների, բարիկադային ճակատամարտերի շրջանը և տեղի տվեց բուրժուական լեգալիզմի խաղաղ ու «նորմալ», համընթաց ու անվրդով մի տևական շրջանի»[85]: Ահա, 70-ական թվականներից սկսած Ինտերնացիոնալը իբր իր կազմակերպչական «համազգային ձևով» տեղի տվեց «ազգային» ձևին, այսինքն հին Ինտերնացիոնալը մահացավ, ճանապարհ բացելով նորի համար, որովհետև «զանազան երկրների պետական-քաղաքական և սոցիալ-տնտեսական տարբերությունները անհրաժեշտորեն պահանջում են պառլամենտական գործունեության և տակտիկայի նուրբ նյուանսներ»[86]: Ազգային սպեցիֆիկ «նյուանսների» որոնումները Իշխանյանին հասցնում են Մարքսի հեղափոխական ուսմունքը դասակարգային կռվի մասին ժխտելուն և այն պառլամենտարիզմով նենգափոխելուն: Հասկանալի է, թե Ռուսաստանում հեղափոխական բուռն պայքարի պայմաններում նման պրոպագանդը քաղաքական ինչ հեռահար նպատակներ էր հետամտում. հեռու պահել հայ աշխատավորությանը համառուսական ազատագրական պայքարից և օրորել նրան ռեֆորմիզմի փափուկ բարձի վրա առանձին, «սպեցիֆիկ» օրորոցում:

Իր դավանած ուղղությունը «Մուրճի» խմբագիրը բնութագրում է որպես «արմատական-պրոգրեսիվ», և փակագծերը բացելով, կոնկրետացնում. «դեռ ցենզուրական պայմաններում, երբ «բանվոր» խոսքն անգամ հալածված էր, մենք միշտ պաշտպանել ենք բանվորական ծրագրի minimum-ը»[87]: Այս ծրագրի սահմաններում էլ նա ծավալում է կապիտալիստական հասարակարգի քննադատություն, «հրեշավոր հարստության և հրեշավոր աղքատության քամնելի հակասությունը»

---

84 Ս.ո Շահումյան, եվժ, հ. 2, Երևան, 1976, էջ 373—374:

85 «Մուրճ», 1906, № 11—12, էջ 129:

86 Նույն տեղում, էջ 150:

87 «Մուրճ», 1905, № 11—12, էջ 267—268:

բացատրելով արդյունքի անարդար բաշխումով։ Ստացվում է մի շրջուն տեսություն, որտեղ պատճառն ու հետևանքը փոխում են իրենց տեղերը։ Նա երազում է «մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար» սկզբունքն իրականացնող սոցիալիստական հասարակարգ, բայց դրան հասնելու միջոց ընտրելիս ընդգծում է. «Հասարակական կյանքում դասակարգերի անտագոնիզմի հետ դեր են կատարում նաև դասակարգերի գործակցությունը, պայքարող հակառակ ուժերի կոմպրոմիսը»[88]։ Ինչ անուն էլ ընտրելիս լինի լ. Սարգսյանն իր քաղաքական հայացքների համար, այն մի հստակ անուն ունի՝ ռեֆորմիզմ։

Այսպիսով, ռուսական առաջին հեղափոխության տարիներին «Մուրճը» ծավալում է ցարական ինքնակալական կարգերի քննադատություն։ Սակայն գաղափարական պայքարում ձգտելով «անկախ» դիրք գրավել, լ. Սարգսյանը փաստորեն հարում էր մեկ կադետական, մեկ պլեխանովյան-մենշևիկյան մանրբուրժուական պլատֆորմին, դրսևորելով նաև միջազգային օպորտունիզմի և ռևիզիոնիզմի նկատմամբ իր համակրությունները։ Սա էլ «Մուրճի» դեմոկրատիզմը զրկում է արմատականությունից ու հետևողականությունից։

Ամսագրի քաղաքական ուղղությունը ներկայացնելու համար հարկ է անդրադառնալ նաև «Արտաքին տեսության» բաժնին, որը ամսագրի մշտական բաժիններից է, և որի անփոփոխ հեղինակը դարձյալ խմբագիրն է՝ Լևոն Սարգսյանը։ Ինչ խոսք, աշխարհի քաղաքական անցքերի այդ մեկամսյա ամփոփագրերը խմբագրի աշխարհայացքի կնիքն են կրում, սակայն ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ այդ տեսությունները շատ հաճախ խմբագրի կողմից նպատակադրված ձևով վեր են ածվում իր քաղաքական ծրագրերը և դավանանքը հաստատելու միջոցի, դառնալով ներքին տեսության օրգանական շարունակությունը։ Աշխարհի անցքերը, իրադարձությունները ներկայանում են ոչ թե անխտիր, սոսկ դեպքերի հաջորդական ընթացքով, այլ ընտրողաբար, եվրոպական կյանքի այն կենսաձևերի վրա ուշադրություն հրավիրելով, որոնք, խմբագրի կարծիքով, ուղեգիծ են նշում նաև հայ ժողովրդի զարգացման համար։

Աշխարհի քարտեզի առջև մտորելիս լ. Սարգսյանը երազում է խաղաղ, համերաշխ մարդկություն, գտնելով, որ «համերաշխությունը,

88 Նույն տեղում, էջ 271։

եղբայրությունը կարող է գոյություն ունենալ միայն հավասարապես անկախ անհատների մեջ, նույնը ճիշտ է և ազգերի փոխադարձ հարաբերությունների նկատմամբ»[89]: Այս առումով էլ նա քննադատության է ենթարկում անգլիական և գերմանական նացիոնալիզմը, որը «արդեն ուրիշներին նվաճելու, հարստահարելու և նրանց իրավունքները սահմանափակելու անարդար մի ձգտում է»[90]: Հանդես գալով իբրև փոքր ազգերի պաշտպան, Լ. Սարգսյանը, իհարկե, պացիֆիստական խաղաղասիրությունից այն կողմ չի անցնում:

Բուրժուական առաջադիմության ֆետիշացման դրսևորումները, որոնք հատուկ էին հին «Մուրճին», բնութագրում են և նոր «Մուրճին». «Մարդ չէ կարող չտեսնել, որ առաջադիմական հոսանքը գիտակցական որոշ ծրագրով քայլ առ քայլ վերանորոգում է հասարակական կարգերը, ավելի ու ավելի մոտեցնելով նրանց հավասարության, եղբայրության և ազատության իդեալներին»[91],— գրում է Լ. Սարգսյանը: Նա գտնում է, որ քաղաքացիական և քաղաքական ազատություններ ունեցող եվրոպական երկրներում «ճանապարհը սոցիալիզմի հաղթանակի համար կարող է ապահովված համարվել»[92]: Ջարգացնելով կապիտալիզմի մեջ սոցիալիզմի խաղաղ ներաճման տեսությունը, «Մուրճի» խմբագիրը հավատացնում է իր ընթերցողներին, որ կապիտալիզմը կատարում է իր պատմական դերը, իր աճման հետ առաջ բերելով իրեն հաջորդող սոցիալիզմի գործոնները. «Քայլ առ քայլ դիրքեր գրավելով կապիտալի զորության վրա հենված դասակարգերից՝ վերջիվերջո այնքան փոփոխած է լինելու հասարակական խավերի հարաբերությունները, որ հեղափոխությունը նմանվելու է մի բնական ակտի, ինչպես ծննդաբերությունը: Սաղմը մոր արգանդում պետք է դանդաղ ու կանոնավոր փոփոխությունների ենթարկվի, զարգանա, հասունանա, որ երկունքը բնական հեղափոխություն ճանաչվի. արտակարգ միջոցներով առաջացնելով վաղաժամ ծնունդ՝ ստանում ենք վիժում, որ մահացու է ոչ միայն անկատար մանուկի, այլև հաճախ մոր համար»[93]:

Անգլիան՝ պառլամենտարիզմի հայրենիքը Լ. Սարգսյանին պատկերանում է իբրև ժողովուրդների հասարակական զարգացման չափանիշ.

---

89 «Մուրճ», 1901, № 3, էջ 255:
90 Նույն տեղում:
91 «Մուրճ», 1901, № 5, էջ 304:
92 «Մուրճ», 1906, № 3, էջ 118:
93 Նույն տեղում:

«Անգլիայից վերցրած այդ պառլամենտարիզմը էվոլյուցիայի ճանապարհ բացեց և մյուս եվրոպական պետությունների մեջ»[94],— գրում է նա։

«Արտաքին տեսություն» բաժնում խմբագիրը մեծ տեղ է հատկացնում հատկապես քաղաքական այն իրադարձություններին, որոնք այս կամ այն ձևով առնչվում են Հայկական հարցին։ Նա առիթը բաց չի թողնում քննադատելու եվրոպական պետությունների շահադիտական քաղաքականությունը Արևելյան հարցում։ Անդրադառնալով Թուրքիայում ռեֆորմների անցկացումը ձախողելու խնդրին, Լ. Սարգսյանը այս հարցում մեղավոր է ճանաչում ոչ միայն Թուրքիային, այլև «դրսի պարապիտաններին», որոնց համար ռեֆորմի ենթարկված Թուրքիան այնքան էլ հեշտ չի լինի շահագործել[95]։ «Եվրոպական կապիտալիստների շահերն են պաշտպանում եվրոպական բոլոր ներկա կառավարությունները,— գրում է «Մուրճը»,— և եթե արևելյան ազգերը այնքան միամիտ են, որ կարծում են մարդասիրական որևէ զգացմունքով եվրոպան կմիջամտի նրանց արդար դատը պաշտպանելու համար, ավելի ևս շատ պետք է սուժեն, քան սուժել են ցայսօր, կռվելով աննպատակահարմար և անիրագործելի մի տակտիկայով... Մի՞թե կապիտալիստներին ձեռնտու է արմատական միջոցներ ձեռք առնել իր կթան կովի-Թուրքիայի ռեժիմի դեմ»[96]։ Դիպուկ է նկատված եվրոպական դիվանագիտության՝ կապիտալիստների հետ-հնազանդ գործիքը և Թուրքիայի՝ եվրոպական պետությունների համար կթան կով լինելու հանգամանքը։ Սակայն խաղը երկկողմանի էր։ Ինչ վերաբերում է Թուրքիայի բռնած դիրքին, ապա՝ «Թուրքական կառավարությունը չափազանց լավ է ուսումնասիրել «եվրոպական համաձայնություն» կոչված քառակուսի անվավոր սայլը, որպեսզի իր կատարած գազանություններ մեջ մի րոպե կանգ առնի՝ քաշվելով եվրոպական ներկայացուցիչներից... Թուրքերը հմտացած ձգձգման արվեստի մեջ՝ միշտ գիտեն ձգձգել ամեն մի գործ, մինչև որ եվրոպական դիպլոմատիան կհոգնի և կձանձրանա»[97]։

«Մուրճն» ահազանգում է, որ թողնել թուրքական հին վարչակարգը, նշանակում է «մատնել Թուրքիայի քրիստոնյաներին հաջորդական ոչընչացման»[98]։ Իսկ այդ օրերին քրիստոնյաների արյունն արդեն հեղվում

---

94 «Մուրճ», 1906, № 6, էջ 152։

95 Տե՛ս «Մուրճ», 1902, № 12, էջ 183—184։

96 «Մուրճ», 1905, № 11—12, էջ 266։

97 «Մուրճ», 1904, № 7, էջ 160—161։

98 «Մուրճ», 1904, № 6, էջ 179։

էր Մակեդոնիայում, Սասունում և Մուշում։ «Մուրճն» արտատպում է օտար պարբերականներից հաղորդումներ թուրքական գաղանությունների մասին, որոնց զոհ էին դարձել հազարավոր մարդիկ։ Եվրոպայի պաշտոնական շրջանների վերաբերմունքին «Մուրճը» հակադրում է եվրոպական երկրների հասարակական կարծիքը, ընդարձակ մեջբերումներով ներկայացնում նշանավոր գործիչների հայասիրական ելույթները։ Դրանց մեջ աչքի է ընկնում Անատոլ Ֆրանսի հայտնի նամակը, որտեղ ֆրանսիացի մեծ հումանիստը կոչ է անում պաշտպանել հայերի՝ «Արևվելքում քաղաքակրթության ամենաեռանդուն գործիչների» դատը, ի շահ ամբողջ մարդկության առաջադիմության[99]։

«Թուրքիան և Եվրոպան» հոդվածում անգլիացի նշանավոր գործիչ Ջեյմս Բրայսը մերկացնում է եվրոպական պետությունների անմարդկային վերաբերմունքը Թուրքիայի լծի տակ տառապող փոքր ժողովուրդների ճակատագրի նկատմամբ։ «Հայկական հարցը,— գրում է նա,— պարզ և որոշ կլիներ, եթե մի կողմ թողնվեր քաղաքականությունը, և մարդկային տարրական իրավունքները հարթվեին, և եթե Եվրոպան ցանկանար միայն վերջ դնել այդ խայտառակությանը»[100]։ Պետք է Թուրքիայի պատմությանը կատարելապես անտեղյակ լինել մտածելու համար, թե այս երկրում հնարավոր է որևէ բարենորոգում, ասում է Բրայսը, տեսանելի դարձնելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի իրական, գրոշանոց արժեքը։ Հանդես գալով որպես փոքր ժողովուրդների դատի պաշտպան, Բրայսը բացականչում է. «Որպիսի՜ դժբախտություն, եթե այս բոլոր ազգություններից յուրաքանչյուրը չհասնի ազատ զարգացման, անկախ կյանքի, հեռու որևէ բռնակալությունից... Եվ ընդհակառակը, որպիսի՜ բարիք, որպիսի՜ ապահովություն նրանց համար, Եվրոպայի համար, մարդկության, դուցե և քաղաքակրթության ապագայի համար, եթե նրանցից յուրաքանչյուրը կարողանա պահպանել իր անհատականությունը և ազատորեն տնօրինե իր ճակատագիրը»[101]։

«Գորդյան հանգույցից ավելի դժվար լուծելի Հայկական հարցի»[102] վճռման ի՞նչ ուղի է տեսնում Լ. Սարգսյանը։ Նախ նա մերժում է դաշնակցական դավադրական տակտիկան, գտնելով, որ «դավադրական խիզախ փորձերով նույնքան այժմ անհուսալի է աջողությունը, որքան

---

99 «Մուրճ», 1904, № 7, էջ 163։

100 «Մուրճ», 1905, № 6, էջ 67։

101 Նույն տեղում, էջ 74։

102 «Մուրճ», 1906, № 3, էջ 121։

նման փորձերը ապարդյուն անցան 50—60 տարի առաջ Ռուսաստանում»[103]: Ոչ միայն այս պատճառով. «Դավադրական հեղափոխության խիղախ տակտիկան, ինչպես ցույց տվեց 25 տարվա անցյալը, ավելի ևս վատթարացնում է այդ դժոխքում ապրող հայերի կացությունը՝ ամբողջ գավառներ դատարկվում են հայությունից, հայ տարրը իբրև ցեղական-տնտեսական ուժ կորցնում է իր նշանակությունը, հայերի բնաջնջումը դառնում է թուրք ռեժիմի ներքին ծրագիր»[104]: Ի՞նչ անել ուրեմն, մտորում է Լ. Սարգսյանը, թողնել, որ հայ ժողովուրդը Թուրքիայում վիրավոր, արյունաքամ ընկած մնա ազատության ճանապարհի վրա՝ դա կլինի մասսայական ոճրագործություն: Ո՞րն է հնարավոր ելքը. «Ռուսաստանի մեծ հեղափոխությունը,— գրում է նա,— մասամբ ցույց տվեց նոր ճանապարհը: Այդ հեղափոխությունը ապացուցեց, որ խառն ազգաբնակություն ունեցող պետություններում միայն ամբողջության վերանորոգությունից է կախված բաղկացուցիչ ազգությունների կյանքի բարվոքումը, եթե այդ բաղկացուցիչ մասերը հնարավորություն չունեն անջատվելու և անկախ գոյություն պահպանելու»[105]:

Պատմական անալոգիան սնում է Լ. Սարգսյանի երևակայությունը, և նա ռուսական մեծ հեղափոխության մեջ է փնտրում հարցի լուծման բանալին:

Նա առաջարկում է «շպրտել եվրոպական դիպլոմատիայի երեսին նրա արյունաշաղախ 61-րդ հոդվածը և մերձենալ թուրք ժողովրդին և նրա առաջադեմ ինտելիգենցիային, հասկացնելով մեր ձգտումները, որ նույնն են, ինչ պետք է լինի տաճիկ աշխատավոր մասի և նրա շահերը պաշտպանող ինտելիգենցիայի նպատակը: Մենք պետք է վերջ դնենք մեր ժողովուրդների կյանքը պղտորող ղոչիական տիպի «գործիչների» գոյությանը, և թե՛ Կովկասում, թե՛ Թուրքիայում և թե՛ Եվրոպայում միանանք համաթուրքական վերանորոգության մի ծրագրով և գործենք համերաշխ: Ռուսական մեծ հեղափոխությունը պետք է հավատ ներշնչե այդ ճանապարհով գործողների մեջ: Այդ մերձեցման գաղափարը պետք է քարոզվի, այդ գաղափարի շուրջ միացնեն իրենց ուժերը թուրք ռեժիմի դեմ բոլոր թուրքահպատակ կուսակցությունները: Ոչ մի աշխարհայեցողություն այնքան զորեղ չի բուժում մարդկանց հոգուց քրոնիկական ցավ դառած

---

103 Նույն տեղում, էջ 120:

104 Նույն տեղում, էջ 121:

105 «Մուրճ», 1906, № 7, էջ 119:

նացիոնալիզմը, որքան սոցիալիստականը: Հետևաբար, Թուրքիայի կյանքի մեջ այդ նոր ուղղության իրագործումը պետք է սկսեն թուրք և հայ սոցիալիստները. կորիզը պետք է առողջ լինի, որ նրանից ծլած ծառն էլ կենսունակություն ունենա: Նոր ճանապարհ ընտրե՛ք, թուրքահայեր»[106]:

Լ. Սարգսյանի այս ծրագիր-կոչի արժեքը հասկանալու համար հիշենք նրա վերաբերմունքը դեպի ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխությունը: Լ. Սարգսյանը. այդ հեղափոխության հիմնական պայքարի ձևը համարում է սահմանադրական պառլամենտարիզմը: Թուրքահայերի համար Լ. Սարգսյանի ընտրած «նոր» ճանապարհը ռեֆորմիստական է, որը թեև հակադրվում է դաշնակցության ծրագրի բախտախնդրությանը և տեռորիստական գործելակերպին, սակայն նույնքան ոչ ռեալ է, ազգային-ազատագրական շարժումը դեպի փակուղի մղող: Եթե ռուսական հեղափոխությունը հայ ժողովրդի համար ազատագրության ուղի պիտի բացեր, ապա միայն սոցիալիստական հեղափոխությունը, որի դրոշի տակ համախմբված հայ աշխատավորությունը, ռուս պրոլետարիատի օգնությամբ և ղեկավարությամբ պիտի իր հայրենիքին բերեր և՛ սոցիալական, և՛ ազգային ազատագրություն:

Գլուխ երկրորդ

Դաշնակցության քննադատությունը ամսագրում

«Մուրճի» քաղաքական դիմագիծն ամբողջացնելու համար առանձնահատուկ ուշադրության է արժանի դաշնակցության կուսակցության նկատմամբ նրա վերաբերմունքը: Բանն այն է, որ «Մուրճի» վերջին տարիների համարներում այդ կուսակցության գործունեությունը և քաղաքականությունը ենթարկվում է սուր քննադատության: Հարց է առաջանում՝ ինչու՞ այդ կուսակցության հիմնադիրներից մեկը լինելով, Լ. Սարգսյանը ոչ միայն լքեց նրա շարքերը, այլև ձեռնոց նետեց նրան: Այս հարցի պարզաբանումը նա տալիս է «Մոտիկ անցյալից» վերնագրով հոդվածում: Դաշնակցության գաղափարական ջախջախումը հիմնավոր դարձնելու նպատակով Լ. Սարգսյանը հետադարձ էքսկուրս է

106 Նույն տեղում, էջ 120—123:

կատարում դեպի հայ ժողովրդի պատմության այն շրջանը, որը, նրա կարծիքով, նախորդել է դաշնակցական գաղափարախոսությանը, հանդիսանալով նրա հոգևոր ստեղծումն։ Հովվածաշարի տակ Լ. Սարգսյանը ստորագրում է «Անկախ» կեղծանունով, որով ցանկանում էր իրեն դուրս դնել ամեն դույնի կուսակցություններից և օբյեկտիվ ու անաչառ երևալ։

Անցյալ դարի 60-ական թվականների գործիչներին համարելով կյանքից և ժողովրդից կտրված մետաֆիզիկներ, Լ. Սարգսյանը նրանց մեղադրում է այն բանում, որ նրանք նոր գաղափարներ, եվրոպայից փոխ առած վերացական սկզբունքներ մտցրին մեր կյանքում, բնավ չուսումնասիրելով հայկական իրականությունը։ «Եվրոպական նացիոնալիզմի» կույր ազդեցության հետևանք դիտելով 60-ական թվականների ազգային շարժումները հայ իրականության մեջ, Լ. Սարգսյանը հաշվի չի նստում այդ շարժման օբյեկտիվ պատճառների հետ, որոնք անխուսափելիորեն պիտի հանդեցնեին ազգային ընդվզման սուլթանական բռնապետության դեմ։ Լ. Սարգսյանը դա համարում է «մասսայական դոնկիխոտության մի շրջան»[1]։ Օբյեկտիվ շարժումը շփոթելով կուսակցությունների քաղաքականության հետ, Լ. Սարգսյանը թացի հետ չորն էլ է սրբում-տանում։ Քննադատել ազգայնական կուսակցությունների անհեռատես, չարաշահ, բախտախնդիր քաղաքականությունը, ռեալ ուժերը հաշվի առնելու անընդունակությունը, որը և ազգային շարժումը մղելու էր սխալ հունի մեջ, անհրաժեշտ էր, սակայն դաշնակցության «ֆիասկոն» ներկայացնելու ոգևորության մեջ Լ. Սարգսյանը, կորցնելով իր նշանակետը և չափի զգացումը, անհարկի հարձակումներ է գործում Րաֆֆու և Պատկանյանի վրա, որոնց ստեղծագործությունները իբր «ազգասիրական հաշիշով» սպանում էին առողջ դատողությունը։ Ապա հարձակվում է Գր. Արծրունու, նրա «շկոլայի» վրա, որը սլավոնական ազգերի ազատության անալոգիայով իբր սին հույսեր էր պատվաստում հայ ժողովրդի մեջ։

Արևմտահայերին ուղղված Արծրունու հորդորները՝ սլավոնների օրինակով ապստամբել, հուսալով Ռուսաստանի օգնությունը, Լ. Սարգսյանը համարում է ոչ ռեալ. «Զափտպանց հեշտ էին «ազատում» Հայաստանը մեր դրական ջոջերը 70-ական թվականներին»[2]։ Լ. Սարգսյանը թվարկում է այն տարբերությունները, որոնց հետ, նրա կարծիքով, հաշվի չէր նստում «արծրունյան շկոլան», չերնոգորցիների, սերբերի, հույների և

---

1 «Մուրճ», 1906, № 4—5, էջ 88։

2 «Մուրճ», 1906, № 6, էջ 89։

բուլղարների ազատագրության ուղին հայերին օրինակ պարզելու բուռն ոգևորության մեջ։ Ամենից առաջ՝ սլավոնական և հունական երկրներն իրենց աշխարհագրական դիրքով անջատված էին ասիական Թուրքիայից, ուր ապրում էր տիրապետող թուրք ազգը։ Երկրորդ. այդ երկրների ազգաբնակչությունը կազմված էր միատարր, նույն ազգությանը պատկանող բնիկներից, իսկ թուրք ժողովուրդը ներկայացված էր միայն հանձինս պաշտոնյաների և զինվորական պահակախմբերի։ Երրորդ. տեղական իշխանները պահպանում էին ֆեոդալական իշխանությունը և իրենց սրամադրության տակ զինված ուժեր ունեին։ Չորրորդ. իրար կողք կողքի տեղադրված այդ երկրները միշտ պատրաստ էին միմյանց օգնության հասնել և ամենակարևորը՝ հզոր Ռուսաստանի զինված աջակցությունն ստանալ և այլն։ Այս տարբերությունները, լ. Սարգսյանի կարծիքով, արժեզրկում են պատմական անալոգիան։ Նա վաղաժամ ու անտեղի էր համարում Բեռլինի կոնգրեսից հետո Խրիմյան Հայրիկի կոչերը երկաթե շրթեփ ունենալու և զենք ու արյունով ազատության հասնելու վերաբերյալ. «Կռիվ էին հայտարարում առանց մտածված, ուսումնասիրված տակտիկայի, առանց ներքին ուժի, առանց դրսի օգնության. դա մի՞թե խիզախ անմտություն չէր, ազգակործան խաղ չէր հրդեհի հետ։ Ահա թե ինչ թեթև սրտով էին սերմանվում քամիներ ապագա մրրիկներ հնձելու համար...»[3]։

Մակերևութային անալոգիաների փոխարեն դրական, գիտական ուսումնասիրություն առաջարկող «Մուրճի» խմբագիրը ո՞րն էր համարում հարցի լուծման ռեալ ճանապարհը. նա գրում է. «1876 թվականի անցքերը շշկլացրին մեզ և մենք բողինք վաթսունական թվականներից սկսած վերածնության դանդաղ, սակայն հաստատ ճանապարհը, որ հայի տնտեսական բարգավաճման հետ առաջ էր բերելու և նրա մտավոր հաղթանակը խաղաղ ճանապարհով, և գրկեցինք արկածալի, արյունոտ անհայտը, համայված նրա շլացնող, խաբուսիկ մոտիկությունից»[4]։ Ազգային իրօրյա անպտուղ ռոմանտիզմի կրողներին՝ դաշնակցականներին, լ. Սարգսյանը, ինչպես տեսնում ենք, քննադատում է աջից, իբրև ռեֆորմիստ, պայքարի նրանց միջոցներին հակադրելով իր՝ ռեֆորմիստական միջոցները, դանդաղ, խաղաղ վերանորոգություններ։ Ընդամին, զարգացման այդ խաղաղ ուղիով նա հայերին մենակ չի տանում, այլ մյուս

3 «Մուրճ», 1906, № 7, էջ 94։

4 «Մուրճ», 1906, № 6, էջ 90։

ազգությունների, այդ թվում և «տաճիկ գիտակից ժողովրդի» հետ, որի շնորհիվ, «կուլտուրական-տնտեսական ընդհանուր բարգավաճման հետ կզորեղանար և փտած ռեժիմի դեմ ընդհանուր հեղափոխական շարժումը»[5]: Խոսքը, անշուշտ, անարյուն հեղափոխության մասին է, որը ֆեոդալական կարգերը Թուրքիայում պիտի հեղաշրջեր կապիտալիստականի: Բայց ահա հանդես եկան «հեղափոխականները», որոնք «վայրագ ու խորամանկ գազանին սկսում էին գրգռել, բնավ չմտածելով զարհուրելի հետևանքների մասին, ոչինչ չնախատեսելով ինքնապաշտպանական միջոցների մասին: Բոլոր հույսը դրված էր Աստծո և մեծ պետությունների միջամտության վրա: Դեռ երբեք համաշխարհային պատմության մեջ թևթևամտության և անգիտակցության նման օրինակ չէր եղել:... «Իմաստուն» հովիվները ոչխարներին դուրս էին բերում գայլերի դիմաց և սպասում, որ մի հրաշքով ոչխարների հոտերը կհաղթեն գայլերի ոհմակներին...»[6]: Լ. Սարգսյանը հարցին մոտենում է միակողմանիորեն. որ դաշնակցականներն ի վիճակի չեղան ղեկավարելու արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը, դա այսօր պատմությամբ ստուգված իրողություն է: Բայց պատմության դառը դասով հաստատված իրողություն է և այն, որ «վայրագ ու խորամանկ գազանը»՝ նախ սուլթանական և ապա երիտթուրքական Թուրքիան, ոչ թե գրգռվելու պատճառով էր հայերի վրա գայլային հարձակումներ գործում, այլ իրականացնում էր կանխապես մտածված ցեղասպանության հրեշավոր ծրագիր:

«Մոռիկ անցյալից» հոդվածաշարին զուգահեռ Լ. Սարգսյանը «Մուրճում» տպագրում է երկրորդ հոդվածաշարը՝ «Ազգային կառավարություն» վերնագրով: Այստեղ զետեղվում են դաշնակցության առօրյա գործունեությունը մերկացնող նյութեր: Դրանք ականատեսների պատմածներ են դաշնակցական կոմիտեների սանձարձակ գործողությունների մասին տեղերում, որոնք հավակնում էին փոխարինել «ազգային կառավարության», ստեղծելով հայկական գյուղերը հարստահարող մի իսկական բյուրոկրատիա: Ամսագրում զետեղվում են նաև մամուլի այլ օրգաններից ծաղկաքաղ արված նյութեր: «Մուրճը» տպագրության համար պիտանի էր դիտում և՛ կադետական «Մշակի», և՛ պահպանողական «Հովվի», և՛ սպեցիֆիկյան «Կյանքի», և՛ դեմոկրատական «Աշխատանքի», և՛ բոլշևիկյան «Նոր խոսքի» ու «Կայծի» նյութերը:

---

5 «Մուրճ», 1906, № 11—12, էջ 167:

6 Նույն տեղում, էջ 168:

Ի՞նչ փույթ, թե դրանք քաղաքական տարբեր հայեցակետերով էին քննադատում դաշնակցությանը։

Հայկական կյանքում թույլ արտահայտված կադետիզմն անկարող դիտելով դաշնակցության դեմ պայքարի համար, Լ. Սարգսյանը գտնում է, որ «միակ ուժը, որ մեր իրականության մեջ ընդունակ է պայքարել այդ չարիքի դեմ, դա սոցիալ-դեմոկրատիան է։ Դժբախտաբար այդ նորաբողբոջ ուժը դեռ պառակտված է, չունի բավականաչափ նյութական միջոցներ աջող գործունեության համար նաև այն նահանգներում, ուր գործարանական կյանքը դեռ զարգացած չէ և չկա պրոլետարիատ։ Սակայն ապագան նրանն է, որովհետև կուլտուրական յուրաքանչյուր քայլ, ամեն մի դեմոկրատիական ռեֆորմ, կյանքի յուրաքանչյուր տնտեսական բարգավաճում, ազատ մտքի, գիտության ամեն մի շող՝ նպաստում են նրա աճման և վնասում դեմագոգիային։ Սոցիալ-դեմոկրատիան օրեցօր մեծանում է իբրև մի հսկա մանուկ, որին պատմությունը վիճակել է մեծ ապագա, իսկ դաշնակցության տիպարի կազմակերպությունները իբրև ռուս բյուրոկրատիայի, թուրքական ռեժիմի և ազգային խավարամտության մի վիժմունք, պետք է քայքայվի, չքանա իբրև նոր պայմաններին անհամապատասխանող մի զանգված, մի անախրոնիզմ և մի չարիք։ Քանի շուտ հասկանա հասարակությունը այդ ճշմարտությունը, այնքան լավ իր համար»[7]։

«Մուրճը» փորձում է այդ ճշմարտությունը հասցնել իր ընթերցողներին։ Նա միանում է «Նոր խոսքի» կարծիքին, որը ծաղրում է դաշնակցականների՝ համազգային կուսակցություն երևալու հավակնությունները. «Սոցիալիստ» և միևնույն ժամանակ «փահլևան» դաշնակցության կազմը սվելի շուտ մի կամերալական ցուցակագրություն էր, որտեղ մտնում էին բոլոր հայերը։ «Ով որ հայ է, ուրեմն և դաշնակցական է», հետևապես և նրա ամենաբուռն ջանքերն ու ցանկությունը կենտրոնացած էր հենց նրանում, որ իր «Միության» դավթարում ցուցակագրված ունենար ամբողջ հայությունը երկրագնդիս երեսին։ Այդ միության ամենաթունդ սկզբունքը նույնիսկ հասնում էր մինչև այն կետը, որ դաշնակցությունը ամենավտանգավոր և քայքայող բանն էր համարում ուրիշ կուսակցությունների գոյությունը և մուտք գործելը հայկական կյանքում»[8]։

Դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու համար «Մուրճը» դիմում է նաև բոլշևիկյան «Կայծ» թերթին,

---

7 «Մուրճ», 1907, № 3, էջ 148։

8 «Մուրճ», 1906, № 10, էջ 82։

նրանից արտատպելով «Կենտրոնական ժողովը» հոդվածը, որտեղ ծաղրվում է «Սահմանադիր ժողովի» այն միամիտ խաղը, որով դաշնակցականները փորձեցին հոգևոր ժողովին պատրամենտի տեսք ու նշանակություն տալ։ «Մուրճը» սեփականում է «Կայծի» կարծիքը, թե «Սահմանադիր ժողովի» իսկական աստառը բուրժուական նացիոնալ-լիստական ձգտումներն են, թե հայկական «Սահմանադիր ժողովը» ոչ այլ ինչ է, եթե ոչ ՀՀ Դաշնակցության բուրժուական ձգտումների մարմնացումը... Բուրժուական կուսակցությունը սոցիալիստական դիմակը ծածկած, կույր գործիք դարձնելով հայ պրոլետարիատի մի մասը՝ նրան ենթարկում է բուրժուական իդեոլոգիային։ Նա, ճառելով պրոլետարիատի դասակարգային շահերի մասին, ձգտում է խաբել նրան, մտցնելով այնպիսի քաղաքական կազապարի մեջ, ուր կամբրապնդվի աղգային բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը շահագործվող դասակարգի վրա»[9]։ Ինչպես տեսնում ենք, «Մուրճ» են մուտք գործել նրա ընթերցողներին անծանոթ բառապաշար և հարցադրումներ։

«Մուրճի» սրտով է նաև «Աշխատանք» թերթի քննադատությունը դաշնակցության հասցեին, որ «Հեղափոխական» հորջորջվող կուսակցությունը մեկուսացնում է հայ ժողովրդին Ռուսաստանի ընդհանուր հեղափոխական շարժումից, ջլատում հեղափոխական ակտիվ ուժերը»[10]։

Դաշնակցությանը մերկացնող ավելի հետևողական և սուր քննադատների՝ «ծայրահեղ ջահելների» օգնությանն է դիմում Լևոն Սարգսյանը, քանի որ վերջիններս իրենց «մշտական հարձակումներով և անողորմ մերկացումներով խանգարում են, որ դաշնակցական բյուրոկրատների անսխալականությունն ու գերիշխանությունն ամրանա հայ ժողովրդի մեջ»[11]։ Անմիջապես վերապահում անենք՝ ձախերի վրա հենվելով, Լ. Սարգսյանը դաշնակցականներին քննադատում է աջից։

Իրենց պրոլյան ուժ զգալով և լարելով բոլոր ուժերը հայկական կյանքում նորաբողբոջ կուսակցություններն օրրանի մեջ խեղդելու համար, «սևիական իշխանությունը պահպանելու ինստինկտից դրդված մեր «սոցիալիստ հեղափոխականները»,— գրում է Լ. Սարգսյանը,— առաջ են քաշում պրոլետար հասկացողության դեմ «աշխատավոր» բուրժուական տերմինը, որպեսզի այդ անորոշությամբ շարունակեն իրենց կեղծ փրկիչների շահավետ դերը... «Աշխատավոր մասսա» տերմինն իր

9 «Մուրճ», 1906, № 8, էջ 116։
10 Նույն տեղում, էջ 118—119։
11 Նույն տեղում, էջ 48։

առաձգականությամբ անշուշտ շատ ձեռնտու է ազգային խնամակալների համար, որովհետև տեղը եկավ, այդ լայնարձակ սավանի տակ կարելի է ծածկել ոչ միայն վեղարը, այլև ազգասեր ու բարեգործ միլիոնատերի փորը»[12]: Դիպուկ է նկատված դաշնակցության «Համազգային» կուսակցության նկրտումը:

Դաշնակցական պարագլուխների հետ իր ունեցած տարաձայնությունները Լ. Սարգսյանը ներկայացնում է «Pro domo sua» (Իմ տան մասին— Լ. Գ.) վերնագրով հոդվածում, որտեղ նա կատարում է իր «ինքնանկարը», օգնում մեզ միաժամանակ պարզելու իր աշխարհայացքային համակարգը: Լ. Սարգսյանը պատմում է, որ 1887 թ. Մոսկվայում կազմակերպվում է մի փոքրիկ ընկերություն, որը նպատակ է դնում բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել Թուրքաց Հայաստանը, նախքան որևէ քաղաքական ձեռնարկություն սկսելը այնտեղ: Հենց այս նպատակով նա ճանապարհորդություն է կատարում Արևմտյան Հայաստանում և համոզվում ինքնապաշտպանության «պրակտիկայի» նպատակահարմարության մեջ: Երբ կազմակերպվում է դաշնակցություն կուսակցությունը, սկզբից ևեթ որոշակիորեն առանձնանում են երկու հոսանքներ. «մեկը,— գրում է նա,— ուզում էր, նախքան որևէ ապրեսիվ գործունեության դիմելը Թուրքաց Հայաստանում, բազմակողմանի ուսումնասիրել այդ terra incognita-ի բոլոր առանձնահատուկ պայմանները և առայժմ պասիվ— ինքնապաշտպանական տակտիկայի հետևել: ...Մյուս հոսանքը, համայված ռուս նարոդովոլցիների և բուլղարական «հայդուկների» օրինակով, ծաղրում էր ուսումնասիրությունն էլ, նախապատրաստությունն էլ, առանձնահատուկ պայմաններն էլ, և դառնում, որ «բոլոր ժողովուրդները մի շաբլոնով են ազատվում», և պետք է իսկույն ևեթ դիմել հայդուկային և տեռորիստական գործողությունների: Պարզ է, թե ես ո՛ր հոսանքի կողմն էի: 1892 թվականի ամառը կայացավ դաշնակցականների առաջին ընդհանուր ժողովը: Երկու հոսանքները բախվեցան, վերջ դրվեց կենտրոնացման, մշակվեց ապակենտրոնացում, ծրագիր մշակվեց. «բյուրո»— կրատիա հիմնվեց, կպցվեց և «սոցիալիզմ» խոսքը, որի դեմ էի ես, դառնալով, որ Թուրքական ռեժիմի դեմ քաղաքական կռվում սոցիալիստական գործունեություն չկա: Հաղթող հանդիսացավ ապրեսիվ քաղաքական հոսանքը: 1892 թվականից ես հեռացա այդ կազմակերպությունից»[13]:

---

12 «Մուրճ», 1907, № 3, էջ 144—145:

13 «Մուրճ», 1906, № 8, էջ 85—86:

Այսպիսով, Լ. Սարգսյանը իր կապերը դաշնակցության հետ խզում է կուսակցության ստեղծման սկզբում՝ ծրագրի մշակման շրջանում և ոչ թե անցողիկ, այլ արմատական տարաձայնություններ ունենալով նրա ղեկավարների հետ՝ կուսակցության ծրագրի, ստրատեգիայի և տակտիկայի հարցերում[14]: «Ես այդ նոր կուրսի դաշնակցությունը համարել եմ շեղված իր բուն նպատակից և չարիք մեր ժողովրդի առաջադիմության գործում»[15],— նշում է Լ. Սարգսյանը: Ընդամին ուշադրության առնելու է այն փաստը, որ նա դեմ է անգամ այն կիսատ-պռատ, անորոշ սոցիալիստական ֆրազներին, որոնցով դաշնակցականները զարդարում էին իրենց հարափոփոխ ծրագրերը: «Մուրճի» խմբագիրը հայ ազդային-ազատագրական շարժումը քաղաքական շրջանակներից դուրս չի հանում, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հարց չի դնում նրա առջև:

Գնահատելու համար Լ. Սարգսյանի կողմից դաշնակցության քննադատության օբյեկտիվ բովանդակությունը և արժեքը, հարկ է անդրադառնալ այն հարցին, թե որն է նրա քննադատության մեկնակետը: Լ. Սարգսյանը հայտարարում է, որ ինքը արմատական պրոգրեսիստ է սոցիալիստական գունավորմամբ. «Համակրելով սոցիալ-դեմոկրատներին, ես չեմ բաժանել բոլոր դեպքերում նրանց հայացքները և տակտիկան,— նշում է նա:— Բազմաթիվ դեպքերում ես բաժանել եմ Պլեխանովի հայացքները, որոնց դեմ են եղել ռուսական սոցիալ-դեմոկրատների ավելի ծայրահեղները և բլանկիստական հովերով բռնվածները. և եթե այնուամենայնիվ ես ինձ օրթոդոքս սոցիալ-դեմոկրատ չեմ համարում և ավելի մոտ եմ ռևիզիոնիստներին (բերնշտեյնիզմին), դրա պատճառը պարզ է. իբրև էվոլյուցիոնիստ ես չեմ կարող բնության մեջ, որի մի մասն է մարդկությունը, ընդունել հանկարծակի կատաստրոֆների թեորիան. հեղափոխությունը, ինչպես ծնունդը, ինչպես երկրաշարժը, էվոլյուցիո-

---

14 Մ.Ի-ի հայկական մասնաճյուղի արխիվում, դաշնակցության վերաբերյալ ֆոնդում (4047) պահպանվում է Լ. Սարգսյանի հեղինակած «Հուշեր 1889—1892 թթ.» հուշագրությունը, որը հանգամանալից քննության է ենթարկվել ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի կողմից «Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները իննսումնական թվականների սկզբներին» հոդվածում (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 2, էջ 63—82): Մենք հարկ չենք համարում անդրադառնալ այդ հուշագրությանը, քանի որ նրանում առաջ քաշված թեզերը համարյա նույնությամբ կրկնվում են մեր կողմից քննարկվող «Մուրճի» նյութերում:

15 «Մուրճ», 1906, № 8, էջ 87:

նիստական պրոցեսների վերջին ակտն է և արվեստական միջոցներով ապուշություն է առաջ բերել հեղափոխություն»[16]։

Այսպիսով, սոցիալ-դարվինիզմը համարելով միակ «գիտական սոցիալիզմը», Լ. Սարգսյանը փաստորեն մերժում է Մարքսի հեղափոխական ուսմունքը՝ միակ իսկապես գիտական սոցիալիզմը։ Մարքսիզմի նկատմամբ «Մուրճի» խմբագրի հետաքրքրությունները որոշակի սահմաններ ունեն. «Մարքսի անսխալականությունը, ինչպես և ամեն անսխալականություն աբսուրդ է ինձ համար,— ասում է նա,— պրոլետարիատի բռնապետություն, դիկտատուրա, ինչպես և ամեն մի բռնություն, դեմ է իմ համոզմունքներին։ Ես չեմ հավատում, թե դասակարգերի մեջ սերմանած թշնամությունները, ատելությունը օգնում են սոցիալական խնդրի աջող լուծման։ Դասակարգային կռիվը գոյություն ունի, սակայն այդ կռիվը պետք է կուլտուրական միջոցներով առաջ տանել. օրենսդրության, հասարակության հիմնարկությունների լայն դեմոկրատիզացիայի, քաղաքացիական ազատության կիրառմամբ և ոչ թե անհատների դեմ բռնի միջոցներով, ատելություն և թշնամություն սերմանելով, «բռնտարական» քայլագործություններ կատարելով։ Խաղաղ կուլտուրական զարգացումը ինքը արդեն մի հզոր գործոն է սոցիալական կարգերի աստիճանական հեղափոխության մեջ»[17]։

Այսպիսով, Լ. Սարգսյանի կողմից դաշնակցության քննադատության օբյեկտիվ բովանդակությունն ու արժեքը պարզ է. «Մուրճի» խմբագիրը ծաղրելով դաշնակցական գործիչների բախտախնդրությունն ու կեղծ հեղափոխականությունը, դրանց ոչ թե հակադրում է իսկական հեղափոխականությունը, այլ ռեֆորմիզմը։ «Անկախ պրոգրեսիստ» Լ. Սարգսյանի կախումը Ռուսաստանի օպորտունիստական կուսակցության՝ մենշևիկների և արևմուտքում նրանց քաղաքական ազգակիցների՝ II Ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատների գաղափարական ուսմունքներից, ակնհայտ է։ Ծաղրելով և քննադատելով հայ ժողովրդի «ազատագրության» դաշնակցական ծրագրերը, Լ. Սարգսյանն ինքը ևս չուներ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ռեալ ծրագիր և անհաղորդ մնաց ռուս ժողովրդի հետ սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու միջոցով և՛ ազգային, և՛ սոցիալական ազատագրության հասնելու պատմականորեն միակ հնարավոր և ճիշտ ուղուն։

---

16 Նույն տեղում, էջ 88։

17 Նույն տեղում, էջ 88—89։

Նոր «Մուրճի» գրական քաղաքականությունը

Կա մի բնագավառ, որտեղ «Մուրճը» հին ու նոր շրջանների բաժանող սահմանագիծն ասես ջնջվում է. դա «Մուրճի» գրականության բաժինն է, և այդ տպավորությունն էլ առաջանում է նույն հեղինակների կազմից, որոնք աշխատակցել են և՛ հին, և՛ նոր «Մուրճին». Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ալ. Ծատուրյան, Լ. Մանվելյան, Դ. Դեմիրճյան, Վրթ. Փափազյան, Շիրվանզադե, հեղինակներ, որոնք ամսագրին դեմոկրատական բնութագիր են բերում: «Մուրճին» աշխատակցած նոր հեղինակները, մեկ-երկու բացառությամբ, չեն խաթարում այդ բնութագիրը:

Ինչո՞վ էր հատկանշվում գրական մթնոլորտը նոր դարասկզբին. «Հայ նոր գրականության պատմության նախընթաց ոչ մի փուլում չէր եղել դեղարվեստական հոսանքների այնպիսի խայտաբղետ ու բարդ մի պատկեր, ինչպիսին տեսնում ենք մեր դարի առաջին երկու տասնամյակներում»[1]: Գրական երկու խոշոր ուղղությունները՝ իր դիրքերը ղիջած ռոմանտիզմը և հաղթանակի դրոշ պարզած ռեալիզմը միակ մարտնչողները չէին գրական մրցահրապարակում: Հանդես էին եկել գրական նոր ուղղություններ՝ սիմվոլիզմը, նատուրալիզմը, ֆուտուրիզմը և այլ «իզմեր», որոնք հավակնում էին առաջնության գրական պայքարում:

Մամուլը, հրատարակչական կազմակերպությունների սակավության պայմաններում, շարունակում էր պահպանել իր նշանակալից դերը գրական պայքարում, քանի որ նրա էջերում էր ծնվում գրական երկերի ղգալի մասը, նրա կողմից գնահատվում, կյանքի ուղեգիր ստանում: Պարբերականի գրական քաղաքականությունը դառնում է նրա գործունեության կարևոր չափանիշներից մեկը: Այս առումով աներկբայելի է, որ «Մուրճ» ամսագիրը նոր շրջանում «շարունակում էր մնալ արևելահայ լավագույն գրական հանդեսը»[2]: Նրա գրական քաղաքականությունը, գրական շարժման ավելի բարդ, խայտաբղետ ուղղություններով հարուստ այս շրջանում, հին «Մուրճի» նման հատկանշվում է դեմոկրատական գրականությանը սատար լինելու, առաջադեմ գրական ուղղությունները պաշտպանելու մղումով: Սակայն իբրև «անկուսակցական» օրգա-

---

1 «Հայ նոր գրականության պատմություն», հ. 5, Երևան, 1979, էջ 65:

2 Նույն տեղում, էջ 28:

նի, «Մուրճի» դռները փակ չէին նաև այլ ուղղությունների հեղինակների առջև, թեև նրանց երկերը որակ չեն կազմում ամսագրի գրական արտադրանքի ընդհանուր հաշվեկշռում։

Ամսագրում գերակշռող բաժինն է կազմում չափածոն և դա պատահականություն չէ և ոչ էլ խմբագրի նախասիրության հետևանք։ Դա ժամանակի գրական շարժման հատկանիշներից է։

Նոր «Մուրճի» գրական նվաճումներից է Հ. Թումանյանի վերադարձը ամսագիր։ Եթե նախորդ տասնամյակը, երբ բանաստեղծն աշխատակցում էր հին «Մուրճին» և հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին և երկրորդ ժողովածուները, նրա բանաստեղծական ինքնահաստատման և հաստատման տարիներն էին, ապա նոր դարաշրջանի առաջին տասնամյակում նա արդեն հայ գրականության առաջատար բանաստեղծն էր, որի ստեղծագործությունը հատկանշում էր գրական շարժման գլխավոր միտումը՝ ժողովրդայնությունը և ռեալիզմը։ Նոր «Մուրճում» հրապարակվեցին Թումանյանի «Անիծած հարսը», «Հոդհան», «Փարվանա» լեգենդները, «Սասունցի Դավիթ», «Դեպի անհունը», «Թմկաբերդի առումը» պոեմները և «Իմ դարդը» ու «Տրտունջ» բանաստեղծությունները, որոնք ժողովրդային արվեստի նոր, վառ փայլատակումներ լինելով, դեմոկրատական լիցք էին բերում նրան հրապարակող պարբերականին։

Ամսագրի գրական վաստակի պատկառելի բաժինն են կազմում գրական մյուս հսկայի՝ Ավ. Իսահակյանի մոտ ութ տասնյակի հասնող բանաստեղծությունները, որոնք պարբերաբար լույս տեսան նոր «Մուրճի» հրատարակության համարյա ամբողջ ընթացքում։ Իշխող հասարակարգի, նրա բարոյական կոդեքսի մերժման նախորդ տասնամյակի բանաստեղծական ընդհանուր տրամադրությունն այս շրջանում ավելի է խորանում, ռոմանտիկական շեշտվածություն ստանալով։ Անզիջում և անվերապահ է դառնում բանաստեղծի դիմադարձն այն աշխարհից,

Ուր որ ամենքը ամենքի ընդդեմ
Դաշույն են սրում՝ սիրտ փոխարեն[3]։

Ուր՝ «տեր կամ ստրուկ պիտի լինիս», «լուծ կամ լծկան պիտի լինիս», «մուրճ կամ զնդան պիտի լինիս»— ճշմարտություն չկա ուրիշ»[4]։ Բա-

---

3 «Մուրճ», 1902, № 3, էջ 59։

4 «Մուրճ», 1905, № 11—12, էջ 207։

նաստեղծը բերում է ճշմարտության իր իդեալը, որը հակոտնյան էր բուրժուական աշխարհի բարոյական ըմբռնման, և հումանիստական ու ազատասիրական իր գաղափարները դարձնում «Մուրճի» ընթերցողների սեփականությունը:

«Մուրճի» էջերից առաջին անգամ հնչեցին և անմիջապես մեծ ժողովրդականություն ստացան այնպիսի երգեր, ինչպիսին են՝ «Է՛յ, կանաչ ախպեր, դուն բարով եկար», «Սիրեցի, չարս տարան», «Ես որ մեռնիմ, ինձի թաղեք», «Դարդը սրտիս, աղքատ ու խեղճ», «Արազի ափին բոստանս լինի», «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Մեկը չեղավ, որ իմանար դարդերս», «Եղբայրության կամ թե սիրո» և այլն:

Հին «Մուրճի» զրական դեմոկրատական ավանդները նոր «Մուրճ» է տեղափոխում նաև Ալ. Սատուրյանը, որը ամսագրում ամենից շատ տպագրվող բանաստեղծներից է: Ժողովրդի վիշտն ու տառապանքը երդող բանաստեղծի խոսքը նոր դարասկզբին պայքարի կոչ է դառնում: Մուտալուտ հեղափոխությունը նոր շեշտ ու բովանդակություն է հաղորդում նրա պոեզիային.

Կռվենք աննահանջ, քանի չենք մեռել,
Կրռվումն է կյանքը, կրռվումն է փրկանք[5]...

«Մուրճում» տպագրված «Աշուղի երգերից» շարքը վկայում է, որ բանաստեղծը ճիշտ էր գտել այն սնուցող երակը, որը ոչ միայն սկսվում էր ժողովրդից, այլև վերադառնում դեպի ժողովուրդը: Ժողովրդական երգին բանաստեղծը միացնում է իր սրտի երգը, կարծես ջնջվում է սահմանը ժողովրդի ու բանաստեղծի միջև և ստացվում է մի ժողովրդական երգ, որի հեղինակը «դատապարտված» է մոռացման:

Ալ. Սատուրյանը երբեք չի մոռանում բանաստեղծի քաղաքացիական պարտքը: Հեղափոխության տարիներին նրա գրիչն ավելի խրոխտ ու մարտական է հնչում.

Երգիչ— դու կյանքի առաքյալ— զավակ,
Կյանքը հըրաշունչ երգի է կարոտ.
Երգի՛ր, որ լույսի կա՛ սուրբ հաղթանակ,
Որ կա և կը գա՛ ոսկի՛ առավոտ[6]...

---

5 «Մուրճ», 1901, № 7, էջ 72:

6 «Մուրճ», 1905, № 2—3, էջ 101:

Գնահատելով իր իսկ աշխատակցի դրական տաղանդը, նրա ստեղծագործությունների հասարակական հնչեղությունը, «Մուրճը» նրա «Գրչի հանաքները» գրքի հրատարակության առիթով (դրանց մի մասը նախապես տպագրվել էր ամսագրում) գրում է. «Աւհասարակ հասարակական ցավերի մոտով հանգիստ չէ կարողանում անցնել մեր բանաստեղծը և նրա «Գրչի հանաքներին» տակ դժվար չէ նկատել վիշտ և թաքուն արտասուք»[7]:

Բանաստեղծ Լևոն Մանվելյանը 1900-ական թվականներին «Մուրճում» հրապարակել է «Նկարիչ Թաշճյան», «Վերածնվածը» դրամանները, «Սասունցի Դավիթ և Մսրա Մելիք» դրամատիկական պոեմը և մի քանի բանաստեղծություններ: Այս ստեղծագործությունները, սակայն, որակական նորություն չեն մտցնում բանաստեղծի պոեզիայում, ուրեմն նաև «Մուրճի» չափածոյի բաժնում, և այսօր ունեն միայն գրապատմական նշանակություն, որովհետև գաղափարական բարձր նպատակամղումները, որ դրել է դրանց մեջ հեղինակը, գեղարվեստական համարժեք լուծում չեն ստացել: «Սասունցի Դավիթ և Մսրա Մելիք» պոեմը մեր էպոսի մի ճյուղի առաջին դրամատիկական մշակումն է, իսկ «Նկարիչ Թաշճյան» և «Վերածնվածը» դրամանները նվիրված են բուրժուական հասարակարգի բարոյական նորմերի, դրամի վրա հիմնված բուրժուական ընտանիքի քննադատությանը: Գնահատելի է, որ Հասարակական պայքարի այդ թեժ շրջանում Լ. Մանվելյանն առաջադիմական ուժերի, այն սերնդի հետ է, որը գալիս էր հին աշխարհի ավերի վրա նոր տաճար կառուցելու,

Տաճար ճշմարիտ լուսավորության—
Կեցցե նոր սերունդ և նոր գաղափար[8]:

Իր աշխատակցությունը «Մուրճին» շարունակեց նաև Դերենիկ Դեմիրճյանը: Ամսագրում հրապարակած նրա բանաստեղծությունները՝ «Ա՜խ, իմ անուշ ծաղիկները», «Կյանքի տեսիլը», «Կայծ», «Գոնատօր», «Ա՜խ, ես հիվանդ եմ», «Այս գիշեր վշտից ծանրացած հոգով» և այլն, պատկերում են որոնող, ընդվզող, բայց դեռ իր բանաստեղծական հավատամքը չգտած ստեղծագործողին, որին իր ազդեցության ոլորտն է առել սիմվոլիզմը: «Ա՜խ, ես հիվանդ եմ» բանաստեղծությունը շաա

7 «Մուրճ», 1901, № 6, էջ 209:
8 «Մուրճ», 1906, № 7, էջ 81:

բնորոշ է Դեմիրճյանի այդ շրջանի բանաստեղծական տրամադրության համար.

Եվ որպես անձև, անծիր մի սև ամպ,
Որ անհուն օդում չունի տեղ, դադար,—
Ես էլ նրա պես անձև տենչերով՝
Չգիտեմ երբեք, թե ու՞ր եմ գնում[9]...

Աբասխանյանի «Մուրճի» գրական քաղաքականությունը բնութագրելիս մեկ անգամ չէ, որ հոլովեցինք բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի անունը, որի հիմնադրած գրական նոր ուղղության հետևորդները հենց «Մուրճի» էջերում մեծ չափով նպաստեցին դրա ձևավորմանն ու հաղթանակին։ Նոր «Մուրճի» առիթով Հովհ. Հովհաննիսյանի անունը կարող ենք նշել իբրև ամսագրին աշխատակցող հեղինակի։ 1904—1905 թթ. «Մուրճում» տպագրվեցին պոետի «Վահագնի ծնունդը», «Գարնան խոհեր», «Արծիվն ու արտույտը», «Լուռ կաց, սիրտ իմ, այս աշխարհում», «Ասում ես, եղբայր, թե զուր ենք սպասում» բանաստեղծությունները, որոնք, անշուշտ, մտնում են «Մուրճի» գրական կապիտալի մեջ։

«Մուրճի» գրական կապիտալը կարելի է համարել նաև Վահան Տեր-Յաքի հինգ բանաստեղծությունները, որոնք տպագրվեցին ամսագրում 1906 թ. «Էլեգիա», «Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում», «Երբ կհոգնես, կգազազես դու կյանքից», «Աշնան սոնետներից» և «Յրատհար, հողմավար»։ Քանակով թեև փոքր, բայց այս բանաստեղծություններն առանձին գեղեցիկ կղզյակ են կազմում՝ իրենց պոետական լեզվով, արտահայտչականությամբ, տրամադրությամբ, նորություն բերելով «Մուրճի» գրական բաժնին։

«Մուրճում» է տպագրվել նաև Վահան Միրաքյանի «Լալվարի որսը» հայտնի պոեմը, որը շուտով մեծ ժողովրդականություն ստացավ և իրավամբ իր տեղը գրավեց հայ դյուցին նվիրված դասական երկերի շարքում։

Ամսագրում հրապարակված հայ պոեզիան հաստատում է ժամանակի գրական շարժման կարևոր հատկանիշներից մեկը՝ պոեզիայի գեղարվեստականը արձակի և դրամատուրգիայի նկատմամբ, ինչպես ծավալով, այնպես էլ գեղարվեստական մշակվածությամբ։

---

[9] «Մուրճ», 1904, № 7, էջ 27։

«Մուրճի» արձակի բաժինն ավելի ցայտուն է արտահայտում դասակղբի գրական տարամետ հոսանքների ներթափանցումները, երբ քննադատական ռեալիզմի առաջատար ուղղության հետ հարևանության էին անում ուշացած ռոմանտիզմն ու սիմվոլիզմը: Ամսագրի նոր հեղինակներն այս բաժնում ավելի շատ են: Հներից առաջինը նշենք Շիրվանզադեին, որը «Մուրճի» 1901 թ. № 5-ում տպագրից հայ ռեալիստական արձակի գոհարներից մեկը՝ «Արտիստը» պատմվածքը. Լևոն Շանթին, որը նույնպես մեկ ստեղծագործություն է տպագրել նոր «Մուրճում»՝ «Ուրիշի համար» դրաման. Վրթանես Փափազյանին, որը 1904—1905 թթ. «Մուրճում» հրապարակեց իր հրաշալի շարքը՝ «Պատկերներ գյուղից», որտեղ արձակագիրը ռուսական առաջին հեղափոխության հասարակական վերելքի ազդեցության տակ ավելի է ուժեղացրել իր ստեղծագործությունների դեմոկրատական շեշտվածությունը, սոցիալական հագեցվածությունը:

«Մուրճում» նոր անուն էր արևմտահայ նորավեպի աչքի ընկնող վարպետներից, արձակագիր Լևոն Բաշալյանը: Նրա աշխատակցությունը ոչ միայն վկայում է ամսագրի՝ քննադատական ռեալիզմի զարգացման և գրականության դեմոկրատացման համար մղած հետևողական պայքարի, այլև հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների հոգևոր կապերն ամրապնդելու նուանդուն ջանքերի մասին: Ամսագրում հրապարակված «Դալաթիո բնակը», «Տերտերին ուխտը», «Խաչախճին», «Երիտ կիներ», «Վերջին համբույրը», «Վրանին տակ» պատմվածքները արևմտահայության ճակատագրի գեղարվեստական խտացումներ են, որ քաղաքական և սոցիալական մերկացումները զուգորդվում են իրար, ներկայացնելով մի կողմից թուրքական բռնակալական լծի տակ և մյուս կողմից՝ բուրժուական անմարդկային կարգերի պայմաններում տառապող հայ ժողովրդի ծշվառ վիճակը: Բաշալյանի նորավեպերը դառնում են աղատագրական պայքարի կոչ ու պատվիրան:

Նույնը կարելի է ասել նաև արևմտահայ մեկ ուրիշ արձակագրի՝ Սառանձարի (Միսաք Դուլումճյան) մասին, որը «Մուրճում» հրապարակել է յոթ նորավեպ: Ամսագրում տպագրված նրա առաջին պատմվածքը՝ «Նորավեպին նորավեպը» մեր առջև պարզում է արձակագրի գրական դավանանքը, որը պաշտպանության տակ առնելով ռեալիզմը, ծաղրում է գրական էպիգոններին, որոնք հավակնում են նորավիպագրի անուն ու փառք վաստակել: Գրողը ծաղրում է և՛ արևմտահայ, և՛ արևելահայ («Հոսհոսան ու ինտելիգենտը») փուչ, պորտաբույծ երիտասարդներին, հուզելով ժողովրդի կենսական շահերին ծառայող մտավորականության

պահանջը։ Սակայն Առանձարի նախընտրած թեման արևմտահայության դառը ճակատագիրն էր։ Առանձարի նորավեպի երգիծական պատմելաձևը, հեղինակի խոստովանությամբ, «վշտի ծիծաղ» է, որովհետև կենցաղային, ծիծաղելի մանրուքների տակ ընդհանրացված է սոցիալական և քաղաքական ճնշման ահասարսուռ իրականությունը («Մորուքի սանտրը»)։ «Բուրդի վաճառականություն», «Կախաղանեն... ամուսնություն», «Հոգուս համար», «Երկու պատկեր» նորավեպերը պատկերում են Թուրքիայում ջարդերի հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական ծանր կացությունը։ Պետք է շեշտել, որ Առանձարի «վշտի ծիծաղի» մեջ միշտ առկա է անսահման սերը դեպի աշխատավոր զանգվածները, լավատեսությունը ապագայի նկատմամբ։

«Մուրճին» աշխատակցած արևմտահայ երրորդ գրողը Թլկատինցին է, որն ամսագրում տպագրել է «Ջալըմ տղան» դրաման։ Դեմոկրատ գրողը ծաղրի է ենթարկում ազգային «չոջ հարուստներին», նրանց բարոյազուրկ կյանքը, վաճառականական ապականված դասի բարքերը. դրանց հակադրում աշխատավոր մարդկանց մաքրությունը, բարոյական բարձր պահվածքը։ Դասակարգային սրված հակասությունների պատկերումը սոցիալական ուժեղ շեշտվածություն է հաղորդել պիեսին, վկայելով գրողի աշխարհայացքի բարձր դեմոկրատիզմը։

Մինչև այժմ նշված բանաստեղծներն ու արձակագիրները հատկանշում էին գրական շարժման առաջատար միտումները։ Սակայն, հարկ է նշել, որ «Մուրճից» հնչեցին նաև անառողջ ձայներ, որոնք նույնպես ժամանակի հասարակական կյանքի արձագանքն էին։ Մի կողմ թողնելով մեկ-երկու ստեղծագործությամբ ամսագրում հանդես եկած պատահական հեղինակներին, նշենք նրա մշտական աշխատակից Ավետիս Ահարոնյանին, որն ամսագրում տպագրեց իր բազմաթիվ պատմվածքները, «Մրրկի սուրբը» ու «Լուսյուն» վեպերը և մի քանի հոդվածներ։ Նրա աշխատակցությունը «Մուրճին» ընդհատվեց խմբագրի հետ կուսակցական հողի վրա բախման մեջ մտնելուց հետո։ Ա. Ահարոնյանի երկերը կարելի է համարել նրա քաղաքական հայացքների գեղարվեստական ընդհանրացումները, որոնցից նույնպես մեր առջև հառնում է դաշնակցության գաղափարախոսը։ Պատահական չէ, որ դարասկզբի բաղմերանգ դրական ուղղություններից Ահարոնյանին հարմար եկան ուշացած ռոմանտիզմն ու սենտիմենտալիզմը։ Իր կուսակցության ծրագրի նման էկլեկտիկ, հեղհեղուկ, անորոշ, ծայրահեղություններով լեցուն էին նաև գործունեության այն ծրագրերը, որոնցով առաջնորդվում էին Ահարոնյանի ստեղծագործությունների հերոսները, հավակնե-

լով ազատագրական պայքարի ուղի նշել հայ ժողովրդի համար: Մեծ մասամբ արևմտահայության ճակատագրին նվիրված նրա ստեղծագործություններին բնորոշ են սենտիմենտալիզմը, սրտակեղեք և զգայացունց նկարագրությունները, արհեստական էֆեկտիվ գեղնցկախոսությունը, որոնք կարող էին ազդել միայն կայուն գրական ճաշակ և քաղաքական համոզմունք չունեցող ընթերցողների վրա: Ահարոնյանի ուշացած, ժամանակավրեպ ռոմանտիզմը աններդաշնակ է հնչում «Մուրճի» ընդհանուր գրական համերգում, որի լեյտմոտիվը ռեալիստական, ժողովրդային գրականությունն էր:

Ամփոփելով «Հայ գրականությունը «Մուրճի» էջերում» բաժինը, պետք է նշել, որ անուրանալի է ամսագրի ծառայությունը հայ նոր գրականության զարգացմանը: Նրա աշխատակիցների հիմնական կազմը նույնանում է ժամանակի գրական շարժման առաջատարների հետ: Անկախ խմբագրի քաղաքական համակրություններից, ամսագիրը հին «Մուրճի» նման դառնում է դեմոկրատական գրականության դարբնոցներից մեկը, ժամանակի առաջատար գրական հանդեսը, որի էջերում լույս են տեսնում ազգային գրականության բազմաթիվ լավագույն երկեր:

Հայ մշակույթին մատուցած նոր «Մուրճի» աչքի ընկնող ծառայություններից մեկն էլ հայ թարգմանական գրականությանը բերած մեծ նպաստն է: Երբ Արասխանյանը որոշակի ծրագրված քաղաքականություն էր վարում, գտնելով, որ ամսագիրն ավելի շատ կոչված է ինքնուրույն գրականությունը զարգացնելու, որին ամսագրում ավելի մեծ տեղ էր տալիս, ապա նոր «Մուրճում» այդ համամասնությունը շատ հաճախ թեքվում է թարգմանական գրականության կողմը:

Թարգմանական գրականության պատկառելի բաժինը կազմում են ռուս հեղինակների գործերը: Հարկ է նշել, որ ամսագրի էջերում ցարական ինքնակալության և բյուրոկրատիայի սուր քննադատություն ծավալելով հանդերձ, նոր «Մուրճը», հնի նման, ուներ ռուսական ցայտուն կողմնորոշում, գիտակցում էր Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական իրադարձության բախտորոշ դերը հայ ժողովրդի համար, ըմբռնում ռուսական առաջավոր մտքի և մշակույթի նշանակությունը, գտնելով, որ միացումը հայ ժողովրդին բերեց և կշարունակի բերել տնտեսական և կուլտուրական զարգացման լայն հնարավորություններ: Երբ 1901 թ. նշվում էր Վրաստանը Ռուսաստանին միանալու 100-ամյակը, «Մուրճը» հոբելյանական օրերին գրում էր, որ պատմական այդ ակտը «մեր երկրի համար անհուն մեծ նշանակություն ուներ. Կովկասի

համար նոր գարագլուխ սկսվեց։ Ասիայի այս անկյունը, որ դարերից ի վեր ամենասոսկալի բռնությունների տակ էր հեծում և ներկայացնում էր արյան ու արտասուքների մի դժբախտ հայելենիք, մտնում էր հանգստության շրջանը։ Դա բավական չէ։ Ռուսաց զենքը ոչ միայն մտցրեց մեր մեջ օրինականություն, պատվի, գույքի և իրավունքի պաշտպանություն, այլև բաց արեց այն ճանապարհը, որով մեր երկիրը պիտի մոտենար քաղաքակիրթ աշխարհին, մասնակից լիներ նրա բարիքներին, որոնց հասել էր առաջադեմ մարդկությունը Եվրոպայում»[10]։ Հոդվածի հեղինակ Լեոն պատմաբանի խոր իմացությամբ վրաց և հայ ժողովուրդների պատմական ճակատագրերի անալոգիա է անում, շեշտելով, որ «Վրաստանի միացումը միայն վրացիների համար չուներ նշանակություն»[11]։ Նույն միտքն է հաստատում նաև Լ. Սարգսյանը, գրելով. «Ռուսաստանի մուտքը Անդրկովկասում մի փրկություն էր մահմեդական բռնության ծովի մեջ խեղդվող այդ երկու բուռ ժողովուրդների համար։ Ահա ինչու Անդրկովկասի բուն աշխատող քրիստոնյա ժողովուրդները անհուն բերկրանքով էին դիմավորում ռուս զորքերին»[12]։ Ռուս ժողովրդի հետ կուլտուրական շփման, ռուսական առաջադեմ մշակույթի բարերար ազդեցության տարածման գործի համար իրեն կոչված է տեսնում նաև «Մուրճ» ամսագիրը։

Հայ ընթերցող հասարակության մեջ ռուս գրականության պրոպագանդման գործում մեծ երախտիք ունի հատկապես ամսագրի աշխատակից Ալ. Ծատուրյանը։ Ինչպես և հին «Մուրճում», 900-ական թվականներին էս Ծատուրյանը ամսագրում հրապարակում է Լերմոնտովի, Նեկրասովի, Պլեշչեևի բանաստեղծությունների իր թարգմանությունները, որոնք աչքի են ընկնում դեղարվեստական բարձր մակարդակով։ Նոր դարասկզբին Ծատուրյանը սկսում է թարգմանել նաև Ի. Ս. Նիկիտինի ստեղծագործություններից։ Ժողովրդի վիշտն ու տառապանքը երգող ռուս դեմոկրատ բանաստեղծի սոցիալական բողոքով հագեցած բանաստեղծությունները չափազանց հոգեհարազատ էին հայ պոետին.

Սովոր եմ կրուվին, անհամբույր կյանքին,
Սովոր— վտիտ երիկին անվերջ դառնության.
Փոթորիկն է միշտ աղբյուր վեհ մտքի,
Աղբյուր-արցունքի, ոգևորության[13]...

---

10 «Մուրճ», 1901, № 2, էջ 237։
11 Նույն տեղում, էջ 252։
12 «Մուրճ», 1901, № 9, էջ 219։
13 «Մուրճ», 1902, № 9, էջ 37։

Նշանակալից երևույթ պետք է դիտել նաև «Մուրճում» Մաքսիմ Գորկու վեց պատմվածքների՝ «Բոլես», «Ընթերցողը», «Կովարարը», «Դանկոյի սիրտը», «Պառավ Իզերգիլի զրույցներից» և «Իմ ուղեկիցը», թարգմանությունների հրապարակումը, որոնցից վերջին չորսը կատարել է Ա. Աթայանը: Նոր «Մուրճը» հարստացրել է նաև Չեխովի թարգմանությունների հայերեն հավաքածուն երեքով՝ «Պշնամիներ» (թարգմ. Ա. Մ.), «Գեղեցկուհիները» (թարգմ. Տ. Հովհաննիսյանի), «Ճաշորդներ» (թարգմ. Ա. Աթայանի):

Թարգմանական ծավալուն գործերը տպագրվում էին «Մուրճի» հավելվածում: Այստեղ զետեղվեցին Ալ. Սումբատովի (Յուժին) «Դավաճանություն» դրաման (թարգմ. Ալ. Ծատուրյանի), Լ. Տոլստոյի «Հարություն» (թարգմ. Տ. Հովհաննիսյանի) և Ի. Տուրգենևի «Օրամուտին» (թարգմանիչը նշված չէ) վեպերը:

Ռուս գրականության պրոպագանդը չէր սահմանափակվում նախընտրելի հեղինակների ստեղծագործությունների (որոնց թիվն անցնում է հինգ տասնյակից) հրապարակումով: Տարբեր առիթներով (հոբելյանական տարելից, մահվան դեպք) կամ պարզապես անառիթ, հոդվածներ էին տպագրվում ռուս դասական գրողների մասին, որոնց նպատակն էր ոչ միայն ծանոթացնել հայ ընթերցողին ռուսական մշակույթի երևելի գործիչներին, այլև նրանց օրինակով ուղի նշել հայ գրականության զարգացման համար: Ստ. Լիսիցյանի՝ Գոգոլի մահվան 50-ամյակի առթիվ գրած հոդվածում վերլուծվում է ռուսական քննադատական ռեալիզմի հիմնադրի ստեղծագործական ուղին՝ ռուս գրականության հետագա զարգացման վրա նրա թողած հսկայական ազդեցության հարցադրումով, ընդսմին հենվելով Բելինսկու և Դոբրոլյուբովի կարծիքներին: Գրական նոր սերունդը վերցնելով Գոգոլից նրա պարզած դրոշակը, նշում է հեղինակը, «և ավելի բարձր պահելով, համարձակ առաջ գնաց, չվախենալով կռվելուց և այն ամենը քանդելուց, ինչ որ արմատից փտած էր և նեխված»[14]: Այսպիսի գրականությունը կարող է ծառայել հասարակության բարոյական վերածնությանը, այսպիսի գրականությունը պետք է դառնա ուղենիշ հայ գրողների համար,— այս է հոդվածի անվերապահ եզրակացությունը:

Չեխովի մահվան առիթով գրված հոդվածի մեջ քննադատ Ն. Ազբալյանն ուղղակի ասում է. «Ռուսահայերիս գեղարվեստական կրթու-

14 «Մուրճ», 1902, № 2, էջ 185:

թյան համար ես ավելի լավ միջոց չեմ ճանաչում, քան այս հեղինակի երկերն ուսումնասիրելը»[15]։

Անշուշտ «Մուրճի» քննադատները չէին կարող տալ ռուս գրողների ստեղծագործության համապարփակ գնահատականները, որին խանգարել են նրանց նախընտրած կուլտուր-պատմական դպրոցի մեթոդաբանության անձուկ շրջանակները, սակայն ռուս գրականությունը հայ գրականության համար ուղի ծառայեցնելու նրանց անդուլ ջանքերը գնահատելի են և անշուշտ ունեցել են իրենց դրական ազդեցությունը ժամանակի գրական շարժման, հայ գեղարվեստական մտքի զարգացման վրա։

Թե որքան մեծ է եղել «Մուրճի» ծառայությունը հայ ընթերցողներին օտար ժողովուրդների գրականությանը ծանոթացնելու գործում, բավական է ասել, որ իր հրատարակության ոչ լրիվ յոթ տարիների ընթացքում ամսագիրը հրապարակել է արտասահմանյան մոտ հիսուն հեղինակների յոթանասունից ավելի ստեղծագործություններ։ Դրանց միջ իբրև թարգմանական արվեստի բարձր նմուշ առաջինը պետք է նշել Ջորջ Բայրոնի բանաստեղծությունների («Եղբայրական մելոդիաներ», «Ջայլդ Հարոլդի» նախերգանքը, «Երազ» և «Այսօր վերջացնում եմ երեսունվեց տարիս») թարգմանությունները, որ բնագրից կատարել է տաղանդավոր թարգմանիչ Հովհաննես Մասեհյանը։ Բայրոնի «Այսօր վերջացնում եմ երեսունվեց տարիս» բանաստեղծությանը խմբագրությունն անհրաժեշտ է գտել կցել հետևյալ բացատրությունը, որն ավելին է, քան մի սովորական ծանոթագրություն. «Այս քերթվածը, Բայրոնի վերջինը, գրված է Միսսոլոնգիում, ուր նա կռվում էր Հունաստանի ազատության համար։ Շատերի կարծիքով նրա բոլոր երգերի գոհարն է այս. մեռնելուց քիչ առաջ գրված այս անասելի տխուր տողերի մեջ՝ բանաստեղծը կարծես մարգարեական հոգով գուշակում է իր մոտալուտ մահը, ոչինչ չի կարող ավելի լավ պատկերացնել Բայրոնի հոգին, քան այն վսեմ շեշտը, որով հրաժարվում է ամեն եսական զգացումից, ավելի ազնիվ նպատակի համար ապրելու և մեռնելու համար...»[16]։

Ահա երկու քառյակ այդ սքանչելի բանաստեղծությունից.

Ջարթիր, ոգի՛ս, Հունաստանը զարթել է.
Տես ո՞ւմ միջով քո կյանք-արյունդդ կրկին

15 «Մուրճ», 1904, № 7, էջ 131։

16 «Մուրճ», 1905, № 5, էջ 65։

Պիտի հոսե դեպի ծընող իր լիճը
Եվ այսուհետ՝ զարկ ուժգին։

....

Գընա՛ փնտրիր (փնտրող քիչ կա, գտնող շատ),
Գնա փնտրիր զինվորի մահ քեզ համար.
Ա՛յն է միայն քեզ արժանի. նայիր շուրջ,
Ընտրի՛ր քո տեղ, հանգիստ առ[17]։

Անգլիական գրականության դասականներից Չարլզ Դիկկենսը ներկայացված է իր «Ծննդյան արձակ երգերով» (թարգմ. Մխիթար Տեր-Անդրիասյանի)։ «Մուրճի» 1904—1906 թթ. հավելվածներում հատվածաբար տպագրվել է Ջեյմս Մորիերի «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում» վեպը։ Ուշադրության արժանի են թարգմանիչ Մ. Կարապետյանի հետևյալ խոսքերը. «Վաղ ժամանակներից պատմականապես կապված լինելով պարսիկ ցեղի հետ, հայերիս համար բնական պահանջ պետք է լիներ հիմնավորապես ու մոտից ծանոթանալու այդ ազգի առանձնահատկությունների, կենցաղի, վարք ու բարքի, վարչական ընդունակությունների, մի խոսքով ողջ ցեղի բնույթի հետ՝ իր լավ ու վատ կողմերով»[18]։ *Հենց այս դիտավորությամբ էլ կատարվել է Մորիերի հանրահայտ վեպի թարգմանությունը, որի մեջ ներկայացված է պարսիկ ժողովուրդը իր վարք ու բարքով։*

Հարուստ է ներկայացված հատկապես ֆրանսիական գրականությունը. միայն չորս վեպ՝ Ալֆոնս Դոդեի «Ֆրոմոն Կրտսեր և Ռիսլեր Ավագ» (թարգմ. Տ. Հովհաննիսյանի), Հանրի Բորդոյի «Հայրենի հողը» (թարգմ. Հ. Առաքելյանի), Ըրնե Բազենի «Օբերլենները» (թարգմանիչը չի նշված) և Վոլտերի «Կանդիտ կամ օպտիմիզմ» (թարգմ. Ա. Կ.), բազմաթիվ պատմվածքներ, այդ թվում Գի դը Մոպասանի, Անատոլ Ֆրանսի, և բանաստեղծություններ։

«Մուրճի» հրապարակած թարգմանական գրականության մեջ աչքի են ընկնում դրամատիկական ստեղծագործությունները։ Դրանցից են Հենրիկ Իբսենի «Բրանդը», Մորիս Մետերլինկի «Մոննա Վաննան» ու «Ներսը», Գերհարդ Հաուպտմանի «Մենակ մարդիկ» և Օկտավ Միրբոյի «Հողի հերոսը»։

---

17 Նույն տեղում։

18 «Մուրճ», 1904, № 12, հավելված, էջ 1։

Երկու ուշագրավ իրողություն ևս։ «Մուրճում» հրապարակվել են հունգարական ազգային մեծ բանաստեղծ Շանդոր Պետեֆիի երեք ստեղծագործությունները (Հ. Աճառյանի թարգմանությամբ՝ «Հունգարական դաշտավայրը» և Ալ. Ծատուրյանի թարգմանությամբ՝ «Պոետ և գինի» ու «Իմ սիրը»)։ Հակոբ Հակոբյանը «Մուրճին» է տրամադրել Ադա Նեգրիից կատարած իր թարգմանություններից չորսը։ Թվարկումը սահմանափակենք, նշելով մի քանի հանրահայտ անուններ՝ Լոնգֆելլո, Ուիտմեն, Շելլի, Հայնե, Շիլլեր, Միցկևիչ, Սենկևիչ, Սաադի, որոնց մեկ-երկու ստեղծագործությունները զարդարում են ամսագրի էջերը։

Թարգմանությունները հաճախ ուղեկցվում են հեղինակներին ծանոթացնող հոդվածներով։ Հենրի Սենկևիչի «Պողնանի ուսուցչի հիշատակարանից» պատմվածքին նախորդում է թարգմանչի՝ Ստ. Լիսիցյանի հոդվածը լեհ մեծ գրողի մասին, որտեղ ասված է. «Սենկևիչը կարողացել է զարնել ամեն մի քաղաքակիրթ մարդու հոգևկան լարերին, ցույց տալով նրա այժմյան խարխափող վիճակը ու կանչելով միահամուռ ոգևորության՝ հանուն սիրո դեպի ճնշվածները, զրկվածները, թույլերը,— հանուն բոլոր անձնական, ազգային, եսամոլական ձգտումների ձուլման ընդհանրական բարօրության հետ»[19]։ Ամսագիրը չի բավարարվում սոսկ գեղարվեստական ստեղծագործության հրապարակումով։ Նա օգնում է ընթերցողին հասկանալու նրա գաղափարական բովանդակությունը, մտածելու նրանում բարձրացված այն հարցերի շուրջը, որոնք համահնչուն էին նաև հայ ժողովրդի այդ ժամանակվա խոհերին։

Ֆինլանդացի կին գրող Միննա Կանտի «Կիրակի օրը» պատմվածքին նույնպես նախորդում է «Երկու տող» հեղինակի մասին. «Ֆիննուհի գրողի աշխատությունները նշանավոր են ոչ այնքան գեղարվեստական տեսակետից, որքան իր խոր հայացքներով և ժողովրդի կյանքի բազմակողմանի ուսումնասիրությամբ։ Միննա Կանտը պաշտպան է հանդիսանում բոլոր տառապյալներին և ճնշվածներին, նամանավանդ իրավազուրկ կանանց... Իր գրվածքներում նա պաշտպանում է աղքատին հարուստի դեմ, կնոջը՝ հնացած և անարդար օրենքների դեմ»[20]։ Այս տողերը պարզում են ամսագրի՝ թարգմանական երկերի նախընտրության սկզբունքները։

Այս բոլոր հոդվածները կարելի է և պետք է ըմբռնել նաև իբրև հանձնարարականներ՝ հայ գրականության հետագա զարգացման և դե-

19 «Մուրճ», 1901, № 1, էջ 108։

20 «Մուրճ», 1901, № 4, էջ 5—6։

մոկրատացման ճանապարհին։ Այս առումով առանձնապես գնահատելի է երիտասարդ տաղանդավոր քննադատ Վ. Նալբանդյանի մեծ հոդվածաշարը նվիրված նորվեգական հանճարեղ գրող Հենրիկ Իբսենին։ Մենագրության ընդգրկում ունեցող այդ հոդվածաշարը կարելի է նաև համարել ամսագրի գրական նախասիրությունների ամփոփագիրը, որից կարելի է մակաբերել այն հարցի պատասխանը, թե ինչպիսի գրականության զարգացմանն էր հետամուտ ամսագիրն իր վարած գրական քաղաքականությամբ։ Իբսենի գլուխգործոցը՝ «Պեր Գյունտը», քննադատը համարում է «նորվեգական բնավորության հայելին», որտեղ «արտափայլում է իր հայրենակիցների դեմքը, էությունը»[21]։

Ակներև է ազգային գրականության պահանջի սրումը, գրականությունն, որն ի մի հավաքելով ազգի ողջ հոգևոր ունեցվածքը, ազգային ճակատագիրը քննում է երեք ժամանակների մեջ՝ անցյալի, ներկայի և ապագայի։ «Հանճարեղ նորվեգացին,— գրում է Նալբանդյանը,— բուն սկանդինավյան բերք է, հյուսիսային մռայլ երկնքի և դժգույն արևի իսկական պտուղը»[22]։ Կուլտուր-պատմական հայեցակետով մոտենալով գրողի ստեղծագործությանը, քննադատը նրա գլխավոր արժանիքն է համարում ըմբոստանալը տիրող անարդար կարգերի և հետահայաց մրտածողության դեմ. «Դժգոհ, անբավական իր ժամանակվա հասարակական կարգերից, նա անխնա կերպով հարվածում, մտրակում է զանազան «սրբագործված» սկզբունքների ձևերը— և՛ սխալ ըմբռնված ամուսնությունը, և՛ սերը, և բարեկամությունը, և՛ հիվանդոտ իդեալիզմը և այլն»[23]։ Ավելացնելով սրան Իբսենի տաղանդի մյուս բնորոշ գիծը, որի ստեղծագործություններից միշտ անպակաս են եղել կենսատու օպտիմիզմի ճառագայթները, քննադատը բացահայտում է գրական երկի մնայուն լինելու գաղտնիքը։ Ակներև է, որ հոդվածի նպատակը լոկ ընթերցողին Իբսեն-ստեղծագործողի հետ ծանոթացնելը չէ, այլ հաստատելը գեղագիտական այն սկզբունքների, որոնք պետք է դառնային գրական նոր շարժման մղիչները։ Դրանում կարելի է համոզվել նաև ծանոթանալով խմբագրության կարծիքին Վահան Նալբանդյանի մասին՝ որպես ամսագրի «տաղանդավոր աշխատակցի»։ Այս բնորոշումը մենք քաղում ենք ամսագրի այն համարից, որտեղ տպագրված է «Հենրիկ Իբսեն» հոդվածի

---

21 «Մուրճ», 1902, № 3, էջ 89։

22 «Մուրճ», 1902, № 12, էջ 126։

23 Նույն տեղում, էջ 127—128։

վերջին հատվածը և նաև... նրա հեղինակի՝ Վահան Նալբանդյանի մահախոսականը։

«Վահան Նալբանդյանի ցավալի մահով,— գրում է ամսագիրը,— հայ հասարակությունը կորցնում է իր մի լավագույն անդամին. հայ գրական անդաստանը, որ հմուտ ձեռքերի այնպես կարոտ է, զրկվում է մի լավ մշակից, և մեր թերթը, մասնավորապես, իր աշխատակիցների շարքի մեջ տեսնում է մի զգալի պարապ»[24]։ Այնուհետև կարճատև կենսագրությունը. Վ. Նալբանդյանը ծնվել է Վանում, 1876 թ., սովորել Ներսիսյան դպրոցում, բարձրագույն կրթություն ստացել Գերմանիայում։ 1901 թվականից սկսել է աշխատակցել «Մշակին» և «Մուրճին»։ «Նրա գրած թատրոնական և մատենագրական տեսությունները միանգամից նրա վրա դարձրին հասարակության լրջմիտ մասի խորին ուշադրությունը և նրա անվանը կապեցին քաղցր հույսեր։ ...Որպիսի՜ տխուր զուգադիպություն. դեռ անցյալ տարի այս օրերում, երբ նա «Մշակում» հրապարակեց իր մի ուսումնասիրությունը Դուրյանի մասին, ով կարող էր կարծել, թե նա էլ մի Դուրյան է, մի բուրալից, բայց վաղանցուկ մի ծաղիկ, որի վրա շուտով փչելու է մահվան քամին»[25]։ Մահախոսականից երևում է, որ հանձին երիտասարդ քննադատի, «Մուրճը» գտել էր իր գեղարվեստական խոսաբերանին։ Նրա կարճատև, բայց արգասավոր աշխատակցությունն ամսագրին ևս հաստատում է, որ ամսագիրը ծրագրված և հետևողական քաղաքականություն էր իրականացնում՝ ծանոթացնել հայ ընթերցողին համաշխարհային գրականության նվաճումներին։ Ոչ միայն այդ. հրահրել և նպաստել ազգային գրականության զարգացմանը, առաջադեմ գրական ուղղությունների հաստատմանը՝ նաև օտար հեղինակությամբ։ Թարգմանական գրականությունը մի կարևոր խնդիր ևս ուներ՝ պատասխանել ժամանակի հասունացած հարցերին, զինել ազգին առաջադեմ գաղափարներով, որոնք արդեն այլ ժողովուրդների սեփականություն էին։

Մինչև այժմ մենք նշեցինք միայն այն հոդվածները, որոնք ծանոթացնում են «Մուրճում» հրապարակված թարգմանությունների հեղինակներին։ Սակայն դրանցով չի սահմանափակվում արտասահմանյան գրականության պրոպագանդը ամսագրի էջերում։ Միաժամանակ տպագրվել են հոդվածներ տարբեր գրողների, գրական ուղղությունների

---

24 «Մուրճ», 1902, № 12 էջ 250։

25 Նույն տեղում, էջ 251։

մասին, դարձյալ արտասահմանյան մշակույթը պրոպագանդելուն հարակից նպատակ ունենալով դարմանել ազգային ցավերը: Այսպես, օրինակ, «Էմիլ Զոլան և նրա երկերը» հոդվածը (1901, № 2), փորձում է բացատրել ռոմանտիզմից ռեալիզմին անցնելու պատմական հաջորդափոխության անխուսափելիությունը: «Վիկտոր Հյուգոն» հոդվածը, գրված գրողի ծննդյան 100-ամյակի առթիվ, հարգանքի տուրք է ֆրանսիական ռոմանտիզմի մեծագույն ներկայացուցչին: «Անուններ կան, որոնք հավասարապես սիրելի են աշխարհի բոլոր ազգերին. դրանք այն մարդկանց անուններն են, որոնք գործել են ամբողջ մարդկության օգտին, որոնց կյանքի ամբողջ նշանաբանը եղել է ամենալայն մարդասիրությունը, բոլոր մարդկանց և բոլոր ազգերի եղբայրությունը: Վիկտոր Հյուգոն այդ համաշխարհային սիրելիների թվում մի առանձին, գեղեցիկ տեղ է գրավում:... Վիկտոր Հյուգոն մեզ էլ է դաստիարակել իր հրաշալի գրչով»[26]: Այս տողերով «Մուրճը» ևս իր մասն է բերում ժողովուրդների բարեկամության, մշակութային կապերի ամրապնդման գործին: Հոդվածը վերջանում է հետևյալ բազմանշանակ խոսքերով. «Եվ երախտագետ հայրենիքը դեռ էլ շատ առիթներ կունենա իր հիացմունքի և ոգևորության ցույցերով հարգելու իր մեծ զավակի անմահ հիշատակը: Երանի այն հայրենիքին, որ այսպիսի պարտականություններ է կատարում»[27]: Ակնարկը թափանցիկ է, մատը դրված է ազգային ցավի վրա...

Նման հոդվածների շարքը կարելի է շարունակել: Սակայն դրա հարկը չկա: Անառարկելի է «Մուրճի» մեծ ծառայությունը հայ և այլ ժողովուրդների հոգևոր կապերի ամրապնդման, հայ ընթերցողներին համաշխարհային մշակույթի գանձերին ծանոթացնելու գործում: Անառարկելի է, դրանով իսկ հայ ազգային գրականության զարգացմանը ևս նրա բերած նպաստը:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը հայ իրականության մեջ գրական քննադատության և գրականագիտության ինքնորոշման, որպես ինքնուրույն գիտության կազմակերպման տարիներ էին: Այս երևույթին ականատես եղանք հին «Մուրճում»: Նոր «Մուրճի» շրջանում վերահասու ենք այդ պրոցեսի խորացմանը և հասունացմանը, երբ քննադատական միտքն ավելի է հարստացնում իր տեսական զինանոցը, մշակում իր սկզբունքներն ու մեթոդաբանությունը: «Հայ նոր գրականության պատմության

---

26 «Մուրճ», 1902, № 2, էջ 212:

27 Նույն տեղում, էջ 220:

նախընթաց ոչ մի փուլում քննադատությունն այնպիսի ներգործուն դեր չի խաղացել գեղարվեստական պրոցեսի մեջ, ինչպես XX դ. սկզբին»[28]:

Այժմ տեսնենք, թե նոր «Մուրճը» ինչ մասնակցություն էր բերում գրական տեսական պայքարին:

Քննադատությունն ամսագրի մշտական բաժիններից էր: Այն խորագրված էր «Մատենախոսություն»: Ամսագրի նախասիրած ժանրերից մեկը կարճ գրախոսությունն էր, որի նպատակն էր կողմնորոշել ընթերցողին նոր լույս տեսած, գաղափարական և գեղարվեստական առումով խայտաբղետ գրական արտադրանքի մեջ: Հասկանալի է, «Մուրճը» դա անում էր իր քաղաքական և գեղագիտական չափանիշներով: Գնահատելի է, որ ամսագիրը յուրաքանչյուր գրական երկի մոտենում էր նրա հասարակական արժեքի և գեղարվեստականության չափանիշով: Նկատելի են, անշուշտ, առանձին դեպքերում գերագնահատության, թերագնահատության երևույթներ, ոչ ճիշտ, սուբյեկտիվ, միակողմանի կարծիքներ, սակայն ամսագրի համար բնորոշը գրական առաջատար ուղղությունների հետևողական պաշտպանությունն է՝ ինչպես այդ ուղղությունների երկերի հրապարակումով, այնպես էլ նրանց դատի պաշտպանությամբ՝ տեսական զենքերով: Դիտելի է կարճ ձևի մեջ դիպուկ, համոզիչ գնահատական տալու ձգտումը: Ամսագիրը, օրինակ, խստագույնս դատապարտում է դեկադենտական գրական ուղղությունները, որոնք առատորեն բարգավաճում էին Եվրոպայում, ծնունդ տալով տեղական էպիգոնների տարատեսակների՝ փոքր ազգերի գրական ճահճուտներում: Ամսագրի հենց առաջին համարի մատենախոսության մեջ Լ. Սարգսյանը ծաղրում է «եվրոպական հսկաների» հետ ոտք մեկնող տեղական «գաճաճ դեկադենտներին», որոնք բոժոժներով զարդարված, տարօրինակ զգեստներ են հագցնում մեր բանաստեղծական լեզվին, սավառնում «դեկադենտների զառանցական աշխարհներում»[29]:

Ամսագրի առանձնահատուկ ուշադրությանն են արժանանում ռուս ականավոր գրողների և քննադատների գործերի հրապարակումները: Օրինակ, Ն. Ա. Դոբրոլյուբովի «Ալեքսանդր Գավազցի քահանան և իր քարոզները» հոդվածի թարգմանությանը հատուկ գրախոսություն նվիրելով և գովաբանելով թարգմանչի՝ Գևորգ քահանա Մկրտումյանի արած հաջող ընտրությունը՝ «ռուս հայտնի քննադատ Դոբրոլյուբովի հոդվածը», ամսագիրը, սակայն, դժգոհ է թարգմանությունից և գտնում է, որ այն

---

28 «Հայ նոր գրականության պատմություն», հ. 5, էջ 138:

29 «Մուրճ», 1901, № 1, էջ 218:

նորից պետք է թարգմանվի։ Մ. Գորկու «Ամայի դաշտում» պատմվածքի հայերեն լույս տեսնելու առիթով դրվատվում է գրողի վարպետությունը, որը «տաղանդավոր կերպով վերարտադրում է հատակի մարդկանց «վարք ու բարքը, նրանց թշվառությունը և այդ թշվառությունից առաջացող արատները, նրանց մտածումներն ու զգացմունքները»[30]։

Գնահատելի է, որ հաճախ վիճելի հարցերում ամսագիրը դիմում է մեծ հեղինակությունների միջամտությանը։ «Մուրճի» 1901 թ. № 3-ում լույս է տեսնում Մուրացանի «Ռուզան» դրամայի մասին գրախոսություն, որտեղ հեղինակը մեղադրվում է պատմական ճշմարտությանն անհարազատ մնալու մեջ։ Մի քանի համար հետո ամսագիրը հրապարակում է Մուրացանի պատասխան նամակը։ Այնտեղ մեջբերված Բելինսկու խոսքերն այն մասին, որ արվեստագետն իրավունք ունի եղծել պատմությունը, որը գրողի գաղափարի համար լոկ շրջանակ է ծառայում, որ կարևորը բանաստեղծական ճշմարտությանը հավատարիմ մնալն է և ոչ թե պատմական-փաստական ճշմարտությանը, վեճը լուծում են հօգուտ Մուրացանի։

Կարճ մատենախոսությունները հաճախ իրենց տեղը ղիջում են երկար հոդվածների, նման դեպքերում դրանք մտնում են «Քննադատություն և մատենախոսություն» խորագրի տակ։ Ծավալուն հոդվածները, ինչ խոսք, ավելի մեծ հնարավորություն են տալիս պարզելու խմբագրության դավանած գեղագիտական սկզբունքները։ Այս առումով ուշադրության արժանի է Հովհ. Թումանյանի «Բանաստեղծությունների» (1903 թ.) ժողովածուի մասին գրված գրախոսականը։ Նրանում ճիշտ է նկատված Թումանյանի պոեզիայի ընդհանուր ձեռքբերումը. «Պ. Թումանյանը հայ բանաստեղծ է, հայ ժողովրդական բանաստեղծ այդ բառի լայն իմաստով», «Թումանյանի շնորհիվ նրա հայրենի գյուղը լեզու է առնում և խոսում»[31]։ «Մուրճի» քննադատը գտնում է, որ Թումանյանին էր վիճակված մեր ազգային պոեզիայի մի զգալի պակասը լրացնելու երջանկությունը։ «Նա գյուղից, լեռներից, ձորերից, անտառներից եկավ և իր հետ բերեց «Անուշը»։ Մի ամբողջ աշխարհ է այդ պոեման, գեղեցիկ, հմայիչ աշխարհ»[32]։ «Անուշը» համարվում է գոհար մեր գեղարվեստական գրականության մեջ, որի հեղինակի «հոգում ապրում է հայ

30 «Մուրճ», 1903, № 1, էջ 157։

31 «Մուրճ», 1904, № 1, էջ 173։

32 Նույն տեղում, էջ 175։

նախը
չի խղդը: Նա երգում է այդ ժողովուրդը, երգում հենց նրա համար:
է, շատ լավ է, որ այդպես է»[33]: Ակնածանքով պետք է կարդալ
գրաղերը. սրանք թումանյանագիտության առաջին ընձյուղներից են:
Թվականին լույս է տեսնում նաև Ավ. Իսահակյանի բանաստեղ-
դությունների ժողովածուն: «Մուրճը» շտապում է դրախոսել այն: Սա-
ՏՀ պետք է նշել, որ հոդվածի հեղինակը՝ Ալ. Ռուբենին, «սոցիալա-
կան» գույն փնտրելու իր չափից ավելի ոգևորության մեջ սայթաքում է
և սխալ գնահատում Իսահակյանի պոեզիան, որ իբր նա «լոկ անհատա-
կան վշտերի և ցավերի երգիչ է», որին հասարակական հոգսերը չեն
հետաքրքրում: Սոցիոլոգիական զուտ հիվիկ հայացքը միշտ կառչում է տառից,
խաբուսիկ արտաքին տպավորությունից և չի տեսնում էությունը, խոր-
քը: Չտեսնել Իսահակյանի անհատական լիրիկայի մեջ ազգային և նաև
համամարդկային վշտի արձագանքները, նշանակում է չհասկանալ նրա
արվեստը, կամ էլ կանգնած լինել սխալ մեթոդաբանական դիրքերում:
Թեև խմբագրությունը ծանոթագրության մեջ հայտնում է, որ ոչ բոլոր
կետերում է հեղինակի հետ համաձայն, սակայն այս հոդվածը պետք է
դիտել իբրև «Մուրճի» վրիպումներից:

«Մուրճում» տպագրվում է արևմտահայ գրող, ամսագրի աշխատակից
Առանձարի «Մեր գրականության շուրջը» հոդվածը, որտեղ հեղինակը
սրտի ցավով գրում է այն տխուր իրողության մասին, երբ «փոքրաթիվ
ազգի մը երկու մեծագույն հատվածները փոխադարձաբար անծանոթ կը
մնան իրարու գրականության... Ջեմ հերքեր բնավ քաղաքական բաժա-
նումի մեծ ազդեցությունը այս չարիքին վրա, սակայն մյուս կողմե չեմ
ալ ընդունիր, թե երեկվան սահմանները կրնան իրարմե այս աստիճան
հեռացնել ընդհանուր ավանդույթներով ու ընդհանուր հիշատակներով
հինցած բազմադարյան ազգի մը դրացի երկու մասերը»[34]: Առանձարը
մատը դնում է ազգային վերքի վրա: Նա կոչ է անում ռուսահայ գործիչ-
ներին, հրապարակախոսներին, գրողներին իրենց իսկ ձեռքերով քանդել
դաժան ճակատագրի հրամանով ստեղծված պատնեշը և «անմիջապես
գործնական միջոցներու դիմեն իրենց ընթերցողները թուրքահայ գրա-
կանության ծանոթացնելու և միշտ հաղորդ պահելու համար»[35]:

Առանձարի այս հորդորին առաջինն արձագանքում է «Մուրճ» ամ-
սագիրը, արձագանքում գործնական միջոցներով՝ պարբերաբար տպա-

---

33 Նույն տեղում, էջ 187:
34 «Մուրճ», 1903, № 1, էջ 39:
35 Նույն տեղում, էջ 54:

գրելով արևմտահայ գրողների ստեղծագործություններից և հոդվածների մի ամբողջ շարք՝ նվիրված արևմտահայ ականավոր բանաստեղծներին, արձակագիրներին ու հրապարակագիրներին։ Արևելահայ ընթերցողները հնարավորություն են ունենում ծանոթանալու Մատթեոս Մամուրյանի, Ստեփան Ոսկանի, Սրբուհի Տյուսաբի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի, Հակոբ Պարոնյանի և այլոց կյանքին ու գրական վաստակին։ Այսօր այդ հոդվածները չի կարելի կարդալ առանց ակնածանքի՝ իբրև արեվելահայերի առաջին գնահատանքի խոսք արևմտահայ գրական երախտավորների մասին։

Ահա ինչպես է ներկայացված Ստեփան Ոսկանը. «Շատ ինքնատիպ, ուժեղ, համառ ու տոկուն մի բնավորություն։... Ստեփան Ոսկանը մի խոշոր անձնավորություն է նախ և առաջ իբրև հասարակական գործիչ։ Նրա կյանքը այն հազվագյուտ կյանքերից է, որոնց պետք է ուսումնասիրել մի առանձին հետաքրքրությամբ, նույնիսկ հիացմունքով»[36]։ Այս հանձնարարականի հեղինակը Լեոն է։ Պատմելով Ոսկանի հեղափոխական գործունեության մասին Փարիզում, երբ նա՝ միակ հայը մկրտված 1848-ի ավազանում, դարձավ ազատ խոսքի իսկական նախահայրը մեզանում, Լեոն ավելացնում է. «Դա մի տաղանդավոր հրապարակախոս էր, մինչև հոգու խորքը տոգորված եվրոպական առաջադեմ մտքերով... Աչ ու ձախ շառաչում է Ոսկանի մտրակը, հարվածում է մինչև այդ անսխալական համարված հասկացողությունները, ազգային կուռքերը։ Այդ հարվածները տակնուվրա են անում հայկական ճահիճը, առաջ են բերում աւտամների կրճտոց, սաստիկ թշնամություն»[37], «Դա հայկական առաջին ազատ ու անկախ միտքն էր, մի միտք, որ ծնվելով Եվրոպայում, պողպատի ամրություն ստանալով, գալիս էր մեզ մոտ՝ դարերի մտավոր ստրկության թանձր ու սև վարագույրը պատռելու։ ...Ստեփան ոսկանները նոր օրերի, նոր հայացքների արշալույսն էին մեզանում»[38]։ Այս գնահատականները, որ արվում են հայ ազգային-ազատագրական պայքարի խոշոր ներկայացուցիչներից մեկին, դրականորեն են բնութագրում նաև իրեն՝ «Մուրճին»։

Կարդանք դարձյալ Լեոյի ձեռքով գրված տողերը, այս անգամ բանաստեղծ Պեշիկթաշլյանի մասին. «Ահա մի խոշոր երախտավոր դեմք, թուրքահայերի ազգային վերածնության շրջանի զարդերից մեկը։ Պեշիկ-

36 «Մուրճ», 1901, № 11, էջ 110։

37 Նույն տեղում, էջ 125։

38 Նույն տեղում, էջ 132։

Թաշչյանին մենք ճանաչում ենք իբրև զգայուն, տաղանդավոր բանաստեղծի»[39]: Արևմտահայ վիպասանուհի Սրբուհի Տյուսաբի կյանքն ու գրական վաստակն արժեքավորելիս, Լեոն նրան է վերագրում հայ իրականության մեջ կանանց հարցը քննարկման օրակարգ դարձնելու համարձակ քայլը: Նա գրում է. «Չկա հաղթություն առանց կռվի: Եվ տիկին Տյուսաբ մի վայրկյան անգամ չէ վարանում այս պարզ ճշմարտությունը հայ կանանց հանձնարարելու: Նա դրվատում է մաքառումը՝ իրավունքներ ձեռք բերելու համար, հրավիրում է չընկճվել հասարակության սահմանած կարգերի տակ. նահատակվել, բայց չհպատակվել անարդարության: Անկախ, այնիվ աշխատանքը կազատե կնոջը տղրկական հպատակությունից, կտա նրան պատվավոր դիրք հասարակության մեջ»[40]:

Դուրյանին նվիրված ներբող-հոդվածը հանճարի անցագիր է տալիս դալուկ ու խորշոմած ճակատով, թախծալի հայացքով պատանի ստեղծագործողին, որն «իրավունք ունի կանգնելու մեր հայտնի բանաստեղծների շարքում, իսկական երգչի դափնին ձեռքին»[41]: Մեջբերումները կարելի է շարունակել, սակայն ընդհանրացնելու համար այսքանն էլ բավական է: «Մուրճը» արժեքավոր գործունեություն ծավալեց արևմտահայ գրականությունը ռուսահայերի մեջ մասսայականացնելու գործում: Դա արեց սիրով, նվիրումով, իր կատարած գործի կարևորության խոր գիտակցումով:

«Մուրճի» քննադատության բարձրակետը 50—60-ական թվականների արևելահայ նշանավոր գործիչներին՝ Ստ. Նազարյանին և Միքայել Նալբանդյանին նվիրված հոդվածներն են: Մերձավոր անցյալին վերադառնալու ամսագրի նպատակադրված քայլը թելադրված էր հայկական լիբերալիզմի էվոլյուցիայի առաջացրած մտահոգությամբ: Այդ բնականոն պատմական զարգացումը նրան աստիճանաբար ձերբազատել էր դեմոկրատիզմի շղարշից, հեռացրել ժողովրդից, կյանքի գարկերակից, և ահա, ամսագիրը ճիգ է անում հարություն տալու փոթորկուն ժամանակի՝ 50—60-ական թվականների ոգուն:

«Ռուսահայ հրապարակախոսության նահապետը» վերնագրով հոդվածում՝ նվիրված Ստ. Նազարյանին, քննադատ Կ. Կոսիկյանը գրում է. «Մեր ժամանակը, որ աղքատ է իդեալներով, կարող է շատ բան սովորել վաթսունական թվականների մշակներից: Նրանց ջանքերով է կենդանա-

---

39 «Մուրճ», 1901, № 7, էջ 189:

40 Նույն տեղում, էջ 195:

41 «Մուրճ», 1903, № 3, էջ 136:

ցել մեր կյանքը... Ոգևորված ազգաշինության վեհ գործով, հայ մտածողները ձեռք են զարկել տենդային աշխատանքի. շատ տեղ ու նիրակներ են ջարդել նրանք, շատ եռանդ ու խելք են բանեցրել, իրենց դատը առաջ տանելու համար»[42]: Իրավացի է քննադատը գտնելով, որ 60-ական թվականների մտավոր-բարոյական ժառանգությունը շարունակում էր հուզել հասարակական միտքը: Այդ ժամանակներից բուռն թափով սրվող բուրժուադեմոկրատական հեղաշրջման պահանջները փաստորեն լուծում չէին ստացել: Ահա ինչու է Կուսիկյանը ետ նայում դեպի մեր «հոգևոր գարնան առաջին գուշակները», որոնց պայքարի էստաֆետն ուզում է տեսնել նոր սերունդների ձեռքին: Կուսիկյանը գտնում է, որ «Հյուսիսափայլ» ամսագրով Նազարյանն ուսուցիչ-դաստիարակի պաշտոն է ստանձնում, որպեսզի օգնի ազգին հնացած տան փոխարեն կառուցելու նոր ազգային շենք՝ եվրոպական քաղաքակրթության հաստատուն հիմքերի վրա:

Քննադատը Նազարյանին համարում է մեզանում «մտրակող ուղղության» հիմնադիրը, որն արշավանք սկսեց հնի դեմ համոզված, որ բավական չէ ճահճացած կյանքի բորբոսը մաքրել սպունգով, այլ հարկավոր է անցկացնել քաղաքակրթության հրով, բախել վաստակավոր Եվրոպայի դռները և ընթանալ նրա հարթած ճանապարհով: Նազարյանի թույլ կողմն է դիտվում ժողովրդի բուն հոգսերին անտեղյակ լինելը, որի համար նրան որակում է որպես «տեսական հրապարակախոս»: Այսուհանդերձ, Կուսիկյանը Նազարյանին շատ բարձր է գնահատում, հոդվածը եզրափակելով այս խոսքերով. «Նա բացեց մեր առաջ արևմտյան մտքի լայնատարած ասպարեզը, դուրս բերեց մեր հասարակական միտքը նեղ, կրոնական մթնոլորտից և ուղղեց նրան դեպի ինքնաճանաչության և ինքնագործունեության գաղափարը... Այսօր հասարակության լավագույն մասը, երախտագիտությամբ լցված, համարում է նրան մեր առաջադիմության ավազ դրոշակակիր, ռուսահայերի հրապարակախոսության նահապետ»[43]:

Միքայել Նալբանդյանին նվիրած իր հոդվածին Կուսիկյանը ենթավերնագիր է ընտրել՝ «Մարտնչող հրապարակախոսը»: Այս հոդվածը նույնպես պետք է համարել «Մուրճի» հրապարակախոսության նվաճումներից: Լույս տեսնելով հեղափոխության օրերին, այն կյանքը ժողովրդի ազատագրությանը նվիրած գործչի օրինակ է պարզում: Կուսիկյանը

---

42 «Մուրճ», 1902, № 1, էջ 58:

43 Նույն տեղում, էջ 77:

գրում է. «Մ. Նալբանդյանը 60-ական թվականների ամենաբնորոշ գործիչներից մեկն է, համախոհ և գինակից Ս. Նազարյանցի, տաղանդավոր աշխատակից «Հյուսիսափայլ» ամսագրի»[44]: Թեև քննադատը Նալբանդյանին համարում է Նազարյանի համախոհ և գինակից, սակայն, և՛ նախորդ, և՛ այս հոդվածում Նազարյան-Նալբանդյան հարաբերության մեջ նախապատվությունը միշտ տալիս է Նալբանդյանին, նրա մարտընչող, արմատական գիծն ավելի համակրելի գտնելով: «Ժողովրդական տրիբուն»՝ քննադատի կողմից գտնված բնութագիր է Նալբանդյանի մասին: Կուսիկյանը Նալբանդյանի՝ իբրև գործչի երևան գալը պայմանավորում է ռուս վաթսունականների՝ վերածնության մեծ գաղափարախոսների աղդեցությամբ: Ի տարբերություն Նազարյանի, «իբրև հրապարակախոս՝ նա անդուլական էր ժամանակակիցների մեջ իր մերձավոր ծանոթությամբ մայրենի իրականության հետ, իր խորաթափանց վերլուծությամբ մեր կյանքի երևույթների, իր լայն ըմբռնումով ազգային հասարակական խնդիրների»[45]:

«Մամուլի և գրականության ճշմարիտ կոչումը՝ ազնիվ արտահայտիչ լինել ժողովրդի կարիքների»[46] նալբանդյանական պատգամն էր հիշեցնում «Մուրճի» աշխատակիցը: Վերլուծելով Նալբանդյանի գործունեության բազմազան կողմերը, երբ «նա և բանաստեղծ է՝ լուսո, նորոգության քարոզող, և՛ երգիծաբան է՝ մեր նախապաշարմունքները և հասարակական արատները ձաղկող, և՛ բանուկ քննադատ է, և՛ շնորհալի թարգմանիչ»[47], Կուսիկյանն ընդգծում է այն իրողությունը, որ Նալբանդյանը արևելահայ երգիծական գրականության սկզբնավորողն է, գրական քննադատության հիմնադիրը: Եզակի համարելով նրան իր բազմատեսակ ձիրքերով, եզակի է համարում նաև իբրև քաղաքացի, իբրև իր իսկ քարոզած առաջավոր գաղափարների «կենդանի հաղորդիչ»: Նալբանդյանի կյանքը քննադատը հանրագումարի է բերում հետևյալ տողերով. «Թե գրականության և թե կյանքի մեջ նա մի ժողովրդավար է, անվհեր դրոշակակիր լավագույն իդեալների, ազատ մտքի և նորոգության քաջամարտիկ ախոյան: Նա մի խնկելի մշակ է, որ նվիրեց իր ձիրքերը, իր բորբոքուն հոգին, իր եռուն կյանքը ազգային առաջադիմու-

---

44 «Մուրճ», 1906, № 1, էջ 61:
45 Նույն տեղում, էջ 62:
46 Նույն տեղում, էջ 70:
47 Նույն տեղում, էջ 75:

թյան վեհ գործին»[43]: Այսպիսի կյանքը գնահատվում է որպես մեծագործություն:

Այսօր, երբ հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանի գրական-հրապարակախոսական ժառանգությունն ուսումնասիրող մի ամբողջ գիտություն է ստեղծված՝ Նալբանդյանագիտությունը, մենք չենք կարող ակնածանքով չնշել Կուսիկյանի անունը, որը առաջին փորձն է արել նշանավոր գործչի վաստակին գիտական գնահատական տալու: Քող որ նրան տեսանելի չէ Նալբանդյանի աշխարհայացքի ամբողջ համակարգը, մանավանդ հայ կյանքում գաղափարական նոր հոսանք հատկանշող նրա քաղաքական հայացքները, բայց Կուսիկյանը վեր է հանում նշանավոր գործչի գրական և հասարակական գործունեության բազմաթիվ կողմեր, ջանալով դրանք բացատրել հայ հասարակական կյանքի իրօրյա հասունացած խնդիրների լույսի տակ, բանաստեղծական ներշնչանքով պանծացնում նրա կերպարը՝ օրինակ դարձնելով իր սերնդակիցների համար: Իրավացի էր «Մուրճի» քննադատը գտնելով, որ առաջ գնալու համար պետք է կարողանալ նաև ետ նայել:

Սակայն ետ նայելով, «Մուրճը» չէր տեսնում այն նոր ուժերը, որոնք լինելու էին Նալբանդյանի գաղափարական ժառանգության իսկական շարունակողները: Նա չէր տեսնում այն հզոր ուժը, որը իրականացնելու էր Նալբանդյանի երգած ազատությունը: «Մուրճը» անհաղորդ մնաց պրոլետարիատի մեծ առաքելությանը: Նոր դարասկզբին հայ ժողովրդի զարգացման ուղիների որոնման իր ճիգերում «Մուրճը» դուրս չեկավ հասարակական իդեալի ապադասակարգային ըմբռնման և մարդկային առաչադիմության վերացական պատկերացումների շրջանակներից: Աշխարհայացքային սահմանափակությունն էլ պայմանավորեց նրա անկարողությունը՝ հասնելու արվեստի և գրականության նկատմամբ պատմա-հասարակական և գեղարվեստական չափանիշների օրգանական միասնության: Այդ վիճակված էր անելու այլ սերնդի՝ հայ մարքսիստների սերընդին: Սակայն անտարակուսելի է, որ «Մուրճ» ամսագիրը, իր էջերը լայնորեն բացելով ժամանակի հայ առաջադեմ գրողների առջև, մի կողմից նրանց ստեղծագործությունների հրապարակումով և մյուս կողմից՝ ամսագրի էջերում զարգացրած քննադատական-տեսական հրապարակախոսությամբ զգալիորեն նպաստեց գրական առաջընթացին: Գրականության դեմոկրատական բովանդակության, կենսական ճշմար-

48 Նույն տեղում, էջ 86:

տացիության պահանջները, որ զարգացնում էին նրա քննադատները, միանգամայն համահնչուն էին գրականության զարգացման այն ժամանակվա պահանջներին։ Ամսագիրը, անտարակույս, նպաստում էր հրապարակվող գեղարվեստական երկերի հասարակական ընկալմանը, հայ գրողների ստեղծագործության մի շարք էական կողմերի վերհանմանը և դրանով իսկ հայ քննադատական մտքի զարգացմանը, նրա նախապատրաստմանը՝ ավելի բարձր աստիճանի հասնելու։

Գլուխ չորրորդ

Ժողովրդի կյանքի լուսաբանումը ամսագրում։ «Մուրճը» գիտական-լուսավորական օրգան

«Մուրճ» ամսագրի հենց առաջին համարում խմբագրությունը խնդիր է դնում ուշադրության առնել մի «մոռացված աշխարհ» և ահա ամսագրի էջերում երևում է նրա մշտական բաժիններից մեկը՝ «Գավառական կյանքը»։ «Պարբերական մամուլի պարտքն է,— գրում է ամսագիրը,— ամեն ջանք գործ դնել, որ իսպառ չմոռացվի մեր գավառը, որ մեր «մեռնող երկիրը» խոսե հրապարակավ իր կարիքների և ցավերի մասին»[1]։ «Մուրճը» դիմում է ընթերցողներին, խնդրելով տեղեկություններ ուղարկել գավառների հասարակական-տնտեսական կյանքի վերաբերյալ, որպեսզի հնարավոր լինի «որքան կարելի է շատ տեղերը ենթարկել լուսաբանող, մերկացնող ուսումնասիրության»[2]։

Կարդալ գավառական կյանքի վերաբերյալ «Մուրճի» նյութերը, նշանակում է քայլել Հայաստան աշխարհով, ականատես լինելով սովի ու աղքատության, երաշտի ու մորեխի, տարափոխիկ հիվանդությունների ու տգիտության կատարած ավերածություններին։ «Մոռացված գավառամասերը Երևանյան նահանգում» տեսությունն ուղղակի փաստում է. «Նահանգի այն մասերը, որոնք ընկած են լեռնոտ մասերում և բարձրավանդակների վրա, ոչ միայն ենթակա են ժլատ ու անողոք բնության գրկանքներին, այլև մոռացված ամենքից, թողնված բախտի կամքին։ Ահա թե ինչու այդ մասերում ժողովուրդը տարեցտարի աղքատանալով,

1 «Մուրճ», 1901, № 1, էջ 254։

2 «Մուրճ», 1902, № 4, էջ 205։

հասել է ետին ծայր թշվառության և մի կամ երկու միմյանց հաջորդող անբերրի տարիներում ենթարկվելով տնտեսական ծայրահեղ քայքայման, թողնում է երեսի վրա իր ընտանիքը, ձգում իրան ապրուստ չհայթայթող վար ու ցանքը և ձեռքն առնում պանդխտության գավազանը[3]։

Մի շարք տեսություններ նվիրված են Բաքվին, որը «գավառների մի հավաքածու» է, ինչպես դիպուկ նկատում է «Մուրճը»։ Այստեղ են դիմում իրենց բնակավայրերը լքած մարդիկ աշխատանք գտնելու հույսով, սակայն խտացնում են գործազուրկների շարքերը։

Գյուղական կյանքի ահավոր պատկերներ է գծում «Ապարանի ներկա վիճակը» հոդվածը. «Տարիներից ի վեր Ապարանը խարխափում է անօրինակ խավարի ճիրաններում։ Ամենատարրական գրագիտությունը այստեղ չկա, չհաշված մի քանի անհատներ (քահանաներ և գյուղական գրագիրներ)։ Ամբողջ Ապարանում մի հատիկ ուսումնարան չկա»[4]։

«Գեղջկուհին Արարատյան դաշտում»՝ այսպես է վերնագրված հոդվածներից մեկը. այնտեղ կարդում ենք. «Հայ կնոջ վիճակը ծանր վիշտ և կարեկցություն է պատճառում տեսնողին... ֆիզիկական ծանր աշխատանքը, տնտեսական ծանր դրությունը, մերկ ու քաղցած երեխաները, անգութ վաշխառուն, անխիղճ պարտատերը,— այս բոլորը վիշտ են պատճառում, վիշտ են երգել տալիս գեղջկուհուն»[5]։

Ամսագրի «լուսաբանող, մերկացնող ուսումնասիրությունները» հաջորդում են իրար, սակայն մնում են իբրև անղոր զայրույթի ճիչեր, որոնք կոչված են միայն կարեկցանք առաջացնելու։ «Թույլ ենք է դա գոյության կռվի դաշտում, բայց ինչ արած, չկան ավելի լավ իրական զենքեր»[6],— անճարակ ասում է «Մուրճը» ընթերցողներին, դարձյալ հույսեր կապում գյուղական ինտելիգենցիայի լուսավորական, աղգօգուտ գործունեության հետ. «Հող և գիրք։ Այդ երկու բանի վրա միայն մենք կարող ենք հիմնել մեր բարեբախտությունը, մեր ամբողջ ապագան»[7]— նարոդնիկական հնօրյա պատրանքների հարության կոչ է սա, որ հեղափոխական շարժման ծավալման շրջանում հնչում էր միամիտ ու ժամանակավրեպ։

«Մուրճ» ամսագիրն իրեն կոչված էր տեսնում նախ և առաջ լուսա-

---

3 «Մուրճ», 1901, № 8, էջ 232։

4 «Մուրճ», 1901, № 10, էջ 48։

5 Նույն տեղում, էջ 250։

6 «Մուրճ», 1901, № 9, էջ 241։

7 «Մուրճ», 1902, № 3, էջ 194։

բանելու արևելահայերի կյանքը, սակայն ամսագրի աշխարհագրական ընդգրկումը լայնանում է այն չափով, ինչ չափով հայերը տարածվել էին աշխարհում։ Երեն Թուրքիայի և Պարսկաստանի հայաբնակ շրջանները խմբագրության ուշադրության կենտրոնում էին, որովհետև դրանք ոչ միայն ամենահայաշատն էին, այլև հայ ժողովրդի պատմական ճակատագրի և ազգային ինքնագիտակցության բարձրացման հարցերը հրահրելու հնարավորություն էին ընձեռում, ապա ամսագրի էջերում երևում են նաև «Աբխազիայի հայ գաղթավայրը», «Հայը Բրմստանում»[8] և այլ նյութեր, որոնք տեղեկություններ են հաղորդում հեռավոր երկրներում բնակվող հայերի մասին։

Ամսագրին ղեկավարող հարցերի հարցը հայ գաղթականության ապագան էր, ուծացման չարագուշակ ուրվականը։ «Եգիպտահայ գաղթականության ապագան» հոդվածի տագնապալի շեշտը բնորոշ է համարյա բոլոր հոդվածներին. «Առանց մարգարե լինելու դժվար չէ գուշակել գաղթականության ապագան. չկա մխիթարական երևույթ, անբովանդակ է եգիպտահայուն ներկա կյանքը, մտավոր ու բարոյական առաջնորդող ուժերը կը պակսին, կը չլատվին սակավաթիվ մտավորական ներկայացուցիչ ուժերու կորովը ազգային բիրտ ուժին առջև. լրագրություններ խեղկատակության հասած են, ուսումնարանները՝ խաղալիք այս կամ այն փաշային ու բեյին քմահաճույքներուն. հասարակական կյանք չկա, ընտանեկան և ազգայնական կյանքը խաթարված է, եկեղեցական գործերը վաճառականական մենաշնորհներու վերածված... Եգիպտահայ գաղթականության ապագան վտանգներու և փորձություններու ենթակա խոր վիհ մ՝ ունի իր առջև։ Ներկա երիտասարդության կը մնա այն վիհին վրայեն կամ առնաբար ցատկիլ, կամ անոր մեջ վատաբար ընկողմիլ»[9]։

Եթե հնարավոր լիներ իրար միացնել ամսագրի հրապարակած հոդվածները արևմտահայերի և պարսկահայերի կյանքի վերաբերյալ, որոնց միայն թվարկումը էջեր կզբաղեցներ, ապա մենք կունենայինք երկու ստվար հատոր՝ պատմական Հայաստանի համարյա բոլոր գավառների անցյալի պատմությամբ, աշխարհագրական բնութագրով, իրօրյա սոցիալ-տնտեսական կյանքի նկարագրությամբ՝ վիճակագրական ամենամանրամասն տեղեկություններով։ Այդ հոդվածները ոչ միայն խնդիր

8 «Մուրճ», 1904, № 7, № 9։

9 «Մուրճ», 1904, № 7, էջ 48։

ունեին ազգային ինքնագիտակցության սերմեր ցանելու, այլև պատմությանը թողնելու թվեր ու փաստեր, որոնց նշանակությունը ժամանակի փոշին չի կարող գունազրկել։ Թղթակիցները չեն մոռանում իրենց հոդվածները ուղեկցել հայապահպան գործունեություն ծավալելու կոչով. «Ով բարոյական, գաղափարական գործ է փնտրում, թող նա շտապե»[10]. Եթե այս բառերը չեն կրկնվում մյուս հոդվածներում, ապա դրանք ընթերցվում են տողամիջում։ «Ահա Սալմաստը, Ատրպատականի աչքը,— գրում է թղթակիցը,— այնտեղ հայերը հյուծվում, քամվում են. պարսիկ պաշտոնյաները... կեղեքում, հարստահարում են հայերին, ծեծում, տուգանք առնում անիրավացի կերպով և դառնացնում ժողովրդի կյանքը»[11]։ Այսպես են գրում նաև Կապուտանից, Խոյից, Գիլանից և մյուս գավառներից։ Թղթակիցները ահազանգում են. «Հայերը միանգամայն մոռացել են իրենց մայրենի լեզուն, խոսում են թուրքերեն և քրդերեն։ Հայը օտարացել է և կորցրել իր ազգային առանձնահատկությունները, նա կանգնած է կորստի անխուսափելի ճանապարհի վրա»[12]։ Ազգապահպանության այս մտահոգությամբ են ներծծված հայ ժողովրդի կյանքին ու ճակատագրին նվիրված բոլոր նյութերը։

«Ոչ միայն ժողովրդի մասին, այլև ժողովրդի համար», այս նշանաբանով էր առաջնորդվում «Մուրճի» խմբագրությունը։ XX դարի սկզբում բուռն թափով սկսեցին զարգանալ թատրոնը, կերպարվեստը, երաժշտությունը, չափանիշ հռչակելով ժողովրդայնությունն ու կենսական ճշմարտացիությունը։ Հայ ժողովրդի գեղարվեստական զարգացման նոր շրջափուլն իր արտացոլումն է գտնում մամուլում, որը ոչ միայն տարեգրում էր օրվա ձեռքբերումները, այլև իր մասնակցությունը բերում ժողովրդի գեղարվեստական դաստիարակության գործին։ «Մուրճը» դրա ակտիվ մասնակիցներից էր։ Ամսագիրն ուներ «Գեղարվեստի աշխարհից» խորագրով առանձին բաժին, որը նպատակ ուներ գեղարվեստական ճաշակ պատվաստել ընթերցողների մեջ, նպաստել նրանց գեղագիտական դաստիարակությանը։ Այս խորագրի տակ ամենից հաճախ տպագրվում էին թատերական գրախոսություններ։ Արձագանքելով հայկական համարյա բոլոր ներկայացումներին, ամսագիրը գծում է մեր առջև հայ թատրոնի այդ շրջանի տարեգրությունը։ Ամսագիրը սրում է թատրոնի դեմոկրա-

---

10 «Մուրճ», 1902, № 2, էջ 47։

11 «Մուրճ», 1903, № 10, էջ 33։

12 Նույն տեղում, էջ 34։

տացման պահանջը. «Մեզ թվում է, որ այժմյան հայ թատրոնը պետք է կրե ժողովրդական բնավորություն և խումբը պետք է աշխատե ամեն կերպ մոտեցնել բեմական գործը ժողովրդին. ռեպերտուարը պետք է կոչված լինի ընտրությամբ և միշտ մոտ իրական կյանքին»[13]: Հատկանշական է, որ թատերական խմբի ներկայացումների մակարդակի բարձրացման համար որակյալ ռեժիսորի պահանջ դնելով, ամսագիրը մատնացույց է անում Մոսկվայի գեղարվեստական թատրոնի օրինակը, որի ղեկավարն էր Ստանիսլավսկին. «Թե ինչ ահագին նշանակություն ունի տաղանդավոր ռեժիսյորը, դրա փառավոր ապացույցը մենք տեսնում ենք Մոսկվայի գեղարվեստական հասարակական թատրոնում, որ շնորհիվ պ. Ստանիսլավսկու ռեժիսյորության, դարձավ ամբողջ Ռուսաստանի ամենասիրված բեմը»[14]:

Ամսագիրը նախանձախնդիր է ազգային կյանքին նվիրված, հատկապես հասարակական հոդի բարքերը քննադատող դրամատիկական ստեղծագործությունների բեմադրմանը: Ահա ինչու նա դրվատանքի խոսքեր չի խնայում փառաբանելու Սունդուկյանի մեծ ծառայությունը հայ բեմին, նրա անմահ ստեղծագործության՝ «Պեպոյի» 30-ամյա հոբելյանի առիթով: Ամսագրի կարծիքով Սունդուկյանի պիեսը հայ դրամատուրգիայի զարգացման իսկական ճանապարհն է բացել, որի «գեղարվեստական ռեալականությամբ մի նոր էջ է բացվում հայոց գրականության մեջ և իր շոշափած հասարակական հարցով դուրս է գալիս մեր ազգային շրջանից և դառնում համակովկասյան և նույնիսկ համամարդկային գրականության սեփականություն»[15]:

Հայ դրամատուրգիայի զարգացմամբ մտահոգված, թատերական դրախոսությունների մեջ, որպես կանոն, ավելի մեծ տեղ է հատկացվում դրամատիկական երկի քննությանը, քան դերասանների խաղին: Այսպես է վարվում ամսագիրը հատկապես օտար հեղինակների դրամատիկական գործերի բեմադրությունները քննարկելիս, նպատակ ունենալով դասական երկերի գեղարվեստական արժանիքներն իրրև չափանիշ ներկայացնել ինքնուրույն պիեսների համար: Այս առումով հատկապես ուշադրության են արժանանում Իբսենի ստեղծագործությունները: Նորվեգացի դրամատուրգին նվիրված ծավալուն հոդվածներում դրվատվում է նրա

13 «Մուրճ», 1901, № 4, էջ 218:

14 Նույն տեղում:

15 «Մուրճ», 1901, № 5, էջ 281:

արվեստի մեծ հումանիզմը՝ «մարդու լուսավոր դեմքը ճառագայթեցնելու հատկությունը»[16]։

Հայ իրականությունը բեմում տեսնելու, ազգային դրամատուրգիայի զարգացմանը խթանելու բուռն ցանկությունը չի իջեցնում, սակայն, ամսագրի պահանջկոտությունը ինքնուրույն պիեսների գեղարվեստական որակի նկատմամբ։ Խիստ խոսքեր ասելով Շիրվանզադեի «Ուներ իրավունք», «Եվգինե», Լ. Մանվելյանի «Նկարիչ Թաշճյան» դրամաների մասին, ամսագիրը ողջունում է Շիրվանզադեի «Պատվի համար» և Վրթ. Փափազյանի «Ժայռ» պիեսները, որոնց հերոսներն արդեն «ճառախոսներ» ու «մանեկեններ» չեն, այլ կյանքով շնչող, միս ու արյուն ունեցող մարդիկ։«Այն էլ լավ է,— գրում է ամսագիրը,— եթե հայ հեղինակին հաջողվում է մեր այս կամ այն միջավայրը իր լավ ու վատ կողմերով բեմ հանել և բաց անել մեր կյանքը կրծող վերքերից մեկն ու մեկը։ «Պատվի համարը» մեր հասարակական մարմնի վրա մի այդպիսի շարավալից վերքի պատկերն է»[17]։ Այսպիսով, թատրոնը ժողովրդին մոտեցնելու, արվեստի այս ճյուղում ևս ռեալիզմի սկզբունքները տիրապետող դարձնելու հին «Մուրճի» ջանքերը շարունակված ենք տեսնում նոր «Մուրճում»։

«Գեղարվեստի աշխարհից» խորագրի տակ ուշադրության արժանի հոդվածների ենք հանդիպում նաև արվեստի մյուս ճյուղերի վերաբերյալ։ Ամսագրի հենց առաջին համարում տպագրվել է Կարա-Մուրզայի «Արեւվելյան եղանակները եվրոպական երաժշտության մեջ» հոդվածը։ Հաջորդ համարում հայ խմբավարն ու երգահանը հանդես է գալիս վերոհիշյալ հոդվածով, որտեղ ցույց է տալիս երաժշտության հսկայական դերը ժողովրդի դաստիարակության գործում, գրելով՝ «Վերջին ուղղակի դաստիարակել է իտալացուն»[18]։

Երաժշտության զարգացման ուղիների որոնման մեջ ամսագիրը նախապատվությունը տալիս է նրան, որը հենվում է ժողովրդական երգի վրա։ Դրա վառ օրինակ է դիտվում հենց Կարա-Մուրզայի գործունեությունը, որն իր ստեղծած երգչախմբով ապացուցեց, թե «ժողովրդի երգը ևս կարելի է բեմից երգել։ Դա պատմականորեն մեծ դեր էր»[19]։

---

16 «Մուրճ», 1905, № 2—3, էջ 227։

17 «Մուրճ», 1905, № 1, էջ 140։

18 «Մուրճ», 1901, № 2, էջ 282։

19 «Մուրճ», 1905, № 1, էջ 128։

Պատմական այդ մեծ դերի շարունակությունն է դիտվում նաև Կոմիտասի գործունեությունը։ 1905 թ. ապրիլին Թիֆլիսում նրա ղեկավարությամբ էջմիածնի ճեմարանի վաթսուն սաներից կազմված երգչախմբի համերգի առթիվ ամսագիրը դրվատական խոսք է ասում, գտնելով, որ Կոմիտասը «գալիս էր մեզ մոտ մի նոր արվեստով, մի նոր դպրոցով»[20]։ Այդ նոր արվեստը հենվում էր հին ճշմարտությանն վրա, իրեն ակունք ընտրելով ժողովրդական երգը։ Ամսագիրը ձայնը տալիս է Կոմիտասին՝ ներկայացնելու իր սևեռուն նպատակը. «Հիմնել մեր երաժշտական պալատը զուտ ազգային, ցեղական տարրերի վրա,— ասում է Կոմիտասը, մատնացույց անելով հիմնական շինանյութը։— Ես հիմք բռնեցի ժողովրդական երգերը, որովհետև նրանց ինքնուրույնությունը անժխտելի էր»[21]։ «Մուրճի» ընթերցողների և Կոմիտասի այս «հանդիպումը» ուշադրության արժանի փաստ է այն մեծ գործի շեմին, որը Կոմիտասին պետք է բերեր ազգային երաժշտության հիմնադրի դափնին։

Մեծ նկրնչանքով, հայրենասիրական այրող շնչով է գրված «Հայ ճարտարապետությունը» հոդվածը, որի հեղինակն է Թորոս Թորամանյանը։ Անիի ու Զվարթնոցի ավերակների վրա իր արդասավոր աշխատանքներից հետո նա թղթին է հանձնում իր տխուր մտորումներն անցյալի հուշարձանների պահպանության անմխիթար վիճակի վերաբերյալ. քաղաքակրթված ազգերը խնամքով պահպանում ու աշխարհին են ցույց տալիս իրենց գոյության կենդանի վկա և իրենց նախնիների հանճարի թարգման անցյալի հուշարձանները, իսկ «մենք՝ հայերս միայն անտարբեր պտնվեր ենք այս մասին, մեր անցյալ քաղաքակրթության ապացույցները ոչ միայն օտարներու, այլ նույնիսկ մեր հարազատ զավկներուն ցույց տալու մեջ աններելի կեպով անփույթ գտնվեր ենք»[22]։ Թորամանյանը նպատակ էր դրել ապացուցել, որ հայ ժողովուրդը «անթիվ տառապանքներուն և դժբախտություններուն մեջ չէ մոռցեր ստեղծել գեղեցիկն ու վսեմը»[23]։

Այսպիսով, «Մուրճ» ամսագիրն իր որոշակի ներդրումն ունի հայ գեղագիտական մտքի զարգացման գործում. իր քննադատական հոդվածներով, գրախոսություններով ու զրույցներով նա հուզել է գեղարվեստական դաստիարակության հարցեր, որոնք դարասկզբի հայ մամուլում լայն մասնագիտական քննարկման էին դրված։

---

20 «Մուրճ», 1905, № 5, էջ 198։

21 Նույն տեղում, էջ 204։

22 Նույն տեղում, էջ 186։

23 Նույն տեղում, էջ 188։

Նոր «Մուրճը» շարունակում է իր նախորդի նաև լուսավորական ավանդույթները, իր վրա առնելով գիտական ամսագրի ֆունկցիաներ։ Ամսագրի «Գիտական աշխարհից» մշտական բաժնի նպատակն էր ընթերցողներին տեղյակ պահել գիտության նորագույն նվաճումներին, նրանց գիտակցությանը հասցնել գիտության վերափոխիչ ուժի կարևորությունը, որը քայլ առ քայլ հեղաբեկելով աշխարհը, այն պիտի հասցներ ցանկալի արդար հասարակարգին։ Հասարակության զարգացման օրենքների նկատմամբ ունենալով իդեալիստական հայեցակետ, Լևոն Սարգսյանը, Արասխանյանի նման, մեծ հույսեր էր կապում գիտության վերափոխիչ ուժի հետ. նա գտնում էր, որ մարդն ի վիճակի լինելով իրեն հպատակեցնել բնության հզոր ուժերը, հասարակական չարիքների վրա ևս չպետք է նայի իբրև ճակատագրական անհրաժեշտություններին, որովհետև «իր խելքով ու կամքով կարող է հասարակական կարգերին այնպիսի ձև տալ, որ մարդկային անարդարություններից բխած հասարակական չարիքներին վերջ դնվի։ Բնական և հասարակական գիտությունները այժմ մեր մտավոր տեսության առաջ բանում են շատ լայն հորիզոններ և տալիս են մեզ զենք ավելի աջող շարունակել թե՛ գոյության կռիվը և թե՛ մաքառումը չարիքների դեմ»[24]։

Խոսելով ամեն մի ժողովրդի կյանքում կրթության նշանակության մասին, նոր «Մուրճի» խմբագիրը գտնում էր, որ առհասարակ կրթության տարածման չափից և նրա ուղղությունից է կախված յուրաքանչյուր ազգի քաղաքական, հասարակական և տնտեսական վիճակը[25]։ Անմիջապես նկատենք՝ ճիշտ հակառակը։ Կրթությունը ժողովրդի մեջ տարածելու պահանջը, ռուսահայ իրականության մեջ նրա անմխիթար վիճակի քննադատությունը, որ առաջ էր տանում «Մուրճի» խմբագիրը, դեմոկրատական հնչեղություն էին հաղորդում ամսագրին, բայց և միաժամանակ վկայում հասարակական չարիքը վերացնելու բանալին գտնելու նրա անկարողությունը։

Ամսագրի գիտական հրապարակախոսության մեջ մեծ բաժին են կազմում բժշկական զրույցները։ Դրանք հաճախ դուրս են գալիս առողջապահական հարցերի շրջանակներից և ներառնում նաև հոգեբանության, բարոյագիտության, սոցիոլոգիայի հարցեր։ Այդպես են գրված, օրինակ, ժամանակի նշանավոր բժիշկ Վահան Արծրունու զրույցները։ Մի քանի

---

24 «Մուրճ», 1901, № 5, էջ 284։

25 Տե՛ս «Մուրճ», 1901, № 7, էջ 211։

համարում շարունակաբար տպագրվող «Աղջիկ» վերնագրով հոդվածաշարը[26] նա ևս վերնագրել է «Առողջապահական և բարոյագիտական էսյուդ»։ Այսօր էլ առանց հետաքրքրության չի կարելի կարդալ այդ էսյուդները, գրված նամակի ձևով՝ մտերմիկ, համոզիչ, հրահանգող։ Երկար տարիների դիտումներն ու ուսումնասիրությունները հեղինակին բերել են այն համոզման, որ ազգի վատասերման և օտարման մեջ հայ աղջկա կրթության և դաստիարակության սխալները բնավ երկրորդական դեր չեն խաղում։ Սկսելով նորածին աղջկա հասակից և նրան հասցնելով մայրության, բժիշկը մատնացույց է անում ընտանեկան և հասարակական կյանքում դեպի աղջիկը դրսևորվող սխալ վերաբերմունքի հետևանքները։ Գնահատելով Վահան Արծրունու՝ բժշկագիտությունը մասսայականացնելու ջանքերը, «Մուրճը» իր աշխատակցի մասին գրում է. «Հեշտ բան չէ ժողովրդականացնել գիտությունը. դրա համար պահանջվում է պարզ, պատկերավոր լեզու, կենդանի ոճ, նյութը դասավորելու խելացի սիստեմ, կարևորը, էականը՝ աննշան մանրամասնություններից զատելու ընդունակություն և լայն գիտական պատրաստություն։ Այդ հատկություններն ունի հարգելի բժշկապետը, և հայ ընթերցողը գիտե գնահատել տաղանդավոր ժողովրդականացնողին»[27]։ Չի կարելի չհամաձայնվել ամսագրի կարծիքին։ Այստեղ անհրաժեշտություն չկա կանգ առնել բժիշկ-հեղինակներ Մ. Նալբանդյանի, Գ. Սարգսյանի, Կ. Փաշայանի և մյուսների առողջապահական հոդվածների վրա, որոնք ամեն սերնդի համար կրկնվող և միշտ պետքական խորհուրդներ են պարունակում ալկոհոլի և ծխախոտի վնասակարության, օդի կեղտոտվածության, սննդառության ռեժիմի և այլ հարցերի վերաբերյալ։

Լայն ընդգրկում ունեն զուտ գիտական հոդվածները (և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական), տիեզերքի և երկրի զարգացման, լավուռազեի գյուտերի, մեղուների զարմանահրաշ կյանքի և այլ բազմազան հարցերի մասին։ Փիլիսոփայական ուղղություններին նկատմամբ դիտելի է անքննադատ վերաբերմունքը։ Հին «Մուրճի» հեղինակներից մենք այստեղ հանդիպում ենք Սամուել Բալաշյանի ստորագրությանը՝ «Բիոլոգիայի զարգացումը XIX դարում» հոդվածաշարի տակ։ Նույն շնորհակալ գործն է շարունակում անխոնջ գիտնականը, պրոպագանդելով կենսա-

---

26 «Մուրճ», 1902, № № 1, 3, 4, 5, 10, 12։

27 «Մուրճ», 1901, № 4, էջ 195։

բանութեան նվաճումները XIX դարում, որոնց պսակը հանդիսացավ Դարվինի դարակազմիկ հայտնագործությունը»[28]։

Պատմական գիտության զարգացման խնդրին է նվիրված Լեոյի հոդվածը՝ «Անցյալի հարցերից»։ «Մենք ունենք երկու տասնյակ և ավել պատմագիրներ, ունենք Ջամչյանի երեք ստվար հատորները, բայց և այնպես՝ այսօր զգում ենք, որ չունենք հայոց պատմություն»[29],— հարցը սրելով, հայ ժողովրդի գիտական պատմությունն ստեղծելու պահանջ է դնում պատմաբանը։ «Մեր պատմությունը նոր պետք է գրել, բայց ինչպե՞ս գրել,— հարցնում է Լեոն և պատասխանում,— պատմությունը վեպ չէ, որ կարելի լինի հնարել երևակայության օգնությամբ։ Իբրև գիտություն նա պիտի հիմնված լինի դրական փաստերի լավ կշռված, զտված և վերստուգված նյութերի վրա։ Եթե մի ազգի մեջ կա այդպիսի աշխատանք, այդպիսի ուսումնասիրությունների մի քուրա, այդ ազգը կունենա իր պատմությունը»[30]։ Սխալ է, անշուշտ պատմաբանի կողմից մեր մեծերի՝ պատմահայր Խորենացու կամ Ջամչյանի «Հայոց պատմություն»-ները լոկ հում նյութ, օժանդակ աղբյուր համարելը, բայց իրավացի է անցյալի արժեքները վերագնահատելու և գիտության զարգացման նոր աստիճանին համապատասխան պատմագիտական աշխատություններ ստեղծելու պահանջը։

«Մուրճում» տպագրվեց Լեոյի «Հայոց գրականությունը XVIII դարում» աշխատությունը, որը նրա «Հայկական տպագրությունը» արժեքավոր երկի երկրորդ հատորը կազմեց։ Այստեղ առաջին անգամ փորձ է արվում իր նշած գիտական նոր մեթոդով գնահատելու Մխիթարյանների գործունեությունը, բացահայտելու Խորայել Օրու, Դավիթ Բեկի, Շահամիր Շահամիրյանի, Հովսեփ Էմինի և մյուս գործիչների ներդրումը ազատագրական պայքարում։ «Մուրճի» մատենախոսության բաժնում տպագրված գրախոսականում Ստ. Մալխասյանը շատ բարձր է գնահատում Լեոյի ծառայությունը, գտնելով, որ նա «աշխատում է կյանքը և գրականությունը կապել միմյանց հետ՝ իբրև փոխադարձաբար միմյանց վրա ազդող գործոններ, աշխատում է պատմական անցքերը միմյանց հետ կապել իբրև պատճառ և հետևանք։ Այս ուղղությունը այժմ տիրապետում է ընդհանուր պատմական գրականության մեջ, և Լեոն հետևում է այս ժամանակակից մեթոդին։ ...Մենք շնորհակալ պետք է լինենք Լեոյից, որ

28 «Մուրճ», 1904, № № 3, 4, 7, 8, 12։

29 «Մուրճ», 1905, № 10, էջ 83։

30 Նույն տեղում, էջ 84։

ժամանակակից մեթոդի լույսը ուղղել է մեր պատմության այդ խավար էջերի վրա և շատ բան լուսավորել հաջողությամբ»[31]: «Մուրճի» համար «վերջին խոսքը» պատկանում է պատմական դպրոցին, որի կարկառուն ներկայացուցիչը հայ պատմագիտության մեջ Լեոն էր:

Պատմագիտությունը գիտական հողի վրա դնելու նույն մտահոգությամբ է դրված նաև Ստ. Մալխասյանի «Հայագիտությունը XX դարի սկզբում» աշխատությունը, որը հատվածաբար տպագրվեց «Մուրճի» առաջին հինգ համարներում: Մալխասյանը XIX դարը համարում է հայագիտության ծննդի դար, երբ պատմական ռոմանտիկ ուղղությունը տեղի տվեց ռեալական-քննական ուղղությանը, իսկ վերջինս գիտության նոր հորիզոններ բացեց XX դարում[32]:

Այսպիսով, «Մուրճը» հավասարազոր ջանքեր էր թափում ինչպես գիտության նվաճումները ժողովրդի մեջ մասսայականացնելու, այնպես էլ հայ իրականության մեջ գիտական մթնոլորտ ժամանակի ոգով զարգացնելու ուղղությամբ: Նրա պահանջները, անշուշտ, դուրս չէին գալիս կուլտուր-պատմական դպրոցի շրջանակներից; բայց գիտության մեջ ուշացած հայ ժողովրդի համար դեռևս ունեին դրական նշանակություն:

«Պարբերական հրատարակություններ» խորագրով նոր «Մուրճը» հետաքրքիր բաժին սկսեց, որը նորություն էր արևելահայ ամսագրային կուլտուրայի մեջ: Փոքր տառերով տպագրվող այս բաժնում ի մի էին հավաքվում օտար և հայրենական մամուլում սփռված հետաքրքիր նորություններն ու տեղեկությունները: Այսօրվա տերմինով՝ մամուլի տեսություններն առանձին հետաքրքրություն են ներկայացնում մամուլի պատմությունն ուսումնասիրողների համար. այնտեղ ավետվում էր հայկական նոր պարբերականների ծնունդը, քննության էին առնվում այս կամ այն օրգանի գործունեությունը, առանձին համարներ, հոդվածներ: Այս բաժնի նյութերը կենդանի պատկերում են ժամանակի դրական բարքերը, ի հայտ բերելով ամսագրի վերաբերմունքը դեպի մամուլի սկզբունքներն ու խնդիրները, կոչումն ու նպատակները: «Մուրճի» այս բաժինը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն մամուլի պատմությունն ուսումնասիրողների, այլև հայագիտությամբ զբաղվողների համար առհասարակ, որովհետև «Մուրճը» որսացել է տարալեզու մամուլում հայանպաստ գործունեության ամեն մի արձագանք, դրանք ի մի հավաքել, սերունդ-

---

31 «Մուրճ», 1901, № 3, էջ 211:

32 Տե՛ս «Մուրճ», 1901, № 1, էջ 159 և № 5, էջ 171:

ների հիշողությանը հանձնելու համար։ Մի դեպքում դա «Վեստնիկ Եվրոպի» ամսագրում ակադեմիկոս Ալեքսեյ Վեսկովսկու հոդվածն է՝ «Բայրոնը Վենետիկում»[33], որտեղ պատմվում է անգլիացի հանճարեղ բանաստեղծի հայասիրական գործունեության մասին, մեկ այլ դեպքում գերմանական ասիական ընկերության օրգան «Ասիեն» ամսագրում հայերի ու Հայաստանի մասին պրոֆեսոր Յիմմերի հոդվածը[34], երրորդ դեպքում, «Ժուռնալ դլյա վսեխ» ամսագրում ռուս-թուրքական պատերազմի 25-ամյակին նվիրված հոդվածը, որտեղ ծաղրված է մեծ պետությունների վերաբերմունքը դեպի Հայկական հարցը։ «Քաղաքակիրթ» Եվրոպայի կեղծ հայասիրական քայլերն են մերկացված «Ռևվյու» ամսագրի հոդվածներից մեկում, որից «Մուրճը» իր ընթերցողներին է հասցնում դառը տողեր. «Մի հատիկ ազգի մարտիրոսությունը բավական է, որ կասկածի ենթարկվի քաղաքակիրթ համարված ազգերի արդարադատության և մարդասիրության զգացմունների անկեղծությունները։ Լացողները բառեր չեն ուզում, այլ խնամող ձեռք, որ նրանց արցունքը սրբի»[35]։

«Պարբերական հրատարակություններ» բաժնում շատ հաճախ «Մուրճը» ուղղակի վերապատմում է օտար օրգաններում տպագրված հետաքրքիր հոդվածների բովանդակությունը։ Այսպես, օրինակ, «Մուրճի» օգնությամբ հայ ընթերցողները ծանոթանում են «Ժուռնալ դլյա վսեխ» ամսագրում տպագրված հետաքրքիր հոդվածին՝ նվիրված ռուս առաջին հեղափոխական Ռադիշչևին. «Ազատ մարդու անբռնաբարելի իրավունքների առաջին քարոզիչն էր Ռադիշչևը Ռուսաստանում։ Իր ազատ և վեհ մտածողության համար նա միայն աքսոր, տանջանքներ և անարգանք կրեց իր կյանքում, սակայն նրա համարձակ խոսքը կայծակի նման լուսավորեց այն ժամանակվա խավար իրականությունը և ցնցեց անշարժության մեջ բթացած ռուսական միտքը»[36]։

«Ռուսսկայա միսլ» ամսագրից վերատպվում է ուկրաինական մեծ բանաստեղծուհի Լեսյա Ուկրաինկային նվիրված հոդվածը, որտեղ ասված է. «Լեսյա Ուկրաինկայի ներշնչանքի հիմնական գիծն է անկեղծ սերը դեպի հայրենիքը և խեղճերը, ինչ ազգությունից էլ լինեն դրանք։ Բանաստեղծուհու իդեալն է եղբայրություն, հավասարություն, աղատություն։ Նրա երգը— ջերմ բողոք է անարդարության դեմ և խանդավառ

33 Տե՛ս «Մուրճ», 1905, № 5։

34 Տե՛ս «Մուրճ», 1902, № 3։

35 «Մուրճ», 1904, № 8, էջ 154։

36 «Մուրճ», 1902, № 10, էջ 222—223։

կոչ՝ մաքառելու մի լավագույն ապագա ստեղծելու համար»[37]: Ռուսական մեծ հեղափոխության փոթորկի ամպերը կուտակվելու նախօրյակին պատահական չեն նման տողերի ընտրությունները:

Նույն ամսագրում է տպագրվում նաև հայ ժողովրդի լավագույն բարեկամ Յու. Վևսելովսկու «Վաթսունական թվականները և հայոց առաջավոր ամսագիրը» հոդվածը: «Մուրճի» օգնությամբ այն ևս հասնում է հայ ընթերցողներին, որոնք երախտագիտությամբ պիտի կարդային այս տողերը. «Մեզ—ռուսներիս համար «Հյուսիսափայլի» և նրա շուրջը խմբված շրջանի պատմությունը հետաքրքիր է մանավանդ այն պատճառով, որ հայ մամուլի և հրապարակախոսության անսպասելի ծաղկումը տեղի է ունեցել ռուսաց 60-ական թվականների հասարակական կյանքի ազդեցության տակ: Ընդհանուր կենդանությունը, նոր հոսանքները արձագանք գտան հայկական միջավայրում՝ առանց զրկելու նրա գործիչներին ինքնուրույնությունից, այլ, ընդհակառակը, ստիպելով նրանց ավելի ուշադրությամբ զննելու մայրենի կյանքի կարիքները: Մենք կարող ենք ուրախանալ մեր կուլտուրայի միայն այդպիսի ազդեցությամբ, որ ընդօրինակվում է բոլորովին ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ»[38]:

«Մուրճը» համառոտ տեսություններ է նվիրում «Առողջապահիկ թերթ», «Արշալույս», «Հասկեր», «Աշխատանք», «Խաթաբալա», «Կյանք», «Կայծ» և այլ պարբերականների անդրանիկ համարներին: Այդ տեսությունների մեջ նույնպես երևում են ամսագրի քաղաքական նախասիրությունները: Ողջունելով բոլշևիկյան «Կայծ» թերթի լույս ընծայումը, գովաբանելով դաշնակցականների դեմ «Դավթի արիությամբ» սկսած նրա կռիվը, «Մուրճի» խմբագիրը միաժամանակ խորհուրդ է տալիս նորընծա թերթին չմոռանալ հայ իրականության «առանձնահատուկ պայմանները», հետևել Պլեխանովի տակտիկային, չհեռանալ նրա փորձված, շրջահայաց, խելացի խորհուրդներից[39]:

Ողջունելով ապագա խոստացող պարբերականների ծնունդը, «Մուրճը» միաժամանակ մտահոգություն է հայտնում հայ գաղթօջախներում մամուլի հայկական օրգանների սնկի նման աճելու հիվանդության առթիվ: Ինչու ձևք ձևքի չտալ և չմիացնել այդ հրատարակությունները, առաջարկում է «Մուրճը». «Այն ժամանակ այդ մեծ մասամբ վատ,

---

37 Նույն տեղում:

38 «Մուրճ», 1903, № 7, էջ 239—240:

39 «Մուրճ», 1906, № 6, էջ 156:

անբովանդակ, չարքաշությամբ իրենց կյանքը պահպանող մրոտած թերթերի փոխարեն, կունենայինք ավելի սակավաթիվ, բայց հյութալի, կենսունակ, բովանդակությամբ հարուստ և համախմբված ուժերով տարվող հրատարակություններ»[40]:

«Մուրճի» տեսությունների մեջ հատկապես քննադատության է ենթարկված հոգևորական մամուլը՝ Վենետիկյան Մխիթարյանների «Հանդես ամսօրեան», էջմիածնի «Արարատը», «Լուման», որոնք խոսել են կյանքի նոր պահանջների նկատմամբ, ընթերցողներին պարտադրում են հնախոսական, նեղ կրոնական, վերացական հարցեր[41]: Կյանքին մոտիկ լինելու պահանջն ամսագիրը պարտադիր է համարում բոլոր պարբերականների համար, անկախ նրանց քաղաքական ուղղությունից և բնույթից: Գրական բարքերի մաքրությանը թծախնդիր, ամսագիրը քննադատության է ենթարկում այն օրգաններին, որոնք ոտնահարում են մամուլի կոչումը:

Հայ կյանքի և հայ մամուլի մի առանձնահատկության վրա ևս ուշադրություն է հրավիրում «Մուրճը». կրոնական համայնքների տարաբաժանումը չպետք է տեղ գտնի մամուլի էջերում, նրա դռները հավասարապես բաց պետք է լինեն և՛ լուսավորչականի, և՛ բողոքականի, և՛ կաթոլիկի առջև, որովհետև չկա բողոքական կամ լուսավորչական գիտություն, մամուլ, այլ կա միասնական ազգություն՝ իր միասնական մշակույթով, գրականությամբ: Ազգի ներսում կրոնական կղզիացումը խոսում է միայն ազգային ինքնագիտակցության պակասի մասին[42]: Ակնհայտ է ազգի, նրա մշակույթի ապազգայնակարգային ըմբռնումը:

* * *

Նոր «Մուրճի» առաջին համարում խմբագրությունը դիմել էր ընթերցողներին հետևյալ խնդիրքով. «Խմբագրությունը ոչ մի ջանք չէ խնայելու՝ ամսագրի բովանդակությունը բազմակողմանի և հետաքրքրական դարձնելու համար: Միայն պետք է, որ ընթերցող հասարակությունն իր անտարբերությամբ չջլատե մեր ուժերը: Ժամանակն է, որ հայ ամսագիրն ունենա այնքան բաժանորդներ, որ աշխատանքի վարձատրության սկզբունքը սկսե գործադրել և՛ հայ գրականության մեջ ավելի լայն չափերով: Խմբագրության ցանկությունն է, որ ամսագիրը բոլորովին

---

40 «Մուրճ», 1906, № 1, էջ 189:

41 Տե՛ս «Մուրճ», 1901, № 1, 1902, № 3:

42 Տե՛ս «Մուրճ», 1905, № 7, էջ 249—250:

ապահովվի բաժանորդներով։ Դրա համար պետք է ունենա առնվազն 800 բաժանորդ»[42]։

«Մուրճի» խմբագրության հույսերը չարդարացան, բաժանորդների թիվը հազիվ հասավ 650-ի։ Ամեն տարեվերջին խմբագրությունը ստիպված էր կրկնել իր կոչերը։ 1903 թ. նոյեմբերյան համարում խմբագրությունը բացատրում է ընթերցողներին, որ մեկենասների հույսով անկարելի է լուրջ գրական ձեռնարկություն պահպանել, որ առնվազն հարկավոր է ունենալ 1000 բաժանորդ ծախքերի ծայրը ծայրին հասցնելու համար։ Սա հենց բաժանորդների այն նվազագույն թիվն էր, որ Արասխանյանի համար անհաս երազ մնաց և կանխորոշեց ամսագրի ճակատագիրը։

«Մուրճի» 1904 թ. № 10 և 11-ի ներքին տեսությունները նվիրված են ամսագրի գոյության հարցին։ Դառն կշտամբանքի շեշտով խմբագրությունը դատապարտում է արդեն զոհաբերության գնով կատարվող գործի՝ ամսագրի հրատարակության նկատմամբ հայ ընթերցող հասարակության անտարբերությունը։ 1904 թվականի № 12-ի ազդն ամփոփում է բաժանորդների չորս տարվա վիճակագրությունը. «Մեզանում կրիայի քայլերով է աճում վճարող ընթերցողների թիվը. 1900-ին (հին շրջան) էր 245, 1901-ին (նոր շրջան) 657, 1902-ին 658, 1903-ին 780, 1904-ին՝ 896։ Ուրեմն չորս տարուց հետո նա հազիվ է հասնում 900-ի»[43]։ Ամսագրին հետապնդում էր լինել-չլինելու ուրվականը. «Մենք վճռել ենք տոկունությամբ շարունակել նրա հրատարակությունը,— գրում է խմբագիրը,— հրավիրելով մեզ համակրողներին աջակցել մեզ, տանելու այն ծանր խաչը, որ վիճակված էր մեզ»[44]։

Յոթներորդ տարեմուտին ամսագիրը դիմում է ընթերցողներին՝ ոչ այնքան նրանց, որքան իրեն հուսադրող խոսքերով. «Չնայած այդ չափազանց ծանր պայմաններին, մենք պետք է շարունակենք ծեծել, կռել և կոփել մեր հասարակական-քաղաքական հարցերը, նոր դաստիարակության և զարգացման նոր ճանապարհի գիտակցությունը զարթեցնել մեր ժողովրդի մեջ։ Կռիվը, պայքարը հին նախապաշարմունքների և խակ, մոլար, իմաստակ հասկացողություններեի դեմ պետք է շարունակենք անդուլ եռանդով և անվհատությամբ, համոզված, որ անկախ, քննադատող, գիտության և արդարադատության պահանջները ամեն տեսակ

---

42 «Մուրճ», 1901, № 1, էջ 285։

43 «Մուրճ», 1904, № 12, էջ 161։

44 «Մուրճ», 1906, № 10, էջ 155։

պոլիտիկանությունից բարձր դասող մի ամսագրի գոյությունն անհրաժեշտ է մեզ։ Թեթև հեծելազորը և հրացանակիր վաշտերը ի դեմս ամենօրյա թերթերի... չեն կարող կատարել այն, ինչ ինդանոթաձիգ բրիգադը ի դեմս ամսագրի, որ հիմնավոր ռմբակոծությամբ պետք է նախապատրաստի և դյուրացնի շտուրմը, գրոհը բանության և նախապաշարմունքների դեմ»[45]։ Չնայած ամսագրի դերի և նշանակության այսպիսի ըմբռնման և տոկունության, ամսագրի գոյությունը լուրջ վտանգի տակ էր. ամսագրի յոթանասուն հատորներն առաջացրել էին մոտ 10 հազար ռուբլու դեֆիցիտ[46]։

Ընթերցողների անտարբերությունը միակ արգելքը չէր ամսագրի հրատարակության ճանապարհին։ Կար նաև մեկ ուրիշ խանգարիչ հանգամանք, որի մասին խմբագիրը տեղյակ է պահում ընթերցողներին. «Մեր հրապարակական սեպուհ պարտքը և կոչումը կատարելով, կռիվ հայտարարեցինք դաշնակցության նման մի ահեղ կազմակերպության ոճրախնամ արարքների, նրա այլասերող և անբարոյականացնող ռեժիմի դեմ և դրանով հարուցինք այդ ընկերակցության խուլիգանացած շատ գործիչների կատաղի հալածանքը... դաշնակցական травля-ն, որտորդական հալածանքը ամենուրեք, ուր տարածված է անգիտակից հայ ժողովրդի վրա դրա ճիզվիտական ցանցը, անհետևանք չմնաց»[47]։ Երկու համար հետո խմբագիրը ուղղակի գրում է. «Շատ փաստեր ապացուցում են, որ մեր «ազգային կառավարության» ներկայացուցիչները իրենց բազմաթիվ ագենտներով բոյկոտի են ենթարկել «Մուրճ» ամսագիրը»[48]։

Ամսագրի հաջորդ, 1907 թ. № 4-ը ընթերցողներին է հասնում կիսատ վիճակում։ Դա ամսագրի վերջին համարն էր։ Խմբագրության շրջաբերականը բացատրում է.

«Երկար տարիների փորձը և մանավանդ այս տարվա անցած-դարձածը հրամայաբար ստիպում են ինձ վերջ դնել անհատական ղոհաբերություններով տարվող մի գործի, ինչպիսին է «Մուրճը», որ նյութական ահագին վնասներ է պատճառել ինձ։ Պետք է նկատեմ, որ հարգելի տիկին Վարվառե Քանանյանը՝ 1902 թ. հուլիս ամսից ձեռք բերելով այդ ամսագրի հրատարակության իրավունքը նախկին հրատարակիչ Կ. Կրասիլնիկյանից, 16000 ռուբլով, նաև հոգաց այդ թվականի դեֆիցիտը

---

45 «Մուրճ», 1906, № 11—12, էջ 192—193։

46 Տե՛ս նույն տեղում, «Մուրճի» բովանդակությունը, էջ III։

47 «Մուրճ», 1907, № 1, էջ 173—174։

48 «Մուրճ», 1907, № 3, էջ 153։

(3000 ռ.) ծածկելու մասին։ Այնուհետև՝ սկսած 1903 թ. հունվար ամսից «Մուրճի» հրատարակության բոլոր ծանրությունը ընկած էր ինձ վրա։ Լավատես դեպի այդ հրատարակության լավագույն ապագան, ես ոչ մի զոհաբերության առաջ կանգ չառա, աշխատելով ամսագիրը դարձնել մեր ժողովուրդը դաստիարակող լուրջ և անկախ մի օրգան, որ անվախ որոնում է ճշմարտությունը։ Շատ դանդաղ կերպով տարեցտարի ավելանում էր բաժանորդների թիվը, որ 1905 թվականին հասավ 900-ի՝ մի թիվ, որ այնուամենայնիվ անբավարար էր ամսագրի ծախքերը ծածկելու համար։ Այնուհետև ռուսական հեղափոխությունը ստեղծեց կյանքի մեջ նոր պայմաններ և հասարակական ուժերի նոր հարաբերություններ։ Եռացող կյանքը կենտրոնացավ օրաթերթերի և բրոշյուրների շուրջը, և բոլոր ամսագրերի բաժանորդները պակասեցին։ Բացի այդ ընդհանուր հանգամանքներից, հայկական իրականությունն ունեցավ և իր առանձնահատուկ— զուտ ասիական վայրագ թայֆայականությունը՝ իր հակահասարակական այլանդակություններով, արտահայտված մի ստրկահոգի, խավար, մոլորված և մերկանտիլ միջավայրում...»[49]։

Այսպիսով, հին «Մուրճի» ճակատագիրը բաժին ընկավ նաև նոր «Մուրճին». ամսագիրը դադարեց սնանկացման և բարոյական թունավորման պատճառով։ Հին «Մուրճի» դեմ կանգնած էր «Մշակը», նոր «Մուրճի» դեմ՝ դաշնակցությունը, որ բանակովի մեջ էր մտնում հետնամուտքից։ Որքա՜ն անարդարացի էր Լևոն Սարգսյանը, երբ Արասխանյանին էր մեղադրում իբրև խմբագիր՝ ամսագրի բաժանորդների փոքր թվի համար։ Ինքը ևս չկարողացավ 1000 բաժանորդ ունենալ։ Նոր «Մուրճը» յոթ տարին չբոլորեց։

Այսպիսով, մոտ երկու տասնամյակ ակոսելով հայ հասարակական մթոքը, «Մուրճ» ամսագիրն առաքելությունը դադարեց։ Անուրանալի է սակայն նրա թողած հետքը հայ ժողովրդի պատմության, նրա ազատագրական պայքարի նշանակալից դարաշրջանի՝ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հասարակական-քաղաքական կյանքում։ Ամսագիրը մեծապես նպաստեց հայ ժողովրդի ազգային զարթոնքին, մշակութային վերելքին, դեմոկրատական գրականության և արվեստի զարգացմանը։

---

49 Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, «Հնատիպ հազվագյուտ և արխիվային գրականության» բաժին, նույնը տե՛ս «Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի, 1889—1907», Երևան, 1977, էջ 699։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Առաջին մաս

«Մուրճ», հին շրջան (1889—1900)

Գլուխ առաջին.—XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական միտքը և «Մուրճ» ամսագրի ծնունդը 12
Գլուխ երկրորդ.—Սոցիալ-տնտեսական հարցերը «Մուրճում» . . 48
Գլուխ երրորդ.—Հայկական հարցը «Մուրճի» էջերում . . . 101
Գլուխ չորրորդ.—Ամսագրի գրական քաղաքականությունը . . . 116
Գլուխ հինգերորդ.—«Մուրճը» որպես լուսավորական օրգան . . 165
Գլուխ վեցերորդ.—«Մուրճը» գրաքննության արխիվներում . . 182
Գլուխ յոթերորդ.—Ավետիք Արասխանյանի և նրա «Մուրճի» տեղն ու դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ 195

Երկրորդ մաս

«Մուրճ», նոր շրջան (1901—1907)

Գլուխ առաջին.—Նոր «Մուրճի» ծրագիրը և խմբագիրը: Ամսագրի քաղաքական դիմագիծը 221
Գլուխ երկրորդ.—Դաշնակցության քննադատությունը ամսագրում . 263
Գլուխ երրորդ.—Նոր «Մուրճի» գրական քաղաքականությունը . . . 272
Գլուխ չորրորդ.—Ժողովրդի կյանքի լուսաբանումը ամսագրում: «Մուրճը» գիտական-լուսավորական օրգան 296

ԼԻԴԱ ՄՈՒՇԵՂԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ՄՈՒՐԾ» ԱՄՍԱԳԻՐԸ

Հրատ. խմբագիր Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ
Կազմը Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՎՅԱՆ
Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Սրբագրիչ Ա. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ИБ № 640

Հանձնված է շարվածքի 25. 11. 1981 թ.։Ստորագրված է տպագրության 25. 05. 1982 թ.։ ՎՖ 06170։ Չափը 60×84¹/₁₆, թուղթ № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Պայմ. 18,26, տպագր. 19,75 մամուլ։ Հրատ.—հաշվարկ. 17,21 մամուլ։ Տպաքանակ 2000։ Պատվեր № 1327։ Հրատ. № 5652։ Գինը 2 ռ. 85 կ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։
Типография Изд. АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.

A II
68407